

ԱՐՈՐԴԻՆԵՐԻ ՈՒՆՏ

Ո Ւ Ն Տ Ա Պ Ի Ր Ք
Ա Ր Ո Ր Դ Յ Ա Ց

ՕՐՀՆՈՒԹՅԱՄԲ՝

ԱՐԱՅԻ ԿԵՆԱՑ ԱՐԵՎՈԿ ՕԾՎԱԾ
ԱՐՈՐԴՅԱՑ ՆՈՐՈԳ ՈՒՆՏԻ ՔՐՄԱՊԵՏ
ՍԼԱԿ ԿԱԿՈՍՅԱՆԻ

ՎԱՀԱԳՆԻ ԾՆՈՒՆԴԻ
9588 թ. (2005)
ԷՐԵՎԱՆ



Ո Ւ Ղ Ե Ր Ձ

Ո՛վ, Արի Հայ, ի՞նչ Չարի Աստված, երբ ի՛նքդ ես աստված՝ Արայից սերված Արորդի՛ ես դու, Աստվածամարդ ես դու, բոլոր մարդկային Ցեղերի մեջ միակ արարող զորությունն ես դու և Արայի Որդի Վահագն Աստծո Սիրո, Չորության ճառագումն ես դու:

Էլ ի՞նչ ես որոնում քեզանից դուրս - զորություն՝ զորությունը քո մեջ է. հավա՞տ՝ հավատը քո մեջ է. սե՞ր՝ սերը քո մեջ է. իմաստություն՝ իմաստությունը քո մեջ է: Հրաշալի էակ ես դու, ո՛վ, Արի Հայ:

Բայց դեռ ինչքա՞ն, ինչքա՞ն դու քեզ չճանաչես, դեռ ինչքա՞ն դու քեզ մերժես: Դեռ ինչքա՞ն դու ապրես ուրիշի կենսագրությամբ և դեռ ինչքա՞ն դու խարխափես հոգևոր թմրության մեջ՝ գոհ քեզ պարզևված անտոհմիկ որբի խղճուկ վիճակից:

Դու երբևէ չե՞ս նայել Արեգակին՝ ո՛չ մայրամուտի, այլ արշալույսի՝ Արեգակին և նրա ճառագայթների անհուն ծովի մեջ չե՞ս փորձել տեսնել քեզ, քո սկիզբը և խորիել, թե ո՞վ ես դու, ո՞րտեղից ես գալիս, ի՞նչ ծագում ունես:

Արիական ծագում ունես դու, ո՛վ, Արի Հայ, որ Արայից է գալիս. անարատ արյուն ունես դու, որ Արայից է հոսում քո երակներում. ազնիվ դիմագիծ ունես դու, որ Արայից ես ժառանգել. աստվածային զորություն ունես դու, որ արտացոլումն է Արայի էության:

ԵՎ դու դեռ կասկածո՞ւմ ես քեզ: ԵՎ կարծում ես, թե քո ծագումը կորե՞լ է անդարձ, որ օտարներից քո գոյության հաստատումն ես մուրում:

Բայց Արայի կամքով՝ ոչ մի բնական չի կորչում երբեք: Քո ծագումն էլ՝ բնական, չի կորել անհետ: Այն պահպանվել է հարյուրամյակներ և պահպանվել է դարձյալ հենց քո՛ մեջ:

ԵՎ Հայր Արայի կամքով ու Ամենագոր Վահագնի հովանավորությամբ, քո ծագումը պեղվում է հենց քո միջից և վերադարձվում է քեզ, որ միանաս, ձուլվես նրան ու ամբողջացնես էությունը քո:

Մտի՛ր նրա մեջ, ո՛վ, Արի Հայ, գնա՛ քո հավերժության խորքը, մինչև քո առաջին նախնիները, միացի՛ր նրանց, ապրի՛ր նրանց հետ, բոցավառվի՛ր նրանց աստվածային ջերմությամբ, օծվի՛ր նրանց կենաց արևով և ապա փառաբանի՛ր Հայր Արային ու Մայր Անահիտին այն աստվածային Շնորհի համար, որ տրված է քեզ՝ լինել Արի Հայ, լինել աստվածամարդ, լինել Արորդի՛:

ՍԼԱԿ
ԿԱԿՈՍՅԱՆ

Հայաստանի Գերագույն Քրմապետ

ՎԱՀԱԳՆԻ ԾՆՈՒՆԴԸ

ԵՐԿՆԵՐ ԵՐԿԻՆ, ԵՐԿՆԵՐ ԵՐԿԻՐ,
ԵՐԿՆԵՐ ԵՎ ԾՈՎՆ ԾԻՐԱՆԻ,
ԵՐԿՆ Ի ԾՈՎՈՒՄ ՈՒՆԵՐ ԵՎ ԶԿԱՐՄՐԻԿՆ
ԵՂԵԳՆԻԿ:

ԸՆԴ ԵՂԵԳԱՆ ՓՈՂ ԾՈՒՄ ԵԼԱՆԵՐ,
ԸՆԴ ԵՂԵԳԱՆ ՓՈՂ ԲՈՑ ԵԼԱՆԵՐ,
ԵՎ Ի ԲՈՑՈՒՅՆ ՎԱՋԵՐ ԽԱՐՏՅԱԸ

ՊԱՏԱՆԵԿԻԿ:

ՆԱ ՀՈՒՐ ՀԵՐ ՈՒՆԵՐ,
ԱՊԱ ԹԵ ԲՈՑ ՈՒՆԵՐ ՄՈՐՈՒՄ
ԵՎ ԱԶԿՈՒՆՔՆ ԷԻՆ ԱՐԵԳԱԿՈՒՆՔ:

Ցնծա՛ բյուրվիշապ Արարատ Աշխարհ՝ փրկության
Աստված Վահագն է գալու: Գալու է Չարի Վիշապին
սպանելու և Մեծ Ջրհեղեղով Երկիրը լվալու Վիշապի
պղծությունից: Գարուն է բերելու Վահագն Աշխարհում,
Երկրի վրա՝ նոր պատմություն, իսկ Արարատում՝ նոր
տարեգրություն:

ԽՈՍՔ ԵՐԱԽՏՔԻ

Հազա՛ր - հազա՛ր նվիրում մեր Հայր Արային,
Հազա՛ր - հազա՛ր ժպիտ Մայր Անահիտին,
Հազա՛ր - հազա՛ր փառք Հրե Վահագնին,
Հազա՛ր - հազա՛ր սեր Չքնաղ Աստղիկին,
Հազա՛ր - հազա՛ր բարև Արտավազդ Միհրին,
Հազա՛ր - հազա՛ր երդում Սուրբ Նախնիներին...

Որ հազա՛ր - հազա՛ր արևով օծված,
Որ հազա՛ր - հազա՛ր օրհնությամբ կնքված,
Որ հազա՛ր - հազա՛ր հայտնությամբ սնված
ԵՎ Արարչական կամքով արարված
ՈՒՄՏԱԳԻՐՔՆ ԱՐՅԱՑ՝ ոգու վեհություն,
Հանց Կենաց Խորհուրդ մեզ են կտակում:

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

(ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ)

Ո՛վ, Արարչածին Հայ, ավերակների վրա մի՛ ողբա երբեք և փլատակների մեջ մի՛ որոնիր քեզ: Այո, ավերված են քաղաքները քո. բայց մարդն է շինել, մարդն էլ կավերի. կործանված են Մեհյանները քո. բայց մարդն է կերտել, մարդն էլ կքանդի. այրված են բոլոր մատյանները քո. բայց մարդն է գրել ու մարդն էլ կայրի:

Արարչական արարումի մեջ որոնիր դու քեզ, որ մարդն անգոր է ստեղծել ու քանդել. Հայոց Լեզվի մեջ որոնիր դու քեզ. Արարչածին է Լեզուն Հայոց, և Հայոց Լեզվով խոսում են միայն Աստվածներն Անմահ և Աստվածամարդիկ:

Հայոց Լեզվի մեջ քո Ծագումը կա, և քո Հավերժումը կա Հայոց Լեզվի մեջ. Հայոց Լեզվի մեջ քո Արյունը կա, և քո Հայրենիքը կա Հայոց Լեզվի մեջ. Հայոց Լեզվի մեջ քո Երկինքը կա, և քո Արևը կա Հայոց Լեզվի մեջ. ձորերի հառաչ, լեռների խոյանք, լճերի ծփանք և առվի կարկաչ՝ այդ բոլորը կան Հայոց Լեզվի մեջ:

Հուրը Վահագնի, Սերը Աստղիկի, Մայր Անահիտի ժպիտը բուրոդ և Հայր Արայի տիեզերական Արարումը կան Հայոց Լեզվի մեջ: Քո պապերի ու թոռների զորությամբ օծված, դու ինքդ էլ կաս Հայոց Լեզվի մեջ:

Մտիր Հայ Լեզվի խորհուրդների մեջ, և դու կմտնես հրաշքների աշխարհ, ու ինքդ կլինես հրաշալիքների մեջ մի վեհ հրաշալիք. էլ ի՞նչ ես փնտրում Հայոց Լեզվից դուրս:

Հավա՞տք ես ուզում՝ Գերագույն Հավատք է Հայոց Լեզուն: Ավետարա՞ն ես ուզում՝ Ավետարան է Հայոց Լեզուն. Տաճա՞ր ես ուզում՝ Հավատքի Տաճար է Հայոց Լեզուն. Աստվա՞ծ ես ուզում՝ Աստվածների խորհրդարան է Հայոց Լեզուն.

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՁ է Հայոց Լեզուն:

ՀԱՅՈՑ ԼԵՁՈՒՆ - ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ

Լեզու բառի մեջ ԷԶ /ԱԶ/ արմատն է, որը նշանակում է ծագում, սերում, արյունակցություն: Ըստ այդմ, Լեզուն նույնանուն է Ազգին: Ազգային Լեզուն Ազգի ներքին գենետիկական որակ է:

Ի՞նչ է Հայոց Լեզուն Հայի համար:

Թե Արարչածին է Ազգն Արմենական, ապա Աստվածաշունչ է Հայոց Լեզուն: Աստվածային ծագում ունի նա: Այն Արարչից է գալիս: ԵՎ մեր նախահայր Արին Հայր Արայից իր արյան հետ ժառանգել է նաև Հայոց Լեզուն որպես իր հոգևոր էություն: ԵՎ այդ Լեզվով են Արիները տարածվել աշխարհով մեկ և բազմաթիվ Արի Ազգեր ձևավորել:

Այդ նույն Լեզուն են Հայր Արայից ժառանգել նաև բոլոր Աստվածները: ԵՎ Աստվածների հետ միայն Հայոց Աստվածաշունչ Լեզվով կարող ենք խոսել:

Հայոց Աստվածաշունչ Լեզուն ազգային բացարձակ խորհուրդների համակարգ է:

Հայ Ազգը, որպես բնական որակ, իսկաբանե հարաբերվել է իր ծագումի, իր բնօրրանի հետ, բնական բազմազան երևույթների, էությունների հետ, բնական գործությունների, Աստվածների հետ... ԵՎ այդ հարաբերությունները նա վերապրել է իր հոգևոր կերտվածքի, իր բնավորության, իր մտածելակերպի և այլ որակական դրսևորումների միջոցով, յուրովի ընկալել է դրանց խորհուրդները և համապատասխան անուն տվել դրանց: Հենց այդ ազգային խորհուրդների համակարգն է, որ ներկայանում է որպես Ազգային Լեզու: Ազգային Լեզվի մեջ ամեն խորհուրդ իր անունն ունի, և ամեն անուն իր խորհուրդն ունի: ԵՎ պատահական անուն չի լինում երբեք:

Ըստ այդմ, Հայոց Լեզուն, որպես Ազգի ներքին գենետիկական որակ, իրենից ներկայացնում է Ազգային

խորհուրդների Համակարգ: Այնինչ, բոլոր օտար լեզուները, որպես արտաքին հաղորդակցման միջոց, Հայ Ազգի մեջ ներկայանում են որպես Բառերի Քերականական Համակարգ:

Այսպես՝ հայերիս համար ռուսերեն **Սոլնցե** կամ անգլերեն **Սան** բառերի իմաստը որպես քերականական միավոր իմանալը բավարար է այդ լեզուներով արտահայտվելու համար: Այնինչ, հայերեն **Արեգակ** բառը որպես քերականական միավոր մեզ չի կարող բավարարել: Անհրաժեշտ է իմանալ, թե ինչն՞ է Արեգ, ի՞նչ է նշանակում Արեգը, ի՞նչ խորհուրդ ունի իր մեջ Արեգը, ի՞նչ կազմություն ունի և այլն:

Ըստ այդմ, Հայոց Աստվածաշունչ Լեզուն է, որպես ազգային խորհուրդների համակարգ, մշտապես արարումի հիմք հանդիսանում արարող Արմեն Ազգի համար, քանզի բնական օրինաչափությունների խորհուրդները զգալով է միայն, որ հնարավոր է արարել:

Սակայն, երբ Հայոց Լեզվի անունները մեր զգացողության մեջ կորցնում են իրենց խորհուրդները, ապա վերածվում են պարզապես անկենդան բառերի, իսկ Լեզուն վերածվում է բառային քերականական համակարգի: ԵՎ Հայոց Լեզուն հենց իր Ազգի մեջ որակագրկվում է և վերածվում արտաքին հաղորդակցման միջոցի, ստանալով օտար լեզուներին հավասար արժեք:

Վաղուց արդեն, որպես Հոգևոր Եղեռնի հետևանք, մենք օտարվել ենք մեր հոգևոր էությունից: Մենք օտարվել ենք մեր Աստվածաշունչ Լեզվից: ԵՎ վաղուց արդեն մենք չենք զգում Հայոց Լեզվի խորհուրդները: ԵՎ ազգային խորհուրդների անունները մեր մեջ վերածվել են անկենդան բառերի, որոնք իրար հետ կապված են զուտ քերականական կանոններով:

ԵՎ վաղուց արդեն մենք օտարվել ենք մեր արյունից ու հոգուց. մեր միտքը աշխատում է զուտ անկենդան բառանշանների գործածությամբ, որպես արտաքին հաղորդակցման միջոց, այլ ո՛չ՝ ներքին հոգևոր որակ. մեր միտքը աշխատում է թերի, անպտուղ, և մենք չենք կարող արարել և մենք չենք կարող խոսել Աստվածների հետ:

ԵՎ Հայ Ազգը դադարեց արարել: Անկենդան բառերի քերականական համակարգի մեջ մեռնում է նաև կենդանի արարչագործությունը:

ԵՎ Ազգի հոգևոր եղեռնը շարունակվում է և դեռ կշարունակվի այնքան ժամանակ, մինչև որ մենք վերականգնենք մեր զգացողության մեջ Հայոց Լեզուն որպես Ազգային Խորհուրդների Համակարգ և դրանով Ազգի սերունդների զգացողության մեջ հաստատենք այն որպես ազգային ներքին գենետիկական որակ:

Ազգային խորհուրդները արտահայտվում են լեզվի արմատների միջոցով /բառարմատներ և հունչարմատներ/:

Հայոց Լեզվի ամեն մի արմատ ունի իր ամենաբազմազան երանգավորումները. և այդ ամենաբազմազան երանգավորումներով կազմում է ամենաբազմազան խորհուրդները:

ԵՎ երբ վերականգնենք մեր մեջ Հայոց Լեզուն որպես Խորհուրդների Համակարգ, այն ժամանակ Հայոց Լեզուն կբացվի մեր առջև որպես աստվածային իմաստության ավազան, որի մեջ մենք կգտնենք **մեր էությունը, մեր ծագումը, մեր անցյալն ու ապագան**: Այն ժամանակ արարչագործությունը կդառնա մեր կյանքի բովանդակությունը: ԵՎ մենք ինքներս կզգանք, որ Հայոց Լեզվով մուրալ չի լինի, աղերսել չի լինի, աղոթել չի լինի: Քանզի **Հայոց Լեզուն աստվածային լեզու է, իսկ Աստվածներն ու Աստվածամարդիկ չեն աղերսում, չեն աղոթում և չեն մուրում**:

ա. ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ա՛ - Բացարձակ Ձայն, որ արտահայտում է ամեն գոյություն, լինելություն:

Լեզվական համակարգում Ա՛ - Ձայնի հարազատ արտահայտիչն է Ա - հնչյունը: Իսկ մյուս ձայնավոր հնչյունները Ա - հնչյունի տարբեր երանգներն են և շատ դեպքերում իրենց մեջ պահպանում են Ա - հնչյունի արմատական իմաստները:

Օրինակ՝ Էրման /Արման/, Իրան /Արիան/, Հէք /Հայք/, ուշ /աշ/, ուտ /ատ/ և այլն:

ԱՐ - Կենսակերտ բառարմատ, որ նշանակում է ՍԵՐՈՒՄ, ԾԱԳՈՒՄ, ՋՈՐՈՒԹՅՈՒՆ, ՈՒՆՏ: Համապատասխանում է ԱՁ արմատին:

ԱՐ - կենսակերտ արմատը հայերենում գրեթե ամենաշատ գործածվող արմատն է: Այն մտնում է ամենաբազմազան բաղադրությունների մեջ, կազմելով ՍԵՐՈՒՄ, ԾԱԳՈՒՄ, ՋՈՐՈՒԹՅՈՒՆ, ՈՒՆՏ արտահայտող խորհուրդներ:

Օրինակ՝ արյուն, արգանդ, արմատ, արև, մարդ, արքա, դար, գարուն, բարի, չարի, Արա, Արի, արտ, արու...

ԱՐԱՐ - Կրկնավոր արմատ՝ ԱՐ - ԱՐ, որ արտահայտում է **Բացարձակ Ջորության, Բացարձակ Սերունի** իմաստ:

Ըստ այդմ, ԱՐԱՐ կրկնավոր արմատը գործածվում է միայն Արարչագործության համակարգի խորհուրդների մեջ՝

Արար - իչ, **Արար** - ատ, **Արար** - ած, **Արար** - ել:

ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ - Նորոգումի խորհուրդն է:

Լեզվաբանորեն կազմված է ԱՐԱՐԻՉ խորհրդով և ԳՈՐԾ /իրագործել/ բառով:

Բնության մեջ ամենը իրենց բացարձակությունը հաստատում են իրենց նորոգման մշտական ընթացքում: ԵՎ այդ Նորոգումն ու Պահպանումը որպես բնական

օրինաչափություն իրագործվում է մշտական Արարչագործության շնորհիվ:

Ըստ այդմ, Արարչագործությունը մշտական ընթացք է և իրագործվում է Արարումի և Ծնումի միասնությամբ: Արարումը բացարձակ հասկացողություն է և իրենով ժամանակ չի պայմանավորում: Ծնումն է պայմանավորում ժամանակ: Առանց Արարումի չի կարող լինել Ծնում: Իսկ եթե Ծնում չլինի՝ Արարումը չի նորոգվի, ուստի և կոչնչանա:

ԵՎ Արարչագործությունը հենց երկսեռության խորհուրդն ունի իր մեջ: Արարչագործությունն իրագործվում է Հոր և Մոր միասնությամբ. Հայրը Արարող է, իսկ Մայրը՝ Ծնողը:

ԱՐԱՐԻՉ - Արարչագործության խորհուրդ է, որ նշանակում է ԱՐԱՐՈՂ:

Լեզվաբանորեն կազմված է ԱՐԱՐ - կրկնավոր արմատով և ԻՉ /մի բան անող/ արմատով:

Ըստ այդմ, պետք է տարբերակել իրարից ԱՐԱՐԻՉ և ԱՍՏՎԱԾ խորհուրդները: ԱՍՏՎԱԾ - ը նշանակում է Գերագույն խորհուրդն իր մեջ կրող: ԵՎ Աստվածը Արարիչ չէ: ԱՐԱՐԻՉ-ը Բնության Արարող Ջորությունն է՝ ԱՐԱՐ -ն:

Անհրաժեշտ է տարբերակել նաև ԱՐԱՐԻՉ և ՍՏԵՂԾՈՂ խորհուրդները: ՍՏԵՂԾՈՂԸ ստեղծում է մի բան իրենից դուրս: ԵՎ Ստեծողի ու Ստեղծվածի միջև չի կարող լինել որևէ արյունակցական, հոգևոր կապ: ԱՐԱՐՈՂԸ արարում է իր միջից, և Արարողի ու Արարվածի միջև կա ժառանգական արյունակցական, որակական կապ: Արարողը Հայրն է: Հայրն է արարում որդուն, նրան ժառանգաբար փոխանցելով իր բնական որակական հատկանիշները:

Ըստ այդմ, իմ Արարիչը իմ հայրն է, նրա հայրը, նրա հոր հայրը... և այդպես խորանալով մինչև Բացարձակը, կհասնեմ ԱՐԱՐ - ին՝ Բնության Արարող Ջորությանը: ԵՎ փաստորեն ԱՐԱՐ - ն է իմ Բացարձակ Նախահայրը՝ իմ ԱՐԱՐԻՉ -ը: Ըստ այդմ էլ՝ Արիները իրենց ճանաչում են

որպես Արևորդի կամ Արորդի, որն էլ նշանակում է՝ Արայի որդի, Արարչածին:

Ի դեպ, Տիտանները ԱՐԱՐԻՉ խորհրդի զգացողությունը չունեն. նրանց զգացողությունը հասնում է մինչև ԱՍՏՎԱԾ: Քանզի Տիտանների զգացողության մեջ Նախահայրերի հաջորդականությունը հասնում է մինչև Հողածին Ադամը,

ԱՐԱՐՈՒՄ - Արարչագործության խորհուրդ է:

Լեզվաբանորեն կազմված է ԱՐԱՐ - կրկնավոր արմատով և ՈՒՄ - բայակերտ ածանցով:

ԱՐԱՐԵԼ՝ չի նշանակում նոր բան ստեղծել: ԵՎ ԱՐԱՐԵԼ-ը չի նույնանում ՍՏԵՂԾԵԼ -ուն: Արարում է միայն Հայրը:

Այսպես՝ Արա՛ն Արարատում Արարել է Արիին: Այսինքն՝ Արա՛ն Արիի Հայրն է. Նա Արիին Արարել է իրենից և նրան ժառանգաբար փոխանցել է իր որակական հատկությունները: Իսկ Յահվան Անապատում Ստեղծել է Ադամին հողից: Այսինքն՝ Յահվան Ադամի Հայրը չէ. նրա Ստեղծողն է: ԵՎ Ադամը ոչ մի որակական հատկություններով կապված չէ իր Ստեղծողի հետ:

ԱՐԱՐԱԾ - Արարչագործության խորհուրդ է:

Լեզվաբանորեն կազմված է ԱՐԱՐ - կրկնավոր արմատով և ԱԾ /բռնել, պահել/ բառարմատով:

ԱՐԱՐԱԾ - ը փաստորեն արարումի և ծնումի համատեղ արարչագործության պտուղն է: Ըստ այդմ՝ ԱՐԱՐԱԾ - ը Արարչի Որդին է՝ Արորդի, և ժառանգաբար իր մեջ կրում է Արարող Հոր բնական որակները:

ԱՏ - Բառարմատ, որ նշանակում է ՏԵՂ, ԱՄՓՈՓՈՒՄ:

Օրինակ՝ բացատ, կաղնուտ, ատյան, աթոռ:

ԱՐԱՐԱՏ - Արարչագործության խորհուրդ է, որ նշանակում է ԱՐԱՐՄԱՆ ՎԱՅՐ:

Լեզվաբանորեն կազմված է՝ ԱՐԱՐ կրկնավոր արմատով և ԱՏ /տեղ/ բառարմատով՝ ԱՐԱՐ - ԱՏ:

ԱՐԱՐԱՏ - ը որոշակի աշխարհագրական բարձրադիր տարածք է: Այն ունի խիստ ընդգծված բնական սահմաններ. հյուսիսից՝ Կովկասյան լեռնաշղթան, հարավից՝ Հայկական Տավրոս լեռնաշղթան, արևելքից՝ Կասպից ծովը: Իսկ արևմուտքում ընդգծված սահման չունի և սահմանափակվում է Հայկական Բարձրավանդակով: Այսինքն՝ փաստորեն ԱՐԱՐԱՏ - ը Հայկական Բարձրավանդակն է:

Ըստ հայկական ավանդության /տես՝ „Արարատյան Դիցաբանություն,“/ սա հենց արարման վայրն է՝ ԱՐԱՐԱՏ - ը, որտեղ Արարիչը արարել է առաջին երկրային աստված Արիին: Արիի սերունդները բազմանալով տարածվել են Արարատից դուրս և տարբեր Արի Ազգեր կազմել: Իսկ Արարատում մնացած Արիները իրենց վրա պահպանում են ավանդական Արի /Արմեն/ անունը: ՀԱՅ անունը նույնպես ավանդական խորհուրդ է և հոմանիշ է Արմենին /տես՝ Արմեն, Հայ/: Իսկ Հայաստանը հոմանիշ է Արարատին:

ԱՐԱՐԱՏ - ը, որպես Արիների Բնակ՝ Արարման Վայր, ճանաչված է նաև այլ ազգերի կողմից: Այսպես՝ Արարատը պարսիկներն անվանում են **Արիանա Վայջո**, որ նշանակում է Արիների Բնակավայր: Նույն իմաստով հնդիկները անվանում են **Արիավարտա**, ասորիները՝ **Ռիրարտու**, շումերները՝ **Արատտա**:

բ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ամբողջ Տիեզերքը կառավարվում է չորս բնական Ձորությունների միջոցով՝ Արարող Ձորություն, Ծնող Ձորություն, Դրական /Տիեզերական/ Էներգիա, Բացասական /Հողի/ Էներգիա:

ԱՐԱ՛ - Արարող Ձորություն, Արարիչ:

Լեզվաբանորեն կազմված է՝ ԱՐ /սերուն, արարում/ և ԱՀ /հզոր/ բառարմատներով՝ ԱՐ - ԱՀ:

Սակայն հոգևոր զգացական արտահայտությամբ Ա՛ - Բացարձակ Չայնը չեզոքացնում է Հ - հնչյունին և ներկայացնում է Բացարձակ Արարող Ձորության, Արարչի էությունը՝ ԱՐԱ՛:

Ի դեպ, ԱՐԱՀ բառակազմական ձևը հնչյունափոխությամբ անցել է Սեմական Արաբներին և պահպանվել է ԱԼԼԱՀ ձևով: Իսկ ԱՐԱ՛ խորհուրդը ժամանակին փոխանցվել է հին եգիպտացիներին և պահպանվել ՐԱ ձևով:

Որոշ Արի Ազգերի մոտ Արարչի էությունը արտահայտվում է ոչ թե ԱՐ - ԱՀ լեզվական բաղադրությամբ, այլ՝ ԱՐ - ԱՆ: Այսպես՝ հինդուսների մոտ Արարչի էությունը արտահայտվում է ՎԱՐՈՒՆԱ՛ Վ - ԱՐ - ՈՒՆ/ան/ - Ա, իսկ ռուսների մոտ՝ ՊԵՐՈՒՆ՝ Պ - ԷՐ/ար/ - ՈՒՆ/ան/ լեզվական բաղադրությամբ:

Սակայն ԱՐ - ԱՆ բաղադրությունը ավելի ուշ շրջանի արտահայտություն է: Բանն այն է, որ հնդկական Բրահմայականության մեջ Արարչի էությունը արտահայտվում էր հենց ԱՐԱ՛ խորհրդով՝ ԲԸՐԱՀՄԱ՛ Բ - ԸՐ /ԱՐ/ - ԱՀ - ՄԱ, իսկ ռուսների մոտ՝ ՅԱՐ խորհրդով: Ըստ երևույթին հետազայում և՛ հնդիկների, և՛ ռուսների մոտ բացակայել է ի սկզբնապես ճանաչված Աստվածամայրը՝ Անահիտը: ԵՎ Արարիչն ու Աստվածամայրը միավորվել են մի կերպարի մեջ: Իսկ զգացական այդ միասնությունը հանգեցրել է նոր խորհրդի ձևավորմանը, որն էլ արտահայտվում է լեզվական արմատների այլ բաղադրությամբ:

Այսպես՝ Արարիչը արտահայտվում է ԱՐ - ԱՀ /Արարող Ջորություն/ բաղադրությամբ, իսկ Աստվածամայրը՝ ԱՆ - ԱՀ /Ծնող Ջորություն/ բաղադրությամբ: Այնինչ, Հոր և Մոր կերպարների միաձուլումը հանգեցրել է ԱՐ - ԱՆ արմատների միասնությանը, որը նշանակում է՝ ԱՐԱՐՈՂ - ԾՆՈՂ, ՀԱՅՐ - ՄԱՅՐ: Այսինքն՝ այդ Ազգերի մոտ Արարիչը ներկայանում է ՀԱՅՐ-ՄԱՅՐ որակական ամբողջությամբ:

Իսկ հայկական ու պարսկական ավանդություններում /տես՝ ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԻՑԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ԱՎԵՍՍԱ/ պահպանվում է Արարչագործության երկսեռությունը: Ըստ այդմ, ԱՆԱՀԻՏԸ Մայրն է բոլոր Աստվածների ու Արիների, իսկ ԱՐԱՄ՝ - ն Արարչի Բացարձակ Էությունն է, որ արտահայտվում է ԱՐ - ի խտացումով ԱՄ՝ - Բացարձակ Չայնի մեջ /Հ -ի սղումով/:

Ի դեպ, պարսիկները ԱՐԱՄ՝ - ի հետ սովորաբար գործածում են ՄԱԶԴԱ /պաշտելի/ մակդիրը՝ ԱՐԱ ՄԱԶԴԱ: Իսկ հայերը ասում են ՀԱՅՐ ԱՐԱՄ՝ կամ պարզապես ԱՐԱՄ՝:

ՈՒստի կոպիտ սխալ է ԱՐԱ - ին ԱՐԱՄԱԶԴ ասելը:

ԱՀ - Արմատ, որ նշանակում է ՄԵԾ, ՀԶՈՐ:

Օրինակ՝ **ահ**ագին, **ահ**ռելի, **ահ**ավոր...

ԱՀ արմատով կազմվում են ՄԵԾ, ՀԶՈՐ իմաստ արտահայտող խորհուրդներ.

Օրինակ՝ **մահ**, **ջահ**, **գահ**, **նահ**ապետ, **Անահիտ**, **Վահագն**...

Վ - արմատը ավելանալով ԱՀ - արմատին, նրան տալիս է գերագույնի իմաստ՝ ՎԱՀ - **գերիզոր**, **աստված**:

Օրինակ՝ **Վահագն** - Հուր Աստված, **Յահվահ** - Սարսափի Աստված, **Վահան** - Աստծո տված:

ԱՆ - 1. Կենսակերտ արմատ, որ նշանակում է ԾՆՈՒՆԴ, ՊՏՈՒՂ, ՊԱՀՊԱՆՈՒՄ, ՍՆՈՒՄ:

ԱՆ - արմատով կազմվում են բազմաթիվ կենսական խորհուրդներ՝

Օրինակ՝ նան -ծնող, սան - որդի, ծիրան - ծիրի /տիեզերական/ պտուղ, Սիրան -սիրո պտուղ, Միրան - Միրի որդի, Վարդան - վարդի ծնունդ, Վահան - Վահի /աստծո/ տված, Անուշ - հոգուց ծնված:

ԱՆ կենսակերտ արմատը կարևոր դեր է կատարում հայոց ազգանունների /տոհմանունների / կազմության մեջ.

Օրինակ՝ Արամյան, Մուրադյան ազգանունների մեջ ԱՆ - ը նշում է Արամի, Մուրադի տոհմի ծնունդ, սերունդ լինելը, այդ տոհմին պատկանելը՝ Արամի ան - Արամյան, Մուրադի ան - Մուրադյան:

ԱՆՔ - ը ԱՆ արմատի հոգնակի ձևն է.

Օրինակ

՝ Արամի անք - Արամյանք, Արամենք, Արամենց...նաև՝ մեր անք - մերոնք, ձեր անք - ձերոնք, իմ անք - իմոնք:

ԱՆ արմատը գործածվում է նաև ՌԲՆ հնչյունափոխված ձևով. Օրինակ՝ գարուն, սիրուն, մածուն, բուն, տուն:

- 2. Ժխտական ածանց՝ անտուն, անհաս, անհուն, անտեր:

ԱՆԱՀԻՏ - Ծնող Ջորություն, Աստվածամայր:

Լեզվաբանորեն կազմված է՝ ԱՆ /ծնում/, ԱՀ /հզոր, մեծ/ և ԻՏ արմատներով՝ ԱՆ - ԱՀ - ԻՏ:

ԻՏ - արմատը գործածվում է միայն հայերեն և պարսկերեն լեզուներում՝ ԱՆԱՀԻՏ /հայերեն/, ԱՆԱՀԻՏԱ /պարսկերեն/ և առայժմ դժվար է պարզել նրա վերջնական իմաստը:

Արիական մյուս լեզուներում ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ խորհուրդը արտահայտվում է ԱՆ - ԱՀ բաղադրությամբ՝ ԱՆԱՀ - ԱՆՆԱ, որտեղ Ա՛ - Չայնի ուժգնության շնորհիվ Հ - ն սղվում է:

Հետագայում ԱՆԱՀԻՏ /ԱՆՆԱ/ - խորհուրդը վերածվել է հատուկ անունի: ՌԻստի հաճախ նրա հետ գործածվում է նաև ՄԱՅՐ /ՄԵՐԻ, ՄԱՐԻԱ/ բառը:

Օրինակ՝ Աստվածամայր Անահիտ կամ Մայր Անահիտ, Մարի - Աննա, Աննա Մարիա:

Այդ օրինաչափությամբ հայերենում որպես հատուկ անուն են ձևավորվել ՄԱՅՐԱՆ և ՄԱՅՐԱՆՈՒՇ անձնանունները: Իսկ ՄԱՐԻԱՄ ձևը ՄԱՅՐԱՆ - ի աղավաղումն է, որպես այլ լեզուների նմանակության արդյունք:

Ըստ այդմ, բոլոր Արի Ազգերի զգացողության մեջ, թեև անգիտակցաբար, բայց իրականում այդ անունների մեջ արտահայտվում է ԱՆԱՀԻՏ խորհուրդը, քանզի բոլոր այդ անունները ընտանիքի հովանավորի պաշտամունքի արտահայտություն են: Իսկ ընտանիքի հովանավորող միակ Աստվածուհին ԱՆԱՀԻՏՆ է:

Ըստ հայկական ավանդության /տես՝ „Արարատյան Դիցաբանություն,“/

Անահիտը Մայրն է բոլոր Աստվածների և Արիների: ԵՎ Անահիտն է մշտապես հովանավորում ամեն մի բեղմնավորում, ամեն մի պտղաբերում: ԵՎ ավանդաբար, հայերը մինչև հիմա ամեն տարի տոնում են բնության բեղմնավորումն ու պտղաբերումը: Գարնանը կատարում են բեղմնավորումի տոնը՝ Ջատիկը: Փառաբանում են Անահիտին և խնդրում նրանից՝ հովանավորել հողի բեղմնավորումը: ԵՎ ապա սկսում են գարնանացանը: Իսկ աշնանը կատարում են պտղաբերումի՝ բերքահավաքի տոնը՝ Խաղողօրհնեքը, փառաբանելով Անահիտին և խնդրելով նրան՝ օրհնել տված պտուղները:

Ըստ այդմ, Անահիտին անվանում ենք նաև Սնուցող Մայր, Ոսկեմայր, Ոսկեհատ, Ոսկեծղի:

ԱԳ - Արմատ, որ արտահայտում է ՀՈՒՐ իմաստ:
Օրինակ՝ Վահագն, Արեգ, Արագած, Բագ, թագ...

ՎԱՀԱԳՆ - Գերագույն Հրե Ջորություն, Հուր - Աստված:
Լեզվաբանորեն կազմված է՝ ՎԱՀ /գերագույն զորություն, Աստված/ բառով և ԱԳ /հուր/ արմատով՝ ՎԱՀ - ԱԳՆ:
ՎԱՀԱԳՆ - ը որպես Գերագույն Հրե Ջորություն՝ ՀՈՒՐ - ԱՍՏՎԱԾ, համաարիական ճանաչում ունի:

Օրինակ՝ ՎԱՀԱԳՆ - ին հնդիկներն անվանում են ԱԳՆԻ, ռուսները՝ ԱԳՈՆՅ, պարսիկները՝ ՎԵՐԱՏՐԱԳՆԱ:

Ի դեպ, պարսկական ՎԵՐԱՏՐԱԳՆԱ -ն բացատրվում է միայն հայերեն լեզվով: Այն կազմված է երկու զուգահեռ խորհուրդների կցումով՝ ՎԵՐ - ԱՏՐ, որ նշանակում է Գերագույն զորության կրակ և ԱԳՆ - ԱՀ, որ նշանակում է Հրե Ջորություն: Ըստ երևույթին պարսիկների մոտ նախնական խորհուրդը եղել է ԱԳՆԱ /Հ/: Իսկ ՎԵՐԱՏՐ - ի կցումը կապված է Ջրադաշտականության հետ, երբ որպես տիեզերական հուրի խորհրդանիշ Արեգի փոխարեն ընդունվեց Կրակը՝ Ատրուշանը:

ՎԱՀԱԳՆ Տիեզերական Հուրի Խորհուրդն է: Ի դեպ, Հուրը կրակը չէ, թեև կրակի մեջ հուրը շատ է: Հուրը - Էներգիա է: ԵՎ ՎԱՀԱԳՆ Տիեզերական /դրական/ Էներգիայի Խորհուրդն է, հակառակ ՅԱՀՎԱՀ - ի, որը Հողի /բացասական/ Էներգիայի Խորհուրդն է: Ուստի ՎԱՀԱԳՆ - ի զգացողությունը կարող են ունենալ մնայն Արիները, որոնք դրական էներգիայի կրողներ են: Իսկ Տիտանները կարող են ունենալ միայն ՅԱՀՎԱՀ -ի զգացողություն, քանի որ նրանք բացասական էներգիայի կրողներ են:

Ըստ այդմ, ՎԱՀԱԳՆ միայն Արիների Աստվածն է. նա Արիների Ջորության, Ուժի հովանավորն է :

Ըստ հայկական ավանդության /տես՝ Արարատյան Դիցաբանություն/, ամեն Տիեզերական Գարնանը, Երկնի ու Երկրի ահեղ երկունքից ՎԱՀԱԳՆ է ծնվում: Ծնվում է Չարի Վիշապին սպանելու, Վիշապի գարշանքից Երկիրը լվալու Մեծ Ջրհեղեղով և Արարատում պահպանելու Արարչագարմ աստվածամարդերի՝ Արիների Ցեղը: Ըստ այդմ, ՎԱՀԱԳՆ - ին անվանում են նաև Վիշապաքաղ:

Գարուն է բերում ՎԱՀԱԳՆ աշխարհին, Երկրի վրա՝ նոր պատմություն, իսկ Արարատում՝ նոր տարեգրություն: Ջրհեղեղը վերապրող Արիները Վահագնի Ծնունդից սկսում են նոր տարեգրության հաշվարկը:

ՎԱՀԱԳՆ ծնվում է Գարնան առաջին օրը՝ Արեգի 1 -- ին: ԵՎ ավանդաբար գարնան առաջին օրը Արի Հայերը տոնում են Վահագնի Ծնունդը որպես նոր պարբերության՝

նոր տարվա սկիզբ՝ Ամանոր: ԵՎ կանչում են Վահագնին, սպասում են Վահագնին: ԵՎ այդ սպասումով զորանում են:

Միայն զորավորները կարող են դիմավորել ՎԱՀԱԳՆ - ին, միայն զորավորները կվերապրեն Ջրհեղեղը: Միայն զորավորներին է հովանավորում ՎԱՀԱԳՆ: Տկարները չեն կարող դիմավորել ՎԱՀԱԳՆ - ին. տկարները չեն վերապրի Ջրհեղեղը: ՎԱՀԱԳՆ տկարներին չի հովանավորի, քանզի ՎԱՀԱԳՆ պահպանելու է Արի Աստվածամարդերի Ցեղը, իսկ տկարներից աստվածներ չեն ծնվի:

Վահագնին են նվիրված Տրնդեզը և Ամանորը:

ՅԱՀՎԱՀ - Ստորգետնյա Աստված:

Լեզվաբանորեն կազմված է Յ - չգիտակցված հունչարմատով, ԱՀ /հզոր/ արմատով և ՎԱՀ /աստված/ բառով:

Դեռ չպարզաբանված Յ - հունչարմատը հնարավորություն չի տալիս ճշգրտել ՅԱՀՎԱՀ խորհրդի լեզվաբանական իմաստը: Սակայն պարզ է միայն, որ ՅԱՀՎԱՀ - ը Ստորգետնյա Աստված է և իր մեջ կրում է Հողի /բացասական էներգիայի/ խորհուրդը, ի հակադրություն ՎԱՀԱԳՆ -ի, որը Տիեզերական /դրական էներգիայի/ խորհուրդն է:

Այսօր՝ Տիեզերական Ձմռանը, երկրի վրա իշխում է Բացասական էներգիան, այսինքն՝ ՅԱՀՎԱՀ - ը /Եհովան/: ԵՎ այսօրվա համաշխարհային Կրոնները՝ Հուդայականություն, Քրիստոնեություն, Մահմեդականություն, փաստորեն Յահվահականություն են:

ԱՍ - Բառարմատ, որ արտահայտում է ԽՈՐՀՈՒՐԴ իմաստ:

Օրինակ՝ **ասել**, **Ասողիկ**, **վասն**, **դաս**:

ԱՍՏ /ՈՒՄՏ/ - Գերագույն խորհուրդ, խորհրդի հաստատում:

Լեզվաբանորեն կազմված է ԱՍ - բառարմատով և Տ , հաստատում արտահայտող հունչարմատով:

Օրինակ՝ իմաստ, աստված, աստղը, հարուստ, դուստրը:

ԱՍՏՎԱԾ - Գերագույն խորհուրդն իր մեջ կրող:

Լեզվաբանորեն կազմված է՝ ԱՍՏ /գերագույն խորհուրդ/ բառով, Վ - կրավորական մասնիկով և ԱԾ /բերել, պահել/ արմատով:

Նույն օրինաչափությամբ՝ սերված, ծնված, արարված...

Ըստ այդմ, անհրաժեշտ է զանազանել ԱՐԱՐԻՉ և ԱՍՏՎԱԾ հասկացությունները: Արարիչը մեկն է՝ ԱՐԱՐԻՉ - ն /Արարող Ջորություն/: Իսկ Աստվածները Արայի տարբեր բնական որակներն իրենց մեջ կրող խորհուրդներ են: ԵՎ ամեն Աստված իր մեջ կրում է բնական որևէ Գերագույն խորհուրդ՝ Սիրո, Ջորության, Իմաստության, Պտղաբերումի և այլն:

Ուստի Ազգը ճանաչում է այնքան Աստված, որքան բնական Գերագույն խորհուրդ է զգում: ԵՎ Ազգի հոգևոր հարստության աստիճանը մեծապես կախված է նրա ճանաչած Աստվածներից, այսինքն՝ բնական Գերագույն խորհուրդների բազմազանության զգացողությունից:

Ըստ այդմ, Բազմաստվածությունը Ազգի հոգևոր հարստության արտահայտություն է, իսկ Միաստվածությունը՝ Ազգի հոգևոր սնանկության արտահայտություն:

ԱՂ - Արմատ, որ արտահայտում է ՀԱՃԵԼԻ, ՀԱՍ, ՍԻՐԵԼԻ, ԲԱՂՅՐ, ՋԱՐՄ իմաստները:

Օրինակ՝ աստղը, աղջիկ, տղղա, աղբյուր, հաղթ, աղի, չաղ, մաղթանք...

ԱՍՏՂԻԿ - Սիրո Գերագույն խորհուրդ:

Լեզվաբանորեն կազմված է՝ ԱՍՏ /գերագույն խորհուրդ/ բառով, ԱՂ /սեր, հաճելի/ բառարմատով և ԻԿ բնաբացուցիչ մասնիկով՝ ԱՍՏ - ԸՂ /աղ/ - ԻԿ:

Ըստ հայկական ավանդության /տես՝ ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԻՑԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ/, ԱՍՏՂԻԿ - ը, որպես Սիրո

Գերագույն խորհուրդ, ճանաչված է Սիրո Աստվածուհի: ԵՎ Աստղիկն է մշտապես հովանավորում Արիների սիրո զգացողությունը:

ԱՍՏՂԻԿ - ին՝ Սիրո Գերագույն խորհրդին է նվիրված Վարդավառը: Վարդավառի տոնակատարությամբ Արիները փառաբանում են ԱՍՏՂԻԿ - ին, նրան վարդ ծաղիկներ նվիրում, վարդաջրով օծում են իրար և իրենց մեջ նորոգում են Աստվածային Սիրո զգացողությունը: Ըստ այդմ, ԱՍՏՂԻԿ - ին անվանում ենք նաև ՎԱՐԴԱՄԱՏՆ, որ նշանակում է Սիրո Գերագույն խորհուրդը Պահպանող:

ՄԻՀՐ /ՄՀԵՐ/ - Ոգու Ուխտի, Հոգևոր Ուխտի, Դաշինքի խորհուրդ:

Լեզվաբանորեն կազմված է՝ ՄԱՀ /ոգի/ բառով և ԱՐ /ուխտ/ արմատով՝ ՄԱՀ - ԱՐ՝ ՄԻՀ - ԸՐ՝ ՄԸՀ - ԷՐ:

Ի դեպ, հնդկական ԹԱՃ - ՄԱՀԱԼ դամբարանը հենց նույն բառակազմությունն ունի և արտահայտում է նույն խորհուրդը՝ ԹԱՃ /մեծ, բարձր/ - ՄԱՀ /ոգի/ - ԱՐ /ուխտ/, որ նույնանում է ՄԻՀՐ /ՄՀԵՐ/ խորհրդին:

Որպես Ոգու Ուխտի խորհուրդ, հայերի մեջ ՄԻՀՐ - ը /ՄՀԵՐ/ հաճախ նույնանում է ԱՐՏԱՎԱԶԴ - ին, որ նշանակում է Արտի Աստված: ԱՐՏ - ը՝ արարումը, արյունը պահպանող Աստվածադիր խորհուրդն է /Օրենքը/: ԵՎ շատ հաճախ այդ երկու խորհուրդները գործածվում են միասին՝ **Արտավազդ Միիր /Արտի Աստված Միիր/**: Երբեմն էլ գործածվում է միայն ԱՐՏԱՎԱԶԴ խորհուրդը:

ՏԻՐ – Իմաստության Աստված: Լեզվաբանորեն դեռ չպարզված:

գ. ՀԱՎԱՏՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՎ- Բառարմատ, որ նշանակում է ԿՅԱՆՔ, ՀՈԳԻ, ՈՒԺ, ԷՈՒԹՅՈՒՆ, ԽՈՐՀՈՒՐԴ:

Օրինակ՝ **հավատ**, **ավյուն**, **հավ**, **արյավ** /արև/, **բարյավ** /բարև/, **բավ**, **ցավ**, **հարյավ**, **Նավասարդ**:

ԱՐԵՎ - Կենսաց Ջորություն, Կենսաց Արարում:

Լեզվաբանորեն կազմված է՝ ԱՐ /արարում, զորություն/ և ԱՎ /կյանք/ արմատներով՝ ԱՐ - ԱՎ՝ ԱՐՅԱՎ /ԱՐԵՎ/:

Ըստ այդմ, ԱՐԵՎ - ը չի նույնանում ԱՐԵԳ - ին: ԱՐԵԳ -ը, որպես Հրե Ջորություն, Կահագնի խորհրդանիշն է /բայց ոչ՝ նույնությունը/: Իսկ ԱՐԵՎ - ը, որպես Կենսաց Ջորություն կամ Կենսաց Արարում, նույնանում է Արարչին: Այսինքն՝ **Արևը Արարչից բխող Կենսաց Ջերմությունն է, Լույսը, Ջորությունը:**

ԱՐԵԳ - Հրե Ջորություն:

Լեզվաբանորեն կազմված է՝ ԱՐ /զորություն/ և ԱԳ /հուր/ արմատներով՝ ԱՐ - ԷԳ /ԱԳ/:

ԱՐԵԳԱՎ - ը կազմված է ԱՐԵԳ բառով և ԱՎ արմատով և նշանակում է Հրե Ջորության Ակ:

ԱՐԵՎՈՐԴԻ /ԱՐՈՐԴԻ/ - Արարչի Որդի, Արարչածին:

Լեզվաբանորեն կազմված է՝ ԱՐԵՎ /Կենսաց Ջորություն/ և ՈՐԴԻ բառերով:

ԱՐԵՎՈՐԴԻՆ կամ ԱՐՈՐԴԻՆ, որպես Հավատքային Խորհուրդ, փաստորեն Արիների հոգևոր էության որակական արտահայտությունն է և նրանց Տեսակի ծագումի ամենաբնական զգացողությունը: Որպես այդպիսին, Արորդյաց Հավատքը գենետիկական որակ է և մշտապես առկա է Ազգի մեջ, գիտակցված կամ չգիտակցված: Բոլոր Հայերը իրենց ծագումով Արորդի են: ԵՎ նրանք, ովքեր գիտակցում են դա, հավատում են. իսկ նրանք, ովքեր չեն գիտակցում, կրոնական մոլուցքով ժխտում են իրենց իսկ ծագումը:

ԱՎԵՏ - Գիտելիք, իմաստավորված խորհուրդ:

Լեզվաբանորեն կազմված է՝ ԱՎ /խորհուրդ/ և ԱՏ/ամփոփում/ արմատներով՝ ԱՎ - ԵՏ /ԱՏ/:

ԱՎԵՏ - խորհրդով են կազմված ԱՎԵՏԵԼ, ԱՎԵՏԻՍ, ԱՎԵՏԱՐԱՆ խորհուրդները: ԱՎԵՏ խորհրդի

հնչյունափոխված ձևերն են ռուսերեն **Վեդատյ**, պարսկերեն **Ավեստա**, հնդկերեն **Վեդա** խորհուրդները:

Ավետարան - նշանակում է **Իմաստավորված խորհուրդների համակարգ**:

ՀԱՎԱՍ - Հաստատուն հոգևոր ընկալում:

Լեզվաբանորեն կազմված է՝ Հ - հունչարմատով, ԱՎ /հոգի/ և ԱՏ /տեղ, տեղադրում/ բառարմատներով՝ Հ - ԱՎ - ԱՏ:

ՀԱՎԱՍՔ - Հոգևոր Բացարձակ խորհուրդ:

Լեզվաբանորեն կազմված է՝ ՀԱՎԱՍ խորհրդով և Ք հոգնակիակերտ ածանցով:

Ըստ այդմ, ՀԱՎԱՍՔ - ը **բազմախորհուրդ հոգևոր ընկալումների համակարգ է**:

ՀԱՎԱՍՔ - ը խիստ տարբեր է ԿՐՈՆ - ից: ՀԱՎԱՍՔ - ը **ներքին զգացողությամբ բնական օրինաչափությունների համակարգի վերապրված խորհուրդ է**: Իսկ ԿՐՈՆ - ը՝ **արտաքին ներգործության կրումն է մարդու մեջ**:

Ըստ այդմ, ՀԱՎԱՍՔ - ը անպայման Ազգային /Ցեղային/ է, իսկ ԿՐՈՆ - ը անպայման անհատական է: **Ազգային Հավատքը Ազգի հոգևոր էության արտահայտությունն է** և անպայման Ցեղային Հավատքի մասնավոր դրսևորումն է:

Ներկայումս Արիական Ազգերի մեջ կան և՛ Հավատքներ, և՛ Կրոններ: Ազգային ՀԱՎԱՍՔ են՝ Բրահմայական Հավատքը Հնդկաստանում, Սինտոյական Հավատքը Ճապոնիայում, Արորոյաց Հավատքը Հայաստանում:

ԿՐՈՆ են Բուդդայականությունը, Զրադաշտականությունը, Մահմեդականությունը, Կրիշնայականությունը, Քրիստոնեությունը:

ՀԵԹԱՆՈՍ - Հունարեն Էթնոս խորհուրդն է, որ նշանակում է ԱԶԳ, ՑԵՂ: ՀԵԹԱՆՈՍ - ն օգտագործվում է ՑԵՂԱՅԻՆ /ԱԶԳԱՅԻՆ/ ՀԱՎԱՍՔ իմաստով:

Ռուսերեն ՀԵԹԱՆՈՍ - ը կոչվում է ՅԱԶԻՉՆԻԿ, որը նույնպես նշանակում է ԱԶԳ: Հայերեն այն կոչվում է ՑԵՂԱԿՐՈՆ կամ ՑԵՂԱՀԱՎԱՏՔ: ՑԵՂԱԿՐՈՆ նշանակում է Ցեղը իր մեջ կրել՝ իր մեջ ունենալ իր ծագումի զգացողությունը, իր արյունի, իր հոգևոր և այլ որակների զգացողությունը:

Ըստ այդմ, փաստորեն, ՀԵԹԱՆՈՍՈՒԹՅՈՒՆ - ը, որպես ՑԵՂԱԿՐՈՆ, **Ազգի /Ցեղի/ հոգևոր էությունն է:** Որպես այդպիսին, ՀԵԹԱՆՈՍՈՒԹՅՈՒՆ - ը հատուկ է բոլոր Ցեղերին: Բայց ամեն մի Ազգ /Ցեղ/ ունի իր առանձնահատուկ ՀԵԹԱՆՈՍՈՒԹՅՈՒՆ - ը, որի հիմքում ընկած է Ազգի /Ցեղի/ ծագումնաբանական որոշակի ըմբռնումը, նրա որակական հատկությունների զգացողությունը: ԵՎ ամեն Ցեղի ՀԵԹԱՆՈՍՈՒԹՅՈՒՆ - ը իր անունն ունի: Արիների ՀԵԹԱՆՈՍՈՒԹՅՈՒՆ - ը կոչվում է ԱՐՈՐԴԻ կամ ԱՐԵՎՈՐԴԻ, որ նշանակում է **Արարչի որդի՝ Արարչածին:**

ԵՎ ՀԵԹԱՆՈՍՈՒԹՅՈՒՆ -ը որպես որոշակի Ցեղի հոգևոր էություն, անպայման իր որոշակի Ցեղային պատկանելությունն ունի: Մարդ չի կարող լինել ընդհանրապես ՀԵԹԱՆՈՍ կամ ՑԵՂԱԿՐՈՆ. նա լինում է Մոնղոլական Հեթանոս, Սեմական Հեթանոս, Նեգրական Հեթանոս... կամ Արիական Հեթանոս, որ իր անունն ունի՝ ԱՐՈՐԴԻ:

ՑԵՂԱԿՐՈՆ - Ցեղը իր մեջ կրել:

Լեզվաբանորեն կազմված է ՑԵՂ և ԿՐՈՆ /կրել/ բառերով:

ՑԵՂԱԿՐՈՆ խորհուրդը բացահայտել է Գարեգին Նժդեհը: Այն համապատասխանում է հունական Հեթանոսին:

ՑԵՂԱԿՐՈՆ - ը ընդհանրական խորհուրդ է: ԵՎ վերացական ՑԵՂԱԿՐՈՆ գոյություն չունի: **Ամեն մի Ցեղ ունի իր առանձնահատուկ ՑԵՂԱԿՐՈՆ - ը, որի հիմքում ընկած է Ցեղի ծագումնային, հոգեբանական, բարոյական, կենսածեղի... զգացողությունը որպես Հավատք:** ԵՎ ամեն Ցեղի ՑԵՂԱԿՐՈՆ իր անունն ունի:

Արի Ցեղի ՑԵՂԱԿՐՈՆ - ը կոչվում է **Արորդի** կամ **Արևորդի**, որ նշանակում է **Արայի որդի՝ Արարչածին**:

Ըստ այդմ, Հայը որպես Ցեղակրոն անպայման Արորդի է և իր մեջ կրում է Արի Ցեղի որակական զգացողությունների համակարգը որպես Հավատք:

ԲՈԳ /ԲԱԳ/ - Հուրի հաստատում, Աստված:

Լեզվաբանորեն կազմված է՝ Բ հաստատական հունչարմատով և ԱԳ /ՕԳ/ բառարմատով:

Հայոց լեզվի մեջ գործածվում է ԲԱԳ ձևը և այն էլ՝ բաղադրություններում՝ **Բագին, Բագրատ, Բագավան, Բագրևանդ**:

ՏԱՃԱՐ - Մեծ գորություն, մեծ ուխտ՝ Ուխտատեղի:

Լեզվաբանորեն կազմված է՝ Տ - հաստատական հունչարմատով, ԱՃ /մեծ, բարձր/ և ԱՐ /գորություն, ուխտ/ բառարմատներով՝ Տ - ԱՃ - ԱՐ:

Ըստ այդմ՝ ՏԱՃԱՐ հենց նշանակում է **Ուխտատեղի**: ԵՎ հենց Ուխտատեղերում էին մեր նախնիները հարաբերվել իրենց նախնյաց ոգիների հետ: Հետագայում այդ Ուխտատեղերում կառուցված շինությունները նույնպես կոչվեցին ՏԱՃԱՐ:

Ուստի ՏԱՃԱՐ են միայն Ուխտատեղերում կառուցված և Գերագույն Խորհուրդներին նվիրված շինությունները:

Աշխարհի յոթ հրաշալիքների մեջ մտնող հնդկական ՏԱՃ ՄԱՀԱԼ դամբարանը ունի հենց հայերեն խորհուրդ՝ **Գերագույն Ոգու Ուխտ՝ ՏԱՃ /բարձր, մեծ/ - ՄԱՀ /ոգի/ - ԱՐ /ուխտ/**:

ՄԵՀՅԱՆ - Ոգու պահպանում, Ոգու Օթևան:

Լեզվաբանորեն կազմված է՝ ՄԱՀ /ոգի/ բառով և ԱՆ /պահպանում/ արմատով:

ՄԵՀՅԱՆ - ը որպես Ոգիների Օթևան, նախնյաց ոգիների հետ հանդիպման, հարաբերման վայր է: ՄԵՀՅԱՆ - ներում են հավաքվում մեր նախնյաց ոգիները, և նրանց հետ էլ մենք հարաբերվում ենք այդտեղ և

նորոգում, զորացնում ենք մեր հոգիները: Ըստ երևույթին, մեր նախնյաց ոգիներն ավելի մոտ են Աստվածներին, և Աստվածների հետ մենք հարաբերվում ենք մեր նախնյաց ոգիների միջոցով: ԵՎ պատահական չէ, որ օրինակ՝ ճապոնացիների մոտ Նախնիների պաշտամունքը գերազանցում է նույնիսկ Աստվածների պաշտամունքին:

Ըստ այդմ, մենք Տաճար ենք շինում որպես ՄԵՀՅԱՆ՝ մեր նախնյաց ոգիների Օթևան: ԵՎ ամեն Տաճար Մեհյան չի կարող լինել, և ամեն տեղ ՄԵՀՅԱՆ կառուցել չի լինի: ՄԵՀՅԱՆ կառուցվում է միայն այն վայրերում, ուր հավաքվում են մեր նախնյաց ոգիները:

Մի Ազգ հոգեպես տկարացնելու, կործանելու համար բավական է նրան կտրել իր նախնյաց ոգիներից: Ահա թե ինչու ամբողջ Հայաստանում կործանել են բոլոր ՄԵՀՅԱՆՆԵՐ - ը և հենց նրանց տեղում կառուցել են օտար ոգիների հետ հարաբերվելու Տաճարներ՝ Եկեղեցիներ: Բայց ազգային ոգիները երբեք չեն հեռանում իրենց Հայրենիքից: Ուստի օտարազգի ոգիները երբեք չեն գալիս Հայաստան և չեն մտնում այդ Տաճարները: Հարազատ ոգիներն էլ արտաքսված են այդտեղից: Ուստի **Հայաստանում կառուցված Քրիստոնեական կամ այլ կրոնական Շինություններում ոչ մի ոգի չկա:** ԵՎ այդ **անոգի Տաճարներում** ամբողջ ծիսակատարությունը զուտ անբովանդակ թատերական ներկայացում է, որտեղից մարդը դուրս է գալիս առավել դատարկված ու ընկճված:

Հայաստանում միակ պահպանված ՄԵՀՅԱՆ - ը վերականգնված ԳԱՌՆԻ Տաճարն է, որտեղ մեր նվիրումի շնորհիվ պիտի հավաքենք մեր նախնիների ցրված ոգիներին:

ՔՈՒՐՍ - Հուրը, զորությունը պահպանող:

Լեզվաբանորեն կազմված է՝ Ք - չգիտակցված հունչարմատով, ԱՐ /զորություն/ բառարմատով և Մ /պահել/ հունչարմատով՝ Ք - ՈՒՐ /ԱՐ/ - Մ:

ՔՈՒՐՍ - ը Արիների հոգևոր առաջնորդ է՝ Արիների մեջ Հուրը, Զորությունը պահպանող:

Համեմատած մյուս՝ Չարի Ցեղերի, Արիների մեջ գերազանցում է Հուրի տարրը: Ըստ այդմ, Արի սերունդները մշտապես իրենց ներքին Հուրի տարրը սնուն են տիեզերական Հուրի արտահայտություններով: ԵՎ սերունդների այդ Հուրի սնունը և պահպանումը իրագործում են ու առաջնորդում ՔՈՒՐՄԵՐ -ը:

ՔՈՒՐՄ - ի հոմանիշն է **ՍՈԳ** խորհուրդը, որ գործածվում է Արիական շատ լեզուներում: Երկու զուգահեռ խորհուրդներն էլ ունեն նույն իմաստը՝ **Հուրը պահպանող:**

Քրմությունը /Մոգությունը/ իմաստության խորհուրդ է, որ ժառանգաբար պահպանվում է Քրմական Տոհմերի մեջ: Ըստ այդմ, Քրմական Տոհմերից ընտրվում և Գերագույն Քրմապետի կողմից օծվում է հոգևոր առաջնորդ՝ ՔՈՒՐՄ:

դ. ԿԵՆԱՑ ՀԱՄԱԿԱՐԳ

ՈԳԻ - Բացարձակ հուրի տեսակային /անհատական/ ամբողջություն:

Լեզվաբանորեն կազմված է՝ Վ /գերագույն, բացարձակ/ հունչարմատով, ԱԳ /ՕԳ/ բառարմատով և Ի - տեսակային ամբողջություն արտահայտող հունչարմատով՝ Վ - ՕԳ /ԱԳ/ - Ի:

Ըստ այդմ, ՈԳԻ - նշանակում է **տեսակային /անհատական/ բացարձակ հուր:**

Փաստորեն ՈԳԻՆ - աննյութ, հրե մարմնով ՀՈԳԻՆ է, իսկ ՀՈԳԻՆ - նյութականացված մարմնով ՈԳԻՆ է: /տես՝ ՀՈԳԻ/:

ՀՈԳԻ - Տեսակային /անհատական/ ամբողջության հուրի հաստատում:

Լեզվաբանորեն կազմված է՝ Հ /հաստատում/ հունչարմատով, ԱԳ /ՕԳ/ բառարմատով և Ի -

տեսակային ամբողջությունն արտահայտող հունչարմատով Հ - ՕԳ /ԱԳ/ - Ի:

Ըստ այդմ, ՀՈԳԻ - նշանակում է տեսակային /անհատական/ մարմնավորված հուր: Փաստորեն ՀՈԳԻ - ն նյութականացված մարմնով ՈԳԻՆ է, իսկ ՈԳԻ - ն աննյութ, հրե մարմնով ՀՈԳԻՆ է: /տես՝ ՈԳԻ/:

ԳԵՆ - Կյանք /Գյանք/ խորհրդի եզակի արտահայտությունն է:

Լեզվաբանորեն կազմված է՝ Գ /արտահայտություն/ հունչարմատով և ԱՆ /ծնունդ/ բառարմատով՝ Գ - ԷՆ /ԱՆ/:

ԳԻՆԻ - Կենաց հեղուկ:

Լեզվաբանորեն կազմված է՝ ԳԵՆ /կյանք/ բառով և Ի - տեսակային ամբողջությունն արտահայտող հունչարմատով՝ ԳԵՆ - Ի:

ԳԻՆԻ - ն արտահայտում է կյանքի հետ կապված որոշակի տեսակային ամբողջության անուն, որ տրվել է որոշակի հեղուկին՝ **Կենաց Հեղուկ**:

Ըստ այդմ, ԳԻՆԻ - ն միշտ էլ համարվել է սուրբ ըմպելիք: ԳԻՆԻ - ն տարբեր հնչյունափոխություններով գործածվում է նաև Արիական այլ Լեզուներում՝ **վինո, վյան...**

Ըստ երևույթին, մեր հեքիաթներում արտահայտված **անմահական ջուրը հենց ինքը՝ Կենաց Հեղուկն է՝ զինին:**

ԿՅԱՆՔ - Ոգու մարմնավոր կեցության պարբերությունների բազմակիություն:

Լեզվաբանորեն կազմված է՝ ԳԵՆ խորհրդով և Ք հոգնակիակերտ ածանցով՝ ԳԵՆ - Ք՝ ԳՅԱՆ - Ք՝ ԿՅԱՆ - Ք:

Եվ հենց այն փաստը, որ ԿՅԱՆՔ խորհուրդը հոգնակի թիվ է, հիմնավորում է նրա բազմակի լինելը: Այսինքն, որ **մարդ բազմաթիվ անգամ վերածնվում է և ապրում մարմնավոր բազմաթիվ պարբերություններ:**

ԿՆՈՒՆՔ - Կյանքի հաստատում, օժուճ:

Լեզվաբանորեն կազմված է՝ **ԳԵՆ** /կյանք/ և **ՈՒՆՔ** /օժուճ, հաստատում/ բառերով՝ **ԳԵՆ - ՈՒՆՔ**:

Կնունքը որպես կյանքի հաստատում կամ կյանքի օժուճ, բնական օրինաչափության ընկալման որոշակի արտահայտություն է, որ ավանդաբար հասել է մեզ /տես՝ Արարատյան Դիցաբանություն/:

Ըստ բնական օրինաչափության, ծնված երեխան մտնում է իր կյանքի մի նոր միջավայր, որը խիստ տարբեր է նրա նախնական մայրական ներքին միջավայրից: ԵՎ երեխան նախքան իրական կյանքի մեջ մտնելը, պետք է հարմարվի կյանքի այս նոր միջավայրին՝ օդին, լույսին, ձայնին... Մեր նախնյաց իմաստությունը հաստատել է, որ երեխան նոր միջավայրին հարմարվում է քառասուն օրում: Այդ ընթացքում երեխային պահպանում են արտաքին այլևայլ շփումներից ու ազդեցություններից: Այդպես մտել է նաև **ՔԱՌԱՍՈՒՆՔ** խորհուրդը:

ԵՎ երեխային Քառասունքից հանելիս, կնքում են՝ հաստատում են նրա ծագումը, օժուճ են նրա մարմինը պահպանիչ ծաղկայուղով և հանձնում են Կյանքին ու Աստվածների հովանավորությանը: Հենց սա է **ԿՆՈՒՆՔ** - ի իրական և նախնական խորհուրդը:

Չափահասների Կնունքը տարբեր Կրոնների ազդեցության արդյունք է, որպես այս կամ այն Կրոնին անհատի նվիրումի հաստատում:

Ի դեպ, որպես Քրիստոնեական Կրոնին հայ անհատի նվիրումի արտահայտություն, Եկեղեցին Կնունքը նույնացրել է Մկրտությանը:

Սակայն Մկրտությունը իր խորհրդով խիստ տարբեր է Կնունքից: Մկրտությունը իր հիմքում ունի Մկրատ բառը և նշանակում է՝ **Մը - կրտել**: Ըստ այդմ, Մկրտությունը նույնանում է Թլպատումին, որ կատարում են Հրեաներն ու Մահմեդականները: Բայց նրանք կատարում են մարմնական **Մը-կրտություն**: Իսկ Հայ Քրիստոնեական Եկեղեցին, փաստորեն, **Մ-կրտում է** Հոգին:

ԱՆՀԱՏ - Ամբողջական:

Լեզվաբանորեն կազմված է ԱՆ - ժխտական
ածանցով և ՀԱՏ /հատել/ բառով:

Մարդը Անհատ է, այսինքն՝ ամբողջական է, երբ նրա
մտածելակերպը համապատասխանում է նրա գեներտիկ
պահանջմունքներին: Հաճախ մարդը բաժանված է լինում
ինքն իր մեջ, երբ նրա գեներ մի բան է պահանջում, իսկ
գաղափարը՝ ուրիշ բան: Այդ մարդը երկվության մեջ է, և
մշտական ներքին պայքար է գնում նրա մեջ. այդ մարդը
ամբողջական չէ՝ նա Անհատ չէ:

ՄԱՀ - Պարփակված զորություն, ոգի /հոմանիշ է ՄԵՌ
խորհրդին/:

Լեզվաբանորեն կազմված է՝ Մ /պահպանել/
հունչարմատով և ԱՀ /հզոր/ բառարմատով:

Ըստ այդմ՝ ՄԱՀԱՆԱԼ նշանակում է **ոգիանալ**: ՄԱՀ -
ից են առաջացել **Մեհեկան** ամսանունը, **Մեհյանը** և **Միիր**
/Միեր/ աստվածային խորհուրդը:

ՄԵՌ - Պարփակված զորություն /հոմանիշ է ՄԱՀ խորհրդին/:

Լեզվաբանորեն կազմված է Մ /պահել/
հունչարմատով և ԱՐ /ԵՌ/ բառարմատով՝ Մ - ԵՌ /ԱՐ/:

Ըստ այդմ՝ **մեռնել** - մահանալ, **մեռած** - մահացած,
Ձմեռ - Հարաբերական մահ:

Բ - Հունչարմատ, որ հաստատական իմաստ ունի:

ԲԱՆ - Էություն, որակ:

Լեզվաբանորեն կազմված է՝ Բ - հաստատական
հունչարմատով և ԱՆ /ծնունդ, ծագում/ բառարմատով:

ԲԱՆԱԿԱՆ - Էության ակունքից բխող հոգեմտային որակ:

Լեզվաբանորեն կազմված է՝ ԲԱՆ /էություն/ բառով և
ԱԿ /ակունք/, ԱՆ /ծնունդ/ արմատներով՝ ԲԱՆ - ԱԿ - ԱՆ:

Ըստ այդմ, **Բանականությունը անհատական որակ չէ.**
այն Ազգ - Տեսակի ակունքից բխող հոգեմտային որակ է:

ԲԱՐԵՎ - Ողջույնի խորհուրդ, որ նշանակում է՝ ԱՐԵՎԴ
ՀԱՍՏԱՏ ԼԻՆԻ /Կյանքիդ Ջորությունը հաստատ լինի/:

Լեզվաբանորեն կազմված է՝ Բ - հաստատական
հունչարմատով, ԱՐ /գորություն/ և ԱՎ /կյանք/
արմատներով՝ Բ - ԱՐ - ԱՎ՝ ԲԱՐՅԱՎ՝ ԲԱՐԵՎ:

Ի դեպ, նույն ԱՐ և ԱՎ արմատներով է կազմված նաև
ռուս-արիական լեզվով **Ջորավստվոյ** - ողջույնի
խորհուրդը՝ զդ - ԱՐ - ԱՎ - ստվոյ, որ նույնպես
նշանակում է Կյանքիդ գորությունը հաստատ լինի:

ԲՈՒՆ - Ծագումի հիմք, արմատ:

Լեզվաբանորեն կազմված է Բ - հաստատական
հունչարմատով և ՈՒՆ /ԱՆ/ բառարմատով:

ԲՆՈՒԹՅՈՒՆ - Հիմքային ամբողջական համակարգ:

ԲՆԱԿԱՆ - Հիմքի ակունքից բխող օրինաչափություն:

Լեզվաբանորեն կազմված է ԲՈՒՆ բառով և ԱԿ /ակունք/,
ԱՆ /ծնունդ/ բառարմատներով:

ԲՆԱԶԴ - Բնական ազդակ, բնականի արտահայտություն:

Լեզվաբանորեն կազմված է ԲՈՒՆ /արմատ, համք/ և
ԱԶԴ /հաստատում/ բառերով:

Ըստ այդմ, Բնազդը անհատական հոգեմտային որակ
է: ԵՎ անհատական **բնազդը** զարգանալով ազգային
Բանականության մեջ, վերաճում է **իմաստության**: Իսկ
եթե անհատական **բնազդը** զարգանում է ազգային
Բանականությունց դուրս, արտաքին իմացական հիմքի
վրա, վերաճում է **դատողության**:

ԲՈՒԺ - Ուժը հաստատել, ուժը վերականգնել:

Լեզվաբանորեն կազմված է Բ - հաստատական
հունչարմատով և ՈՒԺ բառարմատով՝ Ս - ՈՒԺ:

ԱՈԱԶ - Աճի ընթացք:

Լեզվաբանորեն կազմված է ԱՌ /դեպի/ - ԱՃ
արմատներով:

Ըստ այդմ, ԱՌԱՋ - ը ընդունված է որպես ԱՃի ընթացք դեպի ապագա: ԱՌԱՋ - ի հակադրությունն է համարվում ՀԵՏ - խորհուրդը, որպես ընթացք դեպի անցյալ:

Օրինակ՝ Գնալ առաջ /ընթացք դեպի ապագա/,
Գնալ հետ /ընթացք դեպի անցյալ/:

Սակայն, Հայոց Լեզվի մեջ ԱՌԱՋ և ՀԵՏ խորհուրդները հաճախ փոխարինում են իրար.

Օրինակ՝ Մի տարի առաջ / սա ընթացք է դեպի անցյալ/,

Մի տարի հետո /սա ընթացք է դեպի ապագա/:

Այստեղից բխում է, որ ԱՌԱՋ և ՀԵՏ խորհուրդները նույնանում են իրար: ԵՎ փաստորեն ԱՃի ընթացքը պայմանավորում է ոչ միայն ապագան, այլև՝ անցյալը: Այսինքն՝ ապագան ունի իր ապագան, անցյալն էլ իր անցյալն ունի: ԵՎ դրանք նույնանում են իրար: Եթե մենք գնանք ԱՌԱՋ դեպի ապագա, կհասնենք ապագայի ապագային, որը հենց անցյալի անցյալն է. եթե մենք գնանք ՀԵՏ դեպի անցյալ, կհասնենք անցյալի անցյալին, որը հենց ապագայի ապագան է:

Այս երկու խորհուրդների նույնության զգացողությունը կարևոր հիմք է հանդիսանում մեր աշխարհընկալման համար:

ԾԻՐԱՆ - Ծիրի /տիեզերական/ պտուղ:

Լեզվաբանորեն կազմված է՝ ԾԻՐ և ԱՆ բառարմատներով: Ըստ այդմ, ԾԻՐԱՆ - ը համարվում է ԿԵՆԱՑ ՊՏՈՒՂ: Կենաց Պտուղը Սիրո հավերժական Ծիրն է, որի սերմը հենց ինքը՝ Հայր Արան է զգել Արարատի հողի մեջ: ԵՎ դա միակ պտուղն է, որ ձեռքով բաժանվում է երկու հավասար մասի:

Ըստ հայկական ավանդության /տես՝ Արարատյան Դիցաբանություն/, երջանիկ էին Արարատում երկրային աստված Արին ու գեղեցկուհի Արփին: Պատանեկան լուսե սիրով էին սիրում իրար: Հովի պես քնքուշ էր նրանց

սերը, արեգի պես ջերմ, երկնքի պես անկիրք: ԵՎ նույնիսկ իրենց մերկությունը չէին զգում նրանք:

Հիանում էին Աստվածները նրանց սիրով: Բայց Աստվածամայր Անահիտը մի օր զգուշացրեց. „ Եթերային սերը պատանեկան մենաշնորհն է, կենաց գարունքի հրաշալիքն է դա: Բայց գարունքի հետ կանցնի այդ սերը, եթե այն չվերաճի պտղաբերումի սիրո: Սիրո հավերժումը սերնդատվության մեջ է,,:

ԵՎ Աստվածամայր Անահիտի կամքով Արին ու Արփին ճաշակեցին Կենաց Պտուղը: Նայեցին իրար Արին ու Արփին, տեսան իրար այնքան իրական: Ամաչեցին իրենց մերկությունից, ծածկեցին իրենց մերկությունը և ապա ցանկացան իրար: ԵՎ նրանց սիրո հավերժումը հաստատվեց սերնդատվությամբ:

Իսկ Կենաց Պտուղը կոչվեց **Ծիրան**:

Ծիրանը, որպես Կենաց Պտուղ, միայն Արարատում է աճում: Արարատից դուրս այն գենախեղվում է, կորցնում է Ծիրանի շատ հատկանիշներ, ուստի և չի կարող կոչվել Ծիրան. և պատահական չէ, որ այն կոչվում է Հայկական Պտուղ կամ Հայկական Խնձոր:

Ե. ԾԱԳՈՒՄՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՐՄԱՍ - Ջորությունը, կենսունակությունը պահպանող:

Լեզվաբանորեն կազմված է՝ ԱՐ /գորություն, սերում/
արմատով և ՄԱՍ /պահպանել/ բառով:

ԱՐՅՈՒՆ - Ջորությունը սնող, պահպանող:

Լեզվաբանորեն կազմված է ԱՐ /գորություն/ և ԱՆ
/ծնող, սնող, պահպանող/ արմատներով՝ ԱՐ - ՈՒՆ /ԱՆ/
ԱՐՅՈՒՆ:

ՑԵՂ - Ծագումնային նախահիմք, Տեսակ:

Լեզվաբանորեն կազմված է՝ Ց - հունչարմատով և ԱՂ
/գարմ/ բառարմատով՝ Ց - ԵՂ /ԱՂ/:

Ըստ այդմ, ՑԵՂ - ը մարդկային բնական Տեսակ է, որպես ազգերի ծագումնային նախահիմք: ԵՎ վերացական Ազգ գոյություն չունի: Բոլոր Ազգերը իրենց ծագումով պատկանում են այս կամ այն բնական Տեսակին՝ ՑԵՂ - ին: ՑԵՂ - ը մի բնական օրգանիզմ է, որն ունի իր օրգանական մասերը՝ իր Ազգերը:

Միաժամանակ ՑԵՂ - ն էլ օրգանական մաս է ավելի մեծ բնական օրգանիզմի՝ Մարդկային Սեռի մեջ: ԵՎ որքան ՑԵՂ - ի կենսունակությունը կախված է իր բոլոր օրգանական մասերի՝ Ազգերի կենսունակությունից, նույնքան էլ Մարդկային Սեռի կենսունակությունը կախված է իր բոլոր օրգանական մասերի՝ ՑԵՂԵՐ - ի կենսունակությունից:

Ըստ այդմ, որքան վտանգավոր է ազգային ու ցեղային անհանդուրժողականությունը, նույնքան էլ վտանգավոր է ազգայինի ու ցեղայինի ժխտումը:

ԱԶ - Կենսակերտ արմատ, որ արտահայտում է ԾԱԳՈՒՄ, ԶՈՐՈՒԹՅՈՒՆ, ՎԵՀՈՒԹՅՈՒՆ, ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆ, ՈՐԱԿ իմաստներ:

Օրինակ՝ **ազգ**, **ազնվ** ական, **Արագ**, **Հայկազ**, **ազատ**, **ազդ**...

Որպես կենսակերտ արմատ, ԱԶ - ը կարող է որոշ բաղադրություններում համապատասխանել ԱՐ և ԱՆ կենսակերտ արմատներին:

Օրինակ՝ **ազնիվ** - բարի, **Հայկազ** - Միհրան:

ԱԶԴ - Զորության, Ծագումի, Խորհրդի ՈՐՈՇԱԿԻՈՒԹՅՈՒՆ, ՀԱՎԱՍՏՈՒՄ, ՀԱՍՏԱՏՈՒՄ:

Լեզվաբանորեն կազմված է կենսակերտ ԱԶ բառարմատով և Դ /S/ հաստատում արտահայտող հունչարմատով:

ԱԶԴ - ը բաղադրություններում արտահայտում է կենսունակությունը հաստատող, որոշակի խորհուրդներ:

Օրինակ՝ **մազդ** - պաշտամունք, պաշտելի: Արտավ**ազդ** - ոգու զորության ուխտ:

ԱԶԳ - Արյունակցական Որակական Ամբողջություն:

Լեզվաբանորեն բաղադրյալ բառ է՝ կազմված է ԱԶ /ծագում/ բառարմատով և Գ հունչարմատով, որն ունի **արտահայտության, մարմնավորումի** իմաստ:

Նույն ԱԶ - արիական արմատով են կազմված նաև ռուսերեն Յագիցա և լատիներեն Նացիա խորհուրդները:

Որպես Արյունակցական Որակական Ամբողջություն, Ազգը մի բնական օրգանիզմ է և ունի իր բնական օրգանական մասերը՝ Տոհմերը: Միաժամանակ Ազգը ինքն էլ մի բնական օրգանական մաս է մեկ այլ բնական ամբողջության՝ Մարդկային որոշակի Տեսակի Ցեղի մեջ:

Ըստ այդմ, Ցեղը Ազգի ծագումնային հիմքն է: ԵՎ վերացական Ազգ գոյություն չունի. կան Արիական ծագում ունեցող Ազգեր, Չինական, Սեմական, Նեգրական, Մոնղոլական և այլ ծագում ունեցող Ազգեր: Արիական Ազգերը բնական ճյուղերն են Արիական Ցեղածառի, որի Արմատը գտնվում է Արարատում:

Ըստ Արարատյան Ավանդության, Հնդարիական Ազգերը առաջացել են Արամի որդի Ինդրայից: Արեշից առաջացել են Իրանական Ազգերը: Ալանից առաջացել են Հյուսիս-Կովկասյան Ազգերը: Ջևաից առաջացել են Հույն և Լատինական Ազգերը: Հավանաբար Գերմանական Ազգերը գալիս են Հայկի սերունդներից, քանզի նրանք արդյունք են Արարատից ավելի ուշ արտագաղթի, երբ արդեն Արարատյան Արիները կոչվում էին Արմեն, իսկ Արարատը՝ Արմենիա: Դա է վկայում նրանց անունը՝ /Գ/երման կամ Ալեման: Ավելին՝ «Անգլո-Սաքսոն Տարեգրության» մեջ գրված է. « Այս կղզու առաջին բնակիչները եղել են Բրիտոնները, որոնք եկել են Արմենիայից»: «The Anglo-Sakson Chronikle », London, 1861. Գերմանների և Ալանների միախառնվելուց առաջացել են Սլավոնական Ազգերը:

ՏՈՀՄ - Կենսունակությունը պահպանող:

Լեզվաբանորեն կազմված է՝ Տ - հաստատական հունչարմատով, ԱՀ /հզոր/ բառարմատով և Մ /պահպանել/ հունչարմատով՝ Տ - ԱՀ /ՕՀ/ - Մ:

ՏՈՀՄ - երը ազգի օրգանիզմում բնական, օրգանական մասեր են, որոնք իրենց սերնդատվությամբ ապահովում են ազգի կենսունակությունը: Ըստ այդմ, չկա ՏՈՀՄ Ազգից դուրս և չկա Ազգ առանց ՏՈՀՄ - ի: ԵՎ ՏՈՀՄ - երի քայքայումը հանգեցնում է ազգային օրգանիզմի քայքայմանը: Ազգը գորավոր է այնքանով, որքանով գորավոր են նրա ՏՈՀՄ - երը:

Որպես Ազգի սերնդատվության օջախ, ՏՈՀՄ -ը ունի իր ընտանիքները: Իր ընտանիքների միջոցով է ՏՈՀՄ -ը ապահովում Ազգի սերնդատվությունը: Ըստ այդմ, **ընտանիք չի ստեղծվում. ընտանիքները ճյուղավորվում են Տոհմի մեջ:** Ընտանիքը անպայման Տոհմական է: ԵՎ ՏՈՀՄ - ից դուրս կազմված ընտանիքը օրինաչափության խախտում է, ուստի և ինքնին ազգային չարիք է:

ԼԵԶՈՒ - Ազգային խորհուրդների համակարգ:

Լեզվաբանորեն կազմված է՝ Լ և ՈՒ չգիտակցված հունչարմատներով և ԱԶ /ծագում/ բառարմատով՝ Լ - ԷԶ /ԱԶ/ - ՈՒ:

Լեզուն ազգային ներքին ծագումնային որակ է: Ազգը իսկզբանե զգալով իր ծագումը, իր որակները, իր բնօրրանը, բնական գորությունները... յուրովի ընկալում է դրանց խորհուրդները: ԵՎ Ազգային Լեզուն - ազգային խորհուրդների համակարգ է: Ըստ այդմ, **Ազգային Լեզուն** իր Ազգի մեջ ներկայանում է որպես **ներքին ծագումնային որակ**, իսկ ուրիշ Ազգերի մեջ՝ որպես **արտաքին հաղորդակցման միջոց:**

Ի դեպ, ինչպես չկա վերացական Ազգ, այնպես էլ չկա վերացական Ազգային Լեզու: Եթե Ազգը Ցեղի օրգանական մաս է, ուրեմն Ազգային Լեզուն էլ Ցեղի Լեզվի օրգանական մաս է: ԵՎ պատահական չէ, որ աշխարհի բոլոր Լեզուները խմբավորվում են ըստ իրենց ծագումնաբանական ընդհանրության՝ Արիական /Հնդեվրոպական/ Լեզուներ, Չինական, Սեմական, Թուրքական և այլ ծագում ունեցող Լեզուներ: Ըստ այդմ, փաստորեն Ազգային Լեզուները իրենց Ցեղային Լեզվի մասնավոր դրսևորումներն են՝ բարբառները:

Արիական Ցեղալեզուն ձևավորվել է Արարատում և հենց Արարատից է տարածվել աշխարհով մեկ: Փաստորեն բոլոր **Արիական Ազգային Լեզուները Արիական Ցեղալեզվի, այսինքն՝ Հայոց Լեզվի բարբառներ են**, որ այնուհետև զարգացել են ինքնուրույնաբար և տարբեր պայմաններում: Դա հիմնավորվում է հենց այն իրողությամբ, որ Արիական այլ Լեզուների շատ արմատական խորհուրդներ բացատրվում են Հայերեն /գուցե և միայն Հայերեն/:

Օրինակ՝
Յագիկ՝ /ԱՁ /ծագում/ - ԻԿ / - Լեզու.
Յագիցա՝ /ԱՁ - ԻՑԱ / - Ազգ.
Կնյազ՝ /ԿԸՆ - ԱՁ / - Ազնվական.
Բրավո՝ /ԲԱՐ - ԱՎ - Օ / - Բարյավ.
Բարին, Բարոն՝ /ԲԱՐԻ/ - Արիական ծագում ունեցող.
Ազնի, Ազոն՝ /ԱԳՆ/ - Հուր.
Աննա՝ /ԱՆ - ԱՀ / - Աստվածամայր.
Ատրուշան՝ / ԱՏՐ - ՈՒՇ - ԱՆ / - Սուրբ կրակի պահպանում:

Որպես ազգային խորհուրդների համակարգ, Ազգային Լեզուն սովորաբար չի ընդունում օտար փոխառություններ: ԵՎ եթե որոշ օտար բառեր պարտադրվում են, ապա Ազգային Լեզուն դրանք չի մարսում, քանի որ օտար բառերը իրենց մեջ ազգային խորհուրդ չունեն: ՈՒստի փոխառությունները ժամանակավոր երևույթ են Ազգային Լեզվի մեջ:

ԱՁՆԻՎ /ԱՁՆՎԱԿԱՆ/ - ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ, ՋՏԱՐՅՈՒՆ, համապատասխանում է ԲԱՐԻ խորհրդին:

Լեզվաբանորեն կազմված է ԱՁ - կենսակերտ արմատով, Ն - որոշակիություն արտահայտող հունչարմատով և ԻՎ - բառարմատով՝ ԱՁ -Ն - ԻՎ:

ԻՎ - ը ունի երկու կիրառություն.

1. հոլովական վերջավորություն՝ բանիվ, մարմնիվ, ամենայնիվ...

2. չգիտակցված արմատ՝ տիվ, ճիվ, թիվ, անիվ...

Ըստ երևույթին, ԱԶՆԻՎ խորհրդի մեջ ԻՎ - ը հոլովական վերջավորություն է՝ ազնիվ մարդ - ծագումով մարդ:

Ռեստի սխալ է ԱԶՆԻՎ - ը կամ ԱՆԱԶՆԻՎ - ը դիտել որպես վարքագիծ: Իրականում ԱԶՆԻՎ նշանակում է գտարյուն, ծագումով, իսկ ԱՆԱԶՆԻՎ - ը՝ ոչ գտարյուն, ծագում չունեցող:

ԱՐԵՎՈՐԴԻ /ԱՐՈՐԴԻ/ - Արարչի Որդի, Արարչածին:

Լեզվաբանորեն կազմված է՝ ԱՐԵՎ /Կենաց Ջրություն/ և ՈՐԴԻ բառերով:

ԱՐԵՎՈՐԴԻ կամ ԱՐՈՐԴԻ խորհուրդը, որպես Արարչածին, մեր նախնիների ծագումնաբանական որոշակի ըմբռնումների արտահայտություն է:

Բնագիտությանը արդեն հայտնի բնական չորս տարրերի՝ Հուրի, Օդի, Ջրի, Հողի տարբեր հարաբերակցություններն են բնորոշում տարբեր Տեսակների բազմազանությունը: Հենց այդ բնական օրինաչափությունն է արտահայտված մարդկային տարբեր Տեսակների՝ Ցեղերի, ծագումնաբանական ըմբռնումների մեջ:

Ըստ երևույթին, Տիտանների մեջ գերազանցում է Հողի տարրը, և նրանք իրենց ծագումնաբանությունը կապում են Հողի հետ: Դա է վկայում հենց Տիտանների Բիբլիան, որտեղ նրանց նախահայրը՝ Ադամը, հողածին է:

Իսկ Արիների մեջ գերազանցում է Հուրի տարրը, որի շնորհիվ էլ Արիները իրենց ծագումը կապում են Հուրի հետ և իրենց համարում են Հրածին կամ Արարչածին: ԵՎ ծագումնաբանական այդ ըմբռնումը արտահայտվում է բոլոր Արի Ազգերի ավանդությունների մեջ: Այդ ըմբռնումի արտահայտություն են նաև մեր Ազգի անունները՝ ՀԱՅՔ /ՀԵԳ/, որ նշանակում է **Բացարձակ Հուր, Հրածին /աստված/** և ԱՐՄԵՆ, որ նշանակում է **Աստվածամարդիկ:**

Ըստ ավանդության /տես՝ Արարատյան Դիցաբանություն/, Արարիչը Արարատում արարել է

առաջին երկրային ՀԵԳ /աստված/ Արիին, որի սերունդներն էլ կոչվում են ԱՐՄԵՆ /ԱՐԻ/ կամ ՀԱՅ:

ԱՐԻ - Որոշակի ծագումնային - տեսակային ամբողջության **Ցեղի անուն**, նաև **Աստված**:

Լեզվաբանորեն կազմված է՝ ԱՐ /ծագում, սերունդ/ կենսակերտ արմատով և Ի - տեսակային ամբողջության իմաստ արտահայտող հունչարմատով:

Ըստ ավանդության /տես՝ Արարատյան Դիցաբանություն/, Արարիչը Արարատում արարել է առաջին երկրային աստված Արիին: ԵՎ Արիից առաջացած սերունդները կոչվում են Արիներ կամ Արմեն /Աստվածամարդիկ/:

Փաստորեն՝ **ԱՐԻ** նշանակում է աստված /երկրային/, որից էլ առաջացել է **աստվածամարդերի՝ Արի կամ Արմեն Ցեղը**, որպես որոշակի բնական Տեսակ: Ըստ այդմ, Արի Ցեղը միջանկյալ մի Տեսակ է Աստվածների ու Մարդկանց միջև, իր մեջ կրելով և՛ մարդկային, և՛ աստվածային որակներ: ԵՎ ԱՐԻ - ն հոմանիշ է ՀԱՅ -ին:

Ի դեպ, բոլոր Արի Ազգերի մեջ պահպանվում է իրենց Արիական ծագումի զգացողությունը: Իսկ որոշ Ազգեր նույնիսկ իրենց անվան մեջ պահպանում են Արի Ցեղային անունը.

Օրինակ՝ ԱՐՄԵՆ, որ նշանակում է Արի մարդիկ, Արիներ. ԻՐԱՆ՝ Արիան, ԱԼԱՆ՝ Արիան, ԻՐԼԱՆԴ՝ Այրիշ, ՀԵԼԵՆ՝

/Արիան/: Իսկ Գերմանացիները ճանաչված են ԱԼԵՄԱՆ /Արիման/ և ՀԵՐՄԱՆ /Էրման/ անուններով:

Այդ տարբեր Ազգերի անվանական նույնությունը արդեն հաստատում է նրանց ծագումնային նույնությունը, որպես մարդկային մի Տեսակի՝ Արի Ցեղային Ամբողջություն:

Ի դեպ, ԱՐԻԱՑԻ արտահայտությունը հայերեն սխալ է: Հայերեն ԱՐԻ է:

ԱՐՄԵՆ - Արի մարդիկ՝ Աստվածամարդիկ:

Լեզվաբանորեն կազմված է՝ ԱՐԻ /աստված/ և ՄԱՆ, ՄԵՆ /մարդ, մարդիկ/ բառերով՝ ԱՐԻ - ՄԱՆ /ՄԵՆ/:

Փաստորեն, նույնանուն են Ազգի և Ցեղի անունները՝ ԱՐԻՆԵՐ կամ ԱՐՄԵՆ: Ըստ այդմ, ԱՐՄԵՆ -ին / ՀԱՅ -ին/ Ազգ անվանելը որոշ չափով պայմանական է: ԵՎ այն, որ բոլորը Հայերին ճանաչում են ԱՐՄԵՆ անունով, հաստատում է, որ Արմենը /Հայը/ Արի Ցեղի Արմատն է, և նրանից են ածանցվել բոլոր Արի Ազգերը: Այսինքն՝ **Արմեն /Հայ/ Ազգը հենց ինքը Արի Ցեղն է:** Նախ, որ Ցեղանունի ուղիղ ձևը պահպանվում է միայն Արմեն անվան մեջ, իսկ մյուս Ազգերը կրում են Ցեղանվան հնչյունափոխված ձևերը: ԵՎ ապա՝ հենց Արմենները /Հայերն/ են իսկզբանե բնակվում Արի Ցեղի բնօրրանում՝ Արարատում, որտեղից էլ Արիները տարածվել են և տարբեր ազգային ամբողջություններ կազմել:

ԲԱՐԻ - Արիական ծագում ունեցող: Համապատասխանում է ԱԶՆԻՎ խորհրդին:

Լեզվաբանորեն կազմված է՝ Բ - հաստատական հունչարմատով և ԱՐԻ խորհրդով:

Ըստ այդմ, ԲԱՐԻ - ն չի նշանակում **լավ**, իսկ ՉԱՐԻ - ն՝

վատ: Իրականում ԲԱՐԻ նշանակում է **Արիական ծագում ունեցող**, իսկ ՉԱՐԻ՝ ՈՉ ԱՐԻ - **Արիական ծագում չունեցող:**

ԲԱՐԻ խորհրդի արտահայտություն են նաև բուսերեն ԲԱՐԻՆ - ը ու ֆրանսերեն ԲԱՐՈՆ - ը, որոնք Ազնվականության /ծագում ունեցողի/ միևնույն խորհուրդն են: Ի դեպ, հենց հայերեն ԲԱՐԻ խորհրդի ֆրանսիական ԲԱՐՈՆ արտահայտությունն է, որ ՊԱՐՈՆ չգիտակցված ու աղավաղված ձևով այսօր գործածվում է հայերի մեջ:

ՀԱՅԳ /ՀԵԳ/ - Բացարձակ Հուր, Հրածին, Աստված:

Լեզվաբանորեն կազմված է՝ Հ բացարձակություն արտահայտող հունչարմատով և ԱԳ /ԷԳ/ բառարմատով՝ Հ - ԷԳ Հ - ԱՅԳ:

ՀԱՅ - ը և ՀԱՅԿ - ը ՀԱՅԳ - ի արտահայտություններն են:

Ըստ հայկական ավանդության /տես՝ Արարատյան Դիցաբանություն/, Արարիչը Արարատում արարել է երկրային աստծուն՝ ՀԱՅԳ - ին և իր անունով անվանել ԱՐԻ: ԵՎ նրանից առաջացած սերունդները կոչվում են ԱՐՄԵՆ՝ **Աստվածամարդիկ** կամ պարզապես **Արիներ** և ՀԱՅ/Գ/ԱՄԱՐԴ՝ **Աստվածամարդ** կամ պարզապես **Հայ**:

Ըստ պարսկական ավանդության /տես՝ Ավեստա/, Արարիչը արարել է ՀԱՅԱՄԱՐԴՈՒՄ՝ **Աստվածամարդուն**, որից էլ սերվել են մարդիկ:

Ըստ այդմ, ՀԱՅ - ը հոմանիշ է ԱՐԻ - ին. Երկունս էլ նշանակում են **Աստված**: ՀԱՅԱՄԱՐԴ - ը հոմանիշ է ԱՐՄԵՆ - ին. Երկունս էլ նշանակում են **Աստվածամարդ**: Ուստի հոմանիշ են նաև ԱՐԱՐԱՍ և ՀԱՅԱՍՏԱՆ խորհուրդները. ԱՐԱՐԱՍ նշանակում է **Արարման Վայր**, իսկ ՀԱՅԱՍՏԱՆ նշանակում է **Աստվածավայր**:

ԵՎ Արի Ցեղը կարելի է անվանել նաև Հայ Ցեղ, որի Արմատը պահպանվում է Արարատ - Հայաստանում, կոչվելով և՛ Հայ, և՛ Արմեն:

ՀԱՅԱՍՏԱՆ - Աստվածավայր:

Լեզվաբանորեն կազմված է՝ ՀԱՅԳ /աստված/ - ԱՍՍ /խորհրդի հաստատում/ բառերով և ԱՆ /ծնունդ, պահպանում/ արմատով՝ ՀԱՅ - ԱՍՍ - ԱՆ՝ Աստվածավայր:

Ըստ այդմ, փաստորեն հոմանիշ են ԱՐԱՐԱՍ և ՀԱՅԱՍՏԱՆ խորհուրդները. ԱՐԱՐԱՍ - /Արիների/ **Արարման վայր**, ՀԱՅԱՍՏԱՆ - **Աստվածավայր**:

ՄԱՆ - Ծնունդի արտահայտություն, մարդ:

Լեզվաբանորեն կազմված է՝ Մ /արտահայտել/ հունչարմատով և ԱՆ /ծնունդ/ բառարմատով:

ՄԱՆ - ը **մարդ** իմաստով գործածվում է շատ Արիական լեզուներում: Ըստ որում, ՄԱՆ - ը եզակի թիվ է ցույց տալիս, իսկ ՄԵՆ - ը՝ հոգնակի: Հայերենում ՄԱՆ /ՄԵՆ/ - ը գործածվում է որոշ բաղադրություններում.

Օրինակ՝ մանուկ, Մանուշ, Արման, Արմեն,
Մանազկերտ:

Ըստ ավանդության /տես՝ Արարատյան
Դիցաբանություն/, Համաշխարհային Ջրհեղեղի
ժամանակ, Վահագն Աստծո հովանավորությամբ, Արի
Մանը իր թափորով պատսպարվում է Մասիսի գագաթին:
Ջրհեղեղից հետո Մանը իջնում է Մասիսից և
շարունակում է Արի Ցեղի գոյության օրինաչափ ընթացքը:
Ըստ երևույթին, հենց Արի Մանը խորհրդանշում է ԱՐՄԵՆ
խորհուրդը որպես **աստվածամարդ**:

ՄԱՐԴ - Սերունի հաստատման արտահայտություն /
հոմանիշ է ՄԱՆ - ին/:

Լեզվաբանորեն կազմված է՝ Մ /արտահայտել/
հունչարմատով և ԱՐԴ /սերունի հաստատում/ բառով:

գ. ՏՈՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ

ՏՈՆ - Նորոգումի խորհուրդ:

Լեզվաբանորեն կազմված է՝ Տ - հաստատական
հունչարմատով և ԱՆ /ծնունդ, նորոգում/ արմատով՝ Տ -
ՈՆ /ԱՆ/:

ՏՈՆ - երը իրենց խորհրդանշանային
տարբերությամբ, ունեն միևնույն հիմնական խորհուրդ՝
մարդկանց մեջ նորոգել նրանց բնական
զգացողությունները: Ըստ այդմ- բոլոր Ազգերի մոտ էլ
ՏՈՆ - երը նրանց կյանքի կարևորագույն մաս են
կազմում: Կան համազգային ավանդական ՏՈՆ - եր, կան
նաև մասնավոր տոհմային, ընտանեկան, ընկերային...
ՏՈՆ - եր: Բայց բոլորն էլ մարդկանց մեջ նորոգում են
նրանց սիրո, զորության, հարազատության, արյունի,
հիշողության, շարունակելիության, հոգեծուլումի և այլ
զգացողություններ:

Օրինակ՝ ՎԱՐԴԱՎԱՌ տոնելով, մենք մեր մեջ
նորոգում ենք Աստվածային Սիրո զգացողությունը:

ՏՐՆԴԵԶ տոնելով, մենք մեր մեջ նորոգում ենք Աստվածային Արարչագործության զգացողությունը: ՀԱՐՍԱՆԻՔ տոնելով, մեր մեջ նորոգում ենք մեր շարունակելիության զգացողությունը և այլն:

Եթե որևէ արարողություն իր մեջ չունի նորոգման խորհուրդ՝ դա ՏՈՆ չէ: Ըստ այդմ, ՏՈՆ փոխառնել հնարավոր չէ. **Տոնը ազգի ներքին որակական դրսևորում է:** ԵՎ Ազգի հոգևոր հարստությունը մեծապես կախված է նրա ՏՈՆ - երի բազմազանությունից:

ՏՐՆԴԵԶ - Կրակի դեզ կամ դիզված կրակ / խարույկ/:

Լեզվաբանորեն կազմված է ԱՏՐ /կրակ/ և ԴԵԶ բառերով:

Ն - ն որոշակիությունը շեշտող հունչարմատ է, որն ավելանալով ԱՏՐ խորհրդին, շեշտում է՝ ոչ թե պարզապես կրակ, այլ որոշակի կրակ՝ ընդգծված խորհուրդ ունեցող կրակ: Ըստ այդմ, ՏՐՆԴԵԶ - **ը աստվածային երկունքի կրակով բոցավառված խարույկն է:**

Ըստ ավանդության /տես՝ Արարատյան Դիցաբանություն/, ամեն տաս հազար տարին մեկ Երկրի վրա ծնվում է Վահագնը: Ծնվում է Չարի Վիշապին սպանելու և Վիշապի գարշանքը Երկրի վրայից լվալու Մեծ Ջրհեղեղով: Վահագնը ծնվում է Երկնի ու Երկրի ահեղ երկունքից: Երկնում է Երկինքը, երկնում է Երկիրը, երկնում է և ծովը ծիրանի: ԵՎ ծիրանի ծովում կարմիր եղեգնի փողից բոց է դուրս գալիս՝ բոց աստվածային: ԵՎ Արի Սանը եղեգան փողից երկունքի այդ կրակը վերցնում, խարույկ է վառում՝ ՏՐՆԴԵԶ սարքում: ԵՎ աստվածային երկունքի այդ կրակով կռում է զորության թուր-կեծակին:

Արիները օծվում են ՏՐՆԴԵԶ -ի կրակով, իրենց մեջ նորոգում են Աստվածային Արարչագործության զգացողությունը և զորանում են: Երկունքը տևում է քառասուն օր: Քառասուն օր դիզված աստվածային կրակը չի հանգչում: ԵՎ զորացած Արիները երգում ու պարում են ՏՐՆԴԵԶ -ի շուրջը և սպասում են Վահագնի ծնունդին: Ջահել հարսները թռչում են այդ աստվածային

կրակի վրայով, օծելու համար իրենց արգանդը՝
Վահագնանման որդիներ ծնելու համար:

Աստվածային երկունքի քառասուներորդ օրը՝ Արեգի 1
- ին ծնվում է Վահագնը:

Ավանդաբար ՏՐՆԴԵՁ - ի տոնակատարությունը
պահպանվում է Արի շատ ազգերի, նաև՝ Հայերի մեջ:
ՏՐՆԴԵՁ են սարքում, երգում, պարում և սպասում են
Վահագնին:

ԱՄԱՆՈՐ - Նոր տարի:

Լեզվաբանորեն կազմված է ԱՄ /տարի/ - ա - ՆՈՐ
բառերով:

Ամանորը բնական նոր պարբերության՝ տարվա
ծնունդն է, որ տոնվում է գարնան առաջին օրը՝ Արեգի 1 -
ին: Ամանորը համապատասխանում է Վահագնի
Աստվածային Ծնունդին:

Բնական օրինաչափությամբ, գոյություն ունի նաև
Տիեզերական Տարի, որ տևում է Երկրային տաս հազար
տարի: ԵՎ Տիեզերական Գարնան առաջին օրը, հենց
Արեգի 1 - ին ծնվում է Ջորության Աստված Վահագնը:
Նա ծնվում է Չարի Վիշապին սպանելու և Երկիրը լվալու
Վիշապի պղծությունից Համաշխարհային Ջրհեղեղով:
Վահագնի Ծնունդով է սկսվում Արյաց նոր
տարեգրությունը:

ԵՎ ամեն գարնան առաջին օրը՝ Արեգի 1 - ին,
Արիները տոնում են Ամանորը և Վահագնի Ծնունդը,
կանչում են Վահագնին, սպասում են Վահագնին: ԵՎ
Վահագնը ծնվելու է հենց գարնան առաջին օրը. գարնան
առաջին արևով է ծնվելու մեր Ջորության Աստված
Վահագնը: ԵՎ փաստորեն Ամանորը նաև
Վահագնական է:

ՋԱՏԻԿ - Ջատել, առանձնացնել:

Լեզվաբանորեն կազմված է՝ Ջ - հունչարմատով և ԱՏ
/տեղ/ բառարմատով:

Ջ - ն, ըստ երևույթին, Բաժանումի, Տրոհումի,
Անջատումի իմաստ ունի:

Օրինակ՝ զոհ /զ - ահ/ - գորությունը տրոհել. զարդ /զ - արդ/ - սիրո խորհուրդը առանձնացնել, խորհրդանիշ. զատ /զ - ատ/ - տեղաբաշխել:

Ըստ հայկական ավանդության /տես՝ Արարատյան Դիցաբանություն/, Համաշխարհային Ջրհեղեղից հետո չքացել էին Արարատի բնաշխարհի գույները, և գորշություն էր տիրում ամենուր: Աստվածամայր Անահիտի պատվերով Արի Մանը գնում բերում է Հազարան Հավքը, որ գերված էր Ստորգետնյա Աստված Յահվահի կողմից: Հավքը երգում է ու բազմագույն ձվեր ասում: Անահիտը հավաքում է ձվերը և շաղ տալիս Արարատով մեկ: Գույները գատվում են, և բազմագույն է դառնում Արարատի բնությունը: ԵՎ Արիները սկսում են գարնանացանը:

ԵՎ ավանդաբար, ամեն տարի գարնանացանից առաջ Արի Հայերը Ջատիկ են տոնում. ձվեր են ներկում գարնան գույներով, ձվախաղ սարքում, փառաբանում են Աստվածամայր Անահիտին և խնդրում, որ բազմագույն ու բազմահամ լինի Արարատի հողի բեղմնավորումը. և ապա սկսում են գարնանացանը:

ՎԱՐԴ - Գերագույն սիրո խորհուրդ:

Լեզվաբանորեն կազմված է՝ Վ /գերագույն/ հունչարմատով և ԱՐԴ /սերունի խորհուրդ/ բառով՝ Վ - ԱՐԴ:

Բայց ՍԵՐՈՒՄ - ի խորհրդի հիմքում հենց սերն է՝ **սեր** - ում, **սեր** - ել: Ուստի ՎԱՐԴ - ը հենց Գերագույն Սիրո խորհրդի արտահայտություն է: ԵՎ պատահական չէ, որ Հայերը **սեր** խորհրդանշող ծաղիկը անվանել են **Վարդ**:

ՎԱՐԴ - ով կազմված են սիրո հետ կապված մի շարք խորհուրդներ.

Օրինակ՝ **Վարդան** - Վարդի ծնունդ. **Վարդուշ** - վարդի ոգի. **Նվարդ** - վարդ ծաղկի պատկեր. **Վարդանուշ** - Վարդից ծնված հոգի. **Սիրվարդ** - սիրո վարդ ծաղիկ. **Ալվարդ** - կարմիր վարդ ծաղիկ. **Վարդամատն** - Վարդը /Սիրո Գերագույն խորհուրդը/ պահպանող. **Վարդավառ** - Վարդով վառվել, օծվել:

ՎԱՐԴԱՎԱՌ - Սիրո Գերագույն խորհրդով վառվել, օծվել:

Լեզվաբանորեն կազմված է՝ ՎԱՐԴ /Սիրո Գերագույն խորհուրդ/ և ՎԱՌ բառերով:

ՎԱՌ - ը ունի կրակի իմաստ: Բայց որպես հուզական որակ, արտահայտվում է որոշ զգացական խորհուրդների մեջ:

Օրինակ՝ բոցավառ - բոցաշունչ, բոցով վառված, բոցով օծված. հրավառ - հրաշունչ, հրով վառված, հրով օծված. սիրավառ - սիրաշունչ, սիրով վառված, սիրով օծված. արևավառ - արևաշունչ, արևով վառված, արևով օծված:

Նույն օրինաչափությամբ ՎԱՐԴԱՎԱՌ խորհրդի մեջ ՎԱՌ - ը արտահայտում է ներքին հուզական որակ: Ըստ այդմ, ՎԱՐԴԱՎԱՌ նշանակում է **Վարդով /Սիրո Բացարձակ խորհրդով/ վառված, Վարդով օծված, Վարդաշունչ:**

Ըստ հայկական ավանդության /տես՝ Արարատյան Դիցաբանություն/, Ստորգետնյա Աստված Յահվահը Արիներից գողանում է Սերը՝ Աստղիկին: ԵՎ վերացավ սերը Արիների միջից, և ատելությունը հաստատվեց նրանց հոգիներում: Վահագնը ազատում է Աստղիկին: ԵՎ Աստղիկը շրջում է Արարատով մեկ, վարդ ծաղիկներ բաժանում Արիներին և վարդաջրով օծում նրանց՝ ՎԱՐԴԱՎԱՌ սարքում: Արիները օծվում են Աստղիկի Վարդով, բոցավառվում են Սիրո խորհրդով: ԵՎ նորից սերը հաստատվում է Արիների մեջ:

ԵՎ ավանդաբար մինչև այսօր Արի ազգերը ամեն տարի ՎԱՐԴԱՎԱՌ են տոնում՝ իրենց հոգիները օծելու Սիրո Գերագույն խորհրդով և նորոգելու իրենց մեջ Աստվածային Սիրո զգացողությունը:

ՎԱՐԴԱՎԱՌ - ը Հայերի ամենասիրած տոներից է, ու նրանք մեծ խանդավառությամբ օծում են իրար վարդաջրով, երգով ու պարով, նորոգում են իրենց մեջ Աստվածային Սերը և փառաբանում Աստղիկին, նրան նվիրելով իրենց նորոգված սիրո խորհրդանիշը՝ **Վարդ ծաղիկը:**

Ըստ այդմ, Աստղիկը կոչվում է նաև ՎԱՐԴԱՄԱՏՆ, որ նշանակում է **Սիրո Բացարձակ խորհուրդը պահպանող:**

ՆԱՎ - Ուժականություն, ուժի մարմնավորում:
Լեզվաբանորեն կազմված է՝ Ն /մարմնավորում/
հունչարմատով և ԱՎ /ուժ, հոգի/ արմատով՝ Ն - ԱՎ:
Օրինակ՝ **օդանավ, շոգենավ, նավագնաց:**

ՆԱՎԱՍԱՐԴ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ԽԱՂԵՐ/ - Ուժի զորության հաստատում, ուժի խորհրդի հաստատում:
Լեզվաբանորեն կազմված է՝ ՆԱՎ /ուժականություն/
բառով, ԱՍ /զորություն, խորհուրդ/ արմատով և ԱՐԴ /հաստատում/ բառով՝ ՆԱՎ - ԱՍ - ԱՐԴ:

Ըստ այդմ, ՆԱՎԱՍԱՐԴ - ը արտահայտում է **Ուժի զորության հաստատում** խորհուրդը: Այսինքն՝ **Նավասարդը Ջորախաղ է:**

Ըստ ավանդության /տես՝ Արարատյան Դիցաբանություն/, Բելի դեմ պատերազմի ելնելուց առաջ, Հայկը հավերժական քաղաք էրեվանում կազմակերպում է ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՋՈՐԱԽԱՂԵՐ, ընտրելու համար ամենագորավորներին: Մրցող քաջերի գլխավերևում բոցկլտում էր Արագածից բերված ջահը, որպես Հայր Արայի օրհնության խորհուրդ: Ինքը՝ Ջորության Աստված Վահագնը, Արևխաչով օծում էր հաղթողներին, և հաղթողները Հայկյան զինվոր էին դառնում:

Այնուհետև ավանդաբար ամեն տարի էրեվանում հայերը կազմակերպում էին ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ԽԱՂԵՐ, որտեղ ամեն մի Արի տղամարդ երագում էր իր հաղթանակով արժանանալ **Հայկյան զինվորի** պատվավոր կոչումին: ԵՎ Նավասարդյան ջահը վառվում էր Արագածի զագաթին ու բերվում էրեվան:

Հայկական ՆԱՎԱՍԱՐԴ - ի զուգահեռն է հունական ՕԼԻՄՊԻԱԴԱ - ն:

Է. ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

SԱՐԻ - Բնական պարբերության խորհուրդ է:

Լեզվաբանորեն կազմված է S - հաստատական հունչարմատով - ԱՐ /գորություն, սերում, խորհուրդ/ բառարմատով - Ի - տեսակային ամբողջության իմաստ արտահայտող հունչարմատով՝ S - ԱՐ - Ի:

Ըստ այդմ, SԱՐԻ - ն արտահայտում է բնական պարբերությունների անսահման հաջորդականության մեջ ամեն մի պարբերության սահմանը՝ սկսած ծնունդից մինչև հարաբերական մահը:

ԳԱՐՈՒՆ - Վերածնունդ, նորոգում, նոր պարբերության սկիզբ:

Լեզվաբանորեն կազմված է՝ Գ /արտահայտություն/ հունչարմատով, ԱՐ /արարում, սերում/ և ԱՆ /ծնունդ/ արմատներով՝ Գ - ԱՐ - ՈՒՆ /ԱՆ/:

Արարումը՝ ԱՐ - ը հավերժական խորհուրդ է և ժամանակ չի պայմանավորում: Ժամանակը պայմանավորվում է ծնունդով՝ ԱՆ: Ըստ այդմ, ամեն բնական էակ կամ երևույթ իր ծագումով հավերժական է, իսկ ամեն ծնունդ պայմանավորում է նրա կյանքի նոր պարբերությունը, նրա նորոգումը՝ Վերածնունդը ժամանակի մեջ:

Փաստորեն ԳԱՐՈՒՆ - նշանակում է հավերժական ամեն մի արարումի, Գոյի նորոգում, վերածնունդ ժամանակի մեջ: Այսինքն՝ **Գարունը հավերժության մեջ մի նոր պարբերության սկիզբ է:**

Ըստ այդմ, Բնության մեջ ամեն մի նոր պարբերության սկիզբ ԳԱՐՈՒՆ է: Գարուն է երեխայի ծնունդը, Գարուն է երկրի բնության զարթոնքը: ԵՎ քանի որ երկրի վրա բնության վերածնունդը Գարուն է, ուստի Գարունը պայմանավորում է նոր տարվա սկիզբ: ԵՎ պատահական չէ, որ ըստ հայկական ավանդության /տես՝ Արարատյան Դիցաբանություն/, հենց Գարնան առաջին օրը՝ Արեգի 1 - ին է ծնվում Վահագնը՝ նորոգելու երկրի զգացական կյանքը: ԵՎ ավանդաբար, հենց

Գարնան առաջին օրը՝ Արեգի 1- ին Արի Հայերը տոնում են Վահագնի Ծնունդը և Ամանորը:

ԳԱՐԵԳԻՆ - Գարնան Ավետաբեր:

Լեզվաբանորեն կազմված է՝ Գ /արտահայտություն/ հունչարմատով և ԱՐ /զորություն/, ԷԳ՝ ԱԳ /հուր/ ու ԻՆ արմատներով՝ Գ - ԱՐ - ԷԳ /ԱԳ/ - ԻՆ:

Ըստ երևույթին, ԻՆ - ը ԱՆ արմատի ածանցում է և իր մեջ պարունակում է **ծնունդի, խորհրդի** իմաստ:

Ըստ այդմ, ԳԱՐԵԳԻՆ նշանակում է Հրե Ջորության Վերածնունդի՝ Գարնան արտահայտություն կամ նախանշան: Այսինքն՝ ԳԱՐԵԳԻՆ նշանակում է Գարնան Ավետաբեր:

ՉՄԵՌ - Հարաբերական մահ:

Լեզվաբանորեն կազմված է՝ Չ - չգիտակցված հունչարմատով և ՄԵՌ /ՄԱՀ/ խորհրդով:

Չմեռը Երկրի բնության հարաբերական մահն է: Երկրի վրա պակասում է Արևային դրական էներգիան: ԵՎ դրական էներգիա կրող ծառերը ցամաքում են, կծկվում են և դառնում են անպաշտպան ձմռան խստաշունչ տարերքի հարվածներից: Իսկ բացասական՝ հողի էներգիա կրող ծառերը /օրինակ՝ եղևնին/ ձմռանն էլ պահպանում են իրենց բնական զորությունը: Բայց գարնան գալուստով ծիրանին, այնուամենայնիվ, ծաղկում է, իսկ եղևնին մնում է նույնը:

Նույն օրինաչափությամբ, Տիեզերական Ձմռանը Երկրի վրա պակասում է Տիեզերական /դրական/ էներգիան: Երկրի վրա իշխում են հողածին՝ բացասական էներգիա կրող Տիտանները: Իսկ դրական էներգիա կրող Արիները տկարանում են, պարտվում են և դառնում են անպաշտպան Ձմռան խստաշունչ տարերքի հարվածներից: Բայց, այնուամենայնիվ, Չմեռից հետո գալու է Գարուն:

ը. ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՐՏ - Ուխտ, դաշինք, Օրենք:

Լեզվաբանորեն կազմված է՝ ԱՐ /արարում, խորհուրդ/ արմատով և Տ /հաստատում/ հունչարմատով:

ԱՐՏ - ը արարումը, արյունը պահպանող Աստվածադիր Օրենքն է: ԵՎ նրանից են առաջացել **արդար, արդարություն** խորհուրդները:

ԱՐՏԱՎԱԶԴ - Հոգևոր Ուխտ հաստատող, Արտի Աստված:

Լեզվաբանորեն կազմված է՝ ԱՐՏ /ուխտ/, ԱԶԴ /զորության հաստատում/ բառերով և ԱՎ /կյանք, հոգի/ արմատով՝ ԱՐՏ - ԱՎ -ԱԶԴ:

Ըստ հայկական ավանդության, Արտավազը հենց Արտի Աստված Միհրի /Մհերի/ խորհուրդն է: ԵՎ երբեմն այդ երկու խորհուրդները գործածվում են միասին՝ ԱՐՏԱՎԱԶԴ ՄԻՀՐ /Արտի Աստված Միհր/: Բայց ավելի հաճախ գործածվում է միայն Արտավազը: Արտավազը խորհուրդը կա միայն հայերեն լեզվում:

ՕՐԵՆ - Արարումը պահպանող:

Լեզվաբանորեն կազմված է՝ ԱՐ և ԱՆ բառարմատներով՝ ՕՐ /ԱՐ/ - ԷՆ /ԱՆ/:

ՕՐԵՆՔ -ը **ՕՐԵՆ** -ի բազմազան արտահայտությունների համակարգ է:

Օրինաչափությունը ՕՐԵՆ - ի արտահայտությունն է բնական հարաբերությունների մեջ: Ըստ այդմ, օրինաչափությունը Աստվածադիր ՕՐԵՆՔ - ն է: Օրինաչափությունը Արարչից է գալիս:

ՕՐԵՆՔՆԵՐ են ստեղծում նաև մարդիկ: ԵՎ մարդկային ՕՐԵՆՔ -ը կենսական է ու օգտակար, եթե օրինաչափության արտահայտություն է Ազգի մեջ: Իսկ եթե ՕՐԵՆՔ-ը օրինաչափության արտահայտություն չէ - դառնում է չարիք:

Ըստ այդմ, արդար կամ անարդար ՕՐԵՆՔՆԵՐ չեն լինում: ՕՐԵՆՔՆԵՐ -ը լինում են բնական կամ անբնական: Բնական ՕՐԵՆՔ - ը օրինաչափության

պահպանումն է Ազգի մեջ, իսկ անբնական ՕՐԵՆՔ - ը օրինաչափության ժխտումը:

Իսկ օրինաչափությունները տարբեր են տարբեր Ցեղերի մեջ, և ՕՐԵՆՔՆԵՐ - ը տարբեր կլինեն նույնպես: Արի Ցեղի էությունը արարումն է, ուստի նա արարման օրինաչափությամբ պիտի ապրի:

Ըստ հայկական ավանդության /տես՝ Արարատյան Դիցաբանություն/, Համաշխարհային Ջրհեղեղից հետո, երբ Արի Մանը պատրաստվում էր իջնել Մասիս սարից, Արայի կամքով նրան է հայտնվում Արտավազդ Միհրը: ԵՎ Միհրը պատվիրում է Մանին՝ Աստվածադիր ՕՐԵՆՔ - ով առաջնորդել Արիներին: **Աստվածադիր Օրենքը Արիների մեջ պահպանում է ծագումը, արյունը, ոգին, արարումը:**

Ո՛ր թեև Աստվածադիր ՕՐԵՆՔ - ը Արայի կամքով Միհրն է հաստատում, բայց այդ ՕՐԵՆՔ - ը անարդյունք կլինի, եթե չօժվի Վահագնի Ջորությամբ:

ԳԱՀ - Ջորության արտահայտություն, զորության խորհրդանիշ:

Նեզվաբանորեն կազմված է՝ Գ /արտահայտություն/ հունչարմատով և ԱՀ /հզոր/ բառարմատով՝ Գ - ԱՀ:

Ըստ այդմ, ԳԱՀ - ը Ազգային Պետականության խորհուրդ է: ԵՎ Ազգի մեջ ԳԱՀ - ի ժխտումը փաստորեն ազգային պետականության խորհրդի ժխտում է նշանակում:

Ի դեպ, ազգային պետություններում մերժելով ԳԱՀ - ը, տարօրինակ կերպով պահպանում են ՆԱԽԱԳԱՀ - ի պաշտոնը:

ՆԱԽԱԳԱՀ - ը ՆԱԽ - Ա - ԳԱՀ, նշանակում է ԳԱՀ - ին սպասարկող անձ: Նույն իմաստը ունեն նաև ՊՐԵԴՍԵԴԱՏԵԼ և ՊՐԵԶԻԴԵՆՏ խորհուրդները:

Ըստ այդմ, առանց ԳԱՀ - ի չի կարող լինել Նախագահ: ԵՎ Նախագահի գոյությունն արդեն փաստում է, որ, այնուամենայնիվ, ԳԱՀ - ը կա: Ժխտվում են միայն Ազգային ԳԱՀ - երը: Իսկ ԳԱՀ - ն ընդհանրապես չի ժխտվում, և այն կենտրոնացված ձևով

պահպանվում է ազգային պետությունից դուրս ինչ - որ մի տեղ: ԵՎ հենց այդ **Գաղտնի Գահը** ազգային պետություններում նշանակելով ԳԱՀ - ի ընտրովի Նախագահ, Պրեզիդենտ, Պրեզիդենտ, **այդ պետություններում իրագործում է իր կամքը:**

ԳԱՀ - ը իրականում Ազգային Պետականության խորհուրդ է, ուստի Ազգը պետք է իր ԳԱՀ - ը հաստատի իր պետության մեջ:

ԹԱԳ - Հրե պսակ: Լեզվաբանորեն կազմված է Թ/S/ հաստատական հունչարմատով և ԱԳ /հուր/ բառարմատով:

ԱՐՔԱ - Ըստ երևույթին դա ԱՐԳԱՀ խորհուրդն է, որ նշանակում է **Արարող գործության արտահայտություն, խորհրդանիշ:**

Լեզվաբանորեն կազմված է ԱՐ /արարում/ արմատով և ԳԱՀ /գործության արտահայտություն/ բառով՝ ԱՐ - ԳԱՀ:

Ա - Բացարձակ Ձայնը չեզոքացրել է Հ - հնչյունը, իսկ Գ - ն հնչյունափոխվել է Ք - ի:

թ. ԲՆԱԶԳԱՑԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՐԱԳԱԾ - Գերագույն Ձորության խորհուրդն է:

Լեզվաբանորեն կազմված է ԱՐ /արարում, գործություն/ - ԱԳ /հուր/ - ԱԾ /պահել, օծել/ արմատներով՝ Ձորության հրով օծված կամ Արարչական հրով օծված՝ ԱՐ - ԱԳ - ԱԾ:

ԵՎ պատահական չէ, որ հենց Արագածի հետ են կապված Արիների գործությունը հաստատող հիմնական խորհուրդները: Ըստ հայկական ավանդության /տես՝ Արարատյան Դիցաբանություն/, Արագածի գագաթին էր կանգնեցված Արայի Գահը. Արագածից պեղված հազար ու մի գանձերով էր Արի Մանը կռում իր թուր-կեծակին. Արագածի լանջին էին Արիները կառուցում Արարատյան Աշտարակը:

Ըստ այդմ, հենց Արագածն է այն պորտալարը, որով Արարատը կապվում է Տիեզերական Ջորությունների հետ: Արագածն է իր մեջ խտացնում Տիեզերական Ջորությունները և ապա ճառագումով տարածում դրանք Արարատով մեկ: ԵՎ եթե Մասիսը ունի իր արտահայտությունները տարբեր Արի Ազգերի մոտ՝ Հիմալայ, ֆուձիյամա..., ապա Արագածը Արարյական Ջորության միակ ու անկրկնելի խորհուրդն է բոլոր Արի Ազգերի համար:

ՄԱՍԻՍ - /Վերջնական խորհուրդը դեռ պարզված չէ/:

Լեզվաբանորեն կազմված է ՄԱ և ՍԻՍ բառերով:

ՍԻՍ բառի իմաստը դեռ պարզված չէ, թեև այն ունի նաև ինքնուրույն գործածություն՝ **Սիս, Սիսակ**:

ՄԱ բառը կապված է ՄԱՆ անվան հետ:

Ըստ հայկական ավանդության /տես՝ Արարատյան Դիցաբանություն/, Արի Մանը Համաշխարհային Ջրհեղեղից պատսպարվում է Մասիսի գագաթին: Ըստ երևույթին, ՍԻՍ անվանը ավելացել է ՄԱՆ անունը և կազմել ՄԱՍԻՍ խորհուրդը:

Ի դեպ, այս նույն ավանդության հնդկական և ճապոնական տարբերակներում ՄԱՆ - ը՝ ՄԱՆՈՒ - ն Ջրհեղեղի ժամանակ պատսպարվում է **Հիմալայ** լեռան վրա /հնդկական/ և **ֆուձիյամա** լեռան վրա /ճապոնական/:

Ըստ որում, **Հիմալայ** անունը թարգմանաբար նշանակում է **Մանի էջք**: ԵՎ նույն ավանդության երեք ազգային տարբերակներում, երեք լեռների անվան մեջ մինևնույն ՄԱ բառի գոյությունը հիմնավորում է, որ այն իրոք կապված է ՄԱՆ անվան հետ՝ Հի - **մա** - լայ /Մանի էջք/, ֆուձիյա - **մա, Մա** - սիս:

ԵՎ ՍԻՍ բառի իմաստը պարզելուց հետո մենք կպարզենք նաև ՄԱՍԻՍ անվան վերջնական խորհուրդը:

ԱՇՏԱՐԱԿ - Ոգեղենության Հիմք:

Լեզվաբանորեն կազմված է՝ ԱՇՏ /ոգի/ բառով, ԱՐ /գորություն/ և ԱԿ /հիմք/ բառարմատներով՝ ԱՇՏ - ԱՐ - ԱԿ:

Հայկական ավանդության մեջ /տես՝ ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԻՑԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ/ պահպանվել է ԱՐԱՐԱՏՅԱՆ ԱՇՏԱՐԱԿԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ հասկացությունը: Ըստ այդ ավանդության, Արարչի կամքով, աշխարհի տարբեր վայրերից Արիները հավաքվում են Արարատում և Արագածի փեշերին սկսում են կառուցել բարձր Աշտարակ: Աշտարակի գագաթին պիտի դրվեր Արագածի գանձերից ձուլված Մեծ Ջահը, որը Տիեզերական Ձմռանը Արեգակից պիտի ջերմություն ստանար և այդ ջերմությամբ սներ բոլոր Արիներին: Սակայն Չարի Վիշապի խարդավանքների պատճառով Արիների մեջ գժտություն է ծագում, Աշտարակի կառուցումը խափանվում է: Ապա հիմնահատակ քանդվում է, և միայն անունն է պահպանվում մինչև հիմա՝ ԱՇՏԱՐԱԿ

Ի դեպ, Արարատյան Աշտարակաշինության այս ավանդությունն է, որ Տիտանները աղավաղված և իրենց հարմարեցրած ձևով գործածել են Բիբլիայում որպես Բաբելոնյան Աշտարակաշինություն:


ԷՐԵՎԱՆ - Արիի բնակավայր կամ Արիների բնակավայր:

Լեզվաբանորեն կազմված է՝ ԷՐԻ /ԱՐԻ/ և ՎԱՆ /վայր/ խորհուրդներով՝ ԱՐԻԱՎԱՆ՝ ԷՐԻԱՎԱՆ՝ ԷՐԵՎԱՆ:

Ըստ այդմ, անընդունելի է **Երևան** ձևը, քանի որ նրա մեջ չեն արտահայտվում արմատական խորհուրդները: Ճիշտը **Էրեվան** ձևն է:

Ըստ հայկական ավանդության /տես՝ Արարատյան Դիցաբանություն/, ԷՐԵՎԱՆ - ը կառուցել է հենց ինքը՝ առաջին երկրային աստված Արին և իր անունով անվանել է ԱՐԻԱՎԱՆ կամ ԷՐԵՎԱՆ: ԵՎ իր քաղաքը նա կառուցել է Արարատի այն միակ տեղում, որտեղից երևում են և՛ Արագածը՝ Արայի Գահը, և՛ Մասիսը՝ Աստվածների կացարանը:

Վերջին Համաշխարհային Ջրհեղեղը հիմնահատակ արեց քաղաքը: ԵՎ Մանի որդի Արամը վերականգնեց ԷՐԵՎԱՆ - ը նույն տեղում: ԵՎ ըստ ավանդության, ԷՐԵՎԱՆ - ը հավերժական քաղաք է. այն միշտ պիտի կառուցվի ու երբեք ավարտին պիտի չհասնի:



ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

Ծ Ա Գ Ո Ւ Մ Ն Ա Ր Ա Ն

(ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԻՑԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ)

Ծագում չունեցող ազգը չծնված ազգ է: Պատմություն չունեցող ազգը մեռած ազգ է: Ազգի Պատմությունը ազգի կենսափորձն է: Բայց պատմությունը ազգի կենսափորձ է դառնում, երբ ազգը վերապրում է այն իր զգացական, խոհական, երևակայական որակներով և իմաստավորում այն սերունդների մեջ:

Ազգի Դիցաբանությունը նրա իրական պատմության խոհա-զգացական, երևակայական իմաստավորումն է սերունդների մեջ որպես կենսափորձ:

Ըստ այդմ, Դիցաբանություն չունեցող ազգը չունի ծագում, չունի պատմություն որպես կենսափորձ: Նշանակում է, որ նա չի ծնվել և չի ապրել: Նա պարզապես գոյություն է ունեցել որպես մի վիժված անկատարություն, որն իր գոյությունը պահպանում է միայն մակաբուծությամբ՝ սնվելով ուրիշի կենսազորությունից, ուրիշի կենսափորձից, ուրիշի հավատքից, ուրիշի բարքերից... Իսկ այդպիսին դեր չունի կյանքում, և նրա կյանքն ընդհանրապես ավելորդություն է:

ԵՎ թե Հայ ազգը ծնված է և մեռած չէ, ապա նա անպայման ունի իր Դիցաբանությունը: ԵՎ դա Արարատյան Ավանդապատումն է, ուր Ազգն ու Ցեղը նույնանուն են իրար:

Արարատյան Ավանդապատումի ակունքները գնում են մինչև վաղնջական ժամանակները, երբ դեռ մարդկության Ցեսակներից մեկը՝ Արի Ցեղը, իր ծագումն ու իր պատմության սկզբնավորումը ունենալով Արարատում, իր Բնակում է կերտել իր Դիցաբանությունը: Հետագայում միայն, Արարատից արտահոսքի հետևանքով ձևավորված տարբեր Արի ազգեր սկսում են ապրել իրենց առանձնահատուկ պատմությամբ, ուստի և ձևավորում են իրենց ազգային Դիցաբանությունները, որոնց ակունքը, այնուամենայնիվ, Արարատում է:

ԽՈՐՀՈՒՐԴ ԱՐԱՐՄԱՆ

Արն էր ի սկզբանե, և Արա՛ն էր Արարիչ: Արարիչը անսկիզբ է ու բացարձակ: ԵՎ անսկիզբ ժամանակում է Նա Աշխարհն արարել: ՈՒստի Աշխարհն էլ անսկիզբ է ու բացարձակ:

Արարիչը մեկն է, իսկ Աստվածները՝ շատ: ԵՎ բազմաստված է Աշխարհը արար:

Ամեն մի Աստված՝ Արայի Որդի, ամեն մի Աստված՝ Լուսեղեն Ոգի, ամեն մի Աստված՝ Եթերային Ուժ, ամեն մի Աստված՝ Անմահ Ջորություն: ԵՎ այդ Աստվածներն են Արայի կամքը հաստատում ամբողջ Աշխարհում, կառավարում ամեն մի շարժում, հարաբերություն, միտք, սեր, զգացողություն:

ԵՎ Անահիտն է Աստվածների Մայր: Մայր՝ արարման խորհուրդ անձկալի, պտղաբերումի մի ամբողջ աշխարհ, գութի խնկարկում, հույսի պատարագ, սիրո մեղեդի, կարոտի խորան, երջանկության բույր: ԵՎ Անահիտն է զավակներ ծնում Արայի համար՝ անմահ Աստվածներ և իր մայրական ջերմությամբ սնում, գուրգուրում նրանց:

Բացարձակ է Արարիչը, և կատարյալ են Ջավակները Նրա: Կատարյալ է և Վահագնը: Բայց անհանգիստ կատարելություն է նա՝ հրե պատանի, ամենաահեղ որդին Արայի, ամենագորեղ Աստվածն Աշխարհի:

Վահագն՝ անհուն Տիեզերքի մեջ՝ Տիեզերական Ուժ, Արևների մեջ՝ Հուր Արևակեզ, Լուսաստղերի մեջ՝ Լույսի Կենսադրյուր, Ոգիների մեջ՝ Ոգու Վեհություն, Աստվածների մեջ՝ Ջորության Աստված:

ԵՎ ծնունդը նրա տիեզերական հույժ ցնցումով օծվեց: ԵՎ ցնծում էին Աստվածները ի տես Վահագնի: Աստղիկը սիրո համբույրով կնքեց ճակատը նրա և աստղերից հյուսած Խաչ-Պատերազմին կապեց նրա բազկին, որ անպարտելի լինի Ուժը Վահագնի: Ճարտարագետ Տիրը արարումի խորհուրդը բացեց Վահագնի առաջ, որ արարումին պահապան լինի: Իսկ լուսաշող Միհրը Վահագնին տվեց հազար ու մեկ արեգներից կռած գուրզը մարտական:

Վահագնը շատ էր սիրում գուրգախաղ: ԵՎ ոչ մի Աստված չէր կարող մրցել նրա հետ գուրգախաղի մեջ: Վահագնը նետում էր իր գուրգը և ապա հեռավոր մոլորակների վրա էր գտնում այն:

ԵՎ մի անգամ, երբ գուրգը նետեց, սովորականի նման գնաց որոնելու: Շատ մոլորակներ անցավ Վահագնը և հասավ Երկիր մոլորակ: ԵՎ այնտեղ գտավ իր գուրգը: Գուրգը պառկած էր Երկրի վրա, կիսով չափ խրված հողի մեջ: ԵՎ հենց Վահագնի աչքի առաջ գուրգը մեծացավ, ընդարձակվեց և ձուլվեց Երկրին, մի բարձրադիր ու հսկայական տարածք ընդգրկեց: Ապա ծածկվեց խիտ կանաչով, որի միջից գուրգի ատամները որպես լերկ ժայռեր, դեպի երկինք ցցված, շողշողում էին ամենաբազմազան գույներով: Շատ գեղեցիկ էր տեսարանը: ԵՎ Վահագնը, հիացած այդ գեղեցկությամբ, երկար ժամանակ աչք չէր կտրում նրանից: Ապա դիմեց Երկրին.

- Սա քո զորությունը չէր, որ ամենագոր Աստծո գուրգը քո կրծքին որպես զարդ պահեցիր:

ԵՎ պատասխանեց Երկիրը.

- Ո՛վ, Ամենագոր Վահագն, գերագույն ես դու, և քեզանից վեր միայն Արա՛ն է՝ Արարիչը քո և իմ: Արայի կամքով այս գուրգը եկավ ու մխրձվեց իմ կրծքի մեջ, որպեսզի հազար ու մեկ արեգների զորության ուժով ես սնվեմ ու աստվածային բարիքներ ծնեմ: ԵՎ Ամնահ Աստվածներն այստեղ աստվածային բարիքը վայելեն ու զվարճանան:

Վահագնը հավանեց Երկրի խոսքը և կանչեց բոլոր Աստվածներին: Աստվածները զարմացած էին:

- Այս ի՞նչ նախանշան է,- դիմեցին նրանք իմաստուն Տիրին,- միայն դու կարող ես հասկանալ դա:

ԵՎ խորաթափանց Տիրը ասաց.

- Արայի կամքով է կատարվել այս բոլորը: Հայր Արա՛ն մի նոր Աստված է արարելու: ԵՎ Մայր Անահիտը այդ Աստծուն ծնելու է հենց այստեղ՝ Երկրի վրա: ԵՎ Երկրային Հայզն է լինելու նա՝ առաջին Երկրային Աստվածը: ԵՎ սա լինելու է Երկրային Աստծո արարման Օրոցքը՝ Արարատը:

ԵՎ Աստվածները որոշեցին զարդարել այդ Օրոցքը, որ այն ունենա աստվածավայել ճոխություն:

Տիրը իր ճարտար մատներով լեռնաշղթաներ քանդակեց Օրոցքի հյուսիսային ու հարավային եզրերին, որ տափաստաններից փչող քամիներից պաշտպանվի նորածին Աստվածը:

Ջրերի թագուհի Ծովինարը Օրոցքի արևելյան և արևմտյան սահմաններում ծովեր տեղադրեց, ապա Օրոցքը զարդարեց լճերով ու գետերով:

Վահագնը երկնքում, ուղիղ Օրոցքի վրա, Արև վառեց, որ միշտ լույս ու ջերմություն լինի այնտեղ: Սիրավառ Աստղիկը բազմագույն և բազմաբույր ծաղիկներ ու վարդեր շաղ տվեց, օդը լցրեց բազմազան թռչուններով ու թիթեռներով և տարբեր կենդանիներ տարածեց Օրոցքում, որ նորածին Հայզը աստվածավայել ապրի իր Արարատում:

Իսկ Արտի Աստված Միհրը աստվածային այգի տնկեց, զարդարված բազմագույն և բազմահամ հրաշք պտուղներով, որ երկրային աստված Արին ու նրա ժառանգները սնվեն դրանցով: Քանզի աստվածներն ու աստվածամարդիկ պիտի աստվածային սնունդով սնվեն:

Կերտեցին Աստվածները Երկրային Աստծո Օրոցքը, և իրենք էլ հիացան դրանով: Այնքան հրաշալի ու գեղեցիկ էր Արարատը, որ նույնիսկ հենց Ինքը՝ Արա՛ն և Մայր Անահիտը անտարբեր չմնացին ու երբեմն իրենք էլ էին իջնում այստեղ զբոսնելու:

Աստվածները հաճախ գալիս էին Երկիր: Նրանք բարձրանում էին երկգագաթ Մասիս սարը, որտեղից երևում էր ամբողջ Արարատը և զվարճանում էին այնտեղ: Իսկ ճարտարագետ Տիրը Արագած լեռան գագաթին մի ճոխ գահ պատրաստեց չորս հենարանների վրա, ուր երբեմն հանգչում էր Հայր Արա՛ն: Աստվածները խմբով գալիս էին նրա մոտ, հայրական օրհնանքը ստանում և նորից թռչում էին Մասիս սար, իրենց խրախճանքը շարունակելու:

ԱՐԻԻ ԾՆՈՒՆԴՐ

Մի օր Աստվածամայր Անահիտը զբոսնում էր հրաշակերտ Արարատում: Արևն արդեն թեքվել էր սարերի ետևը և իր ճաճանչներին էր հավաքում: Մի մանուկ ճաճանչ դեռ չէր շտապում հեռանալ Արարատից: Նա կայտառ խաղում էր ծաղիկների հետ և այնքան տարված էր իր խաղով, որ չէր զգում Արևի հեռանալը: Նա մոռացել էր, որ արդեն իր քնելու ժամն է:

Հանկարծ Արևը դուրս պրծավ սարերի ետևից ու երկնքում դես ու դեն վազելով, որոնում էր իր ճաճանչին: Գտավ նրան, առավ իր գիրկը և անհագորեն համբուրում էր նրան, ու երջանկության արցունքներ թափում աչքերից: Աստվածամայր Անահիտը տեսավ այդ բոլորը և թախծեց: Նա գնաց Արայի մոտ:

- Այդ ինչո՞ւ է թախծել Աստվածների Մայրը,- հարցրեց Արան:

ԵՎ Անահիտը պատասխանեց.

- Ո՛վ, Մեծո՞ւ Արարի՛չ, ես երջանիկ եմ, որ անմահ Աստվածների Մայր եմ, որ իմ զավակները Տիեզերքի տերն են ու զորությունը, որ նրանք հավերժ են ու զորավոր: Ամեն ինչ կատարյալ է: Բայց իմ մայրությունը կատարյալ չէ:

- Ի՞նչ է պակաս քո մայրության մեջ,- հարցրեց Արան:

- Տառապանքը,- ասաց Անահիտը,- այո, տառապանքը: Առանց տառապանքի էլ ի՞նչ մայրացում, առանց ցավի էլ ի՞նչ մայրացում:

- Ի՞նչ ես կամենում:

- Ես կամենում եմ տառապալից մայրությամբ օժտվել: Ես կամենում եմ ցավով երկնել, ցավով ծնել, որդուս պարուրել սիրո կարոտով, տենչալ, երագել, մտովի կորցնել, որոնել, ողբալ, երկյուղած դողալ և ապա գտնել, սեղմել իմ կրծքին ու երջանկության արցունքներն առատ աչքերիցս

թափել որդուս մագերին ու ժպտա՛լ, ժպտա՛լ... Ես ուզում եմ երկրային աստված ծնել, որը միշտ ապրի Երկրի վրա և միշտ իմ մայրական խնամքին կարոտի:

Ժպտաց Հայր Արան և ասաց.

- Քո ցանկությունը հաճելի է ինձ համար: Ես կարարեմ երկրային աստված: Նա միշտ կապրի Երկրի վրա և մայրական խնամքի պահանջ կունենա: Բայց գիտցի՛ր, որ նա անմահ չի լինի Աստվածների պես: Նա որդիներ կունենա, թոռներ: ԵՎ մայրացումը կլինի երկրային կյանքի խորհուրդը: ԵՎ դու ինքդ կպարզես բոլոր մայրերին մայրացում որպես շնորհ աստվածային լինել երջանիկ տառապանքի մեջ:

ԵՎ Արարիչը հավաքեց Աշխարհի բոլոր ցավերից մի փունջ, բոլոր սերերից մի ամբողջ հյուսվածք, հուզմունքից մի բուռ, երազներից սոսկումները լոկ, պատրանքների ծով և այդ բոլորով կերտեց Անահիտի Մայրացումը:

Ո՛ր երկնեց Անահիտը: Ցավով երկնեց ու հենց Երկրի վրա Աստվածների կերտած Օրոցքում ծնեց մի չքնաղ զավակ՝ արևատես, լուսափայլ, առողջ և ուժեղ:

Հայր Արան գրկեց մանուկին, հիացավ նրանով և ասաց.

- Իմ այս զավակը առաջին արարումն է Երկրի վրա որպես Հայգ: ԵՎ թող իմ անունը միշտ կրի իր վրա որպես Արի: Թող Հայգ Արին ապրի Արարատում անմահ Աստվածների հետ որպես երկրային աստված: Բայց Աստվածների պես անմահ չի լինի: Նա իր կյանքով ժամանակ է հաստատելու, քանզի ժամանակը սպասումն է: Արին մշտապես սպասելու է և անընդհատ սպասելով, սպառվելու է ու ծերանալու է: ԵՎ ապա մեռնելու է: Բայց մահը վերջ չի լինելու: Ես նրա հավերժությունը հաստատում եմ կյանքի ու մահի միասնությամբ: Նա կմեռնի և ապա նորից կծնվի իր թոռի թոռան մեջ: Այդպես անընդհատ մեռնելով ու վերածնվելով, նա հավերժ կլինի, ինչպես և նրա բոլոր սերունդները:

Բոլոր Աստվածները հավաքվեցին Արարատում, ծիրանափող հնչեցրին և ուս ուսի տված, ի զորակցություն նորածին Արիի, նրա շուրջը քառասուն օր ու գիշեր Քոչ-Արի պարեցին:

Արարատի խոյասլաց լեռները մեծ հրավառությամբ ողջունեցին ծնունդն Արիի: Թե՛ ծառ, թե՛ ծաղիկ, թե՛ հավք, թե՛ գազան բոլորը մեկտեղ շուրջպար բռնեցին, փառաբանելով ծնունդը իրենց երկրային տիրոջ...

Մեծանում էր Արին Արարատում հազարաբույր ու հազարատես ծաղիկների մեջ, լողանում էր Արարատի պարզ լճերի ու արագավազ գետերի ջրերում, մազլցում էր Արարատի երկնասլաց լեռներն ի վեր, խաղում արծիվների ու առյուծների հետ: ԵՎ Կենաց Ծառի շվաքում հանգիստ էր առնում: ԵՎ Կենաց Ծառի տերևները մեղմ սոսափյունով կենաց աստվածային խորհուրդն էին հաղորդում նրան:

ԵՎ քանի որ Արին այնքան զորավոր չէր, ինչքան նրա Աստված եղբայրները, ուստի Մայր Անահիտը մշտապես հսկում էր նրան քնած, թե արթուն ժամանակ, աչքը չէր կտրում նրանից՝ գետում լողալիս կամ լեռները մազլցելիս և մայրական գուրգուրանքով սնում էր նրան: Գիշերները ծածկում էր նրան իր աստվածային թիկնոցով, որ հանկարծ չմրսի գիշերային հովից. օրորոցային էր երգում ու անուշ երազներ հղում նրան:

Աստվածները սիրում էին Արիին, սիրով խաղում էին նրա հետ և հովանավորում էին նրան:

ԵՎ աճում էր Արին առողջ, ուժեղ, կենսասեր ու իմաստուն:

ԼՈՒՅՍ ԵՎ ԽԱՎԱՐ

Աստվածներն էին կառավարում Տիեզերքը: Ամեն մեկը իր գործն էր անում: Ապա հավաքվում էին Երկրի Արարատում զվարճանալու և վայելելու աստվածային բարիքները, համենված խաղողի գինիով: ԵՎ այդ խնջույքներին մասնակցում էր նաև նրանց երկրային եղբայրը՝ Հայգ Արին:

Կայտառ էր Արին և ուրախ: Նա սիրում էր Աստվածներին: Աստվածներն էլ նրան էին սիրում: Բայց զվարճալի էին Աստվածները, երբ հարբած էին: ԵՎ պատանի Արին որոշեց զվարճալի խաղ խաղալ: Նա Արևի ճառագայթները զցեց Աստվածների աչքերին: Հարբած Աստվածները փորձում էին պաշտպանվել այդ ճառագայթներից, իսկ Արին ուրախ ծիծաղում էր: Ապա Աստվածները սթափվեցին հարբումից և իրենք էլ միացան չարաձճի Արիի խաղին:

Միայն Վիշապը սրտնեղեց: Ջորավոր Աստված էր նա, բայց տկար էր աչքերից: Նա խիստ զայրացավ Արևի վրա, բայց առավել՝ Արիի վրա, որ հանդգնում էր ծիծաղել Անմահ Աստվածների վրա: Չէ՞ որ Աստվածներն էին վառում Արևի ջահը, իսկ Արին ինքն էր սնվում այդ Արևից:

Շատ էր հարբած Վիշապը, մթագնել էր նրա բանականությունը, և միայն կիրքն ու ցասումն էին իշխում այդ զորավոր Աստծուն: Նա կատաղորեն հարձակվեց Արիի վրա՝ պատրաստ հռչոտելու նրան: Ջարմացավ Արին, թե իր անմեղ կատակը ինչու է զայրացրել Վիշապին: Բայց տեսնելով, որ Վիշապը իրոք հռչոտելու է իրեն, Արին իր ամբողջ ուժերը լարեց՝ պաշտպանվելու:

Հարձակվում էր Վիշապը, \$22ացնելով ու իր երախից թոյն ցայտելով: ԵՎ պաշտպանվում էր Արին իր զորավոր բազուկների ամբողջ ուժով: Չէ՞ որ նա էլ էր Աստված, թեև՝ Երկրային: Կռվում էին Անմահ Աստվածը և Երկրային Աստվածը: Ջորավոր էր Վիշապը և իր չարության մեջ անխնա կոտորատում էր Արարատի ծառերը, տրորում կենդանիներին, ոչնչացնում թռչուններին:

Արտավազը Միհրը միջամտեց, փորձելով դադարեցնել կռիվը և հաշտեցնել նրանց: Բայց Վիշապը իր զորության ուժով մի կողմ հրեց նրան: Մյուս Աստվածների միջամտությունն էլ ոչինչ չտվեց: Վիշապը հաղթում էր Արիին: Չէ՞ որ Վիշապը Անմահ Աստված էր, իսկ Արին թեև Աստված էր, բայց մահկանացու էր և իր զորությամբ զիջում էր Վիշապին:

ԵՎ Արտավազը Միհրը հասկացավ, որ իր արդարադատությունը միայն Վահագնի զորությամբ կհաստատվի:

Այդ ժամանակ Վահագնը տիեզերական այգեստաններում զբոսնում էր չքնաղ Աստղիկի հետ: Երանության մեջ էր Վահագնը և անտեղյակ էր Երկրի վրա կատարվող աղետին:

Միհրը գտավ Վահագնին ու դիմեց նրան.

- Ո՛վ, Վահագն, Վիշապը ավերում է Արարատը և կործանում է մեր եղբայր Արիին, հասի՞ր օգնության:

Սթափվեց Վահագնը իր երանությունից և անմիջապես թռավ եկավ Երկիր: Նա կանգնեց կատաղած Վիշապի դիմաց:

- Կանգ առ, ո՛վ, Վիշապ,- դիմեց Վահագնը,- սթափվի՛ր և զսպի՛ր քո չարությունը: Դու անգթորեն հարվածում ես քո եղբորը և ավերով պղծում ես Արարատը:

Վիշապը ֆշշաց ցասունով.

- Ես ատում եմ այս երկրային աստծուն, որ Անմահ Աստվածների պես կատարյալ չէ, բայց Անմահ Աստվածների հետ սեղան է նստում: Անկատարը կատարյալին եղբայր չի լինի, և ես պիտի կործանեմ նրան:

Բարկացավ Վահագնը Վիշապի խոսքերից.

- Արին իմ եղբայրն է, և նա կատարյալ է որպես երկրային Հայգ: ԵՎ Հայր Արայի կամքով ես պիտի պաշտպանեմ նրան:

ԵՎ երկու Աստվածներ բախվեցին իրար: Հենց Արարատում ահավոր մի Մեծամարտ էր Վահագնի ու Վիշապի միջև: Նրանց կռիվը ցնցում էր ամբողջ Երկիրը և արծագանք էր տալիս տիեզերական անհունության մեջ: Երկար էին կռվում նրանք: Աստվածները զարհուրած

հետևում էին այդ Մեծամարտին: Միայն Հայր Արան հանգիստ
դիտում էր վերից և իր մտքում իր որոշումն էր հյուսում:

Երկար կռվելուց հետո Վիշապն ընկրկեց: Վահագնը
հաղթական էր: Բայց Արան սաստեց կռվող Աստվածներին,
իր մոտ կանչեց նրանց և ասաց.

- Դուք երկուսդ այլևս իրար չպետք է հանդիպեք, թե չէ
ծեր մեջ կռիվը անվերջ կլինի:

ԵՎ Արան Վահագնին կարգեց Լույսի տիրակալ, իսկ
Վիշապին՝ Խավարի տիրակալ, ԵՎ Վիշապը այլևս Արարատ
չէր իջնում, քանզի այնտեղ Վահագն էր և Լույս: ԵՎ Վիշապը
ատեց Վահագնին, ատեց արևին ու Արիին: Նա երբեմն
երկնքից իջնում էր Երկիր, թաքնվում էր տափաստանի
ավազների մեջ և չարությամբ ֆշշացնում էր Արարատի
կողմը:

ՀՈՂԱԾԻՆ ՏԻՏԱՆԸ

Մենակ էր Վիշապը և՛ Երկնքում, և՛ Երկրի վրա: Խավար էր շուրջը, և ինքն էր միանձնյա Թագավոր այդ խավարի մեջ: Սկզբում լավ էր զգում իրեն: Չէ՞ որ ինքն էր բացարձակ տիրակալ այդ խավարի աշխարհում: Բայց հետո նա ձանձրացավ իր այդ վիճակից: Այո, նա բացարձակ Թագավոր էր, բայց ո՞ւմ էր իշխում, ո՞վ էր երկրպագում նրան, ո՞վ էր զոհ մատուցում նրան:

ԵՎ տխրեց Վիշապը: Նա հաճախ իջնում էր Երկիր ու հեռվից հետևում էր Արարատին, ուր ճախրում էին թիթեռներ, ճռվողում էին թռչուններ, վազվզում էին կենդանիներ, ուր ծառ ու ծաղիկ էր: ԵՎ նա նախանձում էր մյուս Աստվածներին, որ ուրախ զվարճանում էին այդ բնության մեջ և խաղում էին Արիի հետ: Իսկ ինքը մենակ էր: ԵՎ գեթ մեկը չկար, որի հետ խաղար ինքը, որի հետ զրուցեր, որին հովանավորեր: ԵՎ հենց դրա համար Վիշապը ավելի էր չարանում Արիի դեմ, որ նա կար և հենց իր լինելությամբ երջանկացնում էր Աստվածներին և ընդգծում էր Վիշապի դժբախտությունը: Երանի Արին չլիներ, կամ ինքն էլ ունենար այդպիսի մեկին:

ԵՎ Վիշապը դիմեց Արային.

- Ո՛վ, Հայր իմ, ես մենակ եմ, և տխուր է ընթանում իմ կյանքը: Արարատում կյանք կա և այնտեղ Արին կա, ի ուրախություն բոլոր Աստվածների: Ինձ էլ տուր Արիի պես մեկին, որ ես էլ հոգամ նրա մասին: Չէ՞ որ նույնիսկ Խավարի տիրակալն էլ ուրախանալու պահանջ ունի:

- Ես կկատարեմ քո ցանկությունը,- ասաց Արան,- թունախառն քո շունչը ցայտիր շուրջդ, և անապատը կկենդանանա: Ապա անապատի կավը շաղախիր Հորդոզ գետի ջրով և շաղախից ծեփիր Արիի նման մեկին: Փչիր նրա վրա, և նա շունչ կառնի: Բայց գիտցի՞ր՝ նա չի լինի Արի, այլ կլինի Չարի. նա չի լինի Հայգ, այլ կլինի Ադամ. նա չի լինի

աստված, այլ կլինի տիտան: ԵՎ նա կլինի առաջին հողածին Տիտանը:

Վիշապը գոհ վերադարձավ Երկիր: Շուրջը տարածեց իր թունավոր շունչը, և տափաստանի ավազներից փուշ ու տատասկ աճեցին և բազում կարիճներ, օձեր, մողեսներ և այլ սողուններ կենդանություն առան ու լցրեցին անապատը: Ապա տափաստանի կավը շաղախեց Հորդոդ գետի ջրով և այդ շաղախով ծեփեց Չարի Տիտանին, փչեց նրա վրա, շունչ տվեց նրան:

Ուրախացավ Վիշապը՝ խավարի թագավորությունն էլ ունեցավ իր կյանքը և իր մարդուն: Վիշապը սիրում էր Տիտանին, գուրգուրում էր նրան և անվերջ խրատում էր.

- Դու կբազմացնես ադամորդի Տիտանների Ցեղը և իմ խավարի տիրակալությունը կտարածես Երկրով մեկ: ԵՎ իմ Չորությանը ապավինած, կտապալես Արի Ցեղը Արարատում և խավարով կծածկես Արարատը, որ այնտեղ էլ իմ իշխանությունը հաստատվի:

ԵՎ Չարի Տիտանը աճում էր թունավոր զորությամբ և մշտապես թշնամություն էր տածում Արարատում ապրող Արի աստծո դեմ: Նա մշտապես խորհում էր Արարատը նվաճելու և այնտեղ խավարի թագավորություն հաստատելու մասին:

ԼԻԼԻԹՈ

Հասունացել էր Արին: Առողջ, ուժեղ և կենսասեր պատանի էր դարձել: Բայց ինչ-որ մի կարոտ ալեկոծում էր նրա հոգին: ԵՎ թախծում էր Արին: Արիի թախծը չվրիպեց Մայր Անահիտի ուշադրությունից, և նա դիմեց Հայր Արային:

- Ո՛վ, Մեծդ Արարի՛չ, քո Արի որդին հասուն է արդեն սիրելու համար:

Արարիչը բռնեց Երկրից դեպի վեր սուրացող կրակը և նրա բեկբեկուն, ճախրուն բոցերից կերտեց Լիլիթին:

Ջվարթ էր Լիլիթը և կյանքով լի: Նա թեթևասահ ճեմում էր Արարատի ծաղկազարդ հովիտներում, սառնորակ ամպակներից ջուր էր խմում, արձագանքում էր սոխակների հմայող դայլայլին: Գեղեցիկ էր Լիլիթը, և գեղեցիկ էր ամեն ինչ նրա շուրջը: ԵՎ նա ուրախ էր, որ ապրում էր, քայլում էր, որ շրջապատված էր այս հրաշալիքներով: ԵՎ նա զգում էր իրեն էլ մի հրաշալիք այդ հրաշալիքների մեջ:

Լիլիթը սառնորակ աղբյուրի մոտ նստած՝ ականջը դրած նրա բյուրեղյա նվագին՝ նայում էր Արարատի աստղազարդ երկնքին: ԵՎ աստղերի հրաբորբ ողկույզները արբեցնում էին նրա սիրտը մի խորհրդավոր տենչով: ԵՎ Լիլիթը, աստղերով արբած, քուն մտավ ծաղիկների մեջ և զարթնեց սոխակների սիրահույզ դայլայլներից:

Ցնորագեղ շնորհներով ծագեց արշալույսը և ծավալվեց Արարատի վրա: Լիլիթը բացեց աչքերը և իր գլխավերևում մի հրաշալի կերպարանք տեսավ: Ղա պատանի Արին էր, որ ամբողջ գիշեր զնայված կանգնած էր Լիլիթի մոտ և հիանում էր նրա գեղեցկությամբ: Գիշերվա մութին Լիլիթի դեմքը ճառագում էր կրակի պես և լուսավորում շրջապատը: ԵՎ հրե Լիլիթը հուր բոցավառեց Արի աստծո պատանի հոգու մեջ:

Ոտքի կանգնեց Լիլիթը ու հիացած դիտեց Արիին: Արիի արևշող դեմքը, բոցե աչքերը գերեցին Լիլիթին: Նա

ժպտաց, և նրա ժպիտից շրջակա բոլոր ծաղիկները պայծառացան:

- Դու Լիլիթն ես, ո՞վ, չքնաղ գեղուհի՛, - հուզումնալից ձայնով ասաց Արին:

- Այո, - քնքշորեն ասաց Լիլիթը,- բայց դու ո՞րտեղից գիտես ինձ:

- Ես Արին եմ՝ Արայի որդին և երկրային աստվածը: ԵՎ քեզ Հայր Արան կերտել է ինձ համար:

Երջանիկ էր Արին, երջանիկ էր և Լիլիթը: Ձեռք ձեռքի տված, պատանի սիրահարները երանությամբ ճեմում էին Արարատի գեղասքանչ բնության մեջ: Ամենուր գեղեցկություն էր: ԵՎ Լիլիթը բերկրության մեջ էր, հատկապես, որ իր ափի վրա զգում էր Արիի այնքան հարազատ ու ջերմ ձեռքի սեղմումը:

- Ի՞նչ գեղեցիկ է ամեն ինչ Արարատում,- հաճախ հիացած բացականչում էր Լիլիթը: Արին ժպիտով հաստատում էր նրա ասածը:

Բայց մի անգամ Լիլիթը խորամանկ ժպտաց ու հարցրեց.

- Ո՞վ, Հայր Արի՛, ասա ինձ, ես է՞լ եմ գեղեցիկ այս գեղեցիկների մեջ:

Արին դարձյալ ժպտաց: Լիլիթը չբավարարվեց Արիի ժպիտով և հարցը կրկնեց: Արին նայում էր Լիլիթին: Նրա աչքերի փոխարեն սիրավառ սիրտն էր կերտում Լիլիթի կերպարանքը, և շուրթերի փոխարեն սիրահարված պատանու սիրտը խոսեց.

- Օ՛հ, դու գեղեցիկների թագուհին ես, դու զարդն ես Արարատի, դու աստվածային հրաշալիք ես, և քո գեղեցկությունը միայն Անմահ Աստվածուհուն է վայել:

Շոյված էր Լիլիթը: Այդ խոսքերը հաճելի էին նրա ականջներին: ԵՎ այնուհետև Լիլիթը հաճախ էր նույն հարցը տալիս, հարկադրելով Արիին նորանոր ներբողներ ասելու իր գեղեցկության մասին: ԵՎ ինքն էլ էր համոզվում, որ ինքն է ամենագեղեցիկը ողջ Արարատում: ԵՎ ցանկացավ ինքն իր աչքերով տեսնել իր գեղեցկությունը:

Արին Լիլիթին տարավ լեռնային մի պարզ լճի ափ, որի ջրերի վրա նազում էին ձյունափետուր կարապները:

Լիլիթը ծնկի իջավ և ջրերի վրա տեսավ իր ցուլքը: Նա համոզվեց, որ հրաշալի, հրաբողբոջ գեղեցկություն է ինքը, սքանչացավ իրենով: Նա հիացած ու նորից հիացած նայում էր իր պատկերին ու չէր հագենում:

Կապույտ երկինքն իր արևով և Արարատյան դրախտից մի կտոր ցուլացած էին լճակի հայելու մեջ: ԵՎ տեսավ Լիլիթը, որ արևը այնքան հրեղեն չէ, ինչքան իր աչքերի կրակը, և երկինքը այնքան խորունկ չէ, ինչքան իր աչքերի հունը: Ինքն է ամենակատարյալը, և լճակն ու Արարատը լցված են իր դեմքի լույսով: ԵՎ հենց այդ պահին նրա մեջ մեռավ սերը, ու անհագ գոռոզությունը իշխեց նրան: Նա ինքնագոհ ժպտում էր:

Հանկարծ լճակի ջրերի վրա Լիլիթի պատկերին խառնվեց Արիի ցուլքը: Լիլիթը, որ իրենով հիանալու միջոցին մոռացել էր Արիին, հանկարծ զայրացած ոտքի ելավ և աչքերի ցասկոտ հուրը վառեց նրա վրա:

- Ի՞նչը վրդովեց քո քնքուշ հոգին,- զարմացած հարցրեց Արին:

- Քո գռեհկությունը, - վրդովված պատասխանեց Լիլիթը,- դու երբեք չես կարող տեսնել ու գնահատել իմ գեղեցկությունը, թե չէ չէիր անպատվի այն, քո պատկերի ցուլքը խառնելով նրան:

ԵՎ հասկացավ Արին, որ փոխվել է Լիլիթը, և մեռել է սերը նրա հոգու մեջ:

- Դու գեղեցիկ ես, Լիլիթ, - ասաց վրդովված Արին, - բայց քո գեղեցկությունը քեզ չի պատկանում: Քո գեղեցկությունը տեր ունի, և քո գեղեցկության տերը ես եմ:

- Ես եմ ամենագեղեցիկը Արարատում, - ըմբոստացավ գոռոզ Լիլիթը, - և ամենը, ինչ որ կան, իմ գեղեցկությունը ընդգծելու համար են ծառայում: Ես եմ ամենակատարյալը և ես եմ բոլոր գեղեցիկների տիրուհին: ԵՎ դու էլ պիտի երկրպագես իմ գեղեցկությանը:

ԵՎ Լիլիթն իր տիրական հրե հայացքով փորձեց ընկճել Արիին, բայց բախվեց Արիի աչքերի արևային հրավառությանը: Սարսափեց Լիլիթը: Նա զգաց, որ մի ահավոր ուժ է կուտակված Արիի աչքերի մեջ, և որ այդ ուժով

Արին կսանձահարի իր գոռոգությունը և իր պատրանքները կփշրի հնազանդեցման հրե աքցանի մեջ:

ԵՎ փախավ Լիլիթը, փախավ Արիի ուժից սարսափած, փրկելու համար իր գեղանի կատարելության պատրանքը:

Երկար, շատ երկար վազում էր Լիլիթը, և իր ճամփին անխնա տորոում էր ծաղիկներն ու ջարդոտում ծառերը: Նա այլևս չէր նկատում դրանց գեղեցկությունը և չէր ավստում դրանց: ԵՎ Լիլիթն ընկավ խավարի տիրապետություն, ուր ամեն ինչ գորշ էր ու մռայլ, և Վիշապն էր տիրակալ այդ բոլորին:

- Չքնաղ Լիլիթ, - լսեց նա Վիշապի ձայնը, - իմ թագավորության մեջ միայն քո գեղեցկությունը կգնահատվի քեզ արժանի խնկարկումով:

Խիստ շոյվեց Լիլիթի ինքնասիրությունը, և նա հետևեց Վիշապին: Վիշապը նրան տարավ Տիտանի մոտ և դիմելով Տիտանին, ասաց.

- Ահա քեզ ընկեր՝ գեղեցիկ Լիլիթը: Իրար աչքերի մեջ տեսեք ձեր պատկերները և իրար սրտերի մեջ սիրեցեք միմյանց: Աճեցեք ու բազմացեք: ԵՎ դու, Տիտան, որ տերն ես այս անապատի, քո բոլոր օրերիդ մեջ հետևիր Լիլիթին, քանզի Լիլիթը տիրուհին է քո:

Լիլիթը ուշի ուշով նայեց Տիտանին, և կավի հոտը խփեց իր քթին: ԵՎ նա զգաց, որ Տիտանի հայացքը հողի ծանրությամբ իջավ իր մազերի և ուսերի վրա:

Տիտանը զգաց, որ իր սիրտը կապվեց Լիլիթին՝ անբաժան ու անմեկին: ԵՎ նա քնքշորեն բռնելով Լիլիթի ձեռքը, ասաց.

- Օ՛, չքնաղդ բոլոր չքնաղների մեջ, այս թագավորության մեջ ամեն ինչ ծառայելու է քո գեղեցկությանը: Դու տիրուհին ես իմ և ամբողջ խավարի թագավորության:

Բավարարված էր Լիլիթի փառասիրությունը՝ նա տիրուհի էր, թեկուզ խավարի:

Փուշ ու տատասկ խոնարհվում էին նրա գեղեցկության առջև: Օձ ու կարիճ սվսվալով նրա գեղեցկության գովքն էին հյուսում: Իսկ Տիտանը մեծագույն

հավատարմությամբ ծառայում էր նրան, հետևում նրան ամենուր:

Բայց Տիտանի կավաբույր շունչը ճնշում էր Լիլիթին: ԵՎ Լիլիթը տհաճ զգացումով ցնցվում էր Տիտանի ամեն մի հպումից: ԵՎ նույնիսկ աղամանդների ու գոհարների շլացուցիչ փայլը չէր կարողանում մեղմել այն խորշանքը, որ նա զգում էր Տիտանի գրկում: Իսկ տիրուհու այնքան բաղձալի վիճակը այլևս ծանր բեռի պես ճնշում էր նրան:

Ջղջումի փոթորիկն էր ալեկոծում նրա հոգին. «Մի՞թե լույսի սպասուհի լինելն ավելի հաճելի չէր, քան խավարի տիրուհի լինելը. մի՞թե Երկրային Աստված Արիին հնազանդվելը ավելի հաճելի չէր, քան կավաբույր Տիտանին հնազանդեցնելը»: ԵՎ զղջումի արցունքները հոսում էին նրա աչքերից:

Տիտանը զգում էր, որ իր անմնացորդ նվիրումը չի արժանանում Լիլիթի ամենաթույլ ժպիտին անգամ և զգում էր, որ Լիլիթը իրենը չէ: ԵՎ դա հուսահատեցում էր նրան:

ԵՎ մի գիշեր հանկարծ գալարվեց Լիլիթը՝ ազատելով իրեն Տիտանի հյուծող համբույրներից, ցատկեց, թռավ նրա տաղավարից դուրս և անհետացավ գիշերային բավիղների մեջ: Նա այլևս չվերադարձավ:

Անհույս էր Տիտանի հոգին, նզովելով աստված և անմահություն՝ մահ էր տենչում: Վիշապը խղճաց Տիտանին, հասկացավ, որ Լիլիթը փախել է անդարձ: ԵՎ Արարչի կամքով, նա թմրություն բերեց Տիտանի վրա և նրա կողից ստեղծեց մի նոր ընկեր՝ Եվային, որ իր ծագումի բերումով հնազանդ լինի Տիտանին, կարողանա սիրել միայն նրան և բազմացնի Չարի Տիտանի ցեղը:

Իսկ Լիլիթը վերադարձավ Արարատ և անմիջապես տեսավ այն շլացուցիչ գեղեցկությունը, որ փթթում էր Արարատում: Նա եկավ Արիի մոտ:

Արին նստած էր, հենված Կենաց Ծառի բնին և խորասուզված էր իր վիրավորված զգացմունքների մեջ: Լիլիթի հայտնվելը անսպասելի էր: Արին լուռ նայում էր Լիլիթին և ոչինչ չէր խոսում:

- Ո՛վ, Երկրային Աստված, - խոսեց Լիլիթը, և նրա ծայնի մեջ միախառնված էին զղջումն ու գոռոզությունը, - իմ գեղեցկությունը միայն քեզ է արժանի:

Արին լուռ բռնեց Լիլիթի ձեռքից ու տարավ նույն լեռնային լճակի մոտ, ուր տարել էր մի ժամանակ: Լիլիթը կռացավ, նայեց լճի ջրերին և սարսափեց. ջրերի մեջ արտացոլվում էր իր պատկերը: Բայց մի օտարոտի կերպար էր դա՝ խամրած աչքերով, կապտած շուրթերով: Անհետացել էր նրա երբեմնի գեղեցկությունը, որի ցուքը ընկել էր ջրի վրա: Վշտացավ Լիլիթը:

- Այս ի՞նչ է պատահել ինձ, - հարցրեց նա, - չէ՞ որ ես հրեղեն եմ:

Արին հեզնորեն ժպտաց և ասաց.

- Այո, դու հրեղեն էիր: Բայց հուրը սիրով է բոցավառվում: Քո հուրը մարեց հենց այստեղ այն ժամանակ, երբ քո մեջ մեռավ սերը, և գոռոզությունն ու փառասիրությունը հանգցրին քո հուրը:

Լիլիթը ամոթահար ծածկեց երեսը ու փախավ: Նա փախավ լեռները, ամաչելով երևալ նույնիսկ կենդանիներին: Նա մեծ վիշտ էր ապրում, նա զղջում էր իր արածը, և այդ զղջումը նրա մեջ ձևավորում էր անհանդուրժողականություն ամեն մի գեղեցիկի նկատմամբ:

ԱՐՓԻՆ

Մայր Անահիտը դիմեց Հայր Արային.

- Ո՛վ, Մեծդ Արարի՛չ, քո Արի որդին սթափվել է արդեն խորտակված սիրո մղձավանջից: Մի նոր կին կերտիր նրա համար, որ լինի ավելի գեղեցիկ, քան Լիլիթը, ավելի նազելի, ավելի հեզ և ավելի սիրող, քան Լիլիթը, որ կարողանա գրավել Արիի սիրտը և լինի նվիրված ու հնազանդ:

ԵՎ Արան Աշխարհի բոլոր գեղեցիկներից կերտեց Արփիին՝ Արևից՝ վառ սեր, Լուսնյակից՝ թախիծ, աստղերից՝ ժպիտ, մաքրություն՝ Երկնից, հուզմունքը՝ Երկրից, նազանքը՝ հովից, հառաչը՝ հողմից, կարկաչը՝ առվից, անձրևից՝ արցունք, դաշտերից՝ հեզանք, լեռնից՝ հպարտանք:

ԵՎ այդ գեղեցիկը իր հրաշագեղությամբ ու իր հեզությամբ շողարծակեց Արարատի աստվածային հրաշալիքների մեջ: Ծափ տվեցին բոլոր ծաղիկները, սոխակները զմայլված գեղգեղում էին նրա շուրջը: ԵՎ նույնիսկ Արևը կապույտ երկնքում սիրո համբույրներ էր հղում Արփիին իր ջերմ ճաճանչներով: Միայն Լիլիթը, նախանձելով Արփիի գեղեցկությանը, չարանում էր նրա սիրո դեմ:

Բոլորը սիրում էին Արփիին: ԵՎ Արփին սիրում էր բոլորին ու ամենին հրաշք Արարատում: Բայց ամենից շատ նա սիրում էր պատանի Արիին: Իսկ Արին չէր նկատում նրան:

Արին սարերն էր մագլցում, առյուծների հետ մրցասպարեզ էր ելնում, արծիվների համար բույն էր շինում լերկ ժայռերի կատարին և ապա մինչև լուսաբաց Աստվածների հետ խնջույք էր անում: ԵՎ չէր նկատում Արփիին: Նա չէր նկատում Արփիի գեղեցկությունը, թեև Արփին ամենուր հետևում էր նրան:

Այրվում էր սիրուց գեղեցիկ Արփին: ԵՎ Արիի սիրով աղոթք էր անում Սիրո Դիցուհուն, որ օգնի իրեն, որ Արիի հայացքը իր վրա ուղղի և սեր արթնացնի Արիի սրտում:

Աստղիկը չքնաղ՝ Սիրո Դիցուհին, որ սեր էր վառել Արփիի սրտում, սիրում էր նրա սերը լուսափայլ՝ լույսի պես անկիրք, մաքուր և ազնիվ: Աստղիկը եկավ Արփիի մոտ և ասաց.

- Արին մինչև լուսաբաց Մասիսի վրա խնջույք է անում Աստվածների հետ, որից հետո գնում է Կապուտան լճի սառնորակ ու քաղցրահամ ջուրը խմելու և հագեցնելու իր ծարավը: Ես Կապուտան լճի մեջ մի բուռ աղ կցանեմ: Արին կխմի այդ աղի ջուրը և ավելի կծարավի: Դու կուժով լեռնային ամվակներից սառնորակ ջուր կբերես. նա կխմի այդ ջուրը, կհագենա և կնկատի քո գեղեցկությունը:

Այդպես էլ արեց: Լիլիթը, որ հետևում էր այդ բուլորին, չհանդուրժեց Արփիի մոտալուտ երջանկությունը և որոշեց խանգարել նրան: Նա մոտեցավ Արփիին և ասաց.

- Գեղեցիկ Արփի՛, Արին շատ գորեղ է, նա Աստված է, թեև Երկրային. մի բուռ աղը մեծ լճի մեջ ի՞նչ պիտի անի նրան: Մի բուռ աղ էլ դու լցրու այդ ջրի մեջ:

ԵՎ Արփիի գլուխը մտավ Լիլիթի խորհուրդը: Աստղիկից թաքուն մի բուռ աղ էլ ինքը լցրեց: ԵՎ լճի ջուրը չափից ավելի աղի դարձավ: ԵՎ երբ գիշերային խրախճանքից հետո Արին եկավ ու խմեց այդ ջուրը, սարսափելի այրոցք զգաց իր մեջ: Նա խեղդվում էր ծարավից:

Արփին կուժով սառը ջուր բերեց, բայց Արին չհագեցավ: Արփին նորից ջուր բերեց, դարձյալ Արին չէր հագենում: Նորից ու նորից Արփին վազում էր Արարատի մի ծայրից մյուսը՝ ջուր բերելու, բայց Արիի ծարավը ավելի ու ավելի էր սաստկանում:

Արփին ուժասպառ ընկավ գետին և հուսահատ լաց եղավ: Նա անիծում էր Լիլիթին և անիծում էր ինքն իրեն, որ լսեց նրա չար խորհուրդը:

Աստղիկը լսեց նրա լացի ձայնը և անմիջապես եկավ նրա մոտ: Նախ հանդիմանեց Արփիին, ապա բռնեց Արիի մի ձեռքից և պատվիրեց, որ Արփին բռնի մյուս ձեռքից: ԵՎ տարան Արիին դեպի այն լեռները, ուր քսանութ սառնորակ գետակներ են սկիզբ առնում:

Այդ գետակներն էլ չէին հագեցնում Արիի ծարավը: Աստղիկը կանչեց ճարտարագետ Տիր Աստծուն: Տիրը լեռների մեջ թմբեր կանգնեցրեց, որ մի տեղ կուտակվեն քսանութ գետակների ջրերը: Բայց որպեսզի ջուրը չնեխի անշարժությունից, նա մի անցք թողեց, որ ջուրը մշտապես հոսի: Այդպես գոյացավ լեռնային մի լիճ՝ քաղցրահամ ու սառնորակ ջրով և կոչվեց Սևան: Իսկ Կապուտանն այսուհետև ունեցավ շատ աղի ջուր:

Արին լճից սառը ջուրը խմեց ու հագեցավ: Բարձրացրեց գլուխը և նայեց Արփիին:

- Դու այրեցիր սիրտս աղով, դու էլ հանգցրիր իմ միջի կրակը այս սառնորակ ջրով, - ասաց Արին, - բայց մի նոր հրդեհ բորբոքեցիր իմ մեջ քո գեղեցկությամբ: Ասա, ո՞ր աղբյուրը կարող է հանգցնել իմ այդ ներքին հրդեհը:

Հենց այդ ժամանակ Լիլիթը աննկատ մոտեցավ Արփիին և շնչաց ականջին.

- Լուռ հեռացիր ու թաքնվիր նրանից, թող նա քեզ որոնի, որ շատ սիրի քեզ:

Արփին անմիջապես մոռացավ Լիլիթի նախկին խարդավանքը, և նրա գլուխը մտավ այս նոր միտքը: ԵՎ նա ոչինչ չպատասխանեց Արիին, ուսերը թոթվեց ու հեռացավ:

Ջարմացավ Արին, չհասկացավ Արփիի արարքը: Իսկ նրա հոգու մեջ գամվել էր արդեն Արփին իր ամբողջ դաժան գեղեցկությամբ: Նա օրերով որոնում էր Արփիին, բայց Արփին միշտ փախչում և թաքնվում էր նրանից:

Արին վշտացած դիմեց Աստվածամայր Անահիտին:

- Երբ ես անտարբեր էի Արփիի նկատմամբ ու չէի նկատում նրա գեղեցկությունը, նա ինքը հետապնդում էր ինձ: Իսկ երբ ես սիրեցի նրան, նա փախչում է ինձանից և ստիպում է անհույս վազել նրա ետևից:

ԵՎ Մայր Անահիտը ասաց.

- Դա Լիլիթի բնույթն է: ԵՎ այն ամենուր հետապնդում է Արփիին ու մշտապես խառնում նրա միտքը: ԵՎ Լիլիթի բնույթը նրան դարձնում է թեթևամիտ ու քմահաճ: ԵՎ նրա քմահաճությանը սահման չի լինելու: Ինչքան շատ բավարարես նրա քմահաճույքները, այնքան դրանք ավելանալու են, և քո անսահման սերը նա փաթաթելու է քո

պարանոցին և դրանից բռնած, քեզ քարշ է տալու իր ետևից: Թող երբեք նա չհմանա քո սիրո չափը: Այնժամ նա ինքը կհետևի քեզ ու հնազանդ կլինի: Այդպես նա կերջանկացնի քեզ և ինքն էլ երջանիկ կլինի:

ԵՎ այնուհետև Արին մտովի որոնելով Արփիին, կարոտելով նրան, այրվելով սիրուց, բայց և այնպես չէր գնում Արփիի ետևից: Սիրո զգացմունքի բուռն պահերին վազվզում էր Արարատով մեկ, խառնում էր իրար թռչուն և գազան, թաքուն երգեր էր հյուսում և Մասիսի լանջերին երգում էր իր սիրո ու կարոտի երգերը այնպես, որ միայն Աստվածները լսեն:

Վշտացավ Արփին՝ Արին այլևս չէր որոնում իրեն: Իսկ Լիլիթը շարունակ խրատում էր նրան.

- Ձսպիր, մի քիչ էլ զսպիր: Կկոտրվի նրա համառությունը, և նա կգա քեզ մոտ:

ԵՎ զսպում էր Արփին, զսպում էր իր սերը, բայց Արին չէր գալիս: ԵՎ Արփին կորցնելու սարսափը խցկվեց նրա հոգու մեջ: Նա լաց էր լինում, անիծում էր Լիլիթին, անիծում էր ինքն իրեն, որ լսել է նրան և աղոթում էր Աստվածամայր Անահիտին:

Ջգացվեց Մայր Անահիտը, եկավ Արփիի մոտ: Արփին ծնկի իջավ Անահիտի առջև և խնդրեց վերջ տալ իր տառապանքներին:

Անահիտը մայրաբար խրատեց նրան.

- Որքան դու հետևես Լիլիթի բնույթին, այնքան կտառապես ինքդ և նույնքան էլ տառապանք կպատճառես Արփին: Գիտցիր, որ Արարիչը քեզ բազմապիսի գեղեցկություններից է կերտել հենց Արփիի համար: Դու չես քո գեղեցկության տերը, դու չես քո սիրո տերը: Արին է քո գեղեցկության ու սիրո տերը, Արին է քեզանից ծնված երեխաների տերը: Ուրեմն Արին է քո տերը: Այդպես է կամքը Հայր Արայի: ԵՎ դու միշտ հետևիր Արփին, ու երբեք քո գոռոզությունը թող չհշխի քո սիրո վրա, որ Արփին է պատկանում:

Արփին համոզվեց, որ չարիք է նյութում իր դեմ Լիլիթը և որոշեց այլևս երբեք չհետևել նրա բնույթին: ԵՎ նա գնաց

Արիի ետևից: ԵՎ երբ Արին Սևանա լճից ջուր էր ուզում խմել, Արփին կանգնեց նրա մոտ, կուժը ձեռքին:

- Ո՛վ, Երկրային Աստված, - դիմեց նա Արիին, - Հայր Արան ինձ կերտել է քեզ համար, և դու ես իմ տերը: Թույլ տուր ես հագեցնեմ քո ծարավը իմ կուժի ջրով:

Արին, որ իր հոգու մեջ մեծագույն բերկրանք էր զգում Արփիի տեսքից և ուզում էր թռչել ու փարվել նրան, այնուամենայնիվ, իր զորությանը զսպեց իր մղումը և սառը ժպտաց.

- Այս լճի ջուրը սառն է ու հաճելի, քո կուժի ջուրը արդեն տաքացել է և անհամ է:

Լիլիթը աննկատ շշնջաց Արփիի ականջին. «Նա վիրավորում է քո սերը»:

ԵՎ վիրավորվեց Արփին: Բայց անմիջապես հիշեց Մայր Անահիտի խրատը և ինքն իր մեջ ասաց. «Ումի՞ց եմ վիրավորվում, իմ սիրո՞ւց, որ նրան է պատկանում»: ԵՎ խոնարհ ձայնով դիմեց Արիին.

- Թույլ տուր կուժով ջուր վերցնեմ լճից և քեզ տամ:

- Ո՛չ, - մերժեց Արին, - կուժն ի՞նչ է, որ պահպանի այս ջրի համը:

Այն ժամանակ Արփին իր երկու ափերով ջուր վերցրեց լճից ու մոտեցրեց Արիի շուրթերին: Արին ժպտաց և խմեց այդ ջուրը:

ԵՎ այնուհետև Արփին ամենուր հետևում էր Արիին:

Արփին երկրպագում էր Արիին ու երջանիկ էր իր հնազանդության մեջ: Բայց և այնպես մի օր, երբ նրանք զբոսնում էին պուրակում, Արփին հարցրեց.

- Ես գեղեցի՞կ եմ:

ԵՎ հասկացավ Արին, որ սիրելով Արփիին, մշտապես պիտի պաշտպանի իր սերը Լիլիթի բնույթից, որը անվերջ հետապնդում էր Արփիին:

ԿԵՆԱՑ ՊՏՈՒՐԸ

Երանության մեջ էին Արին ու Արփին: Ձեռք ձեռքի տված զբոսնում էին Արարատի սքանչելի բնության մեջ, վազվզում էին դաշտերով, լողանում լեռնային գետակների մեջ: Պատանեկան լուսե սիրով էին սիրում իրար. հովի պես քնքուշ էր նրանց սերը, հողմի պես փոթորկող, արևի պես ջերմ, ջրի պես մաքուր, երկնի պես անկիրք: ԵՎ նույնիսկ իրենց մերկությունը չէին զգում նրանք: Երկյուղում էին նայել իրար աչքերի մեջ, երկյուղում էին դիպչել, անգամ, իրար: Մեկը մյուսի զգացմունքների մեջ մի եթերային էակ էր, որ կարող էր հանկարծ գոլորշիանալ, անէանալ անդարձ: ԵՎ մեծագույն երկյուղածությամբ պահպանում էին իրար:

Նրանց սիրով հիանում էր Աստղիկ Դիցուհին և հովանավորում էր նրանց սերը: Աստվածամայր Անահիտը իր մոտ կանչեց Աստղիկին և ասաց.

- Արիի և Արփիի եթերային սերը շատ գեղեցիկ է, մաքուր, բայց անցողիկ է այն: Դու պիտի ապահովես նրանց սիրո հավերժումը:

- Մի՞թե այս սերը հավերժական չէ,- զարմացավ Աստղիկը:

ԵՎ Աստվածամայր Անահիտը ասաց.

- Երկրային աստվածները ժամանակի ազդեցությունն ունեն իրենց վրա: Եթերային սերը պատանեկության մենաշնորհն է. պատանեկության գարունն է և գարնան պես լուսաշող է, փոթորկող և անկիրք: Բայց գարնան հետ կանցնի այդ սերը, եթե այն չվերաճի պտղաբերումի սիրո: Պտղաբերումի սերն արտահայտվում է սերնդատվությամբ և փոխանցվում է նրանց զավակների միջոցով: Դա է սիրո հավերժումը:

- Մայր,- ասաց Աստղիկը,- իսկ ինչպե՞ս ապահովեմ նրանց սիրո հավերժումը:

ԵՎ Աստվածամայր Անահիտը ասաց.

- Հենց որ նրանք ամաչեն իրենց մերկությունից, այն կծածկեն: ԵՎ հենց այդ պահից նրանք կերագեն դիմացինի մերկությունը և կծգտեն իրար:

ԵՎ Աստղիկը հարցրեց.

- Ասա ինձ, Մայր, իսկ ինչպե՞ս նրանք զգան իրենց մերկությունը:

ԵՎ Աստվածամայր Անահիտը ասաց.

- Նրանք պիտի ճաշակեն կենաց պտուղը: Դա աստվածային սիրո հավերժական ծիրն է, որի սերմը ինքը՝ Հայր Արան է գցել Արարատի հողի մեջ:

Աստղիկը հայտնվեց Արփիին և ասաց.

- Ո՛վ, չքնաղ քույրիկս, եթե ուզում ես հավերժացնել ձեր սերը, ապա պիտի կատարես իմ պատվերը, որ Մայր Անահիտից է գալիս: Գտիր կենաց պտուղը և այդ պտուղի կեսը դու ճաշակիր, մյուս կեսը տուր Արփին ճաշակելու:

- Ո՛վ, Դիցուհի՛,- ասաց Արփին,- սուրբ է ինձ համար Մայր Անահիտի կամքը, բայց ասա ինձ, թե Արարատի ամենաբազմազան պտուղների մեջ ինչպե՞ս գտնեն կենաց պտուղը:

ԵՎ Աստղիկն ասաց.

- Դա միակ պտուղն է, որ ձեռքով կիսվում է երկու հավասար մասերի:

Ասաց Աստղիկը և անհետացավ: Իսկ Արփին սկսեց որոնել կենաց պտուղը: Նա Արփին ոչինչ չէր ասում և Արփի հետ զբոսնելիս, նա քաղում էր բազմազան պտուղներ և փորձում էր կիսել երկու հավասար մասերի: Չէին կիսվում: Հանկարծ մի փարթամ ծառի կատարին նա նկատեց արևագույն մի պտուղ:

Արփիի խնդրանքով Արին բարձրացավ ծառ և պոկեց այդ միակ արևաթուշ պտուղը: Արփին ձեռքով հեշտությամբ կիսեց այն, և նրա ուրախության ճիչը զարնացրեց Արփին: Պտուղը կիսվեց երկու հավասար մասերի, և կորիզն անջատվելով, ընկավ գետին:

- Ո՛վ, Արայի երկրային որդի՛,- ասաց Արփին,- սա կենաց պտուղն է: Մայր Անահիտի կամքով մենք պետք է ճաշակենք այն, որ մեր սերը հավերժանա:

Նա մի կեսը տվեց Արիին, իսկ մյուս կեսը դրեց իր բերանը: ԵՎ հանկարծ Արփին կարծես սթափվեց խոր թմբիրից, նայեց Արիին, նայեց ինքն իրեն, զգաց իր և Արիի մերկությունը, ամաչեց ու փախավ, թաքնվեց թփերի մեջ:

Ջարմացած էր Արին, ոչինչ չէր հասկանում: ԵՎ Արփին կանչեց թփերի միջից.

- Ճաշակիր պտուղի այդ կեսը, ճաշակիր, թե չէ հավիտյան կկորցնես ինձ: Ճաշակիր և մենք երջանիկ կլինենք:

Արին ճաշակեց պտուղի իր բաժինը: ԵՎ հանկարծ զգաց իր մերկությունը, ամաչեց ու փախավ: Նա թափառում էր ծառաստաններում, չհամարձակվելով երևալ Արփիին իր մերկությամբ: Նա կանգ առավ մի թզենու առջև, որը լայն և հաստ տերևներ ուներ: Պոկեց թզի մի տերև ու ծածկեց իր ամոթը:

- Այսպես լավ է,- մտածեց նա և ուրախացավ:

Մի տերև էլ պոկեց ու տարավ Արփիին: Արփին էլ իր ամոթը ծածկեց թզի տերևով և դուրս եկավ թփերի միջից:

Նայեցին իրար Արին ու Արփին, տեսան իրար այնքան իրական և այնքան ձգող... ԵՎ սիրո հավերժումը հաստատվեց նրանց մեջ սերնդատվությամբ: ԵՎ նրանց սերնդատվությունը հովանավորում էր Աստվածամայր Անահիտը:

Իսկ կենաց պտուղը կոչվեց Ծիրան:

ՍԻՐԱԿԸ

Առաջին արին ծնվեց Արարատում: Արին արի արարեց: ԵՎ առաջին երջանկությունն ու տառապանքը հաստատվեցին Արարատում:

Ջորավոր էր Արիի որդին՝ իր հոր պես: Չէ՞ որ նա աստված էր, թեև՝ երկրային: Բայց նա աստվածների պես երջանիկ չէր: Ոչինչ նա չէր սիրում, ոչնչից նա չէր գոհանում և ոչինչ չէր ավստում նա: ԵՎ ամենը Արարատում նրան ծանծրույթ ու տառապանք էին պատճառում:

- Որդիս,- ասաց Արին,- այս հրաշագեղ Արարատի առաջին ծնունդն ես դու: Բայց ինչո՞ւ երջանիկ չես քո ծնունդով:

- Ի՞նչ է երջանկությունը, ես չգիտեմ,- ասաց Արիի որդին:

ԵՎ Արին ասաց.

- Երջանկություն է, երբ զգում ես, որ դու Արարատինն ես և Արարատն էլ քոնն է ու սիրում ես այն ամենը, ինչ քոնն են:

Արիի որդին ասաց.

- Այս ամենը իմը չեն, այլ ինձ համար են միայն:

ԵՎ հասկացավ Արին, որ ինքը՝ երկրային առաջին աստվածը, անկատար արի է արարել: Մեծ վիշտ էր ապրում Արին:

- Ո՛վ, Հայր իմ, Արա՛,- կանչեց նա,- բա Արիից չարի կծովի՞: Դու ինձ արարեցիր Արարատում, որ երջանկությունն ու արարումը հաստատվեն Երկրի վրա: Բայց իմ առաջին արարումը անկատար եղավ: Նա չի զգում ծնունդի երջանկությունը, կյանքի երջանկությունը, արարումի երջանկությունը: Չանծրույթ ու տառապանք է նրա կյանքը: ԵՎ նա իր տառապանքով տառապանք է սփռում իր շուրջը:

Աստվածամայր Անահիտը հայտնվեց Արիի դիմաց և ասաց.

- Հայր Արայի կամքով եմ ես եկել քեզ մոտ: Գիտցի՛ր, որդի՛ս, որ Արիից չարի չի ծնվի երբեք: Դու արի ես արարել: Բայց գիտցի՛ր, որ քո որդին կատարյալ աստված չէ. նա աստվածամարդ է միայն, և ինքը իր մեջ պիտի կերտի իր տարելությունը ու հասնի աստվածայնության: Հայր Արան այս գիշեր քո որդու Ես-ը կբաժանի բազմաթիվ ես-երի: ԵՎ քո որդին այսուհետև մշտապես կորոնի իր Ես-ի ամբողջությունը: ԵՎ սիրելով իրեն, նա կսիրի այն բոլորին և այն ամենը, որ իրենն են՝ իր Ես-ի ամբողջության մասերը: Այդպես նա կերջանկանա: ԵՎ երջանկանալով, նա կատարյալ Արի կլինի և կհասնի աստվածայնության: Նա ինքը կլինի սիրո ակունք՝ Սիրակ և սերը կհաստատի Արիների մեջ:

ԵՎ գիշերով, երբ Արիի որդին քնած էր, Հայր Արան բաժանեց նրա Ես-ը բազմաթիվ ես-երի:

Առավոտյան արթնացավ Արիի որդին: Նայեց իր շուրջը և տեսավ, որ ամեն ինչ փոխված է, ամեն ինչ նորովի է: Արևը ուրախ ժպտում է իրեն, ջրերը կարկաչելով երգում են իր համար, ծառերը նազում են իր շուրջը... Ջարմացել էր Արիի որդին, և նրան թվում էր, թե ամենը կենդանի են, շնչում են և խոսում են իր հետ: Նա զմայլված դիտում էր Արարատյան այդ հրաշալիքը, որ մինչ այդ երբեք չէր տեսել: ԵՎ այդ հրաշալիքների մեջ տեսավ և իրեն՝ իրեն իրենից դուրս:

«Մի՞թե ես քնած եմ դեռ» - մտածեց նա և շփեց աչքերը: Նա համոզվեց, որ արթուն է: Բայց ինքը իրենից դուրս և բազմաթիվ անձերի մեջ... մի՞թե դա երազ չէ: ԵՎ նա վազեց Արիի մոտ:

- Հայր իմ,- կանչեց նա,- մի՞թե ես երազ եմ տեսնում արթուն վիճակում: Բազմաթիվ անձեր՝ բոլորն էլ ես եմ, իսկ արև ու քար, ջուր ու ծաղիկ խոսում են ինձ հետ...

Ժպտաց Արին ու ասաց.

- Դա երազ չէ, որդի՛ս, դա իրականություն է: Հայր Արայի կամքով այդ բոլորը դու ես. քո ամբողջությունն են նրանք տարբեր անձերի մեջ: ԵՎ այդ բոլորը քոնն են, այլ ոչ՝ քեզ համար: Դու նրանց մեջ ես ապրում և նրանցով ես ապրում: ԵՎ պահպանելով նրանց՝ դու քեզ ես պահպանում, զորացնելով նրանց՝ դու քեզ ես զորացնում և սիրելով նրանց՝

դու քեզ ես սիրում: Դու մշտապես պիտի որոնես քո
ամբողջությունը նրանց մեջ: ԵՎ ամբողջանալով, դու
կհասնես աստվածայնության:

ԵՎ Արիի որդին սկսեց որոնել իր ամբողջությունը: ԵՎ
որոնելով, նա երջանկացավ: Նրա մեջ արթնացավ
աստվածային սերը՝ սեր դեպի ինքն իրեն՝ իր ամբողջության
մեջ: ԵՎ ինքն իրեն տեսնում էր բոլորի մեջ, որ իրենն էին, որ
ինքն էին: ԵՎ նա նվիրվում էր նրանց, զորացնում էր նրանց:

ԵՎ այդպես սերն ու արարումը հաստատվեցին
Արարատում Արիների մեջ: ԵՎ Արիի որդին կոչվեց Սիրակ:

ՅԱՀՎԱԿՐ

Արարատում ապրում էր Արին իր թռռների ու ծոռների հետ: Երջանիկ էին նրանք, ապրում էին աստվածավայել, արարում էին, կերտում, և չկար ո՛չ խռովություն, ո՛չ հիվանդություն:

Արիները արևի հետ էին խոսում, աստղերի հետ խորհրդի էին նստում: Ջոհ էին մատուցում Աստվածներին և Աստվածների հովանավորությունն էին վայելում: Մեծ խարույկներ էին վառում և ցուլ կամ խոյ էին խանձում այդ խարույկների վրա: Խանձաբույր ծուխն ու արյան հոտը տարածվում էր Արարատով մեկ ու բարձրանում երկինք: ԵՎ բոլոր Աստվածները սիրով գալիս էին, բազմում զոհասեղանի շուրջը, վայելում Արարատի ճոխ բարիքները և օրհնում Արիներին:

Բոլոր Աստվածներին զոհ էին մատուցում Արիները, չէին մոռանում ոչ մեկին և ամեն մեկի համար որոշակի օր էին հատկացրել: Բայց ամենից շատ և ամենից ճոխ զոհաբերությունը Արիները նվիրում էին Հայր Արային և Ամենագոր Վահագնին: Դրանից բոլորովին չէին սրտնեղում Աստվածները և սիրով իրենք էլ էին փառաբանում Արային ու Վահագնին:

Միայն Յահվահն էր սրտնեղում դրանից: Արիները նրա համար զոհաբերության միայն մեկ օր էին սահմանել և այն էլ՝ ցրտաշունչ ձմռանը: Նա լուռ իր մեջ պահում էր վիրավորանքը և չարանում էր Արիների ու Վահագնի դեմ: Նախանձը կրծում էր նրա հոգին, բայց նա զսպում էր և խորհում, թե ինչպես նսեմացնի Վահագնին Արիների ու Աստվածների մոտ:

Յահվահի տոնին, երբ Արիները զոհ էին մատուցում նրան, խիստ ցուրտ էր և բուք: Բոլոր Աստվածները հավաքվել էին զոհասեղանի շուրջը, վայելում էին մատաղը և փառաբանում էին Յահվահին: Միաժամանակ փառաբանում

էին նաև Արային ու Վահագնին: Բոլորը ուրախ էին: Լուռ էր միայն ինքը՝ Յահվահը: Նա զոհասեղանից չէր օգտվում և միայն խմում էր ու խմում: Նա վրդովված էր, որ իր տոնին էլ իրենից առաջ Վահագնին էին փառաբանում:

Յահվահը հարբել էր: ԵՎ հարբած, նա կիսատ թողեց զոհաբերության ծիսակատարությունը ու թռավ գնաց Արայի մոտ:

- Յահվահ,- բարկացավ Արան,- Աստվածներին վայել չէ զոհաբերության ծեսից հեռանալ, այդ ի՞նչ չարություն ես նյութում քո մեջ:

- Հայր իմ,- ասաց Յահվահը,- ես զոհաբերության սեղանից հեռացա, որովհետև խիստ վիրավորված եմ քեզ համար. Արիները փառաբանում էին Աստվածներին և քո անունից առաջ Վահագնի անունն էին տալիս:

- Դու չարախոսում ես, Յահվահ,- զայրացավ Արան,- աստվածավայել չե՞ն խոսում: Արիները միշտ ինձանից հետո Վահագնին են փառաբանում, քանզի Վահագն է նրանց զորության հովանավորը: Քո հարբած լեզուն ասում է այն, ինչ սթափ ժամանակ նյութում է քո հոգին:

ԵՎ Արան չարախոսության համար պատժեց Յահվահին. նրան վտարեց երկնքից և ստորգետնյա Արքա կարգեց:

- Այնտեղ դու քո չարության պահերին ցնցվիր և հանդարտվիր,- ասաց Արան:

ԵՎ Յահվահը այնուհետև ստորգետնյա տիրակալ դարձավ: Բայց իր հոգու մեջ մշտապես պահում է ատելությունը Վահագնի և նրա հովանավորյալ Արիների դեմ: ԵՎ երբեմն, երբ նրա մաղձը շատ է կուտակվում, նա ցնցում է Արարատը, պատժելու համար Արիներին: ԵՎ Արիները այնուհետև վախենում էին Յահվահից ու այլևս նրան զոհ չէին մատուցում:

ՀԱՎԵՐԺԱՊԱՏՈՒՄ

ԵՎ Արարիչը Բնության մեջ հաստատել է բնական պարբերությունների մշտական հաջորդականություն, որպեսզի Բնությունն անընդհատ նորոգվի, թարմանա և դրանով ապահովի իր բացարձակությունը: Արարիչը բնական պարբերություններ է սահմանել և Երկրի վրա, որ անվանում ենք տարի:

Երկրի վրա ամեն պարբերություն՝ տարի, սկսվում է գարնան երկունքով, երբ հալչում է ձմեռվա ձյունը, ողողում է հողը, և կյանքի ծիլերն են բարձրանում հողի կրճից: ԵՎ գարունը Երկրի վրա արտահայտում է նոր տարվա սկիզբ:

Տիեզերական ամեն պարբերություն սկսվում է Տիեզերական Գարնան երկունքով, որը Երկրի վրա արտահայտվում է Համաշխարհային Ջրհեղեղով:

Ջրհեղեղը ողողում է Երկրի Հարաբերական Ցամաքը: ԵՎ Երկրի ամբողջ զգացական կյանքը խտանում է իր արմատների մեջ՝ Կենաց Գոտում: Կենաց Գոտին շատ բարձր դիրք ունի և արևելքից արևմուտք ձգվող լեռնաշղթաներով պաշտպանվում է ջրի հոսանքից: ԵՎ Կենաց Գոտին Երկրի Հավերժական Ցամաքն է: Կենաց Գոտու մեջ է գտնվում նաև երկրային աստվածների՝ Արիների Արարատը:

ԵՎ Տիեզերական Գարնան այդ երկունքից ծնվում է Արայի Որդի Վահագնը հենց Արարատում՝ հովանավորելու և առաջնորդելու համար Արայից սերված Արի Ցեղին: Վահագնի ծնունդը հաստատում է Տիեզերական Նոր Տարվա սկիզբ: Վահագնի ծնունդով սկսվում է Երկրային կյանքի նոր պարբերություն, նոր պատմություն, իսկ Արարատում՝ նոր տարեգրություն:

Արարատում միայն ուժեղներն էին վերապրում Ջրհեղեղը: ԵՎ ուժեղներից էին միայն ուժեղներ ծնվում: ԵՎ ապրում էին Արիները որպես աստվածներ՝ երկրային աստվածներ, աստվածային զորությամբ:

Բարեպաշտ էին Արիները, հետևում էին Անմահ Աստվածներին, զոհ էին մատուցում նրանց: ԵՎ Անմահ

Աստվածները հովանավորում էին Արիներին: Արիները երջանիկ էին ու առողջ: Նրանք չգիտեին, թե ինչ է հիվանդությունը և ուժահատ ծերությունը. մշտապես ուժեղ էին ու ամուր: Նրանց երկարատև կյանքին հաջորդող մահը նման էր հանգիստ ու մեղմ երազի:

Կյանքով լի էին Արիները Տիեզերական Գարնանը: Նրանք սիրում էին կյանքը, բայց մահից էլ չէին վախենում, քանզի հավատում էին իրենց հավերժությանը, որը հաստատվում էր անընդհատ վերածնունդով իրենց սերունդների մեջ:

Տիեզերական Գարնանը հաջորդում էր Տիեզերական Ամառը: Երկրի ջուրը նահանջում էր, սառցալեռներ գոյացնելով բևեռներում: ԵՎ աստիճանաբար բացվում էր Հարաբերական Ցամաքը:

ԵՎ Արարատից՝ Արի տոհմերից գաղթական խմբեր տարածվում էին նոր ցամաքի վրա: ԵՎ այդ բոլորն էլ հենց Արարատում իրենց Հայրական Տոհմերը ունեին, իրենց տոհմական որակներն ունեին, իրենց տոհմական արժեքներն ունեին և՛ սովորույթներ, և՛ ավանդույթներ... այդ ամենը ունեին Մայր Արարատում: ԵՎ այդ ամենը հետոներն էին տանում, և նոր Հողերում իրենց Տոհմերի ճյուղերն էին ստեղծում: Հենց այդ ազգակից խմբերը Արի Ազգեր էին կազմում և հենց Հայրական Օջախի կողքին իրենց Ազգային Տներն էին շինում:

ԵՎ այդ բազմաթիվ Ազգերը Արի՝ նույն ծառի ճյուղեր, ազգակից միմյանց, հենց նույն Արմատից սնունդ էին ստանում, Հայրական Օջախից կրակ էին ստանում: ԵՎ Ազգերն Արի առողջ էին այնքան, որքան սնվում էին իրենց Արմատից և Արարատում իրենց Արմատն էին զգում, որով կապվում էին Հայր Արային և Անմահ Աստվածներին:

Բայց եկավ Աշուն: Չորանում էր ցամաքը: Նորանոր հողեր էին բացվում ջրի տակից, և պակասում էր Երկրի ջուրը: Վիշապը Երկիր էր իջել, բռնել էր ջուրը, այն հավաքում էր բևեռներում և սառեցնում: ԵՎ ցամաքը զրկվում էր ջրի պաշարից: Ջրի պակասը առանձնապես զգացվում էր Հարաբերական Ցամաքի վրա, Արարատից դուրս: Դժվարանում էր կյանքը: Իսկ Վիշապը զոհ էր պահանջում ջուր տալու համար և ո՛չ պարզապես զոհ, այլ պահանջում էր

զոհաբերել Արիներ: ԵՎ Արիները զոհում էին իրար: Արի Ազգերը իրար էին սպանում, իրար հոշոտում և Արի եղբոր արյունով սնում Չարի Վիշապի ստամոքսը անհազ:

ԵՎ տկարանում էր Արիների աստվածային գորությունը: ԵՎ սաստկանում էին դաժան ու արյունալի պատերազմները: Արի Ազգերը լքում էին իրենց Աստվածներին և մի կում ջուր ստանալու համար երկրպագում էին Վիշապին: Իսկ Չարի Տիտանները զորանում էին, քանզի նրանք ջրի պակասություն չէին զգում. չէ՞ որ նրանք հողածին էին, և Վիշապն էլ հովանավորում էր նրանց:

Արի Ազգերը հոգեպես կտրվում էին Արարատից: Նրանք այլևս չէին սնվում իրենց Արմատից ու չէին պահպանում որակներն Արի, չէին պահպանում բարքերը Ցեղի և չէին պահպանում դեմքը ազգային: ԵՎ Ազգերն Արի տերևաթափ էին լինում իրենց Արիական որակներից:

ԵՎ որքան մոտենում էր Չմեռը, այնքան սաստկանում էին քամիները, որ հյուսիսից ու հարավից փչում էին Արարատի վրա: ԵՎ օղակվում էր Արարատը Չարի հորդաներով:

Արարատում Արիները քաջաբար կռվում էին: Նրանց հովանավորում էր Ջորության Աստված Վահագնը. և առնական ու անպարտելի էր Արիների բազուկը:

Բայց եկավ Չմեռ՝ հարաբերական մահը Երկրի: Չարի Վիշապը ահեղ ոռնոցով արշավում էր Երկրի մի ծայրից մյուսը: ԵՎ Վիշապի հովանավորությամբ զորացած Չարիները հաղթում էին տկարացած Արիներին: ԵՎ Արիները՝ Արարատից դուրս՝ իրենք էին դառնում Վիշապին սպասավոր: Իրենց Արի ծագումը մոռացած, իրենք իրենցից օտարացել էին և մահվան կրոնների հաշիշով հարբած, խարխափում էին խոր թմբիրի մեջ: ԵՎ բթացել էր զգացմունքը նրանց, պղծող էին դարձել արարող Արիք և գազազած իրենք իրենց էին պղծում, իրենց արիությունն էին հալածում իրենց մեջ, իրենք իրենց էին դավում և դավում էին իրենց Արարատին:

Իսկ Չարին ոչ թե ստեղծածն Արիի, այլ հենց ստեղծողին էր ավիրում արդեն: ԵՎ Արի Ցեղածառի Արմատն

էր կտրում հենց Արարատում: Իսկ Արի Ազգերը օգնում էին նրան իրենց սպանելու:

Իսկ Արիները հենց Արարատում երկար ժամանակ կռիվ էին տալիս աշխարհի բոլոր Չարիների դեմ՝ արյուն էին թափում, վերքեր էին ստանում, ընկնում ջարդված, հառնում հաղթական... Թեև նրանք Արմատն էին Ցեղի, թեև Վահագնյա գործություն ունեին, բայց ոչ թե Ցեղի, այլ Ցեղերի դեմ ինչքա՞ն պայքարեին: Մի Արարատ ողջ աշխարհի դեմ: ԵՎ դեռ կկռվեր, դեռ կպաշտպանվեր Չարիի պղծումից, բայց հենց իր Ցեղից՝ Արի Ազգերից ինչպե՞ս պաշտպանվեր:

ԵՎ պղծվեց Արարատը: ԵՎ Արիները ուրացան իրենց Հայր Արային, ուրացան Վահագնին... ԵՎ Աստվածները այլևս չէին կարող օգնել Արիներին, քանզի հենց հավատով են գորավոր Աստվածները: Հեռացան բոլոր Աստվածները Արարատից, և միայն մահաշունչ Վիշապը հաղթական բազմեց Արարատում:

ԵՎ հենց այն օրվանից, երբ Արիները ուրացան իրենց Աստվածներին, վիշտն ու հյուծող աղետները ուղեկցեցին նրանց: Վերացավ նրանց գործությունը, վերացավ սերը, արարումը: Ջավակները այլևս պատիվ չէին տալիս ծնողներին, ընկերը հավատարիմ չէր ընկերոջը, սեր չկար եղբայրների մեջ, կինը դուրս էր եկել վերահսկողությունից և կյանքն էր դավում: Արիներն իրենց ձեռքով ավերում էին իրենց քաղաքները, քանդում էին տաճարները, պղծում էին իրենց նախնիների հիշատակը:

Ամենուրեք Չարի Վիշապի բռնությունն էր տիրում: ԵՎ Վիշապի մահազգեստ սպասավորներն էին ամբոխին ամառնորդում: ԵՎ Արիներին բաժին ընկան միայն հոգեմաշ դժբախտություններ, և նրանք պաշտպանություն չունեին ընդդեմ չարիքի:

Մահաշունչ Չմեռ էր Երկրի վրա և Արարատում: Ցուրտն էր պատել Արիների հոգիներն ու մտքերը:

Բայց... Չմեռից հետո գալու է Գարուն:

ԱՐԻ ՄԱՆՆ

Ջոհ մատուցող Արի Աստվածները իրենք զոհ դարձան: ԵՎ Հողածին Տիտանները Արարչածին Արիներին էին զոհում ի փառս Վիշապի: Իսկ ծագումնուրաց Արիները, մահից սարսափած, հենց մահի մեջ էին փրկություն գտնում:

Թող որ Մահի զորության երկրպագուները հանդիսավոր խոնարհությամբ մահաբեր Վիշապի վառքը գովերգեին: Արի Մանը չէր ընդունում Վիշապի գերազանցությունը:

Ջորավոր էր երիտասարդ Մանը՝ հազվադեպ զորավորներից ամենազորավորը և Երկրային Աստվածներից միակ Աստվածը: «Ի՞նչ Չարի Աստված, երբ ինքս եմ Աստված՝ Արայից սերված Արորդի եմ ես», պնդում էր Մանը և իր աստվածային ծագումի զգացողությամբ էր իր կյանքը վարում և աստվածայինին հասնելու ձգտումը ուներ:

Իր Արի բնության զգացողությունն էր նրան հավատ ներշնչում: Իր Արարչական ծագումի զգացողությունն էր նրան զորություն սնում: Իր Արի արյան զգացողությունն էր նրան սեր սերմանում: ԵՎ իր Արի ստեղծումի զգացողությունն էր, որ իմաստնացնում էր նրան:

Երիտասարդ և զորավոր էր Մանը, զորավոր էր Վահագնով: Նա չէր ընդունում Վիշապի անպարտելիությունը և վճռել էր անձամբ կռվել Վիշապի դեմ, թեկուզ միայնակ, Վահագնի զորությունից սնունդ ստանալով:

Ու քայլում էր Մանը, երկար էր քայլում: Անցնում էր դաշտեր, անտառ ու բացատ: Մանը քայլում էր դեպի Արևը: Նա բարձրանում էր Արագած լեռան գագաթը: Այնտեղ նա կհանդիպի Արևին: ԵՎ Արևը, զգալով Մանի ցանկությունը, Արագածի գագաթին անշարժ սպասում էր նրան:

Արին հասավ Արագածի գագաթին, որտեղ մի ժամանակ Հայր Արայի գահն էր դրված չորս հենարանների վրա: ԵՎ այստեղ Արան հանգիստ էր առնում:

Աստվածները, որ Մասիս սարի լանջին իրենց գվարճությունն էին անում, թռչում գալիս էին Արայի մոտ, իրենց երկրպագությունը տալիս և Արայի հայրական օրհնանքը ստանալով, նորից թռչում էին Մասիս: ԵՎ նրանց հետ էր Մանի նախահայրը՝ Երկրային Աստված Արին:

Տեսավ Մանը, որ Արայի գահը դատարկ էր և ծյունով ծածկված: Շատ տխրեց նա:

Ապա Մանը զոհ մատուցեց Հայր Արային և ամենագոր Վահագնին ու ձեռքերը պարզած դեպի երկինք, կանչեց:

- Ո՛վ, Հայր Արա՛, չկա ավելի զորավոր հավատ, քան զգալ, որ ես զորավոր հոր զորավոր զավակն եմ: Քեզ եմ դիմում, ո՛վ, Հայր: ԵՎ դու չես կարող չլսել, երբ որդիդ կանչում է քեզ, երբ խնդրում է քեզ, երբ որդիդ Հոր պահանջ ունի, երբ որդիդ նման է քեզ և որին դու Ինքդ ես արարել: Պաշտպանիր քո Երկրային Աստված Արիի Ցեղը, ի փառս քո արարչական բացարձակության: ԵՎ ուղարկիր Արարատ քո զորավոր Որդուն՝ Արի Ցեղի Ջորության Աստված Վահագնին, փրկելու աշխարհը Չարի Վիշապի պղծությունից:

ԵՎ լույսի, ջերմության մի հրավառություն բռնկվեց հեռվում, տիեզերական անհունության մեջ: ԵՎ այդ հավերժությունից մի հրեղեն կերպար՝ բոց մազերով, հուր աչքերով մոտենում էր նրան: Հրա՞ջք էր դա: Ոչ: Արի Մանը չէր հավատում հրաշքների, բայց նա հավատում էր բնականին, բնական գորությանը: ԵՎ այդ Ջորությունը Արևի տեսքով մոտենում էր նրան: ԵՎ կանգնում է նրա դիմաց Արևշող Վահագնը: Փարվում են իրար Վահագն ու Մանը, որպես հավերժից եկող հավերժական հարազատներ:

- Ո՛վ, Արիի արժանավոր ժառանգ, - ասաց Վահագնը, - դու՛ միակ Աստվածը Արիների մեջ, և աստվածավայել քո վարքով Հայր Արայի սերն ես վայելում: Հայր Արան ինձ ուղարկեց քեզ մոտ, որ սնեմ քեզ իմ Ջորությամբ և անպարտելիությամբ օժեն քո բազուկը՝ Չարիների դեմ պատերազմելու համար: Չարիների դեմ դու պիտի կռվես: Ես կռվելու եմ միայն Վիշապի դեմ, քանզի Աստված միայն Աստծո դեմ է կռվում՝ լինի երկնքում, թե Երկրի վրա: Երկնի ու Երկրի ահեղ երկունքով ես ինքս կգամ: Հետևիր այդ երկունքին: Եղեգան փողից բոց է ելնելու: ԵՎ դու Արագածի

հազար ու մի գանձերից այդ հրով կռիւր քո թուր-կեծակին:
Քառասուն օր երկունքն է տնելու: ԵՎ քառասուներորդ օրը,
գարնան առաջին Արևով և քո կանչով ես կգամ Արարատ:
Դու քո կայծ-թրով Արարատը կմաքրես Չարի Տիտաններից,
իսկ ես Վիշապին կսպանեմ և աշխարհը կմաքրեմ նրա
պղծությունից:

ԵՎ Վահագնը իր աստվածային լույսով ու
ջերմությամբ սնուն էր Մանին: Մի գորավոր հրավառություն
էր բռնկվում Մանի մեջ՝ հրավառություն կյանքի, հավատի,
սիրո, գորության: Աստվածային գորություն էր կուտակվում
նրա մեջ: ԵՎ նա ինքը սարսափեց իր գորությունից:

Գուցե մահվան գորության երկրպագուները Մանին
դիտեին որպես խելագար, որպես անզգա, որպես... Է՛հ, ի՞նչ
փույթ Արի Մանին, թե բոլորը հանդիսավոր խոնարհությամբ
Մահի փառքն էին հյուսում: Նա չէր ընդունում Մահի
գերազանցությունը և արհամարհում էր Մահի
սպասավորների տկար վայնասունը: Նա Վահագնի մոտից
էր գալիս, Վահագնի հուրն ու ջերմությունն էր բերում: Նա
գալիս էր Մահի հետ մեծամարտելու, մահին հաղթելու:

ՏՐՆԴԵԶ

Մանր հավաքեց Արիներին և դիմեց նրանց.

- Սիրելի ազգակիցներ, ես Վահագն Աստծուն եմ տեսել, Վահագնի մոտից եմ գալիս և Վահագնի աստվածային պատգամն եմ բերել ձեզ: Շուտով Աստվածային Երկունք է լինելու, և ապա գալու է Վահագնը, փրկելու մեր Ցեղը Վիշապի պիղծ ճիրաններից: Եկեք Արագած լեռան հազար ու մի գանձերը պեղենք և Աստվածային Երկունքի կրակով կռենք մեր զորության թուրկեծակին: Գարնան առաջին Արևով կգա Վահագնը, կօծի մեր թուրկեծակին, և մենք կհաղթենք Չարի Տիտաններին և կազատենք մեր Արարատը:

Սակային չլսեցին Արիները Մանին: Սկզբից բռունցք ճոճեցին վրան, հայիոյեցին, անհավատ և անհնազանդ անվանեցին: Հետո սկսեցին ծաղրել նրան, համարեցին խելագար ու հեռացան:

Մանը մնաց միայնակ: ԵՎ միայնակ գնաց գանձեր պեղելու: Փորում էր նա Արագածի կուրծքը: Նրա բրիչի հարվածները արծագանք էին տալիս լեռնաստանով մեկ: Նա շտապում էր՝ շուտով սկսվելու էր Աստվածային Երկունքը, և ինքը պետք է պատրաստ լիներ:

Մանի բրիչի հարվածները, արծագանք տալով, գրգռում էին կասկածամիտ Արիների հետաքրքրասիրությունը: Ամբոխը հավաքվում էր Մանի շուրջը: Ծաղրում էին նրան, հայիոյում, երբեմն նաև քարեր շպրտում նրա վրա: Բայց ամենին անհաղորդ, Մանը համառորեն շարունակում էր պեղել:

Մանի այդ ինքնավստահ համառությունը ճնշում էր ամբոխի վրա: Ամբոխը սսկվում էր: Հեզնանքը տեղի էր տալիս երկյուղալի զգուշավորության: Արիներն այլևս չէին ծաղրում Մանին, քար չէին նետում նրա վրա. մի ներքին երկյուղով նահանջում էին ու հեռվից դիտում էին Մանին,

առանց հասկանալու, թե ինչ է անում: Միայն ներքին զգացողությամբ կռահում էին, որ մի շատ ահավոր բան է նյութում: ԵՎ որքան զգուշանում էին, այնքան նրանք ընկճվում էին Մանի գորության առջև:

Մանը իր մեջքը ուղղեց միայն այն ժամանակ, երբ պեղված հազար ու մի գանձերը բազմազույն ճառագում էին առավոտյան արևի տակ: Նա սրբեց ճակատի քրտինքը ու նայեց երկինք:

Հեռվում, շատ հեռվում կարծես մի կարմիր նուռ էր պայթել, և հյութը ծորում էր ներքև: Հասկացավ Մանը, որ Երկունքը սկսվում է: Նա դիմեց հավաքված ամբոխին, որ երկյուղից չէր հանդգնում մոտենալ նրան:

- Արիներ,- կանչեց Մանը,- նայե՛ք երկինք, Աստվածային Երկունքն է սկսվում, մեր գորության արշալույսն է բացվում:

Արիները նայեցին երկինք և սարսափած վայնասուն բարձրացրին.

- Աստծո պատիժն է սա, Մանի կատարած ահավոր մեղքի համար Վիշապ Աստվածը պատժում է բոլորիս. սա աշխարհի վե՛րջն է...

ԵՎ փախան Արիները, մտան տները, ամուր փակեցին դռներն ու լուսամուտները:

Դրսում սկսվել էր Աստվածային Երկունքը, իսկ տներում սարսափած Արիները խավարի մեջ հուսահատ աղոթում էին:

Աստվածային Երկունք էր:

Երկնի երկունքից, Երկրի երկունքից և ծիրանագույն ծովի երկունքից, ծիրանի ծովում եղեգն էր երկնում: Եղեգան փողից ծուխ էր ելանում, եղեգան փողից բոց էր ելանում՝ հուր աստվածային, երկինք էր ձգվում, հասնում արևին և միահյուսվում արևի բոցին: Արևը երկնից կրակ էր ցայտում ճաճանչների տեղ, բազում կայծակներ իրար էին խաչվում՝ հոշոտում երկնի կապույտը լագուր, որոտն էր ահեղ արծազանք տալիս աստղերից վերև: Երկունքի ցավից Երկիրն էր տնքում, հողն էր կտրատվում ուժգին ցնցումից ու Երկրի խորքից՝ հրաբուխ ժայթքում, և հուժկու ալիք ահեղ

ռռնոցով գրոհում էին մայր ցամաքի վրա: Երկունք էր, Երկունք Աստվածային:

Սարսափած Արիները փակված էին տներում, ողբում էին աշխարհի վերջը, անիծում էին Մանին, անիծում էին Երկունքը, որպես չարագուշակ նախախնամություն: Ծնկի իջած, աղոթում էին Վիշապին, որ պատժի Մանին, ոչնչացնի նրան և փրկի իրենց:

Բայց անգոր էր Վիշապը Երկունքի զորությունը կանխելու: Վիշապը ինքն էր սարսափած ոռնում, իր մոտալուտ մահը կանխագգալով:

ԵՎ միայն Արի Մանն էր ողջունում Աստվածային Երկունքը: Նա վազեց ծովափ, եղեգան փողից ժայթքող աստվածային կրակով իր ջահը վառեց: ԵՎ ջահը ձեռքին շրջում էր տնե տուն, բախում էր դռները և կանչում.

- Հե՛յ, Արիներ, բացե՛ք ձեր դռներն ու լուսամուտները, աշխարհի վերջը չէ սա, աշխարհի սկիզբն է: Վահագն է ծնվում փրկության Աստված: Դու՛րս եկեք, փայտեր դիզեք, խարույկներ վառեք աստվածային կրակով, Տրնդե՛զ սարքեք. թող աստվածային կրակով բացվեն ձեր աչքերը, թող ձեր սրտերը բոցկտան այս կրակով: Օժվե՛ք այս աստվածային կրակով և վերականգնե՛ք ձեր մեջ աստվածային զորությունը:

Շատ քիչ դռներ բացվեցին: Միայն զորավորները հանդգնեցին նայել աստվածային կրակին: Խարույկներ սարքեցին ու վառեցին աստվածային կրակով: Այդ կրակը խփեց նրանց դեմքերին, և նրանց միջից բոլորովին չքացավ սարսափը, զորացան նրանք և իրենց աստվածներ զգացին: Պար էին բռնում տրնդեզված կրակի շուրջ, ձոներգեր էին հյուսում, փառաբանում էին Արային ու Վահագնին, իսկ ջահել հարսները, որ մայրանալու կարոտ ունեին, թռչում էին այդ աստվածային կրակի վրայով, օժելու համար իրենց արգանդը, որ իրենք էլ ծնեն Վահագնանման Արի գավակներ:

Իսկ Մանի ահեղ մուրձի հուժկու հարվածները արձագանքում էին ողջ Արարատում և Վիշապի գանգերի մեջ: Մանը հազար ու մի գանձերն էր հալեցնում տրնդեզված աստվածային կրակով և դարբնում էր իր թուր-կեծակին:

Շատ քիչ Արիներ՝ միայն նրանք, ովքեր օժվեցին տրնդեզված աստվածային կրակով ու զորացան, միայն նրանք միացան Մանին:

Քառասուն օր աստվածային կրակը տրնդեզված պահպանվում էր, և քառասուն օր իրենց աստվածայնությունը զգացած Արիները պարուն ու երգում էին այդ կրակի շուրջը: ԵՎ քառասուն օր Արարատում զրնգում էին մուրճերի հարվածները՝ Արի Մանը մի խումբ զորացած Արիների հետ կռում էր փրկության աստվածային զենքը:

ՎԱՀԱԳՆԻ ԾՆՈՒՆԴ

Աստվածային Երկունքի քառասուներորդ օրը, գարնան առաջին Արևով, Արի Մանը կանգնեց հասակով մեկ, իր կռած սուրը ձեռքին: Արևի ճառագայթների ներքո շողշողում էր սուրը հազար ու մի գանձերի փայլով: Հպարտ էր Մանը և գերհզոր: Իր սուրը պարզեց դեպի երկինք, աչքերը հառեց գարնան Արևին ու կանչեց.

- Վահագնակա՛նչ:

ԵՎ նրա կանչը արձագանք տալով տարածվեց Արարատում, և Վահագնականչ էին շնչում ամենը մեկտեղ - նախնիքը բոլոր՝ լուսեղեն ոգիք՝ Վահագն էին կանչում, Մասիսը հպարտ՝ երկինք խոյացած՝ Վահագն էր կանչում, Արարատը Մայր՝ Արևին գրկած՝ Վահագն էր կանչում: Վահագն էին կանչում բոլորը մեկտեղ, հավատքով սպասում մի նոր ծնունդի Հրե Վահագնի: Աչքերը հառած Բարի Արևին. Արևն իրենց մեջ՝ Բարև՝ Վահագնին:

ԵՎ Բարևը՝ հնչեց Արի Մանի խրոխտ, հուժկու ձայնով.

- Ո՛վ, դու, Վահագն, ո՛վ, Տիեզերական Ջորությունների Արքա՛, ո՛վ, Աստվածո՛յն Արի Ցեղի, ահա Աստվածային Երկունքի բոցով կռած այս սուրը ձեռքիս և քո Ջորությամբ սնված, մարտի եմ ելնում Չարիի դիմաց՝ իմ Արարատը ազատելու և իմ Արի Արարչազարմ Ցեղի հավերժությունը հաստատելու: Ո՛վ, Մեծո՛վ Վահագն, քե՛զ եմ կանչում, Վահագնակա՛նչ է բխում իմ հոգու խորքից: ԵՎ քո աստվածային վեհությամբ օժի՛ր այս թուր-կեծակին և առաջնորդի՛ր ինձ այս աստվածահաճ ահեղ պատերազմում:

Ապա Մանը իր սրով կտրեց պարարտ պարանոցը մի մեծ ցուլի, որպես զոհաբերություն Հայր Արային և Ամենազոր Վահագնին: Արնաթաթախ սուրը օժեց լեռներից հոսող մաքրամաքուր ջրի ցայտումով, և տրնդեզված խարույկի վրա խանձեց գոհը: Թանձր ծուխը բարձրանում էր երկինք:

ԵՎ Արի Մանը առաջինը տեսավ ծնվող Վահագնին:
Երկնի ու Երկրի միաձույլ բոցից Վահագն էր ծնվում Հրե
Պատանի:

ԵՎ հոգեկան անհուն բերկրությամբ կանչեց Մանը ի
լուր բլրրի:

- Ցնծա՛, բյուրվիշապ Արարատ աշխարհի, Վահա՛գն է
ծնվում՝ փրկության Աստված, Վահա՛գն է ծնվում՝ Որդին
Արայի, Վահա՛գն է ծնվում՝ Ջորության Արքա՛. մեր Երկրի
համար՝ ուժի ներշնչանք, Արևի համար՝ հրո զորություն,
Աստղերի համար՝ լուսե պատանի, Լուսնյակի համար՝ սիրո
մեղեդի, Երկնքի համար՝ սիրասուն մանկիկ, Արիի համար՝
հրեղեն եղբայր, իսկ Վիշապի համար՝ դաժան ախոյան, նա՛
Վիշապաքաղ:

ԵՎ տիեզերական անհունության մեջ ողջույնի Չոներգ
ծնվող Վահագնին հնչեց միաձույլ հզոր շուրթերից՝ աստղեր և
լուսին, արև հրակեզ, Մասիսը հպարտ, լեռներ ու ձորեր, և
հավք, և գազան երգում էին մեկտեղ:

Երկներ Երկին, երկներ Երկիր,

Երկներ և ծովն ծիրանի,

Երկն ի ծովում ուներ և զկարմրիկն եղեգնիկ:

Ընդ եղեգան փող ծուխ ելաներ,

Ընդ եղեգան փող բոց ելաներ,

ԵՎ ի բոցույն վազեր խարտյաշ պատանեկիկ:

Նա հուր հեր ուներ,

Ապա թե բոց ուներ մորուս,

ԵՎ աչկունքն էին արեգակունք:

Վահագնը եկավ, աստղերից հյուսած թագը իր զլխին,
բոցե թիկնոցը իր հաղթ ուսերին, ձախ բազկի վրա Խաչ -
Պատերազմին՝ ձուլված Արևից, աջ ձեռքին բռնած հազար ու
հազար Արևով կռած իր Թուր - Կեծակին:

ԵՎ օժեց Վահագնը Մանի սուրը երկսայրի:

ԵՎ Մանը Արի, օժված իր սրով, դուրս ելավ մարտի
Չարի Տիտանի սերունդների դեմ: Տիտանները ոռնում էին
սարսափից, բայց կայծ-թուրի հարվածներից փրկություն
չունեին: Արագածի հազար ու մի գանձերով և աստվածային
կրակով կռած այս սուրը ինքը Վահագն է օժել իր
Աստվածային Ջորությամբ: ԵՎ ո՞վ կարող է կանգնել այդ

գորության դիմաց: Հազար-հազարներ մի սայրն էր սպանում, հազար- հազարներ մյուս սայրն էր սպանում, հազար- հազարներ ճառագումն էր ոչնչացնում, հազար-հազարներ ընկնում էին անշունչ միայն սարսափից:

Չարի Տիտանները խուճապահար փախչում էին, դեռ սրի փայլը չտեսած, քանզի սուրը դեռ հեռվից շանթահարում էր իր ճառագումով: Տիտանները փախչում էին Վիշապի մոտ և պատսպարվում նրա թևերի տակ:

Թեև Արի Մանը աստված էր, բայց երկրային աստված էր նա և Աննահ Աստված Վիշապի դեմ կռվել չէր կարող: Վիշապի դեմ միայն Վահագնը կկռվեր:

ԵՎ Վահագնը ահեղ՝ Ջորության Աստված, Հրե Պատանի, իր ողջ գորությամբ կանգնեց Մահաբեր Վիշապի դիմաց: ԵՎ Աստվածների Մեծամարտ սկսվեց հենց Երկրի վրա, մարդկանց զարմացած աչքերի առաջ:

Նյութեղեն տեսքով ահեղ Աստվածներ՝ դաժան, անզիջող... Վիշապը Չարի՝ բազում գանգերով, արնոտ աչքերով, և թույն էր ցայտում իր պիղծ երախից. Վահագնը Արի՝ Հրե Պատանի, արև աչքերով, բոց էր ու կրակ և բոցը ձեռքին՝ իր թուր - Կեծակին: Վահագնը ահեղ շանթեր էր սփռում իր հուր աչքերից, խավարն էր ցրում, ասպարեզ կանչում Չարի Վիշապին՝ ճակատ առ ճակատ Մեծամարտելու, ինչպես վայել է հենց Աստվածներին:

Վիշապը թունոտ՝ Չարիի Աստված, ոռնում էր ահեղ՝ ի տես Վահագնի, մահվան սարսափով գալարվում էր նա Երկիրը գրկած, կատաղած ուզում Երկիրը խեղդել իր վերջին շնչով, բայց շունչն է փչում:

Վահագնը Ջորեղ՝ Արիի Աստված, հուժկու զարկերով գանգերն է փշրում այդ պիղծ Վիշապի, երկինք է գցում մարմինը նրա, որ արեգակները այրեն կրակով գարշանքը նրա:

Իսկ Արի Մանը իր սակավաթիվ քաջերի գլուխ անցած, հալածում էր Չարի Տիտաններին և մաքրում նրանցից Արարատը:

Վիշապը սպանված էր, նրա լեշը այրվում էր երկնքում, բայց Վիշապի պղծանքը դեռ կար Արարատում, և գարշահոտությունը ողջ Երկիրն էր պատել:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԶՐՀԵՂԵՂ

Հաղթելով Չարի Տիտաններին և Արարատը ազատելով նրանցից, Արի Մանը մեծ զոհ մատուցեց Ամենագոր Վահագնին: ԵՎ Վահագնը ինքը մասնակից եղավ այդ զոհաբերության ծեսին, սիրով վայելեց Մանի նվերը, փառաբանեց Հայր Արային և ապա դիմեց Մանին.

- Ո՛վ, քաջո՛ Ման, իմ երկրային եղբայր Արիի արժանավոր ժառանգ: Հայր Արայի կամքով և քո բազկի զորությամբ դու մաքրեցիր Արարատը Տիտաններից: Աշխարհն էլ ազատվեց Վիշապից: Բայց Վիշապի պղծությունը զարշահոտությամբ դեռ իշխում է Երկրի վրա: Այդ զարշանքը միայն ջրով կմաքրվի: ԵՎ ես Երկրի վրայից Վիշապի զարշանքը մաքրելու եմ Մեծ Զրհեղեղով: Ամեն ինչ մնալու է ջրի տակ: Միայն Արարատն է ջրից դուրս մնալու: Բայց Արարատում էլ միայն զորավորները կվերապրեն: Միայն զորավորներին եմ հովանավորելու ես: Տկարներին ես չեմ հովանավորի: Տկարները չեն դիմանա գերիզոր հուրի զորությանը, և նրանք կկործանվեն, քանզի ես պետք է պահպանեմ երկրային աստվածների Ցեղը իր բնօրրանում, իսկ տկարներից աստվածներ չեն ծնվի: Ես պատվիրում եմ քեզ, ո՛վ, Արիների Նահապետ՝ հավաքի՛ր Արիներին և բարձրացի՛ր Մասիս սար՝ Աստվածների կացարան: Գիտցի՛ր՝ Մասիս սար կարող եմ բարձրանալ միայն Տրնդեզի աստվածային կրակով օծված և իրենց աստվածայնությունը զգացած արիները, քանզի Մասիսը Աստվածների կացարան է, և այնտեղ կարող եմ բարձրանալ միայն աստվածները: Դա է կամքը Արայի:

ԵՎ Մանը իր մի քանի քաջ զինակիցներով, որոնք զգացել էին արդեն իրենց աստվածայնությունը և իրենց ընտանիքներով, քայլեց դեպի Մասիս սար: Թաքնված Արիները տներից դուրս թափվեցին և աղաչեցին Մանին.

- Մեզ մի՛ թողնիր մենակ, մեզ էլ տար քեզ հետ :

Անիմաստ էր բացատրել նրանց որևէ բան. մահվան սարսափը մթագնել էր նրանց բանականությունը, և նրանք խուճապահար հետևում էին Մանին:

- Է՛հ,- ասաց Մանը,- Արայի կամքն է, եկեք, եթե կարող եք բարձրանալ Մասիս:

ԵՎ Արիների մեծ թափորը շարժվեց առաջ ու կանգ առավ Մասիսի ստորոտին:

Այնտեղ էին հավաքվել արդեն ամեն կողմից փախած շատ կենդանիներ և թռչուններ: Ջգալով մոտալուտ վտանգը, նրանք գազազել էին և իրար էին հոշոտում: Տեսնելով մոտեցող Արիներին, հարձակվեցին նրանց վրա: Տկար Արիները խուճապահար այս ու այն կողմ էին վազում և Մանից պաշտպանություն աղերսում:

Մանը իր աստվածային զորությամբ սաստեց գազազած կենդանիներին:

Տկար Արիները, անկարող բարձրանալու, վայնասուն բարձրացրին.

- Գթա՛ մեզ, ո՛վ, Ման, մի՛ թողնիր մեզ այստեղ անհետ կորչելու, մեզ է՛լ տար քեզ հետ:

ԵՎ Մանը ասաց.

- Հայր Արայի կամքով ես պատասխանատու եմ Արի երկրային աստվածների Ցեղը պահպանելու համար: Իսկ ձեզանից աստվածներ չեն ծնվի: Թե ուժ չունեք բարձրանալու, մնացեք այստեղ. ո՛չ ձեր կյանքն է պետք Արային, ո՛չ էլ ձեր մահը:

ԵՎ Մանի սակավաթիվ թափորը սկսեց բարձրանալ Մասիսն ի վեր:

Մանի թափորը բարձրանում էր, իսկ ներքևից բազմաժխոր վայնասունն ու կաղկանձը ուղեկցում էին նրան:

Վահագնի Ջորությամբ Երկրի սառցալեռները շիկացան, հալեցին, ու պատռվեցին ամպերը երկնքի, և ջուրը թափով Երկիրը ողողեց, և Ջրհեղեղի տակ կորան Չարի Վիշապի ամբողջ գարշանքը և նրա երկրպագուները:

Մասիսի գագաթին՝ Աստվածների կացարանում հաշտ ու խաղաղ ապրում էին Արիները: ԵՎ Աստվածներն էին հովանավորում նրանց:

Խաղաղ չէր միայն Մանի հոգին: Նա զգում էր, թէ ինչ է կատարվում Արարատում: Տկար Արիները Տիեզերական Հուրի զորությանը չդիմանալով, մահվան սարսափից հենց մահվան մեջ էին փրկություն գտնում: Շատ է տխրում Մանը, բայց ոչինչ անել չէր կարող. դա Աստվածների կամքն էր՝ տկարները պիտի կործանվեին, քանզի Արարատը միայն աստվածների բնօրրանն է, և այնտեղ միայն աստվածները պիտի ապրեն:

Շուտով մեռելային խաղաղություն տիրեց Արարատում: Աստվածամայր Անահիտի պատվերով աղավնին թռավ եկավ Արի Մանի մոտ, ուռենու ճյուղը բերանին: Դա նշան էր, որ Արարատը կարոտով սպասում է իր զորավոր զավակներին, աստվածային կենաց շարունակելիությունը հաստատելու համար:

ԱՍՏՎԱԾԱԴԻՐ ՕՐԵՆՔԸ

Միայն ուժեղները վերապրեցին Ջրհեղեղը: ԵՎ նրանք իրենց վերջին գիշերն էին անցկացնում Մասիսի գագաթին: Վաղ լուսաբացին նրանք պետք է իջնեին այնտեղից: Բոլորը քնած էին: ԵՎ միայն Մանն էր արթուն: Նա անհանգիստ էր պետք է սկսվեր նոր կյանք, և ինքն էր պատասխանատու Արայի առաջ իր Ցեղի համար: ԵՎ գիշերային մթության մեջ, ձեռքերը պարզած երկինք, դիմեց Արային.

- Ո՛վ, Հայր իմ, Արա՛, զարուն բերեց Վահագնը Աշխարհում, Երկրի վրա՝ նոր պատմություն, իսկ Արարատում՝ նոր տարեգրություն: Ինչպե՞ս կառավարեմ ես Արիներին, որ նրանք աստվածային կյանքով ապրեն:

Լսեց Մանի կանչը Արան և նրա մոտ ուղարկեց Արտի Աստված Միհրին: ԵՎ Արտավազդ Միհրը Արարչի Պատվիրանը հաղորդեց Մանին.

- « Ո՛վ, Արի Ման, դու աստված ես, թեև՝ երկրային: ԵՎ դու աստվածամարդերի Ցեղը պիտի նորոգես: ԵՎ քո սերունդները քո անունով կկոչվեն Արմեն: Անմահ Աստվածները մշտապես կհովանավորեն քո Արմեն Ցեղը: Բայց գիտցի՛ր՝ հենց այն օրը, երբ քո սերունդները ուրանան Արարչին և Անմահ Աստվածներին, հենց նույն օրը կգորանա Վիշապը ու կիջնի Երկիր: ԵՎ Չարի Տիտանները Վիշապի զորությամբ կուժեղանան և մեծագույն չարիք կբերեն քո Ցեղին:

Աստվածամարդերի Նահապետն ես դու: ԵՎ Արտի Օրենքով պիտի առաջնորդես դու քո Ցեղը: Աստվածադիր օրենքն է դա: Աստվածադիր Օրենքը պաշտպանում է ծագումը, արյունը, ոգին, արարումը:

Հայր Արայի կամքով, Ցեղը պատասխանատու է Արայի առաջ. Ազգը պատասխանատու է Ցեղի և Արայի առաջ. Տոհմը պատասխանատու է Ազգի, Ցեղի և Արայի առաջ. Ընտանիքը պատասխանատու է Տոհմի, Ազգի, Ցեղի և

Արայի առաջ, անհատը պատասխանատու է Ընտանիքի, Տոհմի, Ազգի, Ցեղի և Արայի առաջ: Այդ պատասխանատվության զգացողությունն է մայրը բոլոր տեսակի առաքինությունների: Իսկ իրավունքն առանց պատասխանատվության՝ անբարոյականություն է, և դա է մայրը բոլոր տեսակի ոճիրների:

ԵՎ ինչպիսի օրենքներ էլ որ սահմանես, գիտցի՛ր, որ այդ բոլոր օրենքները պիտի բխեն այն հիմնական սկզբունքից, որ որպես Արարչական Պատվիրան հաղորդում ենք քեզ:

Ցեղի և Ազգի միջև ծագած հակասության դեպքում իրավունքը Ցեղինն է. Ազգի և Տոհմի միջև ծագած հակասության դեպքում՝ իրավունքը Ազգինն է. Տոհմի և Ընտանիքի միջև ծագած հակասության դեպքում՝ իրավունքը Տոհմինն է. Ընտանիքի և անհատի միջև ծագած հակասության դեպքում՝ իրավունքը Ընտանիքինն է:

ԵՎ գիտցի՛ր, ո՛վ, Ման, թեև Աստվածադիր Օրենքը Արայի կամքով ես եմ հաստատում, բայց այդ Օրենքը անարդյունք կլինի, եթե չօժվի Վահագնի զորությամբ»:

Մանի թափորը իջավ Մասիս սարից, ու նորից կյանքը սկսվեց Արարատում: Հարսները Վահագնանման զավակներ էին ծնում՝ ուժեղ, առողջ, զեղեցիկ: Արի Մանի անունից առաջացավ և Արմեն՝ Աստվածամարդիկ, Ցեղանունը: ԵՎ Արիների՝ Արմենների, Ցեղը նորից բազմանում էր Արարատում: Արիները ապրում էին որպես աստվածներ և ապրում էին աստվածավայել վարքով ու երջանիկ էին: ԵՎ Արիներին Արտի օրենքներով էր կառավարում Նահապետ Մանը: ԵՎ Անմահ Աստվածներն էին հովանավորում նրանց:

Աստվածամայր Անահիտը հովանավորում էր ամեն մի ծնունդ և պահպանում էր մանուկների առողջ ծիծաղը: Ամենազոր Վահագնը հալածում էր տկարությունը Արիների միջից և աստվածային Ջորությամբ սնում էր նրանց: Սիրավառ Աստղիկը աստվածային Սիրով իրար էր կապում Արիների սրտերը: Արտավազդ Միհրը պահպանում էր Արի սերունդների աստվածավայել վարքը: Ճարտարագետ Տիրը աստվածային իմաստություն էր ուսուցանում Արիներին: ԵՎ

Հայր Արամ իր բարձունքից գոհունակությամբ ժպտում էր,
տեսնելով իր երկրային սերունդների երջանիկ կյանքը:

ՁԱՏԻԿ

Սակավաթիվ Արիները Նահապետ Մանի առաջնորդությամբ իջան Մասիս սարից: Գարուն էր, գարնանային արևը ժպտում էր Երկրին, և Արարատի հողը, սիրո կարոտով ու բեղմնավորման տենչով, սերմնացաններին իր գիրկն էր կանչում:

Արիները սկսեցին վարել հողը: Բայց շուտով նկատեցին, որ դաշտերում խոտ ու ծաղիկ, որ նոր ծիլ էին տվել, գորշությամբ էին ծածկված: Չկար ոչ մի գույն. բոլոր գույները խառնվել էին իրար, և մի ընդհանուր գորշություն էր տիրում:

Ստահոգվել էին Արիները: Նրանք դիմեցին Մանին.

- Ո՛վ, Արիների Նահապետ և սիրելի՛դ Անմահ Աստվածների: Այս գորշությունը մահ կբերի Արարատի բնությանը: Ինչ էլ որ ցանենք, միևնույն է՝ պտուղը գորշ ու լեղի է լինելու: Գույները չքացել են Արարատից: Ասա, ինչպե՞ս գատենք գույները:

Նահապետ Մանը զոհ մատուցեց Աստվածամայր Անահիտին:

- Ո՛վ, Մայր Անահիտ,- դիմեց Մանը,- դու, որ Մայրն ես ամեն երկունքի, ամեն ծնունդի, քո մայրությամբ վանիք գորշությունը Արարատից, գատիք գույները, որ քո մայրության պտուղները լինեն բազմագույն, բազմահամ, բազմահոտ:

Աստվածամայր Անահիտը լսեց Մանի կանչը ու եկավ նրա մոտ:

- Ջավակս,- ասաց Անահիտը,- Վիշապը իր թւյնով վարակել է ամենը Արարատում և գորշություն տարածել: Կորել են գույները: Այդ գույները Յահվահը պահում է իր ստորգետնյա թագավորության մեջ: Միայն դու կարող ես դրանք հանել գետնի տակից:

- Ո՛վ, Մայր,- ասաց Մանը,- թեև երկրային, բայց աստված եմ ես և ես կբերեմ այդ գույները Յահվահի մոտից, եթե քո օրհնությունը ստանամ:

- Ես իմ մայրական օրհնանքն եմ տալիս քեզ, որդիս,- ասաց Անահիտը,- և լսիր ինձ: Մի Հազարան Հավք կա, որն իմ կամքով ապրում էր Արարատում և բարձր լեռների գագաթին բույն էր դրել: Նա գիշերները ճառագում էր, իսկ ցերեկները արևի ճառագայթների հետ ձուլում էր իր շողերը: Դյութիչ ձայնով երգում էր նա և բազմագույն ձվեր ածում, որով և անընդհատ նորոգում էր Արարատի գույների թարմությունը: Այժմ այդ Հավքը գերված է Յահվահի ստորգետնյա թագավորության մեջ: Այդ Հավքը պիտի բերես դու: Տե՛ս՝ Վահագնի ծնունդից հետո առաջին լիալուսինն է երկնքում: ԵՎ եթե այս լիալուսնին հաջորդող արեգօրը չբերես Հավքը, Արարատի հողը կամլանա և այլևս գույներ չի ընդունի իր մեջ: Քեզ մնացել է միայն մեկ օր:

ԵՎ Մանը գնաց Հազարան Հավքը բերելու: Նրա հետևից հնչում էին մայրերի, կույսերի, մանուկների հաղթության մաղթանքները: Նրան շրջապատող նախնյաց սուրբ ոգիները շշմջում էին հաղթության մաղթանք: Սարեր ու ձորեր արձագանքում էին հաղթության մաղթանք: ԵՎ Մանի սիրտը լցվում էր զորությամբ և հաղթանակի հավատով:

Մանը բարձրացավ Մասիս սար: Ջոհ մատուցեց Հայր Արային և Ամենագոր Վահագնին:

- Ո՛վ, Վահագն Ամենագոր,- կանչեց նա,- Մայր Անահիտի Օրհնությամբ ես գնում եմ Յահվահի հետ մենամարտելու և Հազարան Հավքը բերելու: Դու էլ օժիր իմ թուր-կեծակին:

Վահագնը եկավ նրա մոտ և ասաց.

- Ո՛վ, քաջդ Ման, դու չգիտե՞ս, որ Յահվահը զորավոր Աստված է: ԵՎ դու, թեև աստված ես, բայց երկրային ես և շատ ես գիջում նրան քո ուժով:

- Ո՛վ, Վահագն Ամենագոր,- ասաց Մանը,- ես Արի եմ, Հայր Արայի արյունը ունեմ իմ մեջ: Եվ ստացել եմ Մայր Անահիտի Օրհնությունը, մեր մայրերի, մանուկների ու հարսների մաղթանքն եմ ստացել, ես ստացել եմ իմ

նախնինների սուրբ ներշնչանքը: Էլ ի՞նչ զորություն կդիմանա այդ բոլորին:

- Իրոք դու շատ մեծ զորություն ունես քո մեջ, ո՛վ, Արիների առաջնորդ,- ասաց Վահագնը,- Հայր Արայի կամքով ես էլ իմ Ջորությունն եմ տալիս քեզ մի օրով: Գնա, Մեծամարտիր Յահվահի հետ, ինչպես վայել է Անմահ Աստվածներին:

Ապա Վահագնը կանչեց մի հսկա արծվի՝ քանի հարյուր տարեկան, որ քանի հարյուր անգամ շրջել է ամբողջ Երկիրը և ծանոթ է ամեն անկյունին:

Արծիվը իր թևերի վրա տարավ Մանին: Երկար թռավ և հասավ աշխարհի ծայրը: ԵՎ իջավ արծիվը մի մենավոր ու սև լեռան մոտ:

- Ո՛վ, Յահվահ,- կանչեց Մանը,- ես եկել եմ Մեծամարտելու քեզ հետ, դու՛րս արի ասպարեզ:

Ոչ մի ձայն չկար: Մանը իր թուր-կեծակիով հարվածեց լեռանը: Լեռը պատռվեց, և բացվեց մի ընդարձակ անձավ, որի մեջտեղում մրափում էր Յահվահը:

- Արթնացի՛ր, Յահվահ,- կանչեց Մանը:

Նրա ձայնը ահավոր արձագանք տվեց անձավի մեջ, բայց Յահվահը չէր զարթնում: Շփոթվել էր Մանը՝ ժամանակը ուշ էր, իսկ Յահվահը չէր զարթնում, որ կռիվ անեն: Նա օգնության կանչեց արծվին: Արծիվը կտցահարում էր Յահվահի մարմնի տարբեր մասերը, բայց ապարդյուն: Վերջը արծիվը խուտուտ տվեց նրա թևատակին, և Յահվահը անմիջապես վեր թռավ: Նա տեսավ Մանին, որ թուր-կեծակին ձեռքին, կանգնած էր իր դիմաց:

- Ո՛վ, Արի Ման,- հեզնեց Յահվահը,- դու հյո՞ւր ես եկել ինձ մոտ, թե՞ կռվի: Թե հյուր ես եկել՝ անկոչ ես, թե կռվի ես եկել՝ անգոր ես:

- Ես կռվի եմ եկել, Յահվահ,- ասաց Մանը,- կամ տուր ինձ Հազարան Հավքը, կամ էլ դուրս եկ Մեծամարտենք, ինչպես վայել է աստվածներին:

Ծիծաղեց Յահվահը: Ուժգին փչեց, որ շնչով տապալի Մանին: Նրա շնչից մեծ փոթորիկ բարձրացավ Երկրի վրա, բայց Մանի մեջ Վահագնի Ջորությունն էր՝ նա մնաց կանգուն: Ջարմացավ Յահվահը: Իր բերանից բոց արձակեց, որ այրի

Մանին: Այդ բոցը հրաբխացած պատեց ամբողջ Երկիրը, բայց Մանի մեջ Վահագնի Ջորությունն էր՝ նա մնաց անվնաս: Շատ զարմացավ Յահվահը և ասաց.

- Արի Ման, դա քո շնորհքը չէր, որ դիմացար իմ շունչին ու կրակին. քո մեջ Վահագնի Ջորությունը կա: Բայց ասա ինձ, ինչո՞ւ քո թուր-կեծակիով չխոցեցիր ինձ, երբ ես քնած էի, չէ՞ որ Վահագնի Ջորությամբ դու կարող էիր ինձ տապալել:

ԵՎ Մանը պատասխանեց.

- Ես Արի եմ՝ երկրային աստված, և ինձ վայել չէ քնածի վրա սուր բարձրացնել:

ԵՎ Յահվահը ասաց.

- Անմահ Աստվածը երկրային աստծուն չի կարող գիջել վեհանձնության մեջ: Ես քեզ կտամ Հազարան Հավքը: Բայց գիտցիր, որ ես դարձյալ թշնամի եմ քեզ և քո Ցեղին:

Արի Մանը վերցրեց Հազարան Հավքը և լույս աշխարհ ելավ: ԵՎ արծիվը իր հուժկու թևերով Մանին հասցրեց Արարատ հենց Վահագնի ծնունդից հետո առաջին լիալուսնին հաջորդող արեգօրը լուսաբացին:

Արիները, որ ամբողջ գիշեր սպասում էին Մանին, շատ ուրախացան: Մանը Հավքին դրեց գետնին փռած հարդի վրա, Հավքը ճառագում էր ծիածանի գույներով: Ո՛ր երգեց Հավքը ու երգելով ձվեր ատեց՝ բազմաթիվ, բազմագույն: Արիները ուրախությունից թռչկոտում էին: Ձվերը ձեռքերին բռնած պարում էին, երգում և փառաբանում Հայր Արային, Մայր Անահիտին, Ամենագոր Վահագնին: Փառաբանում էին նաև իրենց նահապետ Մանին:

Անահիտը նույնպես ուրախ էր: Նա իջավ Արարատ: Հավաքեց բազմագույն ձվերից բազում գույներ ու շաղ տվեց Արարատով մեկ: Ապա թռցրեց Հազարան Հավքին, պատվիրելով՝ բույն շինել Արարատի լեռների վրա և մշտապես պահպանել Արարատի գույների թարմությունը: Ապա Անահիտը դիմեց Մանին.

- Ո՛վ, Արի Ման, հիմա կարող եք սկսել ձեր վար ու ցանքը՝ Արարատի հողը բազմագույն, բազմաբույր և բազմահամ աստվածային բարիք կտա:

ԵՎ Արիները ուրախ երգերով վարում էին ու ցանում:
Իսկ մանուկները, ջահել աղջիկներն ու հարսները գունավոր
ծվերը ձեռքերին մինչև ուշ երեկո դեռ պարում էին, երգում,
ծվախաղ անում:

ԽԱՂՈՐՈՂՆԵՔ

Արարատում աստվածավայել էին ապրում Արիները: Նրանք չգիտեին, թե ինչ է հիվանդությունը, ինչ է հյուսիսի ծերությունը: Նրանք առողջ էին ու երջանիկ: ԵՎ երկար էին ապրում: Ամեն մեկը զգում էր իր բնական դերը կյանքում և այն կատարում էր մեծ նվիրումով: ԵՎ երբ կատարում ավարտում էր իր բնական դերը, ապա պարզապես գիշերը քնում էր ու առավոտյան չէր զարթնում: Ահա Արիներն այդպես էին դիմավորում մահը, երկար և առողջ ապրելուց հետո:

Արիները հերկում էին հողը, ցանում, խնամում և ապա վայելում արարատյան բարիքը: Արարատում բոլորը ապրում էին լավ և ավելի լավ: Չկար աղքատ, չկար հարուստ, քանզի Արիները արարում էին, իսկ արարողը չի կարող լինել ոչ աղքատ և ոչ հարուստ: ԵՎ ծաղկում էր Արարատը: ԵՎ բազմազան բարիքների բուրմունքն էր տարածվում աշխարհով մեկ, գրգռելով շատ-շատերի ախորժակը: ԵՎ Անապատի բնակիչները շատ էին ցանկանում ճաշակել Արարատի այդ աստվածային բարիքը:

ԵՎ Արիները իրենց աճեցրած բարիքից հաճույքով բաժին էին հատկացնում նաև Անապատի Չարիներին: Այդ պատճառով Արիներն ավելի շատ էին աշխատում, որ ավելի շատ բարիք ստեղծեն: ԵՎ առավել փարթամանում և ճոխանում էր Արարատի բնությունը: Արիները անտրտունջ աշխատում էին և գոհ էին իրենց աշխատանքից: Գոհ էին նաև Չարիները: Նրանք օրհնում էին Արարատի բարիքը և այն մշակողներին՝ Արիներին:

Դժգոհ էր միայն Չարի Վիշապը: Նա անդադար ոռնում էր չարությունից ու անելությունից: Վերջապես նա դիմեց խորամանկ Յահվահին:

- Ո՛վ, Մեծոյ Յահվահ, Արարատի Արիները աշխարհը սնուն են իրենց բարիքներով և զորանուն են: Իսկ Չարիները օրհնում են նրանց: Ասա՛, ինչպե՞ս չորացնեն Արարատը:

ԵՎ Յահվահը ասաց.

- Ո՛վ, Չարի Վիշապ, բարիքներով բեռնավորված քարավաններ թող գնան ոչ թե Արարատից Անապատ, այլ՝ Անապատից Արարատ:

ԵՎ Վիշապի հովանավորությամբ, բարիքներով բեռնավորված քարավաններ Անապատից շարժվեցին դեպի Արարատ: ԵՎ Արարատում նրանք իրենց բարիքը փոխանակում էին Արարատյան բարիքի հետ մեկի դեմ տասը տալով: ԵՎ առատորեն Արարատ էին ներմուծվում Անապատի ծիրանն ու նուշը, խաղողն ու դեղձը, տանձն ու խնձորը, այն ամենը, ինչ աճում էր նաև Արարատում, բայց ներմուծված բարիքը շատ ավելի առատ էր և շատ ավելի էժան:

ԵՎ Արիները սկսեցին խորհել, թե արժե՞, արդյոք, այդքան քրտինք ու եռանդ թափել հողը մշակելու և բարիք աճեցնելու համար, երբ Անապատից ներմուծվող բարիքը նույն տեսակի բարիքն է, բայց շատ ավելի առատ:

ԵՎ ծուլացան Արիները և ընչաքաղցությունը արմատ գցեց շատ շատերի մեջ: ԵՎ հարստանալու մոլուցքը տիրենց նրանց: ԵՎ այլևս ոչ թե բարիքը բարիքի հետ էին փոխանակում, այլ գնում և վաճառում էին Անապատի բարիքը ոսկով, արծաթով, թանկարժեք քարերով:

Ազարակներ քանդվեցին, շուկաներ սարքվեցին, ուր առատորեն վաճառվում էին ներմուծված բարիքները: Արիները մաճը փոխեցին կշեռքով: ԵՎ բարիք ստեղծող Արին այլևս միայն օտար բարիքն էր չափում ու կշռում:

Ամայանում էր Արարատի հողը, պակասում էր Արարատյան բարիքը: Իսկ Արիները գոհ էին՝ առանց աշխատելու առատորեն սնվում էին Անապատի բարիքից և օրհնում էին Չարիներին:

Բայց հանկարծ տարբեր հիվանդություններ առաջացան Արիների մեջ, որ արագորեն տարածվում և հյուծում էին նրանց: Արիները չէին հասկանում, թե որտեղից և

ինչպես այդ հիվանդությունները եկան ու կպան իրենց: ԵՎ այդ հիվանդություններից ոչ մի փրկություն չկար:

Տազնապահար Արիները դիմեցին իմաստուն Քուրմերին, պարզելու համար այդ օտարոտի և վտանգավոր հիվանդությունների պատճառը և դրանցից ազատվելու միջոցը: Բոլոր Քուրմերը հավաքվեցին Արարատի Գերագույն Քուրմի մոտ: Ժողով արեցին, խելք խելքի տվին և ապա որոշեցին դիմել Արարատի կեցուցիչ Մայր Անահիտին: Մեծ խարույկ վառեցին, զոհ մատուցեցին, և Արարատի Գերագույն Քուրմն իր ձեռքերը երկինք պարզած, կանչեց.

- Ո՛վ, Մայր Անահիտ, դու, որ մայրն ես բոլոր Աստվածների և Աստվածամարդերի, փրկիր քո զավակներին այս բազմաթիվ անժանոթ հիվանդություններից, որ հյուծում են մեզ:

ԵՎ Մայր Անահիտը հայտնվեց նրանց առաջ և ասաց.

- Հայր Արայի կամքով, ես երկրային աստված Արիին ծնել եմ հենց Արարատում՝ Աստվածների օրրանում: ԵՎ Արարատն է Աստվածավայր, և Արարատի բարիքն է Աստվածների սնունդ: Դուք, որ Աստվածամարդիկ եք, միայն աստվածային սնունդով պիտի սնվեք: ԵՎ Արարատի բարիքն է միակ սնունդը աստվածների համար: Գիտցեք, որ Անապատի բարիքը միայն տեսակապես է նույնանում Արարատի բարիքին, այնինչ, որակապես այն խիստ տարբեր է: Արարատի բարիքները ծնունդ են առնում Արարատի հողից, Արարատի ամենակենարար արևն է ջերմացնում նրանց և երկնքից իջած ամենամաքուր ջրով են սնվում նրանք: Իսկ Անապատի բարիքը սնվում է Արարատից արտաթորված ջրով: ԵՎ Անապատի բարիքը ճահճահամ ունի իր մեջ ու հղի է աստվածներին ոչ հատուկ հիվանդություններով: Աստվածները աստվածային սնունդով պիտի սնվեն:

Ասաց Մայր Անահիտը և անհետացավ:

ԵՎ Արիները Արարատից դուրս վռնդեցին դրսից եկած բոլոր քարավանները, հրաժարվեցին Անապատից եկած առատ բարիքից: Արիները այլևս սնվում էին միայն արարատյան բարիքով: Նվազ էր արարատյան բարիքը, բայց աստվածային սնունդ էր: ԵՎ շուտով Արիների միջից

վերացան այդ հյուժող հիվանդությունները: Առողջացան Արիները: Քանդեցին շուկաները և ագարակներ սարքեցին: Հերկեցին Արարատի հողը, ցանեցին, խնամեցին: ԵՎ Արարատի հողը առատ բերք տվեց նրանց:

Երջանիկ էին Արիները, ցնծում էին: Երզն ու պարը ուղեկցում էին բերքահավաքին: Մեծ խարույկներ էին վառում, շուրջպար էին բռնում ու փառերգեր էին նվիրում Մայր Անահիտին:

Մայր Անահիտն էլ իջավ Արարատ, միանալու այդ բերքահավաքի երջանիկ տոնախմբությանը: Նա վերցրեց խաղողի ողկույզը, օրհնեց այն, ապա ճգմեց և խաղողի հյութով օժեց բոլոր բարիքներն ու ասաց.

- Սիրելի զավակներս, ահա ես օրհնեցի այս անուշահամ խաղողը և նրա հյութով օժեցի բոլոր բարիքները: Վայելեք դրանք և այս խաղողից պատրաստված սուրբ ընպելիքով՝ գինիով, միշտ օժեք ձեր աստվածային սնունդը:

ԵՎ այնուհետև Արիները ամեն բերքահավաքին խաղողի առաջին բերքը նվիրում են Մայր Անահիտին: ԵՎ Մայր Անահիտը օրհնում է խաղողը և այդ խաղողի հյութով օժում է Արարատյան բարիքը:

ՀՎԱԵՐԺԱԿԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ

Գարուն բերեց Վահագն Աշխարհում, Երկրի վրա՝ նոր պատմություն, իսկ Արարատում՝ նոր տարեգրություն:

Վահագնի ծնունդից հետո երկար տարիներ էին անցնում: Շատ Արիներ էին ծնվում, շատ Արիներ էին ամուսնանում, և շենանում էր Արարատը:

Աստվածադիր օրենքներով էր Արիներին կառավարում Մանը: Բոլորը երջանիկ էին: Բայց ինքը՝ Մանը, մեծ հոգս ուներ: Դեռ Մեծ Ջրհեղեղից առաջ Չարիները Վիշապի զորությամբ ավիրել էին Արարատի Հավերժական Քաղաքը, որ ինքը՝ նախահայր Արին էր կառուցել և իր անունով կոչել էր Արիական՝ Երեվան: Ջրհեղեղն էլ բոլորովին մաքրել էր այդ քաղաքի հետքերը:

ԵՎ հաճախ Մանի մոտ գիշերով գալիս էր իր նախահայր Արին և պատվիրում՝ վերականգնել այդ Հավերժական Քաղաքը նույն տեղում և նույն տեսքով: Հենց այդ քաղաքում է անմիջականորեն խտացվելու Աստվածների շունչը, ճառագելով տարածվելու Արարատով մեկ և պահպանելու Արարատի զորությունը:

Յահվահը, գիտենալով Երեվանի այդ զորությունը, ստորգետնյա ահավոր ցնցումներով քանդել էր այն, որ Արարատը զրկվի իր զորության աղբյուրից: Վիշապն էլ մեծ փոթորիկներ սարքելով, ցիրուցան արեց ավերակները, իսկ Մեծ Ջրհեղեղը Երեվանի հետքն անգամ սրբեց Երկրի երեսից:

ԵՎ Մանը զգում էր, որ պետք է վերականգնվի այդ Հավերժական Քաղաքը որպես Արարատի և Արի Ցեղի զորության Մայր Քաղաք: Բայց Մանը չէր կարողանում գտնել տեղը, որտեղ եղել է այդ քաղաքը և չէր կարողանում գտնել այն ձևը, որով պիտի վերականգնվի քաղաքը:

Մանը զոհ մատուցեց Հայր Արային և Անմահ Աստվածներին ու խնդրեց պարզել Հավերժական Քաղաքի վերականգնման գաղտնիքը: ԵՎ ճարտարագետ Տիրը, որ

հովանավորն է բոլոր գիտությունների, արվեստների, կառույցների, փարատեց Մանի վիշտը և ասաց.

- Ո՛վ, Արի Ման, Արայի կամքով ես քեզ եմ հաղորդում Հավերժական Քաղաքի վերականգնման գաղտնիքը, որ հայտնի է միայն Աստվածներին, մեկ էլ՝ քո նախնիներին: Դու արարելու ես մի որդի, որը քո պապի պապն է: Նա տեսել է էրեվանը, ապրել է այնտեղ: Նա եղել է հմուտ ճարտարապետ և բարեպաշտ քուրմ: Նա կվերականգնի այդ քաղաքը հենց նույն տեղում և նույն սկզբունքով:

Մանը Վահագնի ծնունդի հինգ հարյուրերորդ տարում արարեց Արամին: Ուշիմ էր Արամը և լուսամիտ, կայտառ էր և զորեղ: ԵՎ Աստվածների սիրելին էր: Իսկ ճարտարագետ Տիրը ուսուցանում էր նրան: Բայց Տիրը Արամին ոչինչ նոր բան չէր ուսուցանում, քանզի Աշխարհում ոչ մի նոր բան գոյություն չունի: Տիրը Արամի մեջ վերականգնում էր նրա անցյալ փորձը, անցյալ գիտելիքները և անցյալ իմաստությունը:

ԵՎ երբ Արամը հասուն էր ու բազմահմուտ, Մանը պատվիրեց նրան.

- Դու պիտի վերականգնես էրեվան Հավերժական Քաղաքը նույն տեղում և նույն ձևով, որ հիմնադրել է մեր նախահայր Արին որպես զորության փարոս ամբողջ Արարատի համար:

Արամը մտքերի մեջ խորասուզված, շրջում էր ամբողջ Արարատը և փորձում էր վերհիշել այն, ինչ տեսել էր նախորդ կյանքում: Նա եկավ հասավ մի տեղ, ուր բազմաթիվ բլուրներ կային: Սառնորակ աղբյուրներ էին բխում բլուրների տակից, և ձորերի միջով հոսում էր բուռն լեռնային գետը: Նա ջուր խմեց ու նստեց հանգստանալու:

Նայեց մի կողմ՝ դիմացը իր վեհությամբ երկինք էր խոյանում երկգագաթ Մասիսը՝ Աստվածների կացարանը: Նայեց մյուս կողմ և տեսավ քառագագաթ Արագածը, որտեղ Հայր Արայի փառահեղ գահն էր: ԵՎ ժպտաց Արամը՝ հենց այստեղ է եղել էրեվան Հավերժական Քաղաքը: Նա փակեց աչքերը և իր հոգու աչքերով տեսավ կանգուն էրեվանը և տեսավ իրեն այդ քաղաքում:

Արամը բերեց Մանին հենց այդ տեղը: Շատ և շատ Արիներ հետևեցին նրանց: Արամը մեծ խարույկ վառեց ու զոհ մատուցեց Աստվածներին: Ջոհաբերության ծուխն ու հոտը բարձրանում էին երկինք և տարածվում երկու ուղղությամբ՝ մի ուղղությամբ հասնում էին Մասիս, մյուս ուղղությամբ՝ Արագած:

ԵՎ Արամը ասաց.

- Հենց այստեղ է եղել Հավերժական Քաղաքը: Հենց այստեղ է, որ զոհաբերության կրակը երևում է և՛ Արայի նստավայր Արագածից, և՛ Աստվածների կացարան Մասիսից:

Ուրախացավ Մանը: Հազար ճարտարապետ տվեց Արամին, հազար քարտաշ, հազար հյուսն, հազար ծեփագործ և հազար-հազար այլ շինարարներ: ԵՎ Արամը սկսեց կառուցել Էրեվանը:

Երկար տևեց քաղաքի շինարարությունը: ԵՎ երբ քաղաքն արդեն պատրաստ էր, Արամը տեսավ, որ շատ նման է իր նախկին տեսքին և ուրախացավ:

Մանը լուր ուղարկեց Արիներին, որ գան նորակառույց Էրեվան, զոհ մատուցեն Աստվածներին և բնակեցնեն քաղաքը:

Բայց գիշերը ստորգետնյա Արքա Յահվահը, որ չարություն էր տածում Արիի սերունդների դեմ, ուժգին ցնցեց քաղաքը և հիմնովին քանդեց այն:

Տխրեց Արամը, երկար խորհեց և մտածեց, որ շատ փոքր էին օգտագործած քարերը: ԵՎ որոշեց մեծ ու ծանր քարերով կառուցել քաղաքը, որ Յահվահը չկարողանա քանդել այն:

Նոր վարպետներ բերեց Արամը, որոնք շատ ուժեղ էին և աժդահա: Հսկա լեռներից հսկա կտորներ էին պոկում, բերում դնում էին իրար վրա և ամենագորավոր շաղախով ծեփում էին իրար:

Շատ երկար տևեց քաղաքի այս կառուցումը, նայեց Արամը և ուրախացավ: Շքեղ էր քաղաքը և հաճելի, շատ էր նման նախկին Էրեվանին:

Նորից Մանը կանչեց Արիներին, որ գնան բնակեցնեն այդ քաղաքը: Բայց նորից գիշերով Յահվահը ուժգին ցնցեց ու տապալեց նորակառույց քաղաքը:

Շատ տխրեց Արամը: Նա այլևս վարպետներ չբերեց: Պիշեր ու ցերեկ շրջում էր այդ տեղերում, քնում էր այնտեղ և որոնում էր քաղաքի վերականգնման իրական գաղտնիքը:

Արամը կանչեց իր նախնիներին: ԵՎ զիշերով, երբ բազում աստղեր զարդարում էին չկառուցված Էրեվանի երկինքը, Արամի նախնիների ոգիները հավաքվեցին նրա շուրջը: Արամը խնդրեց նրանց՝ բացել Հավերժական Քաղաքի վերականգնման գաղտնիքը:

Նախնյաց ոգիները պատվիրեցին օջախ վառել: Արամը մեծ օջախ վառեց և կրակը պահեց մինչև լուսաբաց: Նախնյաց ոգիները օջախի շուրջ զրուցում էին մինչև լուսաբաց: ԵՎ լուսաբացին նրանք ասացին.

- Օջախ վառիր, Արամ, օջախ: Մենք ենք պահում տան պատերը կանգուն, մենք ենք պահում քաղաքը կանգուն: Իսկ մենք այնտեղ ենք, ուր օջախ կա:

Հասկացավ Արամը իր նախնիների իմաստությունը: Հավաքեց իր որդիներին, հարսներին ու թոռներին և բերեց իր մոտ՝ ապրելու այդ բլուրների վրա և քնելու բաց երկնքի տակ, վառվող օջախի մոտ: Արամի որդիներն ու հարսները ամբողջ օրը աշխատում էին՝ վարում, ցանում, հնձում. երեխաները ամբողջ օրը խաղում էին բլուրների վրա, իսկ զիշերը հավաքվում էին օջախի շուրջը և հանգիստ քուն մտնում:

ԵՎ Արամը որոշեց մի տուն սարքել, որ թոռները պատսպարվեն քամուց և անձրևներից: ԵՎ հենց այնտեղ, վառվող օջախի շուրջը նա պատեր կանգնեցրեց ու տանիք դրեց: Տունը պատրաստ էր: ԵՎ տան մեջ տաք էր ու չոր: ԵՎ թոռները անվրդով քնում էին տան մեջ:

Երբ տունն արդեն պատրաստ էր, Յահվահը ուժգին ցնցեց այն, փորձելով կործանել Արամի սարքած տունը, բայց չհաջողվեց: Տունը կանգուն մնաց: Ուրախացան երեխաները, ուրախացավ և Արամը: Կանչեց Մանին: Եկավ Մանը, եկան Արամի եղբայրները: Տեսան, որ տունը կանգուն է, զարմացան: ԵՎ Արամը ասաց.

- Մեր նախնյաց ոգիները ինձ պատվիրեցին, որ տունը օջախի վրա կառուցեմ:

Արամի եղբայրները զոհ մատուցեցին Աստվածներին և իրենց նախնիներին: ԵՎ Մանի օրհնությամբ նրանք էլ

հավաքեցին իրենց որդիներին, հարսներին ու թոռներին և եկան այդտեղ: Նրանք օջախ վառեցին և ապա այդ օջախների վրա տներ շինեցին:

Այնուհետև շատ ու շատ Արիներ էին գալիս Երեվան, գալիս էին ընտանիքներով, վարում էին հողը, ցանում, հաց թխում, օջախ վառում և այդ օջախների վրա տներ կառուցում:

ԵՎ վերականգնվեց Հավերժական Քաղաքը, կանգուն մնաց Երեվանը: Բայց և երբեք չավարտվեց քաղաքի կառուցումը: ԵՎ Երեվանի կառուցումը շարունակվում է մինչև հիմա: Բայց հենց որ հանգչեն օջախները տներում՝ քաղաքը կքանդվի:

Ապա Մանը հավաքեց Արիներին, մեծ խարույկ վառեց, գոհ մատուցեց: Հայր Արայի կամքով և Աստվածների հովանավորությամբ նա Արամին կարգեց Արիների նահապետ, և ինքը գոհ ու երջանիկ գնաց միանալու իր նախնյաց ոգիներին: Իսկ նրա մարմինը, նախնյաց ավանդույթի համաձայն, այրեցին խարույկի վրա և բաշխեցին ըստ պատկանելության՝ հուրինը՝ հուրին տվին, օդինը՝ օդին, ջրինը՝ ջրին, հողինը՝ հողին:

ԱՐԱՄԻ ՈՐԴԻՆԵՐԸ

Երկար էր կառավարում Արիներին Մանի որդի նահապետ Արամը: Նա կառավարում էր Արտի օրենքներով, որ իր հայրն էր հաստատել Արիների մեջ: Արարումը հաստատող օրենքներ էին դրանք: Այդ օրենքներով էին

առաջնորդվում Արիները և ապրում էին աստվածավայել վարքով: Արարում էին Արիները, կերտում էին, ստեղծում: Բարեպաշտ էին Արիները, և Անմահ Աստվածներն էին հովանավորում իրենց երկրային եղբայրներին:

Բայց մի մեծ հոգս ուներ նահապետ Արամը: Արդեն ծեր էր նա և շուտով պիտի մեռներ, որ նորերը ծնվեին: Բայց այդ նոր ծնվողներին ի՞նչ էր թողնելու նա: Այն բոլորը, որ ստեղծված էր Արարատում, բավարարում էր արդեն ծնվածներին միայն: Իսկ նոր ծնվողները: Արիները շատ էին բազմացել, և նոր ծնվողներին քիչ տեղ էր մնում: Արարատի հողը չէր կարող սնել բոլորին: Ինչպե՞ս պիտի ապրեն նոր ծնվողները: ԵՎ Արամը պիտի հոգար նաև նոր ծնվողների մասին, որ նրանք էլ իրենցից ծնվողների մասին հոգան: Դա է կյանքի աստվածային խորհուրդը:

ԵՎ Արամը դիմեց Արարչին.

- Ո՛վ, Հայր Արա՛, գերբնակեցվում է Արարատը, ինչից ամենայն դժբախտություններ են ծնվելու Ցեղիս մեջ: Ապահովիր նոր ծնվող Արիների կենաց շարունակելիությունը և պահպանիր նրանց աստվածայնությունը հնարավոր մոլորություններից:

Արարիչը հավանեց Արամի խոսքերը և բավարարեց նրա խնդրանքը:

Արամը իր մոտ կանչեց որդիներին: Հերթով եկան ու հոր առջև կանգնեցին նրա որդիները՝ Ինդրան, Ջևսը, Ալանը, Արեշը և պատանի Թորգոմը՝ մեկը մյուսից հաղթանդամ, մեկը մյուսից գեղադեմ, մեկը մյուսից արևշող ու հրաշյա: ԵՎ այդ հսկաները հնազանդ շարվեցին իրենց հոր դիմաց՝ պատրաստ կատարելու նրա հայրական կամքը:

ԵՎ Արամն ասաց.

- Արարատն արդեն գերբնակեցված է: ԵՎ Հայր Արայի կամքով դուք ժառանգություն եք ստանում Արարատից դուրս ձեզ հատկացված հողերը: Դուք կտեղափոխվեք այնտեղ և ձեզ հետ կտանեք ամեն տոհմից հազար այր և հազար կին, որ ամեն մի տոհմ նոր հողերում ճյուղեր արձակի: ԵՎ ձեզանից միայն մեկը՝ Թորգոմը, որ դեռ պատանի է, կմնա Արարատում:

- Հայր իմ,- ասաց ավագ որդին,- քո կամքը Արայից է: Բայց ասա մեզ՝ ով ո՞ր ուղղությամբ է գնալու և ո՞րն է սահմանը մեր ժառանգած հողերի:

ԵՎ Արամն ասաց.

- Այս գիշեր դուք կբարձրանաք Մասիս սար: Խարույկ կվառեք, զոհ կմատուցեք: Մնացյալը Աստվածների կամքն է:

ԵՎ Արամի որդիները բարձրացան Մասիս սար. նրանց հետ էր նաև պատանի Թորգոմը: Նա եղբայրների հետ գնաց հետաքրքրությունից դողված: Նրանք հասան հենց այն տեղը, ուր Մեծ Ջրհեղեղի ժամանակ հանգրվանել էր նրանց պապը՝ Արի Մանը:

Մեծ խարույկ վառեցին ու զոհ մատուցեցին: ԵՎ Ամնահ Աստվածները հավաքվեցին խարույկի մոտ: Այնտեղ էին և՛ Ամենագոր Վահագնը, և՛ Արտավազդ Միհրը, և՛ Ճարտարագետ Տիրը, և՛ Չքնաղ Աստղիկը իր հավերժական ժախտով: Նույնիսկ Մայր Անահիտը եկել էր դիտելու իրենից ծնված երկրային աստված Արիի ժառանգների զորության ցուցադրումը: Խարույկի մոտ հավաքվեցին նաև շատ ու շատ նախնիներ:

Մեծ խնջույք սարքեցին եղբայրները: Աստվածներն ու նախնիները սիրով վայելում էին Արարատյան ճոխ բարիքները, համենված սուրբ ընպելիքով՝ գինիով: Մինչև երկինք էին հասնում եղբայրների շուրթերից ծորացող ձոները՝ նվիրված Հայր Արային, Աստվածներին ու նախնիներին: Խնջույքը տևեց մինչև լուսաբաց:

Առավոտյան արևի առաջին ճառագայթներով Արամի որդիները ոտքի կանգնեցին ու շարվեցին կարգով:

ԵՎ ասաց Վահագնը.

- Երկրի ջուրը նահանջում է և կուտակվում է բևեռներում սարցաբլուրների տեսքով: Բացվում է Հարաբերական Ցամաքը: ԵՎ նորանոր հողեր կան արդեն, որ պիտանի են բնակության համար: Հայր Արայի կամքով դուք ձեզ հատկացրած հողերն եք ժառանգելու Արարատից դուրս, Հարաբերական Ցամաքում: Իսկ ձեր ժառանգության տեղն ու սահմանը ձեր արձակած նետի թռիչքն է լինելու:

Առաջինը Վահագնին մոտեցավ Ինդրան: Վահագնը նրան տվեց մի կայծ-նետ, որ հազար ու մի գույներով փայլում

էր առավոտյան արևի տակ: Աստվածամայր Անահիտը օրհնեց Ինդրային: Ապա Ինդրան իր հուժկու բազուկներով ձգեց աղեղը, և կայծ-նետը թռավ երկինք: Իր հետևից բոց արծակելով, նետը սլացավ վերև, ապա թեքվեց ու գնաց դեպի Արևելք:

Ապա Վահագնին մոտեցավ Ջևար: Վերցրեց կայծ-նետը և ստանալով Մայր Անահիտի օրհնանքը, լարեց իր աղեղը: Նրա նետը իր հետևից բոց արծակելով, սլացավ վերև, ապա թեքվեց ու գնաց դեպի Արևմուտք:

Ալանի նետը թռավ դեպի Հյուսիս, իսկ Արեշինը՝ դեպի Հարավ:

Արցույթն ավարտվեց: Արամի որդիները ստացան իրենց ժառանգությունը: Բայց Վահագնին մոտեցավ պատանի Թորգոմը և ասաց.

- Ո՛վ, Ջորությունների Արքա՛, թույլ տուր ես էլ իմ աստվածային զորությունը ստուգեմ և ինքս համոզվեմ, որ արժանի ժառանգն եմ երկրային աստված Արիի և իրական առաջնորդը Արարատյան աշխարհի:

Վահագնը հավանեց Թորգոմի խոսքերը ու նրան էլ տվեց մի կայծ-նետ: Թորգոմը ծնկի իջավ Մայր Անահիտի առաջ: Մայր Անահիտը համբուրեց նրա ճակատը և իր մայրական օրհնանքը տվեց:

Պատանի էր Թորգոմը, բայց զորավոր էր: Նա լարեց իր լայնալիճ աղեղը: Նետը սլացավ երկինք, գնաց ուղիղ վերև: ԵՎ ապա շատ բարձր երկնքում նետը պայթեց և հրացայտ հրավառությամբ տարածվեց Արարատի վրա ու բազմազույն ծիածանով օղակեց երկինքը:

Բոլորը ցնծում էին, շնորհավորում էին Թորգոմին՝ փառաբանում նրա զորությունը:

ԵՎ Վահագնը ասաց.

- Ո՛վ, սքանչելի Թորգոմ, դու իրոք արժանի ժառանգն ես երկրային աստված Արիի, և ես ինքս իմ Աստվածային Ջորությամբ քո ձախ բազկին դնում եմ խաչ-պատերազմին, որ լինես անպարտելի առաջնորդ Արարատյան աշխարհի:

Արամի որդիները իջան Մասիսից, հավաքվեցին հոր մոտ, ստանալու նրա հայրական օրհնանքը: Արամը խարույկ

վառեց, զոհ մատուցեց Աստվածներին: Ապա խարույկից չորս օջախ վառեց, հանձնեց որդիներին ու ասաց.

- Հայր Արայի կամքով է, զավակներս: Դուք ստացել եք ձեր ժառանգությունը և գնացեք ձեր նետերի ետևից: Ձեզ հետ տարեք հայրական օջախի այս կրակը և դրանով վառեք ձեր օջախները: ԵՎ քանի դեռ այս կրակը կվառվի այնտեղ, դուք հոգեպես կապված կլինեք հայրական օջախին՝ Արարատին, մշտապես կսնվեք նրանից և անվերջ կնորոգեք ձեր մեջ արիական որակները: Ձեր սերունդները Հարաբերական Ցամաքում նորանոր Արի Ազգեր կկազմեն, որոնք միայն բնական ճյուղերն են Արի Ցեղածառի, որի Արմատը Արարատում է: ԵՎ Հայր Արայի կամքը որպես պատվիրան փոխանցեք ձեր սերունդներին՝ երբեք կեղտաջուր չլցնեն իրենց Ցեղածառի Արմատին, քանզի միայն Արմատով են կենդանի ճյուղերը:

Արամի որդիները իրենց երդումը տվեցին, երկրպագեցին Հայր Արային ու Անմահ Աստվածներին, խոնարհվեցին իրենց նախնյաց ոգիներին և ընտանիքներով գնացին իրենց ուղղությամբ: ԵՎ ամեն տոհմից հազար այր ու հազար կին հետևեցին ամեն մեկին:

Հարաբերական Ցամաքում բազմացան Արամի որդիների սերունդները և նորանոր Արի Ազգեր կազմեցին: Իսկ Արարատին տեր ու պահապան եղան Թորգոմի սերունդները:

ՍԼԱԿԸ

Բուրավետ ու հիասքանչ դաշտ էր փռված բարձր լեռների միջև: Իսկ դաշտի միջով հոսում էր պարզաջուր Արածանին, որի ափերը ծածկված էին բազմագույն վարդերով: Այդ տեղը առանձնապես գեղեցիկ էր առավոտ կանուխ, երբ արևի առաջին ճառագայթները ընկնում էին գետի ջրերին և բեկվելով, ոսկեգօծ անձրևի պես թափվում էին ծաղիկների վրա:

Օրվա հենց այդ պահին Աստղիկ Աստվածուհին իջնում էր Արարատ, մտնում էր գետը և իր աստվածային լոզանքն էր ընդունում: Ջրի զովությունը խառնվում էր հրաշագեղ ծաղիկների ու վարդերի բույրին և անրջային երանություն պարգևում Աստղիկին:

Շատ և շատ պատանիներ մոտակա գյուղերից, շատ և շատ պատանիներ հեռավոր վայրերից հավաքվում էին այդտեղ և գետից ոչ հեռու աճող փարթամ թփերի ետևում թաքնվելով, դիտում էին Աստղիկին: Աստղիկը իր աստվածային գեղեցկությամբ սեր էր բորբոքում մատաղ սրտերի մեջ:

ԵՎ պատանիները, մոռացած ամեն ինչ, օրերով չէին հեռանում գետի ափից: Գիշերները խարույկ էին վառում և խարույկի շուրջ հավաքված, սիրավառ երգեր էին հյուսում Աստղիկի համար՝ մեկը մյուսից հոգեթով, մեկը մյուսից սիրատենչ: Իսկ առավոտյան արշալույսին նրանք գրավում էին իրենց դիրքերը թփերի ետևում և անհամբեր սպասում, թե երբ Աստղիկն իր աստվածային գեղեցկությամբ կերևա գետի ջրերի մեջ:

Աստղիկը զգաց պատանիների սիրատոչոր հայացքները, շիկնեց ամոթից և վարդագույն մշուշով պատեց իր շուրջը: Ո՛ւ ալևս ոչ ոք չէր կարող տեսնել նրան: Երկար սպասում էին պատանիները հույսով, որ մշուշը կցրվի, և

նրանք նորից կտեսնեն Աստղիկին: Բայց անցնում էին օրեր, ամիսներ, և մշուշը չէր ցրվում:

Պատանիները, հույսները կտրած, սկսեցին հեռանալ գետի ափից, Արի տոհմերի մեջ իրենց բախտը որոնելու: ԵՎ միայն մեկը, որի անունն էր Սլակ, համառորեն մնում էր գետի ափին: Սլակը Մանի տոհմից Արամի եղբոր թոռն էր: Տառապում էր պատանի Սլակը Աստղիկի սիրուց և համառորեն սպասում էր:

Հիացավ Աստղիկը պատանի Սլակի սիրո զորությամբ և որոշեց վարձատրել նրա սերը:

Լեռնային գյուղերից մեկում մի աղջիկ կար, անունը Հուրիկ: Գեղեցիկ էր նա և քնքուշ: ԵՎ մի գիշեր Հուրիկը իր երագում Վահագնին էր տեսել ու սիրել էր նրան: Օր ու գիշեր քուն չունեի Հուրիկը, երագում էր Վահագնին: Ամեն առավոտ վաղ արշալույսը առաջինն էր դիմավորում նա, հույս ունենալով տեսնել Վահագնին: ԵՎ աղոթում էր Հուրիկը, աղոթում էր Աստղիկին, որ Աստղիկը սեր արթնացնի Վահագնի սրտում, որ գոնե միայն երևա իր երագում: Աստղիկը լսում էր Հուրիկի խնդրանքը, խղճում էր նրան, բայց ինչպե՞ս օգներ:

ԵՎ ահա Աստղիկի գլխում մի միտք հղացավ. «Հուրիկը ինձ է նման, Սլակն էլ՝ Վահագնին»: ԵՎ նա գնաց Հուրիկի մոտ:

- Զքնաղ Հուրիկ,- ասաց Աստղիկը,- ես վաղուց էի լսել քո սիրո խոստովանությունը, բայց օգնել չէի կարող: Հիմա եկ ինձ հետ, և դու կտեսնես քո սրտի Վահագնին:

Ուրախացավ Հուրիկը ու հետևեց Աստղիկին: Նրանք եկան հասան Թորգոմա դաշտ, կանգնեցին գետի ափին: ԵՎ Աստղիկը ասաց.

- Ամեն արևածագին ես այս ջրերի մեջ լողանք էի ընդունում: Երջանկաբեր երանություն է պարգևում այս ջուրը: Արևի առաջին ճառագայթներով դու մտիր ջուրը:

Մոտենում էր արշալույսը: Հուրիկը մտավ ջուրը: Աստղիկը մշուշը ցրեց նրա շուրջը և ինքը անհետացավ: ԵՎ Աստղիկն այլևս երբեք չեկավ այդ գետում լողանալու:

Առավոտյան արշալույսին Սլակը թաքնվեց թփերի ետևը և հայացքն ուղղեց գետի ջրերին: Երբ արևի առաջին

Ճառագայթներն ընկան ջրի վրա, Սլակը տեսավ, որ մշուշն անհետացել է, գետի ջրերի մեջ լողանում է իր սրտի Աստղիկը և իր ամբողջ գեղեցկությամբ շողում է արևի ներքո:

Սլակը խանդավառվեց, խենթացավ ի տես Աստղիկի: Էլ չհամբերեց, նետվեց ալիքների մեջ, իր բազուկներով աքցանեց նրան ու հանեց ափ:

Չքնաղ Հուրիկը չընդդիմացավ. սիրով ընդունեց իր առևանգումը, քանզի Սլակը շատ էր նման Վահագնին, ում տեսել էր երագում և ում սիրուց այրվում էր նա:

Սլակը Հուրիկի մեջ Աստղիկին էր տեսնում և սիրում նրան: Հուրիկն էլ Սլակի մեջ Վահագնին էր տեսնում և սիրում նրան: ԵՎ այդ սիրով նրանք ամուսնացան: Նույն գետի ափին էլ տուն շինեցին: ԵՎ այդ տեղը Սլակն անվանեց Մուշ:

Շատ զավակներ ու թռռներ ունեցան Սլակն ու Հուրիկը: Սլակի թռռները իրենց նահապետի անունով կոչվեցին Սլկունիներ:

Վահագնյա հուրը կար Սլկունի քաջ պատանիների մեջ: Աստղիկի սիրո շոյանքը կար Սլկունի հեզ աղջիկների մեջ: Շատ և շատ Արի տոհմերի հետ խնամություն էր անում Սլկունի տոհմը՝ աղջիկ առնում, աղջիկ տալիս:

Հայր Արայի կամքով և Մայր Անահիտի հովանավորությամբ մեծացավ ու զորացավ Սլկունի տոհմը և տեր եղավ ամբողջ այդ դաշտին, որ հետագայում կոչվեց Տարոն:

ԹՈՐԳՈՄԸ ԵՎ ԱՐԵԳՆԱԶՆ

Արարատի հարավային կողմերից գուժկան եկավ Արամի մոտ և հայտնեց.

- Ո՛վ, Մեծդ Արամ, գիտցած եղիր, որ սև անապատներից մի վիթխարի վիշապ-օձ է հայտնվել մեր սարերում, աղբյուրների ակն է բռնել և ջուր չի տալիս. Չորանում են արտերն ու այգիները, կոտորվում են անասուններն ու վայրի գազանները, ծարավից նվաղում են Արիները: Շատ զորավոր է այդ վիշապ-օձը, և ոչ մի ուժ չի կարող նրան հաղթել: Մի ճար գտիր՝ փրկելու մեզ այդ ահավոր չարիքից:

Արամը դիմեց Թորգոմին և ասաց.

- Որդիս, դու պիտի ժառանգես իմ թագավորությունը և պիտի լինես Արարատյան Արիների՝ Հայգ Արմենների առաջնորդը: Այսօր ժամն է քո զորությունը դնես նրանց պաշտպանությանը:

- Հայր իմ,- ասաց Թորգոմը,- քո կամքը Արայից է և քննության ենթակա չէ: Ես գնում եմ կռվելու այդ վիշապ-օձի դեմ: Թե Ամենագոր Վահագնը հովանավորի ինձ, ես կսպանեմ վիշապ-օձին և կհաստատեմ Արմեններին առաջնորդելու իմ իրավունքը: Իսկ եթե արժանի չլինեմ Վահագնի հովանավորությանը, ես կսպանվեմ և Արմեններին կազատեմ գաճաճ կառավարող ունենալու դժբախտությունից:

Արամը օրհնեց Թորգոմին, զոհ մատուցեց Աստվածներին ու դիմեց Վահագնին.

- Ո՛վ, դու Վահագն Ամենագոր, ծանր կռվի է գնում Թորգոմը: Պատանի է նա և անփորձ, վիշապ-օձը զորավոր է և խորամանկ: Պատանի Թորգոմի հետ եղիր, հովանավորիր նրան և հաղթանակով պսակիր նրա սուրը:

Պատանի Թորգոմը իր հրեղեն ձիով սլացավ Արարատի հարավային կողմը: Առավոտյան դուրս եկավ

Հավերժական Քաղաքից և երեկոյան հասավ աղետի վայրը: Տխուր տեսարան բացվեց նրա առաջ՝ չորացած ծառեր, խանձված բուսականություն, իսկ Արիները ծարավից թուլացած, սպասում էին լուսաբացին, որ մի կույս աղջիկ գոհեյով, մի քիչ ջուր ստանան վիշապ-օձից:

Բնակավայրից ոչ հեռու, խանձված դաշտում պառկեց Թորգոմը՝ գիշերը հանգստանալու, որ առավոտյան կռվի վիշապ-օձի դեմ: Երկնքից անթիվ աստղեր աչքով էին անում նրան: Թորգոմը զգաց, որ հայրենի երկնքի աստղերը հավատում են իր հաղթանակին: Իսկ աստղերի հետևից հենց ինքը՝ Վահագն էր ժպտում իրեն: Երանության մեջ Թորգոմը փակեց աչքերը: Իսկ հեռվից՝ երկնի խորքից լսվում էր Վահագնի ձայնը. «Երկրային աստված պատանի Թորգոմ, ես քեզ հետ եմ, և դու կհաղթես վիշապ-օձին»: ԵՎ հանգիստ քնեց Թորգոմը մինչև լուսաբաց:

Առավոտյան Թորգոմն արթնացավ մեծ աղմուկից: Մի մեծ թափոր շարժվում էր դեպի լեռները: Իսկ թափորի առջևից քայլում էր մի դեռատի աղջիկ: Աղջիկը լուռ, հնազանդ քայլում էր առաջ: Նա չէր ընդդիմանում, չէր բողոքում, չէր աղերսում, քանի որ վիճակը իրեն էր ընկել: Աղջիկը հրաշք գեղեցկություն ուներ: ԵՎ Թորգոմը շատ վշտացավ, որ այդ արեգնազ գեղեցկուհին պիտի բաժին հասներ վիշապ-օձին:

Թորգոմը լուռ հետևում էր թափորին: Թափորը բարձրանում էր լեռները: Լեռների մեջ մի մեծ լերկ ժայռ էր ցցված: Չհասած այդ ժայռին, թափորը կանգ առավ, իսկ աղջիկը անջատվեց թափորից ու գնաց կանգնեց ժայռի տակ:

«Այս գեղուհու դեմքին շատ ավելի ժպիտը կսազեր», - մրմնջաց պատանի Թորգոմը և ձին խթանելով, գնաց կանգնեց աղջկա կողքին:

Մի ահեղ ոռնոց լսվեց, ցնցվեց հողը, և վիթխարի վիշապ-օձը դուրս եկավ ժայռի հետևից:

- Հացն ու գինին, տեր կենդանին, - կանչեց Թորգոմը և սուրը պարզած, հարձակվեց վիշապ-օձի վրա:

Մեծագույն մենամարտ սկսվեց պատանի Թորգոմի ու ահեղ վիշապ-օձի միջև: Երկիրն էր ցնցվում, փոշին ծածկել էր արևի դեմքը:

Երկար էին կռվում Թորգոմն ու վիշապ-օձը: Ջորավոր էր Թորգոմը, բայց անփորձ էր՝ նա գրոհում էր դիմացից: Խորամանկ ու ճկուն էր վիշապ-օձը՝ խուսափում էր առճակատ կռվից և փորձում էր թիկունքից հարվածել Թորգոմին:

Աղջիկը տեսավ Թորգոմի գորուջուները և նրա թիկունքում իրեն ապահով զգաց: ԵՎ նա դիմեց Աստղիկ դիցուհուն.

- Օ՛, Դիցուհի՛դ՝ մաքրամաքուր, դո՛ւ, որ սերն ես գորուջան, իմ կուսական սերը փոխանցիր պատանի Թորգոմին, նրա սիրտը բորբոքիր իմ սիրո կրակով, և թող իմ սերը գորացնի նրան և նրա բազուկը հաղթությամբ կռի:

Լսեց Աստղիկը գեղուհու աղերսը և նրա սերը փնջելով, զգեց Թորգոմի վրա:

Բոցավառվեց Թորգոմը, նրա պատանի սիրտը հրդեհվեց սիրո կրակով: Նայեց աղջկան, թունդ առավ և մի հուժկու զարկ տվեց վիշապ-օձին: Օձը երկու կտոր եղավ. մի կտորը սարի մի լանջով գլորվեց ցած, մյուս կտորը՝ մյուս լանջով: ԵՎ հորդաց ջուրը լեռներից ու գահավիժեց ցած:

Ցնծում էին Արիները, ազահորեն խմում էին ջուրը և փառաբանում էին Թորգոմին ու Ջորուջան Աստված Վահագնին: Իսկ աղջիկը փարվել էր Թորգոմի կրծքին ու երջանկությունից ժպտում էր:

- Անունդ ի՞նչ է, գեղեցիկ աղջիկ, - հարցրեց Թորգոմը:

ԵՎ աղջիկը պատասխանեց.

- Իմ անունը մոռացել եմ արդեն: Ինձ բոլորը Ջոհ էին ասում այս գիշեր: Իսկ հիմա, որ դու վերածնեցիր ինձ, ինքդ էլ կնքիր իմ անունը:

- Քո ժպիտը արեգնագ է, - ասաց Թորգոմը, - և ես քեզ Արեգնագ կանվանեմ:

Թորգոմը վերադարձավ Հավերժական Քաղաք: ԵՎ Արամը խնամախոսներ ուղարկեց՝ գեղեցիկ Արեգնագի ձեռքը խնդրելու Թորգոմի համար:

Արեգնագի հայրը ասաց.

- Թորգոմը Հայր Արայի կամքով տերն է իմ աղջկա կյանքի, և իմ աղջիկը նրան է պատկանում: Բայց ես շատ վաղուց ուխտ եմ արել, և եթե ես իմ կամքով տամ աղջկաս,

ուխտադրուժ կլինեն, որ վայել չէ երկրային աստծուն: Տեսնո՞ւմ եք հեռվում փռված հսկայական գորշ տարածքը: Մեծ Ջրհեղեղից առաջ դա ծաղկավետ դաշտ էր, և միջով էլ գետ էր հոսում: Հիմա դա անբողջությամբ աղուտ է, և ոչինչ չի աճում այնտեղ: ԵՎ ես ուխտել եմ իմ աղջկան տալ նրան, ով այդ աղուտը նորից կվերածի ծաղկավետ դաշտի:

Խնամախոսները վերադարձան ու Արամին հայտնեցին աղջկա հոր խոսքերը:

- Արդար է նա, - ասաց Արամը, - աստվածը ուրիշ աստծո ուխտը նույնպես պիտի հարգի:

ԵՎ պատվիրեց Թորգոմին այդ գորշ աղուտը վերածել ծաղկավետ դաշտի:

Թորգոմը գնաց, հասավ աղուտին: Նայեց շուրջը և տխրեց: «Ծաղկավետ Արարատում այս անապատն ի՞նչ գործ ունի», - ասաց նա: Ապա գոհ մատուցեց, փառաբանեց Հայր Արային և անմահ Աստվածներին և օգնություն խնդրեց նրանցից:

ԵՎ ճարտարագետ Տիրը հայտնվեց նրա մոտ:

- Ո՛վ, ազնիվ Թորգոմ, - ասաց Տիրը, - Հայր Արայի կամքով եմ եկել քեզ մոտ: Լսիր իմ պատվերը: Գետի հունը վաղուց ծածկված է չորացած տիղմով: Մաքրիր գետի հունը տիղմից, ապա բարձրացիր լեռները, գտիր ջրի ակունքը և այնտեղից ջուրը ուղղիր այդ հունի մեջ:

Տիրի օգնությամբ Թորգոմը գտավ գետի հունը: Կանչեց շրջակայքում բնակվող Արիներին: Շատ շատերը եկան և Թորգոմի հետ մաքրեցին գետի հունը: Ապա Թորգոմը բարձրացավ լեռները, գտավ ջրի վտակները, որ գետնի տակ էին գնում: Այդ վտակները ուղղեց դեպի գետի հունը: Ջուրը եկավ, և գետը վարարեց:

Տիրը հավաքեց արևի ճառագայթները, խառնեց դրանք ու փոշի դարձրեց: Փոշին շաղ տվեց հողի վրա, և հողը մաքրվեց աղից:

ԵՎ Թորգոմը դիմեց Աստղիկին.

- Օ՛, Դիցուհի՛դ՝ Վարդամատն՝ չքնաղ Աստղի՛կ, այս դաշտի վրա Արարատյան բազմազան ու բազմագույն ծաղիկներ ու վարդեր ցանիր:

ԵՎ Աստղիկը բազմագույն ու բազմաբույր ծաղիկներ ու վարդեր շաղ տվեց, և անմիջապես դաշտը ծփաց աստվածային ծաղիկներից ու վարդերից:

Հավաքվեցին մոտիկ ու հեռու բնակավայրերից հազարավոր Արիներ, ուրախացան, խնջույք սարքեցին, փառաբանեցին Հայր Արային ու Անմահ Աստվածներին, փառաբանեցին նաև Թորգոմին ու այդ դաշտն անվանեցին Թորգոմա դաշտ:

ԵՎ Արեգնագի հայրը, իր ուխտի համաձայն օրհնեց իր աղջկան ու տվեց Արամի որդուն: Մեծ հարսանիք սարքեց Արամը և պսակեց Թորգոմին ու Արեգնագին:

Յոթ օր, յոթ գիշեր տևեց հարսանիքը: Յոթ օր հետո Արամը մեծ գոհ մատուցեց, փառաբանեց Հայր Արային, Անմահ Աստվածներին և սուրբ նախնիներին: Ապա Թորգոմին հանձնեց իր հորից ժառանգած թուր-կեծակին, նրան արքա կարգեց Արարատյան աշխարհին, և նույն օրը Արամը մեռավ: ԵՎ նա, որ հուր էր, հուր դարձավ:

ԹՈՐԳՈՄՆ ՈՒ ՄԵՍՐԱՅԻՄԸ

Հենց որ իմացավ՝ էլ Արամ չկա, տիտանյան Մեսրայիմը մեծ զորք հավաքեց ու եկավ կանգնեց Արարատի սահմանին: Գուժկան եկավ Թորգոմի մոտ և հայտնեց, որ տիտանյան Մեսրայիմը գալիս է կռվելու նրա հետ:

Թորգոմը իր սակավաթիվ զորքով գնաց Մեսրայիմի դեմ: ԵՎ հենց սահմանին, որ բաժանում է Արարատը Խավարի թագավորությունից, հանդիպեցին իրար:

ԵՎ Թորգոմը ասաց Մեսրայիմին.

- Ո՛վ, տիտանյան արքա՛, ինչո՞ւ ես զորքդ հավաքել եկել իմ վրա: Ի՞նչ ես ուզում: Թե լույսն է պակաս քո երկրում, լույս տամ քեզ. ստեղծումն է պակաս, ստեղծում նվիրեմ. ծաղիկ ես ուզում աճեցնել, բազմերանգ ծաղիկներ ընծայեմ: Ասա, ի՞նչ ես ուզում:

ԵՎ Մեսրայիմը ասաց.

- Ո՛վ, երկրային աստվածների արքա՛, ինձ լույս պետք չէ, ես խավարն եմ երկրպագում. ինձ ստեղծում պետք չէ, ես ավերումի ծարավը ունեմ. ինձ ծաղիկ պետք չէ, ես փուշ ու տատասկի բուրմունքով եմ արբենում:

ԵՎ Թորգոմը ասաց.

- Ո՛վ, Մեսրայիմ, քո ուզածը հենց քո երկրում է, և իզուր ես արշավում Արարատ, այստեղ քո ուզածները չկան:

Ծիծաղեց Մեսրայիմը Թորգոմի միամտության վրա.

- Քաջ ես դու, ո՛վ, Թորգոմ, բայց խակ ես և դեռ չես հասել արարչական իմաստությանը: Դու աստված ես, ես՝ տիտան, դու Հայզ ես, ես՝ Ադամ, դու Արի ես, ես՝ Չարի: ԵՎ Արայի կամքով քո դերն է արարելը, կերտելը, իսկ իմ դերն է քանդելը, ավերելը:

ԵՎ Թորգոմը ասաց.

- Մեսրայիմ, թե Արարիչը մեզ տարբեր դերեր է տվել, միաժամանակ էլ մեզ տարբեր Հողեր է հատկացրել: Մենք

մեր դերը կատարում ենք Արարատում, դուք ձեր դերը կատարում եք Անապատում: Ես դեր չունեմ քո Անապատում, դու էլ դեր չունես իմ Արարատում:

- Իմաստուն չես դու, ո՞վ, քաջդ թորգո՞ւմ, - ասաց Մեսրայիմը, - իմ Անապատում ես ի՞նչը ավերեմ, երբ այնտեղ արարում չկա: Արարումը Արարատում է, և միայն Արարատում ես կարող եմ ավերել արարումը: ԵՎ ես եկել եմ կռվելու քեզ հետ: Թե ես զորավոր լինեմ, կնվաճեմ Արարատը և իմ Աստված Վիշապի հովանավորությամբ ավեր և խավար կսփռեմ այնտեղ: Իսկ եթե դու զորավոր լինես, կնվաճես իմ Անապատը և քո Աստված Վահագնի հովանավորությամբ լույս և արարում կսփռես այնտեղ:

- Մեսրայիմ, - ասաց թորգոմը, - ինձ քո հողը պետք չէ: Եթե խավարն է երջանկացնում ձեզ, ապրեք խավարով ձեր Հողի վրա: Ես կկռվեմ միայն իմ Հողի համար, իմ Արարատի համար, որ ժառանգել եմ իմ նախնիներից և պիտի փոխանցեմ գալիք սերունդներին նույնպես լուսավոր, շեն ու ծաղկավետ: Ես կկռվեմ, որ իմ Աստված Վահագնի հովանավորությամբ իմ Արի Ցեղը Արարատում անվերջ արարի:

- Ինչպե՞ս կռվենք, - հարցրեց Մեսրայիմը:

- Մեսրայիմ, - ասաց թորգոմը, - երկու կողմից էլ բազում քաջեր մեզ են նայում: Բայց նրանք շատ ջահել են և սիրո կարոտ: Եկ նրանց սերը մահով չկնքենք, և թե համաձայն ես՝ մենամարտենք երկուսով:

Մեսրայիմը նայեց իր զորքին՝ շատ էին իր զինվորները, ուրախացավ: «Իմ զորքը կհաղթի, - խորհեց նա, - զորքով կռվենք»: Ապա նայեց Արի քաջերին՝ քիչ էին նրանք, բայց ամեն մեկի աչքերից կայծեր էին ցայտում, և ընկճվեց նա: «Արի քաջերը զորավոր են, - մտքում ասաց նա, - զորքով չկռվենք»: ԵՎ ասաց Մեսրայիմը.

- Եկ մենամարտենք:

- Ինչո՞վ մենամարտենք, - հարցրեց թորգոմը, - սրո՞վ, թե՞ նետով, գուրգո՞վ, թե ձեռքով: Ընտրությունը քեզ եմ թողնում:

Մեսրայիմը նայեց թորգոմին, նրա կեժակի թրին, երկաթե գուրգին, սաստիկ երկյուղեց ու մտքերի մեջ ընկավ.

«Թե սրով կռվենք՝ նրա կեծակի թրից փրկություն չունեն, թե նետով կռվենք՝ նա ջահել է ու սրատես, թե գուրգով կռվենք՝ շատ ծանր է նրա գուրգը: Ձեռքով կռվելիս գուցե խուսափեմ մահից»: ԵՎ ասաց:

- Թորգոմ, երկուսս էլ դյուցազուն ենք, եկ ձեռքով կռվենք:

ԵՎ Թորգոմն ու Մեսրայիմը կպան իրար: Հողը հերկվում էր նրանց ոտքերի տակ, փոշին երկինքն էր ծածկել, և ոչինչ չէր երևում շուրջը: Ձուռում էին իրար հսկաները, և նրանց ահեղ մռունչը տարածվում էր շատ հեռուները: ԵՎ աշխարհն էր դողդուլում նրանց կռվից: Արիներն իրենց երկրում ասում էին. «Ամպրոպն է ժայթքում հեռու երկնքում»: Չարիներն իրենց երկրում ասում էին. «Երկրաշարժից սարերն են փլում»:

Երեք ցերեկ, երեք գիշեր կռվում էին նրանք և չէին կարողանում հաղթել իրար: Ինչ Թորգոմն էր՝ ուժեղ էր, ինչ Մեսրայիմն էր՝ խորամանկ էր, ֆանդով էր:

Չորրորդ օրը Մեսրայիմը զգաց, որ նվազում են իր ուժերը, իսկ Թորգոմը ավելի է գորանում, և ասաց.

- Կանգ առ, ո՛վ, Թորգոմ, սա քո հունարը չէր, որ անպարտելի ես. սա քո Աստված Վահագնի Ջորությունն է, որ քո մեջ է մտել:

- Այո, - պատասխանեց Թորգոմը, - բայց դա էլ քո հունարը չէր, որ օձի պես գալարվելով, ազատվում էիր իմ բազուկներից. քո մեջ քո Աստված Վիշապի խորամանկությունն ու ճկունությունն է մտել:

- Եթե այդպես է, - ասաց Մեսրայիմը, - ուրեմն երկուսս էլ չենք կարող հաղթել իրար: Եկ հաշտվենք. ես փառաբանեմ իմ Աստծուն, դու՝ քո Աստծուն և եղբայրանանք ու եղբայրության ուխտ կնքենք՝ թե ես շուտ մեռնեմ, դու պաշտպանես իմ ընտանիքը, թե դու շուտ մեռնես՝ ես հովանավորեմ քո ընտանիքը:

Ձեռք ձեռքի տվին, երդվեցին իրենց նախնիներով ու եղբայրության ուխտ կնքեցին: Միամիտ էր Թորգոմը, և անկեղծ էր նրա հաշտությունը: Խորամանկ էր Մեսրայիմը, և կեղծ էր նրա եղբայրությունը:

Թորգոմը վերադարձավ Հավերժական Քաղաք: Նա ինքը շատ գոհ էր իր արածից և համոզված էր, որ աստվածահաճ գործ է արել: ԵՎ մեծ խարույկ վառեց, գոհ մատուցեց, փառաբանեց Հայր Արային, Անմահ Աստվածներին և իր սուրբ նախնիներին: ԵՎ զարմացավ, երբ տեսավ, որ ոչ մի Աստված և ոչ մի նախնի չմասնակցեց իր զոհաբերությանը: Հասկացավ Թորգոմը, որ Աստվածները չեն ընդունում իր մատաղը: Վշտացավ նա և մտքերի մեջ ընկավ: ԵՎ Մայր Անահիտը հայտնվեց նրա դիմաց: Թորգոմը ծնկի իջավ Մայր Անահիտի առաջ և ասաց.

- Օ՛, Մայր իմ, ասա ինձ՝ ի՞նչ մեծ սխալ եմ գործել, որ Աստվածները չընդունեցին իմ մատաղը. չէ՞ որ ես անարյուն հաշտություն կնքեցի:

- Ո՛չ, զավակս, - ասաց Մայր Անահիտը, - դու խաբվեցիր Մեսրայիմից և արյան ուխտ կնքեցիր: Գիտցի՛ր, որ խորամանկությունը Չարիների արժանիքն է և միակ հաղթական զենքը Արիների դեմ: Հենց այդ զենքով դու պարտվեցիր: ԵՎ քո կնքած ուխտի ուժով տիտանյան բազում սերունդներ հենց քո արյունով քո դեմ են կռվելու:

Հոգեկան խռովքի մեջ ընկավ Թորգոմը: Նա խորհում էր, թե ինչպես իր Ցեղը պաշտպանի իր ուխտից: Ինչ զորությունն է՝ դա իր արժանիքն էր, և նա ամրակուռ բերդեր էր կառուցում: Բայց տիտանյան խորամանկության դեմ ամրոց կառուցել նա չկարողացավ:

ԹՈՐԳՈՄԸ ԵՎ ՏԻՏԱՆՅԱՆ ԽԱԹՈՒՆԸ

Շատ ժամանակ չանցած Մեսրայիմը մեռավ: Մեռնելուց առաջ իր մոտ կանչեց իր կնկան՝ տիտանյան Խաթունին և ասաց.

- Լսիր, կնիկ, ես քեզ եմ հաղորդում մեր Աստված Վիշապի կամքը: Վիշապի կամքով տիտաններին մեծ առաքելություն է տրված՝ խավարով պատել Արարատը և անապատի վերածել այն: Բայց աստվածները զորավոր են իրենց Վահագնով: ԵՎ աստվածների դեմ իրենց արյունով պետք է կռվել միայն:

Մեսրայիմի մահից հետո միտք արեց Խաթունը. «Մարդ ճամփեմ Թորգոմի մոտ, թող գա ինձ հյուր լինի, թող պառկի իմ սենյակում, և ես նրանից մի կտրիճ տղա ունենամ»: Նա երկու փահլևան ուղարկեց Արարատ և նրանց մի գիր տվեց, որ հանձնեն Թորգոմին:

Փահլևանները գտան Թորգոմին և նրան հանձնեցին Խաթունի գիրը: Խաթունը գրել էր. «Թե դու աստված ես՝ աստվածային երդումիդ հարազատ եղիր. եկ ու տիրություն արա ինձ, ինչպես ուխտել ես ժամանակին»:

Մտքերի մեջ ընկավ Թորգոմը: Չգիտեր ինչ անի: Բայց երդվել էր և իր երդումը չէր կարող դրժել: ԵՎ Թորգոմը ասաց կնկան.

- Կնիկ, տիտանյան Խաթունը գիր է ուղարկել և ինձ կանչում է Անապատ: Երևի նա նեղն է ընկել, և ես պիտի գնամ:

Արեգնազը ասաց.

- Թորգոմ, մի՛ գնա: Այդ Խաթունը խորամանկ է օձի պես, նա քեզ կխաբի: Նա քո զորությունն է ուզում, նա քեզանից որդի է ուզում:

Թորգոմը հիշեց Աստվածամայր Անահիտի խոսքերը և հասկացավ, որ Խաթունը իր արյունն է ուզում, որ հետո իր դեմ հանի: Հասկացավ Թորգոմը, բայց ուխտ էր արել և դրանից էլ հրաժարվել չէր կարող:

Գիշերները չէր քնում Թորգոմը ու ելք էր որոնում: Նա դիմեց Հայր Արային՝ պատասխան չստացավ: Դիմեց Վահագնին՝ պատասխան չստացավ: Դիմեց Մայր Անահիտին, և Մայր Անահիտը լսեց նրա ձայնը և հայտնվեց նրա առաջ:

- Մայր Անահիտ,- ասաց Թորգոմը,- տիտանյան
Խաթունը ինձ է կանչում: Պիտեմ՝ նա արյուն է ուզում
ինձանից: Ասա, ի՞նչ անեմ:

- Ջավակս,- պատասխանեց Անահիտը,- դու խաբվել
ես արդեն խորամանկ Մեսրայիմից և աստվածային երդում ես
տվել: Խաթունը նույնպես խաբում է քեզ: Բայց դու կապված
ես քո երդումով և չես կարող երդմնազանց լինել: Դա է կամքը
Հայր Արայի:

- Մայր,- ասաց Թորգոմը,- մի՞թե Հայր Արան չի կարող
ազատել ինձ իմ ուխտից:

ԵՎ Անահիտը ասաց.

- Ո՛չ, որդիս, Հայր Արան սիրում է քեզ, բայց գիտցի՛ր,
որ Արայի հաստատած օրենքները բացարձակ են, և նույնիսկ
ինքը՝ Արան, չի կարող խախտել: Այնպես որ դու պիտի գնաս:
Գնա՛, պաշտպանի՛ր Խաթունին տիտանյան իշխանների
հալածանքներից, բայց լսի՛ր իմ պատվերը, որ Արայից է
գալիս՝ չմտնես Խաթունի սենյակը: Միայն դրանով դու
կազատվես քո ուխտի ծանրությունից:

Թորգոմը խոստացավ չիջնել իր ձիուց և գնաց
Խավարի Թագավորություն:

Տիտանյան Խաթունը մեկ ժամվա ճանապարհ գորգեր
էր փռել, մոմեր վառել, ինքն էլ զուգվել, իր տան
պատշգամբին սպասում էր Թորգոմին: Տեսավ, որ հեռվից մի
ծիավոր է գալիս: Հասկացավ, որ Թորգոմն է, ուրախացավ:

Թորգոմը եկավ հասավ, բարև տվեց և ասաց.

- Տիտանյան Խաթուն, ես իմ աստվածային երդմամբ
եկել եմ քեզ մոտ, կանչիր այստեղ քո բոլոր իշխաններին, և
ես կզսպեմ նրանց:

- Վա՛հ,- ասաց Խաթունը,- դու հոգնած ես երկար
ճանապարհից և իմ հյուրն ես, իջիր ձիուց ցած, ներս եկ,
հանգստացիր, նոր միայն զբաղվիր պետական գործերով:

- Ո՛չ,- ասաց Թորգոմը,- ես ուխտ եմ արել, որ ձիուց չեմ
իջնելու ցած, կանչի՛ր իշխաններիդ:

- Թորգոմ,- ասաց Խաթունը,- մի՞թե ես գեղեցիկ չեմ ու
հաճելի:

- Դու գեղեցիկ ես ու հաճելի,- պատասխանեց
Թորգոմը,- բայց իմը չէ քո գեղեցկությունը. դու տիտան ես,

ես՝ աստված, դու Ադամորդի ես, ես՝ Արորդի, դու Չարի ես, ես՝ Արի: ԵՎ իմը Արի կնոջ գեղեցկությունն է:

- Արմեն Թորգոմ,- չնահանջեց Խաթունը,- տիտանյան Ցեղի ամենագեղեցիկ կինն եմ ես: Իջիր ձիուց և տիրիր իմ գեղեցկությանն ու ամբողջ Անապատի Թագավորությանը:

ԵՎ Թորգոմը ասաց.

- Լսիր, տիտանյան Խաթուն, ո՛չ քո օտար հողն է պետք ինձ և ո՛չ էլ քո օտար գեղեցկությունը:

Տեսավ Խաթունը, որ հաստակող է Թորգոմը և ճար չկար նրան ներս բերելու, կանչեց իր իշխաններին: Իշխանները, որ միայն Թորգոմի տեսքից զարհուրում էին արդեն, գլխիկոր կանգնեցին նրա առաջ: Թորգոմը սաստեց նրանց, և նրանք երդվեցին իրենց Աստված Վիշապով՝ հնազանդ լինել Խաթունին:

Իր գործն ավարտած համարելով, Թորգոմը ուզեց հեռանալ, բայց Խաթունը ասաց.

- Ո՛վ, մե՛ծդ աստվածների մեջ, եկ այս հաշտությունը կնքենք մի մի թաս գինիով, և ապա բարի ճանապարհ քեզ:

Մի մի թաս գինի բերեցին տվեցին իշխաններին, իսկ Թորգոմին տվեցին հարյուր տարվա գինի: Հոգնած էր Թորգոմը ու ծարավ: Դավին անտեղյակ, նա խմեց գինին: Հենց որ խմեց, նրա ճակատը բռնեց, գլուխը պտտվեց: Թորգոմին իջեցրին ձիուց և տարան ներս: Ճոխ հյուրասիրություն սարքեցին, խմացրին Թորգոմին ու տարան Խաթունի սենյակը:

Խաթունը Թորգոմից մնաց երեխով: Ինը ամիս, ինը օր և ինը ժամ որ լրացավ, Խաթունը մի տղա ունեցավ և անունը դրեց Բել:

Յոթը տարի տիտանյան Խաթունը Թորգոմին պահեց գինով: Մի օր էլ, երբ Թորգոմը դրսից ներս էր գալիս, դռների մեջ լսեց Խաթունի ձայնը: Խաթունը խաղացնում էր Բելին և ասում. «Քո մերը քեզ մեռնի, տիտանյան արքա, մեծանաս, տիտանների օջախը կանգնացնես, աստվածների օջախը փչացնես»:

Թորգոմը որ լսեց այդ խոսքերը, ուշքի եկավ, ներս մտավ ու ասաց.

- Խաթուն, այդ ի՞նչ խրատ ես տալիս դրան: Նա դեռ ձվից դուրս չեկած, հիմնկվանից դու չարություն՞ւն ես սովորեցնում նրան:

- Իհարկե,- պատասխանեց Խաթունը,- նա Չարիների արքա է լինելու, ուրեմն հիմնկվանից չարություն պիտի սովորի:

- Եթե այդպես է, ես էլ չեմ մնա այստեղ,- ասաց Թորգոմը:

- Դու գիտես, Թորգոմ,- ասաց Խաթունը,- ինձ որդի էր պետք, ժառանգ էր պետք Անապատի Թագավորությանը: Յոթը տարի քեզ գինով տիրում էի ես և քեզանից տղա ունեցա: Հիմա կուզես գնա, կուզես մնա: Թե կմնաս, ես սեր ունեմ դեպի քեզ և սիրող կին կլինեմ. թե կգնաս, իմ օրհնանքը քեզ հետ:

Թորգոմի գինովությունը միանգամից թողեց: Ե՛վ նա ասաց ինքն իրեն. «Ես մեկ օր չէ, որ այստեղ եմ, արդեն յոթ տարի է: Ես խախտեցի Մայր Անահիտին տված իմ խոստումը և տիտաններին իմ արյունով զորացրի»: Ելավ սուս ու փուս ձին հեծավ ու գնաց Արարատ:

Բայց Արիները չուրախացան Թորգոմի վերադարձից, և ոչ ոք չդիմավորեց նրան: Արեգնագն էլ մտավ տուն և պինդ փակեց դուռ ու լուսամուտ:

Ե՛վ Թորգոմը դիմեց Աստվածամայր Անահիտին.

- Օ՛, Մայր Անահիտ, մեծ է իմ մեղքը և աններելի: Իմ ժողովուրդը չի ընդունում ինձ, իմ կինը չի ընդունում ինձ, Աստվածները չեն ընդունում ինձ, ես էլ եմ ինձ մերժում, և միայն մայրական սիրտը չի լքում որդուն՝ նույնիսկ մոլորյալ, նույնիսկ մահապարտ: Օ՛, Մայր, ես ներում չեմ խնդրում, ոչ կյանք, ոչ իշխանություն: Ես միայն մի զավակ եմ ուզում, որ ժառանգի իմ թագավորությունը և պաշտպանի իմ Ցեղը զորացող Բելից:

Աստվածամայր Անահիտը լսեց Թորգոմի ձայնը և հայտնվեց նրա առաջ ու ասաց.

- Որդի՛ս, Հայր Արայի կամքով ես թողություն կտամ Արեգնագին, որ նա քեզ ներս ընդունի: Դու ժառանգ կունենաս, բայց դուք երկուսդ էլ ուխտակոտոր կլինեք ու կմեռնեք:

ԵՎ Թորգոմը ասաց.

- Հավերժության մեջ մի մահը ի՞նչ արժե՝ ոգիացած երազ միայն: Մենք նախնի եղել ենք, նորից նախնի կլինենք և մեր որդու ժառանգների մեջ կրկին կվերածնվենք:

Աստվածամայր Անահիտի պատվերով Արեգնազը բացեց դուռը և Թորգոմին ներս առավ:

Ինը ամիս, ինը օր և ինը ժամ որ լրացավ, Արեգնազը մի տղա ծնեց: Ծնվեց մանուկը արևի լույսով, և արևի լույսն էր նրա աչքերում: ԵՎ Աստվածամայր Անահիտը ինքը հովանավորեց նրա ծնունդը: Առաջինը ինքը գրկեց լուսեղեն մանուկին, նայեց նրան ու բացականչեց.

- Օ՛հ, որքան նման է Հայգ Արիին: ԵՎ թող այս մանկան անունը Հայկ լինի:

ԵՎ Արեգնազը դիմեց Աստվածամայր Անահիտին.

- Ո՛վ, Մայր Անահիտ, դու, որ հովանավորեցիր Թորգոմի որդու ծնունդը և նրան Հայգ Արիի պատվին Հայկ անվանեցիր, քո մայրական գութով քառասուն օր ժամանակ տուր իմ մայրությանը, որ քառասուն օր պահպանեմ Հայկին վնասներից, վարակից, աչքից, ապա օժենք նրա մարմինը Արարատի հազար ու մի ծաղիկների պահպանիչ յուղով և կնքելով նրան, հանձնենք կյանքին ու Անմահ Աստվածների հովանավորությանը:

Աստվածամայր Անահիտը լսեց Արեգնազի աղերսը և քառասուն օր ժամանակ տվեց նրան ու Թորգոմին՝ մինչև Հայկին քառասունքից հանելն ու կնքելը:

ԱՍՔ ԱՐԻ ՀԱՅԿԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԿԻ ԿՆՈՒՆՔԸ

Արեգնազը նորածին Հայկին տեղավորեց առանձին սենյակում, և ոչ ոք չէր կարող մոտենալ նրան: Ավանդաբար եկած խորհուրդ էր դա: Չէ՞ որ ծնվելուց հետո Հայկը կյանքի նոր միջավայր էր մտել, որը շատ էր տարբերվում մայրական ներքին միջավայրից: ԵՎ մայրը զգուշությամբ խնամում էր Հայկին և աստիճանաբար վարժեցնում էր արտաքին ազդակներին: ԵՎ միայն թորգոմն էր մոտենում որդուն և ժամերով հիանում էր նրա արևշող տեսքով ու փարթամ մարմնով:

Օրերը անցնում էին, և ամեն նոր օր Հայկին մոտեցնում էր իրական կյանքին, իսկ ծնողներին՝ մահվան: Արեգնազը թորգոմից թաքուն լաց էր լինում: Նա չէր ողբում իր մոտալուտ մահը՝ նա հավատում էր հավերժությանը, և մահը նրան չէր սարսափեցնում: Նա ողբում էր Հայկի մոտալուտ որբությունը: ԵՎ մտածում էր, թե ինչ հիշատակ թողնի որդուն, որ տխուր պահերին մայրական սփոփանք լինի նրա համար: ԵՎ Արեգնազը մի ծառ տնկեց՝ ծնունդի ծառ:

Քառասուն օրը անցավ: Արդեն պետք էր կնքել Հայկին և հանձնել կյանքին ու Անմահ Աստվածներին: ԵՎ առավոտյան արևով Արեգնազը ճոխ սեղան սարքեց, թորգոմը կանչեց Անմահ Աստվածներին և սուրբ նախնիներին՝ կնքելու փոքրիկ Հայկին: ԵՎ եկան Աստվածներն ու նախնիները, սիրով մասնակցեցին մեծ խնջույքին և վայելեցին արարատյան բարիքներն ու սուրբ զինին:

Թորգոմը փառաբանեց Աստվածներին և ապա դիմեց Արարչին.

- Ո՛վ, Հայր Արա՛, քո զավակները այս սուրբ կնունքի ծեսին հավաքվել են քո արարչական փառքը հյուսելու. քո որդու՝ Հայկի մեջ հաստատելու իր Արի ծագումը, որ քեզանից է գալիս. խնկարկելու նրա անարատ արյունը, որ քեզանից է հոսում նրա երակներում. պայծառացնելու նրա ազնվական դիմագիծը, որ քեզանից է ժառանգել և վեհացնելու նրա մեջ աստվածային զորությունը, որ արտացոլումն է քո էության:

ԵՎ նա փոքրիկ Հայկին ընկղմում է արարատյան հազար ու մի ծաղիկների պահպանիչ յուղով օծված ավազանի մեջ և հանում:

- Ո՛վ, Հայր Արա՛,- շարունակում է Թորգոմը,- ահա Արարատի հազար ու մի ծաղիկների յուղով օծում են մարմինը քո հարազատ զավակի և հանձնում են նրան կյանքին ու քո հայրական հովանավորությանը:

Ապա Արեգնազը գրկում է Հայկին, մոտենում է Աստվածամայր Անահիտին, ծնկի է իջնում նրա առաջ և ասում է.

- Օ՛, Մայր Անահիտ, Մայրը բոլոր Արի մայրերի, երկրային աստված Արիի ծնող, այս սուրբ կնունքով ես քեզ են հանձնում ինձանից ծնված Թորգոմի միակ որդուն: Պահպանիր որք Հայկին, խնամիր նրան և նրա ծնունդի ծառը, որ տնկել են Հայկի ծնունդի առթիվ: ԵՎ թող Հայկը իր տխուր ժամերին այդ ծնունդի ծառի տակ դինջանա, սփոփվի ու երջանիկ երազներ տեսնի քո հովանավորությամբ:

ԵՎ Մայր Անահիտը օծում է Արևխաչը, կախում է Հայկի պարանոցին և ասում է.

- Իմ մայրական սիրով օծված այս Արևխաչը թող միշտ շողա նրա կրծքին, որպես հավատքի հավերժող խորհուրդ: ԵՎ փոքրիկ Հայկի երազների մեջ ես միշտ կերևամ, ես օրոր կասեմ և կխնամեմ ես իմ մայրությամբ, որ որք չմնա, որ մայր ունենա:

Ապա Թորգոմը դիմում է Ամենազոր Վահագնին և ասում.

- Ո՛վ, Մեծդ Վահագն, Աստվածն Արիի, դու՝ Արևն Աշխարհի, դու՝ կյանք և աշխույժ, դու՝ կռիվ և ուժ, դու՝ լույս և զտող, ազնիվը զատող, փառքը արարող. դու, որ հաղթողն ես ամեն խավարի, ամեն մռայլի, Վիշապի, չարի. ո՛վ, դու

այգածին, քեզ եմ ես հանձնում քո երկրային եղբայր Արիից սերված, Արմեն Ցեղի Հայկ զավակին:

ԵՎ Վահագնը արևի ճառագայթներից մի փունջ կազմելով, կնքեց կյանք մտնող Հայկի աչքերը և ասաց.

- Թող միշտ փայլի արևի լույսը Հայկի աչքերում, որպես աստվածային զորության ճառագում, և թող արևին միշտ ուղիղ նայի նա: ԵՎ ես Հայկին ապրելու և կռվելու արբեցումն եմ տալիս, սնում եմ նրան զորությամբ, լույսով. նրա հոգու մեջ հավատն եմ վառում, բազուկը նրա հաղթությամբ կռում, շանթերով հյուսում հայացքը նրա, սրտում արևից բեկորներ ցանում, որ միշտ հաղթական լինի իր կյանքում:

ԵՎ Թորգոմը դիմում է իր սուրբ նախնիներին.

- Ո՛վ, մեր սուրբ նախնի՛ք, երկրային աստվածների անմահ ոգիներ՝ հավերժից եկած, դեպի հավերժն եք ձգվում, մինչև Արարիչ. և հավերժության մեջ եք արարել դուք Հայկին: Նա էլ է հավերժից գալիս, Արարչից է գալիս, և իր մեջ էլ հավերժող հուրը կա: Այս սուրբ կնունքով ես ձեզ եմ հանձնում ձեզանից սերված, ձեզանով սնված մանուկ Հայկին. պաշտպանեք նրան:

ԵՎ նախնիները հերթով համբուրեցին Հայկի ճակատը և ասացին.

- Մենք մեր փառքի ճառագումով ենք օծում Հայկին, որ միշտ նա իր մեջ մեր սերը պահի, որ միաձուլվի հոգով նա մեզ հետ և իր մեջ նա միշտ զգա ուժը պապերի ու իր թոռների զորությունը զգա:

ԵՎ բոլորը մեկտեղ փառաբանեցին Հայր Արային, խմեցին Հայկի կենացը գինով: Ո՛ր երկար պարում էին, երգում էին մինչև մայրամուտ: Իսկ մայրամուտին Աստվածները հրաժեշտ տվին ու գնացին. նախնյաց ոգիները հրաժեշտ տվին ու գնացին. Թորգոմն ու Արեգնագն էլ հրաժեշտ տվին Հայկին ու մեռան:

ՀԱՅԿԸ ԽԱԹՈՒՆԻ ՄՈՏ

Հայկը, որ մնաց որբ, Արմեն նահապետները որոշեցին մի ծծմեր գտնել Հայկի համար: Հավերժական Քաղաքում ինչքան ծծմեր կար, սովին որ Հայկին կերակրի: Բայց Հայկը ոչ մեկի ծիծը չվերցրեց: ԵՎ շվարել էին նահապետները: Արարատի չորս կողմերը սուրհանդակներ ուղարկեցին, փորձելով գտնել գեթ մի ծծմեր, որի ծիծը վերցնի Հայկը:

Լուրը հասավ մինչև Խավարի աշխարհ, թե Արիների նորածին արքան մեռնում է սովից: Ռերախացան Չարիները, որ Թորգոմից սերունդ չի մնա Արարատում: Բայց տիտանյան Խաթունը կանչեց իր բոլոր իշխաններին և ասաց.

- Ես կվերցնեմ Հայկին և կկերակրեմ իմ կաթով:

- Տիրուհի,- ասացին իշխանները,- ինչո՞ւ ես սնելու աստվածների թագավորին. չէ՞ որ նա կմեծանա, կգորանա: Լավ է, որ մեր թշնամին հիմա մեռնի:

- Ո՛չ,- պատասխանեց Խաթունը,- մեր թշնամիք Արիներն են, այո, բայց ես մեր թշնամուն չեմ սնելու: Հայկը ո՛չ հայր գիտի, ո՛չ մայր, ո՛չ Արի, ո՛չ Չարի: Նա որ աչքը բացի, ինձ է տեսնելու, ձեզ է տեսնելու, Բելին է տեսնելու և մեծանալու է որպես տիտան: Նա Բելին թիկունք կլինի և հենց իր գորությամբ կկործանի աստվածների թագավորությունը:

ԵՎ Խաթունը մարդիկ ուղարկեց Արարատ և մի գիր տվեց, որ հանձնեն Արմեն նահապետներին: Խաթունը գրում էր. «Իմ մարդն ու Թորգոմը եղբայրության ուխտ են արել, և էլ չկա թշնամանք աստվածների ու տիտանների միջև: ԵՎ այդ ուխտի համաձայն ես ծծմեր կլինեմ Արի Հայկին: Ես կաթ ունեմ, և իմ կաթը Թորգոմից է»:

Միտք արին Արմեն նահապետները: Ոմանք խարդավանք էին տեսնում Խաթունի մտքում, մյուսները հավատում էին նրա անկեղծությանը: Երկար խորհեցին, երկար վիճեցին և վերջը դիմեցին Աստվածամայր Անահիտին: Անահիտը հայտնվեց նրանց առաջ և ասաց.

- Ես եկել եմ հայտնելու, որ Թորգոմի կնքած ուխտը գործում է Հայկի վրա: ԵՎ Հայկը սովից կմեռնի, եթե նրան

չուղարկեք Խաթունի մոտ: Բայց ես մշտապես կհսկեմ Հայկին և կպահպանեմ նրա մեջ Արիականությունը:

ԵՎ նահապետները որոշեցին Հայկին ուղարկել Խաթունի մոտ մեկ տարի ժամանակով:

Խաթունը շատ ուրախացավ, երբ տեսավ Հայկին: Չրկեց, ծիծ տվեց, և Հայկը վերցրեց նրա ծիծը:

- Տիրուհի,- ասացին իշխանները,- Արիները մեկ տարով են Հայկին տվել քեզ: Մեկ տարին քիչ ժամանակ է, ի՞նչ պիտի անենք:

ԵՎ Խաթունը պատասխանեց.

- Մեկ տարին բավական ժամանակ է, մեր Աստծո կամքով, մի բան կանենք:

Հայկը մնաց Խաթունի մոտ: Խաթունը կերակրում էր նրան: Նա շատ էր սիրում Հայկին և անընդհատ կրկնում էր. «Իմաստուն էր Մեսրոպինը, աստվածների դեմ մենք հենց իրենց արյունով կկռվենք, իրենց արյան դեմ նրանք անգոր կլինեն: Մեկն էր, երկուսը եղան: Հայկը կմեծանա որպես տիտան և ինքը կժխտի աստվածներին: ԵՎ եթե նա գնա Արարատ, ապա միայն սրով կգնա»:

Որոշ ժամանակ Հայկը վերցրեց Խաթունի ծիծը: Մի օր էլ, Մայր Անահիտի կամքով, Հայկը չվերցրեց ծիծը: Ինչ արեց-չարեց Խաթունը, չկարողացավ ծիծ տալ նրան: Շվարել էր Խաթունը: ԵՎ իշխանները խորհուրդ տվեցին.

- Արարատում շատ մեղր ու կարագ կա և պես-պես անուշ պտուղներ: Մարդ ուղարկիր, թող բերի , և դրանցով կերակրիր Հայկին:

Իմաց տվեցին Արիներին, որ Արարատից մեղր ու կարագ ուղարկեն Հայկին կերակրելու: Իսկ Արիները մարդ ուղարկեցին Խաթունի մոտ, թե.

- Հայկին մենք հանձնել ենք քեզ, որ ծիծ տաս նրան: Եթե նա այլևս ծիծ չի վերցնում, ապա վերադարձրու նրան մեզ, և մենք նրան կպահենք մեր մեղր ու կարագով:

Բայց Խաթունը մերժեց, ասելով.

- Հայդ Արմենները իրենց ուխտը չեն հարգում: Դուք Հայկին տվել եք ինձ մեկ տարով, իսկ տարին դեռ չի լրացել: Ես սիրում եմ Հայկին որպես մայր, և մոր ձեռքից երեխա

վերցնելը աստվածավայել չէ: Երբ մեկ տարին լրանա, մեր ուխտի համաձայն ես ինքս Հայկին կուղարկեմ ձեզ:

Արիները համաձայնվեցին և շատ ու շատ մեղր ու կարագ ուղարկեցին Հայկի համար: Հայկը ախորժակով ուտում էր արարատյան բարիքները, և եթե ուրիշ երեխաները տարով էին մեծանում, նա մեծանում էր օրով:

Իսկ Խաթունը ելք էր որոնում՝ ինչպես անի, որ չտա Հայկին:

Երբ տարին լրացավ, Արիները ճամփին էին նայում, դիմավորելու իրենց Հայկին: Բայց անցնում էին օրեր, իսկ Հայկին չէին բերում: Ճարահատյալ մի քանի իշխաններ ուղարկեցին Խաթունի մոտ, Հայկին բերելու:

Արմեն իշխանները ամբողջ ճանապարհին տեսան սևեր և սուգ: Մոտեցան Խաթունի պալատին և տեսան, որ Խաթունը և նրա իշխանները բոլորը սև հագած, ողբում էին: Ռժգեցին այս մեծ սուգի պատճառն իմանալ, և Խաթունը առատ արցունքներ թափելով ասաց.

- Ո՛վ, մեր եղբայր աստվածներ, բա սուգ չանեմ ի՞նչ անեմ, դուք էլ ինձ հետ սուգ արեք: Անգութ մահը ինձանից և ձեզանից խլեց մեր Հայկին: Ե՛վ այսօր մենք նրա քառասունքն ենք անում:

Արի իշխաններն էլ սգացին Հայկի մահը ու վերադարձան Արարատ, տխուր լուր տանելով իրենց հետ:

Արարատում մեծ սուգ սարքեցին, հոգեճաշ տվեցին Հայկի համար: Ե՛վ միայն մի կիսախելագար կին վազվզում էր քաղաքով մեկ և գոռում.

- Մի՛ հավատացեք, Արիներ, մեր Հայկը ողջ է, և նա կգա:

Իսկ Խաթունը գոհ էր իր արածից՝ Հայկը արդեն իրենն էր: Ե՛վ նա ավելի էր կապվում Հայկին: Ե՛վ Հայկը մեծանում էր Խաթունի մոտ:

Բայց Հայկը մենակ էր: Նրա հասակակից տղաները չէին խաղում նրա հետ, չէին մոտենում նրան: Ե՛վ երբ ինքն էր գնում նրանց մոտ, բոլորը փախչում էին, գոռալով՝ «Հայգ Արմեն, Հայգ Արմեն»: Ե՛վ տխրում էր Հայկը: Նա չէր հասկանում, թե ինչու էին տղաները խուսափում իրենից:

Ե՛վ նա բողոքեց Խաթունին.

- Մարե՛, բոլոր տղաները ինձանից խուսափում են և ինձ անվանում են Հայզ Արմեն:

Խաթունը իր մոտ կանչեց իշխաններին և հարցրեց.

- Ինչո՞ւ ձեր որդիները չեն մոտենում Հայկին, ինչո՞ւ չեն խաղում նրա հետ:

ԵՎ իշխանները ասացին.

- Տիրուհի՛, Հայկի կրծքին մի Արևխաչ կա, որ ճառագում է Արարատյան արևով, և մեր որդիների աչքերը չեն դիմանում դրա ճառագումին:

Խաթունը իր մոտ կանչեց Հայկին և ասաց.

- Որդիս, քո կրծքին փայլող այդ Արևխաչն է պատճառը, որ ոչ ոք չի մոտենում քեզ:

- Մարե՛,- ասաց Հայկը,- իսկ ի՞նչ խորհուրդ ունի սա, ինչո՞ւ է իմ կրծքին, և ինչո՞ւ են ինձ Հայզ Արմեն կոչում:

- Օ՛, որդիս,- ասաց Խաթունը,- Հայզ Արմենները հրեղեն աստվածամարդիկ են, Արիներն են, որ ապրում են Արարատում: Նրանք թշնամի են մեզ և մեր Աստված Վիշապին: Նրանք այդ Արևխաչով նշան են արել քեզ, որ քեզ զոհեն իրենց Աստվածներին:

ԵՎ Հայկը հարցրեց.

-Իսկ ինչո՞ւ են ինձ ընտրել որպես զոհ:

-Նրանք քեզ են ընտրել, որովհետև դու տիտանյան արքայի որդին ես,- պատասխանեց Խաթունը:

Վրդովվեց Հայկը և ասաց.

- Երբ մեծանամ, ես կգնամ Արարատ և կկոտորեմ այդ Արիներին հանուն մեր Աստծո: Իսկ հիմա ես այս Արևխաչը կպոկեմ և դեն կշարտեմ:

Հայկը ձեռքը տարավ, որ Արևխաչը պոկի, բայց հանկարծ Արևխաչը այրեց նրա ձեռքը: ԵՎ նա ցավից լաց եղավ: Խաթունը ինքը փորձեց պոկել, նրա ձեռքն էլ այրեց: Կանչեց Բելին, Բելն էլ չկարողացավ: Հասկացան, որ Արևխաչը չեն կարող հանել Հայկի վրայից:

Հայկը զարմացել էր: Նա ամեն օր բռնում էր այդ Արևխաչը, խաղում էր հետը, և ոչ մի անգամ չի այրել նրա ձեռքը: Նա իր զարմանքը հայտնեց Խաթունին, և Խաթունը ասաց.

- Կախարդել են Արիները, որ դու չազատվես այդ Արևխաչից: Բայց երբ դու գրավես Արարատը և խավարով պատես այն, Արևխաչը կկորցնի իր գործությունը:

Ապա Խաթունը խորհրդի կանչեց իր իշխաններին և ասաց.

- Քանի դեռ այդ Արևխաչը Հայկի աչքի առաջ է, դժվար կլինի նրան Չարի դարձնել, Արևխաչը միշտ սնելու է նրան արիականությամբ:

Խորհուրդ արին, և Բելը ասաց.

- Մարե՛, փշե շապիկ գործել տուր և հագցրու Հայկի մերկ մարմնին: Փշերը կմտնեն նրա մսի մեջ, նա չի կարողանա հանել շապիկը, և Արևխաչը կծածկվի նրա աչքից:

- Բայց այդ փշերը ցավ կպատճառեն նրա մարմնին,- առարկեց Խաթունը:

ԵՎ Բելը ասաց.

-Միայն ցավը նրան կչարացնի: ԵՎ այդ չարությամբ նա ինքը կհալածի արիությունն իր մեջ ու կչեզոքացնի Արևխաչի գործությունը:

Այդպես էլ արին: Փշերից շապիկ գործեցին ու հագցրին Հայկի մերկ մարմնին: Արևխաչը ծածկվեց, իսկ փշերը մտան Հայկի մսի մեջ ու վերքեր բացեցին: ԵՎ Հայկը ցավից չարանում էր:

Տիտան տղաները այլևս չէին խուսափում Հայկից և խաղում էին նրա հետ: Իսկ Խաթունը խստիվ պատվիրեց բոլոր դայակներին, ծառաներին ու իշխաններին, որ երբեք Հայկին լճափ չտանեն, որ նա իրեն չտեսնի ջրի հայելու մեջ և խստիվ արգելեց նրան Հայդ Արմեն անվանելը:

ԻՆՔՆԱՃԱՆԱԶՈՒՄ

Հայկը խաղում էր տիտան տղաների հետ: Տարված խաղով, նրանք շատ խորացան տափաստանի մեջ: ԵՎ Հայկը հեռվում մի կապույտ դաշտ տեսավ: Նա առաջարկեց գնալ այդ կապույտ դաշտի մոտ: Տղաները, հետևելով իրենց հայրերի պատվերին, մերժեցին: Բայց հետաքրքրասեր էր Հայկը և համառ. նա իր ուժով ստիպեց տղաներին գնալ իր հետ:

Երբ հասան այդ կապույտ դաշտին, Հայկը հասկացավ, որ դա մի ընդարձակ ջրի դաշտ է: Այդքան մեծ ջուր նա երբեք չէր տեսել: Դա լիճ էր, և լճի ջուրն այնքան պարզ էր, որ նրա մակերեսին հայելու պես անդրադառնում էին տղաների պատկերները: Հայկը նայեց ջրին և սարսափած ետ թռավ: Ապա նորից նայեց՝ մի օտարոտի դեմք էր նայում իրեն:

- Սա ո՞վ է,- հարցրեց նա:

- Դա դու ես,- ծիծաղելով պատասխանեցին տղաները:

Հայկը նորից ու նորից նայեց ջրին և վերջը համոզվեց, որ իրոք դա ինքն է: Ապա նայեց ընկերներին ու նորից նայեց իր պատկերին: ԵՎ զարմացավ, որ բոլորն իրար նման են, և միայն ինքն է տարբերվում բոլորից: Մինչև հիմա նա համոզված էր, որ ինքը հենց այնպիսին է, ինչպիսին բոլորն են: Բայց հիմա ջրի վրա մի ուրիշ պատկեր է՝ իր պատկերն է, որ բոլորովին նման չէ մյուսներին:

Հայկը տխրեց և հեռացավ լճափից: Նա եկավ տուն ու փակվեց իր սենյակում: Հայկն արդեն տեսել էր ինքն իրեն: Նա ոչ մեկին ոչինչ չասաց, միայն ամբողջ օրը լուռ էր և մտքերի մեջ խորասուզված. «Ինչո՞ւ են բոլորը իրար նման և ինչո՞ւ են բոլորը տարբեր ինձանից, մի՞թե ես ուրիշ եմ»:

Առավոտյան Հայկը նորից իր ընկերներին տարավ լճափ: Նորից ու նորից տեսնում էր իր տարբերությունը բոլորից: Տիտան տղաները չդիմացան ջրի գայթակղեցնող գործւթյանը ու նետվեցին ջուրը լողալու: Հայկն էլ մտավ ջուրը: Սառը ջուրը շատ հաճելի էր և մեղմում էր նրա մարմնի ցավերը:

Երկար մնացին ջրի մեջ: Ջուրը քայքայեց Հայկի փշե շապիկը, և այն թափվեց վրայից: ԵՎ երբ դուրս եկան ջրից, Հայկի կրծքին նորից ճառագեց Արևխաչը: Տիտան տղաները սարսափահար փախան:

Արևխաչի ճառագումը ջերմացրեց Հայկին: Նա շոյեց Արևխաչը և զարմացավ, որ չայրեց իր ձեռքը: Նա մեկ- մեկ իր մարմնից հանեց փշերը: ԵՎ ավելի զարմացավ, երբ տեսավ, որ մարմնի վերքերը անմիջապես փակվում են: ԵՎ խորհում էր Հայկը. «Այս Արևխաչի ճառագումը ջերմացրեց ինձ և փակեց իմ վերքերը, իսկ մյուս տղաներին սարսափեցրեց: Ի՞նչ խորհուրդ ունի իր մեջ այս Արևխաչը, որ տարբեր է ինձ և նրանց համար»:

Հայկը վերադարձավ տուն: Նա շատ տխուր էր ու մտազբաղ: Խաթունը հարցրեց.

- Որդիս, ինչո՞ւ ես տխուր, գուցե հիվանդ ես:

- Ո՛չ,- պատասխանեց Հայկը, ապա երկար նայելով Խաթունին, հարցրեց,- մարե՛, ո՞վ եմ ես:

Խաթունը ամենից շատ այդ հարցից էր վախենում, և ահա այդ հարցը եղավ: Նա ասաց.

- Մի՞թե դու չգիտես: Դու իմ որդին ես, դու տիտանյան արքայի որդին ես, Բելի եղբայրը:

- Մարե՛,- ասաց Հայկը,- իսկ ինչո՞ւ ես նման չեմ բոլորին: Բոլորը նման են իրար, բայց բոլորն էլ տարբեր են ինձանից, դու էլ ես տարբեր:

- Ո՞վ ասաց քեզ,- հարցրեց Խաթունը:

- Ես ինքս տեսա լճի ջրերի մեջ:

«Կոտրվի նրա վիզը, ով սրան տարել է լճի մոտ», - մտքում ասաց Խաթունը: Բայց նա ի՞նչ իմանար, որ Աստվածամայր Անահիտն էր աներևութաբար ուղեկցում Հայկին: ԵՎ Խաթունը ասաց.

- Ջուրը խաբում է քեզ, որդիս, տարբեր չես դու:

- Տարբեր եմ, մարե՛,- պնդեց Հայկը,- ջրի մեջ շապիկս հալվեց, և կրծքիս Արևխաչը փակեց իմ մարմնի վերքերը, իսկ ընկերներին սարսափեցրեց:

Խաթունը չկորցրեց իրեն և ասաց.

- Որդի՛ս, եթե այդ նշանը հանես վրայիցդ, դու էլ նման կլինես բոլորին: Դու կախարդված ես: Նորից ծածկիր դա և գնա աղոթիր մեր Աստծուն, որ նա ների քո մոլորությունը:

Մտքերի մեջ ընկավ Խաթունը: Հայկը տեսել էր ինքն իրեն: Թեև ինքը փորձեց համոզել Հայկին, բայց այդ հարցը արդեն մեխվել էր Հայկի ուղեղի մեջ և միշտ հետապնդելու էր նրան: Ինչ արին- չարին, չկարողացան Հայկին հագցնել նոր փշե շապիկ:

ԵՎ Բելը ասաց մորը.

- Մարե՛, այս Արիի ճուտը տիտան չի դառնա երբեք, նա համառ է ու զորավոր: Թող ես սպանեմ նրան, քանի դեռ փոքր է:

Խաթունը խիստ ընդդիմացավ Բելին:

- Թող քո կամքը լինի, մարե՛,- սրտնեղած ասաց Բելը,- բայց գիտցիր՝ թե իմ գլխին փորձանք գա մի օր, էս օրը վկա, սրանից կգա:

Իսկ Հայկը օրեցօր հոգեպես մաշվում էր: ԵՎ խորթանում էր նա շրջապատից: Բոլորը տարբեր էին, նույնիսկ Խաթունը: Նա ինքն իրեն դատապարտել էր միայնության. ոչ մեկի հետ չէր շփվում և չէր մոտենում իր ընկերներին: Նա հաճախ գնում էր լճափ ու ժամերով նստում այնտեղ, նայում ինքն իրեն ջրի մեջ, խաղում Արևխաչի հետ:

Մի օր էլ Հայկը շատ մնաց լճափին: Նա պառկեց ավազին ու փակեց աչքերը: Մի անուշ ձայն սթափեցրեց նրան: Աչքերը բացեց և իր դիմաց տեսավ մի կին: Նա տարբեր էր Հայկի տեսած բոլոր կանանցից: Նա իրեն՝ Հայկին էր նման և շատ էր նման: Դա Աստվածամայր Անահիտն էր, որ մշտապես հետևում էր Հայկին և հիմա հայտնվեց նրա առաջ:

Հայկը առաջին անգամ տեսավ իր նմանին, ուրախացավ և հարցրեց.

- Ես չգիտեմ՝ քնա՞ծ եմ, թե՞ արթուն. իմ երազի պատրա՞նք ես դու, թե իրական էակ. բայց դու ինձ շատ ես նման, ասա՛ ո՞վ ես դու:

ԵՎ Անահիտը ասաց.

- Ես Աստվածամայր Անահիտն եմ՝ քո մայրը և բոլոր Արիների ու Աստվածների Մայրն եմ ես :

Ջարմացավ Հայկը՝ բա Խաթունը: Մայր Անահիտը լսեց Հայկի միտքը և ասաց.

- Խաթունը քո ծծմերն է: Նա վերցրեց քեզ կերակրելու, բայց սեփականացրեց:

ԵՎ Հայկը ասաց.

- Թե դու իմ մայրն ես, ասա՝ ո՞վ եմ ես:

- Դու Արի ես՝ երկրային աստված,- պատասխանեց Մայր Անահիտը,- Արիների արքա Թորգոմի որդին ես դու:

ԵՎ Հայկը ասաց.

- Թե դու Աստվածամայր ես, ասա՝ ի՞նչ խորհուրդ ունի իմ կրծքին շողացով նշանը:

ԵՎ Մայր Անահիտը ասաց.

- Դա Արևխաչն է, որ ես իմ Մայրական Սիրով օծել եմ և կախել քո պարանոցին քո կնունքի օրը: Դա արևից է սնվում և քեզ է սնում արևի ջերմությամբ:

ԵՎ Հայկը հարցրեց.

- Թե դու Արիների Մայրն ես, ասա՝ ո՞րտեղ են ինձ նմանները:

ԵՎ Մայր Անահիտը ասաց.

- Քեզ նմանները Արարատում են:

-Թե դու իմ մայրն ես,- նորից հարցրեց Հայկը,- ասա՝ ինչո՞ւ երբեք չէիր երևում իմ երազում:

- Ես մշտապես հետևել եմ քեզ,- ասաց Մայր Անահիտը,- և գիշերները օրորոցիդ մոտ ես եմ երգել: Դու լսում էիր իմ երգը և քեզ թվում էր, թե Խաթունն է երգում: ԵՎ երբ երազիդ մեջ «մարե» էիր ասում, դու նրան էիր կանչում: Ես չէի երևում քո երազում, որովհետև Խաթունը իրականություն էր և մայր էր քեզ համար:

Հիշեց Հայկը, որ շատ հաճախ իր քնած ժամանակ հենց այս ձայնն էր հնչում քաղցր երգերով: ԵՎ Հայկը փարվեց Մայր Անահիտին:

- Որդիս,- ասաց Մայր Անահիտը,- ես եկել եմ պաշտպանելու քեզ մեծ վտանգից: Գիտցիր՝ թեև Խաթունը քեզ սիրում է, բայց Բելը ուզում է քեզ սպանել:

- Մայր Անահիտ,- զարմացած հարցրեց Հայկը,- Բելն ինչո՞ւ է ուզում ինձ սպանել, ինչո՞վ եմ ես խանգարում նրան:

- Իմացիր, զավակս,- ասաց Մայր Անահիտը,- Բելն էլ քո հոր որդին է և հավակնում է տիրել աստվածների հայրենիքը՝ Արարատը:

- Ո՛րեմն Բելը իմ եղբա՞յրն է:

- Ո՛չ,- ասաց Մայր Անահիտը,- թեև քո արյունը կա նրա մեջ: Դու աստված ես, իսկ Բելը աստծո որդի է միայն, նա աստծուց սերված տիտան է: ԵՎ տիրելով Արարատին, չի շենացնի այն, այլ խավարով կպատի: ԵՎ դու վտանգավոր չէիր լինի նրա համար որպես տիտան, բայց վտանգավոր ես որպես աստված: Զգույշ եղիր, որդին և ոչ մեկի մոտ մի բաց քո սիրտը: ԵՎ ես կփրկեմ քեզ ու կտանեմ Արարատ:

Ասաց Աստվածամայր Անահիտը ու հեռացավ: ԵՎ Հայկը այդպես էլ չհասկացավ՝ երա՞զ էր դա, թե՞ իրականություն: Բայց մի բան պարզվեց նրա համար՝ թե ով է ինքը:

ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ

Մտատանջվում էր տիտանյան Խաթունը: Նա ոչ մի կերպ չէր կարողանում մտնել Հայկի հոգու մեջ և իմանալ նրա խոհերը: Հայկը լուռ էր, ոչինչ չէր խոսում, ոչինչ չէր հարցնում: Նա հնազանդ էր Խաթունին և Բելին, ոչնչով չէր հակադրվում նրանց, բայց և չէր բացում իր սիրտը նրանց մոտ:

ԵՎ դա ավելի էր անհանգստացնում Խաթունին: Նա չէր կարողանում պարզել, թե ինչ գիտի Հայկը և ինչ չգիտի: Բայց համոզված էր, որ եթե Հայկը այլևս հարց չի տալիս, ուրեմն նա ավելին գիտի, քան պետք է: ԵՎ զգում էր Խաթունը, որ Հայկը օրեցօր օտարանում էր տիտաններից:

Խաթունը սիրում էր Հայկին, բայց նա սիրում էր նաև Բելին: Բելին նա սիրում էր ավելի: Չէ՞ որ Բելը իր ծնունդն էր և իր նպատակների ծնունդը: Խաթունը ուզում էր, որ Հայկը մեծանա որպես տիտան և թե ու թիկունք լինի Բելին: Արիները հավատացել են, որ Հայկը չկա, և Բելը մնացել է Թորգոմի միակ ժառանգորդը, և իր ժառանգական իրավունքով նա կպահանջի Արարատը: Տիտան Հայկը կօգներ Բելին: Իսկ աստված՝ Հայկը:

Որպես մայր, Խաթունը սիրում էր Հայկին: Բայց որպես տիտան, նա զգում էր, որ աստված Հայկը շատ է վտանգավոր: Հայկը կամ պետք է լինի տիտան, կամ չպետք է լինի: Դա էր պահանջում տիտանյան Ցեղի շահը, դա էր պահանջում նրա Աստված Վիշապը, դա էր պահանջում ահեղ Բելը:

- Մարե՛, - պնդում էր Բելը, - Հայկը տիտան չի լինի, նա աստված է: Իսկ աստված Հայկը ինձ եղբայր չի լինի, նա ինձ թշնամի է:

- Որդի՛ս, - համոզում էր մայրը, - Հայկը իմ ձեռքում է մեծացել: Գուցե նա քեզ եղբայր չլինի, բայց թշնամի էլ չի լինի:

- Կլինի՛, մայր, - ասաց Բելը, - թեկուզ նա մեծացել է քո ձեռքում, բայց նրա մեջ Արի արյունն է, որ խոսում է հիմա: Այդ արյունը նրա մեջ խոսելու է միշտ և զորավոր է խոսելու: Իսկ զորավոր Արին Չարիին երբեք չի հնազանդվի:

- Լսի՛ր ինձ, որդի՛ս, - ասաց Խաթունը, - իմ ամուսինը եղբայրության ուխտ էր արել Թորգոմի հետ: Կեղծ էր այդ ուխտը: Բայց այդ կեղծ ուխտից ես երկու որդի ունեցա՝ մեկը տիտան, մյուսը՝ աստված, երկուսդ էլ միևնույն հոր զավակները: Գուցե Արարչի կա՞մքն է, որ եղբայրության կեղծ ուխտը ձեր միջոցով անկեղծ դառնա, և ապրեք այդ ուխտով աստված Հայկը Արարատում և տիտան Բելը Անապատում:

- Մայր, - բարկացավ Բելը, - դու չէի՞ր, որ ինձ ծնեցիր որպես ավերումի արքա, դու չէի՞ր, որ ինձ նվիրեցիր քո Աստված Վիշապին, դու չէի՞ր, որ սնեցիր ինձ չարությամբ Արիների դեմ: Ե՛վ ես ուխտեցի Չարի Աստված Վիշապին՝ ավերել Արարատը, կործանել Արի Ցեղը՝ իմ հոր Ցեղը: Հիմա եղբայրության ո՞ւխտ ես նյութում: Ո՛չ, մայր: Ես ատում եմ Արիներին և հատկապես Հայկին: Հայկը լիարժեք աստված է, իսկ ես աստօժ որդի եմ միայն: Հենց դրա համար էլ ատում եմ նրան: Ես ատում եմ նաև քեզ, մայր, որ գողացել ես աստված Թորգոմի սերմը և ծնել ես մի այլանդակ էակ, որը ո՛չ աստված է, ո՛չ՝ տիտան: Դե ասա՛՛ ո՞վ եմ ես՝ Չարի աստվա՞ծ, թե՞՞ Արի տիտան: Ես ամենաանկատարն եմ աստվածների մեջ և ամենակատարյալն եմ տիտանների մեջ:

Հենց դրա համար էլ սիրում եմ տիտաններին և ատում եմ աստվածներին: ԵՎ Աստված Վիշապի օգնությամբ ես ավերելու եմ Արարատը և երկրային աստվածներին ստրուկ եմ դարձնելու ինձ: Դրանով անկատար աստվածը, որպես կատարյալ տիտան, կբազմի Արարատի գահի վրա: Բայց իմ ճանապարհին Հայկն է կանգնած:

- Որդիս, - ասաց Խաթունը, - մեղմիր քո մեղադրանքը: Ես մեղանջել եմ քո առջև, բայց դա իմ կամքը չէր, դա Աստված Վիշապի կամքն էր: Գիտցիր, որդիս, որ Արիների դեմ միայն իրենց արյունով կարող ենք կռվել: Ուստի մեր Աստվածը տիտան ռազմիկներից շատ ավելի մեծ դեր է հատկացրել տիտան կանանց: ԵՎ դու ծնվել ես երկրային աստծուց, բայց ծնվել ես իմ Աստված Վիշապի կամքով, և դու պատկանում ես իմ Աստծուն: Դու պիտի կատարես Վիշապի կամքը, և նա ապավեն կլինի քեզ: Գիտցիր, որ Հայկը թեև աստված, բայց նրան էլ եմ ես նվիրել մեր Աստծուն:

- Իսկ եթե Հայկի Արի արյունը ավելի զորավոր լինի, քան մեր Աստվածը, - հարցրեց Բելը:

- Այդ դեպքում մեր Աստվածը կպատժի նրան: ԵՎ այդ պատիժը կլինի մահը, - ասաց Խաթունը:

Կանչեցին տիտան իշխաններին և իմաստուններին որոշելու, թե ինչպես ստուգեն՝ Հայկի մեջ Վիշապ Աստվածն է զորավոր, թե՞ Արի արյունը: ԵՎ իմաստուններից ամենաիմաստունը ասաց.

- Արարատից բերել տվեք երկու բեռ հող և մի աման ջուր: Բակի կեսի վրա շաղ տվեք արարատյան հողը և վրան ցանեք արարատյան ջուրը: Բելը թող Հայկի հետ զբոսնի բակում: Նախ թող քայլեն բնական հողի վրա, և Բելը թող հարց ու փորձ անի Հայկին: Հետո թող տանի արարատյան հող ու ջուր շաղ տված տեղը և լսի, թե ինչպես կխոսի Հայկը: Այն ժամանակ կիմանանք, թե Հայկի մեջ մեր Աստվածն է զորավոր, թե՞ նրա Արի արյունը:

Այդպես էլ արին: Արարատից երկու բեռ հող և մի աման ջուր բերեցին ու ցանեցին բակի մի մասում: Ապա Բելը Հայկին թեանցուկ արած, տարավ բակ: Նախ նրանք քայլեցին Անապատի բնական հողի վրա: ԵՎ այսպես խոսեց Բելը.

- Հայկ, մեր մայրը քեզ նվիրել է մեր Աստծուն: ԵՎ մեր Աստվածը սիրում է քեզ ու հովանավորում: Իսկ դու մեղանչում ես մեր Աստծո դեմ և չես երկրպագում նրան:

ԵՎ Հայկը պատասխանեց.

- Թե մեղանչել եմ մեր Աստծո առաջ, ես կապաշխարեմ: Բայց ես տարբեր եմ բոլորից և վախենում եմ, որ մեր Աստված չընդունի իմ երկրպագումը:

Բելը Հայկին տարավ շաղ տված հողի վրա: Հենց որ Հայկը իր ոտքը դրեց արարատյան հողի վրա, միանգամից կերպարանափոխվեց, հպարտ կեցվածք ընդունեց և հանդուգն ասաց.

- Վիշապը ինձ ի՞նչ Աստված, երբ ինքս եմ աստված՝ Արայից սերված Արորդի եմ ես:

Լսեց Բելը Հայկի խոսքերը, ձայն չհանեց և նրան տարավ բնական հողի վրա: ԵՎ Հայկը զղջաց իր հանդուգն խոսքերը.

- Ների՛ր ինձ, Բել, ես հիմարություն դուրս տվեցի, բոլորին նման չլինելու զգացողությունը մոլորեցրել է ինձ և խելքս տարել: Ես անպայման կաղոթեմ մեր Աստծուն և ներում կխնդրեմ:

Բելը նորից Հայկին տարավ արարատյան հողի վրա, և Հայկը իսկույն փոխվեց և հանդուգն խոսքեր ասաց.

Այդպես մինչև մայրամուտ Բելը Հայկին տանում էր այս և այն հողերի վրա և միամիտ ձևանալով, հարցուփորձ էր անում: ԵՎ Հայկը Անապատի իսկական հողի վրա հնազանդ էր լինում, իսկ արարատյան հողի վրա վերափոխվում էր և հանդուգն ու ըմբոստ պատասխաններ տալիս Բելին:

Այս բոլորին թաքուն հետևում էին Խաթունն ու բոլոր իշխանները: ԵՎ երեկոյան խորհուրդ արեցին: Բոլորը ընդունեցին, որ Հայկի արիական արյունը շատ ուժեղ է. և որոշեցին սպանել նրան: Խաթունը համաձայնվեց և ասաց.

- Դա մեր Աստծո կամքն է: Միայն թե թողեք այս վերջին գիշերն էլ ես վայելեմ իմ մայրությունը, և առավոտյան տարեք սպանեք Հայկին:

Գիշերը, անտեղյակ իր դեմ կատարված դատավճռին, Հայկը հանգիստ քնած էր: Իսկ Խաթունը չէր քնել: Նա հաճախ գալիս էր Հայկի սենյակը, ծածկում նրան, շոյում

մագերը, համբուրում ճակատը և ապա գնում էր իր սենյակը ու լաց լինում:

ՎԱՀԱԳՆԻ ԿԱՆԹԵՂԸ

Վաղուց Բելը այդպես հանգիստ չէր քնել: Նա վերջապես համոզել էր մորը և առավոտյան սպանելու էր Հայկին: ԵՎ իր հաղթանակի բերկրությամբ նա խոր քուն էր մտել:

Հայկն էլ էր հանգիստ քնել: Նա անտեղյակ էր դատավճռին, անտեղյակ էր Բելի հաղթանակին, անտեղյակ էր Խաթունի համաձայնությանը: Նա հանգիստ քնել էր և չգիտեր նույնիսկ, որ Խաթունը քնած չէր: Նա չէր գգում Խաթունի շուրթերի հպումը իր ճակատին և իր դեմքին ընկնող նրա արցունքները:

Գիշերվա կեսին Հայկը լսեց մի անուշ ձայն: Աչքերը բացեց և տեսավ Աստվածամայր Անահիտին: Հայկը ժպտաց և փարվեց Մայր Անահիտի կրծքին: Մի ուժգին կարոտ ալեկոծում էր նրա սիրտը: Ամաչելով իր զորությունից, Հայկը զսպում էր իր արցունքները: Բայց վերջը չդիմացավ: «Էլ ի՞նչ զորություն, որ մոր գրկում չարտասվի» - ասաց ինքն իրեն ու լաց եղավ:

- Մայր Անահիտ, - ասաց Հայկը, - ես մենակ եմ այս աշխարհում, բոլորը տարբեր են, բոլորը օտար են, ես ինձ նմաններին եմ ուզում:

- Որդիս, - ասաց Աստվածամայրը, - ես հենց դրա համար եմ եկել: Առավոտյան Բելը սպանելու է քեզ, և Խաթունը իր համաձայնությունն է տվել: Վեր կաց հենց հիմա, քանի դեռ բոլորը քնած են, իսկ Խաթունը իր սենյակում վշտից անզգայնացած է, փախիր ու գնա Արարատ քեզ նմանների մոտ:

- Բայց ինչպե՞ս գնամ Արարատ,- հարցրեց Հայկը,- ես չգիտեմ ո՞ւր է նա:

ԵՎ Մայր Անահիտը ասաց.

- Վահագն Աստվածը մի վառ կանթեղ է կախել երկնքից, ուղիղ Արագած լեռան վերևը: Դու կտեսնես այդ կանթեղը. նա առանձնանում է աստղերի մեջ իր մեծությամբ և

պայծառ լույսով: Վահագնի կանթեղը որպես փարոս կուղեկցի քեզ. գնա այդ ուղղությամբ: Բայց գիտցիր, որ Վահագնի կանթեղի լույսը երևում է միայն գիշերները: ԵՎ դու միայն գիշերները գնա, իսկ ցերեկները թաքնվիր, որ Բելի գորականները չգտնեն քեզ: Իսկ եթե Վիշապը իր ցասումով հետապնդի քեզ, դու օգնության կանչիր Վահագնին. նա քեզ կպաշտպանի:

- Մայր,- հարցրեց Հայկը,- իսկ ինչպե՞ս իմանամ, որ հասել եմ Արարատ:

ԵՎ Մայր Անահիտը ասաց.

- Դու ինքդ կզգաս: Երբ հողը քեզ ձգի իրեն, և արևը ջերմացնի քեզ, իմացիր, որ Արարատում ես: Դե, հիմա շտապիր, քանի դեռ Խաթունը չի սթափվել:

Ասաց Աստվածամայրը և հեռացավ: Վեր կացավ Հայկը և զգույշ դուրս եկավ սենյակից: Ոչ ոք չկար, բոլորը քնած էին: Նա քայլեց դեպի շքամուտք, որ հեռանա պալատից, բայց կանգ առավ: «Ինչպե՞ս ես գնամ առանց հրաժեշտ տալու Խաթունին,- մտքում ասաց նա,- ախր նա ինձ ծիծ է տվել, ինձ փայփայել է, օրորել»:

ԵՎ մոռանալով ամեն զգուշություն, անտեսելով վտանգը, Հայկը ետ դարձավ, մտավ Խաթունի սենյակը: Խաթունը անշարժ նստած էր, ձեռքերը ծնկներին և աչքերը փակ. արցունքները չորացել էին նրա տանջված դեմքին: Հայկը ծնկի իջավ, համբուրեց Խաթունի ձեռքը, ապա ոտքի կանգնեց: «Մնաս բարով, մայր, ես ներում եմ քեզ, դու էլ ինձ ներիր», - շնջաց և դուրս եկավ սենյակից:

Խաթունը զգաց Հայկի շուրթերի հպումը իր ձեռքին, լսեց նաև նրա խոսքերը: Բացեց աչքերը ու երագի նման տեսավ հեռացող Հայկին: Նա դուրս վազեց սենյակից, բայց Հայկն արդեն չկար: Նրան թվաց, թե երագ է տեսել: Մտավ Հայկի սենյակ, տեսավ սենյակը դատարկ է և հասկացավ, որ Հայկը փախել է: Խաթունը աղաղակեց, և նրա ձայնի վրա հավաքվեցին գորականները, եկավ և Բելը:

- Հայկը փախել է, հետապնդե՛ք նրան և որտեղ որ բռնեք, սպանե՛ք,- կարգադրեց Խաթունը:

Բոլորը դուրս վազեցին կատարելու Խաթունի հրամանը: Իսկ Խաթունը մտավ իր սենյակ, նստեց և ասաց ինքն իրեն.

- Իսկ նա համբուրեց իմ ձեռքը...

Հայկը վազեց դեպի մութ անապատ, ապա նայեց երկինք: Բազում աստղերի միջից շատ հեռվում առանձնանում էր մի մեծ աստղ, և նրա լույսն ավելի պայծառ էր: ԵՎ իմացավ Հայկը, որ դա Վահագնի կանթեղն է երկնքից կախված: ԵՎ նա գնաց այդ կանթեղի ուղղությամբ:

Մթությունը քողարկում էր Հայկին, և հետապնդող տիտանները չէին գտնում նրան: Հայկը քայլում էր միայն գիշերները, իսկ ցերեկները նա թաքնվում էր քարայրներում, մացառներում: Տիտանները չգիտեին Վահագնի կանթեղի մասին և համոզված էին, որ Հայկը պիտի ցերեկները քայլի: ԵՎ նրանք Հայկին որոնում էին ցերեկները:

Խորամանկ էր Բելը և հասկացավ, որ խաբուս է իրեն Հայկը: Նա զոհ մատուցեց իր Աստված Վիշապին, խնդրելով իր ձեռքը զցել Հայկին: ԵՎ Վիշապը ոռնաց, մինչև երկինք հասնող օձաքամի բարձրացրեց և Հայկի տեսադաշտից ծածկեց Վահագնի կանթեղը: Հայկը մոլորվեց: Նա այս ու այն կողմ էր վազում, բայց օձաքամին հետապնդում էր նրան: ԵՎ օձաքամին օղակեց Հայկին ու իր գիրկը առավ նրան: Հայկը փորձում էր դուրս պրծնել այդ օձաքամու ճիրաններից, կռվում էր նրա դեմ, բայց՝ անարդյունք: Օձաքամին, իր գիրկն առած Հայկին, նրան տանում էր ետ՝ հանձնելու Բելի ձեռքը:

Արդեն երևում էին տիտան զորականները, որոնք ցնծում էին ու փառաբանում Վիշապին: Հասկացավ Հայկը, որ Վիշապն է իր դեմ ելել, և ինքը, թեև աստված, բայց երկրային է և Անմահ Աստծո դեմ կռվել չի կարող: ԵՎ Հայկը դիմեց Վահագնին.

- Ո՛վ, Վահագն, ո՛վ, Աստվածն իմ հայրերի, պաշտպանիր ինձ Վիշապից:

Վահագնը լսեց նրա ձայնը: Բոցավառեց կանթեղը արևի հրով, ապա մի հրե գունդ պոկվեց կանթեղից ու եկավ դեպի Հայկը: Վայնասուն բարձրացրին տիտանները և խուճապահար փախան: Աստվածային բոցը ճեղքեց

օձաքամին, հասավ Հայկին ու հրեղեն ձի դարձավ: Հայկը հեծավ այդ հրեղեն ձին ու բարձրացավ երկինք:

Վիշապը ոռնոցով երկար հետապնդում էր Հայկին, բայց չէր կարողանում բռնել նրան: Վիշապը Հայկին հետապնդեց մինչև սահման, ուր վերջանում էր իր թագավորությունը և սկսվում էր Վահագնի լուսե թագավորությունը: Կանգ առավ սահմանին ու դեռ երկար ժամանակ ցատումով ոռնում էր Արարատի կողմը:

Հրեղեն ձին կանգնեց հողի վրա: Հայկը իջավ ձիուց, և ձին նորից թռավ երկինք, վերածվեց հրե գունդի ու ամփոփվեց կանթեղի մեջ:

Հայկը կանգնել էր հողի վրա և նայում էր իր շուրջը: Ամեն ինչ նոր էր, ամեն ինչ անժանոթ էր, բայց՝ հարագատ: Հանկարծ նա զգաց, որ իրենից արմատներ են աճում: Նա զարմացավ և դեռ չէր հասցրել հասկանալ որևէ բան, երբ տեսավ, որ հողի միջից էլ արմատներ դուրս եկան և ձուլվեցին իր արմատներին: ԵՎ երբ Հայկը քայլեց, տեսավ, որ հանգիստ քայլում է, և արմատները շարժվում են իր հետ: ԵՎ հասկացավ Հայկը, որ արդեն կապված է հողին իր արմատներով, և ոչ մի ուժ չի կարող նրան իր արմատներից պրկել: «Հենց սա Արարատն է, հենց սա իմ Մայր Հողն է», - ասաց Հայկը և երկար անքուն գիշերներից հետո, առաջին անգամ հանգիստ քնեց Արարատի հողի վրա:

Առավոտյան արևի ճառագայթները ողողել էին Արարատը: ԵՎ Հայկը մի երանելի ջերմություն զգաց ու բացեց աչքերը: ԵՎ հանկարծ իր դիմաց տեսավ իրեն: Չարմացավ, կարծեց՝ դեռ քնած է ու երագում է: Շփեց աչքերը և համոզվեց, որ քնած չէ, բայց դարձյալ իր դիմաց տեսավ իրեն: Ինքը կանգնած էր իր դիմաց, նայում էր իրեն և ժպտում: ԵՎ Հայկը մտածեց. «Ե՞ս եմ ես, թե՞ ինքն եմ ես»:

Իսկ ժպտացող մյուս «ես»-ը խոսեց Հայկի հետ.

- Ո՞վ ես դու, անժանոթ:

«Անժանոթ,- ինքն իրեն կրկնեց Հայկը,- մի՞թե ես անժանոթ եմ ինձ», - և պատասխանեց.

- Մի՞թե դու ինձ չես ճանաչում. ես դու եմ, ես Արի եմ:

- Ես էլ եմ Արի,- պատասխանեց դիմացինը,- և մենք նույնն ենք, դրա համար էլ նման ենք իրար:

Հասկացավ Հայկը, որ դիմացինը ինքը չէ, բայց իր նույնությունն է և փարվեց նրան: ԵՎ միասին գնացին մոտակա գյուղը: Այնտեղ շատ Արիներ տեսավ Հայկը, և բոլորը նման էին իրեն, իր նույնությունն էին, կարծես հենց ինքը լինեին: ԵՎ բոլորը իրենց արմատներով կապված էին հողին, իսկ հայացքներով՝ արևին: Ինքն էլ իր հայացքը ուղղեց արևին, և աչքերի մեջ կուտակվում էր արևի ջերմությունը:

Վահագնի կանթեղը չէր երևում: Նա փայլում է միայն գիշերները և շատ երկար պիտի վառվի կախված երկնքից, ուղիղ Արագածի վերևում՝ դեպի Արարատ առաջնորդելու բոլոր այն Արիներին, որոնք մոլորվել են օտար հողերի վրա:

ՀԱՅԿԸ ԱՐԱՐԱՏՈՒՄ

Հայկը քայլում էր դեպի Հավերժական Քաղաք: Այնտեղ էր իր հոր տունը: Հայկը անցնում էր գյուղերով, տեսնում էր Արիներին՝ բոլորն իր նման, բոլորը ինքն էին: Բայց նրանք անծանոթ երգեր էին երգում, անծանոթ պարեր էին պարում, անծանոթ խաղեր էին խաղում:

Հայկից ավելի շուտ լուրն էր հասել Էրեվան, թե Արի Հայկը՝ Թորգոմի որդին է գալիս: ԵՎ քաղաքացիք հավաքվել էին քաղաքի դարպասների մոտ՝ տեսնելու Հայկին, որին վաղուց մեռած էին համարում: Հայկը տեսավ հավաքված բազմությունը: Ինչքա՛ն նման էին իրեն բոլորը: ԵՎ Հայկը ժպտաց:

- Դու ո՞վ ես, որդիս,- հարցրեց ծերունի իշխանը՝ Թորգոմի հորեղբոր որդին:

ԵՎ Հայկը ասաց.

- Ես Արի Մանի տոհմից նահապետ Արամի թոռն եմ և Թորգոմի որդին եմ, ես Արի Հայկն եմ: Ես փախել եմ տիտանների մոտից ու եկել եմ ինձ նմանների՝ Հայգ Արմենների մոտ:

- Բայց Թորգոմի որդին մեռած է,- ասաց իշխանը:

- Ձեզ խաբել են տիտանները,- ասաց Հայկը,- ես եմ Հայկը: Նայեք ինձ, մի՞թե ես նման չեմ իմ հորը:

Հայկը, իրոք, շատ նման էր Թորգոմին: Բայց չէ՞ որ տիտանյան խաթունը մեծ սուգ էր արել Հայկի մահվան

առթիվ: ԵՎ Ցեղի նահապետները խորհուրդ արին: Նրանք կարող էին հավատալ Խաթունին կամ չհավատալ. կարող էին հավատալ Հայկին կամ չհավատալ: Բայց Ցեղի ճակատագիրը պատահականությանը հանձնել չէին կարող: Պետք էր համոզվել, որ նա, իրոք, Թորգոմի որդին է: ԵՎ Մեծն Քրմապետը ասաց.

- Հայկի ծնունդի առթիվ նրա մայրը մի ծառ է տնկել՝ ծնունդի ծառ և նվիրել է Հայկին: Այդ ծառը օրհնել է ինքը՝ Աստվածամայր Անահիտը: Եթե սա, իրոք, Թորգոմի որդի Հայկն է, ուրեմն նրա և ծնունդի ծառի միջև անպայման զգացմունքային կապ կլինի:

ԵՎ Հայկին տարան ծառաշատ պուրակ. այնտեղ էր նաև Հայկի ծնունդի ծառը: Հայկը քայլում էր ծառաստանում: Ծառերը մեկը մյուսից գեղեցիկ էին, մեկը մյուսից փարթամ և դյուրիչ: Հանկարծ Հայկը մի մեղմ սոսափյուն լսեց: Նա կանգ առավ ու լարեց ուշադրությունը: Սոսափյունը կրկնվեց: Մի ստվարախիտ ծառ էր, որ իր ճյուղերը ճոճելով, սոսափում էր: ԵՎ Հայկին թվաց, թե իր անունն է տալիս:

Հայկը մոտեցավ այդ ծառին: Ճյուղերը կռանում էին և իրենց տերևներով համբուրում էին նրան: Մի ուժեղ հոգեկան կարոտ պարուրեց Հայկին: Ինքն էլ չգիտեր ինչու, բայց այդ ծառը այնքան հարազատ ու սիրելի էր իր համար: Նա շոյեց ծառը, ապա նստեց ծառի տակ, հենվեց բնին և քունը տարավ: Նա փակեց աչքերը և քնեց: Իսկ երանելի ժպիտը փայլում էր նրա քնած դեմքին:

Հայկը ծնունդի ծառի տակ քնեց մինչև լուսաբաց: Առավոտյան նա կանգնեց Ցեղի նահապետների առաջ: Բոլորը նրան ընդունեցին ուրախությամբ. բոլորն արդեն համոզված էին, որ նա իրոք Հայկն է:

ԵՎ Հայկը ասաց.

- Ես Թորգոմի որդին եմ և նրա օրինական ժառանգը:

ԵՎ մեծ իշխանը ասաց.

- Այո, որդիս, բայց Թորգոմի ժառանգը նախ պետք է ձեռք բերի Թորգոմի թուր-կեծակին: Այդ թուրը խորն է թաքնված: Մասիս սարում մի մեծ քարանձավ կա. այնտեղ է թուր-կեծակին, և երկու արալեզներ հսկում են այն: Թե դու Թորգոմի ժառանգն ես՝ գնա վերցրու թուր-կեծակին:

Հայկը բարձրացավ Մասիս սար: Տեսավ մի մեծ խոռոչ ու մտավ ներս: Դա մի մեծ քարանձավ էր, որի մեջտեղում հազար ու մի գանձերի փայլով շողշողում էր թուր-կեծակին: Իսկ թուրը պաշտպանում էին երկու ահագին արալեզներ, որոնք ունեին շան մարմին և մարդու գլուխ:

- Ո՛վ, քաջ պատանի,- ասացին արալեզները,- քեզանից թորգոմի հոտ ենք առնում, ասա՛ ո՞վ ես դու և ի՞նչ ես ուզում:

ԵՎ Հայկը ասաց.

- Ես թորգոմի որդին եմ՝ Արի Հայկը և եկել եմ իմ հոր թուր-կեծակին վերցնելու:

ԵՎ արալեզները ասացին.

- Թեև դու թորգոմի որդին ես, բայց պետք է թորգոմի գորությունն էլ ունենաս: Դու պիտի կռվես մեզ հետ և թե հաղթեցիր՝ կվերցնես սուրը:

ԵՎ Հայկը կռվի բռնվեց արալեզների հետ: Երեք օր ու գիշեր կռվեց Հայկը, բայց հաղթել չկարողացավ: Հուսահատվեց Հայկը և գլխիկոր դուրս եկավ քարանձավից: Նա գնաց իր ծնունդի ծառի մոտ, գրկեց նրա բունը և լաց եղավ: ԵՎ նրա դիմաց հայտնվեց Աստվածամայր Անահիտն ու ասաց.

- Սիրելի որդիս, ի՞նչն է քեզ այդպես վշտացրել:

ԵՎ Հայկը ասաց.

- Օ՛, Մայր Անահիտ, թե ես թորգոմի որդին եմ, ինչո՞ւ ես իմ հոր գորությունը չունեմ:

- Որդիս,- ասաց Մայր Անահիտը,- դու ունես քո հոր գորությունը, բայց գորությունը զգացողությամբ է զորավոր: Տիտանյան զգացողությամբ աստվածների արքա չի լինի: Աստվածների արքա միայն աստվածների զգացողությամբ կլինի: Գիտցի՛ր՝ Արիների պարերն են քո պարերը, Արիների երգերն են քո երգերը, Արիների խաղերն են քո խաղերը, որովհետև դրանք քո արյունից են գալիս: Երբ այդ բոլորը հարազատ կլինեն քեզ, այնժամ դու շատ զորավոր կլինես և կժառանգես քո հոր թուր -կեծակին:

Լսեց Հայկը Աստվածամայր Անահիտին և թողեց գնաց Հավերժական Քաղաքից: Շրջեց Արարատի քաղաքներն ու գյուղերը, շփվեց Արիների հետ. որսորդների հետ որսի գնաց,

հովիվների հետ հովվություն արեց, մշակների հետ մշակություն արեց: Բոլորի հետ երգեց նույն երգերը, պարեց նույն պարերը, խաղաց նույն խաղերը. բոլորի հետ տխրեց, բոլորի հետ ուրախացավ. բոլորի հետ զոհ մատուցեց Հայր Արային և Անմահ Աստվածներին. բոլորի հետ հաղորդակցվեց նախնյաց ոգիներին: ԵՎ ամենը իրեն հարազատ էին:

Անցավ բավական ժամանակ, և Հայկը վերադարձավ երեվան ավելի Արիացած: Եկավ իր ծնունդի ծառի մոտ և դիմեց Աստվածամայր Անահիտին: ԵՎ Աստվածամայրը եկավ:

- Օ՛, Մայր Անահիտ,- ասաց Հայկը,- հիմա ես ինձ լիարժեք Արի եմ զգում, և հարազատ է ինձ համար ամեն ինչ Արարատում: Օրհնիր ինձ՝ ես գնում եմ իմ հոր թուր-կեծակին ժառանգելու և պաշտպան կանգնելու իմ Արարատին և իմ Արի Ցեղին:

Մայր Անահիտը օրհնեց Հայկին: ԵՎ Հայկը բարձրացավ Մասիս, հասավ քարանձավին: Հենց այնտեղ նա մեծ խարույկ վառեց, զոհ մատուցեց և ապա մտավ քարանձավ:

- Թորգոմի որդի,- ասացին արալեզները,- թե նորից թուր-կեծակիի համար ես եկել, պիտի կռվես մեզ հետ և թե հաղթեցիր՝ վերցրու սուրը:

ԵՎ Հայկը ասաց.

- Ո՛վ, սուրբ արալեզներ՛ր, ինչպե՞ս ես կռվեմ իմ արյան դեմ: Մենք նույն արյունն ենք: ԵՎ Հայր Արայի կամքով դուք եք Չարիների դեմ պատերազմում իմ և իմ քաջերի կյանքի պահապանը: Դուրս եկեք այս մութ քարանձավից դեպի արև, ինձ հետ վայելեք սուրբ մատաղը և փառաբանեք Հայր Արային և Ամենագոր Վահագնին:

Արալեզները հավանեցին Հայկի խոսքը և ասացին.

- Ո՛վ, Արի Հայկ, մենք քեզ հետ կվայելենք սուրբ մատաղը և կփառաբանենք Հայր Արային ու Ամենագոր Վահագնին: Վերցրու այս թուր-կեծակին և առաջնորդիր երկրային աստվածների քաջերին տիտանների դեմ, իսկ մենք միշտ քեզ հետ կլինենք և կպահպանենք քո քաջերի կյանքը:

Հայկը վերցրեց թուր-կեծակին և արալեզների հետ դուրս եկավ քարանձավից: Նրանք վայելեցին մատաղը և ցած իջան Մասիսից:

Արիները տեսան, որ Հայկը գալիս է. թուր-կեծակին շողշողում է նրա ձեռքին, և երկու արալեզները ուղեկցում են նրան: Հավաքվեցին նրա շուրջը, ուրախացան: Հայկը գլուխ խոնարհեց Ցեղի նահապետների առաջ և ասաց.

-Ահա ես ձեռք բերեցի թորգոմի թուր-կեծակին և ձեր օրհնությամբ, կպաշտպանեմ իմ Արի Ցեղը Չարիներից:

- Որդի՛ս,- ասաց մեծ իշխանը,- սուրը վերցրի՛ր, դա լավ է, բայց քո բազկի ուժն էլ պիտի փորձես: Ահա տես այն երկաթե սյունը: Դա քո հոր ու պապերի փորձաքարն է: Թե սրի մի հարվածով կտրես այդ սյունը՝ արժանի կլինես այդ սրին:

ԵՎ Հայկը մոտեցավ երկաթե սյունին: Թափ առավ ու հարվածեց: Թուր-կեծակին սյունը կտրեց ու միջով անցավ: Բայց կտորը կտորի վրա մնաց: Ոչ ոք չիմացավ, որ թուրը կտրել անցել է: Շատ տխրեցին հավաքված Արիները, տխրեց և Հայկը: Մտածեց, որ անարժան է թորգոմի ժառանգը լինելու և գլխիկոր ուզեց հեռանալ, գլուխն առնել ու անհետ կորչել:

Մեկ էլ հանկարծ քամի եղավ, եկավ զարկեց երկաթե սյունին, և կտրված կտորը շուռ եկավ ցած: Նոր բոլորը տեսան, որ թուրը կտրել անցել է սյունը: Ցնծացին Արիները, ուրախ էր և Հայկը: Բայց նահապետները ասացին.

- Թորգոմի որդի՛, Արի Հայկ, թորգոմի արյունը ունես դու, թորգոմի ուժը ունես դու, նրա թուր-կեծակին էլ քո ձեռքին է: Բայց աստվածների առաջնորդ չես կարող լինել, եթե Ջորության Աստված Վահագնը չհովանավորի քեզ: Աստվածների տաճարում դու զոհ կմատուցես, կփառաբանես Հայր Արային և Անմահ Աստվածներին: ԵՎ եթե դու արժանի ես՝ հենց ինքը՝ Վահագնը քո բազկին կոնի խաչ-պատերազմին: ԵՎ նոր միայն դու կժառանգես Արարատյան արքայի գահը:

ԵՎ բազմությունը գնաց ու հավաքվեց Արորդյաց տաճարի հրապարակում: Հայկը տաճարի առջև խարույկ վառեց, զոհ մատուցեց: Մեծն Քրմապետը Աստվածների

անունից օժեց մատաղը, փառաբանեց Վահագնին և խնդրեց հովանավորել Արի Հայկին: ԵՎ Վահագնը ինքը հայտնվեց այդտեղ, հավաքեց արևի ճառագայթները և Հայկի ձախ բազկին դաջեց Խաչ-Պատերազմին:

Մեծ Քրմապետը օրհնեց Հայկին, Ցեղի նահապետները համբուրեցին նրան, իսկ ժողովուրդը միաձայն բացականչեց.

- Փա՛ռք Արիների արքա Հայկին:

ՆԱԿԱՍԱՐԴ

Արարատի հարավային սահմաններից գուժկան եկավ Հայկի մոտ և հայտնեց նրան.

- Ո՛վ, Արյաց արքա՛, գիտցիր, որ տիտանյան Բելը գալիս է Արարատի վրա հավերժական քաջերով և երկնադեզ հսկաներով:

Հայկը սպառնազինվեց, վերցրեց իր թուր-Կեծակին, հեծավ իր հրեղեն ձին, ապա կանգնեց հրապարակում և կանչեց.

- Ո՛վ, Արիներ, ո՛վ, երկրային աստվածներ, տիտանյան Բելը գալիս է մեր վրա իր անթիվ զորքով: Ե՛վ ես իմ թուր-Կեծակիով ելնում եմ Բելի դեմ: Ով ձեզանից կցանկանա հաղթության բերկրանքը կիսել ինձ հետ, թող միանա ինձ:

Ե՛վ ամեն կողմից հավաքվեցին Արիները: Մշակը իր հողը թողեց եկավ, որմնադիրը իր մուրճը զցեց եկավ, դարբինը իր դազգահը թողեց եկավ, դեռահասը իր խաղը թողեց եկավ, ծերունին իր թզբեհը թողեց եկավ: Եկան հազար- հազարներ, եկան ձիով ու ոտքով, եկան սրով, նիզակով, եղանով, փայտով՝ ով ինչ ուներ:

Նայեց Հայկը այդ կամավոր ռազմիկների բազմությանը և դիմեց նրանց.

- Ո՛վ, Արի քաջեր, ձեր նվիրումը արժանի է գովեստի, ձեր ոգու զորությունը արժանի է փառաբանումի: Բայց ես չեմ կարող ամբողջ Արարատը զենքի կապել: Հո օրհասը չի պատել Արարատին, որ մեր վերջին արյունը զոհաբերենք: Թե մշակը կտրվի հողից, ո՞վ պիտի հաց աճեցնի, թե դարբինը իր դազգահը լքի, ո՞վ պիտի սուր և խոփ կռի, թե ծերունին ռազմադաշտ ելնի, ո՞վ պիտի թռռներին նախնյաց փորձը փոխանցի: Ես ինքնագոհողության չեմ գնում, այլ գնում եմ իմ սուրը պսակելու փառահեղ հաղթությամբ: Թող ինձ հետ գան զորավորներից զորավորները միայն:

Հայկի վճիռը հավանեցին Ցեղի նահապետները: Բայց ո՞ւմ նախապատվություն տալ: Ո՞վ իրեն զորավոր չի համարում: Արդեն իրենց զորավոր ճանաչելով է, որ բոլորը

իրենց գենքերով եկել են այստեղ: ԵՎ ոչ մեկը չի ընդունում մյուսի առավելությունն իր գործության նկատմամբ:

Խոհերի մեջ ընկավ Հայկը: Առանձնացավ և միտք արեց, թե ինչպես և ում ընտրի: Նա բարձրացավ Արագած: Արագածի գագաթին խարույկ վառեց, զոհ մատուցեց ու կանչեց.

- Ո՛վ, Հայր Արա՛, ո՛վ, Ամենագոր Վահագն, օգնիր ինձ՝ երկրային աստվածների միջից զորավորներին ընտրել, բայց այնպես, որ մյուսները չվիրավորվեն:

ԵՎ Վահագնը հայտնվեց Հայկին ու ասաց.

- Ո՛վ, Հայգ Արմենների առաջնորդ, իմաստուն վճիռ ես կայացրել՝ ուր ոգին է առաջնորդում, այնտեղ քանակը, քարը, երկաթը կորցնում են իրենց արժեքը: Ոչ թե քանակով, այլ ոգու գերագույն գործությամբ գնա պատերազմ: ԵՎ որպեսզի անարդար չլինես, դու ինքդ մի ընտրիր. թող որ իրենք իրենց մեջ որոշեն ամենագորեղներին և որոշեն մրցույթով: Թող մրցեն ուժի, ճարակության, հնարամտության մեջ, և հաղթողների սուրը ես ինքս կօժեն ու նրանց բազկին ես խաչ-պատերազմին կդնեմ:

ԵՎ Վահագնը Հայկին տվեց մի մեծ ջահ, որի բոցերի մեջ Հայր Արայի օրհնությունը կար: Հայկը, ջահը ձեռքին, իջավ Արագածից և գնաց դեպի Հավերժական քաղաք՝ էրեվան:

Հայկը Արայի օրհնությամբ օժված ջահը ձեռքին կանգնեց հրապարակում: Բոլորը անհամբեր նրա որոշմանն էին սպասում, և ամեն մեկը հույս ուներ, որ ինքը ընտրյալների մեջ պիտի լինի: Բայց Հայկը դիմեց բազմությանը և ասաց.

- Ո՛վ, քաջ Արիներ, Ամենագոր Վահագնի կամքով կազմակերպում եմ Նավասարդյան խաղ-մրցույթ: Բոլորը թող մասնակցեն և ցուցադրեն իրենց զորությունը: ԵՎ հաղթողները կստանան Վահագնի աստվածային օծումը և խաչ-պատերազմին՝ ձախ բազկին: Իսկ Արագածից բերված այս ջահը, ուր արարչական կրակն է վառվում, թող բոցկլտա մրցող քաջերի գլխավերևում, որպես Հայր Արայի օրհնության խորհուրդ:

Արիները հավանեցին այդ որոշումը, որ Վահագնից էր գալիս: ԵՎ եկան քաջեր Արարատի տարբեր գավառներից:

Եկան քաջեր և Արարատից դուրս Արի ազգերից՝ եկան Արամի որդիներն ու թռռները Արևելքից, Արևմուտքից, Հարավից և Հյուսիսից:

Քաջերի տոնահանդես էր Հավերժական Քաղաքում, համաարիական Նավասարդյան խաղեր, որ ծոնված էին Վահագնին և հովանավորվում էին Վահագնի կողմից: ԵՎ ամեն մի քաջ փառաբանում էր Վահագնին, ապավինում Վահագնի գորությանը և ակնկալում էր հաղթանակ:

Հազարավոր Արիներ էին հավաքվել դիտելու քաջերի գորության մրցույթը: Գուսանները ծոներ էին հյուսում Վահագնին և մրցող քաջերին. ջահել հարսներն ու աղջիկները իրենց երգով ու պարով քաջալերում էին մրցող քաջերին:

Մրցակիցները փառաբանեցին Վահագնին, իրենց երդունը տվեցին Ամենագոր Աստծուն: ԵՎ մրցույթը սկսվեց: Ամենատարբեր մրցածների ու խաղերի մեջ էին մտել: Մրցողներից ամեն մեկը ձգտում էր Վահագնի ընտրյալը լինել և ամբողջ իր գորությունը դնում էր մրցումի մեջ:

Բազմությունը քաջալերում էր մրցողներին բացականչություններով, երգ ու պարով: ԵՎ կարծես մոռացել էին թե՛ Բելի մասին և թե՛ Բելի անհամար գորքի մասին, որ արշավում էր Արարատի վրա:

Լուրը հասավ Բելին, թե Արիները մեծ Նավասարդ են տոնում. մեծ մրցամարտ է էրեվանում, որն էլ ուղեկցվում է երգ ու պարով: Երկյուղեց Բելը: «Ես իմ անհամար գորքով գնում եմ Արարատն ավերելու, իսկ այդ աստվածները խրախճա՞նք են անում» - զարմացած ասաց նա:

Սարսափել էին և տիտան հսկաները: Նույնիսկ խորհուրդ տվեցին Բելին հաշտվել աստվածների հետ և խաղաղությամբ վերադառնալ իրենց երկիրը: Բայց Բելը մերժեց.

- Ես այս անհամար գորքով եկել եմ հաշտությո՞ւն կնքելու համար: Բա աստվածները ինձ չե՞ն ծաղրի:

Իսկ Արարատի Հավերժական Քաղաքում շարունակվում էին համաարիական Նավասարդյան խաղերը: Մրցումները վերջացան մայրամուտից առաջ: Հաղթող հսկաները շարվեցին Արորոյաց տաճարի առջև: Հոգնած էին

նրանք, բայց հպարտ էին ու երջանիկ՝ նրանք Վահագն Աստծո ընտրյալներն էին:

Վահագնը ինքը օժեց հաղթողների սրերը և արևի ճառագայթներով նրանց ձախ բազուկներին դաջեց խաչ-պատերազմին:

Ժողովուրդը ցնծության մեջ էր. փառաբանում էր հաղթող քաջերին և մաղթում հաղթանակ տիտանյան Բելի դեմ:

ԵՎ Հայկի սակավաթիվ զորախումբը, օժված Վահագնի զորությամբ, արշավեց դեպի հարավ՝ Բելի դեմ: Նրանց հետ էին նաև երկու աստվածային արալեզները:

ԵՎ ամբողջ ճանապարհին նրանց սիրտը լցնում էին դաշտերի շունչը, հարազատ լեռների սեզությունը, նրանց օրհնում էր հայրենի երկինքը: ԵՎ ամենուր նրանք զգում էին, տեսնում էին, լսում էին.

- Հաղթություն, - աղոթում էին մայրերն ու կույսերը նրանց համար:

- Հաղթություն, - երգում էին մանուկները:

- Հաղթություն, - ղողանջում էին զանգերը:

Բոլորը ամենուր գոչում էին. «Ձեզ հետ ենք, Արի քաջեր, առաջ հաղթական»:

Օ՛հ, ի՞նչ զորություն: Էլ ի՞նչ թշնամի այս ամբողջական զորության դիմաց: ԵՎ Հայկը Արի իր նվազ զորքից հազարապատիկ ավել զորքի դեմ հազարապատիկ ավել զորությամբ մարտի էր ելնում:

ՀԱՅԿԻ ԵՎ ԲԵԼԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Հայկը, իր սակավաթիվ հսկաներով, հասավ մանր ձկներով հարուստ աղի լճին և ապա դիրք գրավեց բարձր լեռների արանքում գտնվող մի բարձունքի վրա: Այդտեղից պարզ երևում էր Բելի բանակը: Երկնքի աստղերին հաշիվ կար, տիտան գինվորներին հաշիվ չկար:

Հայկը հավաքեց իր զորականներին և այսպես դիմեց նրանց.

- Ո՛վ, իմ քաջ զինակիցներ, թե մենք մեր Հողում պարտվենք Չարիին և մենք մեր Հողում ստրուկ լինենք նրան՝

աններելի է դա, ամոթի խարան: Բա Աստվածները դա մեզ կներե՞ն, մեր նախնիները չե՞ն անիծի մեզ: Ի՞նչ փույթ, թե Բելը անթիվ-անհամար զորք է կուտակել, ի՞նչ փույթ, թե նրան Վիշապն է օծել: Չէ՞ որ Մայր Հողի ուժն է առկայծում մեր սրտերի մեջ, սուրբ նախնիների անմահ ոգիները՝ անպարտելի ուժ, մեզ են զորակցում, մեզ հետ են Արայի հայրական Օրինանքը, Վահագնի Ջորությունը, մեր երկրի Արևը: Էլ ի՞նչ թշնամի, էլ ի՞նչ բազմություն՝ պարզապես փքված ձյունե մեծություն, որ ջուր է դառնում զորության բոցից:

Ապա Հայկը հայացքով որոնեց Բելին տիտանյան զինված ամբոխի մեջ: ԵՎ նկատեց բանակի թիկունքում, բլրի վրա կանգնած ընտրյալ հսկաների խումբը, որ բավական երկար տարածությամբ անջատված էր զինված ամբոխից: ԵՎ այդ հսկաների մեջ նա ճանաչեց Բելին, որ գլխին կրում էր երկաթե սաղավարտ՝ արքայական տարբերանշանով, թիկունքի ու լանջի վրա ուներ պղնձե զրահ, սրունքների ու թևերի վրա՝ պահպանակներ, մեջքին կապել էր գոտի՝ ձախ կողմից կախված կեռ սրով. աջ ձեռքում բռնել էր հսկայական նիզակ, իսկ ձախում՝ վահան:

ԵՎ Հայկը իր հուժկու ծայնով կանչեց.

- Հե՛յ, տիտանյան Բել, ո՞ւր ես հավաքել այս ամբոխը եկել մեր Հողի վրա բազմել: Վերցրու՛ քո բանակը՝ չքվիր այստեղից, քանի դեռ սուրս չեմ հանել պատյանից:

Ծիծաղեց Բելը և ասաց.

- Ո՛վ, Հայգ Արմենների արքա՛, մի խումբ որսորդներով որսի՞ ես ելել, թե՞ հնազանդության ուխտավորներով եկել ես ինձանից խաղաղություն աղերսելու:

Բարկացավ Հայկը Բելի ամբարտավանության վրա և ասաց.

- Տիտանյան Բել, նվազ է իմ զորախումբը, բայց աստվածների զորախումբ է: ԵՎ աստվածները «խաղաղություն» բառը սրի ծայրով են փորագրում:

Ասաց, պատյանից հանեց թուր-կեծակին ու կանչեց Վահագնին: ԵՎ ինչպես կատաղի լեռնային գետակ, Հայկի քաջերի զորախումբը մխրճվեց տիտանների մեջ:

Երբ երկու կողմերի հսկաները իրար են հասնում, և սկսում է ահեղ ճակատամարտը, երկրի վրա սարսափելի դղրոյուն է բարձրանում: Հսկաները իրենց ահռելի գրոհի թափից մինչև վրա ահ ու սարսափ էին տարածում: Երկու կողմից հաղթանդամ զինվորներ էին սրահարվում ու գետին տապալվում: Ինչ տիտաններին էր՝ ամեն ընկածի փոխարեն տասը նորերն էին գալիս: Ինչ աստվածներին էր՝ ամեն ընկած զինվորի լիզում էին երկու արալեզները ու կենդանացնում, և նրանք առավել զորացած, մարտի էին նետվում:

Վիշապն էր հովանավորում տիտաններին: Վահագն էր շարժում բազուկն աստվածների ու նրանց աչքերում արևներ վառում:

Հայկը հնձում էր տիտաններին իր թուր-կեծակիով, հազար-հազար մարդ մի սայրն էր սպանում, հազար-հազար մարդ մյուս սայրն էր սպանում, հազար-հազար մարդ ճառագումն էր այրում: ԵՎ տիտանները սարսափած փախչում էին Հայկի առջևից: ԵՎ Հայկը եկավ կանգնեց Բելի դիմաց ու ասաց.

- Հե՛յ, տիտանյան նենգ արքա՛, քո ամբոխին աստվածների սրի բաժին ես արել, իսկ ինքդ թաքնվել ես թիկունքո՞ւմ: Սուրդ հանի՛ր պատյանից և դո՛ւրս եկ ասպարեզ մենամարտելու ինձ հետ:

Բելը սարսափեց Հայկին տեսնելով և քծնական ժպիտով դիմեց նրան.

- Ո՛վ, Արյաց արքա՛, մեծդ աստվածների մեջ, մեղմիր քո ցասումը և սուրդ դիր պատյան. եկ հյուրասիրվիր իմ վրանում, հանգստացիր և հետո, եթե կամքն է իմ ու քո Աստվածների, կմենամարտենք:

- Ո՛չ,- մերժեց Հայկը,- պատյանից հանված սուրդ ետ պատյան չի դրվի, դա է բնույթը աստվածների:

ԵՎ սկսվեց մենամարտը աստված Հայկի և տիտան Բելի միջև: Ահեղ կռիվ էր: Երկիրն էր դղրդում նրանց ոտքերի տակ. սրերի զարկից կայծեր էին թռչում և մինչև երկինք հասնում, միախառնվում արևի բոցին. նրանց գոռոցից օդն էր թունդ առնում:

Երկար էին կռվում, բայց ոչ մեկը չէր հաղթում: Հայկը հեշտությամբ կասեցնում էր Բելի զարկերը: Ահեղ էին Հայկի զարկերը: Հայկի զարկից Բելը ընկնում էր, բայց նորից ոտքի էր կանգնում և շարունակում կռիվը: Ջարմանում էր Հայկը, թե ինչո՞ւ իր թուր-կեծակին չի վնասում Բելին, ինչո՞վ է կախարդված Բելը:

Նրանք կռվեցին մինչև մութն ընկնելը: Մութին երկու բանակները բաժանվեցին իրարից, գնացին հանգստանալու, որ առավոտյան լույսով նոր մարտի ելնեն: Երկու կողմի հոգնած զինվորները խոր քուն մտան: ԵՎ միայն երկուսը քնած չէին: Բելը զոհ էր մատուցում իր Աստված Վիշապին, աղոթում էր նրան, խնդրելով պահպանել իրեն Հայկի զարկերից: Իսկ Հայկը զոհ էր մատուցում իր Աստված Վահագնին և դիմում նրան.

- Ո՛վ, Ամենագոր Վահագն, ասա ինձ՝ ինչո՞վ է կախարդված Բելը, որ իմ թուր-կեծակին խոցում է նրան, բայց չի վնասում:

ԵՎ Վահագնը ասաց.

- Ո՛վ, երկրային աստված Արիի արժանավոր ժառանգ, Բելը չի կախարդված, քո սուրն է կախարդված: Հայր Արայի կամքով քո թուր-կեծակին քո արյան դեմ կորցնում է իր զորությունը, իսկ Բելի մեջ քո հոր արյունն է: Բելին միայն մի կայծ-նետով կարող ես սպանել:

ԵՎ Վահագնը մի կայծ-նետ տվեց Հայկին:

Առավոտյան հենց որ արևը ծագեց, երկու կողմի հսկաները նորից կպան իրար: ԵՎ նորից հողը դրոզաց հսկաների ոտքերի տակ: Բելը, վախենալով Հայկից, ավելի մեծաքանակ հսկաների խմբի մեջ էր թաքնվել:

Հայկը տիտան զինվորներին աջ ու ձախ կոտորելով, մոտենում է Բելին: Հսկաների խմբի մեջ նկատում է թաքնված Բելին. մինչև վերջ ձգում է իր լայնալիճ, հզոր մայրափայտյա աղեղը և կայծ-նետն արձակելով՝ ուղիղ հարվածում է Բելի կուրծքը զրահավորող պղնձե տախտակին: Նետապլաքը շեշտակի թափով անցնում է զրահը, Բելի թիկունքից դուրս գալիս և խրվում հողի մեջ: Ամբարտավան Բելը մսե արձանի նման տապալվում է գետին և շունչը փչում:

Բելի զինվորները, տեսնելով իրենց արքայի կործանումը, խուճապահար դիմում են փախուստի: Հայկը դիմում է տիտաններին և ասում.

- Լսե՛ք ինձ, տիտաններ: Հայր Արան աստվածներին իրենց Հողն է տվել, տիտաններին՝ իրենց Հողը: Ապրեք խաղաղությամբ ձեր Հողի վրա: Բայց թե մեկ էլ սրով Արարատ եկաք՝ նայե՛ք ձեր արքային և խղճացե՛ք ձեր օրը:

Փառահեղ հաղթությամբ վերադառնում էին պատերազմից Հայկյան քաջերը: Ամենուր նրանց գովքն էին անում, ամենուր երգ ու պարով էին դիմավորում նրանց:

Հայկյան զինվորները ամեն տեղ մեծ պատվի էին արժանանում, և ամենքը նրանց Հայկյան քաջեր էին անվանում: ԵՎ այրերը երազում էին Հայկյան զինվոր լինել: ԵՎ ամեն տարի մեծ Նավասարդ էին սարքում, հույս ունենալով իրենց հաղթությամբ Վահագն Աստծո օծումը ստանալ և դառնալ Հայկյան զինվոր: ԵՎ ամեն կին երազում էր Հայկյան զինվորի մայր լինել:

ԵՎ Հայկը ամուսնացավ գեղեցիկ Նանեի հետ և շատ զավակներ ունեցավ: ԵՎ ամեն ծնվող զավակի համար մի ծնունդի ծառ էր տնկում: Հետևելով Հայկին, Արիները սկսեցին նույնպես ծնունդի ծառեր տնկել իրենց նորածին որդիների համար:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

Երկար, շատ երկար էր կառավարում Հայկը Արարատյան Արիներին՝ Հայգ Արմեններին: Հայրական հոգատարությամբ և աստվածադիր օրենքներով էր կառավարում նա: Հայկը սիրում էր ամենքին և ամենը: ԵՎ նրա սիրտն ու տան դուռը միշտ բաց էին բոլորի համար: Արմեններն էլ սիրում ու պաշտում էին Հայկին և Արմենների հայր անվանում: ԵՎ այնքան մեծ էր Արմենների պաշտամունքը Հայկի նկատմամբ, որ ամեն զոհ մատուցելիս, Աննահ Աստվածների հետ մեկտեղ փառաբանում էին նաև Հայկին, որ Հայգ Արիի պատկերը ուներ:

ԵՎ ահա մի օր Հայկը հրովարտակ է ուղարկում Արարատի բոլոր կողմերը և բոլոր տոհմերի նահապետներին կանչում իր մոտ: Հավաքվեցին Արմենական բոլոր մեծ ու փոքր տոհմերի նահապետները: Հայկի հրավերով եկան նաև Արարատից դուրս Արի Ազգերի առաջնորդներ Արևելքից ու Արևմուտքից, Հյուսիսից ու Հարավից: Երբ բոլորը հավաքվեցին, ներկայացավ նաև ինքը Հայկը, տոնական հագուստով և հանդիսավոր բազմեց իր գահի վրա:

Հայկի այդ տոնական հագուստը և ընդգծված հանդիսավորությունը զարմանք ու երկյուղ էին առաջացնում հավաքվածների մեջ: Բոլորը զգում էին կամ շատ ուրախալի լուր են լսելու, կամ շատ ողբերգական: Ո՞րն է լինելու: Փորձում էին կռահել. չէին կարողանում և անհամբեր սպասում էին Հայկի խոսքին: Իսկ Հայկը լուռ էր: Նա չէր շտապում խոսել: Նա հայրական ժպիտով և կարոտալի հայացքով շոյում էր ամեն մեկին առանձին-առանձին: Տազնապալի սպասումը տանջում էր բոլորին: Նրանք պատրաստ էին լսել թեկուզ ամենավատ լուրը, միայն թե ազատվեին այդ տազնապալի սպասումից: Վերջապես Հայկը դիմելով բոլորին, ասաց.

- Ո՛վ, սիրելիներդ իմ, ես կանչել եմ ձեզ հրաժեշտ տալու: Ես գնում եմ միանալու իմ նախնիներին:

Մի պահ բոլորը պապանձվեցին. ամեն ինչ կսպասեին, բայց ո՛չ այդ հայտարարությունը: Շուտով ըմբռնեցին Հայկի ասածի էությունը և խոր երկյուղով խառնվեցին իրար:

Առաջին անգամ ըդվագեցին Հայկի դեմ: Ոչ ոք չէր ընդունում նրա հրաժեշտը: Տխրեց Հայկը, ձեռքով սաստեց բոլորին և ասաց.

- Ո՛վ, Արմեններ, մի՞թե ես այնքան անարժան առաջնորդ եմ եղել, որ դուք այսօր զլանում եք նույնիսկ հրաժեշտի երջանկություն պարզելի ինձ:

Լռեցին բոլորը, և ամեն մեկն իր շփոթված մտքով խորացավ ինքն իր մեջ: Ծանր, շատ ծանր լռություն էր տիրում, բայց ամենքի մեջ փոթորիկ էր ու պատերազմ անելանելի շփոթ: Տոհմապետերից ամենախմաստունը վերջապես դիմեց Հայկին ու ասաց.

- Ո՛վ, Մե՛ծդ Արի Հայկ, դու շատ լավ գիտես, որ բոլոր Հայգ Արմենները սիրում ու պաշտում են քեզ և քեզ Արմենների հայր են անվանում: Դու չես կարող կասկածել մեր սիրուն և նվիրվածությանը: Ռեստի ես նույն հարցը կտամ քեզ. մի՞թե մենք այնքան անարժան զավակներ ենք եղել քեզ համար, որ վաղաժամ ուզում ես հեռանալ մեզանից:

Պայծառացավ Հայկը, գոհունակությամբ ժպտաց և ասաց.

- Ո՛վ, իմ սիրելի Արմեններ, դուք էլ գիտեք, որ իմ ամբողջ սերը ձեզ եմ տվել: Բայց գիտցեք, որ հրաժեշտի պահը ինձանից չի կախված: ԵՎ ընդհանրապես վաղաժամ կամ ետնաժամ մահեր չեն լինում: Բոլոր մահերը ճիշտ ժամանակին են լինում: Չէ՞ որ մարդ, որ ծնվում է, անպայման իր որոշակի բնական դերն ունի, որ իր ամբողջ կյանքում պիտի կատարի: Դեր չունեցող մարդը՝ կենդանի վիժվածք է. իր դերը չկատարող մարդը՝ կենդանի դիակ է: ԵՎ նույնիսկ նրանց մարմնավոր գոյությունը կյանքի հետ ոչ մի կապ չունի: ԵՎ մարդու ամեն մի կյանքի տևողությունը համապատասխանում է նրա դերի կատարմանը: Ես կատարել և ավարտել եմ իմ դերն այս կյանքում, ուստի իմ այս կյանքի սահմանն ավարտված է: ԵՎ եթե ես աննպատակ կառչեմ այս կյանքին, ապա կհավասարվեմ կենդանի վիժվածքներին ու կենդանի դիակներին և չարիք կլինեմ կյանքի համար: ԵՎ Հայր Արայի կամքով ես հրաժեշտ եմ տալիս ձեզ: Առավոտյան Արագածի լանջին մի կիզախարույկ

կպատրաստեք, որ նախնյաց ավանդույթի համաձայն այրեք իմ մարմինը, և ես, որ հուր էի, նորից հուր դառնամ:

Ջարմացան բոլորը, և նահապետներից մեկը տարակուսանքով ասաց.

- Ո՛վ, Արմենների հայր, մեզ համար սուրբ է քո կամքը, բայց մեր նախնյաց ավանդույթով այրում են անկենդան մարմինը, իսկ դու ողջ ես:

- Ո՛չ, սիրելիս, - պատասխանեց Հայկը, - ես արդեն ոգի եմ, և իմ մարմինը այլևս պայմանական է: Հայր Արայի կամքով ես ինքս պիտի տեսնեմ իմ կիզումը խարույկի վրա, որն ուղեկցվելու է ճոխ և ուրախ տոնախմբությամբ:

Առավոտյան արևի առաջին ճառագայթների հետ Հայկը նստեց իր սպիտակ նժույզը և շարժվեց դեպի Արագած: Նրան հետևում էին Արմենական տոհմերի նահապետները և եղբայրական Ազգերի առաջնորդները: Հազար ու հազար Արմեններ ամեն կողմից շտապում էին Արագած, հրաժեշտ տալու իրենց սիրելի առաջնորդին: ԵՎ ամբողջ ճանապարհին բազմագույն և բազմաբույր ծաղիկներ էին շաղ տալիս Հայկի նժույզի ոտքերի տակ: Ամբողջ ճանապարհին փառերգերն ու պարերը ուղեկցում էին Հայկին, երջանկացնելով նրա հրաժեշտը:

Բազմահազարանոց թափորը հասավ Արագած, որի լանջին կիզախարույկի փայտեր էին դիզված: Կիզախարույկից մի փոքր ներքև Հայկը մի խարույկ վառեց, գոհ մատուցեց, փառաբանեց Հայր Արային ու Անմահ Աստվածներին և ապա դիմեց իր նախնիներին.

- Ո՛վ, իմ անմահ նախնիներ, ես իմ դերը այս կյանքում ավարտել եմ ու ձեզ մոտ եմ գալիս. թե ես արժանի եմ ընդունեք ինձ:

ԵՎ ապա շրջվեց իրեն ուղեկցող առաջնորդներին և ասաց.

- Ո՛վ, Արմենական տոհմերի նահապետներ, ո՛վ, Արի ազգերի առաջնորդներ, լսեք իմ վերջին պատգամը: Գիտցեք, որ Թորգոմի ուխտին որպես հետևանք, Տիտանները Երկրային Աստվածներից սերմ գողանալով, աստծո որդիներ կձնեն՝ սարսափելի գեներալվածներ*: ԵՎ այդ աստծո որդիները՝ գեներալվածները, արիական

զորությամբ և տիտանյան չարությամբ, ձեր դեմ կառաջնորդեն Տիտաններին և շատ չարիքներ կգործեն: ՌԻստի Հայր Արայի կամքով պատվիրում եմ ձեզ՝ Արի արյունով ճանաչեք իրար և հենց այդ արյունով միայն երկրպագեք ձեր աստվածայնությունը: ԵՎ գիտցեք՝ երբեք վայել չէ, որ աստվածները երկրպագեն աստծո որդիներին:

Ասաց, վերցրեց ջահը և խարույկի բոցից վառեց այն: Ապա իր մոտ կանչեց ավագ որդուն և ջահը հանձնեց նրան: ԵՎ ինքը դանդաղ ու հանդիսավոր քայլքով գնաց ու բարձրացավ կիզախարույկի վրա:

Հազարավոր թմբուկներ խփեցին, հազարավոր շեփորներ հնչեցին, հազարավոր ձեռքեր բարձրացան՝ փառաբանելու Հայկին: ԵՎ այդ բոլորի ներքո Հայկի ավագ որդին մոտեցավ և իր ձեռքի ջահով վառեց կիզախարույկը: Խարույկը բոցավառվեց, և կրակը բոլոր կողմերից իր մեջ առավ Հայկին:

ԵՎ հանկարծ, ի զարմանս բոլորի, բոցավառվող Հայկը պոկվեց խարույկից ու դանդաղ սկսեց բարձրանալ երկինք: Նրա մարմինը ձուլվել էր կրակին և մի ամբողջություն կազմել: ԵՎ Արմեններն արդեն բարձունքից լսեցին Հայկի ձայնը.

- Ո՛վ, Արմեններ, ամեն աշնանը բոլոր տոհմերի նախնիների հետ ես էլ կիջնեմ Արարատ: Թող բոլոր տոհմերը հավաքվեն իրենք իրենց մեջ, հանդիպելու իրենց նախնյաց ոգիների հետ: ԵՎ գիտցեք, Արմեններ, միայն ձեր նախնիների հետ հարաբերվելով դուք կամբողջացնեք ձեր տոհմերը և կգորանաք ինքներդ: Մոռանալով ձեր նախնիներին, դուք կքայքայեք ձեր տոհմերը և ինքներդ էլ կտկարանաք:

Թմբուկների ձայնը, Արմենների երգն ու պարը երկար ուղեկցում էին համբարձվող հրեղեն Հայկին, մինչև որ Հայկը ձուլվեց երկնի կապույտին:

ԵՎ այնուհետև Արմենական տոհմերը աշնան Արեգօրերից մեկը նվիրում էին իրենց նախնիներին: Ամեն տոհմի զավակները ամենահեռավոր վայրերից անգամ հավաքվում էին իրար գլխի: Ջոհ էին մատուցում, խնջույք սարքում, երգում, պարում և նախնիների հովանավորությամբ

նորոգում էին իրենց տոհմային զգացողությունը և առավել
հարազատանում իրար:

ԱՍՔ ԱՐԱ ԳԵՂԵՑԻԿԻ ՄԱՍԻՆ

ՉՆԵՐԿՈՂ ՄԱՀ

Հայկի սերնդից քաջակորով Արամը որդի արարեց: Աստվածային գեղեցկություն ուներ մանուկը, և որպես երկու արեգակներ աչքերն էին շողում նրա մշտաժպիտ դեմքին: ԵՎ արարչապատկեր այդ մանուկին Արարչի անունով կնքեցին՝ Արա: ԵՎ աճում էր արարչապատկեր մանուկը, շրջապատված սիրով ու ջերմությամբ: ԵՎ ինչպես բոլոր երջանիկ մանուկները, նա նույնպես բարի էր, ժպտուն և սիրող: ԵՎ բոլորը անվանում էին նրան Արա Գեղեցիկ:

ԵՎ երբ մեռավ Հայկյան Արամը, Արարատի խնամակալությունը ժառանգեց Արա Գեղեցիկը: Մեռնելուց առաջ Արամը նրան հանձնեց իր թուր-կեծակին ու ասաց.

- Գիտցի՛ր, որդի՛ս, որ արարունի միակ պայմանը խաղաղությունն է, իսկ խաղաղությունը այս սրի ծայրին է:

Սիրով ու նվիրվածությամբ էր Արա Գեղեցիկը կառավարում Արիներին: Նա պահպանում էր Արարատի զորությունը, և երկարատև խաղաղություն էր հաստատվել Արարատում: ԵՎ արարում էին Արիները, զորությանը ապավինած՝ շեներ էին կառուցում, ջրանցքներ բացում, այգիներ աճեցնում: ԵՎ երգն ու պարը ամենօրյա ուղեկիցն էին Արիների երջանիկ կյանքի:

Չարությունից ու անզորությունից հալումաշ էր լինում տիտանների արքա Նինոսը: Նա վաղուց իր նախնի Բելի սպանության վրեժն էր նյութում: Բայց Արամից կրած ծանր պարտությունները զսպում էին նրան, և նա սպասում էր Արամի մահին: Բայց երբ իմացավ, որ Արա Գեղեցիկը ավելի է զորացնում Արարատը, սարսափեց և իր ապահովությունը հոգալով, իր բարեկամությունը առաջարկեց նրան: ԵՎ բարեկամության դաշինք կնքեցին Արա Գեղեցիկն ու Նինոսը:

Բայց Արա Գեղեցիկի դաշինքը գորությունից էր, իսկ Նինոսինը՝ վախից:

Բայց շուտով վախճանվեց Նինոսը, և Անապատի տիրակալ դարձավ նրա կինը՝ Շամիրամը: Իշխանատենչ էր Շամիրամը, չար և անգուսպ: ԵՎ այդ բոլորը առավել վտանգավոր էին, քանզի նա օժտված էր նաև կանացի բոլոր խարդավանքների կատարելությամբ: Նա չէր հանդուրժում Արիների հետ խաղաղ գոյակցություն և նյութում էր՝ Արարատին տիրելու և կործանելու իր ծրագիրը: Նա գոհ մատուցեց Վիշապ Աստծուն և խնդրեց նրա աջակցությունը:

ԵՎ Վիշապը հայտնվեց Շամիրամին ու ասաց.

- Ո՛վ, տիտանների արժանավոր դու՛ստր, աստվածահաճ ծրագիր ես նյութել դու: ԵՎ թող քեզ ուղեցույց լինի քո նախամայրերից Խաթունը: Արիների դեմ Արիների արյունով կռվիր:

- Ինչպե՞ս տիրանամ Արիների արյունին,- հարցրեց Շամիրամը:

ԵՎ Վիշապը ասաց.

- Ո՛ւմ ցուլն էլ թռնի մեր կովի վրա, հորթը, ի վերջո, մերն է լինելու:

Հասկացավ Շամիրամը: Նա գուսաններ ուղարկեց Արայի մոտ՝ իր գեղեցկությունն ու կանացի հմայքը գովերգելու: Մեծամեծ նվերներով պատգամախոսներ ուղարկեց՝ իր ուղերձը հանձնելու Արա Գեղեցիկին: Ուղերձի մեջ նա գրում է. «Ո՛վ, Արյաց մեծ արքա՛, արարչապատկեր Արա Գեղեցիկ, քո աստվածային շնորհներից, որ այդպես առատորեն բաշխում ես քո Հայ Արմեններին, մի փոքր մաս էլ հատկացրու Տիտանների տիրուհուն, որպես երկու Տեղերի հավերժական բարեկամության երաշխիք: Եկ ինձ մոտ և կամ ամուսնացիր ինձ հետ ու բոլորի վրա թագավորիր, կամ էլ ինձ հետ սիրո դաշինք կնքելով, վերադարձիր քո երկիրը»:

Բայց Թորգոմի մասին ավանդությունը, որ սերնդե սերունդ փոխանցվելով հասել էր Արա Գեղեցիկին, զգուշացնում էր Տիտանյան կանանց խարդավանքից: ԵՎ Արա Գեղեցիկը կտրականապես մերժեց Շամիրամի խնդրանքը:

Հուսահատված Շամիրամը լաց եղավ զայրույթից ու վիրավորանքից: Նա որոշեց պատժել հանդուգն Արա Գեղեցիկին: Մեծ զորք հավաքեց, հարձակվելու համար Արարատի վրա: Նա մեծ խարույկ վառեց, զոհ մատուցեց Վիշապին և խնդրեց օգնել իրեն՝ տապալելու Արիների զորությունը:

Վիշապը հայտնվեց Շամիրամին ու ասաց.

- Ո՛վ, Տիտանյան մեծ տիկին, Արարատում ես անզոր եմ, քանզի այնտեղ լույս է, և Վահագն է իշխում այնտեղ: Բայց ես կդիմեմ Ստորգետնյա Արքա Յահվահին. նա իմաստուն է ու խորամանկ: Գուցե նա մի ելք գտնի:

Վանչեց Յահվահին: Յահվահը եկավ, լսեց Վիշապին, երկար մտածեց և վերջը գտավ հնարը: Նա մի ուլունքաշար վզնոց տվեց Շամիրամին ու ասաց.

- Այս կախարդական վզնոցը կապիր պարանոցիդ: ԵՎ կռվի ամենաթեժ պահին, երբ Արա Գեղեցիկը ամբողջությամբ կլանված է կռվով, հայտնվիր նրա առջև, հմայիր նրան ու կախարդիր այնպես, որ նրա բազուկը թուլանա ու իջնի: Այդ ժամանակ ես ներքևից, Վիշապը վերևից կհարձակվենք ու կխլենք նրա թուր-կեծակին: ԵՎ քո զորականները հեշտությամբ կսպանեն նրան:

- Բայց ի՞նչ հնարներով հմայեմ ու կախարդեմ նրան,- հարցրեց Շամիրամը:

ԵՎ Յահվահը ասաց.

- Ո՛վ, կանանց մեջ ամենակատարյալը, նույնիսկ Աստվածները քեզանից պիտի սովորեն հնարամտություն և խարդավանք, ո՞ր ես դու մեզանից հարցնում:

Գուժկան է հասնում Հավերժական Քաղաք և հայտնում, որ Շամիրամը մեծ զորքով գալիս է Արարատը տիրելու և կործանելու: Արա Գեղեցիկը հավաքում է իր զորականներին, մեծ խարույկ է վառում, զոհ է մատուցում Վահագն Աստծուն և խնդրում է՝ իր Աստվածային Ջորությամբ օժել իրենց սրերը:

Վահագնը հայտնվում է և ասում.

- Ո՛վ, երկրային աստված Արիից սերված, արարչապատկեր Արա Գեղեցիկ, ծանր ճակատամարտ է սպասում քեզ, քանզի Տիտան ռազմիկների զորությանը

միախառնված է նաև կանացի խարդավանք: Տիտան ռազմիկներին դու հեշտությամբ կհաղթես, բայց զգուշացիր Շամիրամի խարդավանքից: Թե ռազմադաշտում քո դիմաց կին հայտնվի, ինչ կերպարանքով էլ որ լինի՝ գիտցիր, որ դա Շամիրամն է: Չնայե՛ս նրան, աչքերդ ուղղիր արևին ու սպանի՛ր այդ կնոջը:

Ապա Վահագնը արևից կռած խաչ-պատերազմին կապեց Արա Գեղեցիկի ձախ բազկին, օծեց նրա և Արի զորականների սրերը: ԵՎ Արյաց զորաբանակը արշավեց Շամիրամին ընդառաջ:

Մեծ ճակատամարտ սկսվեց: Երկու կողմից էլ շատ ու շատ քաջեր ընկան: Հողը դղրդում էր կռվող հսկաների ոտքերի տակ: Փոշին բարձրացել և ծածկել էր ամբողջ աշխարհը: Արա Գեղեցիկը իր թուր-կեծակիով այդ ու ձախ հնձում էր տիտաններին: ԵՎ ոչ ոք չէր կարողանում կանգնել նրա դիմաց: Տիտանները խուճապահար փախչում էին նրա առջևից: Ոգևորված Արիները տապալում էին Չարիներին և հաղթական աղաղակներով հալածում նրանց: Հաղթական էին Արիները, և Տիտանները զգալով իրենց պարտությունը, միայն գլուխներն ազատելու մասին էին հոգում:

ԵՎ հանկարծ Արա Գեղեցիկի ձիու առջև հայտնվեց մի հերարձակ, կիսամերկ գեղեցիկ կին: Նա փռվեց հենց ձիու առջև: Ծառս եղավ ձին ու կանգ առավ:

- Ո՛վ, Արյաց քաջ արքա՛,- արտասվախառն կանչեց գեղեցկուհին,- թե դու քո անհաղթ սրով վերջ ես ուզում տալ իմ Տիտան Ցեղին, ապա իջեցրու քո սուրը իմ պարանոցին, սպանի՛ր ինձ և իմ անմեղ արյունով մեղմիր քո մոլուցքը:

Կռվի ոգևորության պահին այնքան մեծ էր, որ Արա Գեղեցիկը մոռացել էր սպասվող խարդավանքի մասին: ԵՎ անսպասելիորեն հայտնված այդ դժբախտ կինը շփոթեցրեց Արյաց արքային: Նա լսեց կնոջ խոսքերը, նայեց նրան: Նա մոռացավ և՛ իրեն, և՛ արևը, և՛ Վահագնի պատգամը:

- Վե՛ր կաց, ո՛վ, կին,- ասաց Արա Գեղեցիկը,- Արին մարդասպան չէ, նա ռազմիկ է և միայն ռազմիկների դեմ է կռվում:

ԵՎ հանկարծ նրա հայացքը ընկավ կնոջ վզնոցին: Կախարդվեց Արա Գեղեցիկը: Նրա բազուկը թուլացավ և

դանդաղ իջավ ցած: Հենց այդ պահին Յահվահը ներքևից ուժգին հարվածեց Արա Գեղեցիկի թուլացած բազուկին, և թուր-կեծակին ձեռքից ընկավ: Վրա հասավ Վիշապը, վերցրեց սուրը ու թռավ երկինք:

Հենց որ Արա Գեղեցիկի ձեռքից ընկավ թուր-կեծակին, անմիջապես խաչ-պատերազմին նրա ձախ բազկին սևացավ և կորցրեց իր պաշտպանական գորությունը:

Արա Գեղեցիկը սթափվեց մի չարախինդ ծիծաղից: Նրա դիմաց կանգնած էր սպառազինված Շամիրամը, շրջապատված իր զորականներով: Շամիրամը գոհ էր իր խարդավանքի հաղթանակից: ԵՎ նրա հրամանով զորականները հարձակվեցին անգեն Արա Գեղեցիկի վրա և սրախողխող արին: Տեսնելով իրենց արքայի մահը, Արիները տեղի տվին ու պարտվեցին:

Իսկ Վահագնը սրընթաց հասավ Վիշապին՝ ետ խլելու թուր-կեծակին: ԵՎ կատաղի Մեծամարտ սկսվեց Աստվածների միջև: Վիշապին միացավ և Յահվահը: Երկրի վրա կռիվն արդեն վերջացել էր՝ Տիտանները հաղթել էին: ԵՎ մարդիկ զարմացած դիտում էին Աստվածների Մեծամարտը: Վահագնը կռվում էր երկու Աստվածների դեմ: Երկար տևեց նրանց Մեծամարտը: Վերջապես Վահագնը Վիշապից խլեց թուր-կեծակին: Վիշապը փախավ ու թաքնվեց Անապատի ծերպերում, Յահվահն էլ փախավ ու մտավ Երկրի խոր ընդերքը:

Վահագնը խռոված ու վրդովված նայեց թուր-կեծակիին ու ասաց.

- Երբ Արիի ձեռքից սուրն ընկնում է, ուրեմն այն այլևս պետք չէ նրան:

ԵՎ Վահագնը թուր-կեծակին զցեց դեպի արևը: Թուր-կեծակին հասավ արևին և ձուլվեց նրան:

Արա Գեղեցիկը բարձրացավ, կանգնեց ոտքի: Նայեց իր շուրջը՝ ամենուր Արի և Չարի քաջեր էին ընկած: ԵՎ իր ոտքերի տակ պառկած էր ինքը՝ ամեն կողմից խոցված: Չարմացավ ինքը իրենից դո՞ւրս: ԵՎ հասկացավ, որ ինքը սպանված է: Դառը ժպտաց. «Ես պարտված եմ ու սպանված»: ԵՎ սարսափահար փախավ մահվան դաշտից, իր անշունչ մարմինը թողնելով այնտեղ: Նա վազում էր դեպի

աստվածամարդիկ: ԵՎ այնքան թեթև էր նա ու այնքան արագ էր սուրում առաջ:

Տեսավ, որ պատերազմը վերջացել է. Արիները պարտվել են, և Տիտանները տնօրինում են Արարատում: Հասավ լեռներում ապաստանած իր զորականներին, մոտեցավ, կանչեց նրանց: Բայց ոչ ոք չէր լսում նրան, ոչ ոք չէր տեսնում նրան: ԵՎ հասկացավ Արա Գեղեցիկը, որ ողջերի մեջ նա այլևս տեղ չունի ու գնաց միանալու իր նախնիներին:

Մասիսի գագաթին հավաքվել էին նախնիները: Այնտեղ էր նաև Արա Գեղեցիկի հայրը՝ Հայկյան Արամը: Բոլորը վշտացած էին ու վրդովված: Արա Գեղեցիկը կանգնեց նրանց առջև՝ մեղավոր հայացքը գետին սևեռած:

- Ո՛վ, իմ սուրբ նախնի՛ք,- ասաց նա,- ընդունեք ձեր պարտված որդուն:

Նախնիները լուռ էին, խոժոռված: Տանջող լռություները երկար տևեց: Վերջապես խոսեց հայրը և ասաց.

- Ես քեզ էի հանձնել իմ նախնիներից ժառանգած Արարատը: Ո՞ր է Արարատը. դու այն հանձնել ես Տիտաններին:

- Հայր իմ, ես խարդավանքի զոհ եղա,- փորձեց արդարանալ Արա Գեղեցիկը: Բայց հայրը կանխեց նրան.

- Ամեն տեսակի արդարացում ողջերին մոլորեցնելու համար է միայն,- ասաց նա,- մենք ոչ մի արդարացում չենք ընդունում: Հայրենիքից կորցրած ամեն մի հողակտոր անպատիժ չի անցնում արքայի համար, և հայ մանկանց հեղված ամեն մի կաթիլ արյուն անպատիժ չի անցնում արքայի համար: Իսկ դու կորցրել ես ամբողջ Արարատը և հայ մանուկներին Տիտանների սրի բաժին թողել: ԵՎ քեզ ներում չկա: ԵՎ նույնիսկ մահը քեզ ներում չի բերում: Դու կա՛մ պիտի հեռանաս մեզանից և, որպես անքավելի պատիժ, հավիտյան թափառես անհայտ միայնության մեջ, կա՛մ պիտի վերադառնաս և ազատես Արարատը, Դա է մեր որոշումը:

ԵՎ Արա Գեղեցիկը ասաց.

- Ո՛վ, իմ սուրբ նախնի՛ք, ես արժանի եմ ամենածանր պատժի: Բայց ես պատրաստ եմ վերադառնալ, ազատել

Արարատը, հանձնել իմ ժառանգին և ապա գալ ձեր ներումը հայցելու:

ԵՎ Հայկյան Արամը ասաց:

- Ընդունելի է քո ցանկությունը: Բայց գիտցիր, որ այլևս թուր-կեծակին չկա, և այսուհետև Հայ Արմենների գերագույն զոհաբերության ոգին է լինելու զորության միակ խորհուրդը և Վահագնին ապավինելու միակ պայմանը:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ԶՈՀԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

ԵՎ Արա Գեղեցիկը վերադարձավ մարտադաշտ: Բազում սպանված քաջերի մեջ գտավ իրեն, փարվեց իր մարմնին: Երկու Արալեզներ հայտնվեցին այնտեղ, լիզեցին նրա վերքերը: ԵՎ Արա Գեղեցիկը ողջ ու առողջ ոտքի կանգնեց: Գնաց մոտակա գյուղ, հովվի շորեր հագավ ու քայլեց Արարատով: Նա ամենուր տեսնում էր հաղթական Տիտանների, ամենուր տեսնում էր պղծություն և ավեր: Դառնացավ նա.

- Այո, ճիշտ են իմ սուրբ նախնիք. մի՞թե այս բոլորը ներել կարելի է:

Լեռներում նա գտավ իր թաքնված զորականներին և իր ընտանիքը: Նրանք ճանաչեցին իրենց արքային և շատ ուրախացան: Արա Գեղեցիկի վերադարձի լուրը տարածվեց Արարատով մեկ: ԵՎ ամեն կողմից եկան ցրված ռազմիկներն ու համախմբվեցին իրենց արքայի շուրջը:

Արա Գեղեցիկը վերակազմեց իր զորաբանակը: Նա պատրաստ էր պատերազմի: Բայց նա արդեն գիտեր, որ միայն գերագույն զոհաբերության շնորհիվ Վահագնը իր Աստվածային Զորությամբ կօժի իրենց սրերը: Երկար խորհեց Արա Գեղեցիկը: Ապա մեծ խարույկ վառեց և կրակի մեջ գցեց իր արքայական թագն ու իր ընտանիքի ամբողջ ունեցվածքը: Այդ կրակով օժեց իր և իր զորականների սրերը: Կանչեց Վահագնին և արշավեց պատերազմի:

Բախվեցին իրար Արյաց ու Չարյաց զորաբանակները: Ահեղ կռիվ եղավ: Բայց ճակատամարտը կարճ տևեց: Արիները պարտվեցին: Շատերը ընկան կռվի դաշտում, իսկ մնացածը նորից լեռները քաշվեցին:

Հասկացավ Արա Գեղեցիկը, որ իր արքայական թագն ու իր ամբողջ հարստությունը գերագույն զոհաբերություն չէին, և Վահագնը չընդունեց այն: Նա մտածում էր, թե ո՞րն է գերագույն զոհաբերությունը: Նստած լեռան լանջին, նայում էր շուրջը, նայում էր արևին: ԵՎ հանկարծ պայծառացավ նրա դեմքը:

- Գտա՛,- բացականչեց նա,- գերագույն զոհաբերություն կլինի իմ աչքերի լույսը, որով ես արևին եմ նայում:

Արա Գեղեցիկը հավաքեց իր զորաբանակը: Մեծ խարույկ վառեց:

- Ո՛վ, Ամենագոր Վահա՛գն,- կանչեց նա,- ես սիրով իմ աչքերի լույսը նվիրաբերում եմ Արարատի ազատագրմանը: Թող այն հաղթությամբ լուսավորի ողջ Արարատը, և միայն ես լինեմ զուրկ այդ լույսից: Ընդունիր իմ այս զոհաբերությունը և օծիր մեր սրերը քո Աստվածային Ջորությամբ:

ԵՎ Արա Գեղեցիկը իր մատներով իր աչքերը հանեց ու զցեց խարույկի մեջ: Ապա Արի գինվորները այդ կրակով օծեցին իրենց սրերը ու նորից արշավեցին Տիտանների դեմ պատերազմի: ԵՎ Արյաց զորաբանակը առաջնորդում էր ինքը՝ կուրացած արքան:

Երկար չտևեց ճակատամարտը: Արիները նորից պարտվեցին ու քաշվեցին լեռները:

Վշտացած էր Արա Գեղեցիկը: Իր աչքերի լույսն էլ չընդունեց Վահագնը: Ո՛րեմն դա էլ գերագույն զոհաբերություն չէր: «Բա ո՞րն է գերագույն զոհաբերությունը», մտածում էր Արա Գեղեցիկը և պատասխան չէր գտնում: Ջրկված աչքերի լույսից, նա օր ու գիշեր մտորում էր և չգիտեր, թե երբ է լույս, երբ է գիշեր, երբ է ինքը քնած ու երբ է արթուն: Վերջը նա դիմեց Աստվածամայր Անահիտին:

Աստվածամայր Անահիտը հայտնվեց նրան:

- Ո՛վ, Մայր Անահի՛տ,- ասաց Արա Գեղեցիկը,- ասա ինձ, ո՞րն է գերագույն զոհաբերությունը, որ կարող է անել աստվածամարդը:

ԵՎ Աստվածամայր Անահիտը ասաց.

- Անկարելին զոհաբերելն է գերագույն զոհաբերությունը, որդիս, երբ զոհաբերում ես քեզ համար ամենաթանկ բանը:

Ասաց ու հեռացավ: Հենց այդ պահին մոտ վազեց Արա Գեղեցիկի կրտսեր որդին՝ տասներկուամյա Արենը և փարվեց հորը: Արա Գեղեցիկը գրկեց որդուն և հանկարծ զգաց, որ սիրտը ցավազին կծկվեց անհուն կարոտից: Նա երկյուղած ցնցվեց:

«Որդի՛ս,- ինքն իրեն ասաց Արա Գեղեցիկը,- որդի՛ս...»: ԵՎ սարսափեց, հիշելով Աստվածամայր Անահիտի խոսքերը: «Ուրեմն սա՞ է գերագույն զոհաբերությունը... ո՛չ... ո՛չ...»: Նա ուժգին սեղմեց որդուն իր կրծքին, և նրա աչքերի խոռոչներից արցունքներ գլորվեցին որդու մազերին:

Փոքրիկ Արենը զարմացավ.

- Մի՞թե Արյաց արքան լաց է լինում:

Դառը ժպտաց Արա Գեղեցիկը և ասաց.

- Որդիս, արքան էլ հայր է, և նրա մեջ էլ հայրական արցունքներ կան, որ հորդում են, երբ վիշտն է տիրում որդու աչքերին:

- Հայր,- ասաց փոքրիկ Արենը,- բայց դու ինչպե՞ս ես տեսնում իմ աչքերը:

ԵՎ Արա Գեղեցիկը ասաց.

- Որդուն տեսնելու համար աչքեր պետք չեն: Հայրը որդուն հոգով է տեսնում:

Որդու գնալուց հետո վերսկսվեցին Արա Գեղեցիկի տառապանքները գերագույն ուժգնությամբ: Նա արդեն գիտեր, որ գերագույն զոհաբերությունը գերագույն տառապանք պատճառող զոհաբերությունն է՝ դա իր որդին է: Բայց նա ոչ մի կերպ չէր հաշտվում այդ մտքի հետ: Նա լաց էր լինում մանկան պես, գալարվում էր վշտից ու ցավից, օգնության էր կանչում Աստվածներին, նախնիներին: Բայց ոչ ոք չէր լսում նրա աղերսը, ոչ ոք չէր գալիս մոտը, ոչ ոք չէր մխիթարում նրան: Իսկ նրա ուղեղի մեջ անընդհատ պտտվում էին Աստվածամայր Անահիտի խոսքերը. «Պիտի զոհաբերես այն, ինչ չես կարող զոհաբերել. դա է գերագույն զոհաբերությունը»:

Արա Գեղեցիկը չիմացավ, որ արդեն գիշերն անցել էր, լույսը բացվել էր, և արևը ժպտում էր աշխարհին: ԵՎ միայն որդու ձայնը սթափեցրեց նրան: Արենը մոտեցավ հորը և ասաց.

- Հայր, այս գիշեր Աստվածամայր Անահիտը հայտնվեց ինձ: Ես արդեն գիտեմ քո հոգեկան խռովքը: Հաղթության համար դու պետք է ինձ զոհաբերես:

- Ո՛չ,- գրեթե ճչաց Արա Գեղեցիկը,- ո՛չ, չեմ կարող, դա անկարելի է:

- Հայր,- ասաց որդին,- բայց կարելին զոհաբերելը մի՞թե զոհաբերություն է:

- Չարագուշակ խոսքեր ես ասում, որդիս,- երկյուղեց Արա Գեղեցիկը:

- Ասա՛ ինձ, հայր,- ասաց որդին,- եթե դու պարտվես և Տիտանները գերեն ինձ, կսպանե՞ն:

- Այո,- պատասխանեց հայրը,- անպայման կսպանեն, չէ՞ որ դու արքայազն ես:

ԵՎ փոքրիկ Արենը ասաց.

- Հայր, եթե այդպես է՝ ավելի լավ չէ՞ ես զոհաբերվեմ փառավոր հաղթանակի համար, քան պարտության նվաստ զոհ լինեմ ես:

Սթափվեց Արա Գեղեցիկը, գրկեց որդուն ու երկար խորհեց նրա խոսքերի վրա:

- Այո, դու ճիշտ ես, որդիս,- վերջապես ասաց Արա Գեղեցիկը և ոտքի կանգնեց:

Արյաց զորաբանակը հավաքվել էր մի մեծ խարույկի շուրջը և սպասում էր արքային: Վերջապես Արա Գեղեցիկը դանդաղ քայլերով մոտեցավ, իր կրտսեր որդու՝ Արենի ուղեկցությամբ: Կանգնեց խարույկի մոտ, պատյանից հանեց սուրը, պարզեց երկինք ու կանչեց.

- Ո՛վ, դու, Ամենագոր Վահագն, Հայր Արայի կամքով քեզ եմ նվիրում Արյաց փառավոր հաղթության այս զոհաբերությունը. ընդունիր այն և օծիր մեր սրերը քո Աստվածային Չորությամբ:

Ապա շեշտակի իջավ նրա սուրը, և խարույկի կրակը ճթթաց անմեղ արյան հորդումից:

Արի գորականները օժեցին իրենց սրերը և Արա Գեղեցիկի առաջնորդությամբ արշավեցին տիտանյան բանակի դեմ կռվելու:

Երկար տևեց ճակատամարտը: Արյաց օժված սրերը անխնա կոտորում էին Տիտաններին: ԵՎ ամենից շատ Արա Գեղեցիկի սուրն էր հնձում: Իր հոգով էր նա զգում թշնամիներին, և ոչ մեկը չէր ազատվում նրա սրից: Տիտանները խուճապահար փախչում էին Արարատից:

Վանա ծովի մոտ Արա Գեղեցիկը հասավ Շամիրամին, բռնեց նրա մազերից, կախարդական վզնոցը պոկեց ու զցեց ծովը: ԵՎ ապա իր սրով կտրեց նրա գլուխը, տվեց պարտված Տիտաններին ու ասաց.

- Տարե՞ք այս գլուխը ձեզ հետ և մի բարձր տեղ ամրացրե՛ք, որ ձեր արքաները տեսնեն նրան և այլևս սրով չզան Արարատ:

Արարատը ազատված էր: Հաղթության տոնախմբություն էր ամենուր: Բոլորը ցնծում էին, բոլորը երջանիկ էին: Իսկ Արա Գեղեցիկը իր վերջին պատգամը հղեց Արիներին.

- Ո՛վ, Հայ Արմեններ, դուք անպարտելի կլինեք, եթե գերագույն զոհաբերության ոգով ապրեք:

Ասաց, Արարատի խնամակալ կարգեց իր ավագ որդուն՝ Անուշավանին և ինքը գնաց միանալու իր նախնիներին:

ՎԱՐԴԱՎԱՌ

Տիտանյան Բելի թոռները խոր վրեժ ունեին Արի Մանի սերնդից Հայկի թոռների նկատմամբ: Նրանք շատ անգամ էին արշավել Արարատ, Արի Հայերին պատժելու համար, բայց ամեն անգամ պարտվել էին ու ետ շարտվել:

Խորամանկ էր և համառ Բելի թռռներից Հրեշը: Նա դիմեց իր Աստված Վիշապին, խնդրելով առաջնորդել իրեն դեպի Արարատ: Բայց Վիշապը ասաց նրան.

- Արարատում Վահագն է, և ես Արարատում չեմ կարող Վահագնին հաղթել: Դիմիր ստորգետնյա Արքա Յահվահին. նա իմաստուն է և խորամանկ: Եթե նա հաղթի Վահագնին, իմ զորությամբ դու կհաղթես Արի Հայերին:

Տիտանյան Հրեշը մեծ զոհ մատուցեց Յահվահին: Յահվահը կանգնեց Հրեշի դիմաց ու ասաց.

- Քո բարեպաշտությունը վարձատրության է արժանի, ասա՛ ի՞նչ ես կամենում:

- Ես ուզում եմ Արարատը, - ասաց Հրեշը, - ես ուզում եմ, որ այնտեղ ոչ թե Արի Հայք, այլ իմ Ցեղը ապրի:

- Արարատում ապրելով, միևնույն է, Չարին Արի չի դառնա: Մի փորձիր գնալ արարչական օրենքի դեմ, դու կկործանվես:

- Բայց ես վրեժ ունեմ Արի Հայերի դեմ, դու էլ վրեժ ունես Վահագնի դեմ, - ասաց Հրեշը, - օգնիր ինձ տիրել Արարատին, և ես շատ ու շատ Արիներ կզոհաբերեմ քեզ համար:

- Դժվար է քո խնդրանքը, - ասաց Յահվահը, - բայց ես իմ աստվածային խոսքը պիտի կատարեմ: Գիտցիր, որ քո ուժը Արիների տկարության մեջ է: Արիների զորությունը Վահագն է, իսկ Վահագնի Ձորության ուժը Սերն է: Եթե Սերը վերանա Արի Հայերի միջից, Վահագնը անզոր կլինի պաշտպանել նրանց, արևը կխավարի Արարատում, Արիները կտկարանան, և դու Վիշապի զորությամբ կտիրես նրանց երկրին:

- Ո՞վ կարող է վերացնել Արիների Սերը, - հարցրեց Հրեշը:

- Միայն ես, - պատասխանեց Յահվահը, - ես կգողանամ այդ Սերը և շղթայակապ կպահեմ իմ թագավորության մեջ: Բայց դրա համար ինձ էլ զորություն է պետք: Եթե քո Ցեղը հավատա ինձ, ես կգորանամ:

Համաձայնվեց Հրեշը, և նրա ամբողջ Ցեղը երկրպագեց Յահվահին:

ՈՒ գորացավ Յահվահը: Երկար հետապնդեց Արիների Սիրո Աստվածուհի Աստղիկին: ԵՎ երբ Աստղիկը դավից անտեղյակ լոգանք էր ընդունում Երասխի ջրերի մեջ, վրա է հասնում Յահվահը, հափշտակում է նրան և տանում երկրի խորքը:

Մոլորվեցին Արի Հայերը: Սերը վերացել էր Արարատից: ԵՎ Արի Հայերը դրոնում էին այդ Սերը:

Չարախնդաց Յահվահը. «Ո՛չ, դուք ձեր Սերը չեք գտնի: Ես ձեզ ուրիշ Սեր կտամ՝ աստելության, մահվան սեր: Դուք կատեք ձեզ և ձեր Վահագնին»:

Յահվահը խտացրեց իր ամբողջ ցասումը և ապա դուրս մղեց: Արարատը ցնցվեց, հողը երերաց ու պատռվեց, բոց ու շիկացած հեղուկ ժայթքեց երկրի ընդերքից: Կործանվեցին ապարանքներ, տաճարներ, կործանվեցին քաղաքներ և շատ ու շատ Արիներ: Խուճապահար եղան Արիները: Թանձր ծուխը ծածկեց նրանց աչքերն ու հոգիները:

Խոժռվեցին Արիների դեմքերը, հայացքները մթագնեցին, սարսափն ու մոլուցքը պարուրեցին նրանց: Արի Հայերը ատեցին իրար, ատեցին երգն ու ժպիտը, ատեցին Արարատը, ատեցին արևին: Հավաքեցին իրենց ամբողջ սարսափն ու մաղձը և շարտեցին արևի վրա: ԵՎ արևը խավարեց: Չորացան ծառ ու ծաղիկ, ցամաքեցին կարկաչահոս առուները, թռչունները հեռացան Արարատից: ԵՎ Վիշապի առաջնորդությամբ տիտանյան Հրեշը հաղթական բազմեց Արարատում:

Կյանքի Սիրո փոխարեն Արի Հայերի մեջ հաստատվեց աստելության սերը, մահվան սերը: Վերացավ ժպիտը, վերացավ երգը: Կինը հեռանում էր ամուսնուց, ծնողը լքում էր զավակին, եղբայրը իր եղբոր դեմ սուր էր պարզում և խրում նրա կուրծքը:

Ցնծում էին Չարի տիտանները: Առատորեն Արի Հայեր էին զոհաբերում իրենց հովանավորող Յահվահին:

Անհանգստացած էր ամենագոր Վահագնը:

- Հա՛յր իմ, - դիմեց նա Մեծն Արային, - ես տիեզերական զորության տերն եմ, մի՞թե ես չեմ կարող փրկել իմ Արի Ցեղը այս նվաստ ստրկացումից:

- Ո՛չ, - ասաց Մեծն Արան, - դու չես կարող Արի Հայերին փրկել, քանի դեռ նրանք իրենք քեզ չեն կանչում: Քո Ջորուօյան ուժը Սիրո մեջ է: Գտիր Աստղիկին, վերադարձրու Սերը Արի Հայերին, այնժամ նրանք քեզ կկանչեն, և դու գորավոր կլինես:

Երկար էր որոնում Վահագնը Աստղիկին, բայց չէր գտնում, նա չէր լսում Աստղիկի ձայնը: Յահվահը գիտեր, որ Վահագնը կգտնի Աստղիկին նրա ձայնով: ԵՎ որպեսզի Վահագնը չլսի Աստղիկի ձայնը, նա Չարիների ձեռքով հաճախ Արի Հայերի կոտորածներ էր սարքում: ԵՎ սարսափած Հայերի աղետալի հառաչանքները, աղերսական աղոթքները, ողբերգական լացն ու կոծը խլացնում էին Աստղիկի ձայնը:

Վշտացած Վահագնը դիմեց Աստվածամայր Անահիտին.

- Այս եղեռական ոռնոցի մեջ ես ինչպե՞ս լսեմ Աստղիկի ձայնը:

ԵՎ Մայր Անահիտը ասաց.

- Արարատում գտիր մի մանուկ, որ դեռ չգիտի, թե ինչ է ատելությունը, ում աչքերում դեռ չի խավարել կյանքի կրակը և ում հոգու մեջ դեռ կարոտը չի մեռել: Նա կլսի Աստղիկի ձայնը:

Վահագնը Արարատի լեռներում տեսավ մի մանչուկ, որ հոգնած ու հյուժված, ընկնելով ու բարձրանալով առաջ էր շարժվում: Նա շատ էր քայլել և դեռ քայլում էր:

- Տղա՛, - ասաց Վահագնը,- ո՞վ ես դու և այսպես հոգնած ու միայնակ ո՞ր ես գնում:

- Ես Վիրապն եմ և որոնում եմ Վահագնին, - պատասխանեց տղան, - ես լսել եմ Աստղիկի ձայնը: Նա Վահագնին է կանչում: Եթե Վահագնը ազատի Աստղիկին, իմ հայրն ու մայրը կսիրեն ինձ:

Վահագնը հետևեց տղային ու հասավ մի մեծ ժայռի: Ժայռի տակից լսվում էր Աստղիկի ձայնը՝ նա Վահագնին էր կանչում:

Վահագնը գոռաց.

- Լսիր, Յահվահ, այդ ես եմ եկել: Վերադարձրու Աստղիկին, կամ էլ ելիր Մեծամարտելու, ինչպես վայել է Աստվածներին:

Յահվահը սարսափեց Վահագնի տեսքից ու ձայնից: Նա դուրս չեկավ Մեծամարտելու, փախավ ու ավելի խորը մխրձվեց երկրի ընդերքում:

Վահագնը իր Թուր-Կեծակիով հարվածեց ժայռին: Ժայռը փշրվեց՝ ամեն մի կտորը ավազի հատիկի չափ: Մի խոր փոս բացվեց: Վահագնը այդ փոսից հանեց Աստղիկին:

Իսկ փոքրիկ Վիրապը նայեց Աստղիկին, ժպտաց և ապա թեթև պոկվեց գետնից ու դանդաղ բարձրացավ երկինք: ԵՎ արդեն երկնի անհունից վերջին անգամ կանչեց.

- Երբ Աստղիկը սեր տա իմ հորն ու մորը, ամեն աշնան գիշերահավասարին ես կիջնեմ այստեղ, փարվելու նրանց:

ԵՎ այդ փոսը Վահագնի կամքով երբեք չփակվեց ու կոչվեց խոր Վիրապ՝ ի պատիվ այդ տղայի անունի:

Աստղիկը բարձրացավ երկինք, փարվեց Հայր Արային ու Մայր Անահիտին: Ապա նրանց օրհնանքը ստանալով, վերցրեց աստվածային ջրով լի մի սափոր և իջավ Արարատ:

Աստղիկը չճանաչեց Արարատը: Ամենուր փուշ ու տատասկ էր, և օձերն էին վխտում իր շուրջը: Ամենուր ոռնոց էր, լաց և ոչ մի ժպիտ:

Տեսավ՝ մի թափոր է մոտենում: Այլայլված դեմքերով, խորտակված հայացքներով, հոգնած ու հյուժված քայլում էին Արի Հայերը:

- Այդ ո՞ւր եք գնում, ազնիվ Արիներ, - հարցրեց Աստղիկը:

- Մենք հեռանում ենք այս անիծված երկրից, - ցասումով պատասխանեցին նրանք, - մենք հետևում ենք Վիշապի կանչին:

Աստղիկը տխրեց ու քայլեց առաջ: ԵՎ տեսավ՝ մի քանի աղջիկներ գալարվում են գետնի վրա, իսկ բազմաթիվ օձեր կրծոտում են նրանց մարմինները:

- Այս ի՞նչ եք անում, Արի աղջիկներ, - զարմացած բացականչեց Աստղիկը:

- Չե՞ս տեսնում, որ վիշապագուններին ենք կերակրում, - գայրացան աղջիկները:

Վշտացավ Աստղիկը, արտասվեց: Նրա արցունքները ընկան հողի վրա, և հրաշալի վարդեր բացվեցին: Վարդաբույրը տարածվեց շուրջը, և վարդերը շողարձակեցին մռայլի մեջ: Օձերը ֆշշացրին ու փախան: Կիսամեռ աղջիկները զմայլված վարդերին էին նայում: Աստղիկը ամեն մի աղջկա մի վարդ տվեց, ապա սափորից աստվածային ջուր սրսկեց նրանց վրա: Աղջիկներն անմիջապես կերպարանափոխվեցին, նրանց վերքերը փակվեցին, նրանք արթնացան խոր թմբիոց, դեմքերը պարզվեցին: Նրանք նայեցին վարդերին, նայեցին Աստղիկին, նայեցին իրար ու ժպտացին: ԵՎ գեղեցկացան նրանք:

- Ո՞վ ես դու, - հարցրին աղջիկները:

- Ես Աստղիկն եմ՝ Սիրո Աստվածուհին, - պատասխանեց նա- , Հայր Արայի կամքով ես աստվածային Սեր եմ բերել ձեզ: Եկեք ինձ հետ, երգով ու ժպիտով միասին շրջենք ողջ Արարատը, Վարդավառ սարքենք, վարդ-ջրով օծենք Արի Հայերին, որ ժպտան նրանք, որ սիրեն նրանք, որ աղջիկները սիրով հարսնանան, որ պատանիները Վահագնով զորանան և սիրով պաշտպանեն սերը ձեր հոգու:

Աղջիկները միացան Աստղիկին: ԵՎ սիրո թափորը շարժվեց առաջ: Աստղիկը վարդաջուր էր ցանում Արի Հայերի վրա, աղջիկները սիրո երգերով սեր էին բորբոքում Հայ պատանիների մեջ:

Ժպտում էին մայրերը, ժպտում էին հայրերը, ժպտում էին մանուկները, ժպտում էին պատանիները, կայտառանում, աշխուժանում՝ տեսնում էին Աստղիկին, տեսնում էին բազմաթիվ սեր Աստղիկներին ու սիրում նրանց:

Ժպտացին Հայերը, ժպտացին Աստղիկին, ժպտացին իրար: Սիրեցին Աստղիկին, սիրեցին իրար: Ո՛ր սիրո երգն ու ժպիտը տարածվեցին Արարատում:

Վարդավառ էր՝ սիրո տոնախմբություն:

Աստղիկը հավաքեց Հայերի ժպիտը, մի փունջ կազմեց ու արևին տվեց: Արևն էլ ժպտաց, հազարավոր ճաճանջներով ժպտաց Արի Հայերին ու Արարատին: Գնաց

օվկիանոսներից ջրեր հավաքեց, բերեց ու ցանեց Արարատի վրա: Նորից առուները կարկաչեցին, լճերը լցվեցին: Ու Արի Հայերը խաղացին ջրի հետ, իրար ջրեցին, իրար թրջեցին և բոլորը երջանիկ էին:

Վարդավառ էր:

Նորից ծառ ու ծաղիկ կենդանացան, հեռացած հավքերը վերադարձան Արարատ: Նորից աղջիկները հարսնացան, մայրերը՝ մայրացան: Իսկ Հայ պատանիք իրենց ժանգոտած սրերը փայլացրին ու աչքերը հառած արևին, կանչեցին. «Ո՛վ, Վահագն, մենք քե՛զ ենք դիմում...»:

ՏՈՐՔ ԱՆՉԵՂ

Անգեղա Տորքը՝ Հայկյան սերնդից, հայոց բարձրաբերձ լեռների հսկան, երբեք նման չէր հասարակ մարդու: Նա վիթխարի էր և շատ ահարկու: Աչքերը կարճես մի-մի կապույտ ծով, ճաճանչավորված արևի լույսով: Սև-սև ունքերը՝ մութ ամպի նման՝ բարդ-բարդ կուտակված աչքերի վրա: Կուրծքը կասես թե մի լանջ է լեռան, մեջքը՝ սարաժայռ, կռները՝ գերան - մի խոսքով՝ մի դև և ոչ թե հսկա: Ահռելի էր նա և այնքան ուժեղ, որ հիսուն գոմեշ չունեին մեկտեղ:

Նա մի հովիվ էր, հովիվ լեռնական, բայց ոչ հասարակ, այլ դյուցազնական: Առյուծ և վագր նրան տեսնելիս՝ սովոր շան նման մոտ էին գալիս. կարծում էին, թե նա էլ է գազան և նա է իրենց գորավոր արքան:

Նա չէր գործածում ո՛չ թուր և ո՛չ նետ, միայն իր տեսքով անում էր անհետ: Բայց երբ թշնամին երես էր առնում, նա այն ժամանակ ուժին էր դիմում:

Սև ծովի կողմից օտար թշնամիք թալանում էին ծովեզրյա գյուղեր: Միշտ գալիս էին անթիվ նավերով, այն էլ աշկարա, օրը ցերեկով. կողոպտում էին բազմաթիվ գյուղեր և գերի տանում հայոց աղջիկներ:

Մի անգամ եկան, խնդրեցին Տորքին, որ ավազակներից նրանց պաշտպանի: Գնաց մեր հսկան, բայց նավերն արդեն հեռացել էին Սև ծովի ափից: Ջայրացավ Տորքը, գոռաց, մռնչաց, իբրև մի առյուծ նետահար եղած: Բլրաչափ ժայռեր սարերից պոկեց, փախչող նավերի հետևից գցեց: Դղրդաց ծովը, բարձրացան ալիք, նավերը դառան շարժուն խաղալիք: Գնում էին կրկին ժայռերը գունդ-գունդ, զարկում նավերին ու տանում անդունդ: Ողջ կորան այդպես ավազակները դեպի անհատակ ծովի խորքերը:

Տորքի անունը շատ հռչակվեցավ, մինչև արքայի ականջը հասավ: Մեծ թագավորը կանչում է Տորքին, որ պարզեներ տա և նայի դեմքին: Երբ Տորքը հասավ արքայի

պալատ, արքայի վրա ազդեց մեծ զարմանք: Թագավորն ասաց.

- Ապրե՛ս, ապրե՛ս, Տո՛րք, դու մի անհատ չես լոկ, այլ մի ամբողջ գորք:

Պահեց պալատում ու պատիվ տվեց: Լսել էր արքան, որ հսկա մարդիկ չեն լինում խելոք և ոչ էլ ճարպիկ: ԵՎ Տորքի խելքը նա փորձել ուզեց:

- Ինչպե՞ս ես կարծում,- մի օր հարցրեց,- ո՞րն է գերազանց ո՞ւժը, թե՞ խելքը:

- Երկուսն էլ լավ են,- քաջ Տորքը ասաց,- փոքրիկ ուժի մեջ չի լինի մեծ խելք, ոչ էլ ուժեղը կլինի անխելք: Բայց ի՞նչ է խելքը - ոչ ոք չգիտե. անխելքի համար խելոքն անմիտ է: Ուրիշ է խելքը գլխապահության և ուրիշ՝ խելքը հափշտակության. դա ամենքն ունեն՝ թե՛ մարդ, թե՛ գազան, թե՛ խելոք լինի, թե՛ անմիտ, անբան: Բայց կա մի այլ խելք՝ խելք արարչության, որ արարում է, ստեղծում, շենացնում: Սա է ճշմարիտ խելքն իմ կարծիքով, և մարդը գազանից վեհ է սրանով:

Ջարմացավ արքան, այլև հիացավ, երբ հսկա Տորքից այս բանն իմացավ: Նա առաջարկեց մնալ պալատում, բայց Տորքը խնդրեց հեռացման հրաման: Արքան թույլատրեց, և Տորքը գնաց՝ լեռներում շնչելու բուրմունքը զարնան:

Գարունը Տորքին թախիծ պարզեց, որից ազատման չէր գտնում մի ելք: Օրեր, գիշերներ թափառում էր նա. թախտոտ աչքերը արևին հառում, գիշերը լուսնից արցունք էր քամում:

Աստղիկ Դիցուհին վերևից տեսավ ու մոտը եկավ:

- Ասա ինձ, եղբայր,- Աստղիկը ասաց,- ինչո՞ւ չես խաղում գազանների հետ, քար չես շարտում մի սարից մյուս սար: Ինչո՞ւ ես թախտում, անհույս հառաչում. ինչո՞ւ եմ խոնավ աչքերդ անհուն:

ԵՎ Տորքը ասաց.

- Ո՛վ, վեհդ, Դիցուհի՛, մի օձ, մի ծաղիկ կամ մի անշունչ քար չեն տեսել ես դեռ, որ սեր չունենա: Երկինք ու Երկիր, թե՛ ցամաք, թե՛ ծով, բոլորը մեկտեղ շնչում են սիրով: Լոկ ես եմ անսեր, մենակ՝ աշխարհում: ԵՎ այս աշխարհում

ո՞վ կսիրի ինձ: ԵՎ կգտնվի՞ այնպիսի մի կին, որ ուզի դառնալ Տորքին ամուսին:

Աստղիկը ժպտաց և ասաց նրան.

- Մի՛ հուսահատվիր, պատանի հսկա՛: Դու սե՞ր ես փնտրում. նա քեզ է սպասում՝ Հայկանուշը կույս: ԵՎ դու կտեսնես նրան երագում: Իսկ առավոտյան արևի լույսով, արևի ճամփով կգնաս առաջ, կհասնես այնտեղ, ուր ժայռի տակից աղբյուր է ժայթքում: Այնտեղ կգտնես սրտիդ դիցուհուն:

Աստղիկը ասաց ու անհետացավ: Տորքը քուն մտավ ու տեսավ նրան իր երագի մեջ: Նա գեղեցիկ էր և շատ նագելի, ինչպես նոր ծագած կարմիր արևիկ: ԵՎ նա երագում հաստատ խոսք տվեց և խոստանալով մի պայման դրեց. «Եթե գաս,- ասաց,- կռվես ու հաղթես, դու ինձ կստանաս, կառնես կտանես»:

Տորքը արթնացավ: ԵՎ սրտի սերը իր վառ կայծերով փռվեց երեսին վարդի թերթերով: Սիրտն ավելո՞ծվեց, հոգին բոցկլտաց: ԵՎ այնուհետև երագներ պես-պես աչքերի առաջ հեքիաթ էին հյուսում: Խելագար սիրտը գետնից անջատվում, սիրո թևերով երկինք էր ճախրում:

Տորքն արծվի նման թռչում է առաջ՝ արևի լույսով, արևի ճամփով և հասնում այնտեղ, ուր ժայռի տակից աղբյուր է ժայթքում: Աղբյուրի դիմաց մի բերդ էր կանգնած: Տորքը մոտեցավ, դռները բախեց: Բախում է, բախում, բայց չեն բաց անում, կարծես նրա հետ մի խաղ են խաղում: Երկաթե դուռը հսկան խորտակեց ու վեր բարձրացավ քարե սանդուղքով: ԵՎ ինչպես մանուկ՝ մորիցը խռով, սանդուխքի գլխին նստեց գլխիկոր:

Չքնաղ օրիորդը Տորքին մոտեցավ և իբր ինքն իրեն, նա այսպես ասաց.

- Ո՞վ պետք է լինի, արդյոք, այս հսկան, սա չէ՞ դյուցազուն Տորքը Անգեղա: Էլ ուրիշ ո՞վ կարա հանդգնել իմ բերդի դուռը այսպես խորտակել:

Տորքը որ լսեց, խռով մանուկի պես իբր ինքն իրեն պատասխան տվեց.

- Երբ ճանաչում է Անգեղա Տորքին, դուռն ինչո՞ւ փակեց նրա երեսին: Սա մի խաղ խաղալ միայն ուզեցավ և

հետևանքը իր աչքով տեսավ: Տորքն ահա կերթա, դուռը կշտկի և ինչպես առաջ էր, այնպես կկողպի:

ԵՎ Տորքը գնաց դուռը լավ կոփեց, սուր եղունգներով հղկեց ու կոկեց: Երբ նորից եկավ իր տեղը նստեց, Հայկանուշը նրան մեղմ աչքով նայեց:

- Ինչո՞ւ ես նստել,- ասաց,- չոր քարին, պետք է լավ պատվել քեզ պես ճարտարին: Ճանապարհորդ ես, քաղցած կլինես: Թե՞ հաց ուտելու ավտորժակ չունես:

- Քաղցած եմ, այո, բայց շատ եմ քաղցած,- հոգոց հանելով հսկա Տորքն ասաց,- ի՞նչ հաց պիտի տաս, որ ես կշտանամ, ի՞նչ ջուր պիտի տաս, որ ես զովանամ: Իմ հացն ու ջուրը, գիտե՞ս որն է այն - քո սերն է, հոգի՛ս, քո սերն է միայն: Մի նայիր, որ ես կոպիտ եմ ու բիրտ. այս կոպտության մեջ կա քնքուշ մի սիրտ, որ քեզ գլխովին իր մեջ կամփոփի և կպաշտպանի, կհովանավորի:

Հայկանուշն ասաց.

- Դու կպաշտպանես ինձ փորձանքներից, բայց ո՞վ կազատի ինձ քո ճիրաններից:

ԵՎ Տորքը ասաց.

- Արարչի կամքով Աստղիկ Դիցուհին ինքն է մեր սրտերն իրար միացրել, ինքն է երազում մեզ պսակել: Արարչի կամքն է, որ դու կին լինես Անգեղա Տորքին, և Տորքը անհուն սիրով քեզ սիրի:

Սիրում էր Տորքը, սիրում էր անկեղծ, սիրում էր սիրով անբիծ ու անեղծ, և կոշտատարազ իր դեմքը մթին դառել էր սիրո ցուլացող լուսին: Այն կերպարանքը և հայացքն ահեղ, որ քարացնում էր մարդկանց տեղնուտեղ, այժմ դառել էր մի վճիտ աղբյուր, որից բխում էր սեր հեզահամբույր:

Որքան կրակը վառվում է, այրվում, այնքան տաքցողը հեռու է կանգնում: Տորքն ինչպես սոխակ դայլայլում անվերջ, իսկ Հայկանուշը լուռ է վագրի պես. խոհեմությունը՝ հատուկ իր սեռին՝ իբրև մի սուր զենք, պահում է ձեռին:

ԵՎ ասում է նա Տորքին վերջապես.

- Աղջիկ ուզելը չի լինի այդպես: Դու շատ ուժով ես, դա ես լավ գիտեմ, բայց ինչ էլ լինես, պիտ մենամարտենք:

- Սիրուն Հայկանու՛շ,- ասում է հսկան,- արի մի անիր դու ինձ խելքահան: Խոստովանում եմ ես ինձ պարտված, ես

քո գերին եմ, քեզնից տապալված: Դու քո փոխարեն ցույց տուր հարյուրին, թեկուզ հազարին. պահանջիր՝ շարժեմ լեռը իր տեղից, ապա պոկոտեմ անտառը ամբողջ, վարարած գետի ընթացքը փոխեմ, սարեր ու ձորեր իրար հետ խառնեմ, բայց քեզ, Հայկանու՛շ, չեմ կարող դիպչել:

- Եթե այդպես է, ուրեմն զնա և բեր ինձ համար քսան գերված հսկա: Դրանով իմ անվանը պատիվ կբերես և նոր միայն ինձ կառնես կտանես:

Գնաց մեր հսկան հսկա գերելու. հսկաների հետ մենամարտելու և Հայկանուշի կամքի համաձայն՝ քսան մահապարտ հսկա բերելու: Գնաց շատ ու քիչ և վերջը հասավ լեռներին անանց, ուր հսկաների տոհմն էր ծվարած: ԵՎ հսկաները, որ տեսան հյուրին, մեծ ուրախությամբ նրան ներս կանչեցին, մեծ պատիվներով նրան պատվեցին ու չհարցրին, թե՛ «ո՞վ ես կամ ի՞նչ»:

Երբ հսկաների մոտ երեք օր մնաց, Տորքը ինքն իրեն այսպես մտմտաց. «Այս հսկաներն ահա անխարդախ սիրով ինձ կաշկանդեցին, էլ ինչպե՞ս կարամ սրանց հետ կռվել: Ո՛չ, ես չեմ կարող: Թող Հայկանուշը այլ բան պահանջի և ոչ թե եղբարց արյունը ուզի»:

Չորս օրից հետո Տորքն այսպես ասաց.

- Սիրելի եղբար՛ք, չորս օր է անցել, բայց դուք իմ մասին բան չեք իմացել, թե ինչ պատճառով և ինչից ստիպված թափառում եմ ես սար ու ձոր ընկած: Դուք ինձ ցույց տվիք սեր, ուրախություն, քաջերին վայել հյուրասիրություն: Ձեզ մոտ եմ եկել ես մի խնդրանքով: Աղջիկ եմ ընտրել որպես հարսնացու, ուզում եմ առնել առանց կռվելու: Եկել եմ հիմա ձեր ոտը ընկել. կամ ինձ մորթեցեք ու թաղեք այստեղ, կամ եկեք զնանք ինձ հետ միատեղ, որ առանց կռվի առնենք մի աղջիկ, խաղաղ ու սիրով անենք հարսանիք:

ԵՎ ասաց տոհմի նահապետը ծեր.

- Վե՛ր կացեք, տղե՛րք, բոլորս զնանք քաղցրությամբ, սիրով, երգով ու պարով և առաջարկենք համառ աղջկան, որ տեղիք չտա մենամարտության: Արայի կամքով, Աստղիկի սիրով նրանց պսակենք և ուրախ հարսնիք այնտեղ մենք սարքենք:

ԵՎ հսկաները երգով ու պարով, խինդով, ծիծաղով ճանապարհ ընկան:

Երբ Հայկանուշը աղմուկը լսեց, իր ապարանքից իսկույն դուրս վազեց, զնաց ընդառաջ: Նա տեսավ Տորքին հսկաների հետ, որոնք գերված էին, բայց երգ ու պարով: ԵՎ Հայկանուշը զարմացած ասաց.

- Անգեղա հսկա, դու ինձ խոստացար հսկաներ բերել: Բերել ես ահա բազում հսկաներ, բայց ոչ թե գերի, այլ հարսանքավոր: Եթե այդպես է, ե՛կ մենամարտենք: ԵՎ թե հաղթեցիր, հսկաները թող մեր հարսանիքին պատվո հյուր լինեն:

- Սպասիր, Հայկանուշ,- ասաց ծեր հսկան,- համաձայն եմ ես ձեր մենամարտության, բայց նախ ունկն դիր խոսքն իմաստության: Հին հեքիաթներում, լսած կլինես, երբ մարդուկները ուզում են աղջիկ, և այն աղջկան դներն են տանում, մարդուկը դեհ փրկում է նրան և դառնում նրա քաջագործ փեսան: Մի մեծ պարծանք է, երբ թզուկ մարդիկ ուժով ու կռվով առնում են աղջիկ: Բայց ի՞նչ պարծանք է, երբ Արի հսկան իր ուժը ցույց տա ապագա կնկան: Դրան հակառակ՝ եթե ցույց տա սեր, դա ճշմարիտ որ պարծանք կլինի: Դո՛ւ, համառ աղջիկ, մութ աշխարհում չես և ոչ էլ գերի դների ձեռքում: Ի՞նչ առիթ ունես հիմա բերելու. միտք ունե՞ս, արդյոք, մենամարտելու:

ԵՎ Հայկանուշը գլուխը կախեց, ու շիկնած դեմքին ժպիտը փայլեց.

- Ես համաձայն եմ, ինչպես որ վճռես, կմենամարտեմ, եթե հրամայես:

- Ես կհրամայեմ,- ասաց ծերունին,- որ մեր օրենքով մրցեք իրար հետ, բայց... սիրո զենքով: Թող սերը լինի ձեր զենքը միակ, սիրեցեք իրար՝ մեկդ մյուսից շատ. դու նրան պաշտպան, նա քեզ պահապան - ահա օրենքը սուրբ ամուսնության:

ԵՎ կաղնի պսակներն առավ ծերունին, օրհնելով դրեց երկուսի գլխին...

ՏԻԳՐԱՆ ԵՎ ԱԺՂԱՀԱԿ

Հայոց թագավորն էր Արի Հայկի ժառանգներից Տիգրանը: Տիտան Բելի ժառանգներից Աժդահակն էր Տիտանների թագավոր: ԵՎ խաղաղության դաշինք էին կնքել նրանք իրար հետ: Բայց Տիգրանի զորությունը մշտապես երկյուղի մեջ էր պահում Աժդահակին: Նրան առավել մտահոգում և անհանգստացնում էր Հայ և Պարսիկ արյունակից Արի Ազգերի միջև եղած սիրո կապը, որ առավել հզորացնում էր Տիգրանին:

Այս տևական մտատանջություններից ու կասկածներից ավելոծված, մի գիշեր Աժդահակը այնպիսի երազ է տեսնում, որ ոչ արթուն ժամանակ էր աչքով տեսել և ոչ էլ երբևէ ականջով լսել:

Աժդահակը այդ երազից սարսափած, քնից վեր է թռչում և կեսգիշերին, չսպասելով լուսաբացին, շտապ կանչում է իր խորհրդականներին: Երբ խորհրդականները հավաքվում են, Աժդահակը տրտում և մտահոգ, հայացքը գետին հառած, խոր թառանչ է արձակում: Խորհրդականները հարցնում են պատճառը, իսկ նա ժամերով լռում է և, ի վերջո, հեծկլտալով նրանց պատմում է իր տեսած ահավոր երազը:

- Իմ սիրելիներ,- ասում է նա,- երազումս ես մի անծանոթ երկրում էի, մի բարձրաբերձ լեռան վրա, որի գագաթը թվում էր պատած սարսափելի սառնամանիքով: Կարծես մեկը ասելիս լիներ, որ դա Հայամարդերի երկիրն է: Երբ ես երկար նայում էի այդ լեռանը, հանկարծ մի ծիրանազգեստ կին երևաց՝ ծածկված երկնագույն քողով՝ բարձր լեռան գագաթին նստած: Կինը բարձրահասակ էր, խոշոր աչքերով, կարմիր այտերով և ծննդաբերության ցավերով էր բռնված: Ես հիացնունքով ու ականապիշ նայում էի այդ կնոջը: Հանկարծ կինը ազատվեց և բերեց երեք գավակ, երեքն էլ հասակով ու տեսքով՝ կատարյալ դյուցազուններ: Առաջինը առյուծի վրա նստած սլացավ դեպի

արևմուտք, երկրորդը՝ ընծի վրա նստած, դիմեց հյուսիս, իսկ երրորդը՝ հրեղեն նժույգ սանձած, բուռն թափով հարձակվեց մեր տերության վրա: Այս խառն երազների մեջ մեկ էլ ինձ թվաց, թե ես կանգնած եմ իմ ապարանքի տանիքին, ուր ցայտում էին բազմաթիվ գունագեղ շատրվաններ. այնտեղ էր կանգնած նաև մեր Աստվածը՝ իր հրաշալի տեսքով. և ես, ձեզ հետ միասին, նրան պատվում էի գոհերով ու խնկով: Այդ պահին հանկարծ վեր նայեցի և տեսա այն հրեղեն ձիավորին, որ արծվի նման վար սլանալով հարձակվեց մեզ վրա և մոտենալով, ուզում էր կործանել մեր Աստծուն: Այդ պահին ես կռվի մեջ մտա և այդ սքանչելի գազանի հարձակումն ինձ վրա ընդունեցի: Ո՛հ երկար, շատ երկար կռվեցինք տարբեր զենքերով: ԵՎ կռիվը վերջացավ իմ կործանումով: Տազնապալի հուզմունքից սաստիկ քրտնել էի, քունս փախավ և թվում էր, թե այլևս կենդանի չեմ: Կարծում եմ, որ այս երազս ուրիշ բան չի նշանակում, քան այն, որ Արի Տիգրանի կողմից մեզ վրա անակնկալ հարձակում է սպասվում: Ռուստի խնդրում եմ ձեզ՝ խոսքով ու գործով, բարի խորհրդով ինձ աջակից ու օգնական լինեք:

Խորհրդակիցները բավական օգտակար մտքեր ու խորհուրդներ են առաջարկում Աժդահակին. նա շնորհակալությամբ ընդունում է: Ապա զոհ է մատուցում Վիշապ Աստծուն և խնդրում՝ օգնել իրեն ազատվելու Տիգրանից, որը օր ու գիշեր աներևույթ հալածում է իրեն արթուն թե քնած ժամանակ:

Վիշապը հայտնվեց Աժդահակին և ասաց.

- Ո՛վ, ամենամեծո՞ք քաջերի մեջ, գիտցիր, որ թշնամիներից զգուշանալու, նրանց մտադրությունը գուշակելու և նրանց կործանելու համար լավագույն ձևը սիրո միջոցով դավելն է: ԵՎ Տիգրանի դեմ որոգայթ լարելու ամենահարմար ձևը նրա քրոջ՝ գեղեցկագույն և խոհեմ Տիգրանուհուն կնության առնելն է: Ձեր խնամիական կապերը նախ լայն հնարավորություն կընձեռեն քեզ ազատ ու համարձակ երթևեկության, ապա և Տիգրանի մտերիմներին գանձերով ու պատվի խոստումներով կաշառելու, որպեսզի նրանք կամ թաքուն սպանեն Տիգրանին, կամ էլ նրան լքելով, մատնեն քո ձեռքը, իբրև մի անզոր տղայի:

ԵՎ Աժդահակը անմիջապես անցավ գործի: Նա պատգամավորներ ուղարկեց Տիգրանի մոտ, մեծամեծ նվերներով: Նրանք ներկայացան Տիգրանին և նրան հանձնեցին Աժդահակի նամակը: Աժդահակը գրում էր. «Մեր եղբայրությունը գիտե, որ աշխարհում ոչ մի բան այնքան օգտակար չէ, քան Աստվածների պարզևած սերն ու միաբանությունը, մանավանդ իմաստունների և հզորների միջև: Այդ դեպքում դրսից խռովություններ չեն ծագի, ծագելու դեպքում էլ՝ իսկույն կընկճվեն, իսկ ներքին խռովությունները կհալածվեն, որովհետև դրսից նպաստող չի լինի: Բարեկամությամբ պայմանավորված այդ շահավետ օգուտը նկատի առնելով, ուզում եմ առավել խոր ու հաստատուն դարձնել սերը մեր միջև, որպեսզի երկուսս էլ ապահով զգալով՝ հաստատուն և ամբողջական պահենք մեր տերությունները: Այդպես էլ կլինի, եթե դու ինձ կնության տաս քո քրոջը՝ Հայոց մեծ օրիորդ Տիգրանուհուն: ԵՎ եթե համաձայնես, ապա նա կդառնա թագուհիների թագուհի: Ո՛ղջ եղիր, իմ թագակից և սիրելի եղբայր»:

Տիգրանը համաձայնվում է իր գեղեցիկ քրոջը՝ Տիգրանուհուն, կնության տալ Աժդահակին: Աժդահակն ամուսնանում է Տիգրանուհու հետ և նրան իր կանանց մեջ առաջինն է դարձնում: Պատճառը ոչ միայն իր նենգ մտադրությունն էր, այլև Տիգրանուհու անչափ գեղեցկությունը:

Անցնում են տարիներ: Աժդահակի մեջ ավելի ու ավելի են խտանում չար ու խարդախ մտքերը: ԵՎ նա արդեն Տիգրանին կործանելու ծրագիր էր նյութում: ԵՎ փորձում էր այդ գործին մասնակից դարձնել կնոջը՝ Տիգրանուհուն:

- Դու տեղյակ չես,- ասում է Աժդահակը,- որ քո եղբայր Տիգրանը իր կնոջ դրդմամբ նախանձում է քեզ՝ համայն Չարյաց տիկնանց տիկին դառնալուդ համար: Այս նախանձի հետևանքը կլինի իմ մահը, որից հետո Տիգրանի կինը կկարգվի Արյաց ու Չարյաց վրա միանձնյա տիկին: Այժմ ամեն ինչ քեզանից է կախված. կան պիտի լինես եղբայրասեր և հանձն առնես մեր խայտառակ կործանումը, կան քո բարին գիտակցելով, մի օգտակար խորհուրդ խորհես մեր ապագայի մասին:

Խիստ վշտացավ Տիգրանուհին ամուսնու խոսքերից մի ահավոր գուժ կար նրանց մեջ: ԵՎ խախտվեց նրա անդորրը, փախավ նրա քունը: Տառապալից մտքերի մեջ ընկած, նա առանձնացել էր, ոչ մեկի հետ չէր խոսում՝ ինքն իր հետ էր և իր չարագուշակ մտքերի: Ցերեկները փակվում էր սենյակում, իսկ գիշերները միայնակ թափառում էր դաշտերում:

Անքնությունից, հոգեկան տառապանքներից և հուսահատությունից թուլացած, Տիգրանուհին ընկավ գետին և ուժ չունեի ոտքի կանգնելու:

Աստվածամայր Անահիտը հայտնվեց նրան, գրկեց և ասաց.

- Ես գիտեմ քո վիշտը, զավակս:

Տիգրանուհին փարվեց Աստվածամայր Անահիտի կրծքին ու լաց եղավ.

- Ասա ինձ, ո՞վ, Մայր, ինչպե՞ս վարվեմ ես: Խոր թշնամություն ունի Աժդահակը Տիգրանի դեմ: Ո՞ւմ կողմը գնամ ես, ո՞ւմ դավաճանեմ: Տիգրանը իմ եղբայրն է, և ես նրա հետ կապված եմ արյունով. ես չեմ կարող դավաճանել իմ արյանը: Աժդահակն էլ իմ ամուսինն է, և ես նրա հետ կապված եմ իմ զավակներով. ես չեմ կարող դավաճանել իմ զավակներին: Ասա, ի՞նչ անեմ:

ԵՎ Աստվածամայր Անահիտը ասաց.

- Դժվար հարց ես տալիս, աղջիկս: Երբ մի հավք կտրվում է իր երամից և մտնում է ուրիշ երամի մեջ, ապա այդ երկու երամների փոխադարձ թշնամանքի առաջին զոհը հենց ինքն է լինում: Դու ծագումով Արի ես, իսկ մայրությամբ՝ Չարի: ԵՎ այդ երկու Ցեղերի թշնամանքից դու առաջինն ես զոհ լինելու, եթե չկարողանաս մեղմել նրանց թշնամանքը:

Այնուհետև Տիգրանուհին ամեն կերպ փորձում էր համոզել Աժդահակին՝ մեղմելու իր թշնամանքը Տիգրանի նկատմամբ և հրաժարվելու իր չար մտադրությունից:

- Ես երդվել եմ իմ Աստծուն, որ Տիգրանի արյունը պիտի զոհաբերեմ նրան,- պատասխանում է Աժդահակը և ավելի ու ավելի եռանդով նախապատրաստում է իր խարդավանքի իրագործումը:

Տիգրանուհին հոգնած և հուսահատված կանգնում է Աժդահակի առջև և ասում.

- Տիտանյան արքա՛, թե դու մեր Աստծուն խոստացել ես Արյաց արքայի արյունը զոհաբերել, ապա իմ մեջ հենց Արյաց արքայական արյունն է հոսում: Ես կանավոր զոհ կլինեմ և կազատեմ քեզ քո երդման ծանրությունից: Քո երեխաների մոր ինքնազոհաբերումը գուցե հագեցնի մեր Աստծո ծարավը և մեղմի քո մեջ այդ չար թշնամանքը:

Ասաց Տիգրանուհին և դաշույնը մխրճեց իր կուրծքը:

Աժդահակը շատ ողբաց իր սիրելի կնոջ մահը: Նա մեծ սուգ հայտարարեց ամբողջ Տիտանյան երկրում: ԵՎ քառասուն օր սուգ էր արվում: Քառասուն օր արգելված էր ծիծաղը, արգելված էին խաղն ու պարը և ամեն մի ուրախություն: Աժդահակը մի հոյակերտ դամբարան սարքել տվեց . Տիգրանուհու զմռսված մարմինը դրեց այնտեղ: ԵՎ դամբարանի ճակատին փորագրել տվեց. «Մայր աստվածային, կին նվիրյալ, քույր հավատարիմ»: ԵՎ տիտանյան Աստվածները՝ Վիշապն ու Յահվահը օժեցին Տիգրանուհու դամբարանը:

Մինչ այդ դեռ չտեսնված ու չլսված սուգի լուրը հասավ Հայաստան: Տիգրանը շատ վշտացավ, բայց սուգ չարեց: Նա հավաքեց իր զորքը և պատրաստվեց պատերազմով պատժելու Աժդահակին և Տիգրանուհու մարմինը բերելու Հայաստան: Նա մեծ խարույկ վառեց, զոհ մատուցեց Հայր Արային ու Ամենագոր Վահագնին:

- Ո՛վ, Վահագն, ո՛վ, Ջորության Աստված,- կանչեց նա,- օժիր իմ սուրը, որ վիշապազուն այդ վիշապի մահաբեր գանգը փշրեմ, որ բարեկամ ձևանալով, իր օձաբարո գալարումներով օղակել է ինձ և փաթաթվել իմ պարանոցին: Ջորավիզ եղիր ինձ, որ Աժդահակին տապալելով, հավիտենական գերությունից ազատեմ Տիգրանուհու մարմինը:

Երբ Աժդահակը իմացավ, որ Տիգրանը Արյաց մեծ զորաբանակով արշավում է իր վրա, մտավ Տիգրանուհու դամբարան, ծնկի իջավ նրա առջև ու դառնությամբ ասաց.

- Ո՛վ, սրբագույնդ սրբերի մեջ, քեզ թվում էր, թե քո ինքնազոհությամբ կհաղթե՞ս մեր թշնամանքին: Տիգրանը

վրեժով լցված, պիտի սպանի ինձ. ես էլ, վախենալով նրա վրեժից, պիտի սպանեմ նրան: ԵՎ մեր թշնամանքը կվերանա մեզանից մեկի մահով միայն: ԵՎ ես աղոթելու եմ իմ Աստծուն, խնդրելով հաղթություն միայն մի բանի համար, որ դու մնաս իմ երկրում՝ որպես մայրության, կնության, քույրության վեհագույն խորհուրդ:

ԵՎ Աժդահակը մեծ զորք հավաքեց, զոհ մատուցեց իր Աստծուն ու զնաց Արյաց զորքին ընդառաջ:

Հանդիպում են Արյաց ու Չարյաց զորաբանակները, և սկսվում է կատաղի ճակատամարտը: Կռիվը տևում է բավական երկար. քաջերը քաջերի հանդիպելով, մեկը մյուսին դյուրությամբ թիկունք չէր դարձնում: Կռվին վերջ է տրվում միայն այն ժամանակ, երբ քաջամարտիկ նիզակավոր Տիգրանը դեմ առ դեմ հանդիպում է Աժդահակին: Տիգրանն իր երկար նիզակով այնպես է հարվածում Աժդահակի կրծքին, որ երկաթե ամուր զրահը ջրի պես ձեղքելով, նրան շամփրում է նիզակի լայնաթև տեգին:

Կռիվը ավարտվում է Տիգրանի փառահեղ հաղթանակով: Հաղթական Տիգրանը արշավում է Տիտանյան երկրի մայրաքաղաք: Չի ավերում այն, ոչ մեկին վնաս չի տալիս: Նա կանգնում է Տիգրանուհու դամբարանի առջև և հրամայում է քանդել այդ դամբարանը և Տիգրանուհու զմռսված մարմինը տեղափոխել Հայաստան:

Բայց Տիգրանի առջև կանգնում են Աժդահակի որդիները և ասում.

- Ո՛վ, Արյաց արքա՛, դու հաղթական ես, այո, դու քո զորությամբ կարող ես ավերել ամբողջ մեր երկիրը, բայց մեր հոգիների վրա տեր չես կարող լինել: Սա քո քույրն է և նրա վրեժը լուծելու համար դու սրով մտար մեր երկիր: Բայց նա մեր մայրն է: ԵՎ մենք թույլ չենք տա, որ մեր մոր մարմինը պղծես, նրան տեղափոխելով Արարատ: Արարատը մեզ համար օտար հող է: Ուստի մեր մայրը օտար հողում չպետք է լինի: Թեև նա հրածին է, բայց հողածինների մայր է, և բոլոր հողածինների նման մեր Մայր Հողին պիտի հանձնվի:

Տիգրանը բարկացավ, հանեց իր սուրը, որ սպանի այդ հանդուգն վիշապագուներին, բայց հանկարծ հայտնվեց Աստվածամայր Անահիտը, բռնեց նրա ձեռքը և ասաց.

- Վրեժի մոլուցքը մթազնել է քո հոգին, զավակս: Գիտցիր, որ հաղթական սուրը պատժելու համար չէ միայն, այլ արդարություն հաստատելու համար է նաև: Տիգրանուհին ծագումով է միայն Արի, իսկ մայրությամբ նա Տիտան է: Ուստի նրա Արի եղբայրն իզորու չէ տնօրինելու նրա մարմինը: Այն տնօրինում են նրա Տիտան որդիները:

Տիգրանը հնազանդվեց Աստվածամոր կամքին և Տիգրանուհու մարմինը հանձնեց նրա որդիներին: Նրանք իրենց մոր մարմինը հանեցին դամբարանից և մեծ պատվով հանձնեցին իրենց Մայր Հողին:

Տիգրանը մասնակցեց Տիգրանուհու թաղմանը, ապա Աժդահակի ավագ որդուն կարգեց արքա և իր զորքը վերցրած վերադարձավ Հայաստան:

ԱՐՏԱՇԵՍ ԵՎ ՍԱԹԵՆԻԿ

Արի Հայկի սերունդներից Արտաշեսն էր թագավորում Հայաստանում: Զորավոր էր նա իր նախնիների պես, և Վահագն էր իր Զորությամբ հովանավորում նրան:

Վահագն էր հովանավորում նաև Ալանի ժառանգներին: ԵՎ Վահագնի Ձորությամբ զորացած, Ալանաց թագավորը մեծ զորք հավաքեց ու շարժվեց դեպի Հայոց աշխարհ:

Իմանալով դա, խիստ զայրացավ Արտաշեսը. « Այդ ի՞նչ խենթություն է իջել ալանաց արքայի վրա, որ գեներով իր եղբայրների դեմ է ելել»: Նա վերցրեց իր զորքը և դուրս եկավ պատերազմի:

Ալանները հայոց զորքի ճնշումից ետ նահանջեցին, անցան Կուր գետը և բանակ դրեցին գետի հյուսիսային ափին: Արտաշեսն էլ բանակ դրեց գետի հարավային ափին:

Արտաշեսը խարույկ վառեց, զոհ մատուցեց Հայր Արային ու Ամենագոր Վահագնին:

- Ո՛վ, Վահագն Ամենագոր,- կանչեց նա,- բոլոր Աստվածները վկա են, որ ես չեմ խախտել արյան դաշինքը: Ձորավիզ եղիր ինձ, որ ես պատժեմ ալանաց այդ գոռոզ արքայի սրբապղծությունը:

Նույն ժամանակ Կուր գետի մյուս ափին ալանաց արքան էր խարույկ վառում, զոհ մատուցում Հայր Արային և Ամենագոր Վահագնին և դիմում նրան.

- Ո՛վ, Ձորության Աստված Վահագն, Աստվածներն են վկա, որ Արտաշեսը մոռացել է արյան պատասխանատվությունը և անտեսել է Արի մյուս ազգերին: Ձորավիզ եղիր ինձ, որ ես պատժեմ գոռոզ Արտաշեսի սրբապղծությունը:

Վահագնը երկուսին էլ լսեց և ապա դիմեց Հայր Արային, ասելով.

- Հայր իմ, երկու կռվող եղբայրների զորությունն էլ ես եմ հովանավորում: ԵՎ երկուսն էլ իրենց արդար են համարում ու իմ Ձորությանն են ապավինում: Ասա, ինչպե՞ս վարվեմ:

ԵՎ Հայր Արան ասաց.

- Երկուսի զորությունն էլ դու պիտի հովանավորես հավասարապես, որ եղբայրների մեջ հաղթող ու պարտվող չլինի: Գիտցիր, որ հաղթողը կգոռոզանա, իսկ պարտվողը կչարանա. և նրանց միջև այլևս հաշտություն չի լինի: Եղբայրների միջև թշնամանքը միայն սիրով կլուծվի:

Առավոտյան, երբ Կուր գետի ալիքները բոցավառվեցին արևի առաջին ճառագայթներից, երկու Արի բանակները բախվեցին իրար: Ջորավոր և անզիջուն կռիվ էր գնում: Երկուսին էլ Վահագնը զորություն էր սնում, և երկու կողմերն էլ ահագնացած կռվում էին: ԵՎ մեկը մյուսին չէր կարողանում հաղթել:

Հենց այդ կռվի թեժ պահին Արտավազդ Միհրը իր աստվածային հնարով ալանաց պատանի թագաժառանգին զցեց հայ զորականների ձեռքը: Դրանով դադարեց օրվա ճակատամարտը: Գերի արքայազնին բերեցին հայոց բանակատեղի: ԵՎ զայրացած Արտաշեսը որոշեց խստորեն պատժել պատանուն:

Ալանների թագավորը ստիպված հաշտություն է խնդրում: Նա պատգամավորներ է ուղարկում Արտաշեսի մոտ, խոստանալով ամենը, ինչ Արտաշեսը կամենա, միաժամանակ առաջարկում է երդմամբ դաշինք կնքել, որ դրանից հետո ալանների կտրիճները այլևս չեն ասպատակի հայոց աշխարհը: Բայց Արտաշեսը հրաժարվում է պատանի արքայազնին վերադարձնել: ԵՎ ալանաց թագավորը պատրաստվում է առավոտյան կատաղի ճակատամարտ տալու:

Ալանաց բանակում էր գտնվում նաև ալանների արքայադուստրը՝ չքնաղ Սաթենիկը: Նա խոր վիշտ էր ապրում իր պատանի եղբոր գերեվարության համար: Նրան հայտնվեց Աստղիկ Դիցուհին և ասաց.

- Ո՛վ, չքնաղ Սաթենիկ, գիտցիր, որ Ջորության զորությունն է Սերը: ԵՎ միայն քո սիրով դու կարող ես հաշտեցնել երկու զորությունները:

ԵՎ Սաթենիկը գալիս կանգնում է Կուր գետի ափին և իր նրբագեղ ձայնով իր սրտի ողջ թախիծը երգով արտահայտում.

- Քե՛զ ասեմ, այր քաջ Արտաշես,
Որ հաղթեցիր քաջ ազգին Ալանաց՝
Տալ պատանիդ.
Զի վասն միոյ քինու ոչ է օրեն դյուցազանց՝
Զայլոց դյուցազանց զարմից բառնալ զկենդանություն,
Կամ ծառայացուցանելով ի ստրկաց կարգի պահել,

ԵՎ թշնամություն հավիտենական

Ի մեջ երկոցունց ազգաց Արյաց հաստատել:

Սաթենիկի երգը դայլայլելով անցավ գետը և հասավ Արտաշեսի բանակատեղի: Լսեց Արտաշեսը այդ չքնաղ ձայնը, որի մեջ այնքան թախիծ ու մեղեդայնություն կար: Դուրս եկավ գետափ, հիացավ չքնաղ կույսի գեղեցկությամբ, և ալելուծվեց նրա հոգին: Սիրո հրդեհը բոցավառվեց նրա մեջ: ԵՎ նա սրտանց ցանկացավ նրան կին ունենալ:

Ամիջապես պատգամավոր է ուղարկում Ալանաց թագավորի մոտ և առաջարկում Ալանների օրհորդ Սաթենիկին կնության տալ իրեն:

Վիրավորվում է Ալանների թագավորը, համարելով դա որպես հաղթողի ամբարտավան պահանջ: ԵՎ իր արժանապատվությունը պահելով, ասում է.

- ԵՎ որտեղի՞ց պիտի տա քաջն Արտաշեսը հազար հազարներ և բյուր բյուրեր Ալանների քաջ ազգի կույս օրհորդի փոխարեն:

Երբ Արտաշեսը իմացավ Ալանաց թագավորի պատասխանը, խիստ սրտնեղեց. «Ինչպե՞ս հասկացնեմ հպարտ արքային, որ իմ ուզածը ոչ թե հաղթության տուրք է, այլ՝ սիրո դաշինք»: Այա ընդոստ ոտքի կանգնեց ու վճռական ձայնով ասաց.

- Ես իմ սերը կնվաճեմ ոչ թե որպես հաղթող արքա, այլ որպես սիրող այր:

Հեծավ Արի արքա Արտաշեսը իր Սևուկ ձին և հանեց ոսկետոլ շիկափոկ պարանը, և որպես բոցավառ սիրահար ու անթև արծիվ անցավ գետը, և նետեց ոսկետոլ շիկափոկ պարանը, զցեց մեջքը ալանաց օրհորդի, և շատ ցավացրեց փափուկ մեջքը օրհորդի, արագ հասցնելով բանակը իր:

Առևանգելով գեղեցիկ Սաթենիկին, Արտաշեսը նրան բերեց Արտաշատ, որ ինքն էր կառուցել որպես արքայանիստ քաղաք, էրեվան Հավերժական Քաղաքին շատ մոտիկ: ԵՎ շքեղ հարսանիք սարքեց:

Ոսկի անձրև էր տեղում Արտաշեսի փեսայության պահին, մարգարիտ էր տեղում Սաթենիկի հարսնության պահին: Երգն ու պարն էին թևածում դեպի երկինք, որպես փառաբանում սիրո հավերժումի: Բոլոր հայոց և ալանաց

քաջերն էին հավաքված այնտեղ մենամարտում երգով ու պարով: Ալանաց թագավորն ու պատանի թագաժառանգը ժպտում էին երջանիկ:

Երեկվա թշնամացած եղբայրները իրար հետ կենաց էին խմում, շնորհավորում նորապսակներին և փառաբանում Հայր Արային ու Աննահ Աստվածներին, որպես երկու եղբայր Արի ազգերի միջև սիրո դաշինքի հաստատում:

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԱՇՏԱՐԱԿԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Տիեզերական խոր Աշուն էր հաստատվել Երկրի վրա, և արդեն զգացվում էր մոտալուտ Ձմռան սառը շունչը: Վիշապը Երկիր էր իջել, բռնել էր Երկրի ջուրը, կուտակում էր բևեռներում և սառեցնում: Երկրի վրա սաստկանում էին ցուրտ քամիները:

Պակասում էր ջուրը Երկրի վրա, պակասում էր և արևի ջերմությունը: Անհանգստացել էին Արիները Արարատում և Արարատից դուրս. պետք էր նախապատրաստվել Տիեզերական Ձմռանը: ԵՎ Արի քրմերը հավաքվեցին Արարատի Հավերժական Քաղաք էրեվանում: Եկան աշխարհի բոլոր կողմերից: Հավաքվեցին խորհելու, թե ինչպես նախապատրաստվեն Տիեզերական Ձմռանը, ինչպես ապահովեն կենսատու ջերմությունը Արի ազգերի համար:

Նրանք գիտեին, որ թեև աստվածամարդ են իրենք, բայց իրենք չեն վառում արևի ջահը. նրանք միայն սնվում են Աստվածների վառած Ջահից: ԵՎ միայն Աստվածների զորությամբ կարող էին արևի կենաց ջերմությունը կուտակել Ձմեռվա համար:

ԵՎ Արի քրմերը մեծ խարույկ վառեցին, գոհ մատուցեցին Հայր Արային ու Անմահ Աստվածներին և խնդրեցին օգնել դիմավորելու մահաշունչ Ձմեռը:

Իմաստության Աստված Տիրը հայտնվեց նրանց և ասաց.

- Ո՛վ, Արյաց իմաստուններ, Հայր Արայի կամքով եմ ես եկել ձեզ մոտ: Դուք ինքներդ աստվածներ եք, թեև՝ երկրային, աստվածային զորություն ունեք և Հայր Արայից ժառանգած արարումի կարողություն ունեք: Թե Անմահ Աստվածները արևի ջահն են վառել երկնքում՝ ամբողջ աշխարհը ջերմացնելու համար, ապա դուք էլ կարող եք ձեր երկրային ջահը վառել Արարատում, որ սնվելով արևից, ջերմացնի բոլոր Արի ազգերին ամբողջ Ձմեռվա ընթացքում:

Արագածի փեշերին կառուցեք մի բարձր աշտարակ, որ մոտենա արևին և տեսանելի լինի Երկրի բոլոր ծայրերից: Այա Արագածի ընդերքից պեղեք հազար ու մի գանձեր: Այդ հազար ու մի գանձերով ծուլեք մի մեծ ջահ ու կանգնեցրեք աշտարակի գլխին: Այդ ջահը կբոցավառվի արևից, և կենսական հուրը կբոցկլտա ջահի մեջ ամբողջ Ձմեռ և իր լույսով ու ջերմությամբ կսնի բոլոր Արի ազգերին: Բայց գիտցեք, որ բոլոր Արի ազգերի միասնական ուժով միայն կկառուցվի Արարատյան Աշտարակը, և կապահովվի Արյաց ազգերի կենսաջերմության կուտակումը: Դա է Հայր Արայի կամքը:

Արի քրմերը գնացին իրենց երկրները, հաղորդելու Հայր Արայի կամքը: Բոլորն ընդունեցին աստվածային խորհուրդը: ԵՎ շուտով արքաների հրովարտակներով և քուրմերի առաջնորդությամբ Երկրի բոլոր Արի ազգերից ամենահմուտ վարպետներ հազար-հազարներով եկան Արարատ և հենց Արագածի փեշերին հիմք դրեցին աստվածային Աշտարակի: Մեծ շուքով ու ծխակատարությամբ նշվեց Աշտարակի հիմնադրումը: Մեծ խարույկ վառեցին, զոհ մատուցեցին, փառաբանեցին Հայր Արային ու Անմահ Աստվածներին: ԵՎ ընդունելի էր նրանց զոհաբերությունը Աստվածների կողմից:

Մեծ խանդավառություն էր տիրում Արիներին: Նրանք խոսում էին իրենց ազգային լեզուներով, բայց հասկանում էին իրար և՛ լեզվով, և՛ հոգով: ԵՎ չկար նրանց մեջ որևէ տարբերություն, և ոչ մեկը չէր փնտրում տարբերություն:

Անհանգստացել էր Չարի Վիշապը: Նա զայրացած ոռնում էր ու Երկրի այս ու այն կողմ թռչում, փորձելով խանգարել Արիների աստվածահաճ գործին:

ԵՎ Վիշապը դիմեց Յահվահին.

- Ո՛վ, ամենագոր Յահվահ, Արիները համախմբվել են և Արարատում բարձր Աշտարակ են կառուցում, որ արևի ջերմությամբ սնվեն ամբողջ Տիեզերական Ձմեռը: Դրանով նրանք իրենց մեջ կնորոգեն նախնյաց զորությունը և Վահագնի հովանավորությամբ անպարտելի կդառնան: Ասա, ինչպե՞ս խափանեն նրանց զորացման ընթացքը:

ԵՎ Յահվահը ասաց.

- Մի՛ վհատվիր, ո՛վ, Չարի Վիշա՛պ, մեր ուժը խորամանկության մեջ է: Խաբի՛ր, մասնատի՛ր ու կտիրես: Խաղա Արի ազգերի ինքնասիրության և փառամոլության վրա. թող ամեն մի ազգ միայն իրեն ճանաչի, իրենով գոռոզանա ու փքվի: Դրանով նրանց միաբանությունը կխախտվի, և կխափանվի նրանց գորության Աշտարակի շինությունը:

ԵՎ Չարի Վիշապը, հետևելով Յահվահի խորհրդին, թռչում էր մեկ արևելք, մեկ արևմուտք, հյուսիս ու հարավ և թաքնվելով տարբեր կերպարանքների մեջ, հայտնվում էր տարբեր Արի ազգերի մեջ և ամենուր նույն քարոզն էր տանում.

- Ո՛վ, երկրային աստված Արիի արժանավոր զավակներ, մի՞թե դուք մոռացել եք ձեր ծագումը, մի՞թե չեք տեսնում ձեր աստվածային փայլն ու զորությունը: Անմահ Աստվածների շնորհը ձեր վրա է, դուք եք ակունքը Արի Ցեղի և առաջնորդը բոլոր Արի ազգերի: ԵՎ Աստվածային Աշտարակը միայն ձեր հողի վրա պիտի կառուցվի:

Լսում էին Արի ազգերը, և պղտորվում էին նրանց հոգիներն ու մտքերը: Գոռոզանում էին, փքվում էին իրենք իրենց մեջ ու մոռանում էին վերահաս վտանգը: ԵՎ մեծ վեճեր ծագեցին Արի ազգերի միջև. ամեն մեկը պահանջում էր, որ Աշտարակը իր հողի վրա կառուցվի, և ոչ մեկը չէր համաձայնվում մյուսի հետ: Վեճերը խորացան, Արի ազգերը խռովեցին Արարատից, խռովեցին իրարից, գժտվեցին և սկսեցին ուժով ապացուցել իրենց առավելությունները: Եվ կանչեցին Արարատից իրենց վարպետներին: ԵՎ մեծ պատերազմներ սկսվեցին Արի ազգերի միջև:

Արի քուրմերը, որ ծանոթ էին աստվածային խորհրդին, ճգնում էին համոզել իրենց ազգերին՝ հաշտվելու և շարունակելու Արարատյան Աշտարակի շինությունը: Բայց գազազած ամբոխը քարկոծում էր նրանց:

ԵՎ կիսատ մնաց Արարատյան Աշտարակը: Աշտարակաշինությունը խափանվեց: Ցնծում էր Վիշապը իր խարդավանքի հաղթության համար: Իսկ Յահվահը ուժգին ցնցեց Երկիրը ու տապալեց կիսակառույց Աշտարակը: ԵՎ Արարատյան Աշտարակից մնաց միայն անունը՝ Աշտարակ:

Իսկ Արի Ազգերը այդպես էլ հեռացան իրարից ու այլևս չեն հասկանում իրար ո՛չ հոգով և ո՛չ լեզվով:

ԵՎ եկավ Տիեզերական Չմեռը: Չարի Վիշապը հաղթական ոռնոցով արշավում էր Երկրի մի ծայրից մյուսը: ԵՎ Վիշապի հովանավորությամբ գորացած Չարիները հաղթում էին սառած ու տկարացած Արիներին թե՛ Արարատում և թե՛ Արարատից դուրս: Սառել էին Արիների մարմիններն ու հոգիները: Նրանք լքեցին իրենց Աստվածներին, ուրացան իրենց նախնիներին, մոռացան իրենց ծագումը, օտարացան իրենք իրենցից և մահվան կրոնների հաշիշով հարբած, մահի մեջ էին միայն փրկություն որոնում: ԵՎ վիշտն ու հյուժող աղետները այնուհետև ուղեկցեցին Արիներին: Վերացան նրանց գորությունը, սերը, արարումը:

Ամենուրեք Չարի Վիշապի բռնությունն էր տիրում: ԵՎ Վիշապի մահազգեստ սպասավորներն էին ամբոխներին առաջնորդում: ԵՎ Արիներին բաժին ընկան միայն հոգեմաշ դժբախտություններ, որոնցից փրկություն չկար:

Մահաշունչ Չմեռ է Երկրի վրա և Արարատում: Ցուրտն է պատել Արիների հոգիներն ու մտքերը: Բայց Չմեռից հետո գալու է Գարուն...

ԱՐՏԱՎԱԶԴՆ ԵՐԹԱՅՎԱԾ

Ցրտաշունչ Ձմեռ էր, և Վիշապն էր իր թունավոր Ջորոթյամբ մոլեգնում Երկրի վրա: Վիշապը ամենուր ոչնչացնում էր Վահագնի փառքը, պատժում և ստրկացնում էր Արիներին: Վիշապը աշխատում էր Արիների միջից հանել Արտի Օրենքը, աշխատում էր կտրել նրանց օրինաչափությունից և ամեն բնականից: ԵՎ Վիշապը ամենուր հաստատում էր իր օրենքները՝ օրենք դատելու, օրենք պատժելու, օրենք ահաբեկման: ԵՎ բոլորը դատում էին իրար, դատում էին անվերջ ու անխնա: ԵՎ կամայականությունը օրենքի ձևով հաստատվում էր Արիների մեջ:

Արտավազդ Միհրը շատ էր սրտնեղել: Նա, որ Արտի Օրենքն էր հաստատում ողջ Տիեզերքում ու Երկրի վրա, չէր հանդուրժում, որ Երկրի վրա խախտվում է Արտի Օրենքը, և Վիշապի անբնական պատժող օրենքներն են հաստատվում:

ԵՎ Միհրը իջավ Երկիր: Նա շրջում էր ամենուր և փորձում էր Արիների մեջ վերականգնել Արտի Օրենքը ու դրանով փրկել նրանց ինքնակործանումից:

Շատ շատերը հետևեցին Միհրին: Շատ շատերը փորձեցին ապրել Արտի Օրենքով ու վերականգնել իրենց կենաց օրինաչափությունը: Բայց Վիշապի օրենքները զորավոր էին Վիշապի Ջորոթյամբ: ԵՎ Միհրին հետևող Արիները բախվում էին Վիշապի Ջորոթյանը, պարտվում և հնազանդվում նրան:

Շուտով Միհրը միայնակ մնաց Երկրի վրա: ԵՎ դժվարացան քայլերը նրա: Նրա ոտքերը խրվում էին հողի մեջ մինչև ծնկները: ԵՎ Յահվահն էր նրա ոտքերը կապանքել հողի մեջ: Նա փորձեց բարձրանալ, թռչել երկինք, բայց չէր կարողանում ոտքերը հանել հողի միջից: ԵՎ հասկացավ Միհրը, որ ինքը գերված է Յահվահի կողմից, և Յահվահն

նրան հանձնելու է Վիշապին: Տխրեց Միհրը և հուսահատ կանչեց Վիշապին.

- Ո՛վ, Չարի Վիշապ, դուրս եկ իմ դեմ քո ամբողջ չարությամբ: Առանց կռվի պարտություն չեմ ընդունում ես:

Վիշապը հայտնվեց Միհրի առջև ու չարախնդաց.

- Ո՛վ, Արտի Աստված, իմ թագավորության մեջ դու քո օրե՞նքն ես ուզում հաստատել: Բա դու չգիտե՞ս, որ օրենքը առանց զորության անպտուղ է: Իմ Ջորությամբ են իմ օրենքները հաստատվում: Իսկ ի՞նչ Ջորության էիր դու ապավինում, Վահագնի՞: Վահագնը չկա, և Երկրի վրա Վիշապի օրենքներն են իշխելու: Դու չե՞ս տեսնում, որ օր օրի ցերեկները կարճանում են, իսկ գիշերները՝ երկարում: ԵՎ այլևս երբեք Գարուն չի գա, Վահագն չի գա. լույսն ընդհանրապես կվերանա և հավերժական գիշերը կհաստատվի Երկրի վրա, հավերժացնելով իմ իշխանությունն ու քո գերությունը:

ԵՎ Վիշապը շղթայեց Արտավազդ Միհրին ու տարավ Մասիս սար, փակեց նրան քարանձավի մեջ, ուր մի ժամանակ Արի Մանի կռած թուր-կեծակին էր պահվում: Նրան շղթաներով գամեց ժայռերին, որ նա երբեք այնտեղից դուրս չգա ու հավերժ տառապի շղթաների մեջ:

Արարիչը անմիջապես կանգնեցրեց գիշեր-ցերեկ հարաբերության եղած ընթացքը և հաստատեց Արևագալ, որ այնուհետև գիշերները կարճանան, իսկ ցերեկները երկարեն, և որ շուտ գա Գարունը:

Մասիսի վիհում տառապում էր Արտավազդը՝ գերված ու անարգված: Բայց շուտով Արարչի կամքով նրա մոտ եկան երկու Արալեզներ: Միհրը շատ ուրախացավ, տեսնելով Արալեզներին. նա այլևս միայնակ չէր: Արալեզները կրծում էին նրա շղթաները, բարակացնելով և թուլացնելով դրանք, ապա լիզում էին Միհրի մարմինը, զորացնում նրան: ԵՎ առավել զորացած, Միհրը այնպես էր թափահարում իր թուլացած շղթաները, որ զրնգոցը արձագանք տալով տարածվում էր Արարատով մեկ: ԵՎ այդ զրնգոցը ահագանգում էր Արիներին, որ Արտավազդ Միհրը կա և ազատվելու է շղթաներից, հաստատելու համար Արտի Օրենքը Արիների մեջ:

Շղթաների զրնգոցը մեծ հույսով էր լցնում Արիների հոգիները, իսկ Վիշապի ուղեղի մեջ մխրձվում էր որպես մահաբեր մի գույժ ու հալածում նրան: ԵՎ մտածում էր Վիշապը, թե ինչպես լռեցնի Արտավազդի շղթաների ձայնը և Արիների միջից հանի հիշողությունը նրա մասին: ԵՎ նա դիմեց իմաստուն և խորամանկ Յահվահին:

- Ո՛վ, Մեծո՞ Յահվահ, Արտավազդ Միհրի շղթաների զրնգոցը մշտապես Արիներին հիշեցնում է նրա մասին: Ասա ինձ, ինչպե՞ս ամբողջացնեմ իմ հաղթանակը, որ Արիները լրիվ մոռանան Միհրին և ամբողջությամբ հնազանդվեն իմ օրենքներին:

ԵՎ Յահվահը ասաց.

- Արիներն այնքան են տկարացել, որ այլևս չեն զգում Վահագնին և իրենց ամբողջ հույսը կապել են տառապալալ Փրկչի հետ: Փոխիր այդ Փրկչին՝ Շղթայված Աստծուն փոխարինիր Խաչված Տիտանով, և դու կհիշես Արիների հոգիներին:

ԵՎ Վիշապը Տիտանների մոլեգին ջանասիրությամբ Խաչվածի խաչով խաչում էր Արիներին: Խաչում էր այրերին, խաչում էր կանանց ու մանուկներին: Խաչում էր նույնիսկ մեռածներին, համոզված լինելով, որ մի մահը Արիների համար բավական չէ: ԵՎ Խաչվածի անունով ամենուր մահ էր սփռում, կրկնակի մահ՝ մարմնի և հոգու:

Ապա Վիշապը հավաքեց բոլոր դարբիններին, որ առավել ամրացնեն Արտավազդի շղթաները: ԵՎ ամեն Արուսոր երեկոյան, երբ Արտավազդը թափահարում էր իր բարակած շղթաները, և զրնգոցը տարածվում էր աշխարհով մեկ, դարբիններն իրենց մուրձերով հարվածում էին սալերին, և Արտավազդի շղթաները նորից ամրանում էին: ԵՎ այդպես կրկնվում էր անընդհատ:

ԵՎ Արտավազդը տառապում էր շղթաների մեջ՝ լքված ու մոռացված Արիների կողմից: Շղթայված Աստծուն փոխարինել է Խաչված Տիտանը: Արտավազդը վշտացած դիմում է Արարչին.


- Ո՛վ, Հայր իմ, Արա՛, մինչև ե՞րբ ես պիտի տառապեմ այսպես շղթայված, գերի մնալով Վիշապին և մոռացված Արիների կողմից:

Հայր Արան լսեց Միհրի ծայնը և տիեզերական անհունից ասաց նրան.

- Ո՛վ, Արտավազդ Միհր, սպասիր Գարնան առաջին Արեգին: Գարնան առաջին Արեգով կգա Վահագնը: Նա կտապալի Վիշապին, և դու կազատվես շղթաներից ու Վահագնի Ջորությանը Արտի Օրենքը կհաստատես Երկրի վրա:

ԵՎ Արտավազդը սպասում է: Չմեռից հետո գալու է Գարուն: Երկնի ու Երկրի ահեղ երկունքից Ջորության Աստված Վահագն է ծնվելու հենց Արարատում: Ծնվելու է Չարի Վիշապին սպանելու և Մեծ Ջրհեղեղով Երկիրը լվալու Վիշապի պղծությունից: Գարուն է բերելու Վահագն Աշխարհում, Երկրի վրա՝ նոր պատմություն, իսկ Արարատում՝ նոր տարեգրություն:

ԵՎ ազատվելու է Արտավազդ Միհրը իր շղթաներից ու Երկրի վրա հաստատելու է Արտի Օրենքը, որ Արտի Օրենքով դատողը դատի, Արտի Օրենքով դատվողը դատվի, ու էլ չլինեն դատող ու դատվող:



ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ

ԱՎԵՏԱՐԱՆ

Բնությունը կենդանի որակական Ամբողջություն է, անսահման Ամբողջություն է, օրգանական Ամբողջություն է: ԵՎ Բնությունն ու Աստվածությունը նույնանում են իրար: ԵՎ այն ամենը, ինչ գոյություն ունեն Բնության մեջ՝ Աստվածության օրգանական մասեր են:

Բնություն-Աստվածությունը իր բոլոր օրգանական մասերի՝ բնական Տեսակների, ամբողջություն է: ԵՎ յուրաքանչյուր բնական Տեսակ իր որոշակի դերն է կատարում Բնության Ամբողջության մեջ: ԵՎ Տեսակն իր բնական դերը կատարում է այնքանով, որքանով ընկալում է բնական օրինաչափությունների խորհուրդները: ԵՎ այդ բնական խորհուրդների համակարգն է ԱՎԵՏԱՐԱՆԸ:

ա. ԽՈՐՀՈՒՐԴ ԱՎԵՏԱՐԱՆԻ

1. Բնությունը մի օրգանական ամբողջություն է: Մեզ համար -անսահման ամբողջություն է: ԵՎ Երկիր մոլորակը մի օրգանական բջիջ է Բնության օրգանիզմի մեջ: Որպես այդպիսին, Երկիրն ունի իր բնական որակները և իր բնական դերը Բնության օրգանիզմի մեջ:
2. Երկիրը օրգանական ամբողջություն է և իր օրգանական մասերի ամբողջություն է: ԵՎ Երկրի ամեն մի օրգանական մաս իր որոշակի որակական դերն ունի Երկիր մոլորակի ամբողջության մեջ:
3. ԵՎ Երկիրն անհիմանալի է առանց իր օրգանական մասերի: Ռեստի անհեթեթություն է Երկիր մոլորակի ամբողջության մեջ ինչ-որ օրգանական մասի սկիզբ որոնելը: Բոլոր օրգանական մասերը իսկզբանե գոյություն ունեն Երկիր մոլորակի ամբողջության մեջ: Նաև՝ Մարդկությունը:
4. Որպես Երկրի ամբողջության օրգանական մաս, Մարդկությունը սկիզբ չունի: Նա կա Երկիր մոլորակի հետ միասին, նրա օրգանական մաս է կազմում և անպայման իր որակական դերն է կատարում Երկիր մոլորակի ամբողջության մեջ:
5. Մարդկությունն իր բնական դերին համապատասխան ունի իր առանձնահատուկ բնական որակները: Իր այդ բնական որակներով Մարդկությունն ընկալում է բնական խորհուրդները, իմաստավորում դրանք և ապրում ու գործում իր համար իմաստավորված այդ բնական խորհուրդներով:
6. Բնական խորհուրդները գոյություն ունեն իսկզբանե և անկախ Մարդուց: Մարդկությունը պարզապես ինքն իր համար իմաստավորում է դրանք: Մարդկության կողմից իմաստավորված բնական խորհուրդների համակարգը կոչվում է ԱՎԵՏԱՐԱՆ:

7. **Ավետ** - կազմված է ԱՎ /կյանք, խորհուրդ/ և ԷՏ /ամփոփում, խտացում/ բառարմատներով և նշանակում է իմաստավորված խորհուրդ: **Ավետարան** - իմաստավորված բնական խորհուրդների համակարգ:
8. Բնական խորհուրդների իմաստավորումը կատարվում է ըստ այն բնական դերի, որ ունի Մարդկությունը Երկիր մոլորակի ամբողջության մեջ:
9. Երկիր մոլորակի ամբողջության մեջ ամեն տեսակի ստեղծագործում, նյութական և հոգևոր արժեքների ամեն մի արարում իրագործում է Մարդկությունը: Մարդկությունն ինքնին մի ամբողջական օրգանիզմ է և Երկիր մոլորակի ամբողջության մեջ միակ արարող Որակն է:
10. Ամեն տեսակի արարում մտքի արդյունք է: Իսկ Երկրի ամբողջության միտքն ամփոփված է Մարդկության օրգանիզմի մեջ: Փաստորեն Մարդկությունը Երկիր մոլորակի միտք արտադրող «Ուղեղն» է:
11. Մարդկությունը, որպես Երկիր մոլորակի «Ուղեղ», ունի իր ներքին որակները, իր ներքին կառուցվածքը, իր ներքին հարաբերությունները: Այդ իմաստով Երկրի «Ուղեղի» օրգանիզմը համեմատելի է մարդ անհատի ուղեղի օրգանիզմի հետ:
12. Մարդու ուղեղը կազմված է բջջային տեսակներից: Կան ստեղծագործող բջիջներ, հիշողության բջիջներ և մոռացության բջիջներ: Բջիջների այդ բոլոր տեսակներն էլ խիստ անհրաժեշտ են մարդու մտքի օրինաչափ զարգացման համար:
13. Բջիջների յուրաքանչյուր տեսակ իր առանձնահատուկ բնական դերն ունի և իր դերին համապատասխան ունի իր առանձնահատուկ որակները, իր առանձնահատուկ որակական հարաբերությունները: Ըստ այդմ էլ, յուրաքանչյուր տեսակ ունի իր ապրելակերպի, իր գործելակերպի, իր դերի իմաստավորումը:
14. Ստեղծագործող բջիջների ապրելակերպն իմաստավորվում է արարումով: Հիշողության բջիջների ապրելակերպն իմաստավորվում է պահպանումով:

Մոռացության բջիջների ապրելակերպն իմաստավորվում է ավիրումով:

15. Ի դեպ, չի կարելի այս տեսակներին արժևորել՝ լավ կամ վատ: Այս երեք որակական տեսակներն էլ հույժ անհրաժեշտ են մտքի նորոգման ու զարգացման համար: ԵՎ եթե այդ տեսակներից որևէ մեկը լիարժեք չի կատարում իր բնական դերը, մարդու միտքը հիվանդանում է:
16. Նույն օրինաչափությունը գոյություն ունի նաև Երկրի «Ուղեղի»՝ Մարդկության օրգանիզմի ամբողջության մեջ: Մարդկությունը, որպես միտք արտադրող օրգանական ամբողջություն, ունի իր օրգանական մասերը՝ բնական Տեսակները, որ կոչվում են Ցեղ:
17. Ամեն մի բնական Տեսակ՝ Ցեղ, ունի իր որոշակի դերը Մարդկության օրգանիզմում: ԵՎ այդ բնական դերին համապատասխան ունի նաև իր բնական որակները:
18. Մարդկությունը, որպես միտք արտադրող օրգանիզմ, իր մեջ ունի արարելու, ավիրելու և պահպանելու հատկանիշներ: ԵՎ այդ երեք հատկանիշների համաչափ հարաբերությունների միջոցով է Մարդկությունը ապահովում իր մշտական նորոգումն ու պահպանումը:
19. Ըստ այդմ, Մարդկության օրգանիզմում բնականորեն կա և՛ արարող Տեսակ, և՛ արարումը ավիրող Տեսակ, և՛ արարումը պահպանող Տեսակ:
20. Ի դեպ, չի կարելի այդ Տեսակներին արժևորել՝ լավ կամ վատ: Այդ բոլոր Տեսակներն էլ անհրաժեշտ են Մարդկության օրգանիզմի համար: Ամեն մի Տեսակ իր բնական դերն ունի, որ կատարում է համապատասխան ապրելակերպի միջոցով: ԵՎ եթե որևէ Տեսակ լիարժեք չի կատարում իր բնական դերը, ապա Մարդկության օրգանիզմը հիվանդանում է:
21. Իր բնական դերին, իր որակներին համապատասխան ամեն մի Տեսակ յուրովի է ընկալում բնական օրինաչափությունները, յուրովի է ձևավորում իր մեջ իր ծագումի զգացողությունը, իր բնական որակների զգացողությունը, իր բնական դերի զգացողությունը, իր

- ապրելակերպի զգացողությունը: ԵՎ այդ բոլորը իմաստավորվում են Տեսակի Ավետարանի մեջ:
22. Ամեն մի բնական Տեսակ՝ Ցեղ, անպայման ունի իր Ավետարանը: ԵՎ ամեն Ցեղի Ավետարանը ձևավորվել է հենց այդ Ցեղի բնական դերի և բնական որակների զգացողությամբ:
 23. Ըստ այդմ, ամեն մի Ավետարան անպայման Ցեղային է: ԵՎ ամեն Ցեղի Ավետարանը միայն ու միայն իր համար է:
 24. Արի Ցեղը, իր արարչական ծագումին համապատասխան, Մարդկության արարող Տեսակն է: Հողածին Տիտանների Ցեղը Մարդկության ավիրող Տեսակն է:
 25. Ըստ այդմ, Արի Ցեղն իր արարող դերը իմաստավորում է Արարումի Ավետարանով: Իսկ հողածին Տիտաններն իրենց բնական դերն իմաստավորում են Ավիրումի Ավետարանով:
 26. Անշուշտ, պատմականորեն ձևավորված տարբեր Կրոններ անպայման ստեղծվել են այս կամ այն Ցեղային Ավետարանի հիմքի վրա: Բայց ոչ մի Կրոն երբեք իր մեջ չի կրում Ցեղային Ավետարանի ամբողջությունը: Ցանկացած Կրոն, որպես գաղափարախոսություն, Ցեղային Ավետարանի մասնակի արտահայտություն է միայն: Ահա թե ինչու միևնույն Ցեղային Ավետարանի հիմքի վրա կարող են ձևավորվել մի քանի Կրոններ:
 27. Արարումի Ավետարանի հիմքի վրա ձևավորվել են Արիական Կրոններ՝ Զրադաշտություն, Բուդդայականություն, Հինդուիզմ: Ավիրումի Ավետարանի հիմքի վրա ձևավորվել են Հողածինների Կրոններ՝ Հուդաիզմ, Քրիստոնեություն, Մահմեդականություն:
 28. Ավիրումի Ավետարանով են ապրում Հողածին Տիտանները: Դա նրանց ապրելակերպն է: Դա բնական է և ընդունելի Հողածին Տիտանների համար: Դա նրանց բնական դերի իմաստավորումն է:
 29. Սակայն Ավիրումի Ավետարանը անընդունելի է արարող Արիների համար: Արարող Արին պետք է ապրի

Արարումի Ավետարանով: Դա է նրա բնական դերի
իմաստավորումը:

Արհներինը - ԱՐԱՐՈՒՄԻ ԱՎԵՏԱՐԱՆՆ Է:

բ. ԽՈՐՀՈՒՐԴ ԱՐԱՐՄԱՆ

1. Արարման Խորհուրդն է ԱՐԱՎ-ն՝ ԱՐ /սերուն, արարում/
- ԱՀ /հզոր/ Արարող Ջորություն՝ Արարիչ, ուր ԱՎ
բացարձակ ձայնը չեզոքացնում է Հ հնչյունին և
ներկայացնում է Բացարձակ Արարող Ջորության՝ Արարչի
էությունը որպես ԱՐԱՎ:
2. Արա՛ն է միակ ու բացարձակ Արարիչը ամբողջի,
ամենի. և ամեն ինչ Աշխարհում Արայից է գալիս ու դեպի
Արա՛ն է գնում:
3. Արա՛ն ոգի է և նյութ, միտք է և մարմին, նա
զգացական է և նյութական, էություն է ու երևույթ:
4. Արա՛ն Գոյ է՝ Գոյության Ոգի. նա ով է, նա ինչ է, ամեն
ոք, ամեն ինչ, ամեն:
5. Բացարձակ է Արա՛ն, անսկիզբ ու հավերժ,
անսահման ու անժամանակ: Իրենն են, իր մեջ են երկինք,
տիեզերք, ջերմություն և լույս, երկիր ու արեգ, միտք և
հոգի:
6. ԱՐԵՎ է Արա՛ն՝ Կենաց Ջորություն՝ ԱՐ /զորություն/ -
ԱՎ /կյանք/:
7. Արա՛ն գերմեծն է ու գերփոքրը. և գերմեծն ու
գերփոքրը նույնանում են Արայի մեջ:
8. Արա՛ն ամենագոր է, ճշգրիտ, հաստատուն: Նա
ամենագոյն է, որ կյանք է տալիս ամեն գոյության. Նա
ամենաուժն է, որ ուժ է տալիս ամեն զորության. Նա
ամենանյութն է, որ խտանում է ամեն մարմնի մեջ. Նա
ամենամիտքն է, որ արարումն է ամեն իմաստության. Նա
ամենաոգին է, որ ճառագումն է ամեն երանության. Նա
անժամանակն է, որ ժամանակն է հաստատուն

հաջորդականության. Նա անսահմանն է, որ սահման է հաստատում պարբերականության:

9. Արա՛ն անժամանակում է արարել Բնությունը և արարել է հենց իր էությանը համապատասխան: ԵՎ Բացարձակ Բնությունը նույնանում է Բացարձակ Արարչին:
10. ԵՎ բնական օրենքները նույնն են թե՛ մեզ համար և թե՛ Արարչի, քանզի Նա է ամենաճշգրիտ օրենքները սահմանել: ԵՎ նույնիսկ ինքը՝ Արա՛ն չի կարող իր հաստատած օրենքները խախտել:
11. ԵՎ Արա՛ն իր իսկ հաստատած օրինաչափությամբ անվերջ արարչագործությամբ նորոգում է ու պահպանում իրեն և իր մեջ բոլորը, ամբողջը, ամենը:
12. Արարումը նոր բան ստեղծել չի նշանակում, և ընդհանրապես Արարիչը ոչ մի նոր բան չի ստեղծում:
13. Արարիչը իր տիեզերքով, Աստվածներով, Աստվածամարդերով, մարդկանցով, ծառ ու ծաղկով, հավքով, գազանով մի ամբողջական Բնություն է:
14. ԵՎ եթե Արարիչը մի նոր բան ստեղծի, կնշանակի՝ Բնությունը անկատար է, Արարիչն էլ է անկատար: Բայց Արարիչը կատարյալ է, Բնությունը կատարյալ է, և կատարյալ են ամենը Բնության մեջ:
15. Անսկիզբ է Արա՛ն, և ամենն են անսկիզբ. հավերժ է Արա՛ն, և ամենն են հավերժ. բացարձակ է Արա՛ն, և ամենն են բացարձակ:
16. ԵՎ Արա՛ն իր արարչագործությամբ հենց բացարձակությունն է անվերջ արարում Բնության բոլոր Տեսակների մեջ, միշտ նորոգելով որակը նրանց:
17. Արա՛ն ինքն է անժամանակի մեջ ժամանակ հաստատում և ամեն սահման հաստատում անսահմանության մեջ: ԵՎ ժամանակի ու սահմանի մեջ կատարում է ինքնանորոգում իր բոլոր Տեսակների հավերժ նորոգմամբ՝ մահվան սահմանում և անմահության հավերժ ընթացքում:
18. Արա՛ն մշտապես զգում է իր բոլոր օրգանական մասերին և հենց նրանց մեջ է իրագործում իր ինքնանորոգումը մշտական արարչագործությամբ:

19. Արարումը անժամանակ է, Ծնունդն է հաստատում ժամանակ. Արարումը անսահման է, Ծնունդն է հաստատում սահման:
20. ԵՎ անսահման ու անժամանակ արարումի մեջ ամեն պարբերություն ծնունդով է հաստատում իր ժամանակն ու սահմանը:
21. ԵՎ թե Արարումի Խորհուրդն է Արա՛ն, ապա Ծնումի Խորհուրդն է Անահիտը, ԵՎ Արարչագործությունը՝ դա Արարումի և Ծնումի ամբողջություն է:
22. ԵՎ արարչագործությունը իրագործվում է Բնության բոլոր էակների մեջ և իրագործվում է հոր ու մոր միջոցով՝ հայրը՝ արարող, իսկ մայրը՝ ծնող:
23. Հայրը ծնվող զավակի մեջ արարում է նրա շարունակելիությունը, իսկ մայրը, ծնելով հոր զավակին, հաստատում է նրա կենաց շարունակելիության անսահմանության մեջ մի նոր պարբերություն:
24. Արա՛ն է Հայրը բոլոր Աստվածների և Աստվածամարդերի: ԵՎ Արայի կամքով է Երկիրը ծնել Տիտանին:
25. Արա՛ն է հենց Արարատում արարել իր երկրային որդուն՝ երկրային Հէգին /բացարձակ հուր, հրեղեն, աստված/ և իր անունով Արի անվանել:
26. ԵՎ Հէգ՝ Հայգ Արին մյուս Աստվածների պես անմահ չէ, բայց իր հավերժությունը հաստատում է սերնդատվությամբ՝ կյանքի ու մահվան անընդհատ հաջորդականությամբ:
27. Հէգ Արին Արայից սերված երկրային աստված է: ԵՎ հենց նրանից են առաջացել Աստվածամարդիկ, որ կոչվում են Հայամարդ կամ Արմեն:
28. Բացարձակ է Արա՛ն, և կատարյալ են զավակները նրա: Կատարյալ էր և Արին, որպես երկրային աստված. կատարյալ են և Հէգ Արիից սերված աստվածամարդիկ:
29. Արին Արայի հարազատ որդին է, Հէգ՝ բացարձակ հուր, հրեղեն է նա և Հայր Արայից արարչական զորություն է ժառանգել: ԵՎ Արիի սերունդները, որ նույնպես Հէգի բռնկումն ունեն իրենց մեջ, ժառանգել են նաև նրա արարչական զորությունը:

30. Արարիչ չի ընտրվում երբեք: Արարչի ընտրությունը արդեն Աստվածության ժխտում է, Բնության ժխտում է, բնականի ժխտում է և հոր ժխտում է:
31. Իմ արարիչը նա է, ով ինձ տվել է կյանք, ուժ, սեր և ուն արյունն են կրում իմ մեջ: Դա իմ հայրն է, իմ պապը, ապուպապը, նրա պապը և այդպես մինչև Հայր Արա՛ն: Արա՛ն է իմ Բացարձակ Հայրը՝ Արարիչը, որ արարել է իմ բոլոր նախահայրերին:
32. ԵՎ ճանաչելով ինձ որպես Արորդի՝ Արայի որդի, ես զգում եմ իմ Արիական ծագումը, որ Հայր Արայից է գալիս. խնկարկում եմ իմ անարատ արյունը, որ Հայր Արայից է հոսում իմ երակներում. պայծառացնում եմ իմ ազնվական դիմագիծը, որ Հայր Արայից են ժառանգել և վեհացնում եմ իմ մեջ Վահագնյա ոգին, որ արտացոլումն է Հայր Արայի էության:
33. Հայր Արա՛ն հենց Արարատում ինքն է արարել իմ Ցեղը Արի և դեռ արարում է անվերջ, անդադար Արի սերունդներ՝ արարում նրանց հենց իր կերպարով ու իր բնությամբ, որ լինելությունը արարումով լցվի, որ իմաստավորվի լույսը արևի և աստվածային խորհուրդը կյանքի մարդկանց սրտերում անվերջ առկայծի:
34. Հայր Արա՛ն իմ Արարիչն է, իմ հայելին է. ես ինձ եմ տեսնում Նրա պատկերում. Նա ինձ է նման, բայց Նա նման է նաև բոլորին, և բոլորի նման բնական է Նա:
35. Ես զգում եմ Նրա զարկերը սրտի, ես Նրա կրծքի ջերմությունն եմ զգում. և Նա հենց իմ մեջ արարում է ինձ:
36. ԵՎ ապրել Արայով, կնշանակե՛ ապրել բնական, կնշանակե՛ զգալ, որ Բնության մեջ Ոչինչը չկա. կա Ամեն Ինչը, և ամեն ինչը հենց լինելությունն է. և լինելությունը Արայից է գալիս ու Արայով է լինելությունը հաստատվում:
37. Արարիչը մի ամբողջություն է, և Բնության մեջ ամենը Նրա օրգանական մասերն են . և ինչպե՞ս կարելի է ճանաչել Արարչին, երբ անտեսում ենք Նրա օրգանական մասերը:
38. Այն ամենը, ինչ մենք տեսնում ենք, մեր պատկերացման մեջ են միայն առանձին. իրականում դրանք բոլորը մի ամբողջություն են: ԵՎ որ երևույթի հետ

էլ որ մենք առնչվում ենք, իրականում առնչվում ենք Բնության Արարչական Ամբողջության հետ:

39. Չէ՞ որ մենք, որպես բնական օրգանիզմ, մեր բոլոր օրգանական մասերի ամբողջություն ենք և պայմանականորեն ենք այդ մասերը դիտում առանձին - առանձին. իրականում դրանք բոլորը մեր ամբողջության օրգանական մասերն են:
40. ԵՎ մենք չենք կարող մեր մարմնի մի որևէ մաս անտեսել. անտեսելով մեր մարմնի որևէ մաս, մենք իրականում անտեսում ենք մեր ամբողջությունը:
41. Բնության մեջ ամենը ճանաչելով է, որ մենք ճանաչում ենք Արային. ամենը սիրելով է, որ մենք սիրում ենք Արային:
42. Մենք էլ ենք Արարչական Ամբողջության օրգանական մաս. ուրեմն մեզ էլ պահպանելով ու սիրելով այդ Ամբողջության մեջ, մենք պաշտում ու սիրում ենք Արային:
43. Մենք չենք կարող մեզ անջատել այդ Ամբողջությունից, հակառակ դեպքում մենք կկտրվենք հենց մեզանից և կդառնանք չարիք հենց Արարչի համար: ԵՎ ինչքան էլ աղոթենք ու ապաշխարենք, միևնույն է՝ մենք չարիք կլինենք:
44. ԵՎ իրականը թողած, վերացական դատողություններով մենք երբեք չենք ճանաչի Արային: Արային մենք կարող ենք ճանաչել միայն մեր շրջապատի իրականի մեջ և նրա միջոցով:
45. Մենք, որպես Աստվածամարդիկ, մեր ամբողջությունը պիտի որոնենք մեր շրջապատի իրականության մեջ՝ ծառ ու ծաղկի, հավք ու գազանի, սար ու դաշտի, ջրի, արեգի, մարդկանց ու Աստվածների մեջ: ԵՎ մեր ամբողջությունը որոնելով, մենք այդ բոլորի մեջ պիտի որոնենք մեզ, նրանց մեջ էլ գտնենք մեզ և նրանցով էլ ամբողջանանք որպես Աստվածամարդ ու ճանաչենք Արային, սիրենք Արային, միանանք Արային:

գ. ԽՈՐՀՈՒՐԴ ԾՆՈՒՄԻ

1. Ծնունդի Խորհուրդն է Անահիտը՝ ԱՆ /ծնունդ/ - ԱՀ /հզոր/ Ծնող Ձորություն՝ Աստվածամայր:
2. Արարչագործությունը՝ դա արարումի և ծնունդի միասնությունն է: ԵՎ արարումը ծնունդով է հաստատում իր նորոգումը:
3. ԵՎ թե Հայրը արարման բացարձակություն է՝ Հ /բացարձակ/ - ԱՐ /արարում/, ապա Մայրը արարումի պահպանողն է՝ Մ /պահել/ - ԱՐ/արարում/: ԵՎ Մայրը Հոր արարումը պահպանում է ծնունդով:
4. Արարումը ժամանակ չի պայմանավորում. ծնունդով է մայրը նորոգում հոր արարումը ժամանակի մեջ:
5. Ծնունդով է սկսվում կյանքի նոր պարբերությունը. իսկ պարբերությունները անսահման անգամ կրկնվում են, և մոր մեջ ու մոր միջոցով են կրկնվում դրանք:
6. Թե չկա արարում առանց ծնունդի, նույնպես և չկա ծնունդ արարումից դուրս:
7. Արարումից դուրս որևէ ծնունդ ստեղծումն է նորի, որ հնարավոր չէ: Ծնունդը հենց արարումի նորոգումն է ժամանակի մեջ: Մայրը ծնունդ է եղածին. չեղածին նա ինչպե՞ս կծնի:
8. Թե ծնունդ չլինի, էլ ի՞նչ արարում՝ արարումը երբեք չի նորոգվի. թե արարումը չնորոգվի, նա չի պահպանվի, ուստի և արարում չի լինի երբեք:
9. Թե մայր չլինի, հայրն ինչպե՞ս նորոգի արարումը իր: ԵՎ հայրը իր որդու արարումը նորոգելու համար մայր է որոնում, որի մեջ և որի միջոցով նորոգի իր որդու արարումը: ԵՎ մայրը իր մեջ սնունդ է, ապա ծնունդ ու պահպանում է հոր զավակին:
10. ԵՎ Անահիտն է Մայրության Խորհուրդ: Հենց ինքը՝ Արան Մայրն է արարել Անահիտի մեջ ու հենց Մայրությամբ կերտել է նրան՝ Աշխարհի բոլոր ցավերից մի փունջ, բոլոր սերերից մի ամբողջ հյուսվածք, հուզմունքից մի բուռ, երազներից սոսկումները լոկ, տառապանքի ծով - դա է Մայրությունը: ԵՎ այդ Մայրությամբ էլ նա Մայրն է կերտել Անահիտի մեջ:

11. Մայր Անահիտը՝ ծնունդի խորհուրդ, պտղաբերումի մի ամբողջ աշխարհ, գութի խնկարկում, սիրո մեղեդի, կարոտի խորան, երջանկության բույր:
12. ԵՎ Անահիտը՝ ինքը տառապանք, ինքը մայրացում, Մայր Աստվածուհին ամեն երկունքի, ամեն ծնունդի, ամեն քնքշության ու նվիրումի:
13. Առանց երկունքի էլ ի՞նչ մայրացում, և էլ ի՞նչ երկունք առանց ցավերի: ԵՎ այդ ցավերով Մայր Անահիտը հենց ինքն է երկնում. և ինքն էլ բոլոր մայրերի նման գարուն է ծնում. և ինքն էլ բոլոր մայրերի նման երջանկանում է իր մայրացումով:
14. Ամեն մի ծնունդ գարուն է կյանքի՝ լինի տիեզերական անհունության մեջ, թե ամենափոքր մի էակի:
15. Գարուն է կյանքի ամեն պարբերության ծնունդը, և ձմեռ է վախճանը նրա:
16. Տարին էլ երկրի կենաց մի պարբերություն է, որը սկսվում է գարնան ծնունդով և ավարտվում է հարաբերական մահով՝ ձմեռով:
17. Ծնունդով է սկսվում երկրի կենաց պարբերության գարունը. և գարունն է երկրի վրա նոր ժամանակ սահմանում:
18. Գարուն է ծնում երկրի վրա Մայր Անահիտը և ձմեռվա գորշությունն է ցրում երկրի վրայից, կյանքի գույները իրարից զատում և շաղ է տալիս ամբողջ երկրով մեկ:
19. Ջատիկ է հյուսում Անահիտն ամենուր: ԵՎ բազմագույն է աշխարհը դառնում. ամեն մի էակ իր գույնն է ստանում. ամեն մի էակ իր բույրն է ստանում, ամեն մի էակ իր համն է ստանում:
20. ԵՎ տոնախմբություն է Ջատիկը գարնան. և՛ ծառ, և՛ ծաղիկ, և՛ հավք, և՛ գազան, և՛ մարդ, և՛ աստվածամարդ բոլորը մեկտեղ ժպիտ են հղում գարնան արևին և փառաբանում Մայր Անահիտին:
21. ԵՎ Անահիտն է Աստվածածին Մայր. և Անահիտն է զավակներ ծնում Արայի համար՝ Անմահ Աստվածներ և մայրական ջերմությամբ սնում է նրանց:

22. ԵՎ Անահիտը՝ Մայրը բոլոր Անմահ Աստվածների, աղերսեց Արային, որ իրեն պարզևի տառապալից մայրություն:
23. ԵՎ Հայր Արա՛ն հենց Անահիտի մեջ արարեց երկրային հրեղեն որդուն՝ Հէգին: ԵՎ երկնեց Անահիտը, ցավով երկնեց ու հենց երկրի վրա, Աստվածների կերտած Օրոցքում՝ Արարատում, ծնեց մի չքնաղ հրեղեն որդի՝ արեգատես, լուսափայլ, առողջ և ուժեղ: ԵՎ Արա՛ն նրան Արի անվանեց:
24. Բայց քանի որ երկրային աստված Արին այնքան զորավոր չէր, որքան նրա Աստված եղբայրները, ուստի Աստվածամայր Անահիտը մշտապես հսկում էր նրան քնած թե արթուն, աչքը չէր կտրում նրանից և մայրական գուրգուրանքով սնում էր նրան:
25. Աստվածամայր Անահիտը մշտապես հսկում է, պահպանում է նաև Արիից սերված Աստվածամարդերին:
26. ԵՎ մայրացումը եղավ երկրային կյանքի խորհուրդը: ԵՎ Անահիտը հենց իր Մայրությամբ պարզևեց բոլոր մայրերին մայրացում որպես շնորհի աստվածային՝ լինել երջանիկ տառապանքի մեջ:
27. ԵՎ Անահիտը՝ Մայրն Աստվածների ու Արիների. և մայրերն Արի նման են նրան, և նա նման է բոլոր մայրերին:
28. ԵՎ Անահիտը՝ Մայրը բոլոր Արի մայրերի, իր Մայրացումով մայրերի կողքին, ամեն երկունքին անձամբ հովանի, անձամբ մասնակից մոր ապրումներին, մոր երազներին:
29. ԵՎ Անահիտը՝ Մայրն Աստվածների ու Արիների, շրջում է ամբողջ Արարատով մեկ, այցելում բոլոր լացող մայրերին, որբ մանուկներին, գուրգուրում նրանց, ամոքում նրանց վիշտը դառնագին և կյանք է բուրում, արև է բաշխում և աստվածային սեր սնում նրանց:
30. ԵՎ Անահիտը՝ Մայրը բոլոր Տոհմի մայրերի՝ Տոհմի մայրերի մայրության պաշտպան:
31. Աստվածամայր Անահիտը մերժում է ընտանիքից դուրս ամեն մի ծնունդ. ընտանիքից դուրս ամեն մի

ծնունդ՝ մի որբ անտոհմիկ, ընտանիքից դուրս ամեն մայրացուն՝ չարիքի ծնունդ:

32. Մայրը մայրացունն է լոկ ընտանիքի մեջ՝ տոհմաժինն է մայրը: ԵՎ Անահիտը միայն տոհմաժին մորն է պաշտպանում՝ տոհմը ծնող, տոհմը սնող, տոհմը պահող ու զորացնող մորն է պահպանում:
33. Մայր Անահիտը ամեն ծնվողին ժպիտներ ունի, ամեն հերոսին համբույրներ ունի, ամեն մեռնողին արցունքներ ունի:
34. ԵՎ Անահիտը՝ Մայր Աստվածուհին, որ ամեն Արի մոր կերպարը ունի, մայրական սիրով հասնում է ամեն մեռնող հերոսի, գրկում ջերմագին, սեղմում իր կրծքին, իր արցունքներով վերքը լվանում, համբույրով կնքում աչքերը նրա և մեռնող քաջի քունը օրորում: ԵՎ Արի քաջը երանելի մայրական գրկում աչքերն է փակում և ոգիանում սփոփված ժպիտով:
35. Մայր Անահիտը հենց մոր կերպարով հայտնվում է քնած անմեղ մանուկին, ճոճում է նրան քաղցր երազում, համբույրներ դրոշմում, օրոր է ասում աստղերից քաղած անուրջ երգերով, ժպտում է նրան արևից պոկած հրե ժպիտով: ԵՎ քնած մանուկը ժպտում է սիրով, ժպտում երջանիկ՝ իր մորն է ժպտում, ժպտում աշխարհին:
36. Մայր Անահիտը՝ ոգու պահապան, ոգիների Մայր. իր գիրկն է առնում ոգիացած մանուկներին, մայրական գութով գուրգուրում նրանց, որ էլ չլացեն կարոտի ցավից. իր իսկ ջերմությամբ սնում է նրանց, որ էլ չմրսեն ձմեռվա ցրտից. մայրական սիրով սիրում է նրանց, որ թեև ոգի՝ որբություն չզգան, մայրիկ ունենան, մայրական զգվանք, որ երջանկանան լուսափայլ ոգիք ու սիրեն, սիրեն բոլոր ողջերին:
37. ԵՎ Անահիտը, ոգիացած մանուկին գրկած, մոր մոտ է գալիս նրա երազում, որ մայրը տեսնի ժպտադեմ որդուն, համոզվի նրա լինելության մեջ. հավատա, որ նա շունչ չէ մահաբեր, այլ՝ անմեղ ոգի, որդին անմարմին՝ սիրո, կարոտի զգացմունքով լեցուն և... մայրը սթափվի, էլ չսարսափի ու սիրի նրան ողջ զավակի պես:

դ. ԽՈՐՀՈՒՐԴ ԾԱԳՈՒՄԻ

1. Ամեն մի անուն իր խորհուրդն ունի, և ամեն խորհուրդ իր անունն ունի. և պատահական անուն չի լինում երբեք:
2. ԵՎ Հայք ու Արմեն անուններն էլ, հազարամյակներից եկած, անպայման իրենց մեջ մի խորհուրդ ունեն: Ինչո՞ւ ենք մենք Արմեն ու Հայք կոչվում, և ո՞րն է դրանց խորհուրդը:
3. Աստվածայինի խորհուրդ ունի ՀԷԳ կամ ՀԱՅԳ -ը՝ Հ /բացարձակ/ Էգ՝ ԱԳ /հուր/ բացարձակ հուր, հրեղեն, աստված: Արին Արայից սերված երկրային Հայգի անունն է, որ հենց ինքը Արա՛ն է կնքել, որպես երկրի արարող Որակ: Ըստ այդմ, Արի նշանակում է երկրի արարող որակ՝ երկրային աստված:
4. ԵՎ Հայգ Արիից ծնված սերունդները Հայք /Հայամարդ/ և Արմեն /Արի մարդիկ/ են կոչվում. երկուսն էլ Աստվածամարդ են նշանակում:
5. ԵՎ նրանց Բնօրրանը Հայաստան և Արարատ է կոչվում: Հայաստան՝ ՀԱՅԳ /աստված/ - ՍՏԱՆ /վայր/ Աստվածավայր. Արարատ՝ ԱՐԱՐ - ԱՏ /տեղ, վայր/ Արարման վայր: ԵՎ հոմանիշ են Հայքն ու Արմենը. հոմանիշ են նաև Հայաստանն ու Արարատը:
6. ԵՎ մարդկային բոլոր Տեսակները մեզ ճանաչում են որպես Արմեն՝ Աստվածամարդիկ. և դա հաստատում է Արիների՝ Հայերի ծագումնաբանական աստվածային խորհուրդը:
7. Բնության մեջ բոլոր բնական Տեսակները կազմված են արարչական չորս տարրերի՝ Հողի, Ջրի, Օդի, Հուրի հարաբերակցությամբ:
8. Այդ բնական տարրերի որակական հատկություններն են. Հող՝ պնդություն. Ջուր՝ ձկունություն, սահունություն. Օդ՝ զգայունություն, թափանցիկություն, շարժում. Հուր՝ ջերմություն, էներգիա:

9. ԵՎ բնական Տեսակների մեջ Հողի ու Ջրի տարրերը ապահովում են նրանց նյութական որակը, իսկ Օդի և Հուրի տարրերը՝ զգացական, լիցքային որակը:
10. ԵՎ բնական Տեսակների բազմազանությունը պայմանավորված է նրանց մեջ այդ չորս տարրերի բազմազան հարաբերակցությամբ:
11. ԵՎ Բնության մեջ Տեսակների որակական նույնություն գոյություն չունի: Զգացական որակների տարբերությամբ Տեսակները մշտապես գտնվում են ներքևից վերև աստիճանական հաջորդականության մեջ:
12. ԵՎ Բնության մեջ տարբեր Սեռերի /Հող, Բույս, Կենդանի, Մարդ.../ ընդգծումը զուտ պայմանական է, և իրականում նրանց միջև կտրուկ անջրպետ գոյություն չունի. այդ Սեռերը իրար հետ կապված են միջանկյալ Տեսակներով:
13. Չէ՞ որ Կենդանական Սեռի մեջ մտնում են՝ իր մեջ բուսական որակներ կրող ամենապարզ Տեսակի կենդանուց մինչև արդեն մարդկային որոշ որակներ ունեցող ամենաբարձր Տեսակի կենդանին:
14. Նույն օրինաչափությունը գոյություն ունի նաև մարդկային Սեռի մեջ. և դա պայմանավորված է մարդկային տարբեր Տեսակների՝ Ցեղերի մեջ բնական չորս տարրերի հարաբերակցության տարբերությամբ:
15. ԵՎ այն, որ Արի Հայերը ճանաչված են որպես Աստվածամարդ, հաստատում է, որ նրանց մեջ առավել գերազանցում է Հուրի տարրը, համեմատությամբ մյուս մարդկային Տեսակների՝ Ցեղերի:
16. ԵՎ Հայ Արիները երկրի բոլոր՝ նաև մարդկային՝ Տեսակների մեջ ամենաբարձր զգացական որակն են:
17. Բայց Հայ Արիի Աստվածամարդ լինելը հաստատում է, որ այնուամենայնիվ, Արիները բնական ամենաբարձր զգացական որակը չեն:
18. ԵՎ Արիներից վեր Աստվածները կան, որոնց մեջ բացարձակ գերիշխում են Օդի և Հուրի տարրերը, նվազագույնի հասցնելով Հողի և Ջրի տարրերը:

19. ԵՎ Արիները միջանկյալ բնական Տեսակ են Աստվածների ու մարդկանց արանքում, իրենց մեջ կրելով և՛ աստվածայինը, և՛ մարդկայինը:
20. ԵՎ Արան ինքն է Արարատում արարել Հայգ Արիին, որից առաջացել է Աստվածամարդերի Տեսակը. և արարել է, որպեսզի չխախտվի օրինաչափությունը երկրի վրա, և Աստվածների ու մարդկանց միջև անջրպետ չլինի:
21. ԱՐԵՎ է Արա՛ն և իր Կենսահուրն է սփռում Աշխարհում: Արա՛ն իր Արևով սնում է Աստվածներին. Աստվածները սնում են Աստվածամարդերին՝ Արիներին. Արիները սնում են մարդկանց. մարդիկ սնում են կենդանիներին և այդպես շարունակ:
22. ԵՎ Արարատն է Բնակը Արի Տեսակի: Հենց Արարատում են արարվել Արիք: ԵՎ ապա հենց Արարատից, Արի տոհմերից, գաղթական խմբեր տարածվել են երկրի վրա:
23. ԵՎ այդ ազգակից տոհմերը Արի բազմաթիվ Արի ազգեր են կազմել և հենց հայրական օջախի կողքին իրենց ազգային տներն են շինել:
24. ԵՎ այդ բազմաթիվ ազգերը Արի՝ նույն ծառի ճյուղեր, ազգակից միմյանց, հենց նույն արմատից սնունդ են ստանում, հայրական օջախից կրակ են ստանում:
25. ԵՎ ազգերն Արի ճյուղերն են Արի Ցեղածառի, որն իր Արմատով հենց Արարատի կրծքում է կանգնած: ԵՎ Արարատում Արմատը Ցեղիս՝ Արի տոհմերի ամբողջությունն է դա, որից ածանցվել են բազմաթիվ ազգեր:
26. ԵՎ Արարատում Արմատը Ցեղիս կոչվում է Արմեն՝ Հայ Արմեն կոչվում. այդպես է կոչվում Ցեղի անունով:
27. ԵՎ Հայը՝ Արմենը, ազգ չէ պարզապես, ածանցում չէ նա՝ նա Ցեղն է Արի, Արմատն է Ցեղի, և հենց նրանից են ազգերն ածանցվել:
28. Հայը ընդհանրական որակն է Ցեղի. Արի որակի խտացումն է նա՝ նա Ցեղի լեզուն իր մեջ է պահում. հավատքը Ցեղի իր մեջ է սնում. իր մեջ է կրում բարքերը Ցեղի. իր մեջ է երկնում ստեղծումը Ցեղի և հենց իր մեջ էլ Արային է զգում ու Արի ազգերին կապում նրա հետ:

29. ԵՎ ազգերն Արի առողջ են այնքան, քանի Արարատում իրենց Արմատն են զգում և սնվում են իրենց Արմատից:
30. Արարչածին է Արին, և Հողածին է Տիտանը, քանզի Հողի տարրն է նրա մեջ գերազանցում:
31. ԵՎ Արիների ու Տիտանների արանքում բազմաթիվ մարդկային Տեսակներ՝ Ցեղեր կան:
32. ԵՎ թե Արի Հայը երկրի որակն է արարող, ապա Չարի է Տիտանը՝ չարարող Տեսակ, բայց հույժ անհրաժեշտ մարդկության համար և անհրաժեշտ է որպես մոռացության որակ:
33. Չէ՞ որ մարդու ուղեղի մեջ կան արարող բջիջներ, բայց կան նաև չարարող՝ մոռացումի բջիջներ: Եթե մարդ իր ամեն լսած, ամեն տեսած և ուսանած, ամեն մի միտք անվերջ հիշի, ի՞նչ կլինի՝ մարդը, անշուշտ, կխենթանա: Առողջ մտքի և արարումի համար անհրաժեշտ է, որ մարդ շատ բաներ նաև մոռանա: ԵՎ այդ մոռացումն իրագործում են չարի բջիջները:
34. Եթե չլիներ ավերող Չարին, և միայն Արին ստեղծեր ու ստեղծեր՝ ո՞ր կհասներ նա. նա կհագեճար, նա կլճանար ու էլ չէր զգա ստեղծելու պահանջ, և արարող Արին Չարի կդառնար:
35. Արին ու Չարին թե գոյություն ունեն համատեղ, ուրեմն երկուսն էլ անհրաժեշտ են. բայց անհրաժեշտ են համաչափի մեջ:
36. Թե Չարին չափից ավել զորանա, և Արին թուլանա չափից ավելի՝ Չարին ահավոր ավեր կգործի. նա այնուհետև ոչ թե կքանդի, այլ կկործանի, և մարդկությունը կհիվանդանա՝ նա կկորցնի իր հիշողությունը:
37. Հայգ է Արին՝ բացարձակ Հուր և Տիեզերական Հուրից է սնում իր ներքին կենսահուրը. Հող է Տիտանը և Հողից է սնում իր ներքին կենսահողը:
38. Վաղուց Տիեզերական Չմեռն է իշխում, և պակասել է Հուրը երկրի վրա. նվազել է Արիների ներքին կենսահուրի սնունդը, և Արիները տկարացել են:

39. Տիեզերական Չմռանը Տիտաններն են զորավոր, քանզի նրանց ներքին կենսահողը մշտապես իր բնական սնունդն է ստանում:
40. ԵՎ վաղուց արդեն սրվել է հակասությունը թուլացող Արիների և զորացող Տիտանների միջև. և վաղուց արդեն Տիտանները վտանգ են սպառնում արարումին ու Արիներին:
41. Բայց և այնպես, թեև զորացած, Չարի Տիտանները Արիներին միայն արյաց արյունով կհաղթեն:
42. ԵՎ Չարի Տիտանների հետ ամեն ուխտ կարելի է կնքել, բայց չի կարելի արյան ուխտ կնքել: Արյան ուխտը Տիտանների միակ հաղթական զենքն է Արիների դեմ:
43. ԵՎ հենց այդ արյան ուխտին որպես հետևանք, վաղուց արդեն Տիտանները երկրային աստվածներից սերմ գողանալով, աստծո որդիներ են ծնում՝ հրեշավոր էակներ, որոնք ո՛չ Աստվածամարդ են, ո՛չ Տիտան:
44. Ամենակատարյալը Տիտանների մեջ և ամենաանկատարը Աստվածամարդերի մեջ, այդ աստծո որդիները ատում են կատարյալ Աստվածամարդերին և արիական զորությամբ ու տիտանյան չարությամբ դուրս են գալիս իրենց Աստվածամարդ հայրերի Ցեղի դեմ՝ ավերելու, կործանելու, ստրկացնելու:
45. ԵՎ Արիները պարտվել են, իսկ անկատար Արիներ որպես կատարյալ Տիտան վաղուց բազմել են Արարատի գահի վրա:
46. ԵՎ Արիները վաղուց արդեն ստրուկ են դարձել Չարիի զորությանը. ուրացել են իրենց ծագումը. ուրացել են իրենց կենսաձևը և վաղուց արդեն ապրում են Հողածին Տիտանների կենսաձևով՝ Արարչածին Արին ապրում է որպես Հողածին Տիտան:
47. ԵՎ վիշտն ու հյուժող աղետները վաղուց ուղեկցում են Արիներին. վերացավ Արիների զորությունը, վերացավ սերը, արարումը. գավակները պատիվ չեն տալիս ծնողներին. ընկերը հավատարիմ չէ ընկերոջը. սեր չկա եղբայրների մեջ. կինը դուրս է եկել իրենից և կյանքն է դավում:

48. ԵՎ Արիները իրենց ձեռքով ավերում են իրենց քաղաքները, քանդում են իրենց տներն ու տաճարները, պղծում են իրենց նախնիների հիշատակը:
49. ԵՎ Արին զագագած ինքն իրեն է կրծում, ինքն իրեն է պղծում, ինքն իրեն դավում, իր արիությունն է հալածում իր մեջ և Արի եղբոր արյունով սնում Չարի Աստծո ստամոքսը անհագ:
50. ԵՎ վաղուց արդեն Արիները իրենք չեն սնում իրենց ներքին կենսահուրը և վաղուց արդեն կենսահուրով չեն սնում մարդկությանը. և մարդկությունը վաղուց արդեն հիվանդացել է:
51. ԵՎ վաղուց արդեն իրենք իրենցից որբացած, Արիները որոնում են իրենց. որոնում են ամենուր, ամենքի մեջ, բայց ոչ՝ իրենց մեջ:
52. Արին միայն իր արյան մեջ պիտի որոնի իրեն, Արի արյունով ճանաչի Արիին և արյունով միանա նրան:
53. Արի արյունը ավելի զորավոր է, քան ցանկացած կրոն. և ոչ մի օտարածին կրոն չի կարող հաղթել Արիին, եթե արյունը մաքուր է:
54. ԵՎ ամեն մի Արի ինքն իր մեջ պիտի գտնի՝ օտար Աստված՝ ինքն է զորավոր, թե՞ իր Արի արյունը:
55. Տիեզերական Չմեռ է այսօր, և սառել են Արիների մարմիններն ու հոգիները: Բայց Չմեռից հետո գալու է Գարուն. Տիեզերական Հուրի բռնկում է լինելու երկրի վրա՝ ծնվելու է Վահագնը:
56. Գարնանամուտ է այսօր, և Գարնան շունչը արդեն զգալի է մեր երկրի վրա՝ Տիեզերական Հուրի ավելացումով:
57. ԵՎ Արիներն այսօր Տիեզերական Հուրից սնվելու ավելի մեծ հնարվորություն ունեն, քան նրանց հայրերն ու պապերը:
58. ԵՎ նրանք, ում Արի արյունն ավելի զորավոր է, քան օտար Աստվածը, իրենց արյան կանչով փարվում են իրենց հրեղեն ծագումին և Տիեզերական Հուրից սնունդ են առնում: Նրանք զորացնում են իրենց ներքին կենսահուրը, որ Տիեզերական Հուրի բռնկումին դիմանան և դիմավորեն Վահագնին:

59. Իսկ նրանք, ում մեջ օտար Աստվածն առավել զորավոր է, քան Արի արյունը, չեն զգում իրենց հրեղեն ծագումը, չեն դիմանում Հուրի զորությանը և գերադասում են մնալ խավարի ու երանելի տկարության մեջ:
60. Վահագնը ծնվելու է պահպանելու աստվածամարդերի Տեսակը և արարումը երկրի վրա: ԵՎ Մեծ Ջրհեղեղով երկրի վրայից պղծությունն է լվալու նա:
61. Միայն զորավորները կդիմանան Տիեզերական Հուրի բռնկումին. միայն զորավորները կդիմավորեն Վահագնին. միայն զորավորներին կհովանավորի Վահագնը, և միայն զորավորները կվերապրեն Ջրհեղեղը, քանզի միայն զորավորներից աստվածներ կծնվեն:
62. Իսկ տկարները չեն դիմանա Տիեզերական Հուրի բռնկումին. նրանք չեն դիմավորի Վահագնին. նրանց չի հովանավորի Վահագնը, և նրանք կկործանվեն, քանզի Արայի կամքով Վահագնը կոչված է պահպանելու աստվածամարդերի Տեսակը, իսկ տկարներից աստվածներ չեն ծնվի: ԵՎ տկարների ո՛չ կյանքն է պետք Արային, ո՛չ էլ՝ մահը:

Ե. ԽՈՐՀՈՒՐԴ ԱՐԱՐԱՏԻ

1. Արարչագործության Խորհուրդ է Արարատը՝ ԱՐԱՐ-ԱՏ /տեղ/ Արարման վայր: Արարատը հենց Հայկական Լեռնաշխարհն է:
2. Արարատը ցամաքային կղզի է: Դռանով արդեն նա առանձնանում է Երկրի ընդհանրությունից: Արարատը Տիեզերական Էներգետիկ Դաշտի խտացումն է Երկրի վրա: ԵՎ Արարատի Հողը պայմանականորեն է հող կոչվում: Նա տարբերվում է Երկրի հողից:
3. Արարատի Հողը իր մեջ կրում է և՛ տիեզերական, և երկրային հատկանիշներ: Արարատը հագեցած է բավական բարձր ռադիոակտիվ լիցքավորումով, որ հատուկ չէ Երկրին:

4. Եթե ամբողջ Երկրի հողը հիմնականում կրում է բացասական էներգիա, ապա Արարատը իր մեջ ունի և՛ դրական, և՛ բացասական էներգիա:
5. ԵՎ Արարատը դրական էներգիայով կապված է Տիեզերական էներգետիկ Դաշտի հետ, իսկ բացասական էներգիայով կապված է Երկրի հետ:
6. Արարատը Երկրի վրա այն կենսավայրն է, որի միջոցով Երկիրը միանում է տիեզերական ամբողջությանը, կապվում է Տիեզերական Ջորություններին և կենսական սնունդ ստանում մշտապես:
7. ԵՎ հենց Արարատում են Աստվածամարդերի համար ապահովված կենսական ամենանպաստավոր բնական պայմանները:
8. Հենց Արարատում է Երկրի տաքության ու սառնության, լույսի ու խավարի համաչափ հարաբերությունը հաստատված:
9. Արարատից դեպի հարավ տաքության ու սառնության, լույսի ու խավարի համաչափությունը խախտվում է հոգուտ տաքության և լույսի: ԵՎ որքան հեռանում ենք Արարատից, այնքան պակասում են սառնությունն ու խավարը, այնքան ավելանում են տաքությունն ու լույսը: ԵՎ Արարատից որքան հեռանում ենք դեպի հյուսիս, այնքան պակասում են տաքությունն ու լույսը, և ավելանում են սառնությունն ու խավարը:
10. Միայն Արարատում է օրինաչափորեն ընդգծված տարվա բոլոր չորս եղանակների հաջորդականությունը: Իսկ Արարատից դուրս տարվա եղանակները ընդգծված չեն, և աստիճանաբար չեզոքանում է նրանց անցումը:
11. Միայն Արարատում է աճում Կենաց Ծառը, որի պտուղն իր մեջ ունի կենսական նշանակության բոլոր հատկությունները: Այն իր մեջ կրում է բոլոր մրգերի որակները: Կենաց Ծառի պտուղը՝ Կենաց Պտուղը, կոչվում է Ծիրան՝ Ծիրի /տիեզերական/ Պտուղ:
12. Ծիրանը միայն Արարատի պտուղ է, քանզի նա սնվում է և՛ Արարատի Հողի էներգիայից, և՛ տիեզերական էներգետիկ դաշտից: Այնինչ, նույն ծիրանի կորիզից

Երկրի հողի վրա աճած ծառի պտուղը այլևս ծիրան չէ. այն գենախնդվում է, կորցնում է ծիրանի շատ հատկություններ, քանզի այն սնվում է միայն Երկրի հողի բացասական էներգիայից:

13. ԵՎ ընդհանրապես Արարատի բարիքները տարբերվում են Երկրի բարիքներից որակապես, թեև լինեն նույն տեսակի:
14. ԵՎ եթե Երկրի բարիքները սնունդ են մարդկանց համար, ապա Արարատի բարիքները զուտ աստվածների սնունդ են:
15. Աստվածավայր է Արարատը՝ Հայաստանը և Արարչական ծագում ունի:
16. Երկրի վրա արարումը հաստատելու համար է, որ Արարիչը Երկրի վրա տեղադրել է Արարատը: ԵՎ Երկրի արարչագործությունը հաստատելու համար է, որ Արարիչը հենց Արարատում արարել է Արիին, որպես Երկրային Աստված:
17. Արին է առաջին երկրային աստվածը, և Արին է իր սերունդներով արարումի բացարձակ ընթացքը հաստատում Երկրի վրա:
18. ԵՎ արարումի վայր է Արարատը: ԵՎ Արարատից է սկսվում Երկրի ամեն հոգևոր ու նյութական արարում:
19. ԵՎ Արիներն են կապող օղակը Աստվածների ու մարդկանց միջև: Արարումի միտքը գալիս է Արայից Աստվածներին, Աստվածներից՝ Արիներին և Արիներից՝ մարդկանց:
20. Աստվածամարդիկ են Արիները և աստվածային սնունդով են գորանում:
21. Երկիրը երկնքից մշտապես ստանում է օդ, ջուր, հուր, լույս, միտք: ԵՎ դրանք մշտապես շրջանառության միջոցով երկնքից գալիս են Երկիր մաքուր վիճակում և ապա օգտագործված, անմաքուր վիճակում նորից դեպի երկինք են գնում:
22. ԵՎ Արարատն է անմիջականորեն սնվում երկնքից: Երկնքից իջած մաքուր ջուրն է սնում Արարատի աստվածային բարիքը և ապա բազմաթիվ գետերի միջոցով հոսում և թափվում է Արարատից դուրս:

23. Արարատից արտահոսող ջրով սնվում են շատ ու շատ դաշտեր ու ծովեր: ԵՎ երբեք Արարատի հողը չի սնվում դրսի ջրով:
24. Արարատից դուրս թափված ջուրը այլևս նույն ջուրը չէ. այն արտաթորանք է: ԵՎ Արայի կամքով այդ արտաթորված ջուրը ետ դեպի Արարատ չի գալիս:
25. ԵՎ ամենամաքուրն են Արարատի բարիքները, քանզի նրանք սնվում են միայն երկնային ամենամաքուր ջրով. և ամենամաքուրն է Արիների սնունդը՝ աստվածային սնունդ է այն:
26. Իհարկե, Արարատից դուրս թափված ջուրը նորից գալիս է Արարատ, բայց գալիս է բնական շրջանառության միջոցով. այն գոլորշիանում է, բարձրանում երկինք, մաքրվում և բյուրեղացած թափվում է Արարատ:
27. Այդպես բնականորեն կատարվում է ջրի մշտական շրջանառություն, որտեղ Արարատը ամենամաքուր ջրով է սնվում, սնելու համար Արարատի աստվածամարդերին:
28. ԵՎ այն բույսերն ու պտուղները, որ ի սկզբանե Արարատի բնական ծնունդ չեն, չեն կարող աստվածների սնունդ լինել, նույնիսկ եթե դրանք տեղափոխենք Արարատ: Չէ՞ որ դրանք իրենց բնական սնունդը ստանում են գործածված, անմաքուր ջրից, և Արարատի մաքուր ջուրը նրանց համար բնական սնունդ չի կարող լինել:
29. Մեր տեսանելիության սահմանում է ջուրը: Բայց երկրային կյանքի բնական պայմանն ապահովում են նաև մեր տեսանելիությունից վեր ջերմությունը, հուրը, լույսը, միտքը:
30. ԵՎ այդ որակներով է մշտապես երկիրը սնվում տիեզերքից: Արարիչը մշտապես սնում է Երկիրը իր ջերմությամբ, իր հուրով, իր լույսով, իր մտքով:
31. ԵՎ արարչական կենսաջերմությունը, կենսահուրը, կենսալույսը տիեզերքից հենց Արարատ են գալիս, ապա Արարատից արտահոսում Երկրով մեկ: ԵՎ օգտագործված, անմաքուր այդ որակները գոլորշիանալով բարձրանում են երկինք, մաքրվում, գտվում և բյուրեղացած նորից իջնում Արարատ:

32. Հենց Արարատն է տիեզերքից ամենամաքուր կենսաաջերմությունը, ամենամաքուր կենսալույսն ու կենսահուրը ստանում:
33. ԵՎ Արարատը, որպես Աստվածավայր, Տիեզերքից եկած ամենամաքուր ջրով, ամենամաքուր հուրով, ամենամաքուր լույսով է սնվում: Ահա թե ինչու Արարատի պտուղը և՛ մաքուր է, և՛ արևահամ: ԵՎ միայն այդ պտուղներն են աստվածամարդերի սնունդը:
34. ԵՎ Արարատը Տիեզերքից սնվելով ամենամաքուր կենսական ջրով, հուրով, լույսով, արդեն օգտագործված արտաթորում է իրենից դուրս, սնելով Երկիրը:
35. ԵՎ Արարատից արտաթորված անմաքուր ջուրը, լույսը, հուրը ետ դեպի Արարատ չեն գալիս երբեք. նրանք բնական շրջանառությամբ բարձրանում են երկինք, մաքրվում, գտվում և բյուրեղացած իջնում Արարատ:
36. ԵՎ Արիները, որ Արարատի բնական ծիլերն են ու Երկրի արարումը սնուցողները, իրենք էլ սնվում են անմիջապես տիեզերական մաքուր ջրով, մաքուր լույսով, մաքուր հուրով և իրենք էլ, ինչպես և ամենը Արարատում, մաքուր են ու արևահամ:
37. Երկրի վրա մարդկության մշտական արարումը ապահովելու համար, Արարիչը մշտապես Երկիրը սնում է նաև իր Բացարձակ Մտքով:
38. ԵՎ Բացարձակ Միտքը Տիեզերքից իջնում է Արարատ, լուսավորում է աստվածամարդերի միտքը և մղում նրանց արարումի: ԵՎ արարումը երկրի վրա Արիներից է սկսվում:
39. Արարատում Արիները անմիջականորեն սնվում են տիեզերական բացարձակ մտքից, և Արիների արարումը ամենամաքուրն է:
40. ԵՎ Արիները իրենց արարումով սնում են երկրի մարդկությանը, լուսավորում նրա միտքը և նպաստում նրա արարումին:
41. ԵՎ մարդկության արարումը իր որակը կարող է պահպանել միայն ու միայն մշտապես սնվելով Արարատի արարումից. հակառակ դեպքում այն կճահճանա ու կնեխի:

42. ԵՎ չսնվելով Արարատի արարումից, մարդկության միտքը ճահճանում է, և նրա արարումը նեխահամ է լինում: ԵՎ այսօր բազմաթիվ անբնական «ամենագեղեցիկ» տեսությունները, գաղափարախոսությունները, կրոնները, որ ծնվում են Արարատից դուրս, Երկրի մարդկությանը չնչին անգամ չափով չեն ազնվացրել, և աղետներն ու չարիքը գնալով ահագնանում են:
43. Զէ՞ որ նեխած հողի մեջ աճած բույսը, ինչքան էլ հաճելի լինի, այնուամենայնիվ, հող է հիվանդություններով. նեխած մտքի արարումը անայայման նեխահամ ունի և այլևայլ հոգեկան հիվանդությունների հարուցիչ է:
44. Արարատից է արարումի միտքը հոսում դուրս, սնելով Երկրի արարումը: ԵՎ Արարատից արտաթորված արարումի միտքը այլևս Արարատ ետ բերել չի կարելի.. Արարատից արտաթորված միտքը արդեն անմաքուր է:
45. ԵՎ եթե փորձենք Արարատից արտաթորված արարումի միտքը ետ բերել Արարատ, մենք չարիք կգործենք, կվնասենք բնական արարումին, կփչացնենք նաև Արիների արարումը:
46. Արարատից արտաթորված միտքը ամեն դեպքում վերադառնում է Արարատ բնական շրջանառության միջոցով. այն գոլորշիանալով բարձրանում է երկինք, մաքրվում է, գտվում, քյուրեղանում և ապա նորից իջնում Արարատ, սնելու Արիներին:
47. Արարատը միայն Արիների Բնակն է. և միայն Աստվածամարդ Արիներն են Արարատում սնվում տիեզերական մաքուր մտքից և արարչական արարումով սնում մարդկությանը:
48. ԵՎ Արարատում ապրելով Չարին, միևնույն է, Արի չի դառնա. և նա երբեք արմատ չի գցի Արարատում. և Չարին Արարատում երբեք չի սնվի արարչական մտքից: ԵՎ Չարին Արարատում միայն չարիք կգործի:
49. Արարատում արարչական մտքից միայն Արին է սնվում, և այդ ամենամաքուր մտքով արարում է. ու

բազմաթիվ «գետերով» այդ արարումը հոսում է երկրով մեկ:

50. Արարատից արտագաղթող արիական խմբերն են, որ բազմաթիվ Արի ազգեր են ձևավորել:
51. ԵՎ հենց այդ Արի ազգերն են, որ զգալով իրենց Արմատը Արարատում, արյունով ու հոգով կապված են նրան, մշտապես սնվում են իրենց Արմատից և ապա սնում են մարդկությանը:

գ. ԽՈՐՀՈՒՐԴ ԱՍՏՎԱԾՆԵՐԻ

1. Աստվածները Արայից բխող Գերագույն Խորհուրդներ են՝ ԱՍ /գերագույն խորհուրդ/ - Վ - ԱԾ /պահել/ Գերագույն Խորհուրդն իր մեջ կրող:
2. ԵՎ ամեն Աստված իր մեջ կրում է բնական որևէ Գերագույն Խորհուրդ՝ Սիրո, Զորության, Իմաստության և այլն:
3. ԵՎ Աստվածները ինչ-որ վերացական, գերբնական կամ երևակայական հասկացություն չեն. նրանք բնական կենդանի Տեսակ են, որ ապրում են նույն օրինաչափությամբ, ինչ և մյուս բնական Տեսակները:
4. Արարիչը և՛ Հուր է, և՛ Օդ, և՛ Զուր, և՛ Հող: ԵՎ ամբողջ Բնությունն է արարչական այդ չորս տարրերի համակցություն:
5. Հուրն ու Օդը Արարչի հոգևոր, զգացական զորություններն են, իսկ Հողն ու Զուրը՝ նյութական: ԵՎ այդ բոլորը ամենաբազմազան հարաբերակցությամբ արտահայտվում են Բնության ամենաբազմազան Տեսակների մեջ՝ ստորինից մինչև ամենաբարձրը:
6. ԵՎ թե քարը ամենաստորին Տեսակն է, ուր բացարձակ գերազանցում է Հողի տարրը և չեն նկատվում մյուս տարրերը, ապա Աստվածները ամենաբարձր կենդանի Տեսակն են, որոնց մեջ Հուրի և Օդի տարրերն են բացարձակ գերազանցում, իսկ Հողի և Զրի տարրերը հասնում են նվազագույնի:

7. ԵՎ Աստվածների մեջ շատ բարձր է զգացական, լիցքային որակը և շատ նվազ է նյութական որակը: ԵՎ այդ գերիզուցող Աստվածներին մարդը պարզապես ի վիճակի չէ տեսնելու:
8. Աստվածները անտեսանելի են, բայց գերիզուցող են և կարող են ներգործել բնական բոլոր Տեսակների վրա, նաև՝ մարդու:
9. Բայց Արայի կամքով Բնության Տեսակների միջև խիստ ընդգծված անջրպետ գոյություն չունի, և երկու իրարից հեռու Տեսակների արանքում միշտ միջանկյալ Տեսակներ կան:
10. ԵՎ Աստվածների ու մարդկանց միջև անջրպետող շատ խոր կլիներ, եթե չլիներին Աստվածամարդիկ:
11. ԵՎ որպես Աստվածների ու մարդկանց միջև միջանկյալ Տեսակ, Արարիչը արարել է Աստվածամարդուն:
12. ԵՎ Արայից արարված Հեգ Արիի սերունդները, որ կոչվում են Հայք կամ Արմեն, որպես աստվածամարդիկ, միջանկյալ Տեսակ են Աստվածների ու մարդկանց միջև, իրենց մեջ կրելով և՛ աստվածայինը, և՛ մարդկայինը:
13. Աստվածները նույնպես բնական էակներ են և իրենց մեջ, թեկուզ նվազագույն չափով, բայց ունեն Հողի ու Ջրի տարրեր և, այնուամենայնիվ, Աստվածներն ունեն որոշակի կերպարանք և այնքան էլ անտեսանելի չեն, գոնե Արիների համար:
14. ԵՎ միայն Արիները կարող են տեսնել Աստվածներին, միայն Արիները կարող են հարաբերվել նրանց հետ, քանզի իրենք աստվածամարդիկ են, միևնույն ժազույն ունեն և որակապես շատ մոտ են Աստվածներին:
15. Իսկ հողածին Տիտանները որակապես շատ հեռու են Աստվածներից և միայն կրում են Աստվածների միակողմանի ներգործությունն իրենց վրա, առանց փոխադարձ հարաբերության: ԵՎ Տիտանները չեն ճանաչում Աստվածներին: Նրանք միայն զգում են ինչ-որ ներգործող մի Ուժ. և այդ ներգործող Ուժի համար մի կուռք են ստեղծում ու երկրպագում նրան:

16. ԵՎ Արիների հնագույն նախնիները, որ բնական էին, որ զգում էին Հայր Արային և զգում էին իրենց որպես Արորդի, տեսնում էին Աստվածներին և հարաբերվում էին նրանց հետ:
17. Ամեն մի Աստված՝ Արայի որդի, ամեն մի Աստված՝ լուսեղեն ոգի, ամեն մի Աստված՝ եթերային ուժ, ամեն մի Աստված՝ անմահ զորություն, ամեն մի Աստված՝ գերագույն խորհուրդ:
18. ԵՎ Աստվածներն են Արայի կամքը հաստատում ամբողջ Աշխարհում, հովանավորում ամեն մի շարժում, հարաբերություն, զգացողություն, կամք, միտք, ուժ:
19. Քանի՞ Աստված կա՝ մենք չգիտենք: Մենք ճանաչում ենք այնքան Աստված, որքան գերագույն խորհուրդների զգացողություն ունենք մեր մեջ. և ճանաչում ենք այն Աստվածներին, որոնք հարաբերվում են մեզ հետ, և որոնց հետ մենք ենք հարաբերվում:
20. Մենք ճանաչում ենք և՛ մեզ հովանավորող Աստվածներին, և՛ մեզ վնասող Աստվածներին:
21. Արիներին հովանավորում է Աստվածամայր Անահիտը՝ Մայրը բոլոր Աստվածների ու Արիների:
22. Արիներին հովանավորում է Հուր-Աստված Վահագնը՝ Արայի ամենագորեղ Որդին և եղբայրը մեր նախահայր Հայգ Արիի:
23. Արիներին հովանավորում է Աստղիկը՝ Աստվածուհին Գեղեցկության և Սիրո, քույրը մեր նախահայր Հայգ Արիի:
24. Արիներին հովանավորում է Արտավազդ Միհրը, որն աստվածադիր օրենքներն է հաստատում Արիների մեջ և որ եղբայրն է մեր նախահայր Հայգ Արիի:
25. Արիներին հովանավորում է իմաստության Աստված Տիրը՝ իմաստուն եղբայրը մեր նախահայր Հայգ Արիի:
26. Արիների թշնամիներն են Մռայլի Աստված Վիշապը և Ստորգետնյա Աստված Յահվահը:
27. Չար է Վիշապը և խորամանկ է Յահվահը. և Արիների դեմ գործում են համատեղ՝ խորամանկ չարությամբ:
28. Նրանք ատում են լույսն ու արարումը. ատում են արարող Արիներին և ատում են Լույսի պահապան Վահագնին:

29. Արհիների Աստվածները պահպանում են արարումը Արարատում, իսկ Չարի Աստվածները ուզում են կործանել արարումը Արարատում:
30. ԵՎ հենց երկրի վրա հաճախ Աստվածների մեծամարտ է լինում՝ Արհիների ու Չարիների աչքերի առաջ:
31. ԵՎ Աստվածները զորավոր են մեր հավատքով: Չէ՞ որ փոխադարձ հարաբերությունը կենսահուրի փոխադարձ սնում է պայմանավորում:
32. Հարաբերվելով մեր Աստվածների հետ, մենք նրանցից կենսահուր ենք սնվում և փոխադարձաբար մենք նրանց ենք սնում: Այդ ընթացքում զորանում ենք և՛ մենք, և՛ Աստվածները մեր:
33. Բայց երբ մենք չենք հարաբերվում մեր Աստվածների հետ, մենք չենք սնվում նրանցից և չենք սնում նրանց. և՛ մենք ենք տկարանում, և՛ Աստվածները:
34. ԵՎ Չարի Աստվածները զորանում են այն ժամանակ, երբ մենք մերժում ենք Լույսը և մեր հոգին ու աչքերը մռայլով ենք պատում: Մենք մեր կենսահուրով սնում ենք Չարի Աստվածներին. բայց նրանք փոխադարձաբար չեն սնում մեզ: Նրանք զորանում են մեզանով և զորացնում են Չարի Տիտաններին. և ապա մեր դեմ են զործում համատեղ զորությամբ, և մենք առավել տկարանում ենք:
35. Որքան մենք հավատանք մեր Աստվածներին և հարաբերվենք նրանց հետ, այնքան նրանք զորավոր կլինեն:
36. Որքան զորավոր լինեն մեր Աստվածները, այնքան զորավոր սնունդ կտան մեզ:
37. Որքան զորավոր սնունդ տան մեզ Աստվածները, այնքան զորավոր կլինենք մենք:
38. Որքան զորավոր լինենք մենք, այնքան առավել կզգանք մեր արարչական ծագումը:
39. Որքան առավել մենք զգանք մեզ որպես Աստվածամարդ, այնքան չենք վախենա Չարի Աստվածներից:
40. Որքան չվախենանք Չարի Աստվածներից, այնքան չենք երկրպագի նրանց ու չենք սնի նրանց:

41. ԵՎ որքան չանենք Չարի Աստվածներին, այնքան նրանք կտկարանան և չեն կարող վնասել մեզ:

Է. ԽՈՐՀՈՒՐԴ ՋՈՐՈՒԹՅԱՆ

1. Ջորությունը Հուրն է: Հուրը կրակը չէ, թեև կրակի մեջ առավել զորեղ է հուրն արտահայտվում: Հուրը էներգիան է: ԵՎ Տիեզերական Հուրի Աստվածը Վահագն է: ԵՎ Խորհուրդ է Վահագնը՝ ՎԱՀ /Աստված/ - ԱԳՆ /Հուր/ Հուր-Աստված:
2. Վահագնը Ջորությունների Գերագույն Խորհուրդն է ողջ Տիեզերքում. Հուր և Հրեղեն է նա:
3. Վահագնը՝ անհուն Տիեզերքի մեջ՝ տիեզերական ուժ. արեգների մեջ՝ հուր արեգակեզ. լուսաստղերի մեջ՝ լույսի կենսաղբյուր. ոգիների մեջ՝ ոգու վեհություն. Աստվածների մեջ՝ Ջորության Աստված:
4. Վահագնը հոգիների մեջ փայլող ոգին է. համաստեղությունների պայծառափայլ կերպարանքն է նա:
5. Վահագն է լուսեղենների բոցն աստվածային. նախահայրերի առաջին պատարագիչն է նա:
6. Վահագն է որոտումների տերը և արդարությունը հավաստող. Վահագն է փոթորիկի աստվածը և պահպանիչը. նա ահեղությունն է ամպրոպների:
7. Վահագն է համեղությունը ջրերի. նա է լուսնի ու արեգի ճառագայթումը. նա է Հուրը եթերի մեջ և բոցը վառվող խարույկների. նա է զորությունը տիեզերական և ուժգնությունը արարումի:
8. Վահագն է հայտնատեսությունը արարող Արի Ցեղի և քաջությունը հերոսների. Վահագն է զորությունը հզորների:
9. Վահագն է մշտապես կարգավորում Տիեզերական Հուրի և ամեն բնական էակի ներքին կենսահուրի համաչափությունը:

10. Մթնոլորտը Կենսական Հուրի անսպառ մի ավազան է, որից անընդհատ սնվում են երկրի բոլոր բնական էակները և զորանում:
11. Ներքին կենսահուրի գերագույն կուտակումը հնարավորություն է տալիս ամեն մի էակի լինել անխոցելի հիվանդությունների, ծերացման և նման մարմնական մաշվածության նկատմամբ:
12. Ինչպես և ամեն բնական էակի, մարդու և աստվածամարդու զորությունը կախված է նրա հոգու կենսահուրի զորությունից: Հոգու կենսահուրը, սնվելով մթնոլորտի Կենսահուրից, զորանում է, ապա սնում է նրա մարմնի բոլոր մասերը, պահպանում և զորացնում է դրանք: Մարդու և Աստվածամարդու տկարությունն ու մաշվածությունը կախված են նրա ներքին կենսահուրի տկարությունից:
13. Վահագն է մշտապես սնում մեր ներքին կենսահուրը Տիեզերական Հուրով և զորացնում մեր հոգին ու մարմինը:
14. ԵՎ ապրել զորությամբ, կնշանակե՝ հոգով միանալ Վահագնին, հավատալ Վահագնին և նրա միջոցով հավատալ նաև մեր ուժին:
15. Ապրել Վահագնով, կնշանակե՝ զգալ մեր ներքին կենսահուրը որպես Տիեզերական Կենսահուրի արտահայտություն և մշտապես սնվել Տիեզերական Կենսահուրից ու զորանալ:
16. Ապրել Վահագնով, կնշանակե՝ զգալ, հավատալ, որ Տիեզերական Հուրի մի նոր բնկումով Գարուն է հաստատվելու Տիեզերքում, որի հրե զորությունը արտահայտվելու է նաև երկրի վրա:
17. Երկնի ու Երկրի այդ ահեղ երկունքից, գարնան առաջին արևով ծնվելու է Վահագնը հենց Արարատում. ծնվելու է Վիշապին սպանելու և երկրի վրայից Վիշապի պղծությունը լվալու Մեծ Ջրհեղեղով:
18. Վահագնը ծնվելու է պահպանելու իր Արի աստվածամարդերի Ցեղը և նորից հաստատելու արարումը երկրի վրա:

19. ԵՎ Վահագնի ծնունդով սկսվելու է երկրային կյանքի մի նոր պարբերություն, նոր պատմություն, իսկ Արարատում՝ նոր տարեգրություն:
20. Երկնի ու Երկրի ահեղ երկունքից Հուրն Աստվածային հենց Արարատում եղեգան փողից բոց է հանելու:
21. ԵՎ այդ Հրե կրակով Արարատի կենաց զորության արշալույսն է սկսվելու. Վահագն է ծնվելու Աստվածային Հրե կրակից՝ Ջորության Աստված:
22. Գարնան Արեգով է ծնվելու Վահագնը: Գարնան Արեգը սերն է Վահագնի՝ հավատ է բուրում զորավորների հոգիների մեջ. գարնան Արեգը աչքն է Վահագնի, որ ամեն խավար, մթություն ձեղքում և լույս է սփռում աշխարհի վրա. գարնան Արեգը՝ Խաչ-Պատերազմին Վահագնի բազկին՝ շանթեր է արձակում Վիշապի վրա. գարնան Արեգը՝ բանբերը Վահագնի՝ ավետում է մոտալուտ գալուստը Տիեզերական Գարնան և Հրե Ջորության առկայծումը երկրի վրա:
23. Մայր Արարատը՝ Արեգին գրկած, Վահագն է կանչում. Արագածը վեհ՝ Արեգին փարված, Վահագնին սպասում. Մասիսը հպարտ՝ երկինք խոյացած, Վահագնին տենչում. և՛ հավք, և՛ գազան, և՛ քար, և՛ առու, և՛ ծառ, և՛ ծաղիկ Վահագն են կանչում. Վահագն են կանչում բոլորը մեկտեղ, հավատքով սպասում մի նոր երկունքի, մի նոր ծնունդի Հրե Վահագնի:
24. Իսկ շատ Արիներ՝ երանելի թուլության հաշիշով օժված, չեն դիմանում Հուրի զորությանն ու Արեգի լույսին: Ջորության Հուրն ու Արեգի լույսը շատ են զորավոր նրանց տկարացած մարմինների ու հոգիների համար: ԵՎ նրանք գերադասում են խավարը լույսից, ցուրտը՝ հուրից, մեղկ տկարությունը՝ վեհ զորությունից: ԵՎ աղերսում են Չարի Աստծուն՝ ամպերով ծածկել Արեգը գարնան:
25. ԵՎ միայն նրանք, ովքեր իրենց Արի են զգում. միայն նրանք, ովքեր իրենց Աստվածամարդ են զգում. միայն նրանք, ովքեր իրենց Արարչի որդիներ են զգում. միայն նրանք, ովքեր զգում են իրենց արմատը Մայր Արարատում. միայն նրանք, ովքեր նայում են Արեգին և զգում են Վահագնին. միայն նրանք, ովքեր ապրում են

Վահագնով և մշտապես նորոգում են իրենց ներքին կենսահուրը՝ միայն նրանք են տենչում Տիեզերական Գարնան մոտալուտ գալուստը:

26. ԵՎ իրենց արիությունը զգացող ու Վահագնով զորացած Արիները միայն կփառաբանեն Հայր Արային, Մայր Անահիտին, Անմահ Աստվածներին և նրանց օրհնությամբ օծված ահեղ երկունքի այն կրակը, որի մեջ Տիեզերական Հուրը կա:
27. Փայտեր կոփզեն, խարույկներ կվառեն այդ աստվածային կրակով՝ Տրնդեզ կսարքեն՝ ԱՏՐ /կրակ/ - ԴԵՁ՝ Կրակի դեզ՝ Խարույկ: Պար կբռնեն Տրնդեզի շուրջ, ձոներգեր կհյուսեն Հայր Արային, Մայր Անահիտին և ծնվող Վահագնին:
28. Իսկ ջահել հարսները, որ մայրացումի կարոտը ունեն, կթռչեն այդ աստվածային Տրնդեզի վրայով՝ օծելու իրենց արգանդը, որ իրենք էլ ծնեն Վահագնանման Արի գավակներ:
29. Տրնդեզի այդ աստվածային կրակը կտանեն իրենց տները. դրանով կօծեն իրենց օջախները, վառարանները, որ իրենց տներում այդ աստվածային կրակի ջերմությունը տարածվի:
30. ԵՎ Տրնդեզի աստվածային Հուրը կբոցկլտա նրանց աչքերի մեջ, և նրանք կօծվեն աստվածային հուրով ու կվերականգնեն իրենց մեջ իրենց աստվածային զորությունը:
31. ԵՎ կբոցավառվեն նրանց սրտերը այդ հուրով ու սպասումով, քանզի այդ երկունքի քառասուներորդ օրը, գարնան առաջին Արեգով ծնվելու է Վահագնը:
32. ԵՎ միայն իրենց աստվածայնությունը զգացող Արիները կհետևեն երկունքին . կդիմավորեն Տիեզերական Հուրի զորավոր բռնկումը երկրի վրա, և նրանք միայն ընդառաջ կգնան Վահագնին:
33. ԵՎ Տրնդեզի այդ բոցով ու Վահագնի սպասումով, նրանք Արագածից պեղված հազար ու մի գանձերով կկռեն իրենց զորության թուր-կեծակին:

34. Քառասուն օր երկունքն է տևելու. և քառասուներորդ օրը, գարնան առաջին Արեգով, և իրենց զորությունը զգացող Արիների կանչով Վահագն է գալու:
35. Վահագն է գալու՝ աստղերից հյուսած թագը իր գլխին, հրե թիկնոցը իր հաղթ ուսերին, ձախ բազկի վրա Խաչ-Պատերազմին՝ ձուլված Արեգից, աջ ձեռքին բռնած հազար ու հազար արեգով կռած իր Թուր- Կեծակին:
36. Հայր Արայի կամքով Վահագնը սնելու է Արիներին իր զորությամբ և անպարտելիությամբ. օծելու է Արիների թուր-կեծակին՝ Չարիների դեմ պատերազմելու համար:
37. Չարիների դեմ Արիները պիտի կռվեն. Վահագնը կռվելու է միայն Վիշապի դեմ, քանզի Աստված միայն Աստծո դեմ է կռվում՝ լինի երկնքում, թե երկրի վրա:
38. ԵՎ նրանք, ովքեր կապրեն Վահագնով, կսպասեն Վահագնին, կգորանան իրենց աստվածայնությամբ:
39. Վահագնը իր աստվածային Հուրով ու զորությամբ կսնի նրանց. և զորավոր հրավառություն կբռնկվի նրանց մեջ՝ հրավառություն կյանքի, հավատի, սիրո, զորության:
40. ԵՎ միայն իրենց աստվածայնությունը զգացող զորավորները ընդառաջ կգնան Վահագնին. և միայն նրանց կհովանավորի Վահագնը. և միայն նրանք կդիմանան Տիեզերական Հուրի զորավոր բռնկումին երկրի վրա և նրանք այնուհետև կվերապրեն Ջրհեղեղը:
41. ԵՎ ինչպես հազարավոր տարիներ առաջ Արի Մանը իր զորավորների թափորով բարձրացավ Մասիս սար՝ վերապրելու Համաշխարհային Ջրհեղեղը, այնպես էլ հիմա միայն իրենց աստվածային զորությամբ օծված Արիները կկարողանան բարձրանալ Մասիս սար, քանզի Մասիսը աստվածների կացարան է, և այնտեղ կարող են բարձրանալ միայն աստվածները:
42. Իսկ նրանք, որ չեն ապրի Վահագնով, չեն սպասի Վահագնին, կմնան իրենց երանելի տկարության մեջ ու երբեք չեն զորանա: ԵՎ իրենց տկարությամբ նրանք չեն կարող դիմավորել Վահագնին, չեն կարող դիմանալ Տիեզերական Հուրի զորությանը, չեն կարող բարձրանալ Մասիս սար և չեն կարող վերապրել Ջրհեղեղը:

43. Վահագնը չի հովանավորի տկարներին. և տկարները կկործանվեն, քանզի Արայի կամքով Վահագնը պահպանելու է երկրային աստվածների Ցեղը, իսկ տկարներից աստվածներ չեն ծնվի. և ո՛չ նրանց կյանքն է պետք Արային, ո՛չ էլ նրանց մահը:

Ղ. ԽՈՐՀՈՒՐԴ ՍԻՐՈ

1. ԵՎ Աստղիկն է Սիրո Գերագույն Խորհուրդ՝ ԱՍՏ /Գերագույն Խորհուրդ/ ԱՂ /սեր, հաճելի/ ԱՍՏ-ԱԸ/Դ-ԻԿ:
2. Արարչից է գալիս Սերը: Արարիչը, անվերջ արարչագործությամբ իր բոլոր Տեսակների մեջ, իր ամբողջությունն է հաստատում:
3. Արարչագործության նախահիմքն է Սերը. սերունի կենսաղբյուրն է Սերը:
4. Արարիչը իր բոլոր բնական Տեսակներով է ամբողջանում, և իր Տեսակներին նա որոնում է անվերջ. Նա իր բոլոր Տեսակների մեջ իր արյունն է զգում, իր ոգին է զգում, իր որակներն է զգում: Նա սիրում է բոլորին, պահպանում է բոլորին, նորոգում է բոլորին, զորացնում է բոլորին և այդ բոլորով իր հավերժությունն է հաստատում:
5. Ամենը Բնության մեջ Արարչի Ամբողջության մասեր են և իրանցով ամբողջացնում են Արարչին: ԵՎ իր Արարչագործությամբ Արարիչը մշտապես իր Սերն է նորոգում իր բոլոր բնական մասերի մեջ:
6. ԵՎ Արարչական Սերը արտահայտվում է բոլոր բնական Տեսակների մեջ. ծառերը սիրով են ծաղկում, ծաղիկը սիրով է բացվում, արեգը սիրով է ծագում, թիթեռը սիրով է ճախրում, սիրով են սիրում Արիները:
7. Արարչական շնորհ է սերը. կյանքի ճառագումն է սերը. սերունի կենսաղբյուրն է սերը. թե սեր չլիներ՝ կյանք չէր լինի, մարդ չէր լինի, մարդը չէր սիրի, չէր արարի, չէր խնայի, չէր ափսոսի, և աշխարհն արար սպանիչ ավերումով կկործաներ իրեն, և աշխարհ չէր լինի:

8. Հաստատելով սերը իմ մեջ, Հայր Արամ իմ ԵՍ-ը բաժանել է բազմաթիվ Ես-երի: ԵՎ այդ բոլորը Ես եմ, իմ ամբողջության մասերն են տարբեր անհատների մեջ: ԵՎ այդ բոլորը իմն են, ես նրանց մեջ եմ ապրում ու նրանցով եմ ապրում:
9. Հայր Արայի կամքով ես մշտապես որոնում եմ իմ ԵՍ-ի ամբողջությունը և որոնում եմ տարբեր անհատների մեջ:
10. Ես կամ իմ եղբոր մեջ, իմ զավակի մեջ, իմ հարևանի մեջ, ընկերոջ մեջ, իմ բնաշխարհի մեջ՝ ծառ ու ծաղկի, հող ու արեգի մեջ: Այդ բոլորը իմ ամբողջության մասերն են: ԵՎ ամբողջանալով միայն ես կհասնեմ կատարելության, կհասնեմ աստվածայնության և կհաստատեմ իմ բացարձակությունը:
11. Սերը՝ դա Ես-ի ամբողջության որոնումն է. դա սերն է դեպի ինքն իրեն՝ իր ամբողջության մեջ: Ես ինքս ինձ տեսնում եմ բոլորի մեջ, որ իմն են, որ ինքս եմ: ԵՎ ես նվիրվում եմ նրանց, պահպանում եմ նրանց, կարոտում եմ նրանց, զորացնում եմ նրանց:
12. Սերը արյան կանչ է, որով ես զգում եմ իմ արյունը հարազատիս մեջ:
13. Ո՞վ, Արի Հայ, մի՞թե դու ինձ չես ճանաչում. ես դու եմ, իմ մեջ քո արյունը կա, քո մեջ էլ՝ իմ. ես քո ամբողջության մասն եմ, դու՝ իմ: Եթե դու իմ ամբողջության մասը չես, ապա ինչո՞ւ է իմ արյունը քո մեջ:
14. Թե ես սիրում եմ իմ արյունը, դու էլ սիրում ես քո արյունը, ուրեմն մենք սիրում ենք նույն արյունը, որ կա իմ և քո մեջ. ես իմ մեջ սիրում եմ քո արյունը, դու քո մեջ սիրում ես իմ արյունը. էլ ինչպե՞ս կարող ենք մենք չսիրել իրար:
15. Սերը արյան և ոգու միասնություն է՝ պատկանելության զգացողություն. սիրել, կնշանակե՞ զգացմունքներով կապվել հարազատ ամբողջությանը:
16. Սիրել, կնշանակե՞ զգացմունքներով շոշափել հարազատի շունչը, նրա ոգին, նրա կյանքը և այդ բոլորի մեջ զգալ իրեն:

17. Սիրելի, կնշանակե՞ զգացմունքներով շոշափել իր Տեսակի էությունը, նրա արյունը, նրա ոգին և դրանց մեջ զգալ իրեն:
18. Սիրելի, կնշանակե՞ զգալ իր մեջ Արայի արյունը և զգալ իրեն միաձուլված այն ամենին, ինչ Արայից է գալիս՝ Բնությանը, հայրենի հողին, արեգին, ջրին, քարին, ծառ ու ծաղկին, իր նախնիներին ու գալիք սերունդներին և զգալ իրեն նրանց մեջ ու նրանց միջոցով, իր գոյությունը նրանց մեջ տեսնել, իր գորությունը նրանց մեջ ունենալ:
19. Իր ամբողջության զգացողությունն է Արիի սերը, և սերն է երջանկության աղբյուրը: Իր ամբողջությունը չզգացող Արին անկատար է ու անլիարժեք. նա չի կարող սեր ունենալ և չի կարող երջանիկ լինել:
20. Սերն է Արի քաջերին մղում խիզախումների. սերն է անձնագոհության կոչում. սերն է պահպանում Հայրենիքը. սերն է խնամում երեխային. սերն է գուրգուրում ծնողին և սերն է մղում դեպի իրար Արիների սրտերն ու հոգիները:
21. ԵՎ Տեսակը այնքան զորավոր է ու ամբողջական, որքան նրա մեջ ուժեղ է Սերը որպես Արարչական շնորհ:
22. Սեր և Ջորություն՝ հենց շնորհն Արայի, Սեր և Ջորություն՝ Գարունն Աշխարհի, խորհուրդը բարու և արարումի. Սեր և Ջորություն՝ ուժ լինելության՝ իրար լրացնող և իրար կերտող. իրարից անկախ լինել չեն կարող:
23. Սերն առանց Ջորության կործանվող է. Ջորությունն առանց Սիրո կործանող է. Սիրո և Ջորության միասնությունն է լոկ խորհուրդը կյանքի:
24. ԵՎ թե Վահագն է Ջորության Աստված, ապա Աստղիկն է Սերը Ջորության. Վահագնի Ջորության Ուժը Սերն է Աստղիկի:
25. Ջորության Հուրը Սիրով է վառվում: ԵՎ թե մեռնի Աստղիկի Սերը Արիների մեջ, նրանց մեջ կմարի Հուրը Վահագնի. Արիները չեն զգա Վահագնին, չեն կանչի նրան, և Վահագնը անգոր կլինի պաշտպանել Արիներին:
26. ԵՎ թե Արիները ուրանան Աստղիկին, կյանքի սիրո փոխարեն Արիների մեջ կհաստատվի ատելության սերը, մահվան սերը, անհանդուրժողականության սերը.

կվերանա ժայտը, կվերանա երգն ու պարը, կինը կդավի ամուսնուն, ծնողը կլքի զավակին, եղբայր իր եղբոր դեմ սուր կպարզի ու կխրի նրա կուրծքը:

27. Երբ Սերը վերանա Արիների մեջ, Արիներն այլևս չեն սիրի, չեն որոնի, չեն ամբողջանա, իրենց անկատարությամբ կատեն հենց իրենց, իրենց արիությունը կհալածեն իրենց մեջ ու կտկարանան. և Չարի Վիշապը կտիրի նրանց:
28. Արարչական Սիրո արտահայտություն է մեր սերը. ԵՎ Արարիչն է մշտապես սնում ու նորոգում մեր սերը մեջ:
29. ԵՎ Վարդավառն է Արարչական Սիրո Նորոգումը մեր մեջ՝ Վ /գերագույն/ - ԱՐԴ /սիրո խորհուրդ/ - ՎԱՌ /վառվել, օծվել/ Գերագույն Սիրո խորհրդով օծվել:
30. ԵՎ Աստղիկն է Վարդամատն՝ Վարդ /գերագույն Սիրո խորհուրդ/ -Մատն /պահել, պահպանել/ Գերագույն Սիրո խորհուրդը Պահպանող:
31. ԵՎ Աստղիկն է Արարչական՝ Գերագույն, Սիրո խորհուրդը. Աշխարհի բոլոր գեղեցիկներով է կերտված Աստղիկը՝ արեգից մի շող, լուսնյակից՝ թախիծ, աստղերից՝ ժայտ, մաքրություն՝ երկնից, հուզմունքը՝ երկրից, նազանքը՝ հովից, հառաչը՝ հողմից, կարկաչը՝ առվից, անձրևից՝ արցունք, դաշտերից՝ հեզանք, լեռնից՝ հպարտանք:
32. Աստղիկը՝ Սերն է կյանքի՝ գերագույն հմայք ու քնքշություն. Դիցուհին մաքուր, աստվածային Սիրո Թագուհին:
33. ԵՎ Աստղիկն է Աստվածային Սերը Արյաց. և Վարդավառն է աստվածային Սիրո տոնահանդեսը: Աստղիկն է Վարդավառ սարքում՝ վարդեր է ցանում Արյաց սրտերին, վառում է նրանց սիրո արևով, վարդջուր սրսկում աչքերին նրանց, սեր է ներշնչում, սեր է արարում Արյաց սրտերում:
34. ԵՎ Վարդավառով Աստղիկը օծում է Սերն Արիների, Արարչական Սիրո ջերմությամբ բոցավառում է զգացմունքը նրանց, որ սիրով ապրեն, որ սիրով երկնեն, որ սիրով ծնեն և նույն այդ սիրով գուրգուրեն իրար.

մանուկը սիրով իր մորը գգվի. իր հոր արևին փարվի նա սիրով. եղբայրն իր եղբոր աչքերին նայի հավատի սիրով, աղջիկները կույս գտնեն իրենց սրտի Վահագնին ու երջանկանան հարսնության քողով:

35. ԵՎ Արիները Վարդավառով օծվում են Արարչական Սիրո ջերմությամբ. իրար են նայում, իրար են ժպտում, իրար հետ խաղում, իրար հետ պարում, սուրբ վարդաջրով իրար են ջրում, իրար են բաշխում սերն իրենց հոգու, իրար են սնում, իրար են գտնում և նորոգվում են Աստղիկի Սիրով:
36. ԵՎ Աստղիկն է Սերը Ջորության, Սերը Գարունքի՝ Սեր է ճառագում՝ Սիրո ջերմություն և այդ ջերմությամբ հույզեր է վառում, արցունքներ քամում, թախիծ արարում, հոգևոր խռովք ու տառապալից երջանկություն պարգևում սիրող պատանուն, եթե նույնիսկ այդ պատանին Վահագնը լինի:
37. ԵՎ Վահագնը ինքը՝ թեև Հրեղեն, թեև ինքն Աստված, ինքը՝ գերիզոր , Աստղիկի Սիրուց ինչպե՞ս պաշտպանվի՝ նա էլ է ընկնում սիրո որոգայթ:
38. ԵՎ մանկան նման շիկնում է, վառվում. սիրուց խենթացած իրար է խառնում երկինք ու երկիր. սիրտը սիրավառ՝ վարդի պես բացվում՝ մեղմ ու քնքշալի և պարուրում է Արարատը ողջ՝ և՛ ծառ, և՛ ծաղիկ, և՛ մայր, և՛ մանուկ, և՛ հարսներ չքնաղ, և՛ կույս Աստղիկին:
39. ԵՎ Սիրով օծված հույզը Ջորության հորդում է Վահագնի հրե աչքերից, և Վիշապի դեմ մարտի է ելնում հանուն ժպտի, հանուն կարոտի, հանուն հարսնության և մայրացումի, հանուն սրբության և արարումի:
40. Առանց սիրո էլ ի՞նչ պատանի. էլ ի՞նչ գեղեցիկ ու գեղեցկություն, կյանքի ի՞նչ գարուն: Թե սեր չլինի, Աստղիկ չլինի, թե չհավատա պատանին նրան և թե չաղոթի իր սիրո համար Աստղիկ Դիցուհուն՝ էլ ի՞նչ պատանի:
41. Աստվածային գեղեցկություն է պատանեկան սերը, եթերային ուժ է կրքի ավերիչ ազդեցության դեմ:
42. Գեղեցիկը գեղեցկության հույզեր է ծնում, գեղեցկությունը՝ սեր: ԵՎ գեղեցիկը՝ ինքը բնական, ինքն՝

ամբողջական, ինքն Արարչական Սիրո արարում և նրա պատկերը Աստղիկի տեսքով:

43. ԵՎ Աստղիկը՝ Եթերային քույրը Արի աղջիկների, նման է նրանց, և աղջիկներն էլ նման են Աստղիկին:
44. Ամեն մի աղջիկ՝ գեղեցիկ Աստղիկ, ամեն մի աղջիկ պատկերը ունի Աստղիկ Դիցուհու, նազանքն Աստղիկի ունի նա իր մեջ, Աստղիկի սիրո անուրջը ունի և Վահագնին գերելու կրակը ունի:
45. Ամեն պատանի սիրած կույսի մեջ Աստղիկ է տեսնում և սիրում նրան: Աղջիկն իր սիրած պատանյակի մեջ Վահագն է տեսնում և սիրում նրան:
46. ԵՎ Աստղիկը չքնաղ՝ Սիրո Դիցուհին, որ սեր է վառել մատաղ սրտերում, սիրում է նրանց սերը լուսավայլ՝ լույսի պես անկիրք, մաքուր ու ազնիվ, և օգնում նրանց գտնելու իրար:
47. Եթերային սերը պատանեկան մենաշնորհն է, պատանեկության գարունն է: Բայց գարնան պես կանցնի այդ եթերային սերը, եթե այն չվերաճի պտղաբերումի սիրո:
48. Պտղաբերումի սերը արտահայտվում է ընտանիքում սերնդատվության մեջ և փոխանցվում է զավակների միջոցով. դա է սիրո հավերժումը:

թ. ԽՈՐՀՈՒՐԴ ՀԱՎԱՏՔԻ

1. Կենաց Խորհուրդ է Հավատքը: Հավատ՝ Հ /հաստատուն, բացարձակ/ -ԱՎ /հոգի, կյանք/ - ԱՏ /տեղ, տեղադրում/ Հաստատուն հոգևոր ընկալում: Հավատք՝ բազմախորհուրդ հոգևոր ընկալումների համակարգ՝ Հոգևոր Բացարձակ Խորհուրդ:
2. ԵՎ Հավատքը խիստ տարբեր է Կրոնից: Հավատքը՝ ներքին զգացողությամբ բնական օրինաչափությունների համակարգի վերապրված Խորհուրդ է, իսկ Կրոնը՝ արտաքին ներգործության կրումն է անհատի մեջ:

3. Հավատքը՝ դա տեսակային ԵՍ-ի զգացողությունն է Արարչի և Աստվածների մեջ, Բնության մեջ, նախնիների մեջ, անցյալի ու ապագայի մեջ, ծագումի ու արյունի մեջ, շարունակելիության մեջ:
4. Արարիչը արտահայտվում է մեր մեջ, մեր ծագումի մեջ, մեր արյան մեջ, մեր հարազատ բնաշխարհի մեջ, Մայր Հողի մեջ, արևի մեջ, քար ու ջրի մեջ, մեր նախնիների և գալոց սերունդների մեջ: ԵՎ այդ բոլորով ենք մենք ամբողջանում և այդ բոլորով միայն մենք կարող ենք զգալ Արարչին:
5. ԵՎ հավատքը դեպի Աստվածությունը բխում է սեփական բնության զգացողությունից, թե որքանով ենք մենք մեզ զգում որպես բնական և որքանով ենք մեր մեջ զգում Արայի էությունը:
6. Հավատքը իրական զգացողություն է իրական մարդու, հողի, արևի, ջրի, նախնիների... քանզի այդ բոլորի մեջ և այդ բոլորի միջոցով մենք կարող ենք զգալ Արարչին և միանալ նրան:
7. ԵՎ սրբագործելով հողը, մենք մեզ ենք սրբագործում. սրբագործելով ջուրը, արեգը, երկինքը, մենք մեզ ենք սրբագործում. սրբագործելով մեր նմաններին, մենք դարձյալ մեզ ենք սրբագործում, քանզի մենք էլ այս սրբագործված ընդհանրության մեջ սրբագործվում ենք, աստվածանում:
8. ԵՎ Հավատքը բնորոշվում է ոչ թե այս կամ այն Աստծո կերպարով, ոչ թե այս կամ այն ծիսակարգով, ոչ թե այս կամ այն տոնահանդեսով՝ դրանք բոլորը դրսևորումներ են միայն. Հավատքը Կենաց Խորհուրդ է, Տեսակի կենսաձև է և բնորոշվում է ծագումի զգացողությամբ, Տեսակի որակական ամբողջության զգացողությամբ, Տեսակի որակական հատկությունների զգացողությամբ և Տեսակի որակական հարաբերությունների զգացողությամբ՝ բոլոր բնական Տեսակների հետ, նաև՝ Աստվածների:
9. ԵՎ Հավատքը անպայման Տեսակային է՝ Ցեղային. Հավատքի հիմքում ընկած է Տեսակի՝ Ցեղի ծագումնաբանությունը. և ծագումնաբանական

ըմբռնումներն են փաստորեն կողմնորոշում տարբեր Ցեղահավատքների որակական տարբերությունները և նրանց անունները:

10. Բնության արարչական չորս տարրերի՝ Հուր, Օդ, Ջուր, Հող տարբեր հարաբերակցությամբ որակապես իրարից տարբերվում են մարդկային բոլոր Տեսակները: ԵՎ ամեն Տեսակ իր բնական դերն ունի, իր բնական որակներն ունի, իր հոգեբանությունն ունի, իր կենսածնն ունի:
11. ԵՎ ամեն բնական Տեսակ իր Ցեղահավատքն ունի, որն արտահայտություն է Տեսակների տարբերիչ ծագումնաբանական օրինաչափությունների ըմբռնման: ԵՎ միևնույն բնական օրինաչափությունները տարբեր Ցեղահավատքային համակարգերում արտահայտվում են տարբեր ծագումնաբանական հիմքերով:
12. Արարչածին է Արին և Հողածին է Տիտանը. Հուր է Արին և հուր է դառնում, Հող է Տիտանը և հող է դառնում: ԵՎ Արիական Հավատքի Խորհուրդը հենց իր անվան մեջ է՝ Արորդի կամ Արևորդի, որ նշանակում է Արարչի որդի՝ Արարչածին:
13. ԵՎ ծագումի զգացողություն է Հավատքը. ուր այդ զգացողությունը չկա՝ չկա և Հավատք:
14. Իմ Արարիչը նա է, ով ինձ կյանք է տվել, ում բնական ժառանգն եմ ես և ում արյունն եմ կրում իմ մեջ: Դա իմ հայրն է, իմ պապը, իմ ապուպապը, նրա պապը և այդպես մինչև Հայր Արան՝ Արարիչը իմ բոլոր նախահայրերի և իմ:
15. Արան է հենց Արարատում արարել իր երկրային որդուն՝ Հեգ Արիին, որպես երկրային աստված: ԵՎ Արին հենց Արայից է ժառանգել իր արյունը, իր դիմագիծը, իր բնական որակները, իր արարող զորությունը, որոնք այսօր ժառանգաբար արտահայտվում են իմ մեջ:
16. ԵՎ Արան իմ Բացարձակ Նախահայրն է, և նրա արյունը ես ժառանգել եմ իմ բոլոր հաջորդական նախահայրերի և իմ հոր միջոցով:
17. ԵՎ եթե ես չեմ զգում իմ հորը, չեմ զգում իմ պապին, իմ նախահայրերին, ինչպե՞ս կարող եմ զգալ Արային. Չէ՞ որ Արան էլ է Նախահայր:

18. Հավատքը իրականություն է՝ իրական ծագումի զգացողություն և իրական հարաբերությունների համակարգ է դա:
19. Մենք հավատում ենք ծայնին, որովհետև լսում ենք. մենք հավատում ենք լույսին, որովհետև տեսնում ենք. մենք հավատում ենք հողին, որովհետև շոշափում ենք. մենք հավատում ենք Արային, որովհետև զգում ենք նրան:
20. ԵՎ ինչպե՞ս կարելի է հավատալ մեկին կամ մի բանի, եթե չենք լսում, չենք տեսնում, չենք շոշափում, չենք զգում և նույնիսկ չգիտենք, թե ինչ է կամ ով է:
21. Արարչածին Արիները հարաբերվում են Արայի հետ, քանզի զգում են նրան որպես իրենց Բացարձակ Նախահայր և զգում են նրա արյունը իրենց երակներում:
22. Հողածին Տիտանները արյունակցական կապ չունեն Արայի հետ, չեն զգում նրան ու չեն հարաբերվում նրա հետ. նրանք միայն իրենց վրա կրում են Արայի ազդեցությունը, առանց ճանաչելու նրա էությունը:
23. Արարիչը մեկն է, իսկ Աստվածները՝ շատ: Աստվածները բնական կենդանի Տեսակ են, ուստի և բազում են, ինչպես մարդիկ, ինչպես կենդանիք...
24. Քանի՞ Աստված կա Աշխարհում. մենք չգիտենք ու երբեք չենք իմանա: Սարդկային ամեն մի Տեսակ զգում է այնքան Աստված, որքան բնական գերագույն խորհուրդների զգացողություն ունի իր մեջ և ճանաչում է այն Աստվածներին, որոնց հետ հարաբերվում է:
25. Աստվածամարդ Արիները, որ միջանկյալ Տեսակ են Աստվածների ու մարդկանց արանքում, շատ ավելի մեծ հնարավորություն ունեն ճանաչելու և հարաբերվելու Աստվածների հետ:
26. Հողածին Տիտանները ծագումով Աստվածներից շատ հեռու են և միայն կրում են Աստվածների ներգործությունը իրենց վրա, առանց փոխադարձ հարաբերության:
27. Նույն օրինաչափությունը գոյություն ունի նաև մարդ - կենդանի հարաբերության մեջ: Որակապես մարդուն առավել մոտ կենդանական Տեսակները իրենք էլ հարաբերվում են մարդու հետ, ուստի և ճանաչում են մարդուն: Իսկ որակապես առավել հեռու Տեսակները

միայն կրում են իրենց վրա մարդու ներգործությունը, առանց փոխադարձ հարաբերության և չեն ճանաչում մարդուն:

28. Աստվածամարդ Արիները ճանաչում են բազմաթիվ Աստվածներ և նրանց առանձնացնում են Արարչից: Իսկ Հողածին Տիտանները չեն ճանաչում Աստվածներին և նույնացնում են Արարիչ - Աստված հասկացությունները:
29. Հողածին են Տիտանները. նրանք զգում են իրենց ծագումը, և նրանց Ցեղահավատքը որպես կենսաձև կապված է Հողի տարրի հետ:
30. ԵՎ Հողածին Տիտանները ճանաչում են միայն ստորգետնյա Աստված Յահվահին ու հարաբերվում են նրա հետ:
31. Հողածին Տիտանների զգացողության մեջ բոլոր բնական զորությունները ամփոփված են Յահվահի մեջ:
32. ԵՎ հարաբերվելով Յահվահի հետ, Տիտանները սնուն են իրենց ներքին Հողի տարրը, ապրում են բնական կյանքով ու զորանում են:
33. Արարչածին Արիները, որ ապրում են ո՛չ իրենց, այլ՝ Հողածին Տիտանների Ցեղահավատքով, մերժում են իրենց ծագումը, մերժում են իրենց բնական կենսաձևը և ապրում են Հողածին Տիտանների կենսաձևով, որ չի համապատասխանում նրանց և տկարանում են:
34. ԵՎ օտար Ցեղահավատքը Արիների մեջ մտնում է որպես Կրոն, ուր Արիները չեն հարաբերվում Արայի ու Աստվածների հետ, չեն կարող հարաբերվել նաև Տիտանների Աստված Յահվահի հետ և միայն իրենց վրա կրում են իրենցից դուրս անհասկանալի Ուժի ազդեցությունը:
35. Կրոնը ստեղծում է սարսափազդու մի Կուռք՝ Աստծո պատրանք, որին Արիները ջերմեռանդ երկրպագում են՝ նրա գույքը շարժելու և հովանավորությունը ստանալու հույսով:
36. ԵՎ միայն հիվանդ ու անտոհմիկ Արիների ապավենն է Կրոնը: Կրոնը նրանց համար է, ով ծագում չունի, ով հոգի չունի, ում միտքն է տկար և ինքն է անկատար:

37. Ցեղահավատքը կատարյալ Արիների համար է, ով զգում է իր ծագումը, ով իր զորությունն է զգում, ով միտք ունի և հոգի ունի:
38. Կրոնը սարսափի պատրանք է, իսկ Հավատքը՝ Կենաց խորհուրդ:

Ժ. ԽՈՐՀՈՒՐԴ ՈԳՈՒ

1. Կյանքի, Մահի, Հոգու, Ոգու մասին խոսելն անիմաստ է առանց իմանալու դրանց խորհուրդները, քանզի այդ խորհուրդները խստորեն կապված են իրար հետ և պայմանավորված են իրարով:
2. Չիմանալով դրանց խորհուրդները, անորոշ, վերացական դատողություններ ենք անում դրանց մասին, ինչ-որ իմաստներ ենք հորինում և անհեթեթ, անբնական պատկերացումներ ենք կազմում Կյանքի, Մահի, Հոգու, Ոգու մասին:
3. Ոչ մի գիտություն, ոչ մի գաղափարախոսություն կամ կրոն ի վիճակի չէ բացահայտելու այդ խորհուրդների էությունն ու դրանց փոխկապակցվածությունը: Միայն ու միայն Աստվածաշունչ Հայոց Լեզուն է իր մեջ արտահայտում այդ խորհուրդների էությունը: Միայն Աստվածաշունչ Հայոց Լեզվի մեջ կարող ենք ճանաչել այդ խորհուրդներն ու դրանց փոխկապակցվածությունը:
4. **Կյանք (Պյանք)** խորհուրդը կազմված է **Պ** (արտահայտություն) հունչարմատով, **Ան** (ծնունդ) բառարմատով և **Ք** - հոգնակիակերտ մասնիկով և նշանակում է **Ծնունդի արտահայտություն:** Հոգնակիակերտ **Ք** - մասնիկը ցույց է տալիս, որ Կյանքը հոգնակի է, ուստի և հաստատում է, որ մարդու Կյանքը բազմաթիվ է: Այսինքն՝ մարդ բազմաթիվ անգամ է ապրում որպես ծնունդի արտահայտություն, բազմաթիվ անգամ է ծնվում: Կյանքի եզակին **Պէնն** է՝ **Պ** - էն (ան):

5. **ՄԱՀ** խորհուրդը կազմված է **Մ** (ամփոփում) հունչարմատով և **ԱՀ** (գորություն) բառարմատով և նշանակում է **Ամփոփված գորություն**: Իսկ դա արդեն հաստատում է, որ Մահը ոչնչացում չէ, վերացում չէ: Մահը գորության որոշակի ամփոփում է: Հենց այդ ամփոփված գորությունն է, որ բազմաթիվ ծնունդների միջոցով բազմաթիվ անգամ մտնում է Կյանքի մեջ որպես ծնունդի արտահայտություն:
6. Այդ ի՞նչն է իր գորությամբ ամփոփվում Մահի մեջ և ի՞նչն է, որ որպես ծնունդի արտահայտություն հաստատվում է Կյանքի մեջ: Այդ ինչը իմանալու համար պետք է ճանաչենք Ոգի և Հոգի խորհուրդները:
7. **Ոգի (Վ - ՕԳ/ԱԳ/ - Ի)** խորհուրդը կազմված է **Վ** (բացարձակ) հունչարմատով և **ԱԳ** (հուր) բառարմատով և նշանակում է **Բացարձակ (տեսակային կամ անհատական) հուրի ամբողջություն**:
8. **Հոգի** խորհուրդը կազմված է **Հ** (հաստատում) հունչարմատով և **ԱԳ** (հուր) բառարմատով և նշանակում է **տեսակային կամ անհատական հուրի հաստատված ամբողջություն**, այսինքն՝ **նյութականացված հուր**:
9. Այսպիսով՝ և Ոգու, և Հոգու մեջ առկա է հուրը: Պարզապես Ոգու մեջ աննյութ հուրն է, իսկ Հոգու մեջ՝ նյութականացված հուրը: ԵՎ Ոգին համապատասխանում է Մահին, իսկ Հոգին՝ Կյանքին:
10. Ոգին վերացական ինչ-որ բան չէ: Ոգին որոշակի որակական ամբողջություն է և իր մեջ ունի բնական չորս տարրերի՝ Հողի, Ջրի, Օդի, Հուրի համակցություն, իր Տեսակին հատուկ հարաբերակցությամբ: Հողի և Ջրի տարրերը Ոգու նյութական որակներն են, իսկ Օդի և Հուրի տարրերը՝ զգացական որակները:
11. Ըստ այդմ, Ոգին ունի իր անհատական որակական հատկությունները՝ ուժականություն, զգացողություն, ջերմություն, միտք, կերպ, ձև... ԵՎ այդ բնական հատկությունները որակապես նույնն են և Կյանքի Հոգու մեջ, և Մահի Ոգու մեջ: Նրանք որակապես չեն փոխվում:

12. Ոգին և Հոգին ունեն նաև նույն ձևը: ԵՎ քանի որ ունեն ձև, նշանակում է՝ ունեն մարմին: Ոգին և Հոգին ունեն նույն մարմինը: Պարզապես այդ մարմինը ունենում է տարբեր վիճակներ: Ոգու մարմինը հրե՝ էներգետիկ վիճակում է, իսկ Հոգու մարմինը՝ նյութականացված:
13. Ոգին ապրում է իր էներգետիկ մարմնով: Որպես ծնունդի արտահայտություն, այդ էներգետիկ մարմինը խտանում է, ստանում է նյութական վիճակ և Ոգին վերափոխվում է Հոգու: Մահից հետո մարմինը փոխում է իր վիճակը՝ ազատվում է նյութական մասից, և Ոգին շարունակում է ապրել իր էներգետիկ մարմնով:
14. Ըստ այդմ, երբեք Հոգին չի անջատվում մարմնից. նա չի կարող անջատվել իր մարմնից: Իրականում Հոգուց անջատվում է նրա մարմնի նյութական մասը: ԵՎ արդեն որպես Ոգի շարունակում է ապրել իր էներգետիկ մարմնով:
15. Փաստորեն մարդու բացարձակ մարմինը - դա Ոգու էներգետիկ մարմինն է: Իսկ նյութական մարմինը նրա էներգետիկ մարմնի նյութական խտացումն է լոկ: ԵՎ երբ այրում ենք մարդու մարմինը, նրանից մնում է միայն մի բուռ մոխիր: Դա է նրա մարմնի նյութական մասը:
16. Մահացած մարդու Ոգին պետք է ազատվի իր մարմնի նյութական մասից, որպեսզի շարունակի ապրել իր էներգետիկ մարմնով: ԵՎ քանի դեռ նա չի ազատվել իր մարմնի նյութական մասից, շարունակում է մնալ այդ մարմնով և չի կարող լիարժեք ապրել:
17. Երբ մարմնի նյութական մասը փրկում է կամ այրվում, այն ժամանակ Ոգին ազատվում է նյութից և շարունակում է ապրել իր մարմնի էներգետիկ վիճակով:
18. Ըստ այդմ, Ոգու զարգացման հաջորդ պարբերությունն սկսվում է ոչ թե մարդու մահանալու պահից, այլ այն պահից, երբ Ոգին ազատվում է իր նյութական մասից և ներկայանում է իր էներգետիկ մարմնով:
19. Մահացած մարդը՝ Ոգին, պահպանում է իր բոլոր որակական հատկությունները, ամփոփված էներգետիկ

մարմնի մեջ: Նա շարունակում է ապրել մեր կողքին: Պարզապես մենք չենք կարող տեսնել նրա էներգետիկ մարմինը: Բայց նա տեսնում է մեզ, լսում է մեզ, հարաբերվում է մեզ հետ, եթե մենք զգում ենք նրան: Այս դեպքում հաճախ նա կարող է երևալ մեզ երազում:

20. ԵՎ օրինաչափորեն Ոգին սկսում է զարգանալ, նախապատրաստվելով ծնունդի նոր արտահայտությամբ հաջորդ Կյանքի մեջ մտնելու համար: Նրա էներգետիկ մարմինը սկսում է խտանալ: Ըստ որում, Հոգու և Ոգու զարգացումները ունեն իրար հակառակ բնույթ:
21. Որպես Հոգի, մարդն իր զարգացումը սկսում է հյուլեաչափից և աճում է, աճում է մինչև մահը: Ոգու մարմինը համապատասխանում է մահացած մարդու մարմնի չափերին: Այնուհետև խտանալով, նրա էներգետիկ մարմինը սկսում է փոքրանալ. այն անչափ փոքրանում է, ապա անցնում է ապագա հոր մեջ, այնտեղ արդեն հասնում է նյութական խտացված հյուլեաչափի և ապա հոր սերմի ձևով փոխանցվում է մորը...
22. Ի դեպ, Հողածինների մոտ, որոնց մեջ Հողի բացասական էներգիան է գերիշխում, Ոգին նյութական մասից ազատվում է փթումի միջոցով բացասական էներգետիկ դաշտում՝ հողի մեջ: Այդ ընթացքում Ոգու էներգետիկ մարմինը սնվում է բացասական էներգիա, լինում է առողջ և ուժեղ:
23. Հրածին Արիների մոտ, որոնց մեջ գերիշխում է դրական էներգիան, Ոգին իր մարմնի նյութական մասից ազատվում է այրումի միջոցով: Կրակի դրական էներգիան շատ արագ ազատում է Ոգին նյութական մասից և նրա էներգետիկ մարմինը սնում է դրական էներգիայով, որի շնորհիվ Ոգին լինում է առողջ և ուժեղ:
24. Ահա թե ինչու մահացած Հողածինն անհրաժեշտ է թաղել հողի մեջ, իսկ մահացած Հրածին Արիին անհրաժեշտ է այրել: Արին, որ Հուր է, պիտի Հուր դառնա:

Ժա. ԽՈՐՀՈՒՐԴ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԻ

1. Ես Աշխարհի մեջ՝ ահա լինելությունը: Լինելությունը երկուսիս հաստատումն է մեկտեղ: Թե ես լինեմ Ոչնչի մեջ, կամ ես ոչինչ լինեմ Աշխարհի մեջ, նույն բանն է՝ երկուսս էլ Ոչինչ ենք:
2. Բայց Ոչինչը Լինելության ժխտումն է արդեն: Երբեք չեն կարող նրանք համատեղել. չի կարող լինել և՛ Լինելություն, և՛ Ոչինչ:
3. Ոչնչից Լինելություն չի ծնվի երբեք. Լինելությունն էլ Ոչնչի վերածվել չի կարող, քանզի Ոչինչը գոյություն չունի:
4. Արարչագործությունը արարումի և ծնունդի միասնություն է: ՈՒր չկա արարում, չի լինի ծնունդ. և թե չլինի ծնունդ, արարումը չի նորոգվի ու կչքանա, և Լինելությունը կվերածվի Ոչնչի:
5. Արարումը կյանքի հաստատումն է ժամանակից դուրս, հավերժության մեջ: Ծնունդը կյանքի հաստատումն է ժամանակի սահմանի մեջ:
6. Ծնունդը ժամանակի մեջ կյանքի մի պարբերությունն է հաստատում. արարումը պարբերությունների անվերջ ու անսահման հաջորդականությամբ կյանքի հավերժումն է հաստատում:
7. Մենք որպես երևույթ ոչ թե լոկ նյութական մարմին ենք, այլ՝ նյութականացված էություն, և ոչ թե մարմին ու հոգի, այլ՝ նյութակացված Ոգի: ԵՎ նյութակացված մարմնավոր Ոգին Հոգի ենք անվանում:
8. ԵՎ մեր մարմնավոր կյանքի սահմանը զուտ հարաբերական է, իսկ անսահմանությունը՝ բացարձակ: ՈՒստի մեր կյանքը նույնպես անսահման է, բացարձակ:
9. ԵՎ մահ որպես չգոյություն, որպես ոչնչացում չկա: Կա մշտական ինքնանորոգում նյութական կյանքի պարբերությունների հավերժ ընթացքում՝ երևույթ - էություն - երևույթ - էություն...
10. Մահը՝ դա երևույթի անդրադարձումն է էության, որով ավարտվում է նյութականացված մարմնավոր կյանքի մի պարբերությունը: Բայց հենց այդտեղից էլ սկսվում է նրա

- կյանքի հաջորդ պարբերությունը, երբ նրա էությունը՝ ոգին, սկսում է նորից երևոյթ դառնալու իր ընթացք
11. Ոգին ունի իր անհատական որակական հատկությունները՝ ուժականություն, զգացողություն, ջերմություն, միտք, կերպ, ձև:
 12. Հենց այդ տեսակային ընդհանրական և մասնավոր անհատական որակների օրինաչափ զարգացմամբ Ոգին ձևավորվում է որպես երևոյթ և իր վերածնունդով սկսում է նյութական մարմնավոր կյանքի մի նոր պարբերություն:
 13. Իմ ոգին ես եմ, և միայն ես եմ արարվում իմ ոգուց. և արարվում եմ այնպիսին, ինչպիսին որ կամ. ես ինձ եմ նման և չէի կարող ուրիշ կերպ լինել, թե չէ ես ես չէի լինի:
 14. Իմ Ոգին իր ներքին որակներն ունի՝ հենց այն որակները, որ հիմա ես ունեմ. իմ Ոգին նաև իր կերպը ունի, որով ես վերածնվում եմ. իմ Ոգու կերպը հենց այն կերպարանքն է, որ հիմա ես ունեմ:
 15. Ոգին բացարձակ է նույն որակներով. նույն որակներով է նա միշտ փոխակերպվում: ԵՎ հազարամյակներ առաջ ու հետո ես ես եմ լինելու:
 16. ԵՎ որպես լինելություն ես անսահման եմ ու անժամանակ. իմ ամեն մի վերածնունդ ժամանակ է հաստատում և իմ կյանքի ամեն մի պարբերություն իր սահմանն ունի:
 17. Վերջավոր չէ կյանքը. վերջավոր է միայն նյութական մարմնավոր կյանքի ամեն պարբերություն: Իսկ պարբերություններն անսահման են և կյանքն է անսահման:
 18. Ոչնչից երբեք լինելություն չի ծնվի: Ծնվում է միայն եղածը. չեղածը ինչպե՞ս կծնվի: ԵՎ այն, ինչ որ մենք նոր ծնված ենք կարծում, պարզապես նորոգումն է հնի, անցածի:
 19. Նոր արարված երգը նորոգումն է շատ հին ու մոռացված երգի. մենք այսօր կերտում ենք քանդված, մոռացված նույն քաղաքը հին. շատ վաղուց լսված, վաղուց մոռացված զրույցն ենք հիշում և հազարամյակների խորքից եկած նույն ընկերներին ենք հանդիպում նորից:

20. Նոր մարդն էլ նոր չէ, այլ հնում ապրած, ոգիացած ու վերածնված նույնությունն է նա:
21. Մարդն իր լինելության հավերժ ընթացքում նորոգվում է միշտ՝ Ոգին փոխակերպվում է Հոգու, ապա Հոգին՝ Ոգու և այդպես անվերջ:
22. Կյանքը և ես նույնանում ենք իրար. թե կյանքը կա, ես էլ կամ. թե ես կամ, կյանքն էլ կա: ԵՎ կյանքը ինձանից դուրս չէ. նա իմ մեջ է: Կյանքը հենց նորոգված լինելությունն է իմ:
23. Հրաշալի է կյանքը. այն հեքիաթի պես հարուստ է ու բազմազան: ԵՎ բավական է խորանանք այդ կյանք-հեքիաթի մեջ և ամեն օր, ամեն ժամ նոր հրաշալիքներ կբացվեն մեր առաջ:
24. ԵՎ եթե վերածնունդ չկա, եթե շարունակելիություն չկա, եթե ոչինչ մեզ չի մնալու, և մեր կյանքը անցողիկ մի պատահականություն է - ուրեմն չի լինի և՛ սեր, և՛ նվիրում, և՛ զոհաբերություն, և՛ արարում:
25. Էլ ինչո՞ւ ենք ծնվում, ինչո՞ւ ենք սիրում, կերտում, երազում, եթե այդ բոլորը մեզ չեն մնալու, եթե մենք ինքներս էլ մեզ չենք մնալու, և մեր լինելությունը ջնջվելու է մահով:
26. ԵՎ մահով անդարձ ոչնչանալու սարսափը հրեշ է ծնում մարդու մեջ. նա չի սիրի ոչ մեկին, նա չի սիրի նույնիսկ իրեն: Չարացած նա կհալածի ինքն իրեն, իր հարազատներին, կլքի իր տոհմն ու ազգը, կսողա սրանրա առջև՝ մի կերպ կյանքին կառչելու համար. նա կապականի իր շրջապատը և իր հոգին:
27. Բայց մահը չգոյություն չէ. մահը բնական շարունակությունն է կյանքի. մահը մեր մեջ է, ինչպես և կյանքը՝ ամեն ժամ, ամեն օր, հարյուրամյակներ, հավերժ:
28. Արայի կամքով՝ նա, ով ծնվել է, որոշապես մի օր պիտի մեռնի. նա, ով մեռել է, որոշապես մի օր պիտի ծնվի:
29. Էլ ինչո՞ւ ենք մեզանից անջատում մահը որպես հրեշավոր մի բան, որ մեզանից դուրս է: Մահ որպես չգոյություն չկա. մահը կա որպես կյանքի անդրադարձ:

30. Մահը նորոգում է, այլ ոչ թե վախճան. կյանքը նորոգում է, այլ ոչ սկզբնակետ:
31. Իրականում եթե ծնվողը գիտի, որ ծնվել է, մեռնողն էլ գիտի, որ մեռել է. և մեռածները շարունակում են ապրել, շարունակում են տեսնել, զգալ, լսել որպես ոգի անմարմին:
32. Մեռածները կան, լինելություն են նրանք, ապրում են որպես Ոգի իրենց էներգետիկ մարմնով, ապրում զգացմունքով, սիրով, կարոտով, հարաբերվում են ողջ հարազատների հետ, զորացնում նրանց և իրենք էլ զորանում են իրենց մեջ, նորոգելով իրենց լինելության նոր արշալույսը:
33. ԵՎ կյանքում ամեն ինչ մեզ է մնալու. մենք էլ մեզ ենք մնալու: ԵՎ հավերժության մեջ մի մահը ի՞նչ արժե որ՝ ոգիացած երազ միայն. ես նախնի եղել եմ, նորից նախնի կլինեմ և իմ որդու ժառանգների մեջ կրկին կվերածնվեմ:
34. ԵՎ որքան մարդու Ոգու ներքին որակները առավել հասուն են ու զորեղ, որքան առավել զարգացած են ու առողջ, այնքան նրա վերածնվելու կարողությունը մեծ է:
35. Իր ներքին որակների զորությամբ է պայմանավորվում Ոգու անդրադարձման զորությունը: ԵՎ ոգու անդրադարձման զորությունն է մարդու ինքնանորոգման՝ վերածնվելու ներքին պայմանը:
36. ԵՎ մարդու կյանքում նրա հոգևոր որակների զորության մակարդակը հիմնավոր պայման է նրա Ոգու զարգացման ու հետագայում վերածնվելու իր հնարավորության համար:
37. Մի կյանքով ապրողը հավերժից է զրկվում:
38. Մարդու Ոգին երբեք վերացական չէ. նա անպայման բնական որոշակի Տեսակի ու որոշակի տոհմի որակական ամբողջություն է: Ռիստի մարդու վերածնվելու արտաքին պայմաններն են նրա տոհմը և ազգը:
39. Հետաքրքիր է՝ որքա՞ն նման են իրար մանուկն ու պապը, և նրանք առավել են իրար զգում. դա հենց լինելության խորհուրդն է:
40. Մանուկը դեռ Ոգի է, իսկ պապը արդեն Ոգի է. մանուկը դեռ չի հեռացել ոգիներից և առավել է զգում

նրանց, պապն էլ արդեն մոտեցել է ոգիներին և առավել է զգում նրանց:

41. Մանուկը պապի ապագան է, իսկ պապը՝ մանուկի ապագայի ապագան. և այդ մանուկի թռչի թռռան մեջ հենց ինքը՝ պապը կծնվի նորից:
42. ԵՎ գուցե մահի ու կյանքի միջև ինչ-որ սահմանում նրանք նորից հանդիպեն՝ մանուկը որպես պապ, իսկ պապը՝ որպես մանուկ:
43. Հետաքրքիր է՝ ես իմ ո՞ր նախահայրն եմ եղել, քանի՞ սերունդ եմ ես ինձ արարել: Չէ՞ որ ես մեծ եմ իմ հորն ու պապին, իմ որդին էլ ինձ է մեծ, նրա որդին էլ:
44. Իմ հայրը ինձ է արարել, ես՝ իմ որդուն: Իմ որդու մեջ ես իմ պապին եմ արարել, որն էլ հետո ինձ է արարելու: Ուրեմն ես իմ որդու, թռչի միջոցով ինձ եմ արարում:
45. ԵՎ այդպես անվերջ մենք արարում ենք իրար, փոխարինում ենք իրար՝ ես իմ բոլոր սերունդների հետ. հենց դա է Տոհմը:
46. Ես իմ տոհմի մեջ եմ. իմ Ոգին տոհմական Ոգի է, և իմ տոհմից դուրս իմ Ոգին չկա, իմ տոհմից դուրս ինձ ծնող չկա: Ես կվերածնվեմ միայն իմ տոհմի մեջ:
47. Հայրը վերածնվում է իր որդիների միջոցով հենց իր և որդիների տոհմի մեջ, իսկ մայրը վերածնվում է իր որդիների միջոցով, որդիների և նրանց հոր տոհմի մեջ:
48. Բայց տոհմը տոհմ է որոշակի Տեսակի: Ազգը հենց տոհմերի ամբողջություն է. չկա ոչ մի ազգ առանց տոհմերի, տոհմերն էլ չկան իրենց ազգից դուրս: Ուրիշ ազգի մեջ իմ տոհմը չկա, ուրիշ ազգի մեջ իմ Ոգին չկա. ուրիշ ազգի մեջ ես չեմ վերածնվի:
49. Ոգու զորություն, տոհմի զորություն, ազգի զորություն՝ դա է մարդու շարունակելիության պայմանն արարող: Մարդը լինելություն է այդ ամբողջության մեջ, և նրա շարունակելիությունը հենց այդ ամբողջության մեջ է կատարվում:

Ժբ. ԽՈՐՀՈՒՐԴ ԿԵՆԱՑ

1. ԿՅԱՆՔ /Գյանք/-ը ծնունդի խորհուրդ է՝ ԳԷՆ՝ Գ /արտահայտություն/ -ԷՆ՝ ԱՆ /ծնունդ/ Ծնունդի արտահայտություն:
2. ԵՎ ծնունդով է կյանքը հաստատվում: Կյանքը նորոգված լինելությունն է իմ:
3. ԵՎ կյանքը հենց իմ հրաշալիքն է իմ մեջ՝ իմ երևակայական վառ թռիչքներով, սիրո, կարոտի տառապանքներով, հոգեպարար երանությամբ, ինքս ինձ և հարազատներիս մշտապես գտնելու երջանկությամբ: Դա է խորհուրդը կյանքի:
4. Հրաշալի է կյանքը և խորհրդավոր: Այն հեքիաթի պես հարուստ է ու բազմերանգ: ԵՎ բավական է խորանալ այդ կյանք-հեքիաթի մեջ և ամեն օր, ամեն ժամ նորանոր հրաշալիքներ կբացվեն մեր առաջ:
5. ԵՎ ապրելով կյանքի հրաշալիքների մեջ, հրաշագործությամբ ենք ապրում մենք այդ կյանքը: Ամենօրյա նույնությունը նորովի ենք տեսնում մենք ամեն օր՝ նույն խաղը խաղում ենք նորովի, նույն արեզը տեսնում ենք նորովի, նորովի ենք սիրում մենք նույն սերը և նույն հարազատներին նորովի ենք գտնում մենք ամեն օր:
6. Կյանքը զգացում է, զգացումը՝ հավատ: Հավատը մեր մեջ է, այլ ոչ՝ մեզնից դուրս: ԵՎ որքան շատ ենք զգում ինքներս մեզ, այնքան շատ ենք հավատում և այնքան շատ ապրում:
7. Կյանքը ինքնազգացողություն է, Արայի զգացողություն է, հավերժի զգացողություն է, ծագումի զգացողություն է, զորության ու սիրո զգացողություն է, երջանկության զգացողություն է:
8. Կյանքը բոլորի համար է: Բայց միևնույն կյանքից մեկը հրաշալիք է արարում, իսկ մյուսը՝ ձանձրույթ և ատելություն:

9. Ամեն մեկը իր կյանքն ունի: ԵՎ ամեն մեկը իր կյանքն է ապրում և ապրում է այնպես, ինչպես տեսնում է իր կյանքը:
10. Պատկերացնենք մեկին կանգնած Արագածի գագաթին և մյուսին՝ խոր փոսի մեջ: Նրանք տարբեր կերպ են կյանքը տեսնում և տարբեր կերպ են ապրում իրենց կյանքը:
11. Արագածի գագաթին կանգնած Արին նայում է կյանքին հավերժության բարձուքից: ԵՎ տեսնում է նա աշխարհը իր ողջ բազմազանությամբ, բազմերանգությամբ. աշխարհը նրա առջև բացվում է որպես մի աստվածային հրաշալիք: Նա հավատում է Բնության հրաշագործությանը, Բնության գորությանը. և զգում է իրեն ձուլված Բնությանը և իր մեջ բնական գորությունն է զգում: Նա ապրում է կյանքով և երջանիկ է:
12. Նրա համար այսօրը ներկան է միայն: Նա ունի իր երեկը, նա ունի նաև իր վաղը: ԵՎ նրա այսօրը իր մեջ միահյուսում է նրա երեկն ու վաղը: ԵՎ նա իր երեկը իր մեջ կրելով, ապրում է այսօրը որպես երեկվա շարունակություն և ապրում է իր այսօրը վաղվա համար. նա նպատակներ ու ծրագրեր է մշակում վաղը, մյուս օրը իրագործելու համար:
13. Իսկ փոսի մեջ անանց խավար է, խոնավություն և ցուրտ: ԵՎ այդ փոսն ընկած մարդը աշխարհը տեսնում է միայն վերևի անցքից մի կտոր երկնքի ձևով, որտեղից լույսի մի թույլ շերտ է թափանցում միայն: Սարսափն ու հիասթափությունը պատում են նրան: ԵՎ նա անվերջ օգնություն է կանչում, հույսով, որ վերևում հայտնվի ինչ-որ մեկը և փրկի նրան: Նրա կյանքն ամբողջությամբ սարսափ է, տաղտուկ, ձանձրույթ և հիասթափություն: Նա իրեն զգում է որպես անգոր ու չնչին մի արարած, և նրա կյանքը միայն օգնության աղաղակ է ու աղոտ մի հույս, որ ի վերջո կհայտնվի իր փրկիչը:
14. Նրա ամբողջ կյանքը ամփոփված է միայն այսօրի մեջ: Նա չունի երեկ, նա չունի նաև իր վաղը: Նրա այսօրը երեկվա շարունակությունը չէ, և նա չի ապրում վաղվա համար: Նա ապրում է միայն այսօրով: Բայց այսօրն էլ

նրա համար զուտ տառապանք է ու սարսափ: Ռեստի նա չի ապրում ընդհանրապես:

15. Կյանքն էլ օրի պես ունի իր ներկան, անցյալն ու ապագան: ԵՎ մեր կյանքը, որպես ծնունդի արտահայտություն, մեր ներկան է, որն իր մեջ միահյուսում է մեր անցյալն ու ապագան:
16. Մենք ունենք անցյալ, մենք ունենք ապագա: Բայց մեր անցյալն էլ ունի իր անցյալը, ապագան էլ իր ապագան ունի:
17. ԵՎ մեր անցյալի անցյալը մեր ապագայի ապագան է: ԵՎ մենք ուր էլ գնանք՝ դեպի անցյալ, թե դեպի ապագա, միևնույն է՝ երկու դեպքում էլ գնում ենք Առաջ /առ աճ/, քանզի հասնելու ենք միևնույն կետին:
18. Թե անցյալ գնանք, կհասնենք անցյալի անցյալ, որը մեր ապագայի ապագան է. թե ապագա գնանք, կհասնենք ապագայի ապագա, որը մեր անցյալի անցյալն է:
19. ԵՎ թե մենք մտքով կարողանանք Առաջ գնալ, մենք կհանդիպենք մեր բոլոր նախահայրերին ու նորից կհանդիպենք ինքներս մեզ անցյալ և ապագա կյանքերում:
20. ԵՎ մեր անցյալն ու ապագան միահյուսվում են մեր ներկայի մեջ, որ կյանքն է:
21. Մեր ներկա կյանքը մեր ծնունդի արտահայտություն է. վերածնունդը մարմնավորված ոգին է. և ծնունդն է մարմնավորված ոգու կյանքի սահմանը հաստատում:
22. ԵՎ նա, ով կապված է իր անցյալի ու ապագայի հետ, զգացողությամբ անցնում է ծնունդի սահմանը և հասնում է արարումի անսահմանություն:
23. Նա իրեն տեսնում է հավերժության մեջ. և կյանքը նրա համար իր հավերժության ներկան է: Նա իր մեջ պահպանում է այն միասնությունը, որ գոյություն ունի նրա անցյալի, ներկայի և ապագայի միջև: ԵՎ հենց այդ միասնության մեջ է նա իր կենաց հավերժումը հաստատում:
24. Նա իր մեջ պահպանում է այն միասնությունը, ընդհանրական կապը, որ գոյություն ունի իր և Աշխարհի բոլոր էությունների ու երևույթների միջև:

25. Մարմնավոր Ոգին ինքն իր մեջ էլ մի ամբողջություն է, և մասնատված չեն նրա մեջ մարմնավորն ու հոգևորը:
26. ԵՎ ինչպես նա ամեն օր ապրում է նաև վաղվա, մյուս օրվա համար, այնպես էլ ամեն մի կյանքում նա ապրում է նաև հաջորդ կյանքի համար:
27. Չէ՞ որ մեր այսօրը երեկվա շարունակությունն է և վաղվա նախապատրաստումը: Մենք այսօր անում ենք այն, ինչ երեկ ենք ծրագրել. միաժամանակ այսօր ծրագրում անք այն, ինչ վաղը, մյուս օրը պիտի կատարենք:
28. Մեր ներկա կյանքն էլ մեր անցյալի շարունակությունն է, և մենք այս կյանքում անում ենք այն, ինչ չենք հասցրել նախորդ կյանքում կատարել և միաժամանակ այս կյանքում ծրագրում ենք այն, ինչ պետք է հաջորդ կյանքում կատարենք:
29. ԵՎ նյութական մարմնավոր Հոգին հավերժի ծրագրերով է ապրում. այս կյանքում իրագործում է այնքան, որքան հնարավոր է, շարունակությունը թողնելով հաջորդ կյանքին:
30. Մի օրվա ծրագրով ապրում է նա, ով չի հավատում իր վաղվանը: Մի կյանքի ծրագրով ապրում է նա, ով չի հավատում իր շարունակելիությանը:
31. Մեր կյանքը մշտական սպասում է. մենք մշտապես սպասում ենք վաղվա, մյուս օրվա... մեր երազանքները, մեր իղձերը, ծրագրերը իրականացնելու սպասումով:
32. Հենց այդ սպասումը բովանդակություն է տալիս մեր ամեն մի օրին. և մենք ամեն մի օր ապրում ենք լիարժեք, և ամեն օր երջանկաբեր է լինում մեզ համար:
33. Մշտական սպասում է նաև հավերժական կյանքը. մենք նույնպես սպասում ենք մյուս կյանքին՝ մեր իղձերը, երազանքները, ծրագրերը իրականացնելու սպասումով: ԵՎ ամեն մի կյանք ապրում ենք լիարժեք, և ամեն մի կյանք երջանկաբեր է լինում մեզ համար:
34. Երջանկաբեր է կյանքը. Արարչական իրաշագործություն է այն՝ հագեցած լույսով, ջերմությամբ, ժպիտով, խիստով:

35. Թե Արիները տոնական հույզով, ձեռք ձեռքի տված պարում են, երգում՝ նրանք իրենց մեջ կյանքն են հաստատում, փառաբանում են կյանքը, իրենց և Արային:
36. Թե Արիները երեխա են ծնում, խնջույք են անում, կենաց են խմում և ձեռք ձեռքի տված պարում են, երգում՝ նրանք իրենց մեջ կյանքն են հաստատում, փառաբանում են կյանքը, իրենց և Արային:
37. Թե Արիները հողն են մշակում, բերք են հավաքում և ձեռք ձեռքի տված պարում են, երգում՝ նրանք իրենց մեջ կյանքն են հաստատում, փառաբանում են կյանքը, իրենց և Արային:
38. Թե Արիները սուրը ձեռքերին Մայր Հողն են պաշտպանում և մարտից առաջ, թե հաղթանակած շուրջպար են բռնում՝ ուս ուսի տված պարում են, երգում՝ նրանք իրենց մեջ կյանքն են հաստատում, փառաբանում են կյանքը, իրենց և Արային:
39. Բայց հենց որ Արին սկսում է աղոթել, նա դադարում է ապրել, քանզի աղոթքը հենց տկարի փրկության հույսի աղաղակն է: ԵՎ տաճարներն են կյանքի գերեզման:
40. Աղոթող Արին ո՛չ անցյալ ունի և ո՛չ էլ ապագա և ապրում է միայն մի ժնունդի սահմանում: Անցյալը նրա համար դատարկություն է՝ այնտեղ ինքը չկա. ապագան էլ դատարկություն՝ այնտեղ ինքը չկա, և միայն մահն է:
41. Նա ապրում է միայն ներկայով: Բայց ներկան էլ նրա համար չկա, քանզի նրա ամբողջ ներկան միայն մահվան ջղաձգություն է:
42. Նա Բնության երևույթները դիտում է որպես իրարից անջատ ինչ-որ բաներ. իրեն էլ դիտում է Բնությունից անջատ ինչ-որ մի բան, որ պատահականորեն ընկել է այստեղ և չքանալու է անդարձ: ԵՎ կյանքը փուչ ունայնություն է նրա համար:
43. ԵՎ նա ինքն իր մեջ գրկվում է ամբողջությունից. նա ինքն երկփեղկվում է իր մեջ: ԵՎ նա ապրում է ոչ թե որպես մարմնավոր Հոգի, այլ՝ մարմին և հոգի:
44. ԵՎ նրա մեջ հակասում են իրար մարմինն ու հոգին: Նյութական մարմինը այս անցողիկ կյանքի վայելքներն է

ուզում քաղել, իսկ հոգին մահից փրկվելու ձգտումը ունի:
ԵՎ նա չի ապրում ամբողջական կյանքով:

45. ԵՎ աղոթող Արիներն իրենք իրենց համար փոս են պատրաստում տաճարի տեսքով՝ խավար, սառնաշունչ: Փախչում են կյանքից և տաճարի ներսում իրենց կյանքն են ողբում, իրենց մահը սպասում և աղերսագին աղաղակներով չիմացած Աստծուց փրկություն խնդրում: Բայց ո՞ւմ են կանչում, ո՞ւմ են աղոթում՝ իրենք էլ չգիտեն: Նրանք աղոթում են դատարկության մեջ ինչ-որ մի Տիրոջ, ինչ-որ մի Փրկչի:
46. Բայց ամեն դեպքում այդ տաճարներում Արարիչին չէ, որ կանչում են նրանք: ԵՎ ի՞նչ գործ ունի Արա՛ն այս խավար տաճարում: Արա՛ն կյանք է արարում. ուրեմն նա այնտեղ է, ուր կյանք կա, ժպիտ կա, լույս ու ջերմություն:
47. Ծաղիկները ժպտում են, ծառերը ծաղկում են, գազանները խաղում են. նրանք կատարյալ են, նրանք ապրում են կյանքով, Արան սիրում է նրանց, և նրանք երջանիկ են:
48. Իսկ աղոթող Արիները անկատար են. նրանք չեն ապրում կյանքով ու երջանիկ չեն:

Ժգ. ԽՈՐՀՈՒՐԴ ԿՆՈՒՆՔԻ

1. ԿՆՈՒՆՔ - խորհուրդը նշանակում է **ԳԵՆԻ** /կյանքի/ հաստատում: Լեզվաբանորեն կազմված է **ԳԵՆ** /կյանքի եզակին/ և **ՈՒՆՔ** /հաստատում/ բառերով:
2. ԵՎ Կնունքն իր խորհուրդն ունի թե՛ ծնունդի, թե՛ մահվան մեջ: Ըստ այդմ, ծնունդն ու մահը նույնանուն են իրար: Ծնունդն ու մահը **Ոգու** տարբեր վիճակներ են: Ծնունդը ոգու մարմնի նյութական վիճակն է, իսկ մահը՝ ոգու մարմնի հրե՛ էներգետիկ վիճակը: Չէ՞ որ **Մահ** - նշանակում է ամփոփված զորություն՝ **Մ** /ամփոփել/ - ԱՀ /զորություն/:
3. Ծնունդն ու մահը տարբեր ու հակադիր վիճակներ են: ԵՎ ոգու անցումը մի վիճակից մյուս վիճակին սովորաբար սահուն չի կատարվում. այդ անցումը բավական կտրուկ է լինում:
4. Ըստ այդմ, ոգին իր վիճակի այդ կտրուկ փոփոխությունը բավական դժվարությամբ է տանում: ԵՎ որոշ ժամանակ է պահանջվում, մինչև նա հարմարվում է նոր վիճակին:
5. Անշուշտ, ծնվածը գիտի, որ ծնվել է. մահացածն էլ գիտի, որ մահացել է: Բայց և՛ ծնվածը, և՛ մահացածը միայն յոթ օր հետո են զգում իրենց նոր վիճակում:
6. Յոթ օր և՛ ծնվածը, և՛ մահացածը գտնվում են անգիտակից դրության մեջ: Ծնվածը միայն յոթ օր հետո է զգում իր ծնված լինելը: Միայն յոթ օր հետո է նա զգում, լսում, տեսնում: Մեռածն էլ միայն յոթերորդ օրն է զգում իր մահացած լինելը:
7. Ահա թե ինչու և՛ ծնունդը, և՛ մահը ունեն յոթօրյակի խորհուրդ:
8. Նյութական մարմնով Հոգին իր ծնունդով մտնում է իր համար մի նոր բնական միջավայր, որը շատ է տարբերվում մայրական ներքին միջավայրից: Նոր

բնական միջավայրը արտահայտվում է օդի, ջրի, լույսի, ձայնի և այլնայլ նոր որակական դրսևորումներով:

9. ԵՎ ծնվածը, յոթ օր հետո զգալով իր ծնված լինելը, այնուամենայնիվ, նոր կյանքի մեջ դեռ չի կարող մտնել: Նա բավական դյուրագգաց է նոր վիճակի ու միջավայրի նկատմամբ և բավական անպաշտպան է նոր միջավայրի այլնայլ ազդեցություններից:
10. Նոր կյանքին հարմարվելու շրջանը տևում է քառասուն օր: ԵՎ ավանդաբար մենք պահպանում ենք նորածինի՝ նոր կյանքին հարմարվելու քառասունօրյա շրջանը:
11. Քառասուն օրվա ընթացքում նորածինը հարմարվում է կյանքի նոր պայմաններին: ԵՎ քառասուներորդ օրը մենք որոշակի ծիսակատարությամբ նրան «հանում ենք քառսունքից», օժում ենք նրա մարմինը Արարատի հազար ու մի ծաղիկների յուղով՝ մերանով և կնքում նրան, հանձնելով կյանքին ու Աստվածների հովանավորությանը:
12. Փաստորեն, Կնունքը - քառսունքի միջոցով նյութական մարմնով Հոգու հաստատումն է իր նոր կյանքի մեջ: Այսինքն՝ Հոգին ոչ թե ծնունդով է մտնում կյանքի մեջ, այլ՝ քառսունքի կնունքով:
13. Նույն օրինաչափությունը առկա է նաև մահացածի մոտ: Եթե ծնվածը միայն յոթերորդ օրն է զգում իր ծնված լինելը, ապա մահացածն էլ միայն յոթերորդ օրն է զգում իր մահացած լինելը:
14. Զգալով իր մահացած լինելը, ոգին շատ է տխրում. մահացած լինելու սարսափը որոշ ժամանակ հալածում է նրան, մինչև որ նա աստիճանաբար մաքրվում է այդ սարսափից և ճանաչում ոգիների կենաց իրողությունը:
15. Էներգետիկ մարմնով Ոգին իր նոր վիճակին վարժվում է դարձյալ քառասուն օրվա ընթացքում: ԵՎ միայն քառասուն օր հետո նա սկսում է ապրել լիարժեք ոգեկան կյանքով:
16. ԵՎ աստվածային իմաստության զորությամբ, մենք որոշակի ծիսակատարությամբ նրան «հանում ենք քառսունքից», խնկով օժում ենք նրան ու կնքում,

հանձնելով նրան ոգեկան կյանքին և Աստվածների հովանավորությանը:

17. Ըստ այդմ, եթե ծնված Հոգու կյանքը սկսվում է նրա քառսունքի կնունքով, ապա մահացածի Ռգու կյանքը նույնպես սկսվում է նրա քառսունքի կնունքով:
18. Այսպիսով, և՛ ծնունդը, և՛ մահը ունեն իրենց յոթն ու քառսունքը: Ըստ որում՝ և՛ ծնունդի, և՛ մահվան յոթն ու քառսունքը նույն իմաստն ունեն, նույն խորհուրդն ունեն:
19. ԵՎ եթե մենք գիտենք, որ ծնվածը կա, փաստորեն գիտենք նաև, որ մահացածն էլ կա: Հակառակ դեպքում ինչո՞ւ ենք նշում նրա մահվան յոթն ու քառսունքը: ԵՎ ինչո՞ւ են նույնանում ծնվածի ու մահացածի յոթն ու քառսունքը մեր զգացողության մեջ:

Ժդ. ԽՈՐՀՈՒՐԴ ԶՈՎԱԲԵՐՈՒԹՅԱՆ

1. Չոհաբերությունը կյանքի հիմնական բովանդակությունն է, և առանց զոհաբերության անիմաստ է կյանքն ընդհանրապես:
2. Չոհաբերությունը իրական իմաստով կնշանակե՝ հավատով, կամքով, զգացմունքով միանալ քո ամբողջությանը: Չոհաբերությամբ դու քո լինելությունն ես հաստատում քո ամբողջության մեջ:
3. Դու քո ամբողջության մեջ՝ ահա լինելությունը: Քո ամբողջության մեջ և քո ամբողջության միջոցով ես դու հաստատում քո լինելությունը: ԵՎ որքան զորավոր է քո ամբողջությունը, այնքան դու ամբողջական ես ու զորավոր: Իսկ ամբողջությունը զորանում է հենց նրա մասերի զոհաբերությամբ:
4. Չոհաբերությունը՝ դա քո անձնականի նվիրաբերումն է քո ամբողջությանը՝ քո եռանդի, քո կամքի, քո մտքի, քո զգացմունքի, քո կարողության, քո կյանքի... Այս զոհաբերությամբ է զորանում և հավերժանում քո ամբողջությունը: ԵՎ այդ զորավոր ամբողջության մեջ դու

ինքդ ես զորանում և հավերժանում: Ահա թե ինչու զոհաբերությունը երջանկաբեր է:

5. Փաստորեն զոհաբերությունը՝ դա գերագույն սիրո և նվիրումի երջանկաբեր սրբագործումն է քո մեջ, երբ դու քո հավատով, կյանքով, կամքով, զգացմունքով նվիրվում ես քո ամբողջությանը, պաշտպանում և պահպանում ես այն:
6. Ջոհաբարությունն է քեզ հաստատում քո հարազատների մեջ. զոհաբերությունն է քեզ միավորում քո նախնյաց ոգիների հետ. զոհաբերությունն է արևով սնում ժպիտը մանկանց. զոհաբերությունն է պահպանում քո Ազգն ու Հայրենիքը և զոհաբերությունն է հաղթությամբ օծում զորությունը քո:
7. Սերն է զոհաբերության ուժը, և զոհաբարությունն է երջանկության խորհուրդը: Առանց սիրո չկա զոհաբերություն, և առանց զոհաբերության չկա երջանկություն:
8. Ի՞նչ խորհուրդ մոր համար անքուն գիշերներ մանկան օրոցքի մոտ անցկացնելը՝ զոհաբերություն, որ երջանկացնում է հենց իրեն՝ մորը:
9. Ի՞նչ խորհուրդ բանաստեղծի համար արարման տառապալից երկունքը՝ զոհաբերություն, որ երջանկացնում է հենց իրեն՝ բանաստեղծին:
10. Ի՞նչ խորհուրդ Ռազմիկի համար զենքը ձեռքին Հայրենիքը պաշտպանելը՝ զոհաբերություն, որ երջանկացնում է հենց իրեն՝ Ռազմիկին:
11. Ի՞նչ խորհուրդ այդ բոլոր երջանկաբեր զոհաբերությունները մարդու մեջ - իր շարունակելիության բնական զորություն:
12. Հենց այդ ինքնանորոգման բնական զորությունն է, որ ծնողին մղում է զոհաբերության՝ հանուն իր զավակի - նա իր շարունակելիությունն է ապահովում իր զավակի միջոցով:
13. Հենց այդ ինքնանորոգման բնական զորությունն է, որ Ռազմիկին մղում է զոհաբերության՝ հանուն Ազգի և Հայրենիքի - նա ապահովում է իր շարունակելիությունը իր Ազգի մեջ, իր Հայրենիքում:

14. Ձոհաբերում է նա՛, ով ունի իր ամբողջության զգացողություն, իր բացարձակության զգացողություն. նա՛, ով ունի հոգու հարստություն, ով ապրում է Վահագնով ու հզոր է, ում ուժի բաժակը լցված է հորդելու, թափվելու աստիճան:
15. ԵՎ նրա համար զոհաբերությունը ոչ թե գաղափար է, այլ՝ ներքին որակ. դա նրա շարունակելիության բնական զորությունն է, որ արտահայտվում է երջանկաբեր զոհաբերության միջոցով:
16. Ձոհաբերվելով արևի համար, դու քեզ ես պահպանում. զոհաբերվելով քո Մայր Հողի համար, դու քեզ ես պահպանում. զոհաբերվելով հարազատիդ համար, դու քեզ ես պահպանում, քանզի քո հավերժական կյանքի համար դու պահպանում ես այն բոլորը, որ քոնն են, քո ամբողջության մասերն են և քեզ են մնալու:
17. Իսկ թույլը, տկարը, որ չունի իր ամբողջության զգացողություն, չունի հավերժության զգացողություն և սարսափում է մահից, անկարող է ինչպես սիրելու, այնպես էլ զոհաբերվելու: Նա ինքը կզոհաբերի ամբողջը և ամենը հենց իր համար, իր այս մի կյանքին կառչելու համար: ԵՎ նա երջանիկ չի լինի երբեք:
18. Ձոհաբերությունը ամենաբնական զգացումն է ոչ միայն մարդու, այլ նաև կենդանիների մեջ, և այն որևէ չափի, ձևի մեջ չի մտնում: Մայրը, որ տառապալից գիշերներ է անցկացնում երեխային խնամելիս, երբեք չի էլ մտածում, որ զոհողություն է կատարում. նա պարզապես ապրում է մայրությամբ: ԵՎ զոհաբերությունը մայրության ներքին որակ է:
19. ԵՎ հենց որ մայրը մտածի, որ զոհաբերություն է կատարում՝ նա կդադարի մայրությունից, երեխայի խնամքը նրա համար կվերածվի լոկ տհաճ պարտականության, և մայրը այլևս չի զոհաբերի ու չի երջանկանա իր մայրությամբ:
20. Ռազմիկը, որ պաշտպանում է իր Հայրենիքը, իր Ազգը, իր Տոհմը, իր արևը, իր բնաշխարհը, երբեք չի

մտածում, որ զոհաբերություն է կատարում:
Ջոհաբերությունը Ռազմիկի ներքին որակն է:

21. ԵՎ հենց որ Ռազմիկը մտածի, որ զոհաբերություն է կատարում, նա կդադարի Ռազմիկ լինելուց և կվերածվի պարզ զինվորի, որի համար Հայրենիքի պաշտպանությունը ստիպողական պարտականություն է լուկ:
22. Մարդ զոհաբերում է այն, ինչ ունի. չունեցածը՝ ինչպե՞ս զոհաբերի:
23. ԵՎ զոհաբերվել կարող է միայն նա, ով իր կյանքի տերն է. միայն հաղթողը կարող է զոհաբերվել: Պարտվողը զոհաբերվել չի կարող՝ նա ինքը պարտության նվաստ զոհ է. և նրան կարող են զոհաբերել հակառակ նրա կամքի, այնպես, ինչպես կենդանիներին են զոհաբերում:

ԺԵ. ԽՈՐՀՈՒՐԴ ԵՐԱԶԻ

1. Երազը հոգեկան որակ է: ԵՎ մենք երազում ենք միայն այն ժամանակ, երբ ամփոփվում ենք ինքներս մեր մեջ, երբ ամբողջությամբ մտնում ենք մեր հոգեկան աշքարհը: ԵՎ մեր հոգով մենք հարաբերվում ենք ամենաբազմազան երևույթների, վիճակների հետ:
2. Հոգեկան այդ որակն ամենագորավոր կերպով արտահայտվում է քնած ժամանակ, երբ մեր բոլոր զգայարաններն այլևս չեն ընդունում արտաքին որևէ ազդակ, մեր հոգին լիակատար ազատություն է ստանում, դառնում է ինքնիշխան և հնարավորություն է ձեռք բերում մտնելու ամենաբազմազան հարաբերությունների մեջ:
3. Մեր հոգին հաղորդակցվում է իր նման հոգիների հետ, հարաբերվում է մահացած հարազատների ոգիների հետ, բնական այլևայլ երևույթների հետ:
4. ԵՎ եթե մենք կարողանանք զգալ երազը, ճիշտ հասկանալ երազի իրական խորհուրդը, ապա մենք շատ և շատ գեղեցիկ բաներ կանենք կյանքում, որ չենք անում,

շատ-շատ սխալներից կխուսափենք, որ չենք խուսափում:

5. Հարազատների փոխադարձ զգացողությունը արտահայտվում է նրանց հոգեկան փոխադարձ հարաբերությամբ: ԵՎ մահից հետո էլ մեր հարազատի էությունը շարունակում է զգալ, մտածել, շարժվել: ԵՎ նա շարունակում է զգալ և հարաբերվել իր ողջ հարազատների հետ:
6. Մենք մեր հարազատ ոգիների հետ հարաբերվում ենք միայն հոգեկան ամփոփվածության միջոցով, քանի որ միայն հոգին է ոգուն զգում, հոգին է ոգուն միանում:
7. ԵՎ մենք մեր հարազատ ոգիների հետ անմիջական և իրական հարաբերությունների մեջ մտնում ենք առավելապես քնած ժամանակ՝ երազում:
8. ԵՎ երբեք պատահական չէ մեր հարազատ ոգիների անմիջական հարաբերությունը մեզ հետ. նրանք մշտապես շրջապատում են մեզ. նրանք ամեն ինչ տեսնում են, ամեն ինչ լսում են, ամեն ինչ զգում են. նրանք մեզ էլ են տեսնում, մեզ էլ են զգում:
9. Նրանք զգում են մեր հոգեկան վիճակները, ապրումները. նրանք հետևում են մեր կյանքին, մեր հարաբերություններին. նրանք շատ-շատ բաներ են զգում, որ կատարվում են մեր շուրջը կամ մեր մեջ:
10. ԵՎ հարազատ ոգիները այցելում են մեզ երազի մեջ զգուշացնելու, խրախուսելու, մխիթարելու, նախատելու, զորացնելու... ԵՎ եթե մենք կարողանանք զգալ մեր հարազատ ոգիներին, ապա շատ-շատ հնարավոր սխալներից կարող ենք խուսափել:
11. Բարի մարդը բարի ոգի է դառնում, չար մարդը՝ չար ոգի, իսկ հայրը միշտ էլ հայր է մնում: ԵՎ երբեք հոր ոգին չի կարող չարիք բերել իր հարազատ որդուն: Իրականում չարիքը գալիս է ոչ թե հոր ոգու այցելությունից որդու երազում, այլ՝ նրան չզգալուց և չհասկանալուց:
12. Շատ հաճախ հոր ոգին կանխազգալով իր որդուն սպասվող որևէ վտանգ, հենց որդուն պաշտպանելու նպատակով այցելում է նրան և զգուշացնում վտանգի մասին:

13. Հոր ոգին գիշերային այցելությամբ շատ հաճախ պարզապես զգուշացնում է որդուն հնարավոր սխալներից, հովանավորում է, խրախուսում, ինչպես նաև նախատում է վատ արարքների համար... Հաճախ նա հիշեցնում է որդուն նրա ծագումը, փորձում նրան կապել իր տոհմին, պահանջում է պատասխանատվություն զգալ ընտանիքի, տոհմի, ազգի համար...
14. Զգիտես ինչու, մարդիկ մահ են գուշակում մահացած երեխայի ոգու այցելությունից հոր կամ մոր երագում: Իրականում երեխայի ոգին որևէ մահաշունչ խորհուրդ չի բերում իր հարազատ ընտանիք. նա պարզապես հայտնվում է հոր կամ մոր երագում հիշեցնելու, որ ինքը կա, որ ինքը նույնպես երեխա է, որ ինքը նույնպես կարոտ ունի, որ ինքը նույնպես հայր ու մայր է ուզում. նա ուզում է, որ իրեն չմոռանան, որ իրեն էլ սիրեն: Բայց չզգալով երեխայի ոգուն, որքան վիշտ են պատճառում նրան հարազատ հայրն ու մայրը:
15. Թեև Աստվածները հովանավորում են մեզ, բայց մեր անմիջական խնամողները մեր ծնողներն են՝ հայրը, մայրը, պապը, տատը... Նրանք են, որ մշտապես շրջապատում են մեզ և ստեղծում մեր կյանքի նախնական և ամենահարազատ միջավայրը: Այդ հարազատ միջավայրի մեջ մտնում են ինչպես ողջ, այնպես էլ ոգիացած հարազատները:
16. ԵՎ մենք մշտապես ապրում ենք մեր հարազատ միջավայրում և հարաբերվում ենք մեր ողջ և ոգիացած հարազատների հետ: ԵՎ մեր երագում մեր հոգին հիմնականում հարաբերվում է դարձյալ մեր հարազատ միջավայրում, և մեզ խնամողները դարձյալ մեր հարազատներն են՝ ողջ, թե ոգիացած: ԵՎ մեր երագում հայտնվում են ճանաչված և չճանաչված հարազատ ոգիները՝ պապը, տատը, պապի պապը...
17. Որքան հոգով շատ կապված լինենք մեր հարազատ միջավայրին, այնքան շատ կլինենք հարազատ միջավայրի ամբողջության մեջ. որքան շատ հավատանք մեր նախնյաց ոգիներին, այնքան հաճախ նրանք

կհայտնվեն մեր երազում. և որքան Առաջով ապրենք մենք, այնքան շատ նախնիների կճանաչենք:

18. Աստվածները հայտնվում են միայն նրանց, ովքեր իրենց կենդանության օրոք արդեն ապրում են որպես ոգի, օծվում են արարչական լույսով. նրանք, որ արդեն հարաբերվում են Աստվածների հետ. նրանց հարազատ միջավայրը շատ է ընդլայնվում և իր մեջ ընդգրկում է նաև Աստվածներին:
19. Աստվածամարդու հարազատ միջավայրի մեջ մտնում են նաև Աստվածները. և Աստվածները կարող են հայտնվել նրա երազում:
20. Գերագույն սիրով վառված պատանու երազում կարող է Աստղիկը հայտնվել՝ նրա սերը օծելու համար. մայրական գերագույն վշտի ու կարոտի ժամանակ կարող է Անահիտը հայտնվել՝ մխիթարելու, խրախուսելու համար:
21. Աստվածները առավել հայտնվում են անմեղ մանուկի երազում, քանի որ նա դեռ ոգի է, և արարչական պայծառ լույսը դեռ չի մարել նրա մեջ:
22. Մեր միտքը հնարավորություն ունի թափանցելու հազարամյակների խորքը և հիշողության մեջ վերարտադրելու մեր նախկին կյանքը. և մեր երազում մենք երբեմն վերապրում ենք մեր նախնական կյանքը կամ կյանքերը:
23. ԵՎ եթե մենք զգանք այդ երազների խորհուրդը և հետևենք դրանց իմաստին, մեր մեջ վերարտադրենք այդ երազները, ապա այդ երազների շղթայի մեջ մենք կարող ենք հիշողության մեջ քիչ թե շատ ամբողջացնել մեր անցյալ կյանքը:
24. Չէ՞ որ մենք գրեթե ոչինչ չենք հիշում մեր վաղ մանկությունից: Բայց բավական է, որ մեր մոտ ուրիշները պատմեն իրենց մանկության հիշողություններ, և մեր միտքը սկսում է անկախ մեզանից թափանցել մեր մանկություն և այնտեղից վերհանել որոշ հիշողություններ:
25. Նմանապես, երբ մենք ապրում ենք Ամենով, մեր հոգին իր հիշողությամբ սկսում է վերապրել մեր նախնական կյանքը. և մենք երազում տեսնում ենք այն

շրջապատը, այն միջավայրը, որտեղ ապրել ենք մենք մեր նախկին կյանքում:


Ժգ. ԽՈՐՀՈՒՐԴ ԳԱՐՆԱՆ

1. Գարունը հավերժական ամեն մի արարումի նորոգումն է, վերածնունդն է ժամանակի մեջ: Գարունը հավերժության մեջ բնական մի նոր պարբերության սկիզբ է:
2. Գարունը կյանքի նորոգումն է ձմեռից՝ հարաբերական մահից հետո:
3. Ձմեռն է պարբերության ավարտը, երբ Երկրի վրա պակասում է արևային դրական հուրը՝ էներգիան:
4. ԵՎ ձմեռանը դրական հուր կրող ծիրանին սառչում է, ցամաքում, կծկվում և դառնում է անպաշտպան ձմեռվա խստաշունչ տարերքի հալածանքներից: Բայց ձմեռից հետո գալիս է գարուն:
5. Ի՞նչ ուժ կարող է արգելել գարնան գալուն - և ոչ մի ուժ. միևնույն է, գարունը գալու է:
6. ԵՎ ի՞նչ ուժ կարող է արգելել գարնանը ծիրանի ծաղկելուն - և ոչ մի ուժ. միևնույն է, ծիրանին ծաղկելու է:
7. Գարունը գալիս է մեզանից անկախ: ԵՎ մենք ուզենք, թե չուզենք, հրաժարվում ենք ձմեռվա շնորհած բոլոր արհեստական «պաշտպանիչ» միջոցներից՝ դեն ենք գցում վառարանը, վերարկուն...
8. Ծիրանին ինքը չի որոշում՝ ծաղկել, թե ոչ: Մենք էլ ինքներս չենք որոշում՝ հրաժարվել ձմեռվա արհեստական միջոցներից, թե ոչ: Գարունն է պարտադրում վերադարձ դեպի բնական ապրելակերպ:
9. Նույն օրինաչափությամբ, արդեն մոտենում է Տիեզերական Գարունը: Երկրի վրա այն արտահայտվում է Տիեզերական Հուրի՝ Դրական էներգիայի, առավել կուտակումով: Երկրի վրա արդեն խիստ արտահայտվում են մոտալուտ Տիեզերական

- Գարնան նախանշանները՝ բարձրանում է Երկրի ջերմությունը, սկսում են հալչել բևեռային սառցալեռները:
10. Ի՞նչ ուժ կարող է արգելել Տիեզերական Գարնան հաղթարշավին, ի՞նչ ուժ կարող է արգելել Վահագնի Ծնունդին, որպես Տիեզերական՝ Դրական Հուրի Խորհուրդ - և ոչ մի ուժ. միևնույն է, Գարունը գալու է և Վահագնը ծնվելու է:
 11. ԵՎ ի՞նչ ուժ կարող է արգելել Երկրի արարող Տեսակի՝ Արիների «ծաղկելուն» Տիեզերական Գարնանը - և ոչ մի ուժ. միևնույն է, Արիները «ծաղկելու են»:
 12. ԵՎ անկախ մեր կամքից, միևնույն է, մենք դեն ենք նետելու 2 - 2,5 հազար տարի տևած Տիեզերական Ձմռան կողմից հաստատված բոլոր արհեստական միջոցները:
 13. Տիեզերական Ձմռանը դրական հուր կրող Արի Ցեղը սառել էր, տկարացել և Ձմռան ամենադաժան հարվածներից կծկվել:
 14. Ցեղը մի բնական օրգանիզմ է, որի օրգանական մասերն են Ազգերը: Ազգն էլ իր հերթին մի օրգանիզմ է, որի օրգանական մասերն են ազգային անհատները:
 15. Տիեզերական Ձմռանը ցրտահարվում էին Արի Ազգերի անհատներ. նրանք այլևս չէին զգում իրենց ազգային օրգանիզմը, օտարվում էին Ազգից և անպաշտպան ընկնում էին Ձմռան տարերքի բացարձակ ազդեցության տակ: Այնպես, ինչպես մարդու ցրտահարված օրգանական մասն այլևս չի զգում մարդու օրգանիզմը և օտարվում է այդ օրգանիզմից:
 16. ԵՎ ժողովուրդը հենց ազգային օրգանիզմից օտարված անհատների ժողովածու է:
 17. Ժողովուրդը, որպես ազգային օրգանիզմից օտարված անհատների արհեստական ժողովածու, ինքն իրեն կառավարել չի կարող: ԵՎ ժողովուրդները ապավինում են իրենցից դուրս գերակա զորություններին:
 18. Իսկ իրենցից դուրս այդ գերակա զորությունները փաստորեն Բացասական /հողի/ էներգիայի՝ Յահվահականության արտահայտություններ են:

19. Հենց Յահվահականությունը հաստատվեց ժողովուրդների կյանքում, ստեղծելով նրանց համար բազմապիսի արհեստական երևույթներ և կառույցներ՝ հակամարտող կրոններ, հակամարտող փիլիսոփայական ուղղություններ, հակամարտող գաղափարախոսություններ, հակամարտող պետական կառույցներ...
20. ԵՎ Յահվահականությունը մշտապես հակամարտության և ահաբեկման մեջ էր պահում ժողովուրդներին:
21. ԵՎ Արի անհատները պարզապես իրենց վրա էին կրում Յահվահականության ներգործությունը բոլոր ասպարեզներում: Նրանք ապրում էին ոչ իրենց կյանքով, ուստի և նրանք ոչ թե ապրում էին, այլ՝ գոյատևում:
22. Բայց և այնպես Ձմեռից հետո գալիս է Գարուն: ԵՎ Գարունը մոտենում է: Գարունը հարձակվում է, Ձմեռը դիմադրում է: ԵՎ մարդկությունը շփոթվել է Բնության այդ ներքին հակամարտության մեջ:
23. Տիեզերական՝ Դրական Հուրը ավելի ու ավելի է շատանում Երկրի վրա: Ձմեռը, կատաղի դիմադրելով, այնուամենայնիվ, գնում է դեպի մահ: ԵՎ Բնությունն ինքը նախապատրաստում է Արի Ցեղի «ծաղկումը»:
24. ԵՎ Բնությունն ինքը հենց մեզ համար բացահայտում է Յահվահականության ամբողջ սնանկությունն ու ոչ կենսունակությունը Արիների կյանքում:
25. Ցրտահարված Արի անհատներն արդեն աստիճանաբար «են են գալիս» և սկսում են զգալ իրենց ազգային օրգանիզմը:
26. ԵՎ զգալով իրենց ազգային օրգանիզմը, անհատները կենդանանում են որպես այդ օրգանիզմի բնական օրգանական մաս և հեռանում են ժողովրդից:
27. ԵՎ մեռնելու է ժողովուրդը՝ վերածնելու և ծաղկեցնելու համար Ազգը:
28. Մեռնելու է Յահվահականությունը Արիների մեջ, իր հետ տանելով իր բոլոր արհեստական միջոցներն ու կառույցները:

29. Մեռնելու են դրանք բոլորը՝ կրոններ, գաղափարախոսություններ, ժողովրդավարական և բռնատիրական պետական կառույցներ... և մնալու են միայն Ազգերը, որպես բնական որակական ամբողջություններ իրենց Ցեղի օրգանիզմի մեջ: ԵՎ Ազգերն իրենց բնական կառույցներն ու հարաբերություններն են հաստատելու: Ղա Բնության պահանջն է, դա Գարունի պահանջն է:
30. Գալիս է Տիեզերական Գարունը, ծնվելու է Հուր-Աստված Վահագնը, և Արի Ցեղը ծաղկելու է իր Ազգերի բազմերանգությամբ:



ԳԻՐՔ ՉՈՐՐՈՐԴ

ՁՈՆԱՐԱՆ

Տիեզերական զարնան խորհուրդ է Վահագնը /Դրական էներգիա/: Տիեզերական շնչան խորհուրդն է Յակվահը /Բացասական էներգիա/: Վաղուց արդեն շնչոն է իշխում Տիեզերքում: ԵՎ Երկրի վրա Քրիստոնեությունն ու Մահմեդականությունը պարզապես Յակվահականության արտահայտությունն են մարդկանց մեջ:

Արդեն զարնան հաղթարշավն է սկսվել Տիեզերքում: ԵՎ Վահագնը իր ամբողջ Ջորությամբ արշավում է Երկրի վրա: Իսկ Երկրի վրա Քրիստոնեությունն ու Մահմեդականությունը դեռ պայքարում են Յակվահականությունը պահպանելու համար մարդկանց հոգիների մեջ:

Բայց Տիեզերական զարնան հաղթարշավը կանգնեցնել չի լինի: Դա բնական ընթացք է: Այն Վահագնի Ջորությամբ արդեն արտահայտվում է Երկրի վրա: ԵՎ Արիների ջերմացող հոգիներից շոներ են թևածում դեպի երկինք...

ՁՈՆ ՀԱՎԱՏՔԻՆ

Կյանքը զգացում է, զգացումը՝ հավատ: Հավատը իմ մեջ է, այլ ոչ ինձնից դուրս: ԵՎ որքան շատ են ես զգում ինքս ինձ, այդքան շատ են հավատում և այդքան շատ՝ ապրում: ԵՎ թե փորձում են Գերագույնը զգալ, ապա Գերագույնը իմ մեջ է դարձյալ: Դա ծագումն է իմ, իմ Ցեղը Արի, Արմատն իմ Ծառի... Ես զգում եմ այդ բոլորն իմ էության մեջ: ԵՎ այդ զգացողությունն է իմ մեջ վերածնել Հավատքն իմ նախնյաց՝ Հավատքն Արևորոյաց որպես նորոգ Ռիստ Արորոյաց:

Ծագումի հավատ է Արորոյաց Հավատքը, զորության հավատ է, բնական հավատ է, բնականի հավատ է Արորոյաց Հավատքը: Այն տիեզերական խորություն ունի: Այն մինչև Արևը կարող է հասնել՝ Վահագնի հետ ողջագուրվելու: Այն մինչև Բացարձակը կարող է թռչել՝ փարվելու համար հենց Ինքն Արային: Այն մինչև Երկրի ընդերք կգնա՝ Մայր Հողի մեջ իմ արմատն զգալու: ԵՎ այն կարող է դարեր թևածել՝ ճանաչելու համար իմ ծագումն Արի:

Փա՛ռք Հավատքին,

Փա՛ռք Ծագումին:

Օ՛հ, մի՞թե կա դրանից ավելի մեծ հավատ, քան զգալ հարազատ Հորը՝ հավատալ նրան, ով ինքն է իմ մեջ արարել իրեն: Իմ Հայրն ինձ համար ուժն է Բնության, Արի ծագումի հաստատումն իմ մեջ, արարիչն ուժի, կորովի, հույսի, երջանկաբեր պաշտպանության և ամենայն աստվածության: ԵՎ Հորս ձեռքերն են ինձ վեր բարձրացնում: Ես բարձրանում եմ վե՛ր, վե՛ր, վե՛ր... Հազարամյակներ են սահում իմ կողքով: ԵՎ հազարամյակների խորության միջից դիմացս են ելնում Նախնիները իմ: Ազգիս Նախնյաց Ոգիները Սուրբ՝ անհամար, անվերջ: Դեպի հավերժություն են իմ Նախնիք ձգվում, մինչև Արարիչ: ԵՎ հավերժության մեջ են արարել նրանք ինձ: Ո՛րեմն ես էլ հավերժից եմ գալիս, Արարչից եմ գալիս, և իմ

մեջ էլ հավերժության բույրը կա: Ես Արորդի եմ, ես աստվածամարդ եմ, և Արարիչն ինքն է արարել ինձ իմ նախնիների մեջ հենց Արարատում:

Փա՛ռք Հավատքին,

Փա՛ռք Արարատին:

Արին իր Բնօրրանում... Բնության պես վայրի, Բնության պես զորեղ ու համով... ԵՎ կարծես հենց հողից է բուսել, և խոր արմատներն են պահում նրան կանգուն: Իսկ ինչո՞ւ չէ: Չէ՞ որ ամեն հող չի կարող լինել Բնօրրան ինձ համար: Ես Արարատի ծիլն եմ բնական, ուստի ես այստեղ խոր արմատ ունեմ: ԵՎ ես զգում եմ իմ արմատն այս հողում:

Ես կանգնած եմ իմ հոր ուսերին, նա՛ ի՛ր հոր, նա՛ ի՛ր հոր... և այդպես անվերջ: Ես զորավոր եմ իմ արմատով: ԵՎ վա՛յ ինձ, եթե ես հանկարծ պոկվեմ իմ հոր ուսերից: Ես կկտրվեմ իմ բուն արմատից և իր արմատից կկտրեմ նաև ինձանից սերվող գալիք սերնդին: Չէ՞ որ իմ ուսերին էլ իմ որդին է կանգնելու, նրա ուսերին՝ նրա որդին... Նրանց ծանրությունից ես էլ եմ խրվելու Մայր Հողի մեջ, ուր իմ բազմատերունդ հայրերն են արդեն: ԵՎ քանի դեռ ես ամուր եմ կանգնած իմ հոր ուսերին, բացարձակ եմ ես ու հավերժ կանգուն: Հենց դրանով է Մայր Արարատը Բնօրրան ինձ համար, և հենց դրանով է կոչվում Արարատ, որ Արի արմատն է պահում իր կրծքում: Արարատում է իմ Արի Ցեղի Արմատը և... իմ: ԵՎ Արարատում է Արևշող Վահագնը իր Աստվածային Չորությանը իմ արմատը սնուն:

Փա՛ռք Հավատքին,

Փա՛ռք Վահագնին:

Կարելի՞ է, արդյոք, նայել Արեգին: Այո, կարելի է, եթե հավատում ես, եթե զգում ես: ԵՎ ես նայում եմ... Իմ աչքերի մեջ Արեգի ցուլքն է փայլում, ճաճանչները փունջ-փունջ գալիս են ու մխրձվում աչքերիս մեջ ու չեն անդրադառնում, մնում են այնտեղ, կուտակվում այնտեղ:

ԵՎ վերանում է Արեգը որպես գունդ: Լույսի, ջերմության մի հրավառություն է, որ գալիս է հեռվից՝ տիեզերական անհունությունից: ԵՎ այդ հավերժությունից մի հրեղեն կերպար՝ բոց մորուքով, հուր աչքերով՝ մոտենում է ինձ: Հրա՞շք է դա: Ոչ, ես չեմ հավատում հրաշքների, բայց

հավատում են բնականին, բնական զորությանը: ԵՎ այդ Ջորությունը Արեգի տեսքով մոտենում է ինձ: Ո՛ր կանգնում է իմ դիմաց Արևշող Վահագնը: Փարվում ենք իրար Վահագն ու ես, որպես հավերժից եկող հավերժական հարազատներ: ԵՎ Վահագն իր աստվածային լույսով ու ջերմությամբ սնում է ինձ:

Մի զորավոր հրավառություն է բռնկվում իմ մեջ՝ հրավառություն կյանքի, հավատի, սիրո, զորության: Աստվածային զորություն է կուտակվում իմ մեջ: ԵՎ ես ինքս սարսափում եմ իմ զորությունից:

Փա՛ռք Հավատքին,

Փա՛ռք Ջորությանը:

Աշխարհը մահվան Կրոններից պարտված, կյանքից հուսահատ, չարացած իր դեմ, մեծագոր Մահի փառքն է գովերգում, տաճարներ շինում, աղոթում, պաշտում Չարիի ստեղծած մահաբեր Աստծուն: ԵՎ մարդիկ այսօր մահից սարսափած, հենց մահի մեջ են փրկություն գտնում: Իսկ Մահվան Կրոնքին Վիշապն է հսկում: Անկուշտ իրանով Երկիրն օղակել, լափում է Ազգեր, Ցեղեր կործանում, սարսափ ու ավեր աշխարհում սփռում: ԵՎ Ազգեր թմրած, մահը երգելով, Վիշապի երախն են գնում մեռնելու: ԵՎ չեն հանդուրժում, թե մեկը չուզի կեր դառնալ նրան:

Է՛հ, ի՞նչ փույթ, թե Մահի զորության երկրպագուները հանդիսավոր խոնարհությամբ մահաբեր Վիշապի փառքն են գովերգում: Ես չեմ ընդունում Վիշապի գերազանցությունը: Ես Վահագնի մոտից եմ գալիս, Վահագնի հուրն ու զորությունն են բերում, Վահագն է օծել իմ թուր-կեծակին, խաչ-պատերազմին կապել իմ բազկին: Ես գալիս եմ Վիշապին հաղթելու: Վիշապաքաղ եմ ես և աշխարհը պիտի մաքրեն նրանից:

Թող որ մեծադղորդ պատերազմ լինի, թող սառցալեռները շիկանան, հալչեն, թող մինչև Երկինք ջուրը բարձրանա և ապա թափով Երկիրը ողողի, և Ջրհեղեղի տակ կորչեն Վիշապը և նրա երկրպագուները:

Հետո կկանգնեմ ազատն Արարատում, կնայեմ աշխարհի հանդարտված ջրին, դառը կժպտամ և ապա ձեռքերս դեպ Երկինք պարզած, կբացականչեմ.

- Ներիր ինձ, Ո՛վ, Հայր Արա՛, ներիր քո որդուն...
պարզապես իմ գործությունը շատ շատ էր այս փոքրիկ
հողագնդի համար:

Փա՛ռք Արորոյաց Հավատքին,

Փա՛ռք Արորդիներին:

ՉՈՆ ԲԱՅԱՐՉԱԿՈՒԹՅԱՆ

Ես՝ զգացական բացարձակություն, իմ զգացողությամբ Բացարձակն եմ զգում. զգում եմ Բնության էությունը ես, հասնում Արարչին նույն զգացողությամբ: Բացարձակը միայն կարելի է զգալ. այն ճանաչել երբեք չի լինի: Իմ դատողությունը հասու է միայն երևույթներին: Իսկ էությունը մենաշնորհն է լոկ իմ զգացողության: Քանզի էությունն է զգում էությունը, և բացարձակն է Բացարձակը զգում: ԵՎ որքան առավել եմ Բացարձակը զգում, այնքան առավել եմ հավատում նրան: Իսկ թե Բացարձակը փորձեմ ճանաչել, իմ բանականությամբ քննարկել նրան, ես կկտրվեմ հոգով նրանից, ես կկասկածեմ և՛ ինձ, և՛ նրան ու կխճճվեմ կեղծ ուսմունքների անհեթեթության մեջ:

Փա՛ռք Բացարձակությանը,

Մո՛ւժ Անհեթեթությանը:

Էս ի՞նչ են դարձրել մարդուն: Մարդն ապրում է մի ամբողջ կյանք և մի ամբողջ կյանք ներում է խնդրում ինչ-որ մի աստծուց՝ իր կատարած կամ չկատարած մեղքերի համար: Մարդը մշտապես մեղքե՞ր է գործում և դեռ մշտապես ներո՞ւմ է խնդրում, ինչ է՝ ձեռ է՞ առնում աստծուն: Եթե նա զգում է որ մեղք է գործում, թող էլ չգործի: Թե մեղք չի գործել, էլ ինչո՞ւ է նա ներում խնդրում: Ինչ է, մարդ մեղավոր է դեռ չճնվա՞ծ: Ո՞րն է նրա մեղքը: ԵՎ ինչո՞ւ նա ամբողջ իր կյանքում մեղքեր է զղջում, ներում աղերսում, որ Դրախտի Արքան գթառատ լինի ու փրկի հոգին: ԵՎ չես հասկանում Աստվածն է Արքա, թե՞ Արքան՝ Աստված: Թե Աստվածն է Արքա՝ Արարիչն է նա, և ինքն է իրենից արարել ինձ: Իսկ թե Արքան է ինքնակոչ Աստված՝ նվաճող է նա, դաժան տիրակալ՝ Չարի Վիշապի կողմից հաստատված՝ ազգեր գերելու, լափելու համար: ԵՎ ի՞նչ է ուզում: Որ ես չլինե՞մ: Ես մեղավոր եմ միայն այն բանում, որ կա՞մ աշխարհում: Ինչպե՞ս չլինեմ, երբ կամ, երբ ինձ Արարիչն է արարել և

արարել է հենց իր պես բացարձակ: ԵՎ թե բնական է Արարիչը իմ, բնական եմ և ես: ԵՎ Բնությունն ինձանով է հաստատում իրեն:

Փա՛ռք Բացարձակությանը,

Փա՛ռք Բնությանը:

Ես և Բնությունը... Ես եմ Բնությունը: Ես՝ Բնության բնական որակ, ես լրացնում եմ Բնությունն ինձնով: Բնությունն ինչպե՞ս կապրի առանց ինձ: Թե ես չլինեմ, թե սեր չլինի, Արև չլինի ու Երգ չլինի՝ էլ ի՞նչ Բնություն: Թե՞ կարծում ենք մենք, թե սերը միայն մարդուն է հատուկ: Թե սերը զգացմունք է՝ զգացական որակ, ապա կենդանին ու բույսն էլ սեր ունեն: Սերը հատուկ է կենդանի մարմնին: Իսկ Բնությունը: Արդյո՞ք կենդանի մի մարմին չէ նա: Չէ՞ որ անկենդան ամբողջության մեջ կենդանի որակ չի լինի երբեք: Ես Բնության մեջ կամ և կամ ես երգով, զգացմունքով, սերով... Է՛, թե կենդանի չէ մեր Բնությունը, էլ ինչպե՞ս է, որ սեր կա նրա մեջ: Սերը միայն հոգուն է հատուկ: ԵՎ հոգին կա հենց մեր Բնության մեջ: Ո՞րտեղից, ինչպե՞ս: Ուրեմն Բնությունն էլ հոգի ունի, ունի զգացմունք և միտք ունի: Ուրեմն Բնությունը մի ամբողջություն է՝ գուցե ինձ նման, կամ էլ ուրիշ կերպ: Բայց նա ինձ նման մտածել գիտի, գիտի ինձ նման սիրել ու թախժել: Կենդանի Ամբողջություն է Բնությունը մեր, Անսահման, Բացարձակ Ամբողջություն է նա: ԵՎ թե Բնությունը կենդանի մարմին է - զգացական է նա, ուրեմն նաև Արարող է նա:

Փա՛ռք Բացարձակությանը,

Փա՛ռք Արարողին:

Արարող Բնությունը Ինչ չէ, այլ Ով է: Նա Աստվածություն է: Ուրեմն Աստվածությունը ինձանից դուրս չէ: Նա իմ Ամբողջությունն է, իսկ ես՝ նրա մեջ բնական որակ: ԵՎ հետաքրքիր է՝ ինչպե՞ս է Աստվածությունը զգում մեզ բոլորիս ու կառավարում: Ինչ կա որ: Թե Աստվածությունը իմ Ամբողջությունն է, ես իմ էությանը նման եմ նրան: Ես էլ՝ բնական մի ամբողջություն, արարչական զորությամբ օժված, ես՝ Անսահման Աստվածության մեջ աստվածություն սահմանափակ: Իմ բջիջների ամբողջություն եմ ես և արարող բնություն նրանց համար: Ամեն բջիջին կապված եմ նյարդով:

Ամեն մի բջիջ իր նյարդով է զգում ինձ, և այդ նույն նյարդով ես զգում եմ նրան ու կառավարում: Ես էլ մի բջիջ Աստվածության մեջ, ես էլ իմ նյարդով կապված եմ նրան: Ո՛ր թե ես զգում եմ Աստվածությունը իմ, նա էլ ինձ է զգում և կառավարում: Աստվածությունը միաժամանակ իր բոլոր կենդանի որակներին է զգում: Իսկ կենդանի Աստվածության մեջ ամենը կան որպես կենդանի, զգացական որակ. և Հողագունդը իմ:

Փա՛ռք Բացարձակությանը,
Փա՛ռք Հողագնդին:

Հողագունդը մեր՝ կենդանի բջիջ, Մեծ Ամբողջության մաս է բնական: Զգացողություն ունի մեր Երկիրը, ունի մայրական քնքշանք ու նազանք: Երկիրը Հող է՝ Մայր է ծննդկան: Նա իր արգանդում Արարչի ցանած սերմերն է սնում: Մայրության տենչով, երկունքի ցավով գալարվում է նա և ապա ծնում բազում զավակներ: Թե՛ ծառ, թե՛ ծաղիկ, թե՛ մարդ, թե՛ գազան զավակն են Հողի, իսկ Հողը՝ նրանց Մայրը սիրասուն:

Ինչպես ամեն մայր, Հողն էլ է սիրում զավանք, գուրգուրանք, ժպիտ ու խնամք: Թե ես հարազատ զավակն եմ Հողի, թե զգում եմ արմատն իմ այդ Հողի կրծքում, թե պաշտում եմ նրա մայրությունը ես, թե պաշտպանում եմ օտար պղծումից և ակնածանքով խնամում նրան, նա բազում բարիք իր կրծքից հանում, ինձ է պարգևում: Իսկ թե ես իմ անբարո վարքով Հողի մայրական մարմինը պղծեմ, թե լլկեմ նրա հոգին նվիրյալ ու չպաշտպանեմ օտար պղծումից՝ Հողը կամլանա, ու կցամաքեն ստինքները նրա: Նա կխռովի, ցավից կռռնա ու... թող մարդն իմանա, որ Տեր չէ Հողին՝ ինքն է պատկանում այս Հողագնդին: ԵՎ պատկանում է Հողի այն մասին, ուր արմատն է իր: ԵՎ թե մարդը Բնության մեջ կա, նշանակում է՝ նա պիտի լինի, անհրաժեշտ է նա Բնության համար և անհրաժեշտ է հենց Երկրի վրա: Էլ Հողից հեռու ի՞նչ Արքայություն, ի՞նչ Դժոխք, ի՞նչ Դրախտ՝ սարսափ տարածող անհեթեթ հեքիաթ: Հողի վրա է մարդ: ԵՎ Հողի վրա միայն կարող է զգալ բացարձակությունը իր, զգալ և հավատալ...

Փա՛ռք Բացարձակությանը,
Փա՛ռք Հավատքին:

ՁՈՆ ԱՐԱՅԻՆ

Լույսը մարդու մեջ՝ Ցուլքն է Արայի: ԵՎ այդ լույսն իմ մեջ ժխտում է մութի խորհուրդը մռայլ և Աշխարհը բացում այնպես, ինչպես կա: Բյուր հրաշալիքներ պայծառ ու վսեմ իմ շուրջն են խաղում, ինձ հետ են խաղում: Ես էլ հրաշալիք՝ հրաշալիքների մեջ, ես էլ եմ խաղում անծայր Աշխարհում և հասնում մինչև հենց Ինքը՝ Արա՛ն: Ապա փարվում եմ Արայի կրծքին ու ձուլվում նրան: Իմ Արարիչն է նա, իմ հայելին է նա. ես ինձ եմ տեսնում նրա պատկերում: Նա ինձ է նման: Բայց նա նման է նաև բոլորին: ԵՎ բոլորի նման բնական է նա: Ես զգում եմ նրա զարկերը սրտի: Ես նրա կրծքի ջերմությունն եմ զգում: ԵՎ նա հենց իմ մեջ արարում է ինձ:

Փա՛ռք Արային,

Փա՛ռք Արարումին:

Արդյո՞ք արարումը ստեղծումն է նորի: Բա էլ ի՞նչն է իմ մեջ արարում Արա՛ն: Թե ես արդեն կամ՝ նա ինձ չի ստեղծում: Իսկ թե ստեղծում է՝ ուրեմն չկամ: Թե ես կամ, և Արա՛ն արարում է ինձ՝ իմ լինելիության հաստատումն է դա: Իսկ թե Արա՛ն նոր է ինձ ստեղծում՝ իմ լինելիությունն է ժխտվում դրանով: Ո՛րեմն Արարումը Ստեղծում չէ երբեք: Ո՛րեմն դրանք ժխտում են իրար: Որտեղ կա Ստեղծում՝ Արարում չկա: Էլ ի՞նչ Արարում, եթե ամեն ինչ նոր է ստեղծվելու: Ո՛րեմն հաստատ ոչ մի բան չկա՞: ԵՎ ընդհանրապե՞ս ոչինչ չկա: Ամենը պահի առկայությունն են լոկ: Ո՛րեմն Բնությունն է՞լ պատրանք է միայն, և ընդհանրապես Բնություն չկա՞: Ո՛րեմն հենց Ինքը՝ Արա՛ն է՞լ չկա: Բա էլ ինչը կա: Միայն Ոչի՞նչը կա: Ինչպե՞ս կարող է Ոչինչը լինել: Ոչինչը չկա, Ամենը կան: Կա Արարիչը՝ Բացարձակ Արա՛ն, կա Բնությունը՝ Հաստատուն Որակ: Արարիչը կա, Բնությունը կա. բայց Արարիչը նորը չի ստեղծում այդ Բնության մեջ: Ո՛րեմն Բնությունը իրո՞ք կատարյալ է: ԵՎ ոչ մի պակաս կամ ավել որակ նա չունի՞ իր

մեջ: Ես էլ մի որակ՝ կատարյալ՝ եմ ես: Ուրեմն Արա՛ն ի՞նչ է արարում, և Արարչագործությունն ի՞նչ է, վերջապես: Արարչագործությունը՝ է կատարյալ Բնության կատարյալ որակների անվերջ նորոգում: Բնության մասերն իրենց որակները միշտ նորոգելով են հավերժության մեջ պահպանում իրենց: ԵՎ Արարիչը հենց բացարձակությունն է անվերջ արարում Բնության բոլոր Տեսակների մեջ, միշտ նորոգելով Որակը նրանց:

Փա՛ռք Արային,
Փա՛ռք Որակին:

Հետաքրքիր է իրո՞ք իմ որակն այդքան անհրաժեշտ է Բնությանը, որ Արա՛ն անվերջ նորոգում է այն: Ես իմ որակով Բնությունն եմ լցնում: ԵՎ Բնությունն առանց ինձ թերի՞ կլիներ: Հակառակ դեպքում ինչո՞ւ է Արա՛ն ինձանով զբաղվում: Ուրեմն Բնության մեջ բնական Որա՞կ է ամեն մի Տեսակ և Բնությունն իրենո՞վ է լցնում: Այդքան բազմազան ու անթիվ Տեսակներ... բոլո՞րն են Բնությանն անհրաժեշտ, արդյոք: Թե նույնություն են որակները նրանց, էլ բազմազանությունն ո՞ւմ է հարկավոր և էլ ի՞նչ բազմազանություն: Ուրեմն բացարձակ նույնություն չկա: ԵՎ ամեն Տեսակ հատուկ Որակի կրողն է միայն: Ամեն մի Տեսակ իր առանձնահատուկ Որակը ունի և պետք է Բնությանը հենց այդ Որակով: ԵՎ Որակների այդ բազմազանությունն է արարում Արա՛ն և արարում է հենց այդ Որակները կրող Տեսակների մեջ: ԵՎ իսկապես՝ Արա՛ն ինչպե՞ս ինձ կարարի ինձանից դուրս: Թե իմ որակն է նորոգում Արա՛ն, ապա իմ որակի կրողն եմ հենց ես: Ուրեմն իմ արարումը իմ մեջ է լինում: Ուրեմն Արարչագործությունը վերացական չէ: Արա՛ն արարում է ամեն մի Որակ հենց այդ որակը կրողի ներսում և այդ Որակին համապատասխան Բնատեղի մեջ:

Փա՛ռք Արային,
Փա՛ռք Բնատեղին:

Հետաքրքիր է՝ ես որպես որակ իմ Բնատեղն ունե՞մ, թե՞ ես եմ որոշում իմ տեղն Աշխարհում: Ինչպե՞ս կլինի: Ինչ է, Բնության հարաբերությունները ե՞ս եմ որոշում, ե՞ս եմ որոշում իմ դերը այնտեղ, ե՞ս եմ որոշում իմ տեղն արարման և ե՞ս եմ իշխում Արայի վրա: Բնությունից դո՞ւրս եմ ես,

պատահական են ես: ԵՎ ամենն են պատահական: Էլ ի՞նչ
Բնություն, էլ ի՞նչ բնական հաստատուն որակ: Թե բնական
որակ են ես՝ իմ հաստատուն Բնատեղն ունեմ: Հենց այդ
տեղում ես իմ դերն ունեմ: Հենց այդ տեղում էլ ինձ զգում է
Արա՛ն ու միշտ արարում: Այս Երկրի վրա ամեն մի անհատ,
ամեն մի Տեսակ իր հաստատուն Բնատեղն ունի՝ իր արմատն
ունի որոշյալ տեղում: ԵՎ ամեն Տեսակ իր Բնատեղում է իր
դերը կատարում: Ամեն մի Տեսակ հարազատ Որակն է իր
Բնատեղի: Բնատեղից դուրս նա արմատ չունի, նա դեր էլ
չունի: Օտար Բնատեղն էլ անհարազատ արմատին սնունդ
չի տալիս: Էլ նրան ինչպե՞ս Արա՛ն արարի: Ամեն Տեսակին իր
Բնատեղում է Արա՛ն արարում, քանզի հենց այնտեղ է Արա՛ն
զգում նրան իր հատուկ նյարդով:

Փա՛ռք Արային,

Փա՛ռք Նյարդին:

Արան արարում է ինձ: Իսկ ե՞ս: Իմ արարմանը ես չե՞մ
մասնակցում: Ես Արային չե՞մ հարաբերվում: Ինչպե՞ս Արա՛ն
կարող է ինձ զգալ, եթե ես ինքս չեմ զգում նրան: Թե իմ
մարմնի մեջ մի մաս ինձ չզգա, ես ինչպե՞ս նրան զգամ: Թե ես
էլ չզգամ իմ Արարիչին, նա ինչպե՞ս ինձ զգա և ինչպե՞ս
նորոգի որակները իմ: Ուրեմն Արարչագործությունը իմ
զգացողության շնորհի՞վ է լինում: Ինչո՞ւ չէ: Թե Բնությունը
կենդանի ամբողջություն է՝ նա էլ ինձ նման իր նյարդերն ունի,
ունի նյարդային ամբողջ համակարգ, որով կապված է իր
Որակներին: ԵՎ նյարդային Համակարգը այդ՝ Արայի կամքի,
Ձորության, Մտքի... արարող Ուժն է բոլոր բնական մասերի
վրա: ԵՎ ամեն մի նյարդ կապված է միայն մի Տեսակի հետ.
ամեն մի Տեսակ իր նյարդը ունի: ԵՎ հենց իր նյարդով է նա
զգում Արային, և նույն նյարդով է Արա՛ն զգում նրան ու
կառավարում: Տեսակը չի կարող իր նյարդը փոխել, նյարդն էլ
երբեք Տեսակ չի փոխում: Եթե Տեսակը իր նյարդը չզգա,
ինչպե՞ս կարող է նա զգալ Արային, և ինչպե՞ս կարող է Արա՛ն
զգալ նրան: ԵՎ այդ Տեսակը զրկվում է արդեն իր
արարումից, և որպես Որակ տկարանում է նա: Նա պետք է
բուժվի: Արային կապվել ուրիշի նյարդով երբեք չի լինի:
Տեսակը պիտի իր Որակը զգա իր Բնատեղում ու իր նյարդը
զգա և հենց այդ նյարդով կապվի Արային: Դա է բնական:

Ապրել բնական, նշանակում է՝ ապրել Արայով: ԵՎ բնականով ապրող Տեսակին միշտ զգում է Արա՛ն ու միշտ նորոգում Որակը նրա. թե հիվանդ է՝ բուժում է նրան, թե տկար է՝ ուժ է ներարկում, թե վհատ է՝ կենաց ջերմությամբ սնում է նրան... և այդպես անվերջ արարչագործությամբ բացարձակությունն է հաստատում նրա:

Փա՛ռք Արային,

Փա՛ռք Բնականին:

ՁՈՆ ԱՆԱՀԻՏԻՆ

Դատարկ կլիներ Աշխարհը արար, թե Մայր չլիներ: Էլ ո՞վ պիտի Աստվածներ ծներ, էլ ո՞վ պիտի Արիով երկներ, ո՞վ պիտի չափեր ցավը Աշխարհի, գութը Աշխարհի ո՞վ պիտի ցաներ, ո՞վ պիտի սներ Սերը Գարունքի... Բայց էլ ի՞նչ Գարուն, թե Մայր չլիներ: Թե Մայր չլիներ, Հայրը ի՞նչ աներ: Գուցե իսկապե՞ս հենց ինքը Արան Մայրն է արարել Անահիտի մեջ ու հենց Մայրությամբ կերտել է նրան ու Ինքն առաջինն է նրան Մայր անվանել: Գուցե իսկապե՞ս Մայրը մայր չէ լոկ. Մայրը՝ ծնունդի խորհուրդ անծկալի, պտղաբերումի մի ամբողջ աշխարհ, գութի խնկարկում, հույսի պատարագ, սիրո մեղեդի, կարոտի խորան, երջանկության բույր: ԵՎ նրա Մայրությունը ինչի՞ց է կերտված՝ Աշխարհի բոլոր ցավերից մի փունջ, բոլոր սերերից մի ամբողջ հյուսվածք, հուզմունքից մի բուռ, երազներից սուսկումները լոկ, պատրանքների ծով... դա է Մայրությունը: ԵՎ այդ Մայրությամբ է հենց Մայրը կերտված, որպես հրաշալիք, հրաշք աստվածային՝ լինել երջանիկ տառապանքի մեջ: ԵՎ Անահիտը՝ ինքը տառապանք, ինքը Մայրացում, Մայր Աստվածուհին ամեն երկունքի, ամեն ծնունդի, ամեն քնքշության ու նվիրումի: ԵՎ Անահիտը հենց իր Մայրությամբ ինքն է պարզում բոլոր մայրերին Մայրացում որպես շնորհ աստվածային:

Փա՛ռք Անահիտին,

Փա՛ռք Մայրացումին:

Առանց երկունքի էլ ի՞նչ մայրացում: ԵՎ էլ ի՞նչ երկունք առանց ցավերի: ԵՎ այդ ցավերով Մայր Աստվածուհին հենց ինքն է երկնում, հենց ինքն էլ բոլոր մայրերի նման մանուկ է ծնում, հենց ինքն էլ բոլոր մայրերի նման երջանկանում է իր Մայրացումով:

ԵՎ Անահիտը՝ Մայրը բոլոր Արի մայրերի, իր Մայրացումով՝ մայրերի կողքին, ամեն երկունքին՝ անձամբ հովանի, անձամբ մասնակից՝ մոր ապրումներին, մոր

երագներին: Ինքն է երագներ տալիս մայրերին, պատրանքներ հյուսում նրանց երագում, հուզումներ հղում դառն ու հաճելի և իր Աստվածային Մայրության լույսից մի շող է գցում նրանց հոգու մեջ, սնում է նրանց աստվածայնությամբ, հենց իր Մայրությամբ, իր տառապալի երևակայությամբ, որ ինքն է հյուսում նախ իր իսկ հոգու մեջ իր մանկան համար: Որ ամեն մի մայր հենց իր մայրությամբ որդուն պարուրի սիրո կարոտով, տենչա, երագի, մտովի կորցնի, որոնի, ողբա, երկյուղած դողա և ապա գտնի, սեղմի իր կրծքին ու երջանկության արցունքներն առատ աչքերից թափի որդու մազերին ու ժպտա՛, ժպտա՛... Հենց դա է Մայրը, Մայրն Աստվածային: Այդքան տառապանք Աստվածներն, անգամ, չեն կարող տանել. լոկ Մայրն է տանում, ինքը՝ Տառապանք, ինքն՝ Աստվածային ընտանիքի Մայր:

Փա՛ռք Անահիտին,
Փա՛ռք Ընտանիքին:

Անահիտը՝ Մայրը բոլոր մայրերի, Տոհմի մայրերի մայրության պաշտպան:

Ամեն ընտանիք՝ Տոհմի մի մասնիկ, մի օջախ Տոհմի սերնդատվության: Թե սերունդ չկա, մայրացում չկա՝ էլ ի՞նչ ընտանիք: ԵՎ էլ ի՞նչ սերունդ, էլ ի՞նչ մայրացում ընտանիքից դուրս: Ընտանիքից դուրս ամեն մի ծնունդ՝ մի որբ անտոհմիկ, ընտանիքից դուրս ամեն մայրացում՝ չարիքի ծնունդ:

Մայրը մայրացումն է ընտանիքի մեջ՝ Տոհմածինն է մայրը: Տոհմը ծնող, Տոհմը սնող, Տոհմը պահող ու զորացնող մայրն է մայրը: Տոհմածառին սնունդ տվող ամենասուրբ հողն է մայրը: Մայր Անահիտը՝ հենց ինքն էլ մի Մայր, Տոհմի Մայր է նա՝ Արայի Տոհմի: Նա էլ է երկնում ու զավակ ծնում. բայց ծնում ո՛չ իր, այլ՝ Հո՛ր զավակին: Հայրը՝ սերմնացան. իր սերմի համար հող է որոնում՝ բերրի, պտղաբեր: Նա որդու համար մայր է որոնում:

Հայրն է պատասխանատու իր Տոհմի առաջ սերունդի համար: Հայրն է արարում սերունդն իր Տոհմի մոր արգանդի մեջ: ԵՎ մայրը իր մեջ սնում է, ապա ծնունդ է տալիս հենց հոր զավակին՝ Տոհմի զավակին: ԵՎ որդին երբեք ծնող մորը

չէ, մայրն է լոկ մայր ծնվող զավակին: Տոհմինն է որդին, Տոհմինը միայն, քանզի իր ոգու արարումն է նա, և նրա ծնունդը՝ վերածնունդ է լոկ իր իսկ Տոհմի մեջ: ԵՎ մայրն այնքանով է սուրբ ու պաշտելի, քանի զավակին՝ Տոհմի զավակին, Տոհմի մեջ ծնուն, Տոհմով է սնուն, Տոհմի զորությամբ որդուն զորացնուն և որպէս որդու հարազատ օրրան, հոր Տոհմն է սնուն, պահուն, պահպանուն: ԵՎ աճուն է որդին հպարտ և ուժեղ՝ իր տոհմը ունի, տոհմական է նա և աստվածային մորն է խնկարկում երանության մեջ:

Փա՛ռք Անահիտին,

Փա՛ռք Երանությանը:

Մայր Անահիտը ամեն ծնվողին՝ ժպիտներ ունի, ամեն հերոսին՝ համբույրներ ունի, ամեն մեռնողին՝ արցունքներ ունի:

Թե մանուկն իր անուշ քնի մեջ ժպտում է, ժպտում... այդ ո՞վ է նրա քունը օրորում, ո՞վ է սիրունիկ երազներ տալիս անմեղ մանուկին, այդ ո՞վ է նրան սիրալիիր ժպտում, և ո՞ւմ է ժպտում մանուկը քնած: Մայր Անահիտը, հենց մոր կերպարով, ճոճում է նրան քաղցր երազում, համբույրներ դրոշմում, օրոր է ասում աստղերից քաղած անուշ երգերով, ժպտում է նրան արևից պոկած հրե ժպիտով: ԵՎ քնած մանուկը ժպտում է սիրով, ժպտում երջանիկ՝ իր մորն է ժպտում, ժպտում՝ աշխարհին:

ԵՎ թե մայրերի որդիներն Արի մարտի են գնում Չարիի դիմաց, բոլոր մայրերի համբույրների հետ Մայր Անահիտի համբույրն է դրոշմվում նրանց ճակատին, բոլոր մայրերի օրհնանքների հետ Մայր Անահիտի օրհնանքն է ծփում:

Իսկ թե պատանին ընկնի քաջաբար ահեղ մարտի մեջ, մահացու վերքի ցավերից տնքա... ի՞նչ է երազում հերոսը մեռնող: Նա մայր է ուզում, իր մորն է տենչում, որ փարվի նրան իր վերջին շնչով, մանկան պես կաչի մայրական կրծքին, մոր արցունքներով իր վերքը լվա ու իր մոր գրկում հանգիստ քուն մտնի, և մայրն օրորի իր քունը մահվան: ԵՎ Անահիտը՝ Մայր Աստվածուհին, որ ամեն Արի մոր կերպարը ունի, մեռնող հերոսի աղերսը լսում, մայրական սիրով հասնում է նրան, գրկում ջերմագին, սեղմում իր

կրծքին, իր արցունքներով վերքը ողողում, համբույրով կնքում աչքերը նրա և մեռնող քաջի քունը օրորում: ԵՎ հերոսն Արի իր վերջին շնչով երջանիկ ժպտում՝ իր մորն է ժպտում Անահիտի մեջ ու երանելի մայրական գրկում աչքերը փակում, ոգիանում է սփոփված ժպիտով:

Փա՛ռք Անահիտին,

Փա՛ռք Սփոփումին:

Մայր Անահիտը՝ ոգու պահապան, ոգիների մայր: Թե մանուկն անմեղ այս կյանքից սպառված, մահով է կնքվում և ոգիանում... ԵՎ գուցե իրո՞ք գիշերը ամբողջ նա լաց է լինում, կարոտ է շնչում՝ մորից խռոված: Մայրն ի՞նչ իմանա, որ իր որդին կա, մեռած է, այո, բայց և այնպես կա, կա որպես աննյութ, լուսեղեն ոգի: Մայրն ի՞նչ իմանա, որ մեռած որդին մանուկ է՝ նման բոլոր ողջերին և ողջերի պես պահանջներ ունի: Որ նա էլ գիտի թախծել ու ժպտալ, նա էլ ողջի պես կարոտել գիտի, խռովել գիտի: Նա էլ ողջի պես խաղալ է ուզում, սիրվել է ուզում. նա էլ ողջի պես մայրիկ է ուզում...

ԵՎ Անահիտը իր գիրկն է առնում որբ ոգիներին, մայրական գութով գուրգուրում նրանց, որ էլ չլացեն կարոտի ցավից. իր իսկ ջերմությամբ սնում է նրանց, որ էլ չմրսեն ձմեռվա ցրտից. մայրական սիրով սիրում է նրանց, որ թեև ոգի՝ որբություն չզգան, մայրիկ ունենան, մայրական գգվանք, որ երջանկանան լուսափայլ ոգիք ու սիրեն, սիրեն բոլոր ողջերին, որ ժպտան սիրով մորը՝ երագում, գիշերը փարվեն հոր պարանոցին, խաղան հարազատ եղբայրների հետ: Իսկ թե սարսափած մայրը երագում վանում է նրան, որպես մահաշունչ աղետալի բոթ, Մայր Անահիտը, մանուկը գրկած, մոր մոտ է գալիս, որ մայրը տեսնի ժպտադեմ որդուն, համոզվի նրա լինելության մեջ, հավատա, որ նա շունչ չէ մահաբեր, այլ՝ անմեղ ոգի, որդին անմարմին՝ սիրո, կարոտի զգացմունքով լեցուն և... մայրը սթափվի, էլ չսարսափի ու սիրի նրան ողջ գավակի պես:

Փա՛ռք Անահիտին,

Փա՛ռք Սթափությանը:

ՁՈՆ ՎԱՀԱԳՆԻՆ

Արարիչը մեկն է, Աստվածները՝ շատ: ԵՎ բազմաստված է Աշխարհը համայն: Ամեն մի Աստված՝ Արայի Որդի, ամեն մի Աստված՝ Լուսեղեն Ոգի, ամեն մի Աստված՝ Եթերային ՌԺ: Ամեն մի Աստված իր Տեսակն ունի՝ իր Ցեղը ունի և իր Ջորությամբ սնում է նրան, կապում Արային: ԵՎ ամեն Աստված նյութեղեն տեսքով կարող է ծնվել հենց իր Ցեղի մեջ՝ իր Ցեղի համար:

Երկնի ու Երկրի ամեն երկունքից Վահագն է ծնվում հենց Արարատում: Վահագն՝ Աստվածն իմ Արի Ցեղի, ամենաահեղ Որդին Արայի, ամենագորեղ Աստվածն Աշխարհի, քանգի արարման Աստվածն է միակ, իսկ արարումը շատ է զորավոր ոչ արարումից: Վահագն՝ անհուն Տիեզերքի մեջ՝ Տիեզերական ՌԺ, Արեգների մեջ՝ Հուր Արեգակեց, Լուսաստղերի մեջ՝ Լուսի կենսադբյուր, Ոգիների մեջ՝ Ոգու վեհություն, Աստվածների մեջ՝ Ջորության Աստված: ԵՎ իր Ջորությամբ, Լույսով, Արևով սնում է անվերջ իմ Ցեղը Արի՝ նրա հոգու մեջ հավատը վառում, բազուկը նրա՝ հաղթությամբ կռում, շանթերով հյուսում հայացքը նրա, սրտում Արեգից բեկորներ ցանում, արարող ոգին՝ հրով շաղախում, որ Արին և՛ իր արարումը կերտի, և՛ այն պահպանի քանդող Չարիից: Վահագնը ինքը երբեք չի մտնում մարդկանց կռվի մեջ՝ մարդերի դիմաց նա ինչպե՞ս կռվի: Նա մեծամարտում է Աստվածների հետ՝ լինի Երկնքում, թե Երկրի վրա: ԵՎ եթե հանկարծ Չարիի Աստված՝ Վիշապի տեսքով Երկիրն է պղծում, Երկնի ու Երկրի ահեղ Երկունքից Վահագն է ծնվում:

Փա՛ռք Վահագնին,

Փա՛ռք Ծնունդին:

Երկնի երկունքից, Երկրի երկունքից և ծիրանագույն ծովի երկունքից ծիրանի ծովում եղեգն է երկնում: Եղեգան փողից ծուխ է ելանում, եղեգան փողից բոց է ելանում՝ Հուր աստվածային, երկինք է ձգվում, հասնում Արեգին և

միախառնվում Արեգի բոցին: Արեգը Երկնից կրակ է ցայտում ճաճանչների տեղ, բազում Կայծակներ իրար են խաչվում հոշոտում երկնի կապույտը լազուր, Որոտն է ահեղ արծազանք տալիս Աստղերից վերև: Երկունքի ցավից Երկիրն է տնքում, հողն է կտրատվում ուժգին ցնցումից, ու Երկրի խորքից՝ հրաբուխ ժայթքում, ծովն է փոթորկվում ծիրանի ներկված, և հուժկու ալիք ահեղ ոռնոցով գրոհում են Մայր Ցամաքի վրա: Բազում կույս Աստղեր պսակ են հյուսում ծնվող Վահագնին, բյուր Արեգակներ Կայծ-Թուրն են կռում Վահագնի համար, իսկ Արեգը մեր՝ հենց իր մեջ ծուլում Խաչ-Պատերազմին: Մայր Արարատում Եղեգան փողից Հուրը Երկունքի Տրնդեզվում է խարույկների մեջ, և Աստվածային Երկունքի Հուրից հարսներն են երկնում՝ երկնում Վահագնով, ու Վահագնանման Արի մանուկներ ծնունդ են առնում հենց այդ կրակից:

Երկնի ու Երկրի միաձույլ բոցից Վահագն է ծնվում Հրե Պատանի: Նա հուր հեր ունի, ապա թե բոց ունի մորուս և աչկունքն են արեգակունք: Ցնծա՛ բյուրվիշապ Արարատ աշխարհ՝ Վահա՛գն է ծնվում՝ փրկության Աստված, Վահա՛գն է ծնվում Որդին Արայի, Վահա՛գն է ծնվում Ջորության Արքա. մեր Երկրի համար՝ ուժի ներշնչանք, Արեգի համար՝ հրո գորություն, Աստղերի համար՝ լուսե պատանի, Լուսնյակի համար՝ սիրո մեղեդի, Երկնքի համար՝ սիրասուն մանկիկ, Արիի համար՝ հրեղեն եղբայր, իսկ Վիշապի համար՝ դաժան ախոյան, նա՛ Վիշապաքաղ:

Փա՛ռք Վահագնին,

Փա՛ռք Վիշապաքաղին:

Աստվածների մեծամարտ մեր Երկրի վրա՞, մարդկանց զարմացած աչքերի առա՞ջ: Նյութեղեն տեսքով ահեղ Աստվածներ՝ դաժան, անզիջող... Վիշապը Չարի՛ բազում զանգերով, արնոտ աչքերով, և թույն է ցայտում իր պիղծ երախից. Վահագն Արի՛ Հրե Պատանի, Արև աչքերով, բոց է ու կրակ և բոցը ձեռքին՝ իր Թուր-Կեծակին: Վահագն ահեղ շանթեր է սփռում իր հուր աչքերից, խավարն է ցրում, ասպարեզ կանչում Չարի Վիշապին՝ ճակատ առ ճակատ մեծամարտելու, ինչպես վայել է հենց Աստվածներին: Վիշապը թունոտ՝ Չարիի Աստված, ոռնում է ահեղ՝ ի տես

Վահագնի, մահվան սարսափով գալարվում է նա Երկիրը գրկած, կատաղած ուզում Երկիրը խեղդել իր վերջին շնչով... բայց շունչն է փչում: Վահագն Արի՝ Ջորության Աստված, հուժկու զարկերով գանգերն է փշրում այդ պիղծ Վիշապի, Երկինք է զցում մարմինը նրա, որ Արեգակները գարշանքը նրա այրեն կրակով, իսկ պղծունը նրա մեր Երկրի վրա մաքրում է ջրով՝ Մեծ Ջրհեղեղով: ԵՎ Ջրհեղեղը վերջ չէ Աշխարհի, այլ սկիզբն է նրա՝ Գարունը Երկրի Կենաց Գոտու մեջ: Գարունն է, Գարուն... Կյանքն է խտանում իր Արմատների մեջ ու... նորից ծնում ու նորից ծաղկում, նորից արարում... ԵՎ արարող Արին իր Արարատում՝ իր Արմատի մեջ նորից է կերտում, նորից՝ զորանում և ապա նորից, հենց Արարատից տարածվում չորս դին: ԵՎ Վահագնը Ահեղաշունչ՝ Ջորության Աստված, իր Ջորությունն է Երկնքից սփռում Արեգի տեսքով, որ Երկրի վրա խավարը չիշխի ոճրային տենդով:

Փա՛ռք Վահագնին,
Մերժո՛ւմ խավարին:

Էս ի՞նչ է՝ նորի՞ց խավարն է պատել ողջ Երկիրը մեր, նորի՞ց Չարիի ավերն է իշխում մեր Երկրի վրա: Գուցե իսկապե՞ս Աստված Չարիի՝ Վիշապի տեսքով նորից է ծնվել ու նորից բազմել մեր Երկրի վրա, թույն ու պղծություն սփռել ամեն տեղ: Վիշապը Չարի՝ խավարի Արքան, մահվան Կրոններով, մահվան սարսափով Երկիրն է տիրում, Չարի պղծությամբ Երկիրն է պղծում: Արյունի ծարավ երախը բացած, լափում է, լափում Արի սերունդներ: Գլուխը դրած հենց Արարատում, սուր ժանիքներով Մայր Արարատի արգանդն է կրծում, որ վերջնականապես սերմերը լափի իմ Արի Ցեղի՝ Երկիրը գրկի Ստեղծումի ոգուց: Չարին է ցնծում ի տես Վիշապի՝ խաչում է մարդկանց, խաչում է ազգեր, խաչում է նաև Արարատը մեր: ԵՎ Արարատում խաչում է ոչ թե միայն ողջերին. մեռածներին էլ է նա նորից խաչում, զուցե համոզված, որ Հայի համար միայն մի մահը բավական չէ դեռ, որ Հայը բազում մահերից հետո էլի չի մեռնում: Արնոտ խրախճանք է իմ Արարատում՝ խրախճանք Վիշապի և Չարի ամբոխի: Է՛, լավ, հասկացանք՝ Չարին բնությամբ ավերող և բութ: Բա նրա Աստված՝ Բա նա չգիտի՞ Վահագնին զորեղ.

նա մոռացել է ուժը Վահագնի, որ բազում անգամ պատռել է նրա երախը թունոտ. չի՞ հիշում, արդյոք, որ հազարավոր տարիներ առաջ հենց Երկրի վրա Վահագն Ծնվեց և իր Ջորոթյամբ տապալեց նրան: Բա նա չգիտի՞, որ Տիեզերական Երկունքի ցավից Վահագն նորից պիտ ծնունդ առնի և նորից պիտի ջախջախի նրան: Բա նա չգիտի՞, որ ինքն իր ձեռքով իր մահն է նյութում: Այդքան էլ անմիտ Աստված՞ կլինի, այդքան անտաղանդ պարտվո՞ղ կլինի: Թե՞ հազարավոր անգամ ջարդվելով, նորից ինքն իրեն անպա՞րտ է կարծում: Թե՞ կարծում է նա՞ խավար սփռելով հենց Երկրի վրա, Վահագնը նրան չի՞ տեսնի երբեք: Հապա Արև՞ը:

Փա՛ռք Վահագնին,

Փա՛ռք Արևին:

Հապա Արև՞ը՝ աչքը Վահագնի, որ ամեն խավար, մթություն ճեղքում և լույս է սփռում Աշխարհի վրա: Հապա Արև՞ը՝ Խաչ-Պատերազմին Վահագնի բազկին՝ շանթեր արձակում Վիշապի վրա: Հապա Արև՞ը՝ սերը Վահագնի՝ հավատ է բուրում Արի քաջերի հոգիների մեջ: Հապա Արև՞ը՝ անաչառ վկան Չարի Վիշապի չարագործության: Վիշապը Չարի չգիտի՞, արդյոք, որ իր ոճիրը գործելուց առաջ, նախ պետք է Արևը Երկնից ցած բերի: Կարո՞ղ է, արդյոք, այդքան ուժ ունի՞: Նա՞ որ ինքն է Արևից փախչում, նա՞ որ հենց ինքն է լույսից թաքնվում Երկրի ծերպերում, մահվան երկյուղով սարսափում է նա Վահագնի տեսքից՝ ինչպե՞ս կարող է Արևը մարել:

ԵՎ քանի Արևը շողում է Երկնում, Արի մայրերը՝ Վահագնով երկնում, Արի են ծնում, աղջիկները՝ կույս երազների մեջ Վահագն են տեսնում, Արի պատանիք՝ Արևին թիկնած՝ Վահագնով շնչում, լուսերես մանկտիք՝ Արևից շիկնած, Վահագն են երգում, նախնիները մեր՝ լուսեղեն ոգիք՝ Վահագնին փարվում, Մասիսը հպարտ՝ Երկինք խոյացած՝ Վահագնին սպասում, Արարատը Մայր՝ Արևին գրկած, Վահագն է կանչում: Վահագն են կանչում բոլորը մեկ տեղ, հավատքով սպասում մի նոր Երկունքի, մի նոր Ծնունդի Հրե Վահագնի: Աչքերը հառած բարի Արևին... Արևը մեր մեջ՝ Բարև՝ Վահագնին:

Փա՛ռք Վահագնին,
Փա՛ռք Բարև՛ին:

ՁՈՆ ԱՍՏՂԻԿԻՆ

Պատանեկություն՝ Գարունն Աշխարհի: Բնության Գարուն՝ հորդառատ անձրև, արև հրաշունչ, աստղունք ժպտերես, ամպեր մթամած, կայծակ ու որոտ և կապույտ, մաքուր, լուսաշող երկինք ու ապա... երկունք: Բնության նման Գարունը մարդու՝ Պատանեկություն՝ ժպիտ ու արցունք, հավատ ու թախիծ, ուրախություն, խռովք, երազանք, ապա... հարսնացում:

Գարունը Պատանեկություն է, Պատանեկությունը՝ Սեր: Գարունն առանց Սիրո էլ ի՞նչ Գարուն. էլ ինչպե՞ս երգի սոխակն անտառում. առվակն էլ ինչպե՞ս կայտառ կարկաչի, էլ ինչպե՞ս քամին խելագար թռչի, արևն էլ ինչպե՞ս ժպտա աշխարհին, լուսինն էլ ինչպե՞ս կարոտով թախծի... թե Սեր չլինի: Էլ ինչպե՞ս երկնի մայրը մայրացող, էլ աղջիկները ինչպե՞ս հարսնանան, ինչպե՞ս խիզախի պատանին Արի, ո՞ւմ համար կռվի, նա ո՞ւմ պաշտպանի և թե վիրավոր՝ հողն ինչպե՞ս գրկի... թե Սեր չլինի: Ինչպե՞ս արարի արարող Արին, Ստեղծումի ոգին ինչպե՞ս պահպանի և գորությունը իր ինչպե՞ս գորացնի... թե Սեր չլինի: Թե Սեր չլինի, սեր ինչպե՞ս լինի: Սիրո Դիցուհի Աստղիկը վկա՝ թե նա չլինի, Սեր ինչպե՞ս լինի:

Փա՛ռք Աստղիկին,

Փա՛ռք Սիրուն:

Սեր և Ջորություն՝ հենց շնորհն Արայի: Սեր և Ջորություն՝ Գարունն Աշխարհի, խորհուրդը բարու և արարումի: Սեր և Ջորություն՝ ուժ լինելության՝ իրար լրացնող և իրար կերտող՝ իրարից անկախ լինել չեն կարող: Ջորությունն առանց Սիրո զգացումի՝ ինքը կործանող. առանց Ջորության՝ Սերն է կործանվող: Սիրո և Ջորության միասնությունն է լոկ խորհուրդը կյանքի: ԵՎ թե Վահագն՝ Ջորության Աստված, Աստղիկ Դիցուհին Սերն է Ջորության, Սերն է Գարունքի՝ պճնված կուսական ճերմակ շղարշով,

վառվելով իր սուրբ շողերի միջին, Սեր է ճառագում՝ սիրո ջերմություն և այդ ջերմությամբ հույզեր է վառում, արցունքներ քանում, թախիծ արարում, հոգևոր խռովք ու տառապալից երջանկություն պարգևում սիրող պատանուն: Թե նույնիսկ պատանին Վահագնը լինի: ԵՎ Վահագն ինքը՝ թեև Հրեղեն, թեև ինքն Աստված, ինքը՝ Պերիզոր, շանթեր արձակող, ամպրոպներ սանձող, Վիշապներ քաղող... Աստղիկի սիրուց ինչպե՞ս պաշտպանվի՝ նա էլ է ընկնում սիրո որոգայթ: ԵՎ մանկան նման շիկնում է, վառվում, սիրուց խենթացած՝ իրար է խառնում երկինք ու երկիր, սիրտը սիրավառ՝ վարդի պես բացվում՝ մեղմ ու քնքշալի և պարուրում է Արարատը ողջ՝ և՛ ծառ, և՛ ծաղիկ, և՛ մայր, և՛ մանուկ, և՛ հարսներ չքնաղ, և՛ կույս Աստղիկին: ԵՎ Սիրով օծված հույզը Ջորության հորդում է նրա հրե աչքերից, և Վիշապի դեմ մարտի է ելնում հանուն ժպիտի, հանուն կարոտի, հանուն հարսնության և մայրացումի, հանուն սրբության և արարումի: ԵՎ ո՞վ կարող է Վահագնի դեմ կանգնել, երբ նրան սիրում է Աստղիկը չքնաղ՝ Դիցուհին Սիրո և Պերիզորի:

Փա՛ռք Աստղիկին,

Փա՛ռք Պերիզորին:

Պերիզորից դուրս ի՞նչ Պերիզորություն: Պերիզոր ինքն է, իսկ Պերիզորությունը՝ Պերիզորի արտացոլումն է մեր հույզերի մեջ: Պերիզոր Պերիզորության հույզեր է ծնում, Պերիզորությունը՝ Սեր: Պերիզորը՝ հենց ինքը բնական, ինքն ամբողջական, ինքը համաչափ, ինքն աստվածային Սիրո արարում, ինքը՝ Բնությունն ամբողջության մեջ և նրա պատկերը Աստղիկի տեսքով: Առանց Աստղիկի էլ ի՞նչ Բնություն, առանց Աստղիկի էլ ի՞նչ Պերիզոր, ի՞նչ Պերիզորություն: Թե ուզում ես Պերիզորը տեսնել հենց Բնության մեջ՝ նայիր Աստղիկին և թե ուզում ես ողջ Պերիզորությունը հոգուդ մեջ կերտել՝ սիրիր Աստղիկին: Աշխարհի բոլոր Պերիզորներով է Աստղիկը կերտված՝ արևից մի շող, լուսնյակից՝ թախիծ, աստղերից՝ ժպիտ, մաքրություն՝ երկնից, հուզմունքը՝ երկրից, նազանքը՝ հովից, հառաչը՝ հողմից, կարկաչը՝ արվից, անձրևից՝ արցունք, դաշտերից՝ հեզանք, լեռնից՝ հպարտանք...

ԵՎ Գեղեցիկը հենց իր մերկությամբ՝ Մշո գետի մեջ Աստղիկը չքնաղ լոգանք է առնում: Արի պատանիք սիրով արբեցած, դիտում են նրան թփերի միջից: ԵՎ Գեղեցիկը այդ՝ Աստղիկ Դիցուհին, ճառագում է վառ իր Գեղեցկությամբ և սեր է երկնում մատաղ սրտերում: ԵՎ պատանիները սիրում են, սիրում՝ սիրում Աստղիկին: Բայց ինքը՝ Աստղիկը, Վահագնին է սիրում: ԵՎ սիրող աչքերից ծածկում է իրեն վարդ մշուշի մեջ՝ Դիցուհին ինքն էլ կույս է պատվասեր՝ Վահագն, անգամ, հարսնացումից ետք կարող է տեսնել մարմինը նրա, ուրիշ ոչ մի այր՝ թեկուզ ոչ աստված: ԵՎ Գեղեցիկը՝ մշուշի միջում: ԵՎ պատանեկան հույզերն են շիկնում Սիրո Աստղիկին տեսնելու հույսով:

Փափք Աստղիկին,

Փափք Հույսին:

Էլ ինչպե՞ս սիրի պատանին Արի, թե Աստղիկ չլինի, թե Աստղիկը Գեղեցիկ չլինի, թե Աստղիկն իր հետ վառ Սեր չբերի, սերը չվառի նրա սրտի մեջ, նրա հույզերում կարոտ չարարի: Ամեն պատանի Աստղիկին սիրում, փնտրում է նրան, ում կորցրել է վարդ մշուշի մեջ: ԵՎ սերը սրտում, պատկերը նրա՝ աչքերի առաջ, որոնում է նա կորած Աստղիկին՝ սրտի դիցուհուն, որոնում է նա Արի մանկամարդ աղջիկների մեջ: Ամեն մի աղջիկ իմ Արի Ցեղում՝ գեղեցիկ Աստղիկ, ամեն մի աղջիկ պատկերը ունի Աստղիկ Դիցուհու, նագանքն Աստղիկի ունի նա իր մեջ, Աստղիկի սիրո անուրջը ունի և Վահագնին գերելու կրակը ունի:

Աստղիկին է սիրում ամեն պատանի, Աստղիկն էլ սիրում է միայն Վահագնին: ԵՎ ամեն աղջիկ՝ ամեն մի Աստղիկ՝ Վահագնին սիրում, նրան է տեսնում և Արի Ցեղիս տղաների մեջ՝ Վահագնին փնտրում... Ամեն մի աղջիկ Վահագնի սիրով աղոթք է անում Սիրո Դիցուհուն, որ օգնի իրեն՝ գտնել Վահագնին ու սեր արթնացնի Վահագնի սրտում: Աղոթք է անում Աստղիկ Դիցուհուն պատանին սիրող, որ իր երագում հայտնվի սիրով, որ սիրի իրեն Աստղիկը սիրած: Աստղիկը չքնաղ՝ Սիրո Դիցուհին, որ սեր է վառել մատաղ սրտերում, սիրում է նրանց սերը լուսափայլ՝ լույսի պես անկիրք, մաքուր ու ազնիվ... և օգնում նրանց՝ գտնելու իրար: Աստղիկ Դիցուհու Սիրո օրհնությամբ գտնում են իրար

Վահագն ու Աստղիկ: Վահագն է շնչում ամեն պատանի, Աստղիկ է բուրում ամեն մի աղջիկ: Ամեն պատանի սիրած կույսի մեջ Աստղիկ է տեսնում և սիրում նրան: Աղջիկն էլ սիրած պատանյակի մեջ Վահագն է տեսնում և սիրում նրան: Աստղիկ Դիցուհին իրար է կապում սրտերը նրանց վարդաբույր ցողով ու Վարդավառով:

Փա՛ռք Աստղիկին,

Փա՛ռք Վարդավառին:

Թե Չարի Աստված մոլեգնում է դեռ Արի Ցեղիս մեջ և հոգին նրա սրսկում թույնով, և թունավորված Արի պատանիք հոգին են հանձնել Չարի Աստծուն... Թե հուսալքված աղջիկներն Արի էլ չեն հանդուրժում ո՛չ սեր, ո՛չ պատիվ, ո՛չ հույզ, ո՛չ նազանք. թե աղջիկները էլ չեն կարոտում, էլ չեն նվիրվում, էլ չեն հարսնանում մայրության համար... Պատանին Արի թե էլ չի տենչում, էլ չի խենթանում, սիրո, կարոտի երգեր չի հյուսում, սիրո զորությամբ չի թռչում երկինք ու չի երագում հայրության համար... Այդպես կլինի՞: Առանց սիրո էլ ի՞նչ պատանի, էլ ի՞նչ գեղեցիկ ու գեղեցկություն, կյանքի ի՞նչ գարուն: Թե սեր չլինի, Աստղիկ չլինի, թե չհավատա պատանին նրան և թե չաղոթի իր սիրո համար Աստղիկ Դիցուհուն՝ էլ ի՞նչ պատանի: Աստղիկը միայն՝ Սիրո Դիցուհին, Վարդավառ սարքում՝ վարդեր է ցանում գարուն սրտերին, վառում է նրանց արևի հրով, վարդ-ջուր է ցանում աչքերին նրանց: Շրջում է ամբողջ Արարատը նա և աստվածային երգերով սիրո՝ կույս աղջիկներին իր շուրջը առնում, սեր է ներշնչում, սեր է արարում մատաղ սրտերում ու վարդաջրով սափորի միջից գուշակում է նա ծաղկունքը նրանց: Աստղիկ Դիցուհին Վահագնի սիրով շրջում է տներ և ամենուրեք սիրո երգերով, վարդով ու ջրով օծում է մարդկանց՝ թե՛ ծեր, թե՛ մանուկ և թե՛ պատանի: Աղջիկները կույս՝ սիրով բորբոքված, հենց Աստղիկի հետ, Աստղիկի նման մարդկանց են բաշխում կուսական ժպիտ. անարատ, մաքուր ու անմեղ սիրով՝ Վահագնին կանչում սիրո մրցության: Արի պատանիք՝ ի տես Աստղիկի, ի տես բազմաթիվ սեր Աստղիկների, սիրո զորությամբ վառվում են նորից և հրդեհվում են սիրո կարոտով. արև են քաղում երկնի կապույտից, փնջեր են

կապում քնքուշ աստղերից՝ սիրած Աստղիկի սիրո խոստումին որպես վառ պսակ: ԵՎ Սեր է շնչում իմ Ցեղը Արի, Սեր է թևածում Արարատով մեկ... Սիրով են տենչում, սիրով են երկնում, սիրով են ծնում և նույն այդ սիրով՝ գուրգուրում իրար: Մանուկը սիրով իր մորն է գգվում, իր հոր արևին փարվում է սիրով, եղբայրն իր եղբոր աչքերին նայում՝ հավատի սիրով, աղջիկները կույս գտնում են իրենց սրտի Վահագնին ու երջանկանում հարսնության քողով... ԵՎ միայն Աստղիկը՝ Սիրո Դիցուհին, Վահագնի սիրով, հարսնության տենչով՝ դեռ սպասում է նա Հրե Վահագնի մի նոր ծնունդին:

Փա՛ռք Աստղիկին,

Փա՛ռք Հարսնացունին:

ՉՈՆ ԱՐՏԱՎԱԶԴ ՄԻՀՐԻՆ

Բացարձակ է Արարիչը մեր, բացարձակ է և ամեն արարված ամբողջ Աշխարհում: ԵՎ բացարձակը Արտով է կերտվում: Արարչից բխող Տիեզերական Օրենքն է դա, որ պահպանում է բացարձակությունը ոգու, ծագումի ու արարումի: Արարչի կամքով Միհրը բյուրացյա՝ ինքն Արտի Աստված, ինքը Արտավազդ, ինքն է հաստատում Օրենքը Արտի բարձր երկնքում ու երկրի վրա: ԵՎ գիշեր-ցերեկ հսկում է անվերջ Արտի կիրառումը տիեզերական անհունության մեջ:

Փա՛ռք Միհրին,

Փա՛ռք Արտին:

Արդարը՝ Աստվածային Արտի խորհուրդն է մեր մեջ: ԵՎ հենց ըստ Արտի՝ բացարձակն է արդար: Իսկ բացարձակ է զորությունը լոկ: Ջորությունների հարաբերություն է Բնությունն արար՝ Արտի Օրենքով: Իսկ տկարությունը՝ Արտից կտրված անօրինության ծնունդ է միայն:

Թե կյանքում չապրես Արտի Օրենքով, ինքդ կամավոր լքես Միհրին ու կյանքդ կապես կեղծ օրենքներին. թե ինքդ մերժես Արարչից տրվող, Արարչից սնվող հուրը քո հոգու, ուժը քո բազկի, լույսը արևի. խավարով սնես քո հոգին անվերջ, ինքդ ուրանաս քո ծագումն անգամ, օտար զորությանց դու երկրպագես՝ ինչպե՞ս պահպանես զորությունը քո: Դու կտկարանաս և քո թուլությամբ՝ մաղձը քո հոգու կցայտես քո շուրջ և հենց քո վրա: Ջորավորն է լոկ ապրում արդարով, զորավորն է լոկ վառ սիրով ապրում: Իսկ թույլը միայն կարգախոս ստեղծում՝ կարգախոս սիրո, արդարի, բարու... բայց ինքն՝ անարդար, ինքը՝ չսիրող, ինքը՝ ոչ բարի... ԵՎ տկարությունը ոճիր է արդեն, և անօրինությունն է օրենքը թույլի:

Փա՛ռք Միհրին,

Նզո՛վք Անօրինությանը:

ԵՎ Արարչական կամքին հակառակ, Արտավազը Միհրի աչքերից հեռու, աշխարհի խավար, մութ ծերպերի մեջ, Չարի թունավոր շնչով արբեցած, անօրինություն նյութեցին մարդիկ՝ անօրինություն օրենքի ձևով: ԵՎ տկարները իրենց իսկ վախից հորինեցին օրենքներ բազում՝ օրենք ոճիրի, օրենք բռնության, օրենք պատժելու... ԵՎ մարդը մարդուն պատժում է անվերջ: Մեկը դատող է, իսկ մյուսը՝ դատվող: Դատողը դատում է, դատվողը՝ դատվում, ու երբեք նրանք իրար չեն նայում: Դատողը դատում է իր արդարությամբ, դատվողը դատվում է իր արդարությամբ: ԵՎ չես իմանում, թե ո՞վ է արդար՝ դատողը, թե՞ դատվողը: Էլ ի՞նչ տարբերություն նրանց միջև՝ միայն ա՞յն, որ դատողը իրավունք ունի դատելու միայն, իսկ դատվողը՝ միայն դատվելու: Իսկ ի՞նչ կլիներ, եթե դատելու իրավունքը դատվողը ստանար: ԵՎ ո՞վ է արդար՝ դա էլ կորոշի մեկ այլ դատող, որը կդատի երբեմնի դատողին:

Բայց լավ չէ՞ր լինի՝ օրենք չստեղծեին, այլ Աստվածային Արտով ապրեին դատող ու դատվող: Արտի Օրենքով դատողը դատեր, Արտի Օրենքով դատվողը դատվեր, և էլ չլինեին դատող ու դատվող: ԵՎ մեկը մյուսի լույսը չմարեին, այլ իրար բաշխեին լույսը արևի:

Փա՛ռք Միհրին,

Փա՛ռք Լույսին:

Արտավազը Միհրի լույսով միայն մենք կազատվենք անօրինությունից ու կապրենք Արտով: Անօրինությունը ուժն է խավարի, իսկ Արտը միայն լույսով է պահվում: Արտավազը Միհրն է լույսը առաքում մարդկանց աչքերին, հոգիները մեր օժում արևով: Լույսով է Միհրը հաղթում մարդկանց մեջ մաղձը չարության, պատրանքը մահի, ուժը խավարի:

Արևի լույսով մարդը կտեսնի իր հարազատին և լույսով միայն նրան կճանաչի: Չէ՞ որ խավարում չենք տեսնի երբեք գույնը թիթեռի, երանգը ծաղկի չենք տեսնի երբեք, չենք տեսնի նաև ժպիտը մարդու: Խավարի մեջ գորշ է ամեն ինչ, մռայլ ու տհաճ: Հենց այդ գորշությամբ իրար են նայում, չարանում վախից և օրենք նյութում՝ իրար պատժելու: Լույսով է միայն գույնը երևում, ամեն գեղեցիկ լույսն է մատուցում, մարդու ժպիտն էլ լույսով է բացվում: Միհրի տված լույսով

ենք միայն մենք տեսնում մարդուն՝ նրա հոգեկան արժեքները վեհ, ժպիտը դեմքի, կարոտը հոգու, թախիծը սիրո, փայլը աչքերի... ԵՎ այդ բոլորով ի՞նչ լավն է մարդը՝ որքա՞ն գեղեցիկ, որքա՞ն հարազատ: Ժպտում ենք իրար հարազատորեն և այդ ժպիտով արարում մեր մեջ բարի միտք, բարի խոսք, բարի գործ: ԵՎ այդ բարի ուժով ենք մենք նայում իրար, բարևում իրար և ուխտում իրար:

Փա՛ռք Միհրին,

Փա՛ռք Ռիխտին:

Ռիխտը խոսք չէ լոկ, որ թռչի գնա: Ռիխտը երդումի խորհուրդն է մեր մեջ: Թե ուխտ ենք կապում ում հետ որ լինի՝ մենք վկա ունենք անաչառ ու խիստ: Ռիխտում ենք մեկին՝ երդում ենք տալիս մեր հոգու առաջ, երդում ենք տալիս մեր նախնիներին ու Աստվածներին: Ռիխտը Արտի հաստատումն է մեր մեջ, որ հսկում է Միհրը անվերջ: Արտավազդ Միհրն, անգամ, չի կարող խախտել իր իսկ հաստատած Օրենքը Արտի: Մենք էլ չենք կարող մեր ուխտը խախտել: Պայման կապելով կամ խոստում տալով, մենք ուխտ ենք կնքում և դառնում ինքներս ուխտին պարտապան: Ռիխտելով մեկին, մենք առավել մեր հոգու հետ ենք այդ ուխտը կապում: Ռիխտը պահելով՝ ոչ թե ուրիշին, այլ մեզ ենք կերտում, մեր հոգին մաքրում և ուժեղացնում: ԵՎ ուժեղ հոգով կապվում ենք հաստատ մեր նախնիներին ու Աստվածներին, մեր հավերժությունն ենք կերտում նրանցով:

Ռիխտադրժությամբ մենք մեր հոգու դեմ ոճիր ենք գործում: Էլ ինչպե՞ս մենք զգանք զորությունը մեր, էլ ինչպե՞ս մենք զգանք Հայր Արային, էլ ինչպե՞ս մենք զգանք մեր նախնիներին... և մենք ինքներս խորթանում ենք մեզնից: Ռիխտադրուժը ստախոս է արդեն: Իսկ սուտը հոգու հիվանդություն է: ԵՎ դժբախտ է երդմնազանցը՝ նա չի կարող ինքն իր հոգու լույսը պահպանել: ԵՎ ստով հաղթանակը միայն կյանքի մի հատվածում կարող է բավարարել կենցաղասիրությանը մեր: Բա հետո՞: Հավերժության մեջ ի՞նչ արժե մի պահի հաղթանակը, որ ստով է նյութվում: Հավերժության մեջ հոգին է հավերժ: ԵՎ ուխտը հոգու զորության պահանջմունքն է, որ բավարարելով միայն մենք կապահովենք հավերժությունը մեր:

Փա՛ռք Սիհրին,
Փա՛ռք Հավերժությանը:

ՉՈՆ ԱՐԻԻՆ

Ես եմ՝ անհատը Արի Տեսակի՝ իմ Արի Ցեղի մի մասնիկն եմ ես: ԵՎ ես հենց իմ մեջ իմ Ցեղն եմ կրում, Ցեղիս դրակներն իմ մեջ են երկնում: Բայց ես չգիտեմ՝ արժանի՞ք է դա, թե՞ լոկ տառապանք: Չէ՞ որ բնական բազմաթիվ Ցեղեր ապրում են մեկտեղ՝ ասուն, ոչ ասուն, շարժուն, ոչ շարժուն, ստեղծող, ոչ ստեղծող... ԵՎ այդ բոլորը նույն երկրի վրա, նույն երկնքի տակ. նույն արևն է բոլորին ժպտում, և նույն աստղերն են օրորում նրանց: Ամենքը իրենց պետությունն ունեն, ամենքը իրենց զորությունն ունեն՝ նաև Մարդկային Ցեղերը բազում: Այո, բայց ինչո՞ւ, ինչո՞ւ է միայն Արին տառապում բոլորի համար, ինչո՞ւ է միայն Արին արարում: Իսկ մարդկային Ցեղերը Չարի վայելում են լոկ ստեղծածն Արիի ու դեռ... ավերում: Չէ՞ որ Ցեղն Արի՝ Հողի բնակիչ, Մարդկային է նա, նման բազմաթիվ Չարի Ցեղերի: Բայց ինչո՞ւ Արին՝ արարող Որակ, արարչագործության զորություն ունի, և ինչո՞ւ Մարդկային Ոչ Արի Ցեղեր զուրկ են Ստեղծումից: Գուցե իսկապե՞ս Արին և Չարին շատ շատ են տարբեր և ունեն նույնիսկ տարբեր ծագումներ:

Փա՛ռք Արիին,

Փա՛ռք Ծագումին:

Հետաքրքիր է՝ ինչո՞ւ է իմ Ցեղը հենց Արի կոչվում: Գուցե այդ Արին լոկ անո՞ւն չէ պարզ, այլ արարչագործ Որա՞կ Բնության: ԵՎ իմ Ցեղն այդ Որակը կրո՞ղն է միակ: ԵՎ թե ստեղծագործ Որակ է Արին, և այդ Որակը իմ մեջ եմ կրում՝ Արի՞ եմ կոչվում: Ուրեմն այդ Որակը չունեցող Ցեղերը զո՞ւրկ են Ստեղծումից, և նրանք Ոչ Արի՝ Չարի՞ են կոչվում: ԵՎ գուցե Չարին հողածին է լոկ, և Արարչագա՞րմ է Արին իսկապես՝ Արայից սերված Արորդի՞ է նա: Գուցե հենց Արան Մայր Արարատում ի՞նքն է արարել իմ Ցեղը Արի: ԵՎ դեռ արարո՞ւմ է անվերջ, անդադար Արի սերունդներ՝ արարում նրանց հենց իր կերպարով ու իր բնությամբ, որ Լինելությունը

Ստեղծումով լցվի, որ իմաստավորվի՞ լույսը արևի, և աստվածային խորհուրդը կյանքի մարդկանց սրտերում անվերջ առկայծի: ԵՎ արարչական որակներն է միշտ նա իմ մեջ սնում անվերջ արարմամբ: ԵՎ արարչական գործությամբ օժված, իմ Ցեղը Արի երկրի զարգացման ընթացքն է կերտում: ԵՎ ի՞նչ կլինե՞ր Մարդկությունը մեր, եթե չունենար Արի Ցեղն իր մեջ, եթե չունենար Ստեղծումն Արիի:

Փա՛ռք Արիին,

Փա՛ռք Ստեղծումին:

Գուցե իսկապե՞ս իմ Ցեղը Արի երկրի ստեղծագործ Որակն է միակ: Բա էլ ինչպե՞ս է, որ երկրի վրա ինչ Հրաշալիք ստեղծված է մինչ այս՝ միայն իմ Արի նախնիք են ստեղծել: ԵՎ ուրիշ ոչ ոք: Եթե մարդկության անունն ենք տալիս, բա մյուս Ցեղերը ի՞նչ են կատարել՝ հազարամյակներ միայն ավիրե՞լ: Թե՞ Չարի են նրանք՝ չեն կարող Ստեղծել: ԵՎ թե Ստեղծողը իմ Ցեղն է միայն՝ նա՞ է հաշվետու Արայի առաջ ամբողջ Մարդկության զարգացման համար: Չէ՞ որ նա ունի Արի Որակներ, և միայն նա է հենց Արի կոչվում: ԵՎ ըստ իր կոչման, իմ Ցեղը Արի հազար ու հազար տարիներ անվերջ աստվածային լույսն է քամում արևից ու մարդկանց բաշխում, Աստվածների շունչը երգի մեջ հյուսված՝ մարդկանց պարգևում, իր ձեռակերտ Հրաշալիքներով՝ վեհացնում նրանց և աստվածային իմաստասիրությամբ՝ փորձում Չարիին մի քիչ մարդացնել: Արին ստեղծում է, Արին՝ կառուցում, Արին՝ հոյակերտ քաղաքներ շինում... Ո՛ր չի սրտնեղում, երբ Չարին հաճախ ստեղծածն է քանդում, քանզի Չարիները ստեղծել չգիտեն և միայն ստեղծածը կարող են քանդել: Մանուկների պես՝ որպես խաղալիք Արիի ստեղծածն են քարուքանդ անում: Գուցե տեսնելո՞ւ, թե ինչ կա այնտեղ և զուցե քանդելո՞վ են ճանաչում դրանք և ճանաչելով հասո՞ւն են դառնում ու հասկանո՞ւմ են իմաստը դրանց... Թե չլինե՞ր իմ Ցեղը Արի, այս Մարդկությունը ինչպե՞ս պիտ ապրե՞ր՝ Չարի Ցեղերը էլ ի՞նչը քանդեին, ինչպե՞ս զարգանային: Չարիներն այնժամ կավերեին իրար և ավերելով կկորչեին անդարձ:

Փա՛ռք Արիին,

Փա՛ռք Չարիին:

Հետաքրքիր է՝ ի՞նչ խորհուրդ ունի Բնությունն իր մեջ, որ արարող Ցեղի հետ մեկտեղ պահում է նաև չարարող Ցեղեր: Գուցե իսկապե՞ս Բնությանն է պետք Չարին ավերող հենց այդ Որակով: Ինչո՞ւ չէ: Չէ՞ որ ես էլ՝ մի բնություն, իմ ստեղծագործ բջիջներն ունեմ: Բայց ի՞նչ կլինի, եթե ես հանկարծ ամեն մի տեսած, ամեն մի լսած ու ստեղծագործած անմոռաց հիշեմ՝ ես անպայման կխելագարվեմ: Չէ՞ որ ամեն ինչ հիշել չի լինի: Մոռանալն էլ անհրաժեշտ է ինձ: ԵՎ բնականից ունեմ ես նաև բազում ավիրող չարի բջիջներ: Ուրեմն բազում Ցեղերը Չարի Մարդկությանն են պետք հենց այդ Որակով: Չարին, քանդելով ստեղծածն Արիի, ստիպում է նրան միշտ նորը ստեղծել: Եթե չլինեին Ցեղերը Չարի, և միայն Արին ստեղծեր ու ստեղծեր՝ ո՞ւր կհասներ նա: Նա կհագենար, նա կլճանար ու էլ չէր զգա ստեղծելու պահանջ: Ու Մարդը երբեք էլ չէր զարգանա: Ուստի թե Արին Որակն է Ստեղծող, ապա Չարին էլ՝ Մոռացման Որակ, հույժ անհրաժեշտ է Մարդկության համար, բայց անհրաժեշտ է համաչափի մեջ: Թե համաչափությունը երբևէ խախտվի, Մարդկությունն, անշուշտ, խիստ կվնասվի: Թե Չարին չափից ավել գորանա, և Արին թուլանա չափից ավելի՝ Չարին ահավոր ավեր կգործի. նա այնուհետև ոչ թե կքանդի, այլ՝ կկործանի: ԵՎ Մարդկությունը կհիվանդանա՝ նա կկորցնի հիշողությունը իր: Չէ՞ որ բազմաթիվ Չարիների դեմ մի Արի Ցեղն է միայն արարում: Իսկ արարչական Ստեղծումի համար պետք է, որ Արին զորավոր լինի:

Փա՛ռք Արիին,

Փա՛ռք Ջորությանը:

Արարելու համար զորություն է պետք: Առանց զորության էլ ի՞նչ արարում: Թե Արին միակ Ցեղն է արարող՝ պիտի Չարիից զորավոր լինի, որ կարողանա հա՛մ սիրով արարել և հա՛մ էլ արարող սերը պաշտպանել: Թե Սեր չունենա՝ ինչպե՞ս կարարի: Թե զորություն իր մեջ չունենա՝ ինչպե՞ս պաշտպանի Սերը արարման: Թե Արին չզգա Որակն իր Ցեղի, թե իր բնական նյարդը նա չզգա և չզգա նաև Ինքն Արային՝ էլ ի՞նչ Ջորություն, էլ ի՞նչ արարում: Թե Արին չզգա իր ծագումն անգամ, էլ ո՞նց զորանա Ցեղն Արիական, ո՞նց

զարգացնի մարդկությունը այս: ԵՎ դեռ ավելին՝ թե Արին փորձի իր արարչական Ջորությունը հենց Չարիի Ջորության աղբյուրից սնել և ստրուկը դառնալ Չարիի Ուժին, Չարիի Աստծուն պաշտել, ծնրադրել և ամենանվաստ ստորացման գնով այդ Չարի Աստծո գութը աղերսել՝ էլ ի՞նչ Ջորություն, էլ ի՞նչ արարում:

Արարումը միշտ էլ ոչ արարումից զորեղ է լինում: ԵՎ որպես Արի, ես շատ եմ զորեղ Չարի Աստծուց: Նա ինձ ի՞նչ Աստված, երբ ինքս եմ աստված՝ Արայից սերված Արորդի եմ ես. ես Աստվածամարդ եմ և ես Ջորություն սնվում եմ միայն իմ Արարչից: Ես զորանում եմ իմ իսկ Ջորությամբ, միայն Արայի Արարչագործությունն իմ մեջ կրելով, միայն ինձանով զգալով Արային՝ իմ Վահագնով...

Փա՛ռք Արիին,

Փա՛ռք Վահագնին:

ՁՈՆ ԱՐԱՐԱՏԻՆ

Ամեն մի Տեսակ իր Որակն ունի, ամեն մի Տեսակ իր ծագումն ունի, ամեն մի Տեսակ իր Բնական ունի և արմատն ունի հենց իր Բնակում: Հայրը իր որդուն մոր մեջ արարում, մայրն էլ հոր որդուն իր մեջ է կրում և ապա ծնում: Ուրեմն՝ թե հայրս արարողն է իմ, մայրս էլ՝ տեղն է արարման՝ արարատն է իմ:

Իմ Արարիչն էլ իմ Ցեղը Արի արարել է հենց իմ իսկ Բնակում՝ Արարման վայրում՝ իմ Արարատում: Արարատն է սուրբ Մայրական Արգանդ, և ես Արարատի երկունքի ծնունդ, ամբողջ էությամբ կապված եմ նրան: Արարատից դուրս ի՞նչ Արի ծագում: Ես Արարատի ծիլն եմ բնական և արմատ ունեմ ես այս Հողի մեջ: Ցեղածառն Արի խոր Արմատ ունի Մայր Արարատում, և այդ Արմատով Մայր Արարատի ստինքներն է քամում, կենաց սնունդով անվերջ զորանում և ապա փարթամ ճյուղերն արձակում՝ Ազգերը Արի:

Փա՛ռք Արարատին,

Փա՛ռք Ազգերին:

Վերացական Ազգ չկա աշխարհում: Ազգը՝ իր Ցեղի մասնավոր Որակ, ճյուղն է բնական՝ իր բնից ծնված: Երբ Տիեզերական Ամառն է գալիս, Հեղեղը Գարնան նահանջում է ետ, և ընդարձակվում է ցամաքը Երկրի Կենաց Գոտուց դուրս: ԵՎ Արարատից՝ Արի Տոհմերից գաղթական խմբեր տարածվում են նոր ցամաքի վրա: ԵՎ այդ բոլորը հենց Արարատում իրենց Հայրական Տոհմերը ունեն, իրենց տոհմական որակներն ունեն, իրենց տոհմական արժեքներն ունեն և՛ սովորույթներ, և՛ ավանդույթներ... այդ բոլորն ունեն Մայր Արարատում: ԵՎ այդ բոլորը հետներն են տանում և նոր հողերում իրենց Տոհմերի ճյուղերն են ստեղծում: Հենց այդ ազգակից Տոհմերը Արի բազմաթիվ Արի Ազգեր են կազմում և հենց Հայրական Օջախի կողքին իրենց Ազգային Տներն են շինում: ԵՎ այդ բազմաթիվ Ազգերը Արի՝ նույն ծառի

Ճյուղեր, ազգակից միմյանց, հենց նույն Արմատից սնունդ են ստանում, Հայրական Օջախից կրակ են ստանում, զորություն ստանում Ցեղի նույն նյարդից՝ Մեծն Վահագնից... ԵՎ Ազգերն Արի առողջ են այնքան, քանի Արարատում իրենց Արմատն են զգում և սնվում են իրենց Արմատից:

Փա՛ռք Արարատին,

Փա՛ռք Արմատին:

Ամեն մի Որակ համապատասխան է հենց իր Բնակին: Ուրեմն Որակն Արի Ազգերի համապատասխան է հենց Արարատին: Ազգերը Արի Ճյուղերն են ծառի, որն իր Արմատով հենց Արարատի կրծքում է կանգնած: ԵՎ Արարատում Արմատն է միայն ին Արի Ցեղի՝ հարազատ ծնունդ հենց այդ Մայր Հողի: ԵՎ Արարատում Արմատը Ցեղիս՝ Արի Տոհմերի ամբողջությունն է դա, որից ածանցվել են բազմաթիվ Ազգեր: ԵՎ Արարատում Արմատը Ցեղիս կոչվում է Արի՝ Արի Հայ կոչվում: Այդպես է կոչվում Ցեղի անունով, քանզի Հայն Արի Ազգ չէ պարզապես, ածանցում չէ նա՝ նա Ցեղն է Արի, Արմատն է Ցեղի, և հենց նրանից են Ազգերն ածանցվել: Հայը ազգային տարատեսակ չէ: Հայն ընդհանրական Որակն է Ցեղի. Արի Որակի խտացումն է նա՝ նա Ցեղի Լեզուն իր մեջ է պահում, Հավատը Ցեղի իր մեջ է սնում, իր մեջ է կրում Բարքերը Ցեղի, իր մեջ է երկնում Ստեղծունը Ցեղի և հենց իր մեջ էլ Ցեղի նյարդն է զգում՝ Վահագնին է զգում ու Ցեղն այդ նյարդով կապում Արային: ԵՎ Արարատում Արարիչը մեր արարում է միշտ որակներն Արի՝ Ցեղիս Սրտի մեջ, Ցեղիս Արմատն է նորոգում անվերջ: ԵՎ Հայը Արի՝ Արմատը Ցեղիս, Արայի անվերջ արարչագործությամբ, Ցեղիս որակներն է անաղարտ պահում և ապա սնում Արի Ազգերին:

Փա՛ռք Արարատին,

Փա՛ռք Սնունդին:

Ազգերը Արի իրենց Հայրենի Հողերի վրա Ստեղծունն են կերտում, լույս են արարում մարդկության համար և ուժականությունը զորությամբ լցնում... և կարծում են, թե ոչինչ չե՞ն պահում Արարատից իրենց մեջ և կարծում են, թե Արարատում ոչինչ չե՞ն թողել: Թե՞ կարծում են, որ սերմերը իրենց հենց այնպես՝ ընկել ինչ-որ մի տեղից ու պատահական

ծի՞լ են արձակել: ԵՎ չե՞ն իմանում, որ Ցեղածառի Ճյուղերն են իրենք: ԵՎ Ազգերն Արի զորավոր են լոկ Ցեղի Որակով՝ այնքանով զորեղ, այնքանով առողջ, քանի կենարար սնունդ են ստանում իրենց Արմատից՝ հենց Արարատից: Եթե չսնվեն Արմատից անվերջ՝ էլ ինչպե՞ս պահեն Որակը Արի, ինչպե՞ս պահպանեն Բարքերը Ցեղի, Ստեղծումի ոգին ինչպե՞ս զորացնեն, ինչպե՞ս զարգացնեն Միտքն արարումի և Դեմքն ազգային ինչպե՞ս պահպանեն: Նրանք պարզապես Իրենք չեն լինի, անդեմ ու անգույն զանգված կդառնան, և կհոգևարվի Ստեղծումը նրանց: Հոգ չէ, թե այսօր Ցեղածառն Արի բարակ բուն ունի իր Արարատում՝ բունը հրդեհված, Արմատը բազում վերքերով օծված, ճոխ սնունդով չի կարող սնել... հոգ չէ՝ թեկուզ և առայժմ աղքատ, բայց հենց բնական սնունդ է տալիս՝ կենարար սնունդ, որ ոչ մի ուրիշ Ցեղածառ չի տա Արի Ազգերին: Ազգերը Արի միշտ պիտի սնվեն իրենց Արմատից: ԵՎ թե ուզում են զորացնել իրենց որակներն Արի, պիտի զորացնեն Արմատը Ցեղի: Իսկ թե հենց իրենք կեղտաշուր լցնեն իրենց Արմատին և թողեն, որ Չարին Արարատը պղծի, դրանով կպղծեն իրենք հենց իրենց, Ցեղը կպղծեն, Որակը Արի, կպղծեն նաև Ստեղծումն Արիի:

Փա՛ռք Արարատին,

Նգո՛վք Պղծումին:

Ես ի՞նչ է դառել իմ Ցեղը Արի: Ես ի՞նչ մեծ աղետ է գլխովը անցել, որ մինչև հիմա խելքի չի գալիս: Իր Արի ծագումը վաղուց մոռացած, ինքը իրենից օտարացել է նա: Չարի Կրոնների հաշիշով արբած, խոր թմբիրի մեջ խարխափում է նա: Թե՞ բթացել է զգացմունքը նրա, թե՞ պղծող է դառել արարող Արին, թե՞ ինքն իրենից ձանձրացել է նա: Ի՞նչ է գազազած ինքն իրեն կրծում, ինքն իրեն պղծում, ինքն իրեն դավում, իր Արիությունը հալածում իր մեջ: Ազգերը Արի իրար են սպանում, իրար հոշոտում... և Արի եղբոր արյունով սնում Չարի Վիշապի ստամոքսը անհագ: Իսկ Չարին ոչ թե ստեղծածն Արիի, այլ հենց ստեղծողին է ավիրում արդեն: ԵՎ Ցեղածառի Արմատն է կտրում Մայր Արարատում, պղծում է Սուրբ Արարատը իմ և փորձում Չարի սերմերը ցանել: Չարին լավ գիտի՝ Ցեղի Արմատը ջարդելուց հետո, Ճյուղերը սպանել հեշտ է բավական: ԵՎ Ազգերն Արի

օգնում են նրան իրենց սպանելու... Լոկ Հայը Արի հենց Արարատում մեն-մենակ կանգնել՝ Ցեղն է պաշտպանում: Դարեր շարունակ կռիվ է տալիս աշխարհի բոլոր Չարիների դեմ՝ արյուն է թափում, վերքեր է ստանում, ընկնում ջարդված, հառնում հաղթական... իր հզոր կրծքով Ցեղն է պաշտպանում: Այդպես կլինի՞ - մի Արի Հայը աշխարհի դիմա՞ց: Թեև Հայն Արի Արմատն է Ցեղիս, թեև Վահագնյա զորություն ունի, բայց ոչ թե Ցեղի, այլ Ցեղերի դեմ ինչքա՞ն պայքարի: Ցեղի դեմ միայն Ցեղը կկռվի: Իսկ Արի Ցեղից Հայն է լոկ կռվում իր Ցեղի համար: ԵՎ դեռ կկռվի, նա կպաշտպանի իր Արարատը Չարիի պղծումից... բայց հենց իր Ցեղից՝ Արի Ազգերից ինչպե՞ս պաշտպանի: ԵՎ Ազգերն Արի եթե ուժ չունեն Արարատը մեր մաքրել Չարիի նվաստ պղծումից, ուժ չունե՞ն այնքան, որ կարողանան գեթ իրենց զսպել՝ չպղծելու այն:

Գուցե իսկապե՞ս Ազգերը Արի, Չարի Վիշապի թույնով սրսկված, ջղային գալարվում են հոգևարքի մեջ: Գուցե իսկապե՞ս ժամանակն է արդ՝ Երկնի ու Երկրի մի նոր երկունքից Վահագնը ծնվի հենց Արարատում և աստվածային ահեղ Ջորությամբ Չարի Վիշապի պղծումը սրբի Ջրհեղեղի մեջ:

Փա՛ռք Արարատին,

Փա՛ռք Ջրհեղեղին:

ՉՈՆ ԼԻՆԵԼՈՒԹՅԱՆ

Ես Աշխարհի մեջ՝ ահա Լինելությունը: Լինելությունը երկուսիս հաստատումն է մեկտեղ: Թե ես լինեմ Ոչնչի մեջ, կամ ես ոչինչ լինեմ Աշխարհի մեջ, նույն բանն է՝ երկուսս էլ Ոչինչ ենք: Իսկ Ոչինչը Լինելության ժխտումն է արդեն: Երբեք չեն կարող նրանք համատեղել: Չի կարող լինել և՛ Լինելություն, և՛ Ոչինչ: Լինում է միայն կամ Լինելություն, կամ Ոչինչ:

Ես կամ Աշխարհում: Ես զգում եմ, տեսնում եմ Լինելությունը իմ: Բայց այդ Ոչինչը չեն տեսնում երբեք: ԵՎ ո՞վ կամ ինչպե՞ս կարող է տեսնել Լինելության ժխտումն Աշխարհում, տեսնել այդ Ոչինչը և իմանալ, թե ինչ բան է դա: Եթե չգիտենք, թե կա այդ Ոչինչը, ուրեմն չկա: Լինելությունն է միայն հաստատում: Աստվածային է Լինելությունը: ԵՎ թե բացարձակ է Աստվածությունը ինքը, բացարձակ է նաև Լինելությունը, բացարձակ եմ և ես բացարձակ Աշխարհում: ԵՎ թե Աշխարհով եմ հաստատում ես ինձ, Աշխարհն էլ իմ մեջ է իրեն հաստատում՝ աստղերն իմ մեջ են երգի վերածվում, արևն իմ մեջ է ջերմություն բուրում, կայծակն իմ մեջ է հոգի հրդեհում և կյանքն իմ մեջ է հրաշալիք դառնում:

Փա՛ռք Լինելությանը,

Փա՛ռք Կյանքին:

Ի՛նչ հրաշալի է Կյանքը: Այն հեքիաթի պես հարուստ է ու բազմազան: ԵՎ բավական է խորանալ այդ Կյանք-Հեքիաթի մեջ և ամեն օր, ամեն ժամ նոր հրաշալիքներ կբացվեն մեր առջև: Նո՞ր: Ոչ՝ նորովի: Ամենը նույնն են՝ նորոգված նույնություն: Մենք ամենօրյա նույնության մեջ ապրելով, միշտ նորովի ենք տեսնում այդ նույնությունը: Նույն Աշխարհին նորովի ենք նայում, նորովի ենք ժպտում նույն Արեգակին, նույն խաղը նորովի ենք խաղում, նորովի է հնչում նույն զրույցը և նույն հարազատներին նորովի ենք գտնում ամեն օր:

Կյանքը և ես նույնանում ենք իրար: Թե Կյանքը կա, ես էլ կամ. թե ես կամ, Կյանքն էլ կա: ԵՎ կյանքը ինձանից դուրս չէ, նա իմ մեջ է: Կյանքը հենց նորոգված Լինելությունն է իմ: ԵՎ կյանքը հենց իմ հրաշալիքն է իմ մեջ՝ իմ երևակայական վառ թռիչքներով, սիրո, կարոտի տառապանքներով, հոգեպարար երանությամբ, ինքս ինձ և յուրայիններիս մշտապես գտնելու երջանկությամբ: Դա է միակ խորհուրդը Կյանքի: Ոչինչը խորհուրդ չունի Կյանքի մեջ: ԵՎ իսկապես՝ էլ ինչո՞ւ եմ ծնվում, ինչո՞ւ եմ սիրում, կերտում, երագում, եթե այդ բոլորն ինձ չի մնալու, եթե ես ինքս էլ ինձ չեմ մնալու, և իմ Լինելությունը ջնջվելու է Մահով:

Փա՛ռք Լինելությանը,

Հարցո՞ւմն Մահին:

Ի՞նչ բան է Մահը: Մի՞թե նա իրոք չգոյություն է: Բայց գուցե Մահը բոլորովին էլ չգոյություն չէ՞: Գուցե Մահը բնական շարունակությունն է Կյանքի: ԵՎ թե Կյանքը մենք ենք, Մահն է՞լ ենք մենք: Գուցե Մահը իրո՞ք մեզանից դուրս չէ, այն մեր մեջ է, ինչպես և Կյանքը՝ ամեն ժամ, ամեն օր, հարյուրամյակներ, հավերժ... Եթե այդպես է, էլ ինչո՞ւ ենք մեզանից անջատում Մահը որպես հրեշավոր մի բան, որ մեզանից դուրս է: Մի՞թե Կյանքը Լինելություն է, իսկ Մահը՝ Ոչինչ: Ինչպե՞ս կարող է Լինելությունը ոչնչանալ: Դա հնարավոր չէ: Լինելությունը Ոչնչի վերածվել չի կարող, քանզի Ոչինչը գոյություն չունի: Ապա ի՞նչ է Մահը: Նա նույնպես Լինելություն է: Լինելությունը հենց Կյանքի ու Մահի միասնությունն է: Մահը՝ Կյանքի մեջ, Կյանքն էլ՝ Մահի մեջ, հենց դա է Լինելությունը, դա է Անմահությունը, դա է Հավերժությունը: Ռեստի Մահ որպես չգոյություն, որպես ոչնչացում չկա: Մահը կա որպես Կյանքի անդրադարձ: Մահը Ոգու փոխակերպումն է լոկ: Կյանքը Ոգին է մարմնավոր, իսկ Մահը՝ Ոգին անմարմին:

Փա՛ռք Լինելությանը,

Փա՛ռք Ոգուն:

Գուցե իրականո՞ւմ մեռածները գիտեն, որ մեռած են: Գուցե նրանք բոլորովին էլ մեռած չե՞ն: Գուցե նրանք շարունակո՞ւմ են ապրել, շարունակո՞ւմ են տեսնել, զգալ, լսել... որպես Ոգի անմարմին: Ի՞նչ փույթ, թե մենք չենք

տեսնում նրանց: Բայց նրանք հաճախ հիշեցնում են մեզ հենց իրենց մասին, երբ հանկարծ գիշերով հայտնվում են մեր աչքի առաջ: ԵՎ հայտնվում են ողջ մարդու բոլոր պահանջմունքներով: Մեռածներն էլ գիտեն կարոտել, գիտեն սիրել ու թախծել... Մեռածն անմարմին է: Բայց չէ՞ որ հենց սերը, կարոտը, թախիծը զուտ հոգեկան որակներ են, այլ ոչ՝ մարմնական: Ուրեմն անմարմին Ոգուն հատուկ են դրանք: ԵՎ իրենց զգացողությամբ Ոգիներն զգում են մեզ, լսում են մեզ, տեսնում են մեզ: Իսկ մե՞նք: Հոգին է միայն Ոգիներին զգում, հոգին է միայն Ոգու հետ կապվում: ԵՎ մեռածների Ոգիներին մենք միայն հոգով կարող ենք զգալ:

Մեռածները կան, Լինելություն են նրանք, ապրում են որպես անմարմին ոգի, ապրում զգացմունքով, սիրով, կարոտով. հարաբերվում են մեզ, զորացնում են մեզ, զորանում են նաև իրենք իրենց մեջ, նորոգելով իրենց Լինելության նոր արշալույսը:

Փա՛ռք Լինելությանը,

Փա՛ռք Նորոգումին:

Գուցե իսկապե՞ս ես ինձ եմ մնալու, ամենն էլ ինձ է մնալու: Չէ՞ որ Ոչնչից Լինելություն չի ստեղծվի, Լինելությունն էլ երբեք Ոչինչ չի դառնա: ԵՎ այն, ինչ որ մենք նոր ստեղծված ենք կարծում, պարզապես նորոգումն է հնի, անցածի: Նոր հորինված երգը նորոգումն է շատ հին ու մոռացված երգի: Մենք այսօր կառուցում ենք, քանդված, մոռացված նույն քաղաքը հին: Շատ վաղուց լսված, վաղուց մոռացված գրույցն ենք հիշում: ԵՎ հազարամյակների խորքից եկած նույն ընկերներին ենք հանդիպում նորից: Նոր մարդն էլ նոր չէ, այլ հնում ապրած, ոգիացած ու վերածնված նույնությունն է նա: Մարդն իր Լինելության հավերժ ընթացքում նորոգվում է միշտ, միշտ փոխակերպվում՝ ոգին մարմնավոր, ապա՝ անմարմին, նորից՝ մարմնավոր և այդպես անվերջ: Մահը նորոգում է, այլ ոչ թե վախճան: Կյանքը նորոգում է, այլ ոչ սկզբնակետ: Մահով մեր ոգին հոգնած ու տկար մարմնից ազատվում, ապա նոր կյանքով թարմ, ուժեղ մարմին է ստանում: Իսկ ոգին մեր նույնն է՝ նորոգված նույնություն, և նույն զգացմունքով ենք Աշխարհն ընկալում, նույն սիրով ենք Աշխարհին փարվում, նույն հայացքն է շոյում

արևին, նույն ժպիտն ենք բաշխում բոլորին և նույն
զորությամբ հավերժն ենք կերտում:

Փա՛ռք Լինելությանը,

Փա՛ռք Հավերժությանը:

ՁՈՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԻՆ

Ի՞նչ նման են իրար մանուկն ու պապը: Նրանք ունեն իրենց զգացմունքները, իրենց աշխարհները, որ շատ նման են իրար: ԵՎ նրանք առավել են զգում իրար, առավել են հասկանում իրար: Գուցե հենց դա՞ է Լինելության խորհուրդը: Գուցե մանուկը դեռ ոգի է, իսկ պապն արդեն՞ ոգի է. մանուկը դեռ չի հեռացել ոգիներից և առավել զգում է նրանց, պապն էլ արդեն մոտեցել է ոգիներին և առավել զգում է նրանց: ԵՎ գուցե մանուկն ու պապը մինչ այդ արդեն հանդիպե՞լ են իրար կյանքի ու մահի միջև ինչ-որ սահմանում՝ մեկը որպես երևութացող ոգի, իսկ մյուսը որպես ոգիացող երևույթ: Գուցե կյանքում նրանք պարզապես փոխարինո՞ւմ են իրար: Գուցե մանուկը պապի ապագան է, իսկ պապը՝ մանուկի ապագայի ապագա՞ն: ԵՎ այդ մանուկի թռչի թռչան մեջ հենց ինքը՝ պապը կծնվի նորից, և ոգիների փոխակերպման սահմանում նրանք նորից հանդիպեն՝ մանուկը որպես պապ, իսկ պապը որպես մանուկ: Ինչո՞ւ չէ: Էլ ինչո՞ւ են նրանք այդքան նման իրար՝ երկուսի մեջ էլ նույն Ես-ն է կարծես:

Փա՛ռք Վերածնունդին,

Փա՛ռք Ես-ին:

Հետաքրքիր է՝ ինչո՞ւ են ես այդքան ինքս ինձ նման: Արդյո՞ք չէի կարող ուրիշ կերպ լինել՝ այլ դիմագծով, այլ զգացմունքներով, այլ մտայնությամբ: Բայց եթե այդ բոլորը ուրիշ լինեին, այնժամ արդյո՞ք ես Ես կլինեի, թե՞ ես էլ կլինեի ուրիշ՝ մեկ ուրիշ Ես: Չէ՞ որ ես չեմ ստեղծվել հենց այնպես Ոչնչից, ես արարվել եմ իմ իսկ ոգուց: Իմ ոգին ես եմ: Ես, միայն ես եմ արարվում իմ ոգուց և արարվում եմ այնպիսին, ինչպիսին որ իմ ոգին է: ԵՎ ես արարվել եմ հենց այնպիսին, ինչպիսին որ կամ: Իմ ոգին իր ներքին որակներն ունի՝ հենց այն որակները, որ հիմա ունեն ես: Իմ ոգին նաև իր կերպը ունի, որով փոխակերպվում է երևույթի: Իսկ իմ ոգու կերպը հենց այն է, ինչ որ հիմա ունեն ես: Ոգին բացարձակ է նույն

որակներով. նույն որակներով է միշտ փոխակերպվում: ԵՎ հազարամյակներ առաջ, թե հետո ես Ես կլինեմ: Ոգիս զարգանում է ինքը իր մեջ: ԵՎ զարգանում է այնքան և այնպես, քանի դեռ ինքը իմ Ես-ն է մնում: Անվերջ զարգացում չկա Աշխարհում: Կա զարգացում և կա անդրադարձ: Կա պարբերություն՝ զարգացման սահման: Պարբերություններով է զարգանում ոգիս, և անդրադարձով է փոխակերպվում նա թե՛ երևույթի և թե՛ էության: Պարբերությունը սկիզբ ու վերջ ունի: Բայց Լինելության անսահմանության մեջ պարբերությունները կրկնվում են միշտ: Ջարգացման զորություն թե ունի ոգիս, անվերջ կվերածնվեմ ես՝ նույն ինքս՝ Ես: Ոգուս զորությունն է ներքին պայմանը իմ վերածնվելու: Իսկ ոգուս զորությունը Տոհմիս զորության մեջ է զորանում:

Փա՛ռք Վերածնունդին,

Փա՛ռք Տոհմին:

Հետաքրքիր է՝ ես իմ ո՞ր նախահայրն եմ եղել, քանի՞ սերունդ եմ ես ինձ արարել: Չէ՞ որ ես շատ եմ նման իմ հորն ու պապին: Իմ որդին էլ ինձ է նման, նրա որդին էլ: Ապա ինչո՞ւ ենք մենք այդքան իրար նման: Իմ հայրն ինձ է արարել, ես՝ իմ որդուն: ԵՎ գուցե իմ որդու մեջ ես իմ պապի՞ն եմ արարել, որն էլ հետո ինձ է արարելու: Ուրեմն ես իմ որդու, թռչի միջոցով ի՞նձ եմ արարում: ԵՎ այդպես անընդհատ մենք արարում ենք իրար, փոխարինում ենք իրար՝ ես իմ բոլոր սերունդների հետ: Հենց դա է Տոհմը: Ես իմ Ես-ն եմ և հաստատուն անձնական որակներ ունեմ: Բայց իմ Ես-ը Տոհմիս մեջ է: Իմ Ես-ը տոհմական Ես է և Տոհմիս ընդհանրական որակներն ունի: Հենց այդ տոհմական որակներով եմ ես նմանվում իմ հոր տոհմական Ես-ին, իմ եղբոր, պապի... տոհմական Ես-ին: ԵՎ ժառանգաբար արարում ենք իրար՝ իրար շատ նման: Ժառանգականությունը հենց տոհմային որակների պահպանումն է իմ մեջ. ժառանգականությունը հենց տոհմական Ես-ի հաստատումն է իմ մեջ: Առանց Ես-ի Տոհմ չի լինի, Ես-ն էլ չկա իր Տոհմից դուրս: Իմ Տոհմից դուրս իմ ոգին չկա: Իմ Տոհմից դուրս ինձ ծնող չկա: ԵՎ իմ Տոհմից դուրս ես չեմ վերածնվի: Իմ ոգին տոհմական որակ է և միայն իմ Տոհմի մեջ կզարգանա: Իմ ոգին զարգանալու զորությունը իմ Տոհմից է սնվում: Տոհմիս

գորությունն է արարող պայման իմ վերածնվելու: Իսկ Տոհմիս գորությունը Ազգիս գորության մեջ է զորանում:

Փա՛ռք Վերածնունդին,

Փա՛ռք Ազգին:

Ինձնից երբևէ նեգր կծնվի՞, կամ թուրք, կամ մոնղոլ և կամ սենական: Ո՛չ երբևիցե: Թե Արի եմ ես, միայն Արիներ կարող եմ ծնել: Տոհմական եմ ես, իմ Տոհմը ունեմ: Իմ Տոհմն էլ Տոհմն է Արի Տեսակի: ԵՎ իմ Տոհմի մեջ ուրիշ Տեսակի ոգի չի լինի: Տեսակը որակական ամբողջություն է, որ Ազգ է կոչվում: ԵՎ ամեն մի Ազգ իր Տոհմերն ունի: Չկա ոչ մի Ազգ առանց Տոհմերի, Տոհմերն էլ չկան իրենց Ազգից դուրս: ԵՎ Ազգի Տոհմերը նման են իրար նույն Տեսակի որակներով: Իմ Ազգն ամբողջություն է որպես մի Տեսակ, իմ Տոհմն էլ Ազգիս մասն է բնական: Ուրիշ Ազգի մեջ իմ Տոհմը չկա, ուրիշ Ազգի մեջ իմ ոգին չկա: Ուրիշ Ազգի մեջ ես չեմ վերածնվի: Արի ես եմ ես՝ Արի Տեսակի տոհմական անհատ: ԵՎ իմ ոգու մեջ Արի Տեսակի որակներն ունեմ: ԵՎ ես չեմ կարող Ազգ ընտրել երբեք: Իմ որակական Տեսակն է իմ Ազգը: ԵՎ ինչպիսին էլ իմ Ազգը լինի, իմ որակներով նույնանում եմ նրան: ԵՎ ես վերածնվելու եմ հենց իմ Ազգի մեջ, հենց իմ Տոհմի մեջ: Տոհմիս գորությունը իմ Ազգի մեջ՝ դա է շարունակելիության պայմանն արարող:

Փա՛ռք Վերածնունդին,

Փա՛ռք Շարունակելիությանը:

Ոգու գորություն, Տոհմի գորություն, Ազգի գորություն՝ դա է շարունակելիության պայմանը միակ:

Ոգուս գորությունը ես ինքս եմ կերտում: Ապրելով կյանքում, ես միաժամանակ պետք է պատրաստվեմ իմ հաջորդ կյանքին՝ պետք է զորացնեմ ոգիս անընդհատ: Ոգիս բնական է և բնականությամբ է միայն զորանում: Բնական կյանքով եթե ես չապրեմ, եթե կտրվեմ Տոհմից ու Ազգից, էլ ո՞րտեղից իմ ոգին սնվի: Առանց սնվելու նա կտկարանա: Իսկ տկար ոգին էլ չի զարգանա կամ կզարգանա շատ ավելի ուշ: ԵՎ կվտանգվի շարունակելիությունը իմ:

Տոհմիս գորությամբ ես ինձ եմ կերտում: Որքան կապված եմ մնում իմ Տոհմին, որքան զորացնում եմ ես ինքս նրան, այնքան իմ ոգին եմ ես զորացնում: Սերունդների մեջ է

Տոհմը պահպանվում, սերնդատվությամբ է Տոհմը զորանում: Եթե ես ինքս զավակ չարարեմ, իմ Տոհմը ինչպե՞ս պիտի զորանա: Եթե ես չարարեմ իմ ապուպապին, հետո էլ ո՞վ պիտի ինձ արարի: ԵՎ կվտանգվի շարունակելիությունը իմ:

Ազգիս զորությամբ իմ Տոհմն է գորեղ, և իմ վերածնվելու հնարավորությունն է մեծ: ԵՎ պատահական չէ, որ Ազգի զորությունը բնական պահանջ է ամեն մարդու մեջ: Ի՞նչ է, վերջապես, Ազգասիրությունը, ինչո՞ւ է մարդը կամովին կռվում իր Ազգի համար, ինչո՞ւ է զոհվում հանուն իր Ազգի և ինչո՞ւ է մարդ ամբողջ էությամբ կառչում իր Ազգին: Ազգասիրությունը պարզապես իմ շարունակելիությունն ապահովելու բնական զգացողությունն է իմ մեջ:

Ազգս, Տոհմս և Ոգիս՝ այս երրորդության միասնությունն ու զորությունն է խորհուրդը իմ Շարունակելիության, իմ Վերածնվելու:

Փա՛ռք Վերածնունդին,
Փա՛ռք Երրորդությանը:

ՁՈՆ ՆԱԽՆԻՆԵՐԻՆ

Իմ պապը, պապիս պապը, նրա պապը... այդ բոլորը նախնիներն են իմ: Հենց նրանք էլ պիտի իմ թոռը լինեն, թոռիս թոռը, նրա թոռը... Ուրեմն իմ նախնիք իմ գալիքն են նաև: ԵՎ երբևիցե ես ինքս նրանց նախնին պիտ լինեմ: Չէ՞ որ Լինելություն են ես: Որպես Լինելություն, անսահման են ես: Ուրեմն ես հավերժից եկող իմ անցյալն ունեմ, ես իմ ապագան ունեմ, որ գնում է դեպ հավերժություն: ԵՎ իմ անցյալն ու ապագան նույնանում են իրար: Իմ նախնիքն են իմ անցյալը, նրանք են նաև իմ ապագան: ԵՎ ես իմ հավերժության մեջ իմ անցյալն ու ապագան կապում եմ իրար: Ես իմ անցյալից չեմ կարող զրկվել, հակառակ դեպքում ես կվերածվեմ անտոհմիկ որբի ու չեմ իմանա, ով կամ ինչ եմ ես, ուրկից եմ գալիս և ուր եմ գնում: Իմ անցյալով եմ հաստատում ես ինձ, ես ամբողջանում եմ իմ նախնիներով: ԵՎ ինչպե՞ս չհավատամ իմ նախնիներին, երբ ինքս երեկ նախնի եմ եղել ու վաղը նորից նախնի պիտ լինեմ:

Փա՛ռք Նախնիներին,

Փա՛ռք Հավատին:

Հավատը՝ իմ մեջ հաստատված իրականն է: Իսկ իրականում, հետաքրքիր է՝ ոգին ծանրություն ունի՞: Չէ՞ որ աննյութ է նա: Այո, բայց մի՞թե կշիռը միայն նյութին է հատուկ: Նյութի կշիռը հաստատ է արդեն, իսկ աննյութի՞նը... Բայց եթե ոգին կշիռ չունենա, նախնիները իմ անհանգրվան կթափառեն տիեզերական անհունության մեջ ու երբեք, երբեք ինձ չեն մոտենա: Չէ՞ որ ոգին փոխակերպվում է միշտ մարդ-երևույթի: Իսկ փոխակերպվում է նա միայն իր Ազգի ու Տոհմի ներսում: Ուրեմն իմ նախնիք երբեք չեն պոկվում Ազգից ու Տոհմից. Իսկ Ազգն ու Տոհմը հողին են կառչած: ԵՎ թե իմ նախնիք ապագան են իմ, ապա ես պիտի նրանց արարեմ: ԵՎ արարելու եմ հենց հողի վրա: Ուրեմն իմ նախնիք հեռու չեն ինձնից, ինձ հետ են նրանք, ինձ հետ են

քայլում, ինձ հետ են նստում, ինձ հետ են շնչում բուրմունքը հողի, ինձ հետ են գարնան արևը գրկում: Իսկ նրանց կշիռն է հողի հետ կապում, կշիռն է նրանց մեր շուրջը պահում: Ուրեմն իրոք աննյութ ոգին ծանրություն ունի: Բայց գուցե ոգին և զորությո՞ւն ունի: ԵՎ գուցե իմ նախնիք իրենց զորությամբ են ազդում իմ վրա: ԵՎ գուցե նրանց զորությունն իրո՞ք զգում եմ ես իմ զգացողությամբ:

Փա՛ռք Նախնիներին,

Փա՛ռք Զգացողությանը:

Ինչո՞ւ ենք մենք մեր նախնիներին տեսնում երազում, քնած ժամանակ: ԵՎ նախնիները մեր լուսե կերպարով, աննյութ ծանրությամբ հողին պինդ կանգնած, մեզ են հայտնվում, խոսում են մեզ հետ, ժպտում կամ թախծում, իրենց զորությամբ զորացնում են մեզ: Ի՞նչ խորհուրդ է դա՝ երա՞զ է, արդյոք, թե՞ պարզ իսկություն:

Գուցե իսկապե՞ս մեզ հետ են նրանք և օր ցերեկով, բայց մենք չենք տեսնում, չենք զգում նրանց: Գուցե մենք՝ մենք չե՞նք օրը ցերեկով և օտարածին մտքերից կքված, կրքերին տրված, մենք մեզ չե՞նք տեսնում, մեր հոգին, անգամ, չենք զգում մեր մեջ: Էլ ինչպե՞ս մենք զգանք մեր նախնիներին: Չէ՞ որ լոկ հոգին ոգուն կտեսնի: Միայն գիշերով, երբ միտքն է քնած, կրքերն են սառած, և կապանքներից ազատված հոգին արթուն է մնում, մենք՝ մենք ենք դառնում: Մենք տեսնում ենք մեզ, մեր հոգին ենք զգում և հենց մեր հոգով տեսնում ենք նրանց՝ մեր նախնիներին: ԵՎ զգում են իրար, փարվում են իրար հոգին ու ոգին՝ ողջը և մեռածը: ԵՎ մեր միասնությունն ենք հյուսում մենք մեր մեջ:

Փա՛ռք Նախնիներին,

Փա՛ռք Միասնությանը:

Մեր նախնյաց ոգիք ողջերի նման ժպիտ են սիրում, ջերմություն և լույս: Սիրվել են սիրում ողջերի նման: ԵՎ բոլոր մեր ողջ հայրերի նման, ողջ որդվոց կողմից պաշտվել են սիրում: Սիրում են նաև գթալ ու հոգալ: ԵՎ մենք մեր աննյութ Հայրերի համար Տաճար ենք շինում Մայր Հողի վրա՝ Տուն Ոգիների: ԵՎ այդ Տաճարում մեր նախնյաց համար մենք խունկ ենք ծխում, նրանց հետ մեկտեղ սեր ենք վայելում, բարև ու քարոզ: ԵՎ այդ միասնությամբ մենք ենք զորանում:

Գուցե մեր Նախնյաց Ոգիները Սուրբ ավելի մոտ են մեր Աստվածներին: Գուցե իսկապե՞ս Աստվածների հետ սեղան են նստում և Աստվածների օրհնանքը ստացած, մեզ են փոխանցում զորությունն իրենց: ԵՎ Աստվածներին ծոնված Տաճարում մեր նախնիները մեզ հետ և մեզ համար են դիմում մեր Աստվածներին: Գուցե մենք մեր նախնիների միջոցով ենք Աստվածներին զգում, և գուցե Աստվածներն էլ մեր նախնիների միջոցով են մեզ կյանքով սնում:

Մենք ամեն դեպքում Տաճար ենք շինում ոչ Աստվածների, այլ՝ նախնյաց համար: Աստվածները տիեզերական ընդգրկում ունեն, նրանք չեն ամփոփվի այդ չորս պատի մեջ ու երբեք մարդուն գերի չեն դառնա: ԵՎ այն Տաճարում, ուր նախնիք չկան, աղոթքը Աստծուն թատերախաղ է լոկ, և այդ Տաճարից դուրս է գալիս մարդ խղճով դատարկված ու հոգով տկար: Տաճար ենք շինում ոչ թե պարզապես փառաբանելու մեր Աստվածներին: Տաճար ենք շինում մեր նախնիների հետ հոգեծուլվելու, մեր Աստվածներին հասնելու համար և զորանալու ու զորանալու...

Փա՛ռք Նախնիներին,

Փա՛ռք Ջորությանը:

Իմ Մայր Հողի վրա ինձ հաղթելու համար, Չարին նախ փորձում է ինձ կտրել իմ նախնիներից: Նախնիներիս մեջ է զորությունը իմ: Մայր Հողը հենց նրանով է Հայրենիք ինձ համար, որ այնտեղ են բոլոր նախնիները իմ: ԵՎ Մայր Հողից դուրս իմ նախնիք չկան, իմ Մայր Հողից դուրս Հայրենիք չկա: Մայր Հողի վրա նախնիները իմ Վահագնի Ջորությամբ են իմ հոգին սնում և Աստղիկի Սիրով իմ սերն են օծում: Ո՛ր թե ես զգում եմ իմ նախնիներին, թե միաձուլված եմ հոգով ես նրանց, իմ ուժից բացի զգում եմ ես իմ մեջ ուժը պապերիս և իմ թռռների զորությունն են զգում: ԵՎ ես գերհզոր եմ իմ Մայր Հողի վրա: ԵՎ երբեք Չարին չի կարող լինել ինձանից հզոր իմ Հայրենիքում: Ո՛խտի անբնական է ու անպատվաբեր, թե ես իմ Հողում օտարից պարտվեմ: Թող որ բազում լինի խուժանն օտարի: Բայց ինձ հետ են իմ Նախնիները Սուրբ, ինձ հետ են բազում չծնված մանկտիք, և ոգիացող զառամյալ մայրեր, և մարմնավորված ոգիք նորածին, Արայի Հայրական

Օրինանքն է ինձ հետ և Վահագնի Ջորությունը՝ իմ
երակներում: ԵՎ այդ բոլորի դիմաց թշնամին մի մեծ ու
հալչող ձնագունդ է լուկ: Իսկ ես անպարտելի եմ իմ Մայր Հողի
վրա:

Փա՛ռք Նախնիներին,
Փա՛ռք Մայր Հողին:

ՉՈՆ ԱՍՏՎԱԾԱՏԵՍԻՆ

Գիշեր էր, խավար և կարծես երբեք չկար լուսաբաց իմ Արարատում: ԵՎ խավարի մեջ թույնը Վիշապի աղոթքի ձևով Ցեղիս շուրթերին վերքեր էր բացում, և Ցեղս Արի՝ իր ուժը լքած, մուրացկան դարձած, Չարիի գորության փշրանքն էր մուրում... ԵՎ հանկարծ Արև: Այդ ո՞վ է տեսել՝ Արևը ծագի գիշերվա կեսին, և ո՞վ է տեսել՝ մոխիրների մեջ հրդեհ բռնկվի՝ Ցեղամարդ ծնվի և արևելով Վահագնին հասնի, տեսնի Վահագնին: ԵՎ Արարատի լեռների վրա, լեռների հսկան՝ Վահագնով օծված, հուրը Վահագնի իր մեջ ամփոփած, որպես սուրբ պատգամ Վահագնից ծագած և նախնիների գորությամբ սնված՝ Նժդեհն է հառնում որպես Ցեղամարդ, խավարը պատռում և Աստվածային Լույսը Վահագնի հավատով սփռում իմ Արարատում: Նա ինքը՝ Նժդեհ, ինքն՝ Աստվածատես:

Փա՛ռք Աստվածատեսին,

Փա՛ռք Նժդեհին:

Նա առաջինն էր՝ նայեց երկնքին ու երկնի խորքում ինքն իրեն տեսավ: Ինքն իրենից դո՞ւրս: Ինչպե՞ս կլինի: Այդ ո՞վ է նրան կտրել իրենից, ո՞վ է մասնատել ամբողջությունը իր: Այդ ո՞վ է իր ճյուղը իր ծառից կտրել ու խառնել տարբեր կտրած ճյուղերին, այդ ո՞վ է գրկել նրան ծաղկումից՝ կառչած իր բնին: Բա մարդ լինի՝ ծագում չունենա՞, իր արմատին չմիանա՞, չամբողջանա՞ ինքն իրենով: Ինքնատրոնման երդումի ուխտով նա Նժդեհացավ, աշխարհը ամբողջ ոտքի տակ առավ, տարբեր Հողերում արմատն իր փնտրեց, տարբեր մարդկանց մեջ որոնեց իրեն: Բայց ոչ մի այլ Հող նրան չընդունեց, չշոյեց նրան: Ամառը շոգեց, բայց չտաքացավ. ձմեռը մրսեց, բայց չզովացավ: Գետինը սահուն ոտքերի տակին... արմատ չծգեց ու չզորացավ: Մարդիկ էլ՝ մարդիկ, բայց ոչ իր նման՝ նրանք ինքը չէին: ԵՎ հոգու խորքում խիստ զանազանեց իրենն օտարից: Նա

Արարատում իր արմատը զգաց, և նույն արմատից բյուրավոր
Ես-եր՝ հենց ինքը կարծես՝ ժպտացին նրան: Նա իրեն գտավ
հենց Արարատում Արի Ցեղի մեջ որպես Ցեղամարդ՝ Ցեղի
Ոգու մեջ մի ոգի անհատ, Ցեղի արյունի բնական ժառանգ,
ցեղային դեմքի մասնավոր կերտվածք: ԵՎ ամբողջացավ
Նժդեհն իր Ցեղով, իր Ցեղով սիրեց, իր Ցեղով կռվեց, իր
հավատը նա իր Ցեղով կերտեց, Ցեղի ոգիով Վահագնին
փարվեց... Կնքվեց իր Ցեղով:

Փա՛ռք Աստվածատեսին,

Փա՛ռք Կնունքին:

Թե չճանաչի մարդ ինքը իրեն, թե նա չիմանա իր
ծագումն, անգամ, թե չճանաչի իր նախնիներին և իր
արմատի զգացում չունենա՝ ինչի՞ն հավատա: Հավատա
միայն օտարի ուժի՞ն, որ իրենը չէ: Ի՞նչ հավատ է դա՝ իր
տկարությունը հաստատող Հավատ և պարզ ստրկացում:
Ինքնաճանաչումն է Հավատի աղբյուր: Ցեղակրոնը լոկ
հավատալ գիտե: Նժդեհն առաջինն էր՝ եղավ Ցեղապաշտ և
որպես Արի, նա՝ Արիապաշտ: ԵՎ Աստվածները հենց
Արարատում, Գառնի Տաճարի շուրջը հավաքված,
Վահագնյա Հուրով խարույկ վառեցին, յոթ Արևներից գանձեր
հալեցին, պսակ հյուսեցին Նժդեհի համար՝ նրան կնքելու
որպես Ցեղամարդ: Արևով ձուլված Սուրը երկսայրի Վահագն
օժեց, որպես գորության հաղթական խորհուրդ: Խաչ-
պատերազմին՝ աստղերից հյուսված՝ Աստղիկը կապեց նրա
բազուկին, որ իր սերը վառ պահապան լինի ահեղ
մարտերում: Մայր Անահիտը՝ հենց Արարատի հազար
ծաղկունքից հավաքած յուզով աչքերը շփեց, որ Նժդեհն Արի
իր մի բազուկով՝ քնած, թե արթուն՝ միշտ սուրը բռնի՝ Հողը
պաշտպանի, իսկ մյուս բազուկով՝ հերկի ու ցանի, արարի,
կերտի, իր Հողը սնի և ինքն էլ սնվի Մայրական Հողից՝ իր
Հողը պաշտի: Ցեղիս սուրբ նախնիք, շուրջը բլրորված,
օժեցին նրան իրենց գորությամբ: Տիեզերական անհունության
մեջ Հայր Արան ժպտաց գոհունակությամբ: ԵՎ Աստվածային
Հրավառությամբ Նժդեհը կնքվեց՝ Կնքվեց Ցեղամարդ:

Փա՛ռք Աստվածատեսին,

Փա՛ռք Ցեղամարդին:

Թե մենք մեր Հողում պարտվենք Չարիից, և մենք մեր Հողում ստրուկ լինենք նրան՝ աններելի է դա, ամոթի խարան: Բա Աստվածները դա մեզ կներե՞ն, մեր նախնիները չե՞ն անիծի մեզ: Թե Ցեղով չապրի սերունդը Արի, չգգա ինքն իր մեջ ուժը Մայր Հողի, թե չապավինի Ջորության Աստծուն և նախնիներին կամովի լքի՝ էլ ինչպե՞ս կռվի, էլ ինչո՞վ կռվի, էլ ինչո՞ւ կռվի: Ցեղամարդը լոկ հաղթությամբ կօժի սուրը իր ձեռքի: Ցեղամարդը լոկ՝ համակ գորություն, Վահագնին տեսած, Վահագնից սնված, Վահագնով գինված, անպարտելիության հուրով բռնկված Նժդեհը Արի: Ի՞նչ փույթ, թե Չարին անթիվ - անհամար գորք է կուտակել, ի՞նչ փույթ, թե նրան Վիշապն է օծել: Չէ՞ որ Մայր Հողի ուժն է առկայծում Նժդեհի սրտում, սուրբ նախնիների անհամար ոգիք՝ անպարտելի ուժ՝ իրեն գինակցում, Օրհնանքն Արայի, ՌԺժը Վահագնի, Արևն իր երկրի... Էլ ի՞նչ թշնամի, էլ ի՞նչ բազմություն՝ պարզապես փքված ձյունե մեծություն, որ ջուր է դառնում գորության բոցից: Անպարտելիությամբ Նժդեհը օծված, Մայր Անահիտի Օրհնանքն է ստանում. բոլոր մայրերի, կույս աղջիկների հավատն է ստանում՝ հաղթության հավատ. լույս մանուկների, երկրի զանգերի մաղթանքն է ստանում՝ հաղթության մաղթանք: Օ՛հ, ի՞նչ Ջորություն: Էլ ի՞նչ թշնամի այս ամբողջական գորության դիմաց: ԵՎ Նժդեհն Արի, ինքն՝ Աստվածատես, ինքը՝ Ցեղամարդ, իր նվազ գորքից հիսունապատիկ ավել գորքի դեմ հիսունապատիկ ավել գորությամբ մարտի է ելնում: ԵՎ ոչ մի զիջում՝ միայն հաղթանակ... Մայր Հողի վրա նա միշտ հաղթական՝ Առաջնորդն Արի:


Փա՛ռք Աստվածատեսին,

Փա՛ռք Առաջնորդին:

Նա առաջինն էր՝ տեսավ Վահագնին, և Վահագն նրան Առաջնորդ օծեց Արորոյաց նորոգ ՌԻստին: ԵՎ Աստվածային Ջորությամբ օծված Նժդեհը Արի, ինքն՝ Աստվածատես և աստվածային լույսն է առաքում իմ Արի Ցեղին: Ինքը՝ գորություն և իր գորությամբ ուժ է ներարկում Արի քաջերին: Ինքը՝ արարող և արարումի սերն է հրդեհում Արիների մեջ: Ինքը՝ Ցեղամարդ և Ցեղի Ոգին կտակում է մեզ՝ ամեն տեսակի աղոթքից առաջ, որպես աղոթքների աղոթք

գերագույն, որպես հոգևոր սնունդ անհատնում, ճանաչենք մենք մեզ՝ մեր ծագումն Արի, ուժը Մայր Հողի, Արևը մեր մեջ... լինենք Ցեղամարդ: ԵՎ չհանդուրժենք տկար բարություն, խոնարհ հեգություն, սոսկ աղոթողի խղճալի վիճակ՝ հանուն և ոչ մի մեծահոգության, հանուն և ոչ մի մարդասիրության, հանուն և ոչ մի երկնային փառքի: Լինենք նախ ուժեղ, նոր միայն՝ բարի, իչպես վայել է որդոցն Արայի: ԵՎ ինքը՝ Նժդեհը, Վահագնով օժված, Վահագնի լույսով ինքը զորացած, Վահագնի առջև կանգնեց նա հպարտ, բարևեց նրան և սրտից բխած երդումը տվեց, ուխտավոր դարձավ Վահագն Աստծո: Նժդեհը գնաց Վահագնի լույսով, նա ինքը ապրեց Աստծո պատգամով և ինքը եղավ Սուրբ Պատգամարան:

Փա՛ռք Աստվածատեսին,
Փա՛ռք Պատգամարանին:



ԳԻՐՔ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Վ Ե Հ Ա Ր Ա Ն

Բնությունն իր ինքնանորոգման ամեն մի բուռն երկունքի շրջանում դրա արտահայտությունն է արտացոլում բնական Տեսակների մեջ: ԵՎ ամենագորավոր անհատներն են առաջինը զգում դա և դառնում բնական օրինաչափությունների արտահայտությունը իրենց Տեսակի մեջ:

Տիեզերական Պարնան հաղթարշավը իր առաջին արտահայտությունը ստացել է Արի Տեսակի ամենագորավոր անհատի՝ Նժդեհի մեջ: ԵՎ Նժդեհից ճառագելով, այն ընդգրկելու է ամբողջ Ցեղը և ապա՝ նարդկությունը:

Այնպես որ Նժդեհը պիտի լիներ. նա չէր կարող չլինել: Դա Բնության պահանջն էր, դա բնականի պահանջն էր:

ԳԱՐՆԱՆ ԱՎԵՏԱԲԵՐ

Բոլոր նրանց, ովքեր իրենց Արի են զգում. բոլոր նրանց, ովքեր իրենց Աստվածամարդ են զգում. բոլոր նրանց, ովքեր իրենց Արարչի որդիներ են զգում. բոլոր նրանց, ովքեր զգում են իրենց արմատը Մայր Արարատում. բոլոր նրանց, ովքեր նայում են Արեգին և զգում են Վահագնին - բոլոր նրանց ավետում ենք Տիեզերական Գարնան մոտալուտ գալուստը:

Հազարավոր տարիներ են անցել Վահագնի ծնունդից և Համաշխարհային վերջին Ջրհեղեղից: Հազարավոր տարիների ընթացքում Արիները ապրել են Տիեզերական Գարուն, ապա՝ Ամառ, հետո՝ Աշուն և... հիմա Ձմեռ է՝ Երկրի հարաբերական մահը:

Վաղուց արդեն մահաշունչ Ձմեռն է իշխում Երկրի վրա և Արարատում: Ցուրտն է պատել Արիների մարմիններն ու հոգիները: Սառել է Արիների կարոտը, սառել է արարումը, սառել է սերը, սառել է ժպիտը: ԵՎ Արիները այդ սառնությամբ տկարացել են:

ԵՎ տկարացած Արիները վաղուց արդեն իրենք իրենց մեջ ժխտել են աստվածայնությունը, ուրացել են Հայր Արային ու Անմահ Աստվածներին: ԵՎ մահաշունչ Վիշապը բազմել է Արարատում ու պղծում է Արարատը, պղծում է Արիների սառած հոգիները:

Բայց Ձմեռից հետո գալու է Գարուն...

Երկնի ու Երկրի մի նոր երկունքից հենց Արարատում ծնվելու է Ջորության Աստված Վահագնը՝ Վիշապին սպանելու և Երկիրը լվալու Վիշապի պղծությունից Մեծ Ջրհեղեղով: Վահագնը ծնվելու է պահպանելու իր Արի Աստվածամարդերի Ցեղը և նորից հաստատելու արարումը Երկրի վրա:

ԵՎ մոտ է Տիեզերական Գարունը, մոտ է Վահագնի ծնունդը: ԵՎ ինչպես ամեն մի գարուն, Տիեզերական Գարունն էլ իր ավետաբերն ունի, որ իրենից առաջ հայտնվում է Երկրի վրա և մարդկանց հոգիները լցնում Գարնան սպասումով:

ԵՎ Հայր Արայի կամքով, Գարնան Ավետաբերը՝ Գարեգինը, ծագեց հենց Արարատում, Վահագնի ծնունդի 9472 թվին: Նա ծագեց որպես հրեղեն ոգի՝ նյութական մարմին առած, որպես սուրբ նախնիների երջանկաբեր պարզև և որպես ըմբոստ գործություն տկարության դեմ: Գարեգինը ծագեց մանկան ծնունդով: ԵՎ ծնվեց նա որպես սովորական մի Հայ մանուկ, բոլոր Հայ մանուկների պես՝ սովորական Արի Հայ հորից ու մորից: ԵՎ նա ուներ այն ամենը, ինչ ունեին բոլոր Հայ մանուկները՝ և՛ հայր, և՛ մայր, և՛ քույր, եղբայր, և՛ հորեղբայր, հորաքույր, մորեղբայր, մորաքույր և բազում-բազում մոտ ու հեռու ազգականներ: Նա ուներ նաև բոլոր Հայ մանուկների համար ամենամեծ սրբությունները՝ պապ ու տատ: ԵՎ ինչպես բոլոր Հայ մանուկները, նա էլ իր տոհմն ուներ՝ տոհմական էր նա:

ԵՎ արև ուներ նա իր աչքերում, ու արեգն էր սիրում նրան: Իր կյանքի առաջին լույսը նա դիմավորեց արևով՝ սևեռուն աչքերը հառած արեգին: ԵՎ ինչպես էլ շրջում էին նրան, նա արևածաղկի պես իր դեմքը դարձնում էր արեգին և իր աչքերի մեջ ձուլում արևի հուրը:

Նա ծնվեց որպես Գարեգին, որպես Գարնան աստվածային Ավետաբեր՝ Վահագնի մոտալուտ ծնունդի խորհուրդը հաղորդելու Արիներին և սպասումի գործյամբ սնելու նրանց հոգիները:

ԵՎ այն Արիները, ովքեր կհավատան Գարեգինին ու կսպասեն Վահագնին, կգորանան իրենց աստվածայնության զգացողությամբ: ԵՎ միայն իրենց աստվածայնությունը զգացող գորավորները ընդառաջ կգնան Վահագնին: ԵՎ միայն նրանց կհովանավորի Ամենագոր Վահագնը: ԵՎ միայն գորավորները կվերապրեն Ջրհեղեղը:

Իսկ նրանք, որ չեն հավատա Գարեգինին ու չեն սպասի Վահագնին, կմնան իրենց երանելի տկարության մեջ ու երբեք չեն գորանա: ԵՎ իրենց տկարությամբ նրանք չեն կարող դիմավորել Վահագնին ու չեն կարող վերապրել Ջրհեղեղը: Վահագնը չի հովանավորի տկարներին, և տկարները կկործանվեն, քանզի Վահագնը պահպանելու է Աստվածամարդերի Ցեղը, իսկ տկարներից աստվածներ չեն ծնվի:

ԻՆՔՆԱՃԱՆԱԶՈՒՄ

Գարեգինը վայրի էր իր լեռների պես, իր դաշտերի ու ամվակների պես, իր ծառ ու ծաղկի պես: ԵՎ վայրի էր արեգի պես: ԵՎ իր վայրի աչքերով նայում էր վայրի արեգին: ԵՎ դեռ նախատում էր ընկերներին, որոնք վախենում էին նայել արեգին:

- Ծառերը նայում են արեգին, ծաղիկները նայում են արեգին, դո՞ւք ինչու եք արեգից թաքցնում ձեր աչքերը:

- Արեգը վառում է մեր աչքերը,- արդարանում էին ընկերները:

- Տկար աչքերն են արեգից վառվում,- պնդում էր Գարեգինը,- ուժեղ աչքերը արեգից ուժ են ստանում:

Վայրի զորություն ուներ Գարեգինը: Վայրի բնություն էր նա վայրի բնության մեջ: ԵՎ այդ վայրի բնությունը կտրեցին իր ամբողջությունից և խցկեցին վանք: Սառն էր վանքը ու խավար: ԵՎ մամլիչի պես այդ խավարը ճնշում էր Գարեգինին: Այդ ճնշումից նա կռանում էր, կծկվում: Սառնությունն էլ թմրեցնում էր նրա կծկված մարմինը: Գարեգինի վայրի բնությունը լույս էր ուզում ու ջերմություն, իսկ նրան ստիպում էին կծկվել խավարի ճնշումից ու սառչել ցրտից: ԵՎ դեռ ստիպում էին ապաշխարել, աղոթել՝ ի՞նչ և ո՞ւմ: Չէր հասկանում Գարեգինը՝ ինչ-որ փրկություն էին աղերսում ինչ-որ աստծուց: Բայց ի՞նչ փրկություն և ի՞նչ աստծուց:

«Աստված ի՞նչ գործ ունի այս խավար և ցուրտ պատերի մեջ,- մտածում էր Գարեգինը,- էս ի՞նչ աստված է, որ չի սիրում արեգ, ջերմություն, ծաղիկ, թիթեռ և թաքնվել է այս խավար ու ցուրտ վանքում: ԵՎ ինչո՞ւ են նրան աղոթում: Նա ինձ ինչպե՞ս պիտի փրկի, երբ ես հենց այս խավարից եմ ուզում փրկվել ու փախչել դուրս՝ դեպի արև, դեպի լույս ու ջերմություն»:

ԵՎ Գարեգինը դուրս վազեց վանքից ու ընկավ լույս աշխարհի, ուր արև էր, ջերմություն, ծաղիկ, թռչուններ... Նա միայնակ թափառում էր լեռներում և հիանում էր բնաշխարհով: Ամենուր կյանք էր, ժպիտ, աշխուժություն և սեր:

Գարեգինը երկար թափառեց լեռներում և վերջը հոգնած պառկեց կանաչ խոտի վրա ու քնեց: Արթնացավ գիշերով: Երկնքից անթիվ աստղեր ժպտում էին նրան: Հանկարծ Գարեգինի առջև կանգնեց նրա պապը: Այն պապը, ում նա շատ էր սիրում, բայց և որ վաղուց մեռել էր: Մեռած պապը իր ողջ կերպարանքով կանգնած էր Գարեգինի դիմաց և ժպտում էր:

- Պա՛պ,- զարմացած կանչեց Գարեգինը,- դու կա՞ս:

- Այո, թոռնի՛կս,- պատասխանեց պապը,- ես ոգի եմ և կամ:

ԵՎ Գարեգինը փարվեց պապին:

- Պա՛պ, - ասաց Գարեգինը, - ծաղիկները ժպտում են, ծառերը ծաղկում են, վայրի կենդանիները խաղում են: Նրանք էլ աստված ունեն, բայց չեն ապաշխարում, չեն աղոթում: Նրանք ապրում են, սիրում են, ժպտում են: Նրանք երջանիկ են՝ աստված նրանց սիրում է: Իսկ ինչո՞ւ աստված մեզ չի սիրում և մշտապես պահանջում է, որ մենք աղոթենք, ապաշխարենք, մեղա գանք:

ԵՎ պապը ասաց.

- Ծաղիկը, ծառը, կենդանին, թռչունը ավելի կատարյալ են, քան դուք: Նրանք ապրում են իրենց աստվածներով ու երջանիկ են: Իսկ դուք ապրում եք օտար աստվածներով ու երջանիկ չեք: Հարազատ աստվածները սիրող են, իսկ օտար աստվածները՝ պատժող:

- Պա՛պ, - ասաց Գարեգինը, - իսկ ինչպե՞ս կատարյալ լինեմ ես, որ իմ աստվածները սիրեն ինձ:

- Ապրի՛ր քո աստվածներով ու կատարյալ կլինես, - ասաց պապը:

- Իսկ ովքե՞ր են իմ աստվածները, - հարցրեց Գարեգինը:

ԵՎ պապը ասաց.

- Քո աստվածները նրանք են, ովքեր քեզ տալիս են կյանք, ուժ, սեր: Դրանք են՝ քո հայրը, քո պապը, պապի պապը, նրա պապը և այդպես մինչև Արարիչ՝ Հայր Արան: Արան է մեր բացարձակ Հայրը, որ արարել է բոլոր աստվածներին:

Գարեգինը հարցրեց.

- Պապ, ուրեմն ես է՞լ եմ աստված:

- Այո, թոռնիկս, դու էլ ես աստված, - պատասխանեց պապը, - Արայից սերված Արորդի ես դու՝ երկրային աստված:

Պապը հեռացավ, իսկ Գարեգինը արևածագը դիմանվորեց առավել զորեղ ու երջանիկ: Նա տեսել էր իր պապին, նա ճանաչել էր իր Արարչին և զգացել էլ ինքն իրեն որպես երկրային աստված:

Ժպտաց Գարեգինը ծագող արեգին և կանչեց նրան ընդառաջ.

- Մահի Աստվածը ինձ ի՞նչ աստված, երբ ինքս եմ աստված՝ Արայից սերված Արորդի եմ ես:

ՆԺՐԵՀԱՅՈՒՄ

Հոգեկան խռովքի մեջ էր Գարեգինը: Ոչ ոք չէր հավատում, որ իր պապը կա: ԵՎ համոզում էին նրան, որ դա չար ոգի է և պահանջում էին, որ իրենից վանի իր պապին: Է՛հ, չար մարդը չար ոգի է դառնում, բարի մարդը՝ բարի ոգի, իսկ պապը միշտ էլ պապ է մնում: ԵՎ պապը չի կարող չլսել թռնիկին, չի կարող չզգալ նրան, չզալ նրա մոտ, երբ թռնիկը նրա պահանջը ունի: ԵՎ պապը եկավ Գարեգինի մոտ:

- Ի՞նչն է խռովել քո հոգին, թռնիկս, - հարցրեց պապը:

ԵՎ Գարեգինը ասաց.

- Պա՛պ, էս ինչպե՞ս են ապրում Արիները՝ ոչ ետ են մայրում և ոչ էլ՝ առաջ: Ոչ իրենց պապերին են զգում և ոչ էլ իրենց թռնների մեջ են ապրում: Ապրում են միայն այսօրով՝ սարսափում են մահից, բայց կյանքն էլ չեն սիրում:

ԵՎ պապը ասաց.

- Սիրելի թռնիկս, Արիների և նրանց պապերի արանքում խցկվել է ինչ-որ մեկը և թույլ չի տալիս, որ տեսնեն իրենց պապերին, ճանաչեն ու կապվեն իրենց պապերին: Դրա համար էլ անցյալը դատարկ է նրանց համար՝ իրենք չկան այնտեղ. գալիքն էլ դատարկ է նրանց համար՝ դարձյալ իրենք չկան և միայն մահն է: Նրանց մնում է միայն այսօրը: Բայց այսօր էլ չկան նրանք: ԵՎ նրանց այսօրը լոկ մահվան ջղաձգություն է:

Իսկ Գարեգինը կա: Նա մի կողմ է հրել այդ ինչ-որ մեկին, որ կանգնած էր իր ու պապի արանքում և տեսել է պապին, ճանաչել է պապին: Գարեգինը իր անցյալն ուներ, ուներ նաև իր գալիքը: Նա գիտեր, որ ինքը պապի ապուպապն է. գիտեր նաև, որ պապն էլ իր թոռան թոռն է լինելու: Գարեգինը գիտեր՝ որտեղից է գալիս և ուր է գնում:

- Պա՛յ, - ասաց Գարեգինը, - ես ունեմ անցյալ, ունեմ և գալիք: Բայց իմ անցյալի ու գալիքի միջև կապող օղակը իմ այսօրն է: Ասա, ինչպե՞ս իմ այսօրը գտնեմ:

ԵՎ պապը ասաց.

- Թռռնիկս, քո ոգեղեն նախնիները քո հոգևոր աշխարհն են, իսկ քո մարմնավոր շրջապատը՝ քո իրական աշխարհը: Մեզ հետ դու կապված ես քո անցյալով ու գալիքով, իսկ նրանց հետ կապված ես քո ներկայով: Որպեսզի կյանքում երբևէ չկասկածես ու չմեղանչես այդ երկու աշխարհներից որևէ մեկի նկատմամբ, դու ինքդ որոնիր, դու ինքդ գտիր: Նժդեհացիր դու և աշխարհ շրջիր: Տարբեր հողերի մեջ որոնիր քո արմատը, տարբեր մարդկանց մեջ քո արյունը փնտրիր և քոնը տարբերիր օտարից:

ԵՎ Գարեգինը ինքնահաստատման ուխտով նժդեհացավ: Աշխարհը ամբողջ ոտքի տակ առավ: Տարբեր հողերում իր արմատը որոնեց, տարբեր մարդկանց մեջ փնտրեց իր արյունը: Բայց ոչ մի այլ տեղ նա իրեն չգտավ: Ոչ մի այլ հող նրան չընդունեց և ոչ մի արև չշոյեց նրան: Ամառը շոգեց, բայց չտաքացավ. ձմեռը մրսեց, բայց չզովացավ: Ամենուր գետինը սահում էր նրա ոտքերի տակ: Ոչ մի հողում նա արմատ չձգեց և ոչ մի հողում նա չզորացավ: Ամենուր մարդիկ էին, բայց ո՛չ իր նման՝ նրանք ինքը չէին, օտար էին նրանք և իր արյունը չկար նրանց մեջ: ԵՎ նա տարբերեց իրենն օտարից:

Երկար թափառեց Գարեգինը և մոլորվեց աշխարհի ճամփեքում: Ձեռքերը պարզեց դեպի երկինք ու կանչեց.

- Ո՛վ, Հայր իմ, Արա՛, տար ինձ դեպի իմ արմատը, տար ինձ դեպի իմ արյունը:

ԵՎ երկնքի անհունությունից մի ձայն արձագանքեց.

- Քեզ Վահագնի կանթեղը կառաջնորդի. բոլոր մոլորված Արիների փարոսն է դա:

ԵՎ Գարեգին Նժդեհը գիշերվա երկնքում տեսավ Վահագնի կանթեղը, որ իր փայլով առանձնանում էր բոլոր աստղերից: ԵՎ քայլեց այդ ուղղությամբ:

Հենց որ Գարեգինը իր ոտքը դրեց Արարատի հողի վրա, զգաց, թե ինչպես ձուլվեց այդ հողին՝ կարծես հենց այդ

հողից էր բուսել: Նա զգաց իր արմատը: Նայեց իր շուրջը և տեսավ իրեն իրենից դուրս բազում ես-երի մեջ: Իրենն էին բոլորը և բոլորի մեջ ինքը կար:

Գարեգինը հազարապատիկ ավելի հարազատ զգաց իր ծնողներին, իր եղբայրներին. հազարապատիկ ավելի հարազատ զգաց իր լեռները, իր դաշտերը, իր ծառն ու ծաղկունքը. հազարապատիկ ավելի հարազատ զգաց իր պապին: Բոլորը իրենն էին ու հազարապատիկ ավելի սիրով նա սիրեց նրանց:

Գարեգինը բարձրացավ սար, կանչեց իր պապին և հազարապատիկ ավելի կարոտով փարվեց նրան:

- Պա՛պ, - ասաց նա, - ես գտել եմ իմ արմատը, գտել եմ իմ արյունը, գտել եմ իմ ամբողջությունը և ես սիրում եմ իմ ամբողջությունը այս բոլորի մեջ:

Պապը ժպտաց և ասաց.

- Դե՛, թռնի՛կս, գնա Աստվածների Տաճար, որ Գառնիում է և քո Բարև՝ը տուր Հայր Արային ու անմահ Աստվածներին:

Գարեգինը գնաց Գառնի, կանգնեց Աստվածների Տաճարի առջև: Ի՛նչ մոտ էր երկինքը, ի՛նչ մոտ էր արևը: Ինքը ծուլվել էր երկնքին ու երկրին և երկնի ու երկրի հետ մի ամբողջություն էր կազմել՝ նա ինքը աստված է Աստվածների Տաճարի մոտ: Նա իր անթաթթ աչքերը հառեց երկնքին ու կանչեց:

- Բարև՛, ո՛վ, Հայր իմ, Արա՛. Բարև՛, ո՛վ, անմահ Աստվածներ: Ձեր հովանավորությամբ ես ամբողջացա իմ Ցեղով, իմ Ցեղով սիրեցի, իմ Ցեղով զորացա, ես իմ հավատը իմ Ցեղով կերտեցի, իմ Ցեղի ոգով Ցեղամարդ դարձա և աստվածացա:

ԵՎ հանկարծ արևը մեծացավ, մեծացավ, վերածվեց մի հրե զանգվածի ու մոտեցավ նրան: ԵՎ նրա դիմաց կանգնեց Արևշող Վահագնը: ԵՎ Նժդեհը տեսավ Վահագն Աստծուն:

ԵՎ Վահագնը ասաց.

- Ո՛վ, երկրային աստված Արիի արժանավոր ժառանգ, Հայր Արայի կամքով ես ծնվել դու որպես Գարեգին՝ Գարնան Ավետաբեր, ավետելու քո Արի Ցեղին մոտալուտ

գալուստը իմ: Քեզ անմահ Աստվածներն են հովանավորում,
և նրանց հովանավորությամբ դու ամբողջացար որպես
Ցեղամարդ: ԵՎ Հայր Արայի կամքով հենց այստեղ
Աստվածները կնքելու են քեզ և առաջնորդ են կարգելու
աստվածացող Արիներին:

ԵՎ Վահագնի կանչով հավաքվեցին Աստվածները:
Վահագնյա հուրով խարույկ վառեցին, յոթ արևներից գանձեր
հալեցին, պսակ հյուսեցին Նժդեհի համար և նրան կնքեցին
որպես Ցեղամարդ:

ՄԵՆԱՄԱՐՑ ՄԱՀԻ ՀԵՏ

Գարեգին Նժդեհը մեծ խարույկ վառեց, զոհ մատուցեց և փառաբանեց Հայր Արային ու անմահ Աստվածներին:

- Ո՛վ, Հայր իմ, Արա՛, - կանչեց նա, - թե ես քո կամքով կնքվեցի որպես Ցեղամարդ, ուրեմն շնորհիք ինձ աստվածային իմաստը կյանքի և բարեպաշտության խորհուրդը հոգու, որ Ազգիս ներշնչեմ ծագումի ոգին և հավերժումի հավատքն ավետեմ:

ԵՎ Վահագնը հայտնվեց Նժդեհին ու ասաց.

- Ո՛վ, երկրային աստվածների մեջ միակ աստվածդ, Հայր Արայի կամքով Գարնան ավետաբերն ես դու և իմ աստվածային պատգամախոսը: Բայց քո ուժի չափը ինքդ որոշիր՝ դու պարզապես քարոզի՞չ կլինես, թե՞ զորության առաջնորդը քո Ցեղի մեջ:

ԵՎ Նժդեհը ասաց.

- Երկրային աստված եմ ես, աստվածատես եմ ես և անսպառ ուժ ունեմ իմ մեջ: ԵՎ ես կլինեմ քո Ջորության առաջնորդը Ցեղիս մեջ:

Վահագնը հավանեց Նժդեհի խոսքերը և ասաց.

- Բայց գիտցիր, ո՛վ, Գարեգին Նժդե՛հ, որ հեշտ է առաջնորդել ժողովրդին և շատ դժվար է Ցեղին առաջնորդել:

- Ո՞րն է դրանց տարբերությունը, - հարցրեց Նժդեհը:

ԵՎ Վահագնը ասաց.

- Ժողովուրդը Ազգի ներկան է՝ կտրված անցյալից ու գալիքից: Ժողովրդի համար անցյալը դատարկություն է, գալիքն էլ մահն է միայն: ԵՎ ժողովրդի մեջ այն առաջնորդներն են հարգի, ովքեր առավել կբավարարեն նրա նահատակության պահանջմունքը և առավել նահատակության կտանեն նրան: Իսկ Ցեղը Ազգի անցյալն է, ներկան և ապագան: ԵՎ Ցեղին կարող են առաջնորդել

միայն նրանք, ովքեր հավերժության խորհուրդն ունեն իրենց մեջ:

- Թող մահվան ավետաբերները առաջնորդեն ժողովրդին, - ասաց Նժդեհը, - Հայր Արայի կամքով Գարեգին եմ ես, ուրեմն ես միայն Ցեղը պիտի առաջնորդեմ:

ԵՎ Վահագնը ասաց.

- Բայց գիտցիր, ո՞վ, Գարեգին, որ ավելի հեշտ է ջրից կրակ հանել, քան լինել Երկրային աստվածների առաջնորդ: Նրանց առաջնորդել կարող է միայն նա, ով ինքը մահից զորավոր է:

ԵՎ Նժդեհը դիմեց Վահագնին.

- Ո՞վ, Ամենազոր Վահագն, օժիր իմ երկսայրի սուրը քո զորությամբ, և ես գնամ մենամարտելու մահի հետ: Կա՞մ մահը կհաղթի ինձ, և իմ Ազգը կազատվի գաճաճ առաջնորդ ունենալու դժբախտությունից, կա՞մ էլ ես կհաղթեմ մահին և քո հովանավորությամբ կառաջնորդեմ Ազգս դեպի զորացում, դեպի հավերժացում:

Վահագնը օժեց Նժդեհի սուրը: Նժդեհը համբուրեց սուրը և ապա պարզեց դեպի արեզը ու իր երդումը տվեց Վահագնին.

- Ես Ցեղակրոն եմ, և ահա կերգվեմ քո աջի վրա, ո՞վ, Վահագն, երբեք չմեղանչել Ռխտիս դեմ. ապրել, գործել ու մեռնել որպես Ցեղամարդ, որպես Վահագն Աստծո նվիրյալ ուխտավոր: Փա՞ռք քեզ, ո՞վ, Վահագն Ամենազոր:

Ասաց, հեծավ իր ձին ու գնաց մահին որոնելու: Շատ գնաց, թե քիչ, հասավ Բալկաններ: Մեծ պատերազմ էր բռնկվել այնտեղ: Երկու բանակներ բախվել էին իրար: Մարդիկ մահվան շուրջպար բռնած, խոցում էին իրար ու չէին հազենում:

Նժդեհը կանգնեց սարի վրա ու նայեց ներքև: Ներքևում մի բանակը գրոհում էր կատաղի մոլուցքով, իսկ մյուս բանակը պաշտպանվում էր մոլի համառությամբ: Նժդեհը պատրաստ էր մտնելու մարտի մեջ: Բայց ո՞ւմ դեմ: Նա վրեժ չունեի ոչ մի կողմի նկատմամբ. իր Մայր Հողի վրա էլ չէր, որ պաշտպաներ այն: Նա միայն դուրս էր եկել մահի հետ մենամարտելու՝ ազնիվ, ասպետական մենամարտ մղելու: Իսկ մահը, իհարկե, հարձակվողի կողմն էր: Չէ՞ որ

հարձակվողը հենց մահով էր եկել ուրիշի հողը գրավելու: ԵՎ Նժդեհը որոշեց հարձակվել հարձակվողի վրա:

- Ո՛վ, Վահագն, մարտի եմ ելնում քո օժված սրով քո աստվածային փառքը հյուսելու:

Կանչեց Նժդեհը, ասպանդակեց իր ձին և սարի լանջով սլացավ ներքև: Ջարմանքն էր պատել կռվող բանակներին, երբ տեսան, որ սարի լանջով ներքև է սլանում մեն-մենակ մի ձիավոր, ում սուրը կրակի պես վառվում էր արևի տակ և ում կարմիր թիկնոցը դրոշակի պես ծածանվում էր թիկունքին:

Նժդեհը մխրձվեց հարձակվող զորքի մեջ: Աջ ու ձախ թրատում էր նա: Շատ և շատ քաջեր ընկան նրա սրի հարվածներից, բայց ոչ մի կերպ չէին կարողանում կասեցնել Նժդեհի հաղթարշավը: Նժդեհը մահի դեմ էր կռվում, և մահը պարտվում էր: Ջարմացած ու սարսափած ռազմիկները փախչում էին Նժդեհի առաջից: Պաշտպանվող բանակը ոգևորված դուրս եկավ իր դիրքերից ու գրոհի անցավ: Հարձակվող բանակը նահանջեց: Մարտն ավարտվեց:

Հոգնած, բայց երջանիկ Նժդեհը ձիով շրջում էր դաշտում, ուր միայն գոհված քաջերն էին փռված: Նա տեսավ, որ իր կողմն է գալիս մի հեծյալ խումբ: Նժդեհը ճանաչեց այդ խմբի առաջնորդին՝ դա մեծ վրիժառու Անդրանիկն էր:

- Ո՛վ, պատանի,- ասաց Անդրանիկը,- քեզ համար մարգադա՞շտ է սա, որ մեն մենակ մտել ես երկու բանակների կատաղի կռվի մեջ ու խաղ ես անում մանկական չարաճճիությամբ:

ԵՎ Նժդեհը պատասխանեց.

- Այո, մեծդ Անդրանիկ, մարգադաշտ է սա, ահեղ մարգադաշտ է, ուր ես մրցում եմ մահի հետ:

Շատ զարմացավ Անդրանիկը և հարցրեց.

- Ո՞վ ես դու, պատանի, դու խե՞նթ ես, թե՞ աստված:

ԵՎ Նժդեհը ասաց.

- Ես Գարեգինն եմ՝ Գարնան ավետաբերը. ես Նժդեհն եմ՝ հավերժական թափառողը. աստվածատեսն եմ ես՝ Վահագն Աստճո պատգամախոսը. Ցեղամարդն եմ ես՝ առաջնորդը աստվածամարդերի. մահից զորավորն եմ ես:

Լսեց Անդրանիկը Նժդեհին և ասաց.

- Անժանոթ բաներ ես խոսում դու, Գարեգին Նժդեհի:
Բայց դու ինձ դուր ես գալիս: Միացիր մեզ և
վրեժխնդրությամբ մթազնած մեր աչքերի մեջ քո արևի
կենարար լույսը շողարձակիր:

- Ես կմիանամ քեզ, մեծդ Անդրանիկ,- ասաց Նժդեհը,-
հատկապես որ դու ինքդ էլ մահից զորավոր ես. բայց ավստս,
որ դու դա չգիտես:

ԵՎ Հայ քաջերի գլուխ անցած Նժդեհն ու Անդրանիկը,
իրենց Հայրենիքից շատ հեռու, մասնակցում էին Բալկանյան
պատերազմին: Շատ քաջագործություններ կատարեցին
նրանք: Բայց Անդրանիկը կռվում էր մահի դեմ, իսկ Նժդեհը
խաղում էր մահի հետ: Երկուսն էլ մահից զորավոր. բայց
Անդրանիկը չգիտեր դա, իսկ Նժդեհը գիտեր:

ՍԻՐԱԶՕԾՈՒՄ

Մի տարօրինակ տազնապ էր պատել Գարեգին Նժդեհին: ԵՎ նա ամաչում էր այդ տազնապից, նա ամաչում էր ինքն իրենից: Մահից նա չէր վախենում՝ նա մահից զորավոր էր: Բայց նա տազնապում էր գիշերից, նա տազնապում էր քնելուց... Երկու գիշեր նա միևնույն երազն էր տեսնում՝ միևնույն կերպարը, միևնույն ձայնը, որ կանչում էր Նժդեհին, կանչում...

ԵՎ չէր հասկանում Նժդեհը, թե ո՞վ էր նա, ինչպե՞ս և ինչո՞ւ հանկարծ հայտնվեց իր երազում այնքան կենդանի, այնքան իրական: ԵՎ ինչո՞ւ է նա այնքան հարազատ, որ Նժդեհը նույնիսկ կարոտում է նրան: Անժանոթ հարազատ: Այդպես կլինի՞: ԵՎ հենց դրանից էլ սրտդողում էր Նժդեհը, երկյուղում էր գիշերից:

Բայց գիշերը վրա էր հասել: ԵՎ Նժդեհը միայնակ թափառում էր լեռներում, աշխատելով իրենից վանել երկյուղալի քունը: Գիշերվա մութն իր մեղմ զեփյուռով օրոր էր ասում Նժդեհին: Նժդեհը, ականջը քամու օրորերգին, փորձում էր հասկանալ այդ երգը: Հանկարծ զգաց, որ դա երգ չէ: Գիշերային մթության հետ ձուլված ժայռերից ու ձորերից որպես մեղմ արծազանք իրեն էր հասնում մի թախծոտ հառաչ, նրբին աղերսանք՝ «արի՛, արի՛...»: Ցնցվեց Նժդեհը, նայեց շուրջը: Բայց ձայնը ամենուր էր: Նա ձեռքով ամուր փակեց ականջները, որ չլսի: Բայց դարձյալ այդ ձայնը մխրձվում էր ներս՝ «արի՛, արի՛ ինձ մոտ...»:

«Այդ ո՞վ է, վերջապես, - տանջվում էր Նժդեհը,- աննյութ ոգի՞ է, թե՞ իրական կերպար: Այդ ո՞վ է, որին ես չեմ ճանաչում, բայց որը ճանաչում է ինձ: ԵՎ ի՞նչ է ուզում ինձանից»:

- Ո՞վ, Հայր իմ, Արա՛,- կանչեց Նժդեհը,- քո կանքով՝ մահից զորավոր եմ ես, բայց ո՞վ է սա, որ այդպես համառորեն հետապնդում է ինձ, և ես պրծում չունեմ նրանից:

ԵՎ Աստղիկ Աստվածուհին հայտնվեց Նժդեհին ու ասաց.

- Ո՛վ, Գարեգին Նժդեհ, դա քո սերն է հետապնդում քեզ: Սերը աստվածային շնորհ է և մի՛ վանիր քեզանից: Հայր Արայի կամքով դու Գարնան ավետաբերն ես: Իսկ առանց սիրո էլ ի՞նչ Գարուն:

- Բայց ես Ջորությանն եմ երդվել,- ասաց Նժդեհը:

ԵՎ Աստղիկը ասաց.

- Այո, քաջո՛ Նժդեհ, բայց գիտցիր, որ հենց Ջորության զորությունն է Սերը: Հայր Արայի կամքով ես օծում եմ քո սերը, և դու գնա սիրուդ կանչին ընդառաջ:

Ասաց Աստղիկը և անհետացավ: Իսկ Նժդեհը դուրս եկավ իր դատողության իշխանությունից ու միայն իր հոգու բնագոյնների մղումով վազեց առաջ: Ո՞ր էր վազում ինքն էլ չգիտեր: Բայց վազում էր խելագարի պես, վազում էր գիշերային մթության մեջ, հետևելով «նրա» ձայնին: Մահից զորավորն, անգամ, մանկացել էր սիրո առաջ:

Նժդեհի աչքերից շողարձակող հուրը լուսավորում էր ճանապարհը, և վայրի գազանները սարսափած դես ու դեն էին փախչում նրա աչքերի հուրից: ԵՎ նա ձորերն էր իջնում, ծանծաղ, բայց արագահոս ջրի միջով անցնում էր անսայթաք, մազլցում էր ժայռերն ի վեր և ապա... քայլեց նեղ և մութ փողոցներով: Նա եկավ ու դեմ առավ մի տան: Իսկ ձայնը կանչում էր ներսից:

Դուռը բոլորովին բաց էր, և անքուն մարդիկ խմբված էին սենյակում: Լուսամուտի տակ պառկած էր մահամերձ աղջիկը: Դա նա էր, նա՛ գիշերային այցելուն, իրեն կանչող ձայնի տիրուհին: Պառկած էր անշարժ, աչքերը փակ, և միայն շուրթերն էին հագիվ շարժումով ինչ-որ բան շշմջում: Ոչ ոք չէր կարող լսել նրան: Բոլորը երկյուղած սպասում էին մահին: ԵՎ միայն աղջիկն էր, որ Նժդեհին էր սպասում, Նժդեհին էր կանչում: ԵՎ միայն Նժդեհն էր պարզ լսում ու հասկանում նրան:

Բոլորի զարմացած հայացքների ներքո Նժդեհը ուղղվեց դեպի աղջիկը՝ այնքա՛ն անծանոթ, բայց այնքա՛ն հարազատ: Աղջկա աչքերը փակ էին, իսկ շուրթերը անընդհատ կրկնում էին «արի՛, արի՛...»: Մի անբացատրելի

կարոտ Նժդեհին մղում էր առաջ: ԵՎ նա հարազատի համարձակությամբ նստեց աղջկա կողքին, վերցրեց աղջկա ձեռքն ու սեղմեց իր կրծքին:

Մի ուժգին ցնցում շանթեց աղջկան: Բոլորը ոտքի թռան: Թվաց, թե մահվան ցնցումն էր դա: Բայց ո՛չ... Աղջկա կուրծքն արագ, շատ արագ ելևէջեց, շուրթերի վրա մի թույլ ժպիտ շողաց ու... դանդաղ բացվեցին աչքերը:

Նժդեհը նայեց նրա աչքերի մեջ: Հանկարծ աչքերը մեծացան, մեծացան ու ընդգրկեցին ողջ սենյակը, տիեզերքը և... իրեն՝ Նժդեհին, իրենց խորության մեջ: Դարերի խորությունն էր այնտեղ և... ինքը: Նժդեհը տեսնում էր իրեն դարերի անհունության մեջ, դարերի փոշին իր վրա և դարերի բույրով օծված: Տեսնում էր և «նրան»: Այո, այո, նա իր կողքին հարսի քողով, երջանիկ ժպիտով: Հարսանիք է, հանդիսավոր պսակադրություն... Բազում Արիներ՝ իշխաններ, զինվորներ, ռամիկներ... Ի՛նչ ծանոթ են բոլորը: Նրանք կենաց են խմում, երգում, պարում, ծաղիկներ են շարտում նորապսակների վրա: Բոլորը երջանիկ են, իրենք էլ են երջանիկ: ԵՎ երգն ու պարը արձագանք տալով Աստվածների Տաճարից տարածվում էին մինչև երկինք:

Այդ բոլորը մի ակնթարթ միայն: Այո, միայն մի ակնթարթ, և ապա ամեն ինչ խավարեց արցունքների տարափում: Աչքերը դարձան ամենասովորական աչքեր, և ամենասովորական արցունքներ հորդեցին նրանց միջից: Աղջիկը լաց էր լինում: Հետո՞: Կարծես երազում Նժդեհը լսում էր աղջկա ձայնը. նա ինչ-որ բան էր ասում՝ հարսանիք...սպասում... Վահագն... Աստղիկ... Չէր ըմբռնում Նժդեհը՝ դարերի մշուշով էր պատած նրա միտքը: Աղջիկը խոսում էր, ժպտում, լալիս և... վերջը հոգնած, բայց երջանիկ փակեց աչքերը: Նա քնած էր ու ժպտում էր...

Ոչ ոք ոչինչ չհասկացավ: Նժդեհն ինքն էլ ոչինչ չհասկացավ: Բայց համոզված էր՝ առավոտյան աղջիկը կարթնանա, անպայման կարթնանա: Նա էլ ոչինչ չի հիշի, բայց... դարեր առաջ սկսված պսակադրությունը կշարունակվի...

ԱՐՅԱՑ ՓՐԿԻՉԸ

Հայր Արայի կամքով, Վահագնի Ջորությամբ և Արի Հայերի հաղթ բազուկով առաջին Ձնհալը սկսվեց Արարատում: Երկնքի մի հատված մաքրվեց ամպերից, և արեգի կենարար ճառագայթները լույսով ու ջերմությամբ ողողեցին Արարատի մի փոքրիկ հատված: Ծնվեց Արևի երկիր Հայաստանը:

Մոլեգնում էին Չարիները: Նրանք չէին հանդուրժում արև, լույս և չէին հանդուրժում Արևի երկրի ծնունդը Արարատում: Արևի երկիր Հայաստանի մահն էին նյութում նրանք: ԵՎ Վիշապի հովանավորությամբ մի մեծ բանակ ուղարկեցին Սյունիք, որն ամենից մոտն էր արեգին: ԵՎ դեռ Արի ռուսների բուշևիկ իշխանավորներն էլ միացել էին Չարիներին, իրենց իսկ արիականությունը հալածելու Սյունիքում:

Մոլորվել էին Արի Հայերը: Խորհուրդ էին անում Հայոց իշխանավորները. ելք էին որոնում: ԵՎ Նժդեհը ասաց.

- Վահագնի հետ պիտի խոսենք հիմա՝ Աստվածը մեր արիական հայության: ԵՎ միայն Վահագնի Ջորությամբ կպահպանվի Սյունիքը Հայաստանի համար:

ԵՎ գնաց Նժդեհը խոսելու Վահագնի հետ: Նա բարձրացավ Արագած լեռը, խարույկ վառեց ու կանչեց Վահագնին:

- Ո՛վ, Վահագն Ամենագոր, թե Հայր Արայի կամքով Գարեգին եմ ես՝ Գարնան ավետաբեր, թե մահից զորավոր եմ ես և թե քո Ջորության ուխտվորն եմ ես, ասա՝ ինչպե՞ս պահպանեն Սյունյաց լեռնաստանը Հայաստանի համար:

ԵՎ Վահագնը ասաց.

- Ո՛վ, Վեհ Նժդեհ, Հայր Արայի կամքով Գարեգին ես դու, Աստվածատես ես դու և մահից զորավոր ես դու, իսկ այժմ Արյաց Փրկիչը պիտի լինես դու: Գիտցիր, որ Սյունիքը պարզապես լեռնաստան չէ: Սյունիքը ապրեցնում է

Հայաստանը, իսկ Հայաստանը ամբողջացնում է Արի Ցեղը քո: Հայաստանում են իրար կապվում արևելյան ու արևմտյան Արի Ազգերը, և Հայաստանով է ամբողջանում Արի Ցեղը: ԵՎ Հայաստանում են իրար խաչվում Արիական ու Թուրանական Ցեղերը: ԵՎ այդ Ցեղերից միայն մեկը կարող է ամբողջանալ: Թե պահպանվեց Սյունիքը, կապրի Հայաստանը և կամբողջանա Արի Ցեղը: Թե կորավ Սյունիքը, Հայաստանը կմեռնի, կտրոհվի Արի Ցեղը, և կստեղծվի Թուրանական մի հզոր ամբողջություն, որը մահաբեր կլինի արևելյան Արի Ազգերի համար: ԵՎ Հայր Արայի կամքով ու իմ Ջորությամբ միայն դու կարող ես պահպանել Սյունիքը և փրկել Արի Ցեղը աղետավոր տրոհումից:

ԵՎ Նժդեհը կազմեց իր զորախումբը: Հազարների միջից նա ընտրեց միայն նրանց, ովքեր արյան կանչով զգում էին իրենց պապերին: Ապա այդ ընտրյալներից էլ ընտրեց միայն նրանց, ովքեր կարող էին նայել արեգին: Ընդամենը յոթ հարյուր հոգի ընտրեց նա և այդ ընտրյալներով կազմեց իր զորախումբը: Ապա Նժդեհը իր զորախումբը տարավ Քառնի և Աստվածների Տաճարի մոտ դիմեց իր զորականներին.

- Ո՛վ, Արի քաջեր, փոքր է մեր զորախումբը, բայց անմահների զորախումբ է: Զգալով ձեր պապերին, դուք զգում եք ձեր Արի ծագումը և ձեր արմատը Մայր Հողի մեջ: Նայելով արեգին, դուք ձեր հավերժությանն եք նայում: ԵՎ հենց այստեղ, Աստվածների Տաճարի մոտ Ամենագոր Վահագնը կօժի մեր սրերը, և մենք կհաղթենք մահին: Բայց գիտցեք, որ ոչ մի մահ ձեր կողքով չպետք է անցնի, քանզի ձեր կողքով անցած ամեն մի մահ մի Հայ մանկան, մի Հայ մոր կամ հարսի կյանք է տանելու:

Ապա մի մեծ խարույկ վառեցին, փառաբանեցին Հայր Արային ու Ամենագոր Վահագնին: ԵՎ Նժդեհը կանչեց.

- Ո՛վ, Հայր մեր, Արա՛, մեր նախնիներից Հայկը աստվածների մեջ ընտրեց զորավորներին և պաշտպանեց Արարատը: Ես զորավորների մեջ ընտրեցի աստվածներին՝ պաշտպանելու Սյունիքը: Տուր մեզ քո Հայրական օրհնությունը և Վահագնի Ջորությամբ օժիր մեր սրերն ու հոգիները:

Ամենագոր Վահագնը օժեց նրանց սրերն ու հոգիները: Արյաց գորականները իրենց երդումը տվեցին Վահագն Աստծուն և արշավեցին դեպի Սյունիք՝ արիականությունը պաշտպանելու մահաբեր Չարիից:

Աշխարհը շատ էր տեսել հանձարեղ ռազմավարներ, շատ էր տեսել գերագույն հերոսացումներ: Բայց աշխարհը շատ վաղուց չէր տեսել, որ ոգու զորությամբ սրի զորությունը ջախջախվեր: Երկու տարի Նժդեհը իր անմահների զորախմբով կռիվ էր մղում Չարիների դեմ և միայն հաղթում էր: ԵՎ անպարտելի էր Գարեգին Նժդեհը: Չէ՞ որ նա ինքը աստված էր, թեև՝ երկրային և Անմահ Աստվածների հովանավորությունն ուներ: ԵՎ իր հավատքով ու զորությամբ սնում էր անվերջ նա իր մարտիկներին:

- Ձեր հոգու մեջ փայփայեք պաշտամունքը մեր մեծ նահատակների, - ասում էր նա. - որ Վահագնի Ջորությամբ, հաղթական ոգով և իրենց կյանքով մեզ արև տվին:

ԵՎ նախնյաց մեծ ոգիներն էին զինակցում նրանց: Նրանք էին առաջինը հարվածում թշնամիներին: Նրանք հարվածում էին թշնամիների հոգուն, ընկճում նրանց, հոգեպես նրանց պարտության մատնում: ԵՎ հայ մարտիկներին մնում էր միայն սպանել նրանց մարմինները: ԵՎ Նժդեհի մարտիկներից ամեն մեկը մի գերհզոր ոգի էր...

Վիշապը լավ գիտեր, որ իրենց աստվածայնությունը զգացող Արիների դեմ միայն նրանց արյունով կարելի է կռվել: ԵՎ Վիշապի կանքով, անպարտելի Նժդեհի դեմ Չարիները հանեցին նույնպես անպարտելի, բայց իր Արի ծագումը ուրացած ռուս Կուրոչկինին: ԵՎ Նժդեհի զորախմբից հիսուն անգամ ավել Չարյաց զորքով նա արշավեց Սյունիքի վրա:

Կուրոչկինը վերջնագիր ուղարկեց Նժդեհին, պահանջելով անհապաղ հանձնվել, քանի դեռ իր անհամար զորքը չի հանել նրա դեմ: ԵՎ Նժդեհը պատասխանեց. «Շուտ եկեք և շատ եկեք, որ իմ հաղթանակն առավել բերկրալի լինի»:

Առավոտյան, երբ արևի առաջին ձառագայթները ընկան Սյունյաց լեռների վրա, տեսան, որ Չարի զինվորները սև մորեխի պես ծածկել են սարավանջերը:

Նժդեհի զորականներից մեկը ասաց.

- Մեծդ, Նժդեհ, մեր բազուկները կհոգնեն և մեր կոպերը կծանրանան գիշեր ու ցերեկ թրատելով սրանց, այնքան շատ են...

ԵՎ Նժդեհը ասաց.

- Յոթ հարյուր էին իմ անմահ ռազմիկները, մնացին վեց հարյուր իննսուն ինը:

- Ես կռվից չեմ վախենում, - արդարացավ զորականը:

Բայց Նժդեհը ասաց.

- Ինձ հաղթող կռվողներ են պետք, այլ ոչ՝ մեռնող կռվողներ: Դու կասկածեցիր քո հաղթանակին, ուրեմն հանձնիր քո զենքը:

Նժդեհը զորայնքից հեռացրեց այդ զորականին և ապա դիմեց բոլորին ու ասաց.

- Ո՛վ, իմ անմահ զորականներ, երկու տարի դուք ինձ հետ միայն հաղթանակներ եք կռել այստեղ: Բայց զուցե հոգնե՞լ եք դուք, կամ այս չարյաց բազմությունն է երկյուղ գցել ձեր հոգիների մեջ: ԵՎ դուք կասկածո՞ւմ եք ձեր հաղթանակին, դուք կասկածո՞ւմ եք Վահագնի օժած սրի զորությանը: Այդ դեպքում կարող եք հեռանալ, թեկուզ՝ բոլորդ: Ես միայնակ կկռվեմ և միայնակ կհաղթեմ, քանզի մահից զորավոր եմ ես և Վահագնի զորությունն ունեմ իմ մեջ: Ես վճռել եմ հաղթել Չարիին և ձեզ հետ ուզում եմ ավելի հեշտ հաղթել ու հաղթանակի բերկրանքը կիսել ձեզ հետ: Բայց իմ կողքին կարող են կռվել միայն նրանք, ովքեր իրենց անպարտելի աստված են զգում:

Լռեց Նժդեհը, նայեց ռազմիկներին: Հաղթանակի հավատն էր շողում բոլորի աչքերում: ԵՎ ժպտաց Նժդեհը.

- Ո՛վ, երկրային աստվածներ, ո՛վ, անմահ ոգիներ: Անընդունելի է պարտությունը Մայր Հողի վրա, քանզի մեզ հետ են Մայր Հողի ուժը, հայրենի արևը, մեր սուրբ նախնիները, մեզ հետ է Ամենագոր Վահագնը: Մեր մանուկները վառ հավատով մեզ են նայում. մեր մայրերի մաղթանքն է թևածում մեր գլխավերևում, մեր սրբամաքուր կույս աղջիկների կարոտն է պարուրում հոգիները մեր: Օ՛հ, ի՞նչ զորություն... ԵՎ էլ ի՞նչ թշնամի, էլ ի՞նչ բազմություն՝ պարզապես փքված ձյունե մեծություն, որ պիտի հալչի մեր զորության հուրից:

ԵՎ իր զորախմբից հիսուն անգամ ավել զորքի դեմ Նժդեհը ելավ հիսունապատիկ ավել զորությամբ: Մեծադրոդ ճակատամարտի արձագնքները տարածվել էին ամբողջ Սյունիքում և հասել մինչև Արևը: Վիշապն էր կատաղի ոռնոցով ոգևորում Չարիներին: Ամենագոր Վահագն էր իր Ջորությամբ սնում Արյաց քաջերին: Երեք օր, երեք գիշեր Արի անմահները թրատում էին Չարիներին, և չէին հոգնում նրանց բազուկները ու չէին ծանրանում կոպերը նրանց:

Երբ չորրորդ առավուտը բացվեց, և արեզը ժպտաց երկնքում, ամբողջ Չարյաց զորքը ջարդված էր, և միայն նրա առաջնորդը՝ ինքնուրաց Կուրոչկինն էր մեն մենակ կանգնած՝ հուսահատ, գլխիկոր: ԵՎ դիմեց նա Նժդեհին.

- Ես՝ իմ փառքի գագաթնակետին հասած անպարտելի զորավարս, ի՞նչ իմանայի, որ Սյունիքում քո ձեռքով անդարձ գերեզմանելու եմ իմ փառքը: ԵՎ պատիվ արա ինձ, ո՞վ, Մեծո՛ Նժդեհ և իմ փառքի հետ մեկտեղ հենց քո ձեռքով գերեզմանիր և ինձ:

ԵՎ Նժդեհը ասաց.

- Ո՞վ, Չարիների զորավար, քո խոսքերը միայն Արիի հոգուց կբխեն. դու Արի ես, և ես եղբայրասպան չեմ լինի: Գնա, ապրիր, բայց ճանաչիր քո Արի ծագումը և քո արյան դեմ այլևս չկռվես:

Իսկ Արի Հայ անմահներից միայն մեկն էր պարտվել մահից: ԵՎ դա էլ այն զորականն էր, որ վտարվել էր զորախմբից: Նա ինքնասպան էր եղել:

ԵՎ Սյունիքը պահպանվեց Հայաստանի համար, և Արի Ցեղը պահպանեց իր ամբողջականությունը: ԵՎ երբ Արի Ազգերը իրենց մեջ վերջապես իրենց արիականությունը զգան և Վահագնի Ջորությունը զգան իրենց մեջ, այնժամ նրանք անպայման կփառաբանեն Արյաց Փրկիչ Նժդեհին:

ՈՒՆՏԱԿՈՐԸ

Գարեգին Նժդեհը իր անմահների զորախմբով ազատեց Սյունյաց լեռները Չարիներից, ցրեց մութ ամպերը, և կենաց արևը ամբողջ իր ջերմությամբ ժպտաց երկնքից: Արեգի ճառագայթները թափանցում էին Արևի երկրի բոլոր անկյունները:

Բայց հայերը մոլորվել էին արևի այդ ջերմությունից: Նրանք ուզում էին արև, բայց երկար ժամանակ վարժված լինելով մռայլին, չէին դիմանում արևի այս զորությանը: Շատ էր զորավոր արևը նրանց տկարացած մարմինների ու աչքերի համար: ԵՎ նրանք գերադասեցին վերադառնալ խավարին: ԵՎ աղոթում էին Չարի Աստծուն, խնդրելով ամպերով ծածկել բոլոր արևը:

- Ո՛վ, Արի Հայեր,- կանչեց Նժդեհը,- այդ ո՞ւմ եք աղոթում: Դուք ձեր մահի՞ն եք աղոթում: Լսեցեք ինձ՝ ես Վահագն Աստծուն եմ տեսել, Վահագնի զորությունն ունեմ և Վահագնի պատգամն եմ բերել ձեզ: Մի վախեցեք այս արևից, մի թաքնվեք նրանից. սա Գարնան արևն է, կյանքի արևն է: Փարվեք նրան, զորացեք նրանով և սպասեք Վահագնին: Վահագնը Գարուն է բերելու աշխարհին և պահպանելու է մեր Արի Ցեղը Մեծ Ջրհեղեղից:

Բայց Հայերը չէին հանդգնում բարձրացնել իրենց աչքերը ու նայել արևին: Նրանք վախենում էին արևից և անիծում էին Նժդեհին, որ որպես չարագուշակ մի ուժ, բոլոր արևը վառեց իրենց գլխավերևում:

ԵՎ Նժդեհը մնաց միայնակ՝ լքված, անիծված, վտարված: Սյունյաց լեռներում նա խարույկ վառեց, զոհ մատուցեց Հայր Արային և Անմահ Աստվածներին ու կանչեց.

- Ո՛վ, Հայր իմ, Արա՛, ես արև պարզեցի իմ Արիներին, իսկ նրանք անիծում են ինձ:

ԵՎ Վահագնը հայտնվեց Նժդեհին ու ասաց.

- Հայր Արայի կամքով են ես եկել քեզ մոտ: Դու Գարեգին ես ծնվել և Գարեգին ես դու: Բայց գիտցիր, որ երկարատև Չմեռվա ցուրտը և Վիշապի թույնը տկարացրել են Արիներին, և նրանցից քչերը միայն կարող են դիմանալ արևի զորությանը: Քեզ անիծում են տկարները միայն՝ նրանք, ովքեր մահով են ապրում և մահով պիտի գնան: Դու աստվածամարդերի առաջնորդ ես, այլ ոչ՝ մահկանացուների: Հայր Արայի կամքով շրջիր աշխարհի բոլոր կողմերը և սփռված Հայերի մեջ գտիր զորավորներին, արթնացրու նրանց մեջ աստվածայնությունը և առաջնորդիր նրանց դեպի Արարատ:

ԵՎ Նժդեհը, հավատարիմ իր անվանը և աստվածային իր կոչումին, թափառեց աշխարհով մեկ: Հայրենիքի անպարտելի զորավարը, որպես երզնյալ ուխտավոր, Արարատից դուրս սփռված Հայերի մեջ որոնում էր Աստվածամարդերի: Նա աստվածայնություն էր քարոզում Արի Հայերին:

Եկավ հասավ աշխարհի ծայրը, որ Ամերիկա է կոչվում: Դա մի օտարոտի երկիր էր՝ հարուստ, բայց սառը: ԵՎ արևը այստեղ ծուլորեն սահում էր դեպի մայրամուտ: Հայերը այստեղ գոհ էին իրենց հարուստ ու կուշտ կյանքից և խոսում էին օտար լեզվով: Նժդեհը չէր հասկանում նրանց լեզուն, նրանք էլ չէին հասկանում Նժդեհի լեզուն:

Վշտացել էր Նժդեհը. «Ամերիկյան աշխարհի կոյուղին է, և այստեղ են լցվում աշխարհի բոլոր թափոնները: ԵՎ մարդիկ՝ իրենք թափոն և թափոնների մեջ առատ սնունդ հայթայթելով, երջանիկ են: Բայց ի՞նչ գործ ունեն այստեղ Հայերը: Ինչպե՞ս համոզեմ այս Հայերին, որ նրանք թափոն չեն, այլ պարտված Աստվածամարդիկ են: Ինչպե՞ս համոզեմ նրանց, որ իրենց արմատը Արարատում է, որտեղ սնունդը այսպես առատ չէ, բայց մաքուր է ու բնական: Ինչպե՞ս այդ բոլորը ասեմ նրանց, երբ ես չգիտեմ նրանց լեզուն, նրանք էլ իմ լեզուն չգիտեն»:

ԵՎ Նժդեհը դիմեց Հայր Արային.

- Ո՛վ, Հայր իմ, Արա՛, ասա ինձ, ի՞նչ լեզվով խոսեմ այս Հայերի հետ, որ կարողանամ քո պատգամը հասցնել նրանց:

ԵՎ Վահագնը հայտնվեց Նժդեհին ու ասաց.

- Ո՛վ, նվիրյալ ուխտավոր, այս հայերի հետ դու Աստվածաշունչ Լեզվով խոսիր: Աստվածաշունչը՝ դա Հայր Արայի Լեզուն է, որ ժառանգել է քո նախահայրը՝ երկրային աստված Արին: Անմահ Աստվածներն էլ Հայր Արայից նույն Լեզուն են ժառանգել:

- Բայց նրանք Աստվածաշունչ Հայրց Լեզուն մոռացել են,- ասաց Նժդեհը:

ԵՎ Վահագնը ասաց.

- Աստվածաշունչ Լեզուն մոռանալ չի լինի, քանզի Աստվածաշունչ Լեզուն նրանց ոգին է, էությունը: ԵՎ նրանք, ովքեր Աստվածամարդ են, իրենց արյան կանչով կզգան Աստվածաշունչ Լեզուն:

Ջարմանքն ու տարակուսանքը պատել էր բոլորին, երբ իմացել էին, որ Գարեգին Նժդեհը օտարախոս Հայերի հետ խոսելու է Աստվածների Լեզվով: Շատ-շատերը հավաքվեցին:

ԵՎ Նժդեհը խոսեց: Խոսեց ոգով ու արյունով, խոսեց Աստվածաշունչ Լեզվով՝ այն Լեզվով, որ ինքը խոսում է Անմահ Աստվածների հետ: Հենց այդ Լեզվով նա խոսում էր օտարախոս Հայերի հետ: ԵՎ խոսում էր աստվածավարի: Նրանք, ովքեր Աստվածամարդիկ չէին, ոչինչ չհասկացան ու հեռացան: Իսկ նրանք, ովքեր Աստվածամարդիկ էին, արյան կանչով կապվեցին Նժդեհի աստվածային խոսքին և հոգով զգացին այն:

ԵՎ զարմանում էին նրանք, որ հասկանում էին Նժդեհին, զգում էին նրան: Ապա զարմանքն էլ չքացավ, և գերագույն ոգևորությունը շողաց նրանց աչքերում: Նրանք վերացան իրենց առօրյա կյանքից, մոռացան Ամերիկյան իր առատ սնունդով. թվում էր՝ մոռացան և այն լեզուն, որով խոսում էին մինչ այդ: Նրանք միայն իրենց զգում էին Արարատում, ջերմանում էին Արարատի բորբ արևով, զգում էին Աստվածների շունչը իրենց մեջ և տեսնում էին աստվածային պատգամախոսին, որ մտովի նրանց տանում էր դեպի Հայաստան՝ դեպի Արարատ:

ԵՎ վերջացնելով իր խոսքը, Նժդեհը իր պատգամը ուղղեց Արի Հայերին.

- Հայաստան անունը տալիս, ոտքի՝ կանգնիր, ո՛վ,
Արի Հայ, հպարտ հայացքդ դեպի արևելք: Հայաստանի արևը
արևելքում է ծագում. արևմուտքում մայրամուտ է:

ԵՎ Նժդեհին լսող Արի Հայերը՝ իրենց արյան կանչով՝
արթնացան տարիների թմբիրից, առաջին անգամ իրենք
իրենց տեսան, առաջին անգամ մտան իրենք իրենց մեջ,
առաջին անգամ զգացին իրենց որպես Աստվածամարդիկ և
ամբողջ էությանբ հետևեցին իրենց առաջնորդ Գարեգին
Նժդեհին: Նրանք միավորվեցին Ցեղակրոն Ռիստերի մեջ և
ապրեցին Արարատով:

ԻՆՔՆԱԶՈՂՈՂՈՒԹՅՈՒՆ

Մեծ պատերազմ էր սկսվել աշխարհում՝ Արիները Արիների դեմ: Արի Ազգերը իրար էին սպանում, իրար հոշոտում: ԵՎ հանուն ինչի՞: Պարզապես այդպես էր ցանկանում Չարի Վիշապը, որ իշխում էր բոլոր Արի Ազգերի վրա: ԵՎ կատաղի կռվում էին իրար դեմ Արիները: Իսկ Չարիները չարախնդուն էին, իրենց ավարն էին հաշվում և իրենց գոհունակությունն էին հայտնում իրենց Աստված Վիշապին:

Մեծ վտանգ էր կախված Արի Ցեղի գլխին: Վշտացել էր Գարեգին Նժդեհը: Նա դիմեց Հայր Արային.

- Ո՛վ, Հայր իմ, Արա՛, Արիները անխնա իրար են կոտորում: Ինչպե՞ս փրկենք Արի Արարչազարմ Ցեղը ինքնակործանումից:

ԵՎ Վահագնը հայտնվեց Նժդեհին ու ասաց.

- Ո՛վ, Գարեգին Նժդեհ, այս պատերազմը դու կանխել չես կարող: Չարի Վիշապը Արիների մեջ գտել է մոլագարների, որոնք էլ նրա պատվերով և Արիականության անունով Արիականությունն են կործանում: Բայց Արի Ցեղածառը կենսունակ է այնքանով, որքանով կենսունակ է նրա Արմատը: Արարատում է Արի Ցեղի Արմատը. այնտեղից է սկսվելու Գարունը և այնտեղից է սկսվելու Արի Ցեղի շարունակելիությունը: ԵՎ Հայր Արայի կամքով ես պատվիրում եմ քեզ՝ պահպանել Արևի երկիր Հայաստանը Արարատում այս աշխարհակուլ պատերազմից:

Նժդեհը հարցրեց.

- Բայց ի՞նչ կարող եմ անել ես միայնակ:

ԵՎ Վահագնը ասաց.

- Մի աստվածը կարող է անել այն, ինչ ամբողջ մի ժողովուրդ անկարող կլինի: Դու քո հոգևոր զորությամբ պետք է պարտադրես կռվող Արիների առաջնորդներին՝

զսպելու Հայաստանը շրջապատող Չարիների ավերման մոլուցքը:

Գերմաններն էին հաղթական: ԵՎ Նժդեհը, ապավինելով Վահագնի աստվածային Ջորությանը, խոսեց Գերման ֆաշիստ առաջնորդների հետ ու պարտադրեց նրանց՝ զսպելու Հայաստանը շրջապատող Չարիներին: ԵՎ Գերման ֆաշիստ առաջնորդները, ամբողջ իրենց հաղթական գոռոզությամբ հանդերձ, այնուամենայնիվ, հոգեպես ընկճվում էին Նժդեհի հոգևոր զորությունից:

Բայց պատերազմի ընթացքը փոխվեց: Ռուսիան զորացավ և հաղթեց Գերմաններին: ԵՎ նորից Արի Ցեղի Արմատը վտանգված էր: Նժդեհը գիտեր, որ այժմ միայն Ռուսիան կարող էր զսպել Չարիներին: Բայց Նժդեհը գիտեր նաև, որ հնարավոր չէ խոսել Ռուսիո Բոլշևիկ առաջնորդների հետ: Չէ՞ որ նրանք խոր ատելություն և վրեժ ունեին Նժդեհի դեմ: Սյունիքում նրանք իրենց առաջին պարտությունն էին կրել հենց Նժդեհից: ԵՎ դեռ այդ նույն Նժդեհը համագործակցում էր թշնամի Գերման առաջնորդների հետ: Մեծ վրեժ ունեին Ռուսիո Բոլշևիկ առաջնորդները Նժդեհի դեմ: ԵՎ նրանք երբեք չէին խոսի նրա հետ:

ԵՎ Նժդեհը դիմեց Հայր Արային.

- Ո՛վ, Հայր Արա՛, Գերման ֆաշիստների հետ ես կարողացա խոսել, բայց ինչպե՞ս խոսեմ Ռուսիո Բոլշևիկների հետ:

ԵՎ Վահագնը հայտնվեց Նժդեհին ու ասաց.

-Ո՛վ, Աստվածամարդերից ամենագործ, դու մեծագույն ինքնագոհողության պիտի գնաս, պահպանելու համար քո Արի Ցեղի Արմատը Արարատում: Ջոհողություն, որ միայն աստվածներին է վայել, և մարդը երբեք չի հասնի դրան: ԵՎ օժված իմ աստվածային Ջորությամբ, դու կպարտադրես նրանց խոսելու քեզ հետ: Իսկ երբ նրանք խոսեն քեզ հետ, նրանք կընկճվեն քո զորության առջև:

Ժպտաց Նժդեհը և ասաց.

- Այո՛, նրանք կխոսեն ինձ հետ. ես կպարտադրեմ նրանց խոսել շղթայված աստծո հետ: Օժիր իմ հոգին քո աստվածային Ջորությամբ, ո՛վ, Վահագն Ամենագոր. ես գնում եմ խոսելու Ռուսիո առաջնորդների հետ:

ԵՎ օժված Վահագնի աստվածային Ձորությամբ, Նժդեհը ինքը գնաց հանձնվելու Ռուս զորականներին: Նժդեհին տարան Մոսկվա: Ցնծում էին Ռուսիո Բոլշևիկ առաջնորդները՝ վերջապես Նժդեհը իրենց ձեռքում է: ԵՎ իրենց ծայրահեղ վրեժխնդրությամբ, շղթայակապ Նժդեհին ցուցադրեցին ժողովրդին: Բյուրավոր Մոսկվացիներ հավաքվել էին նայելու հպարտ շղթայվածին: Նրանց առջև կանգնած էր ոչ թե պարտված, այլ՝ գերված աստված:

Նժդեհի աստվածային վեհությունը Ռուսիո Բոլշևիկ առաջնորդներին մեծագույն երկյուղ էր պատճառում: Նրանք ընկճվում էին կամավոր տանջամահության հանձնված այս աստծո զորության առջև և... խոսեցին նրա հետ...

ՆԺՂԵՀԻ ՎԵՐՋԻՆ ԺՊԻՏԸ

Իր Արարատից շատ ու շատ հեռու, խավար զնդանում մեռնում էր Գարեգին Նժդեհը: Մահից չէր վախենում նա: Բայց սեր ուներ իր հոգում՝ անհուն սեր... Նա այդ աստվածային սիրով էր սիրել իր Արարատը, որ վաղուց Չարիի արյունոտ խրախճանքի ասպարեզ է դարձել: ԵՎ միայն Արայի կամքով, Վահագնի Ջորությամբ և իր ու իր նմանների հաղթական բազուկով ազատվեց Արարատի մի փոքրիկ հատված, և վերածնվեց Արևի երկիր Հայաստանը:

ԵՎ ողբում էր Նժդեհը մահվան մահիճում: Հայաստան էր ուզում, գեթ ոգիանալ էր ուզում Հայաստանում: Բայց անհույս էր՝ մեռնում էր օտարության մեջ՝ լքված իր հարազատներից - նրանցից, ում սիրել էր նա իր ամբողջ հոգով. հալածված իր հարազատներից, որոնց նա Վահագնի աստվածային խոսքն էր քարոզել. մատնված իր հարազատներից, որոնց սնել էր նախնյաց զորությամբ. նզովված իր հարազատներից, որոնց պարզևել էր իր Ցեղի Ոգին... Ո՛հ մեռնում էր նա Մայր Հողից հեռու և ողբում էր նա. «Ախր, ո՞րն է իմ մեղքը, որ լքված իմ բոլոր սիրելիներից, նույնիսկ հայրենափար մահվան չեմ արժանանում»:


ԵՎ գիշերվա մութին իր Լուսե Պատկերով նրան է հայտնվում Աստվածամայր Անահիտը և մայրական քնքուշ ձայնով դիմում է նրան.

- Սիրելի զավակս, դու հավատացիր քո Հայր Արային և դու միակն ես, որ տեսար Վահագնին. դու զորացար Վահագնի Ջորությամբ: Դու որդիական սիրով սիրեցիր ինձ: Դու Ցեղապաշտ քաջ զինվոր եղար, Աստվածատես եղար և Փրկիչը Արյաց. իսկ այժմ սուրբ նահատակ ես դու: Դու պիտի քավես քո ապաշնորհ ցեղակիցների մեղքերը բոլոր, որ օտարացած Հարազատ Հորից և Չարի Վիշապի առաջնորդությամբ բզկտեցին իմ մայրական մարմինն անարատ, որ Ամենագործը Վահագնին լքած, քնքուշ

Աստղիկներին գցեցին թշվառության գիրկը: Նրանք, որ մերժում են Վահագն Աստծուն, քեզ ինչպե՞ս չմերժեն: Դու պիտի քավես մեղքերը նրանց, որ ես կարողանամ մայրաքար ներել վերքերն իմ բոլոր: Դու պիտի մեռնես օտարության մեջ: Բայց ես քո ոգին կբերեմ Հայաստան: Այն միշտ կճախրի հայրենի երկնքում և Հայաստանածին, այո, Հայաստանածին Արի սերնդին հոգեկան զորության ապավեն կլինի: ԵՎ երբ Հայաստանածին Արի սերունդը վեհանա իր Հայր Արայով, զորանա Վահագնով, երբ նա զգա ինձ, երբ նա զգա իր մեջ իր նախնիներին, երբ զգա նա իրեն որպես Արորդի և քեզ՝ Աստվածատես Առաջնորդը իր, այնժամ Հայր Արայի կամքով դու կվերածնվես հենց Արարատում, կռելու Արյաց թուրկեճակին և առաջնորդելու իրենց աստվածայնությունը զգացող Արիների Վահագնականչը:

Ասաց Աստվածամայր Անահիտը, ջերմ համբուրեց Նժդեհի ճակատը ու անհետացավ:

Նժդեհը ժպտաց՝ ժպտաց Հայր Արային, Մայր Անահիտին, ժպտաց Վահագնին, ժպտաց Աստղիկին, ժպտաց Հայաստանածին Արի մանուկներին, որոնց աչքերի մեջ Աստղիկի սերն ու Վահագնի հուրն է փայլում, և օրհնեց նրանց վերջին ժպիտով...



ԳԻՐՔ ՎԵՑԵՐՈՐԴ

Պ Ա Տ Գ Ա Մ Ա Ր Ա Ն

Նժդեհին առաջինն էր՝ տեսավ Վահագնին, և Վահագնը նրան Առաջնորդ օժեց Արորոյաց Նորոգ Ռիխտին: ԵՎ Նժդեհն Արի՝ ինքը՝ Ցեղամարդ, ինքն՝ Աստվածատես, եղավ Վահագն Աստծո նվիրյալ ուխտավոր: Նա ինքը ապրեց Վահագնի լույսով, և իր կյանքն եղավ Սուրբ ՊԱՏԳԱՄԱՐԱՆ: ԵՎ նրա բազուկը Վահագնը շարժեց, նրա աչքերը Վահագն արևեց և նրա բերանով Վահագնը խոսեց.

ա. Ո՛Վ, ԱՐՈՐԴԻ

1. Պատմության ճամփի ինչ-որ հատվածում դու կորցրեցիր քեզ և վաղուց արդեն քեզ չես ճանաչում: Դու ճանաչում ես բոլորին, բայց միայն՝ ոչ քեզ: Դու աստվածային ծագում ունես՝ և չգիտես, հավերժության խորհուրդ ունես՝ և չգիտես: Դու քեզ չգիտես:
2. ԵՎ վաղուց արդեն ինքդ քեզնից որբացած, որոնում ես քեզ: Որոնում ես ամենուր, ամենքի մեջ, բայց ոչ՝ քո մեջ: ԵՎ վաղուց արդեն չես հավատում քեզ. և վաղուց արդեն քեզ ստրուկ ես կարգել Չարիի զորությանը:
3. ԵՎ վաղուց արդեն Չարիի Կրոնների հաշիշով օծված, երանելի թնրության մեջ խարխափում ես պատմության ճամփեքի վրա. քարշ ես գալիս թշվառ որբի պես, Չարի Վիշապի փեշերից կախված:
4. Կանգ առ, քե՛զ նայիր. ի՞նչ Չարի Աստված, երբ ինքդ ես աստված՝ Արայից սերված Արորդի ես դու, բոլոր մարդկային Ցեղերի մեջ միակ արարող զորությունն ես դու և Արայի Որդի Վահագն Աստծո Սիրո, Ջորության Ճառագումն ես դու:
5. Թե ուզում ես ճանաչել Արայի պատկերը՝ պարզապես նայիր քեզ հայելու մեջ: Որդին անպայման նման է իր հորը: Դու էլ նման ես Արային՝ Արորդին նման է իր Հայր Արարչին:
6. ԵՎ թե ուզում ես ճանաչել Արայի կերպարը՝ նայիր քո հոգու հայելու մեջ, ճանաչիր քո այն որակները, որ ժառանգել ես քո նախապապերից՝ այն որակները, որ կան և՛ Արայի, և՛ քո մեջ:
7. Դու անսահման Աստվածության մեջ մի աստվածություն ես սահմանափակ: Քո մեջ դու աստվածային զորություն ունես, արարչական ոգի և արյունը՝ Արարչազարմ Արի Ցեղիդ:

8. Էլ ի՞նչ ես որոնում քեզանից դուրս - զորություն՞ զորությունը քո մեջ է. հավա՞տ՝ հավատը քո մեջ է. սե՞ր՝ սերը քո մեջ է. իմաստություն՞ իմաստությունը քո մեջ է: Դու ինքդ քո մեջ կրում ես դրանք: Հրաշալի արարած ես դու, ո՛վ, Արորդի՛:
9. Սեր, զորություն, իմաստություն, հավատ - ահա այն հիմնական որակները, որոնք ամբողջացնում են քո էությունը որպես Արի: Այդ որակների շնորհիվ ես դու արարող:
10. Քո Արի բնության զգացողությունն է քեզ հավատ ներշնչում. քո ծագումի զգացողությունն է քեզ զորություն սնում. քո Արի արյան զգացողությունն է քեզ սեր սերմանում. և քո Արի ստեղծումի զգացողությունն է, որ իմաստնացնում է քեզ:
11. Քո ծագումի, քո բնության զգացողությունը պիտի ունենաս դու, ո՛վ, Արորդի՛, քանզի մարդկության արարումն ես դու: Թե դու չլինես, արարում չլինի - ի՞նչ պիտի անի մարդկությունն արար. այնժամ Չարի Ցեղերը իրար կավերեն և ավերելով, կկործանեն մարդկությունն անհետ:
12. Արարումի, ստեղծումի համար զորություն է պետք, որ դու և՛ սիրով Ստեղծումը կերտես, և՛ պաշտպանես Սերը Ստեղծումի:
13. Իսկ քո զորությունը քո ծագումի զգացողության մեջ է, քո արյունի զգացողության մեջ է, Վահագնի զգացողության մեջ է:

բ. ԱՌ ՎԱՀԱԳՆ

1. Գերագույն է Վահագնը, և Վահագնից վեր միայն Արա՛ն է՝ Արարիչը Վահագնի և մեր:
2. Վահագնը Ձորության Աստվածն է Արի Ցեղի և Արայի կամքն է Արի Ցեղի մեջ՝ Արայի կամքով Սերն է հաստատում, արարման ոգին է հաստատում մեր մեջ և Հուրը մեր մեջ՝ զորության խորհուրդ:

3. Վահագն է պահպանիչը և հովանավորողը Արիների. Վահագն է ամեն մի Արի պատանու սրտում հրդեհ բորբոքում: Վահագն է Արի քաջերի կրծքում բոցեր արծակում. Վահագն է Արի կույս աղջիկների հոգիների մեջ վառվող սիրո հուրը. Վահագն է հզորների բազուկը զորությամբ օծում:
4. Վահագնը պաշտպանում է սերը պղծումից, բարին՝ չարիից, արարումը մեր՝ Չարիի ավերումից:
5. Վահագնը արեգակերպ հսկում է անվերջ, որ Արարատը մութով չծածկվի և չապականվի Չարիի պղծումից:
6. Թեև անեղ է Վահագնը՝ Ջորության ինքնիշխան Տեղը, խնամիչը Արի Ցեղի - նա աներևակայելիորեն ծնվում է Հուրից հենց Արարատում՝ պահպանելու համար մեր Ցեղը Արի:
7. ԵՎ Վահագնը իր ծնունդով Պարուն է բերում, Մեծ Ջրհեղեղ - Երկիրը Չարի Վիշապի պղծությունից մաքրելու համար:
8. Վահագնը ճանաչում է բոլոր Արիների՝ նախնի, ներկա և որք գալոց են: Բայց ո՞վ է մեզանից ճանաչում նրան - միայն կատարելության հասած Աստվածամարդը՝ Ցեղամարդը: Միայն նա, ով իր մեջ իր Ցեղի Ոգին է զգում, ով զգում է իր Արիական ծագումը և Հայր Արայից սերված լինելու զգացողությունը ունի:
9. Միայն կատարելության հասած Աստվածամարդը կարող է հասնել Պերագույնին՝ Բացարձակ Ոգուն և տեսնել Վահագնին:
10. Նայիր դու ինձ, ո՞վ, Արորդի՛. մի՞թե դու ինձ չես ճանաչում - ես դու եմ, ես Արի եմ, և մենք նույն արյունն ենք: Բայց ես Վահագն Աստծուն եմ տեսել, զգացել եմ նրան իմ հոգու խորքում, նրա զորությունն եմ իմ մեջ ամփոփել և նրա սիրով ճանաչել եմ ինձ որպես Արորդի, որպես իմ Ցեղի բնական անհատ, որպես Ցեղամարդ:
11. ԵՎ ես Վահագնին երդում եմ տվել՝ երդում զորության, երդում հավատի ու բացարձակության. «Ես Ցեղակրոն եմ. և ահա կերդվեմ Վահագնի աջի վրա՝ երբեք չմեղանջել ուխտիս դեմ՝ ապրել, գործել ու մեռնել որպես

Ցեղամարդ, որպես Վահագն Աստծո նվիրյալ ուխտավոր»:

12. Իսկ դու, տենչալով արեգ, ինչո՞ւ ես թաքնվում նրանից. մի՞թե երկար ապրելով խավարի մեջ այլևս չես դիմանում Վահագնյա Արեգի Ջորությանը. մի՞թե շատ է զորավոր Վահագնյա արեգը քո տկարացած աչքերի ու հոգու համար:
13. Մի՛ վախեցիր արեգից, ո՛վ, Արորդի՛, մի՛ թաքնվիր նրանից. դա գարնան արեգն է, կյանքի արեգն է. փարվիր նրան, զորացիր նրանով և սպասիր Վահագնին: Գարնան արեգով է գալու Վահագնը:
14. Վահագնի հետ պիտի խոսենք հիմա - Աստվածը մեր Արիական Հայության:

գ. ՑԵՂԱՄԱՐԴ

1. Ո՛վ, դու, Արորդի՛, դու Աստվածամարդ ես՝ Աստվածամարդերի Ցեղի անհատ: ԵՎ Ցեղամարդն է կատարելությունը քո. Ցեղամարդը լոկ կլինի կատարյալ, կլինի բացարձակ, իր մեջ իր աստվածայնությունը կզգա, կլինի երջանիկ և կտեսնի Վահագնին:
2. Դու պատահական այցելու չես կյանքում: Դու լինելություն ես: Որպես լինելություն, դու բացարձակ ես, դու ամբողջական ես, դու բնական ես և դու բնություն ես: ԵՎ որպես բնություն, դու հզոր ես ու կատարյալ ես: Դու Ցեղամարդ ես քո էությամբ:
3. Դու բազմաթիվ բնական որակներ ունես. և այդ բազմաթիվ որակների ամբողջությունն էս դու որպես Ցեղամարդ: Այդ որակները դու չես ընտրում - դրանք քո ծագումից են գալիս: Դու Արի Ցեղն ես, դու Ազգն ես, դու Տոհմն ես, դու Ընտանիքն ես. Դու Ցեղիդ արյունն ես, դու Ազգիդ արյունն ես, դու Տոհմիդ արյունն ես, դու Ընտանիքիդ արյունն ես. Դու Ցեղիդ դիմագիծն ես, Ազգիդ դիմագիծն ես, Տոհմիդ դիմագիծն ես, Ընտանիքիդ դիմագիծն ես:

4. Դու բազմաթիվ բնական հատկություններ ունես. և այդ բազմաթիվ հատկությունների ամբողջությունն էս դու որպես Ցեղամարդ: Այդ հատկությունները դու չես ընտրում - դրանք քո ծագումից են գալիս. Դու արարող ես, դու զգացող ես, դու ներշնչվող ես, դու տեսանող ես. Դու ունես ապրումներ, երազանքներ, սեր, նվիրում. Դու ունես կերտվածք, կամք, միտք, բնավորություն, կեցվածք:
5. Դու բազմաթիվ բնական դերեր ունես. և այդ բազմաթիվ դերերի ամբողջությունն էս դու որպես Ցեղամարդ: Այդ դերերը դու չես ընտրում - դրանք քո ծագումից են գալիս. Դու ծնող ես, եղբայր, հորեղբայր, պապ, մորեղբայր... Դու հարևան ես, ազգական, ընկեր, խնամի, բարեկամ, ծանոթ... Դու ռազմիկ ես, աշխատող, ստեղծող, սպառող...
6. Դու բազմաթիվ բնական պատկանելություն ունես. և այդ բոլոր պատկանելությունների ամբողջությունն էս դու որպես Ցեղամարդ: Այդ պատկանելությունները դու չես ընտրում - դրանք քո ծագումից են գալիս. Դու պատկանում ես Ցեղիդ, Ազգիդ, Տոհմիդ, Ընտանիքիդ. Դու պատկանում ես քո Մայր Հողին, քո Հայրենիքին, քո քաղաքին, քո գյուղին, քո թաղին, քո տանը:
7. Դու բազմաթիվ բնական հարաբերություններ ունես. և այդ բոլոր հարաբերությունների ամբողջությունն էս դու որպես Ցեղամարդ: Այդ հարաբերությունները դու չես ընտրում - դրանք քո ծագումից են գալիս. Դու հարաբերվում ես Հողին, Արեգին, Զրին, Երկնքին, Կենդանուն, Բույսին. Դու հարաբերվում ես Կյանքին, Մահին, Անցյալին, Ապագային. Դու հարաբերվում ես Հայր Արային, Մայր Անահիտին, Ամենազոր Վահագնին, Սիրավառ Աստղիկին, քո նախնիներին, քո ծագումին:
8. Դու բազմաթիվ կյանքեր ունես. և այդ բոլոր կյանքերի ամբողջությունն էս դու որպես Ցեղամարդ: Քո այդ կյանքերը դու չես ընտրում - դրանք քո ծագումից են գալիս: Դու երևույթ ես, դու էություն ես դու մարմնավոր ոգի ես և անմարմին ոգի. Դու քո նախնին ես և քո գալիք

սերունդը, որով հավերժող ես դու. Դու ոգիների միջից ես գալիս և դեպի ոգիները գնում - դու՝ անմահ ոգի:

9. Դու բազմաթիվ երջանկություններ ունես. և այդ բոլոր երջանկությունների ամբողջությունն ես դու որպես Ցեղամարդ: Այդ երջանկությունները դու չես ընտրում - դրանք քո ծագումից են գալիս. Դու ունես տառապանքի երջանկություն, նվիրումի երջանկություն, պտղաբերումի երջանկություն. Դու ունես բարության երջանկություն, ստեղծումի երջանկություն, զոհաբերումի երջանկություն, հավատի երջանկություն:
10. ԵՎ այդ բոլորը դու ես, այդ բոլորը քո մեջ են, ո՛վ, Արորդի՛. և այդ բոլորի ամբողջությունն ես դու որպես Ցեղամարդ: Ցեղամարդը՝ այդ բոլորի կատարելությունն է քո մեջ: ԵՎ այդ կատարելությամբ դու կհասնես Բացարձակին, կտեսնես Վահագնին, և Վահագնը կհովանավորի քեզ, կզորացնի քո ոգին ու մարմինը, նախապատրաստելով քեզ վերածննդյան:

Դ. ԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԸ

1. Ո՛վ, Արորդի՛, քո երջանկությունը կատարելության մեջ է, ամբողջության մեջ է. երջանկությունը հավաքականությամբ է: Այդպես է պատգամում Ամենագոր Վահագնը:
2. Անհատական երջանկությունը հավաքական երջանկությունից դուրս՝ պատրանք է - դա դժբախտություն է, դա փախուստ է ինքդ քեզանից, դա ինքնախաբեություն է:
3. Նա, ով իր Ցեղի Ոգու մեջ կգտնի իր ուրախության աղբյուրը - կարժանանա անանց երանության:
4. Անձնական երջանկության վարդապետությունը - ահա թշնամին հավաքական երջանկության և անհատի հոգին ավերող հրեշը:

5. Բարեկենդանապաշտություն - ահա անհատական երջանկության հրեշային դավանանքը՝ հոգևոր մայրը բոլոր տեսակի հակաազգային և քանդիչ ուժերի:
6. Բարոյապես անբանացնելով անհատին՝ այդ թունավոր վարդապետությունը նրան թեքում է դեպի կեղծ աշխարհաքաղաքացիություն և ապա դեպի ազգային դիմազրկում: Ղա եսամոլ թշվառականներ է ստեղծում և ոչ՝ առաքինի ու անձնվեր Ցեղամարդեր, ոչ՝ հրաշունչ մարտիկներ:
7. Անցեղաշունչ անհատի այդ հասկացողությունը երջանկության մասին - դա է մեր երբեմնի արիասիրտ ու հզոր Ցեղը սրտաթափողը:
8. Խոզաբարո երջանկություն - հոգևոր խթանիչը անցեղաշունչ սերունդների: Սրան կպարտի Արի Հայը անցյալի իր պարտությունները և այսօրվա իր պարտվողական ոգին:
9. Կամ այդ անկումի վարդապետությունը, կամ Ազգը՝ պիտի մեռնի մեկն ու մեկը դրանցից: Շարունակեց ապրել դա Արորդիների հոգու մեջ՝ պիտի կորչի Արի Հայը, ուստի և Ցեղը: Մեռավ դա - պիտի վերապրի մեր Ցեղը:
10. Բարոյապես սնանկ է անհատը, երբ նրան պակասում է ազգային հպարտանքի զգացումը - ծնողը ազգային ինքնաձանաչողության: Առանց այդ բարձր առաքինության պակասավոր է անհատը որպես մարդ և որպես անդամ հավաքականության:
11. Այդ նվիրական զգացումը անսպառ աղբյուրն է լուսավոր հայրենասիրության, ցեղային բարոյականի ու երջանկության:
12. Ազգիդ մեջ արթնացավ Ցեղը - մարդկային հոգին սրբվում է բոլոր տեսակի արատներից ու տկարություններից. դառնում է համակ սեր ու նվիրում դեպի մերձավորը՝ միշտ պատրաստ զոհաբերության իր ազգակցի համար: Այդ դեպքում անհատը իր մերձավորների մեջ տեսնում է իրեն՝ այլ անունով ու պատկերով:

13. Ազգակիցներիդ մեջ տես քեզ և արձագանքիր նրանց ցավերին. դա ասել է՝ վերապրիր Ազգիդ և՛ ողբերգությունը, և՛ երջանկությունը . - ավելին՝ թող քո հաղորդությունը դառնա Ազգիդ ճակատագիրը, նաև քո կնունքը. քո սիրտը պետք է պատասխանի Ազգիդ ամեն մի սրտազարկին: Այդտեղ է իրական երջանկության աղբյուրը:

Ե. ՑԵՂԻ ԴՐՈՇՄԸ

1. Ո՛վ, Արորդի՛, քո կատարելության միակ աղբյուրը ցեղայնությունն է - Ցեղիդ ամբողջության մեջ զգա դու քեզ: Սա է պատգամը Վահագնի:
2. Դու Ես ես, դու Ազգդ ես, դու Ցեղդ ես Արի: Քո Ես-ը Ազգինն է, Ազգից դուրս դու չկաս: Դու անհատական մի ոգի ես Ազգիդ ընդհանրական Ոգու մեջ: ԵՎ Ազգդ Ցեղինն է Ցեղից դուրս Ազգդ չկա: Ցեղդ Ազգիդ էությունն է, նրա ծագումը:
3. Ազգը դիմագծորեն ցեղայինն է՝ այն ընդհանրականը, որով միևնույն Ցեղի Ազգերը նմանվում են իրար:
4. Ցեղը դիմագծորեն ազգայինն է՝ այն առանձնահատուկը, որով միևնույն Ցեղի Ազգերը տարբերվում են իրարից:
5. Ցեղային է Ազգդ, ազգային ես դու: Ցեղադրոշմ է Ազգդ, ազգադրոշմ ես դու: Ցեղայնությունը - Ազգիդ արյան միությունն է, միությունն է ճակատագրի, դա կրոնն է Ցեղի, Լեզուն - դա ուժն ու հաղորդակցությունն է այդ ամենի, առանց որի կա եսակենտրոն անհատների ամբոխ, բայց ոչ Ազգ:
6. Ժողովուրդը Ազգի ներկան է: Ցեղը՝ Ազգի երեկը, այսօրը և վաղը: Ցեղը - կապն ու կապակցողն է Ազգի բոլոր նախկին, ներկա և գալիք սերունդների: ԵՎ եթե դու քո մեջ զգում ես նախնիներիդ և զգում ես քո մեջ քո գալիք սերունդներին, դու կապրես ցեղորեն:

7. Ցեղն է ժամանակների վկան, սերունդների հավերժող Հայրը, աստվածային պատգամախոսը Ազգիդ մեջ և քո:
8. Ժողովուրդը - դա Ազգի ոգու մարտիրոսացողն է, Ցեղը՝ հերոսացողը: Ժողովուրդը մեռյալներ կտա, իսկ Ցեղը՝ դուրսագուցներ: ԵՎ դատապարտելիորեն տկար է ժողովուրդը առանց ցեղագիտակցումի:
9. Թե չլինի Ցեղի զգացողությունը - կտիրի ստորարժեքության գիտակցությունը և վերջինիս դառը հետևանքները:
10. Տվեք ինձ ներցեղային բարոյականով առաջնորդվող մի հատիկ սերունդ, և ես կապահովեմ Ազգիս տեղը արևի տակ:
11. Երբ Ցեղով ես ապրում - դու կհաղթես, քանզի Արի Ցեղի Ջորության Աստված Վահագնը պիտի բարձրացնի շանթկեզ բազուկը քո և վարի նրա հարվածները:
12. Ցեղն է քո ապավենը, Ցեղակրոնությունը՝ քո բացարձակության խորհուրդը:

Ձ. ՑԵՂԱԿՐՈՆՈՒԹՅՈՒՆ

1. Ջորության համար, արարման համար եղիր Ցեղակրոն, ո՛վ, դու, Արորդի: Դա է միակ ուղին քո կատարելության որպես Ցեղամարդ: Դա է կամքը Վիշապաքաղ Վահագնի:
2. Լինել Ցեղակրոն կնշանակե՝ Ցեղդ քո մեջ կրել՝ Ցեղիդ ծագումը, արյունը, լեզուն, բարքերը... և այդ բոլորը որպես անքննելի հավատք:
3. Ցեղակրոնությունը - Ազգիդ ծագումի ճանաչումն է դա, ճանաչումը մի գերիվարո ՈՒԺԻ, Էության. այդ ՈՒԺ-Էությունից ծնված լինելուդ զգացողությունն է դա, այդ ՈՒԺ-Էությանը պատկանելուդ զգացողությունն է դա:
4. Թե ցեղաձանաչ ես - դու կհամոզվես, որ Արի Ցեղդ հարազատ գերական է մարդկության մեջ:

5. Թե ցեղահավատ ես - դու կպաշտես և մի այլ աստվածություն՝ Ցեղիդ Արյունը, որի անարատության մեջ է քո և Ազգիդ հավերժումը:
6. Ցեղակրոն ես - ասել է՝ բնապաշտ ես, մարդապաշտ ես, ցեղապաշտ ես, ազգապաշտ ես, տոհմապաշտ ես, ընտանեպաշտ ես: Չլինել այդպիսին, կնշանակե՝ չլինել լիարժեք մարդ:
7. Սիրելով ու զորացնելով քո տոհմը, դու Ազգը ես զորացնում. սիրելով ու զորացնելով Ազգը, դու Ցեղը ես զորացնում. սիրելով ու զորացնելով Ցեղը, դու Մարդկությունն ես զորացնում:
8. ԵՎ թե կռվում է Ցեղակրոնը, ապա կռվում է ոչ թե այլոց ատելով, այլ սիրելով իր Ազգն ու Ցեղը: Արորդին իր ցեղակրոնությամբ պարտավորված է պաշտպանել իր Ցեղն ու նրա արարունը այլոց թշնամանքից:
9. Ցեղակրոն ես - ասել է՝ ողջունում ես ազգային ինքնությունը Ցեղի մեջ, որն այլ բան չէ, եթե ոչ Ազգ-Անհատի արդար և արգասավոր ձգտումը՝ հավատարիմ մնալ իր Ցեղի ազգային Ոգուն, պահպանել իր արարչական դիմագիծը և պահպանել իր Հավաքական Անձի ազատությունը Ցեղի անբողջության մեջ:
10. Ցեղակրոն ես - ասել է՝ գիտակցում ես, որ Ցեղով է ապրում, ստեղծագործում և հավերժանում Ազգը քո: Մարդկային մշակույթի առաջընթացային զորութենական ուժ է Ցեղակրոնությունը:
11. Արդ, թե ինչու ազգային անհատականության եղծումը դու պետք է դիտես որպես ոճիր՝ ուղղված Ցեղիդ և ի մասնավորի՝ Ազգիդ դեմ:
12. Ցեղակրոն ես - ասել է՝ պարտ ես, կամիս, կարող ես և պետք է քո զորությամբ գերազանցես ավերող Չարիին, քանզի դու արարող ես, և արարողն է գերիզորը, հաղթականը:
13. Ցեղակրոն ես - ասել է՝ քո անձնական կամքի մշակումով սատարում ես Ազգիդ Ոգու ահագնացումին՝ Վահագնացումին: Ցեղիդ կամքի աստվածացում Ազգիդ մեջ - ահա թե ինչի պիտի ձգտես հարածամ:

14. Ցեղակրոն ես - ասել է՝ տկարություն ու նահանջ չես ճանաչում. քո մեջ կամքը ծարավի է ուժի, պատրաստակամ՝ զոհաբերության, ճիգացող՝ Ցեղիդ ուժերի կենտրոնացման:
15. Ցեղակրոն ես - ասել է՝ պարտվողականության, կրավորական տառապանքի, սարսափի հոգեբանության, ընկճվածության, մտքի անհիշխանության և առհասարակ թշվառ կացության հանդեպ խորշանք պիտի զգաս ընդմիջտ:
16. Ցեղակրոն ես - ասել է՝ մարդկությանը ներկայանում ես ցեղադրոշմ ազգայնականությամբ:

Է. ՀԱՎԱՏՔԻ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Ո՛վ, Արորդի՛, Ցեղակրոնության մեջ որոնիր քո Հավատքը: Դա է Վահագնի աստվածային Պատգամը:
2. Յուրաքանչյուր մարդու հավատքը իր բնության համեմատ է ձևավորվում: ԵՎ մարդը իր իսկ հավատքի ծնունդն է՝ ինչ որ իր հավատքն է - դա է իր նկարագիրը, դա է ինքը:
3. Հավատքը քո մեջ է՝ քեզանից դուրս չէ: Դա քո ծագումի զգացողությունն է, քո զորության զգացողությունն է, Հայր Արայից սերված լինելուդ զգացողությունն է, Ազգիդ պատկանելուդ զգացողությունն է, տոհմիկ լինելուդ զգացողությունն է:
4. Ապրել հավատքով կնշանակե՛ ապրել Աստվածայնությամբ, ապրել Ցեղորեն, քանզի Ցեղայինը Աստվածության այն որակն է, որ դու կրում ես քո մեջ:
5. Ո՛վ, Արորդի՛, օժված ես շնորհներով՝ արարչական ծագումով և աստվածային կարողությամբ, Վահագնի զորությամբ և Աստղիկի հավերժող սիրով:
6. ԵՎ թե դու չմնաս շնորհացդ ընկալունակ, կամովին վանես քեզանից դրանք ու երկրպագես օտար Աստվածների, դու ինքնական ոչնչանում ես և ինքդ քեզ ստրուկ ես կարգում օտար զորությանց:

7. Դու քեզ անգործության կմատնես, կդառնաս հոգևոր մուրացկան և կվերածվես եսապաշտ հրեշի: Ահա թե ինչու են նույնանուն կամովին շնորհագուրկն ու հանցագործը:
8. Թե դու չես զգում քեզ քո Ազգի մեջ, դու չես զգում նաև Արարչին, քանզի ոչ թե Արարիչով են Ազգը զգում, այլ Ազգի մեջ և Ազգով են զգում Արարչին: Ռեստի Ազգի զգացողությունը Արարչի զգացողություն է, Արարչի պաշտամունքը՝ Ազգի պաշտամունք:
9. Ճշմարիտն այն է, ինչը որ կատարվում է հավատքով: Անցանկալի-անախորժն այն է, ինչը որ կատարվում է ընդդեմ հավատքի: Հաստատուն ճշմարիտ է նա, ով հավատում է իր գործությանը, իր Աստվածներին:
10. Երերուն ստախոս է նա, ով երկրպագում է օտար Աստվածների, քանզի այդտեղ իրականում հավատք չկա, այլ կա սարսափի պատրանք և թշվառ ստրկացում:
11. Գիտցիր՝ թե որևէ Աստված կապ չունի քո արյան հետ՝ նա քոնը չէ:

ը. ՍԵՐԸ ԶՈՐԱՑՆՈՂ

1. Ո՛վ, Արորդի՛, Ցեղակրոն է սերը քո - արարչական շնորհ է այն, որ տրված է քեզ արարելու, հայրանալու, նվիրվելու, զոհաբերվելու, հավերժանալու համար: Այս է պատգամը Վահագնի:
2. Ցեղակրոնության սերը պատկանելության զգացողություն է: Սիրել, կնշանակե՞ զգացմունքներով կապվել հարազատ ընդհանրությանը՝ Ցեղին, Ազգին, Տոհմին, Ընտանիքին, Հայրենիքին... կնշանակե՞ սիրել այդ ընդհանրությունը՝ այն բոլորը և բոլորին, որ քոնն են, քո հարազատը և որոնց մեջ դու քեզ ես զգում:
3. Սերը ընդհանրական զգացողություն է, և այն չի մասնատվում. չես կարող սիրել հորդ, բայց չսիրել մորդ. չես կարող սիրել Ազգդ, երբ չես սիրում ընտանիքդ...

4. Որքան անձուկ է քո հարազատ ընդհանրությունը, այնքան քո սերը նվազ է. որքան ընդգրկուն է քո հարազատ ընդհանրությունը, այնքան քո սերը ծավալուն է ու հոգեբուխ:
5. Ահա թե ինչու է սերը Ցեղակրոնին կատարելության հասցնում, քանզի նրա պատկանելության զգացողությունը ուժգնանում է Ցեղային ծագումով, Ազգի արյունով, Հայրենիքի սիրով, Տոհմին հավատարմությամբ, Ընտանիքին կապվածությամբ:
6. Ցեղաշունչ մարդը սիրում է այն ամենը, ինչ Ցեղինն է, ինչ Ազգինն է: Արորդուն պատգամվում է օժել Ազգի արյունը, պաշտել Ազգի սովորույթները, Ազգի բարոյական արժեքները, զարգացնել Ազգի մշակույթը... և սիրելով, նվիրվելով դրանց, պահպանել ու զորացնել դրանք՝ ի հավերժումն Արորդյաց Ուխտի:
7. Անցեղաշունչ մարդու սերը արգասավոր չէ, և այն սնում է լոկ իր անձին ու իր անձով էլ չքանում է:
8. Սերը կատարելության տանող Ցեղաշունչ ընտանիքի շնորհն է. միայն Ցեղաշունչ ընտանիքի զավակների մեջ է ձևավորվում Ցեղային պատկանելության զգացողությունը:
9. Սերը ձևավորվում է սիրո մեջ: Նորածինն իսկ սիրո ծարավ է. նա ծարավ է ոչ միայն սիրվելու, այլև սիրելու: ԵՎ որքան շատերը նրան սիրեն, և որքան շատերի սիրի նա, այդքան առավել կզորանա նրա սիրո զգացմունքը:
10. Երեխային սեր պիտի սնել, որ նա էլ այդ սիրով զորացած, նվիրաբերվի իր հարազատ հանրությանը, երջանկացնի ազգակիցներին ու ինքն էլ երջանկանա նրանցով: ԵՎ երբեք երեխայի սիրո զգացմունքին ատելություն չխառնել:
11. Ընտանիքի որդին իր զգացմունքներով կապվում է իր ծագումի հետ, որի խորհրդանիշն է հայրը: ԵՎ որքան խորն է որդու ծագումի զգացողությունը, այնքան առավել է որդին սիրում ծնողներին: Ցեղաշունչ

ընտանիքի գավակների մեջ է կատարելության հասնում որդիական սերը:

12. Ծնողական սերը սիրո գերագույն արտահայտությունն է: Ծնողական սերը տառապանք է, նվիրում է, ինքնամոռացում է, ինքնագոհողություն է: Ծնողական սերը տառապալից երջանկություն է: ԵՎ թերզարգացած զգացմունքներով մարդը լիարժեք ծնող չի լինի:
13. Միայն ցեղաշունչ մարդու մեջ է կատարելության հասնում ծնողական սերը. քանզի ծնողական սերն իր մեջ ունի և՛ որդեսիրություն, և՛ ծնողասիրություն, և՛ եղբայրասիրություն, և՛ Հայրենասիրություն... ծնողական սերն իր մեջ ունի իր Տոհմի, իր Ազգի զգացողությունը, որպես իր գավակների հարատևման հիմք:
14. Ցեղաշունչ ծնողական սերը գերազանցում է բոլոր տեսակի այլ զգացմունքներին: ԵՎ հենց այդ ծնողական սիրո զգացմունքն է զորացնում հոր ու մոր փոխադարձ սերը - նրանք իրենց գավակների մեջ են սիրում իրար. նրանց զգացմունքները միահյուսված են իրենց գավակների մեջ:
15. Ազգի սերը մարդու մեջ - իր ընտանիքի, իր տոհմի զգացողությունն է, իր ծագումի, իր արյունի զգացողությունն է: Ազգասիրությունը ձևավորվում է հենց ընտանեկան սիրո մեջ: Թերզարգացած սիրո զգացմունքներով մարդը չի կարող ազգասեր լինել: Ազգասիրությունը ցեղաշունչ ընտանիքի շնորհն է միայն:
16. Հայրենիքի սերը - Մայր Հողում իր արմատի զգացողությունն է մարդու մեջ: Իր սեփական արմատը չզգացող մարդու մեջ չի կարող լինել Հայրենասիրություն որպես զգացմունք: Անհիմն և ողբալի է Հայրենասիրությունը այն մարդկանց, որոնց ընտանիքը Ազգի մանրապատկերը չէ:

թ. ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՀՊԱՆԻՉ

1. Ո՛վ, Արորդի՛, քո զորությունը ցեղայնության մեջ է. և միայն զորավորներին է հովանավորում Վահագնը:
2. Եղի՛ր ընկալունակ աստվածային զորության - սա է կոչումը Արիի. աստվածային միակ արժեքն է զորությունը. սահմանը քաջերի՝ զորությունն է իրենց:
3. Սիրում է նա, ով հզոր է, ով հոգու հարստություն ունի, աստվածայինի զգացողություն. ում ուժի բաժակը լցված է հորդելու, թափվելու աստիճան:
4. Արգասավոր չէ տկարի սերը. քծնանք է թույլի ներումը:
5. Միայն զորավորը կարող է ապավինել Վահագնին, և միայն զորավորը կարող է զոհաբերել. անընդունակ է տկարը ինչպես սիրո, այնպես էլ զոհաբերության:
6. Թույլը մեղավոր է, որ թույլ է. անբարոյականություն է թուլությունը՝ ստեղծված սնուցանելու ուժը: Տկարի միակ դերը կյանքում՝ կեր լինելն է զորավորների համար:
7. Ազգերն ու անհատները իրենց թուլության մեղքերը քավում են որպես պարտություն, ստրկություն, որպես անփառունակ գոյություն. չե՞ս ուզում կեր լինել՝ եղի՛ր զորավոր:
8. Միայն հավատքի զորությունն է պահպանում Ազգի բնական որակը սերունդների մեջ: Միայն զորության զգացողություն ունեցողը կարող է ուժի պաշտամունք ունենալ. և միայն նա կարող է ապավինել Զորության Աստված Վահագնին. և Վահագնը միայն նրան կհովանավորի:
9. Թուլությունը օրինաչափությունից շեղում է. նա չունի զորության զգացողություն, նա չունի ուժի պաշտամունք. նա չունի նաև որևէ պատասխանատվություն Ազգի մեջ, քանզի նա օրինաչափություն չէ: Թույլը մշտապես միայն իր անձնական ապահովությունն է հոգում:
10. Պատմությունը զորավորներն են կերտում. կյանքը զորությունների հարաբերություն է: Տկարները զորավորների փեշերից են կախվում:

11. Տկարներին հատուկ են ստորությունը, խաբեբայությունը, քծնանքը, ինքնաապահովագրումը, մատնությունը, խռովությունը... ԵՎ հաճախ զորավորների միջև խառնակություն ստեղծում են թույլերը:
12. Տկարությունը գոյության անկարողություն է, իսկ գոյության անկարող Տեսակը չի ապրի:
13. Չարժե և չի կարելի օգնել ընկածին, եթե նրան պակասում է ինքնօգնությամբ ոտքի կանգնելու կամքը. նա դատապարտված է ինքնառչնչացման. նմաններից զգվում են անգամ Աստվածները:
14. Թուլությունը միայնության և անպաշտպանության զգացողության մեջ է. զորությունը հավաքական ամբողջության զգացողության մեջ է:
15. Չորավոր ես դու, երբ զգում ես քո ծագումը, քո արմատը, քո արյունը, երբ քո մեջ զգում ես քո տոհմը, քո Ազգը, քո Ցեղը, երբ քո կողքին զգում ես քո նախնյաց ոգիներին, երբ քեզ հետ զգում ես Ամենագոր Վահագնին:
16. ԵՎ միայն Ցեղաշունչ Ազգը և անհատը զորավոր կլինեն: Անցեղաշունչ Ազգը կամ անհատը չի կարող զորանալ. զորությունը ցեղայնության մեջ է, իսկ թուլությունը՝ Ցեղայնությունից դուրս:
17. Ո՛վ, Արորդի՛, սուր ունենալը դեռ քիչ է. դու արժանի կլինես այդ սուրին, եթե Չորության Աստված Վահագնը օծի այն:
18. Երբ Արիի ձեռքից սուրն ընկնում է, ուրեմն այլևս այն պետք չէ նրան:
19. Ամենագոր Վահագնը օծում է Արիների թուր-կեծակին՝ Չարիների դեմ կռվելու համար. բայց Հայր Արայի կամքով այդ թուր-կեծակին քո արյան դեմ կորցնում է իր զորությունը:
20. ԵՎ երբ երկու արյունակիցների միջև խռովություն է ծագում, և նրանք կռվում են իրար հետ, Վահագնը հովանավորում է երկուսին էլ, որ եղբայրների միջև հաղթող ու պարտվող չլինի. քանզի հաղթողը կգոռզանա, իսկ պարտվողը կչարանա, և նրանց միջև

- այլևս երբեք հաշտություն չի լինի. եղբայրների միջև թշնամանքը միայն սիրով կլուծվի:
21. Պատյանից հանված սուրը ետ պատյան պիտի չդրվի՝ դա է բնույթը Աստվածամարդերի:
 22. Արդարությունը տկարի մխիթարություն է: Բնության մեջ մի արդարություն կա. այն է՝ բնական բոլոր հարաբերությունները զորությունների հարաբերություններ են. իսկ տկարները զորությունների համար կերի դեր են կատարում միայն. սա է ճշմարտությունը, սա է արդարությունը:
 23. Դու զորանում ես քո իսկ զորությամբ, միայն Հայր Արայի արարչագործությունը քո մեջ կրելով, միայն քեզանով զգալով Արային՝ քո Վահագնով:
 24. Արի տղամարդը հայր է ու ռազմիկ՝ սիրով ու սրով նա պիտի կնքվի. և ապա երբեք, ամբողջ իր կյանքում այդ սուրը պատյան պիտի չդնի, նույնիսկ աղոթքի ու սիրո պահին:
 25. Սերն առանց զորության կործանվող է միշտ. սերը սրով պիտի պաշտպանվի. և հոգեպարար աղոթքի պահին, քո սուրը Վահագնի հուրով պիտ օծվի:
 26. Արի ռազմիկը միշտ պիտի պատերազմի. նա պիտի ելնի ռազմի ասպարեզ՝ ազնիվ մրցության, խաղա մահի հետ, հաղթի կամ հաղթվի:
 27. Իսկ Չարիի դեմ նա պիտի լինի լուկ Վիշապաքաղ. թե Չարին ձեռք բարձրացնի Արի մորթելու, սրով պիտ կտրել այդ ձեռքը նրա... գլխի հետ մեկտեղ: Սա է կոչումը Արի ռազմիկի. սա է պատգամը Վահագն Աստծո:
 28. Նայեք Արի մանուկների աչքերին. նրանց աչքերի մեջ Վահագնյա հուրն է ճառագում: Դա Վահագնյա ուժի արտացոլումն է, որ պետք է զորանա և կուտակվի նրանց հոգիների մեջ:
 29. Բայց մանուկների աչքերի հուրը մարում են հայրերը: Չէ՞ որ մանուկի համար միակ աստվածը, միակ զորությունը իր հայրն է:

30. Մանուկն ապավինելով իր հորը, իրեն զորավոր է զգում, իրեն ապահով է զգում, իրեն երջանիկ է զգում. և հենց այդ զգացողությամբ է նա զորանում:
31. Բայց երբ հայրը ինքն իրեն չի կարող պաշտպանել, երբ նա իր հույսը թողնում է իրենից դուրս ինչ-որ ուժի ողորմածության, էլ մանուկն ինչպե՞ս ապավինի իր հորը. և անպաշտպանվածության զգացումը սարսափեցնում է նրան ու աստիճանաբար մարում նրա աչքերի հուրը:
32. Մանուկը իր ամբողջ էությամբ Հոր Արևին է ապավինում, նա Հոր Արևով է երդվում. բայց երբ մանուկի զգացողության մեջ Հոր Արևին փոխարինում է Մոր Արևը, և մանուկը Մոր Արևով է երդվում, այդ մանուկը տկարանում է, քանզի մանուկը զորության արև հորից է սնվում. մորը՝ Գթության Լույսն է:

Ժ. ԳԵՂԵՑԻԿԸ ՆԵՐՂԱՇՆԱԿՈՂ

1. Ո՛վ, Արորդի՛, թե Ցեղակրոն ես, ասել է՝ գեղապաշտ ես: Դա է կամքը Վահագնի:
2. Գեղեցիկը բնական համաչափությունն է: ԵՎ գեղեցիկը դիտվում է իր ամբողջության մեջ: Իր ամբողջությունից դուրս գեղեցիկը չենք կարող զգալ:
3. Ամեն Ազգ և Ազգային համապատասխանում են իրենց հարազատ բնաշխարհին. և ամեն Ազգ ու Ազգային գեղեցիկ են իրենց հարազատ բնաշխարհի մեջ. օտար բնաշխարհում դրանք կարող են գեղեցիկ չլինել: ԵՎ օտար գեղեցկությունը քոնը չէ. քոնը քո ազգային գեղեցկությունն է:
4. ԵՎ անհատի գեղեցկությունը անպայման ազգային ամբողջական գեղեցկության մասնավոր արտահայտություն է: Ուստի գեղեցիկը - ազգային գեղեցկության Օրինաչափ զարգացումն է անհատի մեջ, իսկ ոչ գեղեցիկը՝ օրինաչափության խախտումը:

5. Գեղեցիկը համաչափություն է, սզեղությունը՝ համաչափությունից շեղում: Տզեղությունը արատ է: Տզեղությունը անառողջություն է, անկատարություն է: Իսկ անկատար մարդուց անկատար սերունդ կծնվի:
6. Անկատար մարդը առողջ հոգի չի ունենա: Առողջ հոգին առողջ մարմնի մեջ կլինի. հուժկու հոգին՝ գեղեցիկ, ներդաշնակ մարմնի մեջ:

ԺԱ. ԲԱՐՈՅԱԿԱՆԸ ՀԱՍՏԱՏՈՂ

1. Արորդի՛, մենք՝ բոլոր Արիներս, Արայի որդիներն ենք և բոլորս էլ նրա հաճությունն ունենք: ԵՎ մեր անձնական վարքով ու բարքով ենք մնում այդ հաճության մեջ կամ ինքներս լքվում նրանից: Ցեղակրոն բարոյականն է միայն աստվածավայել ապրելու պայմանը: Այդպես է պատգամում Վահագնը:
2. Եղիր հպարտ. գոյությունդ քարշ տալու համար մի՛ սողա, մի՛ ստորանա և մի՛ ստիր: Ստել կնշանակե՛ հայիոյել ճշմարիտը, աստվածայինը: Ստորանալ կնշանակե՛ դադարել մարդ լինելուց:
3. Եղիր ազատ - կամովին ստրուկի և հանցագործի միջև չկա տարբերություն:
4. Եղիր բացարձակ , և ոչ մի զիջում՝ հանցանք է զիջելը: Զիջել կնշանակե՛ թույլ լինել, պարտության հետ հաշտվել:
5. Եղիր վեհանձն - ստորությունը մնում է ստորություն, անգամ այն ժամանակ, երբ այն կատարվում է հանուն ամենանվիրական շահերի. դա նախ բարոյագրկում է և ապա տկարացնում իրենից օգտվողին:
6. Եղիր ինքնահարգ - անիմաստ և զգվելի է քննադատությունը, եթե այն ստեղծագործություն չէ:
7. Եղիր զինապաշտ, և քո սուրը թող երբեք պատյան չդրվի՝ նույնիսկ սիրո և աղոթքի պահին:
8. Եղիր անզիջում - թե Չարին ձեռք բարձրացնի Արի մորթելու՝ այդ ձեռքը կտրիր, գլխի հետ մեկտեղ:

Ժբ. ՆԱԽՆՅԱՑ ՈԳԻՆԵՐԸ ՋՈՐԱՎԻԳ

1. Ո՛վ, Արորդի՛, քո Հավատքը նաև պաշտամունք է սուրբ Նախնիների: Միայն նախնիներիդ զգալով է, որ դու կապրես աստվածահաճո կյանքով: Դա է կամքը Հայր Արայի:
2. Դեպի հավերժություն են ձգվում քո նախնիք՝ մինչև Արարիչ: ԵՎ հավերժության մեջ են արարել նրանք քեզ: Ուրեմն դու էլ հավերժից ես գալիս, և քո մեջ հավերժող հուրը կա:
3. Քո բոլոր նախնիք ոգեղինացած շրջապատում են քեզ - նրանք քեզ հետ են, քո շուրջն են. նրանք տեսնում են քեզ, նրանք լսում են քեզ, նրանք զգում են քեզ:
4. Քո նախնյաց ոգիները Մայր Հողից դուրս չեն՝ նրանք հենց Մայր Հողի վրա են, և հենց այդ Հողի վրա միայն դու կարող ես զգալ նրանց, հարաբերվել նրանց հետ: Քո նախնյաց ոգիները գորավիզ են քեզ ամեն պահ և ամենուր:
5. Հոգին է ոգուն զգում, հոգին է ոգուն միանում, հոգին է կապվում ոգու հետ. և միայն հոգով դու կարող ես զգալ քո նախնյաց ոգիներին ու հոգով միանալ նրանց, զորանալ նրանցով:
6. Քո նախնիք քո անցյալն են. հենց նրանք էլ քո ապագան են: Նրանք քեզ են արարել, դու էլ նրանցով զորացած՝ նրանց պիտի արարես - դու էլ նախնի պիտի լինես քո արարումով: ԵՎ այդպես անվերջ պիտի հավերժես դու, պիտի հավերժեն Տոհմդ, Ազգդ, Ցեղդ:
7. Հոգալով քո ապագան, դու պիտի քո անցյալը փայլափայես. դու պիտի զգաս քո նախնյաց ոգիներին և հոգով կապվես նրանց հետ, հզորանաս և հավերժես Ազգդ գալոց սերունդներով, ժառանգումով:

8. Չզգալով քո նախնիներին, դու զրկվում ես քո անցյալից, զրկվում ես քո ծագումից, քո կենսագրությունից:
9. Անցյալ չունեցողը ապագա էլ չի ունենա, քանզի քո անցյալն ու ապագան նույնանում են իրար քեզ շրջապատող ոգիների մեջ. դու զրկվում ես քեզ ամբողջականությունից. դու կիսատվում ես որպես ես:
10. Իսկ կիսատ ես-ը առողջ չի լինի՝ նրա զորությունը տկար կլինի, նրա սերը տկար կլինի, նրա հոգին տկար կլինի և կվտանգվի շարունակելիությունը նրա:
11. Որքան ուժեղ է Ազգի սերունդը զգում իր նախնյաց ոգիներին և որքան զորավոր է նրա կապը նախնյաց ոգիների հետ, այնքան ամբողջական է Ազգը: ԵՎ Ազգի սերունդն այդ ամբողջության մեջ առավել ապահով է, առավել զորեղ է, առավել կենսունակ է: ԵՎ այդ ազգային ամբողջության մեջ է միայն ազգային անհատն ապահովվում իր բնական շարունակելիությունը:
12. ՌՎ, Արորդի՛, քո և քո պապերի արանքում խցկվել է ինչ-որ մեկը և թույլ չի տալիս, որ տեսնես քո պապերին, ճանաչես ու կապվես քո պապերին: Դրա համար էլ անցյալը դատարկ է քեզ համար՝ դու չկաս այնտեղ. գալիքն էլ դատարկ է քեզ համար՝ դու չկաս այնտեղ: Քեզ մնում է միայն այսօրը: Բայց այսօրն էլ չկաս դու. և քո այսօրը մահվան ջղաձգություն է լոկ:
13. Ոչ ետ ես նայում և ոչ էլ առաջ. ոչ քո պապերին ես զգում և ոչ էլ քո թոռների մեջ ես ապրում. ապրում ես միայն այսօրով՝ սարսափում ես մահից, բայց կյանքն էլ չես սիրում. և մահի մեջ ես մահից փրկություն որոնում:
14. Ամեն տեսակի արդարացում ողջերին մոլորեցնելու համար է միայն. նախնյաց ոգիները ոչ մի արդարացում չեն ընդունում:
15. Նախնյաց ոգիներն են պահում տան պատերը կանգուն. իսկ նրանք այնտեղ են, ուր օջախ կա: Օջախ վառեք, Արիներ՛, օջախ և օջախի վրա միայն տուն կառուցեք:

16. Քո ոգեղեն նախնիները քո հոգևոր աշխարհն են, իսկ քո մարմնավոր շրջապատը՝ քո իրական աշխարհը: Նախնիներիդ հետ դու կապված ես քո անցյալով ու գալիքով, իսկ մարմնավոր հարազատներիդ հետ՝ քո ներկայով: Դու պետք է չկասկածես ու չմեղանչես այդ երկու աշխարհներից ոչ մեկի նկատմամբ:
17. Քո նախնիք են քո անցյալը, նրանք են նաև քո ապագան: ԵՎ դու քո ներկայով քո անցյալն ու ապագան կապում ես իրար:
18. Դու քո անցյալից չես կարող զրկվել, հակառակ դեպքում դու կվերածվես անտոհմիկ որբի ու չես իմանա, թե ով կամ ինչ ես դու, ուրկից ես գալիս և ուր ես գնում:
19. Քո անցյալով ես հաստատում դու քեզ. դու ամբողջանում ես քո նախնիներով. և ինչպե՞ս չհավատաս քո նախնիներին, երբ ինքդ երեկ նախնի ես եղել և վաղը նորից նախնի պիտ լինես:
20. Ո՛վ, Արորդի՛, քո նախնիք քեզ հետ են. քեզ հետ են քայլում, քեզ հետ են նստում, քեզ հետ են շնչում բուրմունքը հողի, քեզ հետ են գարնան արեգը գրկում:
21. Քո նախնյաց ոգիք ողջերի նման ժպիտ են սիրում, ջերմություն և լույս. սիրվել են սիրում ողջերի նման և բոլոր մեր ողջ հայրերի նման, ողջ որդվոց կողմից պաշտվել են սիրում. սիրում են նաև գթալ ու հոգալ:
22. Քո նախնյաց ոգիները ավելի մոտ են Աստվածներին. նրանք Աստվածների հետ սեղան են նստում և Աստվածների օրհնանքը ստացած, քեզ են փոխանցում զորությունն իրենց:
23. ԵՎ մենք մեր նախնիների միջոցով ենք Աստվածներին զգում. և Աստվածներն էլ մեր նախնիների միջոցով են մեզ կյանքով սնում:
24. Տաճար ենք շինում ոչ թե պարզապես աղոթք ասելու. Տաճար ենք շինում մեր նախնյաց համար: ԵՎ այդ Տաճարում են հավաքվում մեր նախնիների ոգիները, և Տաճարում մենք հանդիպում ենք նրանց, հոգեծուլվում նրանց հետ և նրանց միջոցով Աստվածներին հասնում:

25. ԵՎ այն Տաճարում, ուր նախնիք չկան, աղոթքը Աստծուն թատերախաղ է լուկ. և այդ Տաճարից դու դուրս ես գալիս խղճով դատարկված ու հոգով տկար:
26. Ո՛վ, Արորդի՛, նախնիներիդ մեջ է գորությունը քո. Մայր Հողը հենց նրանով է Հայրենիք քեզ համար, որ այնտեղ են բոլոր նախնիները քո. և Մայր Հողից դուրս քո նախնիք չկան, քո Մայր Հողից դուրս Հայրենիք չկա:
27. Մայր Հողի վրա նախնիները քո Վահագնի Ջորությամբ են քո հոգին սնում և Աստղիկի Սիրով քո սերն են օժում:
28. ԵՎ թե դու զգում ես քո նախնիներին, թե միաձուլված ես հոգով դու նրանց, քո ուժից բացի դու զգում ես քո մեջ ուժը պապերիդ և քո թռռների գորությունն ես զգում: ԵՎ դու գերհզոր ես քո Մայր Հողի վրա:
29. ԵՎ երբեք Չարին չի կարող լինել քեզանից հզոր քո Հայրենիքում, քանզի քեզ հետ են բոլոր նախնիները քո, քեզ հետ են բազում չճնված մանկտիք և՛ ոգիացող զառամյալ մայրեր, և՛ մարմնավորված ոգիք նորածին:

ժգ. ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

1. Ո՛վ, Արորդի՛, քո շարունակելիությունը քո Ցեղի, քո Ազգի, քո Տոհմի մեջ է: Թե դու լինելություն ես այդ ամբողջության մեջ - քո շարունակելիությունն էլ այդ ամբողջության մեջ է կատարվում: Ցեղակրոնի շարունակելիությունը հենց ինքը՝ Ահեղաշունչ Վահագն է հովանավորում:
2. Թե դու ամուսնանում ես, ընտանիք կազմում - քեզ ի՞նչ օգուտ, եթե դու քո շարունակելիությունը չես ապահովում ընտանիքիդ միջոցով:
3. Թե դու երեխա ես արարում, տառապում, մեծացնում ես՝ քեզ ի՞նչ օգուտ, եթե դու քո շարունակելիությունը չես ապահովում երեխայիդ մեջ:
4. Թե դու պահպանում ես քո Տոհմը, զորացնում ես այն - քեզ ի՞նչ օգուտ, եթե դու քո շարունակելիությունը չես ապահովում Տոհմիդ մեջ:
5. Թե դու պաշտում ես քո նախնիներին, հոգով կապվում ես քո նախնյաց ոգիներին և ունկնդրում ես նրանց ձայնին - քեզ ի՞նչ օգուտ, եթե դու քո շարունակելիությունը չես ապահովում քո նախնիների միջոցով:
6. Թե դու նվիրվում ես Ազգիդ ցավերին, տառապում ես, հալածվում, զոհվում - քեզ ի՞նչ օգուտ, եթե դու քո շարունակելիությունը չես ապահովում Ազգիդ մեջ:
7. Եթե վերածնունդ չկա, եթե շարունակելիություն չկա, եթե ոչինչ քեզ չի մնալու, դու էլ քեզ չես մնալու, և քո կյանքը անցողիկ մի պատահականություն է - ուրեմն չի լինի և՛ սեր, և՛ նվիրում, և՛ զոհաբերություն, և՛ արարում:
8. Ավելի հեշտ չէ՞ չժնել, չնվիրվել, չտառապել, չզոհվել, չսիրել և պարզապես վայելել անցողիկ կյանքի մարմնական վայելքները, եթե վաղը ոչնչանալու ես անդարձ:
9. Ի՞նչ խորհուրդ մոր համար երեխա ծնելը՝ հոգևոր տառապանք, որ երջանկություն է բերում:

10. Ի՞նչ խորհուրդ բանաստեղծին քերթվածք արարելը՝ հոգևոր տառապանք, որ երջանկություն է բերում:
11. Ի՞նչ խորհուրդ զինվորին Ազգի համար զոհվելը՝ մի ամբողջ կյանք, որ երանություն է բերում:
12. Ի՞նչ խորհուրդ այդ բոլոր երջանկաբեր տառապանքները մարդու մեջ՝ իր շարունակելիության զգացողություն:
13. Այդ ի՞նչ խորհրդավոր ուժ է, որ ծնողին մղում է ինքնազոհողության՝ հանուն զավակի ապահովության: Դա հենց բնական ինքնանորոգման զորությունն է, որ ծնողին մղում է իր շարունակելիությունը ապահովել զավակի միջոցով:
14. Այդ ի՞նչ խորհրդավոր ուժ է, որ մարդուն մղում է ինքնազոհողության՝ հանուն Ազգի և Հայրենիքի: Դա հենց բնական ինքնանորոգման զորությունն է, որ մարդուն մղում է իր շարունակելիությունն ապահովել իր Հայրենիքում, իր Ազգի ամբողջության մեջ:
15. Նա, ով կվտանգի որդու կյանքը՝ իրենը փրկելու համար, նա կփրկի միայն իր այս մի կյանքը, բայց կվտանգի իր շարունակելիությունը, քանզի իր շարունակելիությունը որդու միջոցով է լինելու:
16. Նա, ով իր անձնական ապահովության համար կվտանգի իր Տոհմը, իր Ազգը, իր Հայրենիքը, նա կապահովի միայն իր այս մի կյանքը, բայց կվտանգի իր շարունակելիությունը, քանզի իր շարունակելիությունը իր Հայրենիքի, իր Ազգի և իր Տոհմի մեջ է լինելու:
17. Արարիչը հովանավորում է նրանց շարունակելիությունը, ովքեր իրենց ապահովությունը իրենց զավակների, իրենց Տոհմի, իրենց Ազգի և իրենց Հայրենիքի ապահովության մեջ են տեսնում:

Ժդ. ՎԵՐԱԾՆՈՒՆԴՈՂ ՀԱՎԵՐԺՈՂ

1. Ո՛վ, Արորդի՛ - սիրիր դու կյանքը, բայց մահից էլ մի վախեցիր՝ ապրիր հավերժության զգացումով և հավերժ կլինես դու: Դա է Վահագնի աստվածային պատգամը:
2. Դու լինելություն ես, դու հավերժ ես: ԵՎ քո լինելությունը հենց կյանքի ու մահի միասնություն է - մահը կյանքի մեջ, կյանքն էլ մահի մեջ՝ հենց դա է լինելությունը, դա է հավերժությունը:
3. Մահ որպես չգոյություն, որպես ոչնչացում չկա: Մահը կա որպես կյանքի անդրադարձ: Կյանքը մեր ոգին է մարմնավոր, իսկ մահը՝ մեր ոգին անմարմին:
4. Ո՛վ, Արորդի՛, մի վախեցիր մահից - ապրիր ազատ և հավերժության հավատով: Հավերժության մեջ մի մահը ի՞նչ արժե որ՝ ոգիացած երազ միայն:
5. Երբեք մի ապրիր մի կյանքի համար: Բազմաթիվ կյանքեր ունես դու և բազմաթիվ մահեր: Նա, ով ծնվել է՝ որոշապես մի օր պիտի մեռնի. նա, ով մեռել է՝ որոշապես մի օր պիտի ծնվի:
6. Էլ ինչո՞ւ ես մի կյանքի սահմաններով ապրում: Ապրիր հավերժով: Անցողիկ չէ կյանքը, և անցողիկության վախով մի ապականիր քո ոգին, թե չէ նա կտկարանա, և կվտանգի քո վերստին ծնունդը:
7. Երազում էլ դու ապրում ես: Դու զգում ես քեզ, դու զգում ես մարդկանց՝ ողջ թե մեռած, խոսում ես նրանց հետ: Քո երազում բոլորը իրական են, բայց բոլորն էլ աննյութ են, դու էլ ես աննյութ: Դա քո հոգին է հարաբերվում ողջերի ու մեռածների ոգիների հետ:
8. Մահն էլ երազի պես՝ քո աննյութ ոգին ազատ հարաբերվելու է ոգիների և ողջերի հոգիների հետ: Դու տեսնելու ես ողջերին, լսելու ես նրանց. բայց նրանք քեզ կարող են տեսնել միայն հոգով:
9. Քեզ համար հաճելի չէ՞ միայն օրհնություն լսել ողջերից և ոչ՝ անեծք քո հասցեին: Ապրիր այնպես, որ մահից հետո անեծք չլսես:

10. Քո ամեն մի արարք տեսնում են քո նախնյաց ոգիները, որոնք պիտի ընդունեն քեզ մի օր: ԵՎ վ՛այ քեզ, եթե որպես ապականված ոգի մտնես նրանց մեջ - նրանք քեզ չեն ընդունի, կվճռեն քեզ իրենց միջից, և դու կթափառես միայնության մեջ՝ լքված ու հալածված: Էլ ինչպե՞ս դու վերստին պիտի ծնվես:
11. Մահվան սարսափը հրեշ է ծնում քո մեջ. դու չես սիրի ոչ մեկի, դու չես սիրի նույնիսկ քեզ: Չարացած դու կհալածես ինքդ քեզ, քո հարազատներին, կլքես քո Տոհմն ու Ազգը, կսողաս սրա կամ նրա առջև՝ մի կերպ կյանքին կառչելու համար. դու կապականես քո շրջապատը և քո ոգին:
12. ԵՎ ապականված ոգուն Տոհմիդ ոգիները չեն ընդունի, և դու վերստին չես ծնվի: Միայն մի կյանքով ապրողը հավերժից է գրկվում:

ԺԵ. ՏՈՀՄԸ ՎԵՄՆ Է ԱԶԳԻ

1. Ո՛վ, Արորդի՛ - միայն տոհմական անհատը կարող է կատարելության հասնել, դառնալ Ցեղամարդ: Թե դու Տոհմ չունես՝ դու չունես և Ազգ, դու չունես և Հայրենիք: Այդպես է աստվածային կամքը Վահագնի:
2. Տոհմն է Ազգի հիմքը: Տոհմը Ազգի մանրապատկերն է, ընտանիքը՝ Տոհմի. Տոհմը Ազգի բնական մասն է, ընտանիքը՝ Տոհմի. Տոհմը Ազգի սերնդարանն է, ընտանիքը՝ Տոհմի. Տոհմը Ազգի արյունն է, ընտանիքը՝ Տոհմի. Տոհմը Ազգի պահպանիչն է, ընտանիքը՝ Տոհմի:
3. Քո Տոհմը հենց դու ես քո բոլոր նախկին, ներկա և գալիք սերունդների հետ մեկտեղ: Տոհմը - դա քո արյունն է, քո ծագումը որպես անհատ:
4. Տոհմը - դա քո ծագումի, արյան այն ընդհանրությունն է, որ ունես դու և ունեն քո հայրը, քո պապը, ապուպապը, որ ունեն քո եղբայրները, քո հորեղբայրը...

5. Նայիր քո հորը, քո պապին, քո հորեղբորը, եղբորն ու հորեղբորորդուն՝ ի՞նչ նման եք դուք իրար. քանզի դուք նույն Տոհմն եք, նույն տոհմական արյունն ունեք, նույն տոհմական ծագումն ունեք, նույն տոհմական Ես-երն եք դուք:
6. Ազգիդ արյունը քո Տոհմի միջոցով ես ստանում դու. քո Արի ծագումը Տոհմիդ մեջ ես ստանում դու և Ցեղիդ զգացողությունը Տոհմիդ մեջ ես ձևավորում դու:
7. ԵՎ Ցեղամարդ լինել, ասել է՝ լինել տոհմական. Ազգին պատկանել, ասել է՝ պատկանել Տոհմին: Տոհմ չունեցողը ինչպե՞ս իմանա իր ով լինելը, իր ծագումը նա ինչպե՞ս իմանա, ինչպե՞ս իմանա, թե ինչ արյուն ունի:
8. ԵՎ վա՛յ այն Ազգին, որի առաջնորդն անտոհմիկ է - այդ Ազգն իր ճակատագիրը պատահականության գիրկն է զցում: Վստահություն՝ միայն տոհմական անհատին:
9. Քո ոգին քո Տոհմի մեջ է՝ տոհմական ոգի է նա: ԵՎ քո շարունակելիությունը միայն քո Տոհմի մեջ է՝ դու կվերածնվես միայն քո Տոհմում:
10. Քեզ արարել է քո հայրը, և ուրիշ ոչ ոք չէր կարող քեզ արարել: Իսկ քո հայրը քեզ արարել է ոչ թե ոչնչից, այլ նա քեզ արարել է հենց քո ոգուց, որ նույն Տոհմի մեջ է:
11. Դու քո շարունակելիությունը հաստատում ես քո Տոհմի միջոցով և Տոհմիդ մեջ: ԵՎ դու շահագրգռված ես քո Տոհմի գոյության մեջ: Թե դու չզորացնես քո Տոհմը, թե Տոհմի սերունդ չտաս, էլ ինչպե՞ս դու վերածնվես, ո՞ւմից:
12. Դու արարում ես քո ապուպապին, քո թոռան թոռն էլ քեզ պիտի արարի: Հենց քո շարունակելիության զգացողությամբ ես դու սերունդ տալիս՝ Տոհմի սերունդ:
13. Հայրն իր Տոհմի մեջ է վերածնվում իր սերունդների միջոցով: ԵՎ հայրն է առաջին պատասխանատուն իր Տոհմի սերնդատվության և գոյության համար: Հենց այդ պատասխանատվությամբ նա մայր է ընտրում իր սերնդի համար:

14. ԵՎ ինչպես ամեն սերմնացան բերրի հող է ընտրում իր սերմի համար, այնպես էլ հայրը բերրի, առողջ ու զեղեցիկ մայր է ընտրում իր սերնդի համար:
15. Մայրը ծնուն է հոր զավակին: ԵՎ այդ զավակները հոր Տոհմի սերունդ են, հոր Տոհմի ոգիներն են: ԵՎ մայրը իր ծնած զավակների միջոցով միայն պիտի վերածնվի:
16. ԵՎ մոր ոգին, որ իր շարունակելիությունը իր զավակների միջոցով է ապահովում, այսուհետև իր երեխաների Տոհմի մեջ է:
17. Եթե հայրը միշտ վերածնվում իր իսկ Տոհմում, ապա մայրը ամեն անգամ վերածնվում է տարբեր Տոհմում. ամեն անգամ նա վերածնվում է այն Տոհմում, որի զավակների մայր է լինում: ԵՎ Տոհմի զավակների մայրը հաջորդ անգամ վերածնվում է որպես այդ Տոհմի դուստր:
18. ԵՎ իր երեխաների Տոհմն է մոր հաջորդ վերածնունդին դառնալու հայրական Տոհմ: Ուստի մայրը իր երեխաների Տոհմի մայր է, և երեխաների Տոհմն է դառնում նրա համար հարազատ Տոհմ: ԵՎ մայրը նույնպես շահագրգռված է Տոհմի սերնդատվության և զորացման մեջ:
19. ԵՎ թե կինը չդառնա ամուսնու Տոհմի մայր, չնպաստի նրա զորացմանը և սերնդատվությանը, նա ինքն իրեն կկտրի իր շարունակելիությունից:
20. Երեխան որբանում է ոչ հորից և ոչ մորից. նա որբանում է իր Տոհմից, իր ծագումից: Զրկվելով ծնողներից, երեխան կմեծանա իր Տոհմի մեջ ազգականների խնամքի ներքո: Բայց զրկվելով իր Տոհմից, նա զրկվում է իր կենսական ուժից, իր ինքնանորոգման զորությունից, և վտանգվում է նրա շարունակելիությունը:
21. Տոհմական արժեքները դրական կամ բացասական չեն լինում, այլ լինում են բնական կամ անբնական: Բնական են, եթե իրենց մեջ խտացնում են ազգային արժեքները. անբնական են, եթե իրենց մեջ

չունեն ազգայինը: ԵՎ ողբալի է հայրենասիրությունը այն Տոհմի, որը Ազգի մանրապատկերը չէ:

22. Միայն Տոհմի աղջիկը կարող է Տոհմի մայր լինել: Տոհմի այրը իր տոհմական սերնդի համար ընտրում է տոհմական աղջիկ, որն ունի հոգու, մարմնի, արյան անարատություն, որպեսզի իր սերունդը լինի առողջ և անարատ:
23. Տոհմի աղջիկն էլ ընտրում է տոհմական ամուսին, որն ունի հոգու, արյան անարատություն, որպեսզի իր ծնած սերունդը լինի առողջ ու անարատ. և այդ անարատությամբ ու առողջությամբ նա վերածնվի այդ Տոհմի մեջ:

Ժգ. ԸՆՏԱՆԻՔԸ ՍՐԲԱԶԱՆ

1. Ո՛վ, Արորդի՛ - Ցեղաշունչ Ազգը Ցեղաշունչ Տոհմեր կունենա. Ցեղաշունչ Տոհմը՝ Ցեղաշունչ ընտանիքներ: Այդպես է կամքը Մայր Անահիտի:
2. Ընտանիքը Տոհմի ընտանիքն է: Ընտանիք չի ստեղծվում - ընտանիքը ճյուղավորվում է և հենց Տոհմի մեջ ճյուղավորվելով, բազմանում է:
3. Ընտանիքը Տոհմի սերնդատվության բջիջն է: Թե սերունդ չկա, թե մայրացում չկա՝ էլ ի՞նչ ընտանիք - դա սոսկական արուի ու էգի հարաբերություն է, բայց ոչ՝ ընտանիք:
4. Տոհմի սերունդը ընդհանրական է: Տոհմի բոլոր զավակները նման են իրար և՛ տոհմական դիմագծով, և՛ տոհմական հոգեբանությամբ, և՛ բարոյական զգացողությամբ, և՛ սովորույթներով:
5. ԵՎ Տոհմի ընտանիքները իրենց մեջ ունեն նույն տոհմական կենսափորձը, նույն բարոյական ու հոգևոր արժեքները, նույն սովորությունները: Տոհմի բոլոր ընտանիքները նման են իրար:
6. Թե ընտանիքը կտրվի Տոհմից - նա կկտրվի տոհմական ավանդույթներից, բարոյական ու հոգևոր

արժեքներից: Թե ընտանիքը կտրվի տոհմական ավանդույթներից - անօրինությունը կտիրապետի ամբողջ ընտանիքի մեջ: ԵՎ երբ անօրինություն տիրի ընտանիքում - կապականվեն ընտանիքի կիները: Եթե ապականվեն կիները - իրար կխառնվեն Տոհմերը և ապա Ազգերն ու Ցեղերը:

7. Թե ընտանիքը կտրվի Տոհմից - ընտանիքի զավակները չեն միավորվի Տոհմի ամբողջությամբ: Եթե զավակները չմիավորվեն Տոհմով - տարբեր սովորություններ ու բարոյական արժեքներ կբախվեն ընտանիքում:
8. Եթե տարբեր բարոյական արժեքներ բախվեն ընտանիքում - ընտանիքի զավակները տարբեր անձնական շահերով կբախվեն իրար:
9. Եթե ընտանիքում բախվեն տարբեր անձնական շահեր - եղբայրների մեջ կծեղվի փոխադարձ անվստահություն, անհանդուրժողականություն, հոգեբանական պառակտում:
10. ԵՎ երբ ընտանիքում տիրի հոգեբանական պառակտում - այդ ընտանիքը կտկարանա և կքայքայվի:
11. Եթե ընտանիքը կապված է Տոհմին և տոհմական ամբողջության մաս է - ընտանիքի զավակները միավորվում են այդ ամբողջությամբ: Այդ ամբողջության մեջ նրանք զգում են իրենց գորությունը և վեհանում են. նրանք զգում են իրենց Տոհմի ուժը իրենց մեջ:
12. Այդ ընտանիքում տիրում են սեր, միություն, հարգանք, նվիրում, բարոյական բարձր արժեքներ և տոհմական պատվի զգացողություն: Այդ ընտանիքն իր զավակների համար սրբավայր է - ընտանիքը կայուն է ու զորավոր. զավակները հպարտ են ու բարի:
13. Ընտանեկան հարաբերությունները երբեք դրական կամ բացասական չեն լինում. դրանք լինում են բնական կամ անբնական: Բնական են, եթե իրենց մեջ ունեն Տոհմի արժեքները. անբնական են, եթե իրենց մեջ

չունեն տոհմայինը: Ընտանիքը Տոհմի մանրապատկերն է:

Ժ. ՀԱՅՐ ԵՎ ՈՐՂԻ

1. Ո՛վ, Արորդի՛ - Հայրը աստվածություն է, հայրը արարող է: ԵՎ միայն արարողն է հայր: ԵՎ չկա ավելի մեծ երջանկություն, քան զգալ հարազատ հորը ու հավատալ նրան: Իր հորը չզգացողը չի կարող Արարչին զգալ: Այդպես է պատգամում Վահագնը:
2. Հայրը Արայի փոխանորդն է ընտանիքում. հոր կամքն է Տոհմը պահպանում, հոր կամքն է ընտանիք պահում, հոր կամքն է որդի արարում, հոր կամքն է Ազգը զորացնում:
3. Հոր կամքը Տոհմից է գալիս և Վահագնի զորությունն ունի իր մեջ: ԵՎ ընտանիքի զորությունը հոր մեջ որոնեք: Ընտանիքում Տոհմի խորհրդանշողն է հայրը. և ընտանիքի հոր տոհմական կամքի բացակայությունը ընտանիքի տկարացման ու քայքայման պայման է:
4. Հայրը որդու համար ուժն է բնության, Արի ծագումի հաստատումն է նրա մեջ, արարիչն ուժի, կորովի, հույսի, երջանկաբեր պաշտպանության և ամենայն աստվածության:
5. Հայրը որդու արարիչն է, նրա զորության աստվածը, լուսատու արեգը և կենաց արևը. հայրը հայելին է Տոհմի, Ազգի և Ցեղի. հայրը խորհրդանիշն է ազնվության, առաքինության, իմաստության, վեհության:
6. ԵՎ վա՛յ այն հորը, որ որդու աչքի առաջ կընկնի այդ բարձունքից, և վա՛յ այդ հոր որդուն՝ նա ինքն իրենից կհիասթափվի:
7. Հայրը որդու պատվանդանն է, նրա հիմքը, որի վրա զորանում է որդին: Որդին կանգնում է իր հոր ուսերին, հայրը՝ իր հոր, նա՛ իր հոր... և այդպես անվերջ: Որդու ուսերին էլ նրա որդին պիտի կանգնի, նրա ուսերին՝ նրա որդին... նրանց ծանրությունից հայրն էլ է խրվում

Մայր Հողի մեջ, ուր նրա բազմասերունդ հայրերն են արդեն:

8. ԵՎ քանի դեռ որդին ամուր է կանգնած իր հոր ուսերին, բացարձակ է նա ու հավերժ կանգուն:
9. ԵՎ վա՛յ որդուն, եթե տկար լինեն հոր ուսերը և չկարողանան իր հետագա սերունդների ծանրությունը պահել:
10. ԵՎ վա՛յ որդուն, եթե կտրվի իր հոր ուսերից - նա կկտրվի իր բնական հիմքից և իրենց հիմքից կկտրի նաև իրենից սերվող գալիք սերունդներին: Ռիփշի հայրը երբեք նրան պատվանդան չի լինի:
11. Որդին չի կարող հայր ընտրել - նա ինքն է իր հոր գավակը: ԵՎ ինչպիսին էլ լինի հայրը, այնուամենայնիվ, որդին իր որակներով նույնանում է նրան:
12. Որդու համար հայրը պարզապես ծնող չէ - հայրը նրա պապն է, ապուպապը... հայրը նրա նախնիների խորհրդանիշն է. և հոր միջոցով է որդին զգում իր նախնիներին. հայրը որդու անցյալն է, նրա կենսագրությունը, նրա հավերժության հաստատումը:
13. Տոհմի մշտական նորոգումը իրագործվում է հոր, որդու և նախնյաց ոգիների միասնությամբ: Հայրը որդու կապն է նախնիների հետ, որդին՝ հոր կապն է գալիք սերունդների հետ:
14. Հայրը որդու անցյալն է, իսկ որդին՝ հոր ապագան: ԵՎ որքան հայր և որդի ամուր են կապված իրար, այնքան ամուր է որդու կապը նախնյաց ոգիների հետ, այնքան առավել է նա զգում իր նախնիներին, իր անցյալը, այնքան ուժեղ է լինում որդին, և այնքան ապահով է լինում նրա գալիք սերունդների կենսունակությունը:
15. Պաշտելով իր հորը, որդին ինքն իրեն է հաստատում, քանզի իր մեջ հայրը արարել է իր նախապապերից մեկին. որդին իր իսկ նախապապերից մեկն է, որ վերածնվել է իր հոր միջոցով. և ինքն էլ իր բազմասերունդ թոռների միջոցով պիտի արարի նրան:

16. Ջգալով իր հորը, որդին իր նախապապերին է զգում իր մեջ. նա իր նախապապերին է զգում իր հարազատների մեջ, իր Ազգի մեջ: ԵՎ այդ բոլորի մեջ նա ամբողջանում է որպես հավաքական Ես:
17. ԵՎ նա իր երջանկությունը ընտանիքի երջանկության մեջ է գտնում, Տոհմի երջանկության, Ազգի երջանկության: Հավաքական երջանկությունն է նրա երջանկությունը:
18. Որդին, որ իր հոր ուսերին է կանգնած - բարձրանո՞ւմ է, բարձրանո՞ւմ և կարող է մինչև արեգը հասնել և այնտեղից Վահագնի զորություն սնվել ու բաշխել իր հարազատներին:
19. Ով իր հոր ուսերին չի կանգնում - կտրվում է տոհմականից և այդպես էլ մնում է ցած:
20. Ազգի ինքնանորոգումը Տոհմից է սկսվում տոհմական ընտանիքներից: Ցեղաշունչ սերունդ - Ցեղաշունչ ընտանիքից է աճում:
21. Ցեղաշունչ հոր կամքն է կերտում Ցաղնշունչ սերունդ: Ցեղաշունչ հոր կամքով են զորանում Տոհմը, Ազգը և Հայրենիքը:
22. Ցեղաշունչ հոր արևով է զորանում որդին, և իր հոր արևով է երգվում նա:
23. Ցեղաշունչ ընտանիքի որդու համար հայրն աստվածություն է, մայրն՝ աստվածային, և անսխալական են նրանք - մոր սխալը միայն հայրը կարող է տեսնել, իսկ հոր սխալը կարող է տեսնել միայն Տոհմը:

ԺՂ. ՏՈՀՄԻ ՄԱՅՐԸ

1. Մայրացող կանայք, խոնարհվեք Մոր առջև, որ հետո ձեր առջև խոնարհվեն: Հայրացող այրեր, խոնարհվեք Մոր առջև՝ Տոհմը ծնող, Տոհմը սնող, Տոհմը պահող ու զորացնող Մորը ծնրադրեք: Այդպես է պատգամում Աստվածամայր Անահիտը:

2. Կինը մայր է՝ Տոհմի մայր: ԵՎ ամեն մի կին դեռ չամուսնացած, պետք է զգա իր այդ առաքելական կոչումը - պետք է սրբությամբ պահպանի իր հոգին ու մարմինը մայրության համար:
3. Այն կինը, որ չի զգում իր մայրության կոչումը - պիտանի չէ մայր լինելու:
4. Կինը, որ մայր չէ կամ մայրանալու համար չէ նախապատրաստված՝ պարզապես էգ է: Կնոջ սրբությունը մայրության մեջ է:
5. Կինը իր կուսությունը սրբությամբ պահելու է Տոհմի ընտանիքում մայրանալու և սրբանալու համար:
6. Այն կինը, որ կուսությունից զրկվում է ընտանիքից դուրս՝ պղծում է իր մարմինն ու հոգին: Նա պղծում է նաև այն ընտանիքը, որի մեջ մտնում է:
7. Այն կինը, որ իր կուսությունը ժամանակավրեպ է դարձնում և Տոհմի մայր չի լինում՝ պղծում է իր հոգին:
8. Ընտանեկան կենակցումը հոգևոր է - այն ամրացնում է ընտանիքը, հոգևոր ամբողջություն ստեղծում և Տոհմի շարունակելիությունն է ապահովում:
9. Ընտանիքից դուրս կենակցումը զուտ մարմնավոր է - այն շնացում է, քանի որ հոգևոր ամբողջություն չի ստեղծում, ընտանիք է քայքայում և կասեցնում է Տոհմի օրինաչափ շարունակելիությունը:
10. Ամեն մայրացող դեռ մայր չէ: Ընտանիքից դուրս սերունդ չի լինի: Ընտանիքից դուրս մայրացումը չարիքի ծնունդ է: Ընտանիքից դուրս ամեն մի ծնունդ՝ անտոհմիկ մի որբ - ազգային չարիք է:
11. Մայրը - մայրացումն է ընտանիքի մեջ՝ տոհմածինն է մայրը: ԵՎ սրբություն է Տոհմի մայրը, քանզի պահպանում է Տոհմը և ապահովում է նրա հզորացումն ու շարունակելիությունը: ԵՎ Տոհմի մորն է մշտապես հովանավորում Աստվածամայր Անահիտը:
12. Անհանդուրժելի են այն կիները, որոնք չեն լինում Տոհմի մայր - նրանք արժանի չեն սրբության, սիրո: Նրանք անարգանքի են մատնում իրենց հոգին և իրենք իրենց զրկում են իրենց շարունակելիությունից:

13. Եթե կինը ազատ է իր կյանքի համար, ապա նա ազատ չէ իր երեխաների կյանքի համար: Նրա ծնած երեխաները իրենը չեն. նրանք Տոհմի զավակներն են: Ինքը ծնել է այդ Տոհմի երեխաներին, և ինքը այդ Տոհմի երեխաների մայր է:
14. ԵՎ մայրը չի կարող երեխաներին կտրել իրենց Տոհմից. այլապես նա չարագործ է - նա ոճիր է գործում Տոհմի նկատմամբ՝ գողանալով նրա սերունդը. երեխայի նկատմամբ՝ որբացնելով նրան իր Տոհմից և իր նկատմամբ՝ վտանգելով իր շարունակելիությունը:
15. Մայրը իր երեխաներին մայր է Տոհմի մեջ. Տոհմից դուրս նա մայր չէ:
16. Իրավունքը Տոհմի մորն է: Այն կինը, որ պատասխանատվություն չի զգում Տոհմի առաջ - ոչ մի իրավունք չի կարող ունենալ:
17. Իրավունքն առանց պատասխանատվության՝ անբարոյականություն է - դա իրավունք է չարիք գործելու, իրավունք՝ Տոհմը քանդելու, Տոհմի զավակին Տոհմից կտրելու, իրավունք՝ զավակ չծնելու և Տոհմի շարունակելիությունը վտանգելու:
18. Մայրերի ավերի մեջ պիտի փնտրել Ազգի ճակատագիրը: Մի Ազգի բարքերը՝ գովելի, թե պարսավելի - կախում ունեն մայրերից:
19. Ոչ իմաստուններ, ոչ թագավորներ օգնության կանչեք Հայրենիքին, այլ՝ տոհմածին մայրերի ազդեցությունը: Ցեղաշունչ մայրն է ազգային բարքերը սնուցողը՝ ազգախնամ Անահիտով ոգեշնչված:
20. Ամենագորավոր զենքից գորավոր է Ցեղաշունչ մոր սերը: Այն կճեղքի ցանկացած զրահ, ապառաժ: Այն տիեզերական խորություն ունի և կարող է թափանցել ամենահեռավոր վայրերն անգամ՝ գտնելու իր որդուն և զորացնելու նրան իր օրհնությամբ:
21. Ցեղաշունչ մոր հայրենասիրությունը՝ աստվածային կրակ, բոց ու ջերմություն - պիտի արթնացնի առյուծը իր Ազգի մեջ, պիտի բարձրացնի նրա առօրյա կյանքի թափը, պիտի բաղցրացնի ու հեշտացնի անձնագոհությունը:

22. Մոր ոգիացած հայրենասիրություն, որից Ազգը արձակում է մի հրաշագործ ուժ, անհրաժեշտ՝ Հայրենիքի հզորության և ազատության համար:
23. Ցեղաշունչ մոր սերը՝ որդու զորությունը սնող աստվածային աղբյուրն է: Սեր և նվիրում դեպի Հայրենիքը՝ ներշնչում և սնուցում է Ցեղաշունչ մայրը:
24. Ահա թե ինչու՝ Մայր անունը պիտի դառնա ու մնա սրբազան մենաշնորհը միայն ու միայն հայրենահավատ Տոհմի մայրերի և ոչ թե բոլոր մայրացողների:
25. Իրենց որդիներով ճանաչել ու գնահատել կանանց: Անհայրենասեր ու անարի որդիների մայրը՝ անկախ իր հասարակական դիրքից, մեր կյանքում պիտի չվայելի հարգանք:
26. Ամեն արժանին՝ սեր, հարգանք, ակնածանք - հայրենասեր մորը: ԵՎ ամեն ազգախնամ բարիք՝ հայրենասեր մորից - հերոս որդիներ, հաղթական դափնիներ, ազատ Հայրենիք:
27. Քանի դեռ հայրենաշունչ մայրը կմնա որպես «բացակայող աստվածություն» Արի ընտանիքների մեջ - Չարին պիտի շարունակի իր արյունոտ խրախճանքը մեր Հայրենիքում:
28. Ո՛վ, Արորդի՛ք, ձեր գավակների համար մայր ընտրեք կանանց, որոնց կաթը արյուն լինի, որոնց ծնունդը՝ հերոս ու վրիժակ:
29. Ո՛հենանք առյուծածին մայրեր, որոնց արիական որդիները ավելորդ դարձնեն Հայրենիքը պաշտպանող արիեստական ամբությունները:

ԺՔ. ԱՍՈՒՄՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԳԱՍԱՎՈՐՈՂ

1. Ո՛վ, Արորդի՛ - ամուսնությունը Տոհմի սերնդատվության համար է. Հայր Արայի կամքի իրագործումն է դա: Այդպես է պատգամում Վահագնը:
2. Ամուսնանում են որդիները - սերունդ ստանում է Տոհմը: ԵՎ Տոհմն է վերահսկում իր զավակների ամուսնությունը:
3. Տոհմն է իր սերնդատվության համար ուրիշ Տոհմերից աղջիկներ բերում և միաժամանակ ուրիշ Տոհմերին աղջիկներ տալով, նրանց սերնդատվությանն է նպաստում:
4. ԵՎ ամեն մի Տոհմ իր տղաներին պատրաստում է իր սերնդատվության համար, իսկ աղջիկներին ուրիշ Տոհմերի սերնդատվության համար:
5. Տոհմը միայն Տոհմից է աղջիկ բերելու: Տոհմի աղջիկն է ձգտում դեպի Տոհմ. անտոհմիկ աղջիկը ձգտում է դեպի դուրս: Տոհմի աղջիկը միայն Տոհմի մայր կլինի:
6. ԵՎ հարսն ունենալու է տոհմական անարատ արյուն, տոհմական բարք, տոհմական նվիրում, տոհմական պատվի զգացում:
7. ԵՎ հարսանիքը հարս ու փեսի համար չէ: Դա երկու Տոհմերի դաշինքի տոնակատարություն է, որտեղ հարսն ու փեսան հանգուցող սրտերն են:
8. Պսակադրությունը - սուրբ արարողություն է, որտեղ մի Տոհմը հանձնում է իր աղջկան, իսկ մյուս Տոհմը ընդունում է նրան:
9. Հարսանիքը տոնահանդես է, որ կատարվում է հասունացած տղայի ու աղջկա՝ իրենց բնական կոչումը ստանձնելու առիթով:
10. ԵՎ ընտանիքի հայրն ու մայրն են վերահսկում նրանց կողմից Տոհմի սերնդատվության իրագործումը:
11. Ցեղաշունչ Տոհմի հարս լինելը և՛ դժվար է, և՛ հեշտ: Դժվար է նրանով, որ հարսը մեծ պատասխանատվություն ունի Տոհմի առաջ: Հեշտ է նրանով, որ Տոհմը սիրում և պաշտպանում է նրան:

Ի. ԱԶԳԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

1. Ո՛վ, Արորդի՛ - դու չես կարող Ազգ ընտրել՝ դու ինքդ քո Ազգի ծնունդն ես: ԵՎ ինչպիսին էլ լինի քո Ազգը, այնուամենայնիվ, դու քո բնական որակներով նույնանում ես նրան: Այդպես է ավանդում Վահագնը:
2. Ազգասիրությունը սիրո զգացմունք է - դա քո ազգային ամբողջության զգացողությունն է, որպես քո ժառանգական հիմք:
3. Ազգասեր լինել - ասել է՝ զգում ես քեզ ոչ թե որպես պարզ անհատ, այլ՝ որպես ազգային անհատ՝ քո Ազգի բնական ու անբաժանելի մասնիկ:
4. Ազգասեր լինել - ասել է՝ ինքնահարգ ես դու որպես ազգային անհատ:
5. Ազգասեր լինել - ասել է՝ զգում ես քո և քո Ազգի նույնությունը՝ դու քո Ազգն ես, քո Ազգը դու ես. Ազգիդ զորությունը քո զորությունն է, քո զորությունը՝ Ազգիդ զորությունը:
6. Ազգասեր լինել - ասել է՝ զգում ես քո շարունակելիությունը Ազգիդ մեջ և Ազգիդ միջոցով:
7. Ազգասեր լինել - ասել է՝ քո մեջ զգում ես քո Ազգի արյունը, ազգային բնավորությունը, մտածելակերպը:
8. Ազգասեր լինել - ասել է՝ պաշտում ես Ազգիդ որակական արժեքները՝ բարոյական, հոգևոր... ասել է՝ նպաստում ես քո Ազգի Ոգու հսկայացումին:
9. Ազգասեր լինել - ասել է՝ ապրում ես ցեղորեն. ասել է՝ պատասխանատվություն ես զգում Ազգիդ համար Ցեղիդ առաջ. ասել է՝ գիտակցում ես քո Ազգի դերն ու նշանակությունը Ցեղիդ ամբողջության մեջ և նպաստում ես Ազգիդ զորացմանը:
10. Միայն Ցեղակրոնը կարող է ազգասեր լինել:
11. Ազգասեր լինել - ասել է՝ հավատում ես, որ ցեղաճանաչ Ազգը ապրում է ինքնահաստատման զորաշարժով, իսկ անցեղաճանաչ Ազգը՝ գոյապահպանման ջղաձգությամբ. որ ցեղաճանաչ Ազգը

ապրում է Ցեղի համար, իսկ անցեղաճանաչ Ազգը՝ միայն իր համար. որ ցեղաճանաչ Ազգը ապրում է կյանքով, իսկ անցեղաճանաչ Ազգը՝ մահով. որ անցեղաճանաչ Ազգը անգոր է ու նվաստ, իսկ ցեղաճանաչ Ազգը՝ զորավոր է ու հպարտ, և նրա սակավաթվությունն, անգամ, դառնում է երկրորդական:

12. Ազգասեր լինել - ասել է՝ սրբությանը պահպանում ես Ազգիդ արյան անարատությունը: Ազգի արյան անարատության նկատմամբ նախանձախնդիր չլինել, կնշանակե՛ տկարացնել ազգային որակները: Առավել նախանձախնդիր պետք է լինել Ցեղի արյան անարատության համար՝ Արի արյանը չպետք է խառնվի Չարի արյուն:
13. Ազգասեր լինել - ասել է՝ զգում ես քո Ազգը որպես Արի Ցեղածառի բնական մի ճյուղ. ասել է՝ զգում ես, որ քո Ազգը կարող է զորանալ միայն իր Ցեղածառի բնի վրա, իր Արմատից սնվելով:
14. Ազգասեր լինել - ասել է՝ քո Ցեղածառի Արմատի դեմ կատարվող ամեն մի ոճիր ընդունում ես որպես ոճիր քո Ցեղածառի դեմ, ուստի և՛ քո Ազգի դեմ:
15. Ազգասեր լինել - ասել է՝ պահպանում և զորացնում ես քո Ցեղածառի Արմատը, որ Արարատում է - դա Արի Հայն է:
16. Ազգասեր պիտի լինեն բոլոր Արի Ազգերը, իսկ Արի Հայը՝ ավելի, քան բոլորը - ազգապաշտ պիտի լինի Հայը. քանզի բոլոր Արի Ազգերը Ցեղի առաջ են պատասխանատու, իսկ Հայը՝ Ցեղի համար Արայի առաջ:
17. Թե մի Արի Ազգ չապրի ցեղորեն՝ ինքը կտկարանա. իսկ եթե Արի Հայը չապրի ցեղորեն՝ Ցեղը կտկարանա, քանզի Արի Հայը ինքը Ցեղն է, Արի Ազգերի ծնողն է, Արմատն է Ցեղի:
18. Ամեն մի Ազգ կորցնելով ցեղայինը՝ կարող է վերականգնել այն, սնվելով իր Արմատից: Իսկ եթե ինքը՝ Արի Հայը կորցնի ցեղայինը՝ կտկարանա հենց ինքը՝ Արմատը: Էլ ինչպե՞ս սնվեն Արի Ազգերը, ինչի՞ց: ԵՎ երկրի արարող Ցեղը կկործանվի:

ԻՎԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

1. Ո՛վ, Արորդի՛ - Հայրենասիրությունը քո արմատի զգացողությունն է Մայր Հողի մեջ: Այդպես է ավանդում ինքը՝ Վահագնը:
2. Դու քո Բնօրրանում՝ բնության պես վայրի, բնության պես զորեղ ու հմայիչ: Քո Բնօրրանում՝ Մայր Հողի մեջ դու արմատ ունես, և այդ արմատն է քեզ կանգուն պահում:
3. Քո Բնօրրանում է Արա՛ն իր արարչագործությունը կատարում քո Ազգի մեջ. քո Բնօրրանում է Վահագնը իր աստվածային Ջորությամբ սնում քեզ:
4. Քո Բնօրրանում են քո նախնիները. այնտեղ է քո ծագումը, քո արյունը. այնտեղ է քո Հայրենիքը:
5. Հայրենիքը նույնանում է Մայր Հողին. Մայր Հողից դուրս քո արմատը չկա, Մայր Հողից դուրս Հայրենիք չկա:
6. Դու չես կարող Հայրենիք ընտրել: Դու ինքդ արմատ ունես քո Հայրենիքում: ԵՎ ինչպիսին էլ լինի քո Հայրենիքը - դու քո արմատով նույնանում ես նրան: Միայն հիվանդ և չարահալած հոգիները կդժգոհեն իրենց Հայրենիքից:
7. Հայրենասիրությունը սեր է՝ զգացմունք, և ձևավորվում է քո արմատի զգացողությունից, քո նախնիների զգացողությունից, քո շարունակելիության զգացողությունից:
8. Իր արմատի, իր նախնիների, իր շարունակելիության զգացողություն չունեցող մարդու մեջ չի կարող լինել Հայրենասիրություն որպես զգացմունք. նրա մեջ կլինի միայն հարմարվածություն: Հարմարվածությունը չի կարող նույնացվել Հայրենասիրության հետ:
9. Հարմարվածությունը ինքնագոհություն է: ԵՎ այդպիսիք սիրում են Հայրենիքը, ինչպես շունը իր թաղն է սիրում:

10. Հայրենասիրությունը սքանչացում է Մայր Հողով, նախնյաց ոգիներով, ազգահավատքով:
11. Միայն Ցեղակրոնը կարող է հայրենասեր լինել, քանզի նրա համար Հայրենիքը պարզապես սեփական երկրամաս չէ, ուր ոսկի են արդյունահանում և հունձք են հավաքում, այլ՝ սրբազան երկիր՝ Մայր Հող, ուր գտնվում են նրա նախնյաց ոգիները, ուր իր արմատն է, իր շարունակելիությունը:
12. Հայրենասիրություն - մարդկային բոլոր առաքինությունների թագն ու պսակն է դա: Հայրենասիրությունը մայրն է բազմազան առաքինությունների՝ բարոյականության, անձնվիրության, արիության, ազնվության...
13. Ազգային բարոյական հատկություններն իր մեջ միացնող այդ գերագույն առաքինությունն է Ազգերի գոյության անհրաժեշտ պայմանը և անսպառ աղբյուրը նրանց ուժի ու հավերժության:
14. Հայրենիքներն ապրում են հայրենասիրությամբ, ընկնում՝ դրա պակասի շնորհիվ: Հայրենասիրությամբ հարուստ Ազգը դեպքերի խաղալիքը չէ, այլ՝ դրանց կարգադրողը:
15. Հայրենասիրությունը պատերազմի բարոյական ամրությունն է, անբեկանելի զրահը, անվրեպ գեները:
16. Ազգն առանց հայրենասիրության այնպիսին է, ինչպիսին որ մարմինն առանց հոգու:
17. Հայրենիքի պաշտպանությունը քո ամենամեծ առաքինությունն է, քանզի պաշտպանում ես ոչ թե պարզապես սեփական հող, այլ՝ Մայր Հողը, պաշտպանում ես քո արմատը, քո Աստվածներին, քո նախնիներին և քո շարունակելիությունը:
18. Բոլոր Արի Ազգերը բնական պահանջով և հավերժության զգացողությամբ հայրենասեր պիտի լինեն. Արի Հայր՝ ավելի, քան բոլորը - հայրենապաշտ պիտի լինի Հայր, քանզի նրա Հայրենիքը հենց Արարատն է՝ Արի Ցեղի Բնակը, որն իր մեջ ունի և սնում է ամբողջ Արի Ցեղի Արմատը կեցուցիչ:

19. Ամեն Արի Ազգ պարտավոր է պաշտպանել իր Հայրենիքը: Արարատը պաշտպանել պարտավոր են բոլոր Արի Ազգերը, քանզի այնտեղից են իրենք ծագել: Արարատն է Արի Ազգերի գոյառման սրբազան սկզբնավայրը՝ Արարման վայրը, ուր պահպանվում է Ցեղի Արմատը՝ Արի Հայրը:
20. Արի Ազգերի շարունակելիությունը պայմանավորված է նրանց գիտակցված ու հարազատ կապով իրենց սրբազան սկզբնավայր Արարատի և Արի Ցեղի Արմատ Արի Հայի հետ:

ԻՐ. ՊԱՏԵՐԱԶՄ

1. Ո՛վ, Արորդի՛ - Աշխարհը կառավարում է հակամարտության օրենքը: Հաղթում է հզորը և ո՛չ արդարը: Վա՛յ թույլերին: Այդպես է պատգամում Վահագնը:
2. Պատերազմը աստվածային է. օրհնված է պատերազմը: Պատերազմը զորությունների ցուցադրություն է՝ մրցասպարեզ, ուր ամեն մի Ազգ իր զորությունն է ներկայացնում:
3. Մեքենական կոպիտ ուժերի բախում չէ պատերազմը, այլ՝ Ազգերի հոգեկան կարողությանց. Ազգերի զորությունների հարաբերություն է պատերազմը:
4. Իսկ թույլերը զորությունների այդ հարաբերության մեջ միայն զորությունները սնող կերի դեր են կատարում: Դա է բնական արդարությունը: Եթե չես ուզում կեր լինել - եղիր զորավոր:
5. Պատերազմը սպանություն չէ, թեև մարդիկ զոհվում են այնտեղ. դա թեև դաժան, բայց առաքինի մենամարտ է մարդու և մահի:
6. Պատերազմի օրենքը ազնիվ է ու վեհ. պատերազմը զորությունների մենամարտ է: Իսկ մենամարտը սպանություն չէ:

7. Մենամարտը միայն ազնվականների մենաշնորհն է. տականքը երբեք չի մենամարտի. տականքը միայն կարող է սպանել:
8. Պատերազմն էլ որպես զորությունների մենամարտ, Արի Ազգերի մենաշնորհն է միայն:
9. Չարին պատերազմել չի կարող երբեք. Չարին կարող է միայն թալանել, քանդել ու սպանել: Ըստ այդմ՝ Արին ռազմիկ է ազնիվ, իսկ Չարին՝ դաժան ոճրագործ:
10. Արի ռազմիկը միշտ պիտի պատերազմի. նա պիտի ելնի ռազմի ասպարեզ՝ ազնիվ մրցության, խաղա մահի հետ, հաղթի կամ հաղթվի:
11. Իսկ Չարիի դեմ նա պիտի լինի լոկ վիշապաքաղ. նա պիտի պաշտպանի սերը չարիքից, արարման լույսը՝ կործանող մութից, Արի հարսներին՝ ստոր պղծումից, մանուկներին՝ անգութ սպանդից:
12. Պատերազմը Աստվածների գոտեմարտ է. Վիշապն է հովանավորում Չարիներին. Վահագն է շարժում բազուկն Արիների և նրանց աչքերում արեգներ վառում:
13. Վահագնը կռվում է միայն Վիշապի դեմ, քանզի Աստված միայն Աստծո դեմ է կռվում լինի երկնքում կամ երկրի վրա. մարդերի դեմ նա ինչպե՞ս կռվի: Չարիների դեմ Արին է կռվում:
14. Իսկ երբ երկու Արի ազգեր պատերազմում են իրար դեմ, Վահագնը հովանավորում է երկուսին էլ, որ նրանց պատերազմը սպանություն չդառնա:
15. Կյանքը պատերազմ է անվերջ. և եթե երբեմն Ազգերը կռվադաշտում չեն, ապա նրանք զորանոցներում են:
16. Չեզոքության են դիմում թույլերը միայն, հաճախ բաժանելով պարտվածների ճակատագիրը:
17. Ամեն պատերազմ երկու նորերի պատճառ է դառնում, որովհետև չափված զորություններից և ոչ մեկն է իրեն վերջնականապես պարտված կամ հաղթած համարում: ԵՎ միշտ էլ պարտված կողմը դեռ իր նահանջի ճանապարհին մշակում է իր փոխվրեժի ծրագիրը:

18. Մեկը հարձակվում է, մյուսը՝ պաշտպանվում - այդ երկուսից ո՞րն է մեղավոր: ԵՎ ոչ մեկը. իրավունք ունեն երկուսն էլ՝ պատերազմը արդար է երկուսի համար էլ: Խաղաղություն են ուզում պատրաստվիր պատերազմի:
19. Պատերազմը բնագոյ է: Պատերազմը կազդուրվածի, առողջի ցանկությունն է, ինչպես և խաղաղությունը թույլի բաղձանքն է, հոգնածի երազը. կպարտվի այն Ազգը, որ շուտ է հոգնում:
20. Խաղաղությունը երբեք հավերժական չէ - այն ժամանակավոր զինադադար է միայն:
21. Խաղաղության չարաշահումն ավելի աղետավոր է պարտված Ազգի համար, քան նույնիսկ պատերազմը:
22. Անբարոյականանում են անմարտունակ Ազգերը. և անբարոյականությունը կործանման նախապատճառն է. այդ Ազգն այլևս չի զգում Վահագնին և չի զորանում:
23. Ջորավորի համար խաղաղությունը զինադադար է լոկ՝ նորոգվելու, թարմանալու, պատրաստվելու պատերազմի նոր մրցասպարեզ մտնելու համար:
24. Տկարի համար խաղաղությունը թշնամուց շնորհված մահաբեր հաշիշ է, քանզի թշնամին այդ խաղաղությունը շնորհում է նրան այնքան ժամանակ, քանի դեռ ինքը կուշտ է: Տկարի համար խաղաղությունը դանդաղ մահացում է:

Ի՞՞՞ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ

1. Ո՞վ, Արորդի՞ - բարոյական առաջընթաց, ասել է՝ ներուժ ինքնապաշտպանության: Դա է կամքը Վահագնի:
2. Ցնցումներն Ազգերի կյանքում փրկության լծակներ են: Անբարոյական են ու դատապարտված են կորստյան այն Ազգերը, որոնք իրենց գոյությունը ապահովելու համար անընդունակ են խոր ցնցումների: Հոգեկան ցնցումների ընդունակ Ազգերը միայն կարող են վերանորոգվել:
3. Առանց վերանորոգումի անիմաստ է որոնումը, իսկ առանց որոնումի ոչ միայն Ազգի միտքն է մեռնում, այլ և հենց ինքը՝ Ազգը: Հոգևոր անշարժություն - ասել է՝ բարոյական մահ, մահացում:
4. Առաջընթացի հրամայականն է ինքնապաշտպանությունը: Այլևս ոչ ոք է հավատում, թե կարելի է կանգնեցնել առաջընթացի հաղթական կառքը՝ գետինը փռված պարտվածների և թույլերի հառաչանքով:
5. Ո՞վ, Արորդի՞, դու միշտ էլ ավելի ուժեղ ես, քան կարիքը, քան վտանգը, քան թշնամին, - դու միշտ էլ կարող ես գերազանցել թեզ, բարձրանալ թեզանից, եթե թեզ չի պակասում սեփական ուժերով ոտքի կանգնելու կամքը: Հավատքով ապրելն է հաղթական կյանքը: Հավատա գործությանց և կհաղթես անվարան:
6. Անպարտելի է քո Ազգը, ո՞վ, Արորդի՞, եթե առաջնորդվում է հոգու գործությամբ: Մարդկությունը դեռ չի տեսել այն հրաշքը, որ ընդունակ է գործելու քո Ազգը՝ իր հոգևոր ուժերի գործությամբ:
7. Այնտեղ, ուր կա ոգու, ասել է՝ բարոյական ուժերի ապացույցը - այնտեղ թվական գերազանցությունը, մետաղը գրեթե կորցնում են իրենց նշանակությունը:
8. Ոգու հետ զինակցիր - ասել է՝ զինակցում ես բարոյական ուժերի, որի միջոցներն աճում են անհավատալիության աստիճան, դարձնում անպարտելի թեզ և քո Ազգին:

Ի՞՞՞՞ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Արորդի՞ք - շարժման մեջ դրեք Ցեղի ուժերը՝ ձեր Ազգի ավետեր փորձառությունը - ձեզ հետ է նա, ձեր արյունի միջից կխոսի: Այդպես է պատգամում Վահագնը:
2. Ազգային ինքնապաշտպանությունը - ոչ միայն Ազգի բնական իրավունքն է, այլև՝ պարտավորությունը դեպի Ցեղը և համայն Մարդկությունը:
3. Արի Ազգերը ապրում են իրենց համար - ստեղծագործում՝ Ցեղի համար, նույնպես և մարդկության համար: Արի Ազգերը արարելու պարտավորություն ունեն - ուրեմն և՛ արարելու իրավունք:
4. Եթե մի Ազգ զուրկ է ինքնապաշտպանության ընդունակությունից - ուրեմն նա զուրկ է ամեն առաքինությունից, զուրկ է նույնիսկ գոյության բարոյական իրավունքից:
5. Եթե Ազգը իրեն պետք եղած ուժը իրենից դուրս է փնտրում - նա կամովին իր պարտությունն ու անկումն է նախապատրաստում:
6. Եթե Ազգը հարվածներ է ստանում և ողբերգորեն անկարող է հակահարվածել - դրա պատճառն այն է, որ նա չի ապրում Ցեղորեն:
7. Ազգի պարտությունները հոգեբանական են: Ազգը պարտվում է ոչ թե նրա համար, որ թվապես ու տեխնիկապես թույլ է, այլ՝ որովհետև տկար է հոգեպես:
8. Ազգը պարտվում է, որովհետև իր Ցեղի բովանդակ ուժերն օգտագործելու փոխարեն, հովանավորողներ է փնտրում: Ազգը չի պարտվի, եթե հոգևին գրոհի՝ ապավինելով Վահագնի Ջորությանը:
9. Մակաբույծ է Ազգը, եթե իր ինքնապաշտպանության համար հենվում է միայն օտար ուժին: Կյանքում մակաբույծն անբարոյական է, իսկ նմանը տեղ չունի պատմության մեջ:
10. Ինքնապաշտպանությունը մի պարզև չէ ուրիշից քեզ, այլ մի բան՝ քեզնից քեզ:
11. Թե բարեգործներ և հովանավորողներ ես փնտրում - հիվանդ ես, թույլ և տկար մտահոգեպես: Թե

խոսում ես զինակիցների մասին - հոգով առողջ ես ու արի:

12. Ջինակիցներ և ո՛չ՝ բարերարներ - այդ նշանակում է, թե արի ես և ինքնապաշտպանվելու, պատերազմելու համար ընկեր ես փնտրում: Քաջի իրավունքն է դա՝ նրա, ով վճռել է մենակ հաղթել և զինակցում է միայն՝ ավելի հեշտ հաղթելու համար:
13. Անցեղաշունչ Ազգի միակ քաղաքական զենքն է մուրացկանությունն ու լալկանությունը: Լալկանությունը ապացույց է հոգևոր տհասության և անարիության:
14. Մուրացկանությունը զգվելի է ընդհանրապես. մուրացկանին օգնում են ոչ միայն կարեկցանքից դրդված, այլև հաճախ զգվանքից:
15. Աներես մուրացկանի եսասիրությունը բոլորովին բնական է համարում, որ մարդիկ, թեկուզ ամենից ընկածները, գթան իրեն: Էլ ավելի աներես է մուրացկանը և պահանջկոտ, եթե միաժամանակ նաև հաշմանդամ է:
16. Անցեղաշունչ Ազգը հաճախ անիծում է քաղաքական բարերարներին, սակայն մոռանում է, որ մուրացկանին ու հաշմանդամին անկեղանոց են տալիս, այլ ոչ՝ ազատ Հայրենիք:
17. Անցեղաշունչ Ազգին հատուկ է աղետալի ինքնաժխտումը: ԵՎ այդ ինքնաժխտումը նրան այնքան անարժեք է դարձնում, որ նա, անգամ, իր դժբախտությանց մեջ մեղքի որոշ բաժին էլ իրեն տալը զլանում է:
18. Նա այնքան անարժան է թվում իրեն, որ չի կարծում, թե քաղաքական աշխարհում որևէ բանի պատճառ - թեկուզ դժբախտության - ինքը կարող է լինել:
19. ԵՎ հավատա՛, ո՛վ, Արորդի՛ - այն Ազգը, որ իր կյանքի ու արևի համար կպայքարի, պիտի գտնի իր մեջ այնքան ուժ, այնքան զորություն, որ կարողանա չարը բարու փոխել:
20. Իր ապագան վտանգված Ազգի միակ և վերջնական խաղաթուղթը՝ իր վերադաստիարակությունն է:

ԻՆ. ՊԱՇՏԱՍՈՒՆՔ ՄԵԾ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ

1. Ո՛վ, Արորդի՛ - պատերազմում քո առաջին զինակիցներն են քո մեծ նահատակները: Այդպես է պատգամում Վահագնը:
2. Քո հոգու մեջ փայփայիր պաշտամունքը քո մեծ նահատակների, որ Վահագնի զորությամբ, հաղթական հոգով և իրենց կյանքով քեզ Արև տվին: Հիշիր նրանց, որ գերեզմանի մեջ ննջելով՝ սուրն իրենց գլխի տակ դրին: Քաջերի բարձն է սուրը:
3. Քո հզորագույն զինակիցները պատերազմի ժամանակ նախ և առաջ քո մեծ նահատակների ոգիներն են: Նրանք են առաջնորդում քեզ ճակատամարտի Մայր Հողի վրա:
4. Քեզանից առաջ նրանք են հարվածում քո թշնամիներին: Ջորավոր է նրանց հարվածը, թեև անտեսանելի: Նրանք հարվածում են թշնամու հոգուն, ընկճում նրան, հոգեպես նրան պարտության մատնում, և քեզ մնում է միայն սպանել նրա մարմինը:
5. ԵՎ ազգովին դու այնքան ուժեղ ես պատերազմում, որքան ջերմ է քո պաշտամունքը դեպի քո մեծ նահատակները, քանզի պատերազմում չափվում են բանակները - հաղթում են մեծ նահատակները:
6. Խեղճ է այն Ազգը, որ իր պայքարի ու խոյանքների ժամանակ չի զգում, թե իրեն աներևութաբար զորավիհում են իր մեծ նահատակները:
7. Իր անմահներից չօգտվող, ասել է՝ սրանց պաշտամունքը չունեցող Ազգի բովանդակ ուժը իր թվի, իր քանակի մեջ է միայն:
8. Իր ընտիր նահատակների պաշտամունքը չունեցող Ազգը ապերախտ է ու բարբարոս - անարժան ազատ Հայրենիքի, որը միշտ էլ իր նահատակների սրբազան աճյունից է բարձրանում:
9. Իր նահատակների՝ իր անմահների դեմ մեղանչող Ազգը մեծապես մեղանչում է իր ապագայի դեմ:

Անհոգի է՝ դեպի իր նահատակները անտարբեր Ազգը -
դատապարտված բարոյական փտության:

10. Եթե հերոսության ուրացումը յուրատեսակ
դավաճանություն է, ապա մեծ նահատակների
հիշատակի պղծումը՝ անբարոյականություն է:

Ի՞՞՞՞ ՎԱՍԻ ԱՎԵՐՈ

1. Ո՛վ, Արորդի՛ - գենքը անհրաժեշտ է, բայց արի
ծեռքերի մեջ: Սա է կամքը Վահագնի:
2. Ցեղային զգացողության թերին,
անինքնավստահությունը, սարսափի հոգեբանությունը -
ահա Ազգի և ազգային անհատի եռազլխանի թշնամին:
3. Երկյուղը միշտ էլ ճիվաղներ է ստեղծում
մտացածին հրեշներ: ԵՎ Ազգերը պարտվում են հենց այդ
ճիվաղներից:
4. Վախը - դա անինքնավստահությունն է՝
անվստահություն դեպի իր և իր բանակի կարողությունը.
դա հակառակորդի գերազանցության սպանիչ
գիտակցությունն է:
5. ԵՎ վախկոտի համար միշտ էլ ուժեղ է
թշնամին, անգամ այն ժամանակ, երբ իր դեմ կռվողը
իրենից թույլ է բոլոր առումներով:
6. Թշնամիները նման են շների - որքան որ
վախեցար, այնքան կհարձակվեն: Թշնամուց ավելի
վտանգավոր է վախկոտությունը:
7. Վախկոտներն են արիացնում, ուժեղացնում
թշնամուն: Վախկոտներն են հեշտացնում թշնամու գործը:
Վախկոտներն են տանուլ տալիս Հայրենիքը:
Վախկոտությունն է իրական թշնամին - կռիվ նախ՝ վախի
և վախկոտության դեմ:
8. Վախի զգացումը բարոյագրկող է: Կեղծ է այն
ամենը, որ հիմնված է վախի վրա՝ դա լինի կրոն,
բարոյականություն, թե կարգապահություն:
9. Պատերազմում հաղթական է հավատավորը՝
ով հաղթանակի հավատն ունի իր հոգում: Այն բանակը,

որ իր մեջ հաղթել է մահվան սարսափը՝ անպարտելի է ու հաղթական:

Ի՛. ՀԱՂԹՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

1. Ո՛վ, Արորդի՛ - քո հաղթության խորհուրդը միայն քո Ցեղակրոնության մեջ է: Այդպես է պատգամում Վահագնը:
2. Ցեղակրոն ես - ասել է՝ զգում ես, հավատում ես, որ քո Մայր Հողի վրա պարտվելը կրկնակի ու աններելի պարտություն է: Ասել է՝ որ իր Մայր Հողի վրա պարտվող Ազգը իրավունք չունի խոսելու ազատ Հայրենիքի մասին:
3. Ցեղակրոն ես - ասել է՝ քո Մայր Հողի վրա կռվելով, քո Հողը պաշտպանելով, զգում ես, հավատում ես, որ քեզ հետ են քո մեծ նահատակները՝ մի ուժ, որի առաջ անգոր են բոլոր տեսակի ուժերը:
4. Ցեղակրոն ես - ասել է՝ մարտի դաշտում զգում ես, որ քեզ հետ են Արայի Հայրական Օրհնանքը, Վահագնի Ջորությունը, քո երկրի Արևը և քո բոլոր նախնիները, որոնց առաջ թշնամին մի ձյունե մեծություն է միայն:
5. Ցեղակրոն ես - ասել է՝ որ կռվի ժամանակ քո սիրտը լցնում են քո դաշտերի շունչը, քո լեռների սեզությունը. քեզ օրհնում է հայրենի երկինքը:
6. Ցեղակրոն ես - ասել է՝ զգում ես, տեսնում ես, լսում ես. «Հաղթությո՛ւն»- աղոթում են մայրերն ու կույսերը քեզ համար. «Հաղթությո՛ւն»- երգում են մանուկները. «Հաղթությո՛ւն»- դողանջում են զանգերը. բոլորը ամենուր գոչում են. «Քեզ հետ ենք, առա՛ջ հաղթական»: ԵՎ հոգիդ ու բազուկդ դառնում են հաղթական: ԵՎ հաղթում ես դու:
7. Ցեղակրոն ես - ասել է՝ գորավոր ես, քաջ ես, հաղթական ես քո Մայր Հողի վրա:

Ի՞նչ ՁՈՎԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՂԹԱԿԱՆ

1. Ո՛վ, Արորդի՛ - զոհաբերությունը քո կյանքի հիմնական բովանդակությունն է, և առանց զոհաբերության անիմաստ է դառնում քո կյանքը: Այդպես է պատգամում Վահագնը:
2. Ձոհաբերությունը իրական իմաստով կնշանակե՛ հավատով, կամքով, զգացմունքով միանալ Հայր Արային, Մայր Անահիտին, Անմահ Աստվածներին, քո սուրբ նախնիներին, քո Հայրենիքին, քո հարազատներին:
3. Ձոհաբերությունը գերագույն սիրո և նվիրումի երջանկաբեր սրբագործումն է: Ձոհաբերությունն է երջանկացնում հորը. զոհաբերությունն է երջանկացնում նախնիներին. զոհաբերությունն է երջանկացնում Հայրենիքը. զոհաբերությունն է հաղթությամբ օծում Ձորությունը:
4. Սերն է զոհաբերության ուժը, և զոհաբերությունն է հաղթության խորհուրդը:
5. Ավելի լավ չէ՞ զոհաբերվել փառավոր հաղթանակի համար, քան պարտության նվաստ գոհը լինել: Առաջին դեպքում դու քո տերն ես և քո կամքով կարող ես զոհաբերվել. երկրորդ դեպքում դու քո տերը չես, և քեզ կարող են զոհաբերել հակառակ քո կամքի:
6. ԵՎ երբ այլևս չկա Արիների թուր-կեծակին, գերագույն զոհաբերության ոգին է դառնում զորության միակ խորհուրդը և Վահագնին ապավինելու միակ պայմանը:
7. Ո՛վ, Արիներ, դուք անպարտելի կլինեք, եթե գերագույն զոհաբերության ոգով ապրեք:
8. Անկարելին զոհաբերելն է գերագույն զոհաբերությունը, երբ զոհաբերում ես քեզ համար ամենաթանկ բանը:
9. Երբ մարդ իր ամբողջ ունեցվածքն է զոհաբերում դա գերագույն զոհաբերություն չէ. երբ մարդ

ինքն իրեն է զոհաբերում՝ դա գերագույն զոհաբերություն
չէ. երբ մարդ իր որդուն է զոհաբերում Հայրենիքի համար՝
հենց դա է գերագույն զոհաբերությունը: Գերագույն
զոհաբերություն չէ՞, որ մայրը իր որդուն նվիրում է
Հայրենիքի պաշտպանությանը:

ԻՔ. ԱՌԱՋՆՈՐԴ

1. Ո՛վ, Արորդի՛ - Ազգի դեկը, մականը, սուրը և
գրիչը պիտի գտնվեն կարող և սրբամաքուր ձեռքերի մեջ:
Այդպես է կամքը Վահագնի:
2. Վա՛յ այն Ազգին, որի առաջնորդը կատարյալ չէ
- ապագան բազում փորձություններ ունի պահած նրա
համար:
3. Անեճք է, երբ առաջնորդը հոգևոր թզուկ է, որ
հաջողել է բարձրանալ հսկաների ուսերին՝ մի քիչ հեռուն
տեսնելու համար:
4. Չարիք է, երբ առաջնորդն անտոհմիկ է - Ազգն
իր ճակատագիրը պատահականության գիրկն է զգում:
5. Թագ և ձևական իշխանություն են փնտրում այն
ոչնչությունները միայն, որոնք անթագ իշխել, թագավորել
չգիտեն:
6. Չկա ավելի կործանարար բան, քան վատ
օրինակը առաջնորդի. առաջնորդը վատ է -
վատթարագույն են դառնում այն բոլորը, որոնք
դժբախտություն են ունեցել նրա առաջնորդության
հանձնվելու:
7. Երբ առաջնորդը եսական է - անասնանում են
նրա հետ առնչվողները. ծույլ է մտավորապես - հոգևոր
հնավաճառներ են դառնում նրան շրջապատողները:
8. Երբ առաջնորդը անարի է - զգալիորեն երկչուտ
են դառնում նրա իշխանությունը վայելողները.
անհայրենապաշտ է - անհայրենիք հրեշներ են վխտում
նրա շուրջը:

9. Երբ առաջնորդը աննախանձախնդիր է Ազգի արյան համար - օտարածին սերունդներ են աճում Ազգի մեջ. երբ անցեղադրոշմ է - հոգևոր գաճաճներ են սնուցանվում Ազգի գրկում:
10. Հրաբորբ սիրտ, իմաստուն միտք, անարատ արյուն, ցեղադրոշմ հոգի - ահա կատարյալ առաջնորդը Ազգի. նա կռողն ու պահպանողն է ցեղային բարոյականի:
11. Շատ հեշտ է առաջնորդել ժողովրդին և շատ դժվար է Ազգին առաջնորդել:
12. Ժողովուրդը Ազգի ներկան է՝ կտրված անցյալից ու գալիքից. ժողովրդի համար անցյալը դատարկ է, գալիքն էլ մահ է միայն:
13. ԵՎ ժողովրդի մեջ այն առաջնորդներն են հարգի, ովքեր առավել կբավարարեն նրա նահատակության հոգեբանությունը և առավել նահատակության կտանեն նրան:
14. Ազգը ունի իր անցյալը, ներկան ու ապագան՝ Ցեղային է Ազգը: ԵՎ Ազգի առաջնորդը Հայր Արայի կամքի իրագործողն է Ազգի մեջ: Առաջնորդելով Ազգին, նա հնազանդվում է նախնյաց ոգիների ծայնին. նա խոսում է Մայր Հողի հետ - նա Ցեղի կերտողն է Ազգի մեջ:
15. Ավելի հեշտ է ջրից կրակ հանել, քան լինել Աստվածամարդ Արիների առաջնորդ: Նրանց կարող է առաջնորդել միայն նա, ով հավերժի զգացողությունն ունի իր մեջ:
16. Նա, ով Արի Մանի բնական ժառանգն է, և նրա անարատ արյունն ունի իր մեջ:
17. Նա, ով լինելով Արի Մանի ժառանգը, ունի նաև նրա զորությունն իր մեջ:
18. Նա, ով ունենալով իր մեջ արարչական զորությունը, նաև այդ զորության զգացողությունն ունի. արարչական զորությունը զգացողությամբ է գորավոր: Տիտանների զգացողությամբ Արիների առաջնորդ չի լինի: Արիների առաջնորդ միայն Արիների զգացողությամբ կլինի:

19. Նա, ուն համար ազգային պարերն են իր պարերը. ազգային երգերն են իր երգերը. ազգային խաղերն են իր խաղերը, որ նրա արյունից են գալիս:
20. Նա, ով որսորդների հետ որսի կգնա, հովիվների հետ հովվություն կանի, մշակների հետ մշակություն կանի. բոլորի հետ կերգի նույն երգերը, կպարի նույն պարերը, կխաղա նույն խաղերը. բոլորի հետ կտխրի, բոլորի հետ կուրախանա. բոլորի հետ զոհ կմատուցի Հայր Արային ու Անմահ Աստվածներին. բոլորի հետ կհաղորդակցվի նախնյաց ոգիներին. և երբ այդ ամենը նրա համար հարազատ կլինեն, այնժամ նա կժառանգի Արյաց թուր-կեծակին:
21. ԵՎ եթե նա արժանի լինի Աստվածամարդերի առաջնորդ լինելու, հենց ինքը Վահագնը կօժի նրա թուր-կեծակին, նրա բազկին կդնի արեգի ճառագայթներից հյուսած խաչ-պատերազմին և նրան պահապան կկարգի Արարատին ու իր Ազգին:

Լ. ՋՈՐԱՎԱՐ

1. Ո՛վ, Արորդի՛, Ջորավարը Ազգի մարտական ոգու առաջնորդն է. նա Վահագնի փոխանորդն է ազգային բանակի մեջ:
2. Ջորավարը սոսկ ռազմավար չէ - նա հոգեկերտողն է բանակի: Միևնույն բանակը՝ նայած իր զորավարին՝ կարող է և՛ հրաշագործություններ կատարել, և՛ խայտառակորեն ծունկի գալ թշնամու առաջ:
3. Արյաց բանակի զորավար կարող է լինել միայն նա, ով ինքը մահից զորավոր է:
4. Ջորավարի համար երեք բարձր ճշմարտություն ունի Հայրենիքի պաշտպանությունը - հոգեբանական՝ պետք է լինել արի. բարոյական՝ պետք է լինել անձնագոհ. քաղաքական՝ պետք է լինել ինքնահարգ:

5. Ահա թե ինչու կատարյալ գորավարը հոգեբանորեն վերստեղծում է իր բանակը՝ տալով նրան իր ոգին:
6. Ջորավարն իր առաջնորդն ունի՝ աներևույթ է, բարոյական է նրան առաջնորդող ուժը: Ջորավարը երկրի ձևական իշխանությունից զատ ունի նաև մի այլ իշխանություն՝ իր Ազգի մեծ նահատակների հոգևոր իշխանությունը, որ հարյուրապատկելով նրա ուժերը՝ հարյուրապատիկ պահանջկոտ է ու աններող:
7. ԵՎ գորավարը գիտի, որ ամեն պարտություն կարելի է արդարացնել միայն ողջերի մոտ. իսկ նախնյաց ոգիները ոչ մի արդարացում չեն ընդունում:
8. Ջինվորի համար կռվի ժամանակ դրոշակը, Ազգը, հայրենի երկիրը և դրանց սրբությունները խորհրդանշողը - դա իր գորավարն է:
9. Կռվի ժամանակ զինվորը ավելի բարոյական մենակությունից է վախենում, քան՝ մահից:
10. Ահա թե ինչու գորավարը հասնում է ամենին, որպեսզի ոչ ոք մենակ չգա. ամեն մեկը զգա, թե իր հետ է ամբողջ բանակը, Ազգը, Ցեղը և ինքը՝ Ջորության Աստված Վահագնը:
11. Չկա զինվոր՝ անգամ ամենաանարին, եթե նա Արի է, որ ընդունակ չլինի կարող գորավարի ազդեցության տակ հերոսին վայել գործեր կատարելու:
12. Չկա Արի, որ ընդունակ չլինի հոգեկան խոր հուզումների, խանդավառության, ինքնամոռացության - հոգեկան վիճակներ, երբ նրա մեջ մեռնելու աստիճան թուլանում են կենդանական բնագոյներն ու վախը:
13. Ջորավարի՝ համոզելու, ցնցելու, ներշնչելու գորությունը գալիս է նրանից, որ նա սիրտ է դնում իր ամեն մի խոսքի մեջ - ահա թե ինչու, եթե կտրես նրա խոսքերը՝ նրանցից արյուն կկաթի:
14. ԵՎ զինվորը ոչ թե լսում է գորավարի խոսքերը, այլ հոգով է զգում դրանք և հավատում է ու խորապես համոզվում, որ ամենից անառիկ համարված բերդերն իսկ կառուցված են գրավելու համար:

15. Բանակի գորավարը միաժամանակ և՛ դաստիարակն է, և՛ ռազմարվեստագետը, և՛ կախարհը, և՛ ընկերը - նա աստվածն է բանակի՝ Վահագնի փոխանորդն է իր բանակի մեջ:
16. ԵՎ օրեր անց այդ գորավարի բանակը ծփում է վտանգն արհամարհող, մահն անգիտացող ռազմաշունչ տրամադրությամբ: Նա հաղթել է այլևս՝ հաղթել է իր բանակի անհինքնավստահությունը, վախը:
17. Այժմ կարող է երևալ թշնամին՝ նա պատրաստ է - թող գա թշնամին՝ թող շուտ գա և շատ գա, որ հաղթանակի բերկրանքը առավել լինի:

Լա. ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. Ո՛վ, Արորդի՛ - անարժեք է քո ամբողջ մշակույթը, եթե դա Ցեղի Ոգու ինքնահայտնությունը չէ, եթե նրա մեջ Ազգիդ Ոգին չի ձառագում: Այդպես է պատգամում Վահագնը:
2. Մտավորականությունը Ազգի մտավոր առաջնորդն է՝ նրա գլուխն է, նրա ուղեղն է, միտքն ու հոգին է:
3. Վա՛յ այն Ազգին, որի համար գլուխ են շինում չարարող գիտուններով - Ազգը կխարխափի աներևակայելի բթության մեջ: Ազգին գլուխ շինել չի լինի. Ազգը պարզապես գլուխ պիտի ունենա:
4. Վա՛յ այն Ազգին, որի Ուղեղը վնասված է կամ թերզարգացած - Ազգի բոլոր մասերը, անկանոն շարժումներ կանեն:
5. Վա՛յ այն Ազգին, որի Միտքը Ցեղայնությունից չի սնվում - Ազգի սերունդները անհինքնաձանաչ կլինեն:
6. Վա՛յ այն Ազգին, որի Հոգին Ցեղային Ոգու արտահայտիչը չէ - Ազգի սերունդները կխարխափեն հոգևոր թմրության մեջ:
7. Ինչպիսին Ազգի մտավորականությունն է - այնպիսին է Ազգը: Նա է Ցեղի որակները Ազգի

սերունդներին փոխանցում. նա է ազգային ոգու կերտողը սերունդների մեջ. նա է Ազգի սերունդների միջև հոգևոր կապը հաստատում:

8. Ազգի մտավորականությունն է չափանիշը Ազգի իմաստության, ոգու, ինքնակառավարման կարողության:
9. Ազգային մտավորականությունն այն արզանդն է, որից ծնվում են Ազգի առաջնորդները, զորավարները, գիտնականները, քուրմերը...
10. Վա՛յ այն Ազգին, որի մտավորականները իմաստուն չեն - նրանք միայն չարիք կսերմանեն Ազգի մեջ:
11. Գիտուն լինել - դեռ չի նշանակում լինել իմաստուն: Գիտությունը իմացություն է, իմաստությունը՝ զգացողության շնորհ: Իմաստությունը արարելու հոգևոր որակն է, իսկ գիտությունը՝ արարելու իմացական պայմանը:
12. Առանց հոգևոր իմաստության գիտուն մտավորականը չարիքներ է ծնում՝ անպետք օրենքներ է հանում, անօգուտ դատեր է վարում, հիվանդին մահով է բուժում, անտաղանդ բանաստեղծ է դառնում, ապաշնորհ առաջնորդ...
13. Առանց հոգևոր իմաստության գիտուն մտավորականը Ազգի մեջ սերմանում է ամբարտավանություն, մոլորություն, մտքի պորտաբուծություն, հոգևոր ամայություն, անլիարժեքության զգացողություն:
14. Միայն Ցեղակրոնը կլինի ազգային մտավորական - նա առավել իմաստուն է, քանզի նրա զգացողությունն ընդգրկում է Ազգը, Ցեղը, Բնությունը, Աստվածությունը, Բացարձակությունը: Նա իմաստուն է, և գիտությունը նրան օգնում է իր իմաստությունը վերարտադրելու:
15. ԵՎ ամեն ոք իր հոգևոր իմաստության համեմատ պիտի գիտություն ստանա: Ոչ թե բանաստեղծն է մտավորական, ոչ թե գիտնականն է

մտավորական, այլ՝ մտավորականն է բանաստեղծ, գիտնական, նկարիչ, առաջնորդ:

16. Արգասավոր չէ այն մտավորականը, ում մեջ Արայի արարչական ոգու զգացողությունը չկա, Վահագնի Ջորության հուրը չկա, Աստղիկի Սիրո զգացմունքը չկա, Մայր Անահիտի զգվանքը չկա, նախնյաց ոգիների պաշտամունքը չկա, Մայր Հողի զգացողությունը չկա - նա չի կարող զգալ և հարգել Ազգի արյունը, Ազգի ծագումը, Ազգի որակները, լեզուն, սովորույթները, կենսափորձը - նա չի լինի ազգային մտավորական:
17. Ազգային մտավորականությունը աստվածային իմաստության սերմնացանն է Ազգի մեջ: Ազգային մտավորականության որակով է պայմանավորված Ազգի ինքնությունն ու ապագան:
18. Մտավորականը որ Միտարի /Միտք արարող/ չէ - նա պետք չէ Ազգին:



ԳԻՐՔ ՅՈԹԵՐՈՐԴ

ՀԻՄՆԵՐԳԱՐԱՆ

Թե սենք՝ արեւի լուսնոյ, Տոնսկան չորհրդոյ,
Ուս ուսի ՏԿԱԾ շորհրդար ենք բոնոսի.
Ձոներ ենք չորհոսոսի, չիսներ ենք երգոսի

Մեր սոսկսոսերիս՝

Մենք մեր ԿՅԱՆՔՆ ենք չսոսոսոսիս մեր մեջ,
Փոսկոսոսոս ենք ԿՅԱՆՔԸ, մեջ եւ արարչիս:

1,1. ՀԻՄՆ ԱՐԱՅԻՆ

(ՀԱՅՐ ՄԵՐ)

Հայր մեր, Արա՛, Դու Արարիչ
Սիրո՛, Ուժի՛, Հավատի՛...
Քո Օրհնությամբ այս Աշխարհում
Լինելություն՝ են թող լինի.
Ու երբ երկիրը ցավով երկնի՝
Արարչություն՝ են թող լինի:
ԵՎ քո որդիքը արմենական
Փառքդ երգեն, Հայր Արա՛:

Արիացել Արարատում
Ծիլարձակո՛ւմ թող լինի...
Վահագնացած սերունդների
Առատ ծնո՛ւնդ թող լինի.
Ու երբ մայրերը օրոր երգեն՝
Զորերգություն՝ են թող լինի:
ԵՎ քո որդիքը արմենական
Փառքդ երգեն, Հայր Արա՛:

1,2. ՀԻՄՆ ԱՐԱՅԻՆ

Հայր իմ, Արա՛, լսիր որդուդ,
Երբ Քո որդին կանչում է Քեզ,

Երբ Քո որդին զգում է Քեզ,
Երբ Քո որդին նման է Քեզ,
ԵՎ ում Դու Ինքդ ես արարել
Որպես հրաշագեղ երկրային աստված:

1,3. ՀԻՄՆ ԱՐԱՅԻՆ

Հայր մեր, Արա՛, Քո զավակները արևափառ,
Այս սուրբ ծեսին հավաքվել ենք
Քո Արարչական փառքը հյուսելու.
Մեր մեջ հաստատելու մեր Արի ծագումը,
Որ Քեզանից է գալիս.
Խնկարկելու մեր անարատ արյունը,
Որ Քեզանից է հոսում մեր երակներում.
Պայծառացնելու մեր ազնվական դիմագիծը,
Որ Քեզանից ենք ժառանգել
ԵՎ վեհացնելու մեր մեջ Վահագնյա ոգին,
Որ արտացոլումն է Քո Էության:

1,4. ՀԻՄՆ ԱՐԱՅԻՆ

Լույսը հենց իմ մեջ՝ Ցուքն է Արայի:
ԵՎ լույսը իմ մեջ ժխտում է մութի
Խորհուրդը մռայլ
ԵՎ բացում Աշխարհն այնպես, ինչպես կա՝
Բյուր հրաշալիքներ՝ պայծառ ու վսեմ
Իմ շուրջն են խաղում,
Ինձ հետ են խաղում:
Ես էլ հրաշալիք՝ հրաշալիքների մեջ,
Ես էլ եմ խաղում անծայր Աշխարհում
ԵՎ հասնում մինչև հենց Ինքը՝ Արա՛ն
ԵՎ ապա փարվում Արայի կրծքին
Ո՛ր ծուլվում նրան:
Ես զգում եմ իմ մեջ արյունն Արայի,

Նրա պատկերում ես ինձ եմ տեսնում.
Ես զգում եմ Նրա զարկերը սրտի...
ԵՎ Նա հենց իմ մեջ արարում է ինձ:

2.1. ՀԻՄՆ ԱՆԱՀԻՏԻՆ

Ո՛վ, Մայր Անահիտ,
Ամեն ծնվողին դու համբույր ունես,
Ամեն սիրողին դու ժպիտ ունես.
Պահիր իմ փոքրիկ որդուն քո գրկում,
Ճոճիր դու նրան քաղցր երազում,
Համբույրներ դրոշմիր ու օրոր երգիր
Աստղերից քաղած անուշ երգերով.
Ժպտա դու նրան արեգից պոկած
Հրե ժպիտով.
Մայրական գութով գուրգուրիր նրան
Ո՛ւ սեր ներարկիր մատաղ սրտի մեջ՝
Սեր աստվածային,
Որ մանկությունն իր՝ սիրով շաղախի,
Որ սիրով աճի, որ սիրով ապրի,
Ինչպես վայել է որդուն Արայի:

2.2. ՀԻՄՆ ԱՆԱՀԻՏԻՆ

Ո՛վ, դու, Անահիտ, Մայր Աստվածուհի,
Ինքդ Մայրացում ամեն երկունքի,
Ամեն ծնունդի ու նվիրումի:
Քո Մայրացումով Ջատիկը կերտիր,
Հազարան Հավքից գույներ հավաքիր
ԵՎ շաղ տուր ամբողջ Արարատով մեկ.
Որ լույսը կյանքի բազմագույն լինի,
Բազմագույն լինի պտուղը հողի,
Ժպիտը մանկանց բազմագույն լինի,
Բազմագույն երազ մայրերին տրվի:
Բազմագույն հույսով աղջիկներն Արի
Բազմագույն ծաղկով պսակներ հյուսեն,
Բազմագույն խաղեր Ջատիկին ծոնեն.
Բազմագույն երգեր օդում թևածեն
Ո՛ւ թիթեռ դարձած,
Բազմագույն փայլով սլանան երկինք:

Բազմագույն պարով պատանիք Արի
Հողը կրնկեն և ամրապնդեն
Արմատներն իրենց Մայր Հողի կրծքում:
Հողն Արարատի՝ մայրական տենչով՝
Սերմնացաններին իր գիրկը կանչի
ԵՎ գորովանքով իր մեջ ներառնի
Սերմեր բազմագույն:
Ջատիկ է՝ գարուն և բեղմնավորում,
Սուրբ մայրացունի բազմագույն օծում,
Մայր Անահիտին՝ բարև՝ բազմագույն:

2,3. ՀԻՄՆ ՋԱՏԻԿԻՆ

Կաթնաբույր գարնան բարևաշունջ,
Հոգեհամբույր, թախծաժպիտ,
Աստղածիծաղ, լուսաշղարշ,
Նազաշորոր, հեզաշունկ,
Քնքշատաղիկ և սիրապար
Ջատիկն է ծփում կենաց զարթոնքի,
Որպես հոգեթով, բուրող մեղեդի,
Որպես թախծալի հեռավոր կարոտ,
Որպես բեղմնավոր երանության լույս,
Որպես սերմնացան տոնախմբություն,
Որպես ցողաթաց հողի մայրացում,
Որպես զովաշունչ անձկալի շոյանք,
Որպես արևշող սիրո տվայտանք,
Որպես հոգեկան շիկնանք երկյուղած,
Որպես ոգեկանչ հեռավոր նախնյաց,
Որպես բազմաշուրթ գովերգում Հողին,
Որպես բյուրհայաց զգվանք Արեգին,
Որպես ջերմ բարև՝ Մայր Անահիտին:

2,4. ՀԻՄՆ ԱՆԱՀԻՏԻՆ

Ո՛վ Դիցուհի,
ես մեղկության կրոններեն ահա իմ խիղճս լվացի,

ՈՒ պերճորեն դեպի գքեզ կքալեմ: Հողաթափքերս դեռ սուրբ են:

Բաց մարմար դուռը Մեհյանիդ, անոր դիմաց ես ճակատս թող արյունեմ...

Բաց Բագինդ, և տուր ինձի շեկ զորությունը Արտաշիսյան Նախնիներու...

Լսե ինձի, Ոսկեղեն Սայր, քույր արգավանդ, քույր բարության, Առատությանց պարզևիչ և Տիրուհիդ հին հայոց, Նավասարդի առավոտով Քու նախկին ցեղդ ահավասիկ կցնծա՛...

Թույլ տուր որ ես ծնրադիր ձևիդ առջև աղոթեմ:

Լսե ինձի, Հրաշքի Վարդ, ոսկի ոտքով Աստվածուհի, Գիշերային սպիտակ Հարս և Տարփուհիդ Արեգական, ԵՎ լուսամարմին մերկություն Արարչական Առագաստի, Արևն իր մեկ ճառագայթով թող քու բագինդ դարձյալ վառե...

Կհավատամ ես ի քեզ: Բագրևանդյան բլուրներուն վրա կանգուն,

Ես բազմադարյան դիցապաշտ և նիզակազեն քու որդիդ Իբր առաքյալ և խնդրարկու Քեզի կուգամ վեհորեն, Լսե ինձի, Հայկյան բամբիռս Գողթան հողեն է ծներ...

ՈՒխտի կուգամ: Քղամիդ մը հասակես վար և բարսամունքի դալար ուստեր ի ձեռիս,

Ահավասիկ արձաթ ցնցուղ մը վարդահյութով՝ ստինքներդ օծելու...

Ահավասիկ խնկաման մը սափորածև, ուր կործանումդ իմ արցունքո՛վս ես լացի...

ԵՎ ստվերիս հետևող եղնիկներով նվիրական՝ Քեզ կքալեմ...

Բագրևանդյան բլուրներեն հեթանոս կյանքը թող հոսի, Արևորդիք գեղահասակ, բեհեզներով պարեգոտված, Աղեղներու, նիզակներու և նետերու վարժեն հետո, զոհարանիդ սեմին վրա՝

Հաղթ ցուլերու պարանոցին իրենց սուրերը թող սևեռեն...

Թող պտղավորյալ հայ հարսներուն ուսերին հստակ տարմը

տատրակներուն,
 Դեպի անդրիդ թռիչ առնեն: Վարդավառի ջրախաղերը թող
 բացվի՛ն...
 ԵՎ վեշտասնամյա աղջիկներ բագինիդ շուրջ պարի ելած,
 Իրենց իղձերը մոգական, ո՛վ զգաստության Տիրամայր, թող
 քեզ բաշխեն...
 Քսան դարու Քու վրեժդ թող որ այսօր ես լուծեմ,
 Ո՛վ աստվածուհիդ Անահիտ: Ահավասիկ քու բագինիդ
 կրակներու մեջ նետեցի
 Իմ խորտակված խաչափայտիս երկու թևերը թունավոր,
 ԵՎ ցնժա դուն, ո՛վ Ոսկեմայր, Լուսավորչի կողերեն, ժանտ
 ոսկոր մը քեզ կծխեն...
 Կպաղատիմ ես Քեզի, ո՛վ զորությանց դուն աներկրորդ
 Գեղեցկություն...
 Դուն քո մարմինդ Հայր Արային ընծայելով՝ բեղմնավորվե
 անոր Տարրեն,
 ԵՎ անհաղթելի ահեղ Աստված մը պարզևէ դուն Հայության...
 Քու աղամանոյա արգանդեդ, ո՛վ Դիցուհի, ահեղ Աստված մը
 ծնանե մեզ...

2.5. ՀԻՄՆ ԱՆԱՀԻՏԻՆ

Դատարկ կլիներ Աշխարհը արար,
 Թե Մայր չլիներ:
 Էլ ո՞վ պիտի Աստվածներ ծներ,
 Էլ ո՞վ պիտի Արիով երկներ,
 Ո՞վ պիտի չափեր ցավը Աշխարհի,
 Գութը Աշխարհի ո՞վ պիտի ցաներ,
 Ո՞վ պիտի սներ Սերը Գարունքի...
 Բայց էլ ի՞նչ Գարունք, թե Մայր չլիներ:
 Թե Մայր չլիներ, Հայրը ի՞նչ աներ:
 Գուցե իսկապե՞ս հենց ինքը Արա՛ն
 Մայրն է արարել Անահիտի մեջ
 Ո՛ր հենց Մայրությամբ կերտել է նրան,
 ԵՎ ինքն առաջինն է նրան Մայր անվանել:

2, 6. ՀԻՄՆ ԱՆԱՀԻՏԻՆ

ԵՎ դու ճախրում ես այս երկրի վրա,
և բերրի դաշտերի վրա լցնում ես գինի.
և հայտնվում ես աստվածությամբ հպարտ,
իբրև հավատ, իբրև սեր և մայրություն:

ԵՎ տավիղ կա քո ձեռքին, և մայր ես դու,
քո մատների շեղ, համանվագ գարկից
գարթնում են մարդիկ, շեներ ու ցեղեր,
և դու նվագում ես առավոտվա տեսքով:

ԵՎ տաճարներում, և քո տաճարում,
ուր քուրմերը՝ ցավից ու հավատից
ամփոփված իրենց էությունում,
երագում են քեզ ու արև են երգում:

Խլրտում է հողը բերրի ու վայրի,
խլրտում է սիրտը պարմանուհու այն շեկ.
և աչքերում կապույտ, կապույտ աչքերում
արթնանում են պատկերներ սիրո ու
մայրության:

ԵՎ ցավի պես ճնշող ու հոգնաբեկ,
և հույսի պես տխուր ու միամիտ,
աչքերում այդ կապույտ, աչքերում այդ ծավե
օրորվում են սիրո լուսաբացներ:

Մայր իմ անիրական, և երագ, և միֆ,
հեռուների իմ սեր, հեռուների կարոտ,
քո տեսքով ու շարժումով մանկան
Արարատը լի է աստվածներով:

ԵՎ տավիղ կա նրանց ձեռքերում մանկական,
և սերեր աչքերում, և կարոտներ հոգում.
ես չկայի, և դու ճախրում էիր այս երկրի վրա

իբրև հավատ, իբրև սեր և մայրություն:

2,7. ՀԻՄՆ ԱՆԱՀԻՏԻՆ

(ՄԱՆԿԱԿԱՆ)

Բարի գիշեր, Մայր Անահիտ,
Քուն եմ մտնում անխռով,
Ինձ էլ բարի գիշեր մաղթիր
Աստվածային քո սիրով:
Հանգիստ քուն տուր իմ աչքերին,
Անուշ երազ պարզևկիր:
Թող գիշերը բարին լինի,
Երազներս չմարեն,
Թող աստղերը երկնի մթնում,
Պայծառ, ուրախ փայլվիլեն:
Թող մայրիկս ինձ համբուրի
Գիշերը խոր քնիս մեջ,
Թող հայրիկս ինձ գուրգուրի
Երազներիս լույսի մեջ:
Թող եղբայրքս ու քույրերս
Ինձ հետ խաղան երազում,
Իրար սիրենք, իրար զգվենք
Ամբողջ գիշեր երազում:
Բարի գիշեր, Մայր Անահիտ,
Սիրում եմ քեզ և հավատում եմ քո սիրուն:

2,8. ՀԻՄՆ ԱՆԱՀԻՏԻՆ

Մայրության խորհուրդ,
Մայր Աստվածուհի,
Դիցամայր Հայոց,
Դու՝ Մայր Ջգաստության,
Մայրաց - Մայր Տիկին,
Մայր՝ Հայոց Գոյի,

Քաղցրաբույր ժպիտ,
Դու՝ Աղբյուր վճիտ,
Կենսատրոփ դու սիրտ,
Իմ Մայր Անահիտ:

3,1. ՎԱՀԱԳՆԻ ԾՆՈՒՆԴԸ

Երկներ Երկին, երկներ Երկիր,
Երկներ և ծովն ծիրանի,
Երկն ի ծովում ուներ և զկարմրիկն եղեգնիկ:
Ընդ եղեգան փող ծուխ ելաներ,
Ընդ եղեգան փող բոց ելաներ,
ԵՎ ի բոցույն վազեր խարտյաշ պատանեկիկ:
Նա հուր հեր ուներ,
Ապա թե բոց ուներ մորուս,
ԵՎ աչկունքն էին արեգակունք:

3,2. ՀԻՄՆ ՎԱՀԱԳՆԻՆ

Երկնեց երկինք և երկիր,
Երկնեց և ծով ծիրանի,
ԵՎ եղեգնիկը կարմիր
Երկնեց ծովում ծիրանի:
Ծուխ է դուրս գալիս եղեգան փողից,
Բոց է դուրս գալիս եղեգան փողից.
Բոցն է պատել կարմիր եղեգնիկ,
Բոց է դարձել և ծով ծիրանի.
Կարմիր բոցիցը ահա մի մանկիկ,
Վահա՛գն ահա - մանուկ գեղանի:
Բոց մորուքով,
Հուր շրթունքով,
Հուր հեր գլխին - հրեղեն պսակ,
ԵՎ աչքերն են զույգ արեգակ:
Ալեծուփ ծովի ծիրանի ալիք
Գնում են, գալիս, ծեծում են ափունք.

Ահեղամշունչ գոռում է մանկիկ,
Սաստում է այացն հրավառ շոթունք.
Վահա՛գն ծնավ, լռեցե՛ք ալիք.
Դու ծովահալած, դադա՛ր առ, մրրիկ:
Թևերն ոսկեհուռ, հրահեր բաշով
Նժույզը տակին՝ սլացավ վերև -
Երեսդ ծածկի՛ր համեստ շղարշով,
Տես ո՞վ է գալիս, և դու, հուր-արև.
Գլուխդ ալևոր, քաջածին Մասիս,
Դու էլ խոնարհի՛ր, Վահա՛գն է գալիս:
Երկինք ու երկիր և ծիրանի ծով
Ավետում են քեզ, ցավերի դու ծով՝
Ցնծա՛, բյուրվիշապ Հայաստան աշխարհ,
Փրկության Աստված Վահագնի՛դ տեսար:

3.3. ՀԻՄՆ ՎԱՀԱԳՆԻՆ

Երկնի ու Երկրի միաձույլ բոցից
Վահա՛գն է ծնվում Հրե Պատանի,
Վահա՛գն է ծնվում Որդին Արայի,
Վահա՛գն է ծնվում փրկության Աստված,
Վահա՛գն է ծնվում Ջորության Արքա.
Մեր Երկրի համար՝ ուժի ներշնչանք,
Արեգի համար՝ հրե զորություն,
Աստղերի համար՝ լուսե պատանի,
Լուսնյակի համար՝ սիրո մեղեդի,
Երկնքի համար՝ սիրասուն մանկիկ,
Արիի համար՝ հրեղեն եղբայր,
Իսկ Վիշապի համար՝ դաժան ախոյան,
Նա՛ Վիշապաքա՛ղ:

3.4. ՀԻՄՆ ՎԱՀԱԳՆԻՆ

Երկներ երկին, երկներ երկիր,
Երկներ և ծով ծիրանի...

Ընդ եղեգան փող ծուխ ելաներ,
Ընդ եղեգան փող բոց ելաներ:
ԵՎ այդ բոցիցը խարտյաշ մի մանկիկ
Ծնվեց կանչելու իր շանթկեզ ձայնով.
«Հե՛յ, լավ լսե՛ք, Արի՛ք, Չարի՛ք,
Հայաստանս շանթարգել չէ
Մոլորակի վրա ցցված:
Գիտե նաև շանթահարել,
Գիտե նաև Արև գրկել,
Գիտե նաև երկիր ցնցել,
Բոցեր հանել խոր ընդերքից...»:
Բարի գալուստ ասենք նրան,
Բարի գալուստ հրե բալին.
Էն տնավեր, էն բնավեր անհաշտ բալին՝
Բարի գալուստ...
Մատաղ նրա հուր աչքերին, որոտ ձայնին,
Աստվածածին էն խելառին՝
Բարի՛ գալուստ, բարի՛ գալուստ, բարի՛
գալուստ:

3,5. ՀԻՄՆ ՎԱՀԱԳՆԻՆ

Նոր Տարվա արև՝ լույսը Վահագնի,
Այգածին արև՝ սերը Վահագնի,
Հրավառ արև՝ ուժը Վահագնի:
Քանի արևը շողում է երկնում,
Արի մայրերը Վահագնով երկնում,
Արի են ծնում.
Աղջիկները կույս՝ երազների մեջ
Վահագն են տեսնում.
Արի պատանիք՝ արևին թիկնած՝
Վահագնով շնչում.
Հըրաչյա մանկտիք՝ արևից շիկնած՝
Վահագն են երգում.
Նախնիները մեր՝ լուսեղեն ոգիք՝
Վահագնին փարվում.
Մասիսը հպարտ՝ երկինք խոյացած՝
Վահագնին սպասում.

Արարատը Մայր՝ արևին գրկած՝
Վահագնին կանչում:
Վահագն են կանչո՛ւմ բոլորը մեկտեղ,
Հավատքով սպասում մի նոր երկունքի,
Մի նոր ծնունդի Հրե Վահագնի.
Աչքերը հառած բարի արևին...
Արևը մեր մեջ՝ Բարև՝ Վահագնին:

3.6. ՀԻՄՆ ՎԱՀԱԳՆԱԿԱՆՁԻՆ

Ո՛վ Դու, Վահագն, ո՛վ աստվածն իմ հայրերուս.
Կկանչե՛մ քեզ... կկանչե՛մ...
Ռժի՛ն համար, կրոնքի՛ն համար բազուկիդ,
Որով դու օր մը պատռեցիր պիղծ բերանը Վիշապի...
Ռժի՛ն համար, որ թռիչն է և հոգին
Արարչության անվախճան.
Ռժի՛ն համար, որ կլեցնե ստինքներ
ԵՎ կօրորե մեր օրրան.
Ռժի՛ն համար, որ կկանգնե Ազգս ինչպես
խումբ մ'առյուծի,
Բազուկդ անոր բազուկի մեջ կհեղու,
ԵՎ զերդ հրեղեն վարագահավ՝ իր լուսեղ
Թռիչներուն ամփոփման տակ կթխես
Մեր մայրերուն ծոցին մեջ
Դյուցազուններ՝, հանճարներ...
Այդ Սուրբ Ռժի՛ն համար,
Ո՛վ Դու, Վահագն, ահա քեզի կարկառած
Բազուկներս՝ կկանչե՛մ քեզ... կկանչե՛մ...

3.7. ՀԻՄՆ ՏՐՆԴԵՁԻՆ

Ո՛վ, Աստվածային Երկունքից ծնված
Ո՛ւ արեգակի հրով բռնկված,
Դու, Վահագնակեզ կանթեղների պես,
Խարույկների ծես - Հայոց Տրնդեզ:

Ջորության կրակ, Հավատքի ճրագ,
Դո՛ւ, հրե վարսակ, դո՛ւ, գարնան կոչնակ,
Մեր Արիական ոգու հրե դեզ,
Ո՛վ, Վահագնածին - Հայոց Տրնդեզ:

Ի բոցույն օծված խարույկների պար,
ԵՎ լույսով շիկնած ձոներգ աստղաշար
Դո՛ւ, մեր սուրբ կնունք և ոգու հրկեզ,
Ո՛վ, Վահագնականչ - Հայոց Տրնդեզ:

3.8. ՀԻՄՆ ՎԱՀԱԳՆԻՆ

Երկր՝նք է, երկր՝նք, Երկիրն է տքնում,
Ահեղ երկունքից Երկինքն է դողում.
Երկիր ու Երկինք միաձույլ երկնում
Զորության Աստված Վահա՛գն է ծնվում:

Խորհուրդն արարման զորությամբ սնում,
Մայր Արարատում զարուն է բերում,
Հրացայտ սրտերն Արորդյաց օձում՝
Բնության զարթոնք Վահա՛գն է ծնվում:

Վահա՛գն՝ Աստված Զորության,
Վահա՛գն՝ Աստված հայության,
Վահա՛գն՝ Հրե Պատանի,
Վահա՛գն՝ ծնունդդ բարի՛:

Արևը ձերմակ իր հուրն է սփռում,
Աստղեր և լուսին պերճանք են բուրում,
Փայլակն է ցոլում, ամպերն են զոռում՝
Վահագնակա՛նչ են միաձայն երգում:

Տիեզերքն ամբողջ շուքով հավաքվում,
Մայր Արարատի շուրջն է խտանում.
Արարման վայրում խավարն է ցրվում՝
Արայի Որդի Վահա՛գն է ծնվում:

Վահա՛գն՝ Աստված Զորության,
Վահա՛գն՝ Աստված հայության,
Վահա՛գն՝ Հրե Պատանի,
Վահա՛գն՝ ծնունդդ բարի՛:

3,9. ՀԻՄՆ ՎԱՀԱԳՆԻՆ

Ո՛վ, Մեծդ Աստված, Վահագն Արի,
Դու՝ Արև բարի, դու՝ կյանք և աշխույժ,
Դու՝ կռիվ և ուժ, դու՝ լույս և գտող,
Ազնիվը գատող, փառքը արարող:
Դու, որ հաղթողն ես ամեն խավարի,
Ամեն մռայլի, Վիշապի, Չարի...
Քե՛զ, ո՛վ, այգածին, ճառագայթածին,
Քեզ ենք նվիրում ձոնը մեր սրտի,
Բարևը հոգու, հուրը աչքերի,
Որպես ճառագում Վահագնյա Ռժժի:

3,10. ՀԻՄՆ ՎԱՀԱԳՆԻՆ

Ո՛վ, դու, Վահագն, Արիի Աստված,
Տիեզերքի մեջ՝ տիեզերական Ռժժ,
Արևների մեջ՝ Հուր արևակեզ,
Լուսաստղերի մեջ՝ լույսի Կենսաղբյուր,
Ոգիների մեջ՝ ոգու Վեհություն,
Աստվածների մեջ՝ Ջորության Աստված:
ԵՎ քո զորությամբ, լույսով, արևով
Սնիր դու անվերջ իմ Ցեղը Արի,
Ցեղիս հոգու մեջ հավատը վառիր,
Բազուկը Ցեղիս հաղթությամբ կռիր,
Շանթերով հյուսիր հայացքը նրա,
Սրտում՝ Արևից բեկորներ ցանիր,
Արարող ոգին՝ հրով շաղախիր,
Որ Ցեղս և՛ իր ստեղծումը կերտի,
ԵՎ այն պաշտպանի զորությամբ Ռժժի:

3.11. ՀԻՄՆ ՎԱՀԱԳՆԻՆ

Բյուր Արեգներից արարված Աստված,
Բյուր Արեգներից հուր առած Աստված,
Բյուր Արեգներով զորացող Աստված,
Բյուր Արեգնավոր Հրաշունչ Աստված:

Հրածին Հայի Հրեղեն Աստված:
Արյաց սրտերը ջերմացնող Աստված,
Արյաց տները շենացնող Աստված,
Հրածին Հային Հուր տվող Աստված,

Հրածին Հայի աչքի լույս Աստված,
Հրածին Հայի բազկի ուժ Աստված,
Արյաց գնդերը զորացնող Աստված,
Արյաց Տոհմերը վեհացնող Աստված:

Չարի աչքերը կուրացնող Աստված,
Չարի սրտերը ահագնող Աստված,
Չարի ամրոցը ավերող Աստված,
Չարի կուռքերին կործանող Աստված:

Գարնան հետ մեկտեղ կյանք առնող հային
Ջերմությունդ տուր, հարազատ Աստված.
Ձմռան խոր քնից արթնացող հային
Աչքիդ լույսը տուր, շողարձակ Աստված:

Մեր նորամանուկ, վեր հառնող Ազգին
Բազկիդ ուժը տուր, Չորավոր Աստված.
Քո զարմից ծնված, Արմենյաց Ցեղին
Անմահ Հուրդ տուր, Հրեղեն Աստված:

4.1. ՀԻՄՆ ԱՍՏՂԻԿԻՆ

Ելնում է ահա նագելի փառքով
Երկնի խորքերից Սիրո Դիցուհին,
Պճնված կույսի ճերմակ շղարշով,
Վառվելով իր սուրբ շողերի միջին:

Արևշող աղբյուր՝ հույզերի,
Աստղաբույլ կերոն՝ սրտերի,
Լուսաշող Սիրո Թագուհի,
Գեղասքանչ Աստղիկ Դիցուհի:

Ելնում է շռայլ իր փառքից շիկնած,
Ցոլուն աչքերը ներքև խոնարհում,
Թեև նրանց մեջ երկնքից ծագած
Ամենից պայծառ ճաճանչն է բերում:

Արևշող աղբյուր՝ հույզերի,
Աստղաբույլ կերոն՝ սրտերի,
Լուսաշող Սիրո Թագուհի,
Գեղասքանչ Աստղիկ Դիցուհի:

Թռչում է բարև՝ս նրան ընդառաջ,
Ցնորքս աշխույժ պարում են իր շուրջ,
Թռչում են և ես իմ բախտից հարբած,
Ո՛ր կյանքը թեթև թվում է անուրջ:

Արևշող աղբյուր՝ հույզերի,
Աստղաբույլ կերոն՝ սրտերի,
Լուսաշող Սիրո Թագուհի,
Գեղասքանչ Աստղիկ Դիցուհի:

4.2. ՀԻՄՆ ԱՍՏՂԻԿԻՆ

Ո՛վ, չքնաղ Աստղիկ, Ղիցուհի՛դ Սիրո,
Մեր սերը օծիր քո վեհ ժպիտով,
Վարդավառ սարքիր մեր սրտերի մեջ,
Մեր Արի ոգին վառիր արևով:
Վարդաջուր ցանիր դու մեր աչքերին
Ո՛ւ սեր բորբոքիր՝ սեր լուսապայծառ,
Լույսի պես անկիրք, մաքուր և ազնիվ:
Անվերջ նորոգիր քո Սերը մեր մեջ
ԵՎ այն տարածիր Արարատով մեկ,
Որ սիրով շնչեն պատանիք Արի,
Որ սիրով տենչան, որ սիրով երկնեն,
Որ սիրով ծնեն և նույն այդ սիրով
Գուրգուրեն իրար:
Մանուկը սիրով իր մորը գգվի,
Իր հոր արևին փարվի նա սիրով,
Եղբայրն իր եղբոր աչքերին նայի
Հավատի սիրով,
ԵՎ հենց այդ սիրով բարև՛ը հնչի:

4.3. ՀԻՄՆ ԳԵՂԵՑԻԿԻՆ

Գեղեցիկից դուրս ի՞նչ գեղեցկություն.
Գեղեցիկը գեղեցկության հույզեր է ծնում,
Գեղեցկությունը՝ սեր:
Գեղեցիկը՝ հենց ինքը բնական,
Ինքն ամբողջական, ինքը համաչափ,
Ինքն աստվածային Սիրո արարում,
Ինքը՝ Բնությունն ամբողջության մեջ,
ԵՎ նրա պատկերը Աստղիկի տեսքով:
Առանց Աստղիկի էլ ի՞նչ Բնություն,
Առանց Աստղիկի էլ ի՞նչ գեղեցիկ,
Ի՞նչ գեղեցկություն:
Թե ուզում ես գեղեցիկը տեսնել
Հենց Բնության մեջ՝ նայիր Աստղիկին

ԵՎ թե ուզում ես ողջ գեղեցկությունը
Հոգուդ մեջ կերտել՝ սիրիր Աստղիկին:

4.4. ՀԻՄՆ ՍԻՐՈ

Գարունն առանց սիրո էլ ի՞նչ գարուն.
Էլ ինչպե՞ս երգի սոխակն անտառում,
Առվակն էլ ինչպե՞ս կայտառ կարկաչի,
Էլ ինչպե՞ս քամին խելագար թռչի,
Արեգն էլ ինչպե՞ս ժպտա աշխարհին,
Լուսինն էլ ինչպե՞ս կարոտով թախծի...

Թե Սեր չլինի:

Էլ ինչպե՞ս երկնի մայրը մայրացող,
Էլ աղջիկները ինչպե՞ս հարսնանան,
Ինչպե՞ս խիզախի պատանին Արի,
Ո՞րն համար կռվի, նա ո՞ւմ պաշտպանի
ԵՎ թե վիրավոր՝ հողն ինչպե՞ս գրկի...

Թե Սեր չլինի:

Ինչպե՞ս արարի արարող Արին,
Ստեղծումի ոգին ինչպե՞ս պահպանի
ԵՎ զորությունն իր ինչպե՞ս զորացնի,

Թե Սեր չլինի:

Թե Սեր չլինի, սեր ինչպե՞ս լինի:

Սիրո Դիցուհի Աստղիկը վկա՝

Թե նա չլինի, Սեր ինչպե՞ս լինի:

4.5. ՀԻՄՆ ՎԱՐԴԱՎԱՌԻՆ

Առանց սիրո էլ ի՞նչ պատանի,
Էլ ի՞նչ գեղեցիկ ու գեղեցկություն,
Կյանքի ի՞նչ գարուն:

Թե սեր չլինի, Աստղիկ չլինի,

Թե չհավատա պատանին նրան

ԵՎ թե չաղոթի իր սիրո համար

Աստղիկ Դիցուհուն՝ էլ ի՞նչ պատանի:

Աստղիկը միայն՝ Սիրո Ղիցուհին,
 Վարդավառ սարքում՝
 Վարդեր է ցանում գարուն սրտերին,
 Վառում է նրանց Արեգի հրով,
 Վարդ-ջուր է ցանում աչքերին նրանց.
 Շրջում է ամբողջ Արարատը նա
 ԵՎ աստվածային երգերով Սիրո,
 Կույս աղջիկներին իր շուրջն է առնում,
 Սեր է ներշնչում,
 Սեր է արարում մատաղ սրտերում
 ՈՒ վարդաջրով սափորի միջից
 Գուշակում է նա ծաղկունքը նրանց:
 Աղջիկները կույս՝ սիրով բորբոքված,
 Հենց Աստղիկի հետ, Աստղիկի նման,
 Մարդկանց են բաշխում ժպիտ կուսական:
 Անարատ, մաքուր և անմեղ սիրով՝
 Վահագնին կանչում սիրո մրցության:
 Արի պատանիք ի տես Աստղիկի,
 Ի տես բազմաթիվ սեր Աստղիկների,
 Սիրո զորությամբ վառվում են նորից
 ԵՎ հրդեհվում են սիրո կարոտով.
 Արև են քաղում երկնի կապույտից,
 Փնջեր են կապում քնքույշ աստղերից՝
 Սիրած Աստղիկի սիրո խոստումին
 Որպես վառ պսակ:

5.1. ՀԻՄՆ ՄԻՀՐԻՆ

Ո՛վ, դու, Մի՛հր, ո՛վ, Արտի Աստվա՛ծ,
 Դու, որ արարման օրենքն ես կերտում
 ԵՎ արդարության ուժն ես խթանում
 Բարձր երկնքում ու երկրի վրա,
 Քո Ոգու փայլով հայտնվիր դու մեզ
 ԵՎ արարչական խորհուրդն Արայի,
 Վահագնի ՈՒժով հաստատիր մեր մեջ:
 ԵՎ շողարձակիր ամենքի հոգում

Քո Աստվածային Օրենքները վեհ,
Որ քո Օրենքով դատողը դատի,
Որ քո Օրենքով դատվողը դատվի,
Ու էլ չլինեն դատող ու դատվող:

5.2. ՀԻՄՆ ԱՐՏԻՆ

Արդարը Արտի Օրենքն է մեր մեջ.
Թե կյանքում չապրես Արտի Օրենքով,
Թե ինքդ Միհրին կամավոր լքես
Ու կյանքդ կապես կեղծ օրենքներին,
Թե ինքդ մերժես Արարչից տրվող,
Արարչից սնվող ուժը քո հոգու,
Ուժը քո բազկի, լույսը արեգի,
Խավարով սնես քո հոգին անվերջ,
Ինքդ ուրանաս քո ծագումն, անգամ,
Օտար գործությանց դու երկրպագես՝
Ինչպե՞ս պահպանես գործությունը քո.
Դու կտկարանաս և քո թուլությամբ,
Մաղձը քո հոգու կցանես քո շուրջ
ԵՎ հենց քո վրա:
Ջորավորն է լոկ ապրում արդարով,
Ջորավորն է լոկ վառ սիրով ապրում:
Իսկ թույլը՝ միայն կարգախոս ստեղծում՝
Կարգախոս սիրո, արդարի, բարու...
Բայց ինքն՝ անարդար, ինքը՝ չսիրող,
Ինքը՝ ոչ բարի...
ԵՎ տկարությունը ոճիր է արդեն,
Անօրինությունն է օրենքը թույլի:

5.3. ՀԻՄՆ ԼՈՒՅՍԻՆ

Անօրինությունը ուժն է խավարի,
ԵՎ լույսն է միայն արդարը ծնում.
Լույսով են միայն գույներ երևում,

Ամեն գեղեցիկ լույսն է մատուցում,
Մարդու ժպիտն էլ լույսով է բացվում.
Մենք իրար միայն լույսով ենք տեսնում՝
Լույսով է միայն մարդն իր մեջ հաղթում
Մաղձը չարության, պատրանքը մահի,
Ուժը խավարի.
ԵՎ լույսի ներքո ի՞նչ լավն է Արին՝
Որքա՞ն գեղեցիկ, որքա՞ն գրավիչ,
Որքա՞ն հարազատ:

6.1. ՀԻՄՆ ՎԱՆԱՏՈՒԻՆ

Առավոտը հերիկներով
Իջավ մահձիդ,
Արևը հարս գեղջկորեն
Ծաթրինաբույր ցանե՛ց, ցանե՛ց,
Օ՛, Վանատու՛ր...
Երկու հազար տարիների
Ճամփաները կանաչեցին,
Ծաղկաշորեր հագան նորից
Դաշտերն անբիծ.
Դաշտերն անբիծ իմ հայրենի,
Բուռ-բուռ գարուն-ցորենվելով
ԵՎ իրենց մեջ ամբարելով
Իմ օրերի խնդությունը
Հերանց, հերանց քեզ են գալիս
Շնորհներով, Օ՛, Վանատու՛ր.
Ես եկել եմ քո դաշտերից,
Ինձ ընդունիր քո մեհյանում
Որպես մի հյուր, Օ՛, Վանատու՛ր...
Ամեն տարի գիշեր, ցերեկ
Գինովացած բերքդ են տոնում
ԵՎ ներդաշնակ հանգերգում են
Ուրախությամբ հասկերն արտում.
Դու միշտ արդար բարու աստված,
Դու սրբազան վայրի ծաղիկ,

Աննյութեղեն լույս ու համբույր,
Ամենագոր հույս և խմիչք,
Դու գույների ոգի, աստված,
Դու քաղցր նինջ անդավաճան,
Աշնան գինի մատռվակե.
Ես եկել եմ բերքիդ տունին -
Ինձ ընդունիր քո մեհյանում
Որպես մի հյուր, Օ՛, Վանատուն:

7,1. ՀԻՄՆ ՆԱԽՆԻՆԵՐԻՆ

Ո՛վ, մեր սուրբ Նախնի՛ք, անմահ ոգիներ,
Հավերժից եկած, հավերժն եք գնում՝
Մինչև Արարիչ:
ԵՎ որպես ոգի, մեզ հետ եք դուք միշտ,
Մեզ հետ եք քայլում, մեզ հետ եք նստում,
Մեզ հետ եք շնչում բուրմունքը հողի,
Մեզ հետ եք գարնան արեգը գրկում:

ԵՎ մենք մեր հոգով ձուլվում ենք ձեզ հետ,
Մեր սրտի խորքում ձեր սերն ենք պահում,
Ձեր լույս արևով մեր կյանքն ենք սնում,
Մեր գոյն ենք օժում ձեր սուրբ հավատով,
ԵՎ մեր ուժից զատ մենք զգում ենք մեր մեջ
Ուժը պապերի
Ու մեր թռռների գորությունն ենք զգում:

8,1. ՀԻՄՆ ՆԱՎԱՍԱՐԴԻՆ

Հանձարդ Հայկյան, Նավասարդյան սա տոներուն
Արևափառ,
Ալ վերածնե փլատակներեն, և փառագոչ
Քնարդ առ:
Հանո՛ւն Ույժին, հանո՛ւն Գեղին, մտիր մեհյանն
Աստվածներուն,

Ջահը ձեռքիդ՝ բազնե բազին համասփռե
Հուր ու արյուն:
ԵՎ բարձրացուր Անահիտի ծիծերն ի վեր
Բաժակդ նուռ,
Հետո զոհվող քերթողներուն սրտին վրա
Լեցո՛ւր, լեցո՛ւր:
Զի մենք, հանուն Սերին, Սերմին, քո հին ցեղիդ
Մարմարեն կույս,
Մենք, զավակներիդ օգոստափառ, պիտի կերտենք
Նո՛ր Արշալույս:

8.2. ՀԻՄՆ ՆԱՎԱՍԱՐԴԻՆ

Հավաքվել են քաջ որդիք մեր մրցության.
Նավասարդյան անթեղ կրակ, հուրհրա՛,
Ամեն մեկին տուր հույս, հավատ հաղթության,
Ոգևորի՛ր խինդը նրանց թող թնդա՛:

Քաջության մոլուցքից արբեցած
Քաջերից քաջերին փառապանծ,
Պարզևի՛ր հաղթանակ վաստակած,
Քաջերի մրցամարտ, Նավասա՛րդ:

Հայր Արայի օրհնանքով ու փառքով
Արարչանիստ Արագածի գագաթին
Արարչական ջահը անմար կրակով
Վահագն հանձնեց մեր նախահայր քաջ
Հայկին:

Քաջության մոլուցքից արբեցած
Քաջերից քաջերին փառապանծ,
Պարզևի՛ր հաղթանակ վաստակած,
Քաջերի մրցամարտ, Նավասա՛րդ:

Բացահայտվե՛ք, կտրիճ որդիք Հայկազյան,
Ցուցադրեցե՛ք եռանդ և ուժ անթերի.

Անշեջ հուրը, որպես խորհուրդ օրհնության,
Հաղթանակ ու փառքի պսակ ձեզ բերի:

Քաջության մոլուցքից արբեցած
Քաջերից քաջերին փառապանծ,
Պարզևհի՛ր հաղթանակ վաստակած,
Քաջերի մրցամարտ, Նավասա՛րդ:

9,1. ՀԻՄՆ ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻՆ

Փա՛ռք քեզ, Վահա՛գն, ո՛վ, Հրե Աստված,
Որ քո Ջորությամբ իմ Ազգը Արի
Հանկարծ խրոխտացա՛վ, հանկարծ
ծառացա՛վ,
Դարերով քնած առյուծը գարթնե՛ց,
Դարերով նիրհած արծիվը ճախրե՛ց.
Ո՛հ առյուծացա՛վ, ու վարազացա՛վ, ու
Վահագնացա՛վ,
Ո՛հ Սարդարապատով երկնեց Հայաստան:

Երկինք ու երկիր խառնվեցին իրար,
Ծովեր ու լեռներ խառնվեցին իրար,
Սուրբ հողը շարժվեց,
ԵՎ այդ երկունքից մանկիկը ծնվեց՝
Հրաշք մանկիկը՝ Ազա՛տ Հայաստան:

Ո՛հ լեռներից, ու Մայր Հողից,
Աստվածների Մայր Տաճարից,
Արարչածին Արիներից
Հազար բարև՝ ու հազար փա՛ռք
Քե՛զ, ո՛վ, Վահա՛գն Վիշապաքաղ:

10,1. ՀԻՄՆ ԱՐԻԻՆ

Արիական ոգին իմ մեջ,
Նախնիներիս շունչը իմ մեջ,
Վահագն Աստօ՛ր ուժը իմ մեջ,
ԵՎ Աստղիկի սերը իմ մեջ:
Իմ Մայր Հողի բուրմունքն իմ մեջ,
Վառ արևի հուրը իմ մեջ,
Բյուր աստղերի լույսը իմ մեջ`
ԵՎ ես աստված` ինքս իմ մեջ:

10,2. ՀԻՄՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ

Հազա՛ր-հազա՛ր փա՛ռք Հրածին Հային,
Հազա՛ր-հազա՛ր փա՛ռք Արի Արմատին,
Հազա՛ր-հազա՛ր փա՛ռք Հրե Վահագնին,
Հազա՛ր-հազա՛ր փա՛ռք մեր Հայր Արային:

10,3. ՀԻՄՆ ՌԱԶՄԻԿԻՆ

Արարչի կամքով`
Տղամարդն Արի հայր է ու ռազմիկ.
Սիրով ու սրով նա պիտի կնքվի:
ԵՎ ապա երբեք, ամբողջ իր կյանքում
Այդ սուրը պատյան պիտի չդնի,
Նույնիսկ աղոթքի ու սիրո պահին:
Արի ռազմիկը պիտ պատերազմի,
Խաղա մահի հետ` հաղթի կամ հաղթվի.
Իսկ Չարիի դեմ նա պիտի լինի
Լոկ Վիշապաքաղ:
Չարին ռազմիկ չի կարող լինել,
ԵՎ իր բնույթով ոճրագործ է նա:
ԵՎ Չարիի հետ կա՛մ պետք է խոսել
Ոճրագործ ձևով,
Կա՛մ պետք է լինել պատժող դատավոր:

Ռազմիկը ոճիր չի կարող գործել,
ԵՎ Չարիի ոճիրը պատժելու համար,
Դատող է կարգել Վահագն Արիին՝
Թե Չարին հենց ձեռք բարձրացնի
Արի մորթելու,
Սրով պիտ կտրել այդ ձեռքը նրա՝
Գլխի հետ մեկտեղ:
Սա է կոչումը Արի ռազմիկի,
Սա է պատգամը Ահեղ Վահագնի:

10.4. ՀԻՄՆ ԴՅՈՒՑԱԶԱՆՑ

Երրորդ աչքի մեջ Խաչ-Պատերազմին.
Քուռկիկ Ջալալին քայլքերում Հոգու.
Թուր-Կեծակ կայքը Երկգլուխ Թագին -
Բազնից են սերվում Բարի Դյուցազունք:

Կյանքը դարձնելով Նախիրին Բարև.
Կրակն օջախի ամբարած Հոգում.
Պատժում են Չարին, տածելով Արև -
Բագին են պաշտում Բարի Դյուցազունք:

Արի ապրուստը Հավերժին գլոր.
Ծուռ վարքով Ցեղի Բախտն են պսակում.
Արքայությունն են հաստում շուրջբոլոր -
Բագին են շտապում Բարի Դյուցազունք:

10.5. ՀԻՄՆ ԱՐԵԳԱԿԻՆ

Գալուստ կսպասենք Արևածագի՝
Խավարչությունը Լույսով օծվեր գեթ.
Ճերմակ Երազը թող ահազանգի -
Մենք էակից ենք Արեգակի հետ:

Կարոտախտ կզգանք Արևածագի՝
Օտար վարքերը մատաղել է պետք.
Ջարկերակն էլ մեր Վերուստ վերհսկվի -
Մենք Բախտակից ենք Արեգակի հետ:

Պտղել է ժամը Արևածագի՝
Նահվոր-Նահատակ կուզեն Քրմապետ.
Թող երկրպագվի զուտ Տաճարն Ազգի -
Մենք Ցեղակից ենք Արեգակի հետ:

10.6. ՀԻՄՆ ԱՐԵԳԻՆ

Հայր Արայի Ոգուց ծնված լույսի աղբյուր, վառ Արեգակ,
Հուր Վահագնի հրով սնված իմ լուսաշող անմար կրակ,
Պարզ երկնքից ճառագայթող լեզվակներով հուստ երակ,
Ջուր չեն պաշտել նախնիներս՝ քեզ, կենսատու լույս իմ
միակ...

Փա՛ռք քեզ, Արե՛գ, մեր լուսատու,
Հավերժ սիրո ակնաղբյուր,
Ճաճանչաշիթ հրե համբույր,
Վառ մեղեդի կենսատու:

Ճաճանչներդ մարդու աչքի լույսն ու հույսն են, դեղն ու ճարը,
Առանց քեզ ու քո շողերի՝ մութ ու ցուրտ է այս աշխարհը,
Ջերմությամբդ են ծլում - ծաղկում, պտուղ տալիս բերքն ու
բարը,
Վերից խայտա, քանի դու կաս՝ մեզ չի նեղի պիղծն ու
խավարը...

Փա՛ռք քեզ, Արե՛գ, մեր լուսատու,
Հավերժ սիրո ակնաղբյուր,
Ճաճանչաշիթ հրե համբույր,
Վառ մեղեդի կենսատու:

10,7. ՀԻՄՆ ՕՋԱԽԻՆ

Պուճախուն ամեն առկա են Արմանք.
Օջախ կվառի Հոգու կրակով -
Կպարունակվի Հացի մեջ Օրինանք.
Կյանք կմատուցվի Վահագնի Բարքով:

Երդիկի ջերմն է Արարչին Դարման .
Շուրջն են սեղանի Նախնիք զվարթուն -
Տան մեջը տոն է Հայ Ցեղագրման.
Արյաց հետ կապրի Հայքը նոր ծնունդ:

Սավառնող Լույսն է Շեմին Հյուրընկալ.
Կայրի Օջախը Հնգամատյանով -
Կենսահոսանքի Հոսքն է ինքնակալ.
Տունը շեն մնա միշտ էլ Վահագնով:

10,8. ՀԻՄՆ ՑԵՂԱԾԱՌԻՆ

Ո՞վ, ո՞վ, ո՞վ արարեց, ո՞վ...
Այն, որ արմատն էր,
Այն, որ արմատն էր,
Որ հավերժության
Կենաց զորությամբ
Մայր հողի մեջեն
Ծիլ տվեց նորեն:
Ո՞վ, ո՞վ, ո՞վ արարեց, ո՞վ...
Ծիլ տվեց նորեն,
Ծիլ տվեց նորեն,
Արևին թիկնած,
Արևից շիկնած,
Արևով սնված,
Ծառ դարձավ նորեն:
Ո՞վ, ո՞վ, ո՞վ արարեց, ո՞վ...
Ծառ դարձավ նորեն,

Ծառ դարձավ նորեն,
ԵՎ հրով օծված
ՈՒ Վահագնացած,
Հայ Ցեղածառը
Կյանք տվեց նորեն:
Ո՞վ, ո՞վ, ո՞վ արարեց, ո՞վ...

11,1. ՀԻՄՆ ՔԱՌՆԻԻՆ

Օրհնանք է տվել Արևը սիրով
Գառնի Տաճարին՝ սյուներին փարված,
Խինդով ողջունել Հայոց լեռներին,
Մութը ցրելով՝ սփռել այգաբաց:

Այստեղ՝ Տաճարում, առավոտ լուսո,
Գոհունակության առույգ մեղեդին,
Գեղանի կույսի հույզ երգի ներքո,
Ուղերձ է ձոնել արդար Արևին...

Կապույտ երկինքը, իր լուրթ հրձվանքով,
Մայր Անահիտի ժպիտն է դարձել,
Վսեմ Տաճարի խնկաբույր ծխով,
Հասուն արտերի շնչով արբեցել:

Ուխտավորների կանչը խնդագին
Լցվել է Տաճար՝ ուրախ ու խայտակ...
Եռանդ պարզևող հնամյա գինին
Շուրջպար է բռնել սրտով գոհունակ:

Ծիրանաշղարշ կույսերի պարից
Խայտող գոտիքը կապել են կամար,
Ծիածանվելով թմբկազարկերից,
Ղարձել են ծփանք ու կըրակապար:

Անհուն բերկրանքը ցնծանք է կտրել,
Միախառնված Գողթան երգերին,

Ցողվել է ջրով ու Վարդավառել
Հայ գեղահրաշ ժիր մանուկներին:

ԵՎ Ոսկեմայրը, բարի մաղթանքով,
Շուրջը հավաքած խինդ մանուկներին,
Օժտել է բարքի հազար ձիրքերով,
Ուժ, կորով տալով ուխտավորներին...

11,2. ՀԻՄՆ ՏՈՆԱՀԱՆԴԵՍԻՆ

Արևային հրով օձված տոնահույզ
Արորդիներ կենաց խինդով զորացած.
Իսկ Տաճարից ճառագում է հզոր լույս՝
Ջահի հուրն է՝ արևի հետ միացած:

Արևափառ Մեհյանը հին դարերի
Իմաստալից նայում է վեհ, հաղթական,
Լույսի հեղեղ ճառագելով սարերին,
Քարե ժպտով ժպտում է ջերմ, տոնական:

Հրով օձված փառերգեր առ Արարիչ,
Որպես նվեր արարունի գոհության:
Գառնու ձորը զրնգում է երգերից
Ցեղահավատ Արիների հաղթության:

Քրմապետը հրաչյա ու հաղթանդամ՝
Արարունի խորքից եկած Արորդի,
Քրմերի հետ, հանդեսի մեջ բազմանդամ,
Ինչպես մեծ հայր, և՛ ուսուցիչ, և՛ որդի:

<<Փա՛ռք Արարչին, այսքան դարեր մթամած
Հայացքն արյաց անդրադարձավ ակունքին>>:
ԵՎ հայրենյաց բանաստեղծը խիստ հուզված՝
Վերջին երգը նվիրեց այդ երկունքին:

11,3. ՀԻՄՆ ԳԱԼԻՔԻՆ

Արարատյան դաշտում հպարտ հայ երգիչ.
Մաճը ձեռքին հողն է փորում քրտնած,
Երգում է իր գոհությունն առ Արարիչ,
Փառաբանում կյանքը, արև ու աստված:

Մեհյաններում Անահիտի, Վահագնի

Անուշ բույրն է ճոխ մատուցվող զոհերի,
Ձոներգերը արիների, Քրմերի՝
Սրտապարար, ազնվացնող ու բարի:

Սեր առաքող Աստղիկի Տաճարում
Սիրո փառքի երգեր երգող գուսաններ,
Սեր է ծորում հայացքներից անտրտում.
Սիրուց հարբել են անգամ վեհ մուսաներ:

Ապարանքում մեծ ու շքեղ զարդարված,
Գահին բազմած թագավորը մեծագործ:
Անդավաճան սիրով իրար հետ կապված
Նախարարներ, ռանչպար, քրմեր
բազմափորձ:

Արիների հոծ բանակներ զինավառ,
Զգաստ ու պատրաստ կատարելու հրաման.
Ի՞նչ թշնամի կղիմանա խանդավառ
Միասնական այս զորաց դեմ հանդիման:

Արարատը ծաղկավետ ու անխռով.
Հայը՝ հպարտ Աստվածներով զորավոր՝
Արարում է, կառուցում է բերկրանքով
Զրանցք, կամուրջ ու քաղաքներ բյուրավոր:

11.4. ՀԻՄՆ ԿՐԱԿԻՆ

Իջեք հիմա որպես
ԵՎ փրկություն և մահ
ՈՒ կտեսնեք՝ մարդիկ
Կրակներ են վառել,
Կտուրներ են վառել
Մեծ երկնքի վրա:
Իսկ երկնքի վրա
Թառել են Աստվածները մեր:

11,5. ՀԻՄՆ ՌԻՏՏԱԳՐՔԻՆ

Հազա՛ր - հազա՛ր նվիրում մեր Հայր Արային,
Հազա՛ր - հազա՛ր ժպիտ Մայր Անահիտին,
Հազա՛ր - հազա՛ր փառք Հրե Վահագնին,
Հազա՛ր - հազա՛ր սեր Չքնաղ Աստղիկին,
Հազա՛ր - հազա՛ր բարև Արտավազդ Միհրին
Հազա՛ր - հազա՛ր երդում Սուրբ Նախնիներին...

Որ հազա՛ր - հազա՛ր արևով օծված,
Որ հազա՛ր - հազա՛ր օրհնությամբ կնքված,
Որ հազա՛ր - հազա՛ր հայտնությամբ սնված
ԵՎ Արարչական կամքով արարված
ՌԻՏՏԱԳԻՐՔՆ Արյաց՝ ոգու վեհություն,
Հանց Կենաց Խորհուրդ մեզ են կտակում:

12,1. ՀԻՄՆ ԷՐԵՎԱՆԻՆ.

Արարատում՝ արծվաբուն քաջերի,
Արի Հայի ի սկզբանե օթևան,
Ջավակներիդ հարազատ տուն հայրենի՝
Արիավան, Արարչածին Էրեվան:

Մի կողմիցդ Արագածն է Գահանիստ,
Արարչի Գահը գրկած վեր հառնում.
Մյուս կողմից էլ սեզ Մասիսն է Վեհանիստ՝
Աստվածների զբոսավայրը, Էրեվան:

Արագածդ արևի հուրն է, ասին,
Իսկ Մասիսդ՝ ձյունամաքուր լուսավան.
Արևի հուր և ձյունի լույս միասին
Ծիածան են երկնիդ կապում, Էրեվան:

Հազարավոր դարեր ապրած Մայր Քաղաք,
Հազար ու բյուր խինդ ու ցավով անսահման,

Կոփվել ես դու, իմաստնացել ու համակ
Սեր ես դարձել, սիրո աղբյուր էրեվան:

Արարիչի բարի կամքով արարված,
Հիմնապունն ես Արիների շքեղ Տան,
Մեծ Վահագնի հզոր ուժով զորացած,
Հայի պարծանք, Հավերժական էրեվան:

13,1. ՀԻՄՆ ԿՆՈՒՆՔԻՆ

Քրմապետ, կնքիր,
Որ Անահիտը
Ինչպես Արիին՝
Ինձ որպես որդու
Փայփայի, գրկի:
Քրմապետ, կնքիր,
Իմ աստվածային
Ծագման շնորհից,
Պատվից մի գրկիր:
Քրմապետ, կնքիր,
Որ ոչ մի օտար,
Թշնամի դրկից
Հողս չլկի:

Քրմապետ, կնքիր,
Ար - Աստվածներիս
Բագինքի առաջ՝
Աղոթքի պատրաստ,
Կիջնեն ես ծնկի:
Քրմապետ, կնքիր,
Ո՛ր էլ որ լինեն՝
Օտար մի երկիր,
Թե Արարատում
Կրծքիս վառ շողա
Իմ Արևխաչը
Ո՛ր չարից փրկի:
Քրմապետ, կնքիր...

13.2. ՀԻՄՆ ՓԱՌԱՑ

Փա՛ռք Արային Աստվածահայր,
Անահիտին Աստվածամայր,
Փա՛ռք Վահագնին Հաղթաբազուկ,
Քոյր Աստղիկին Սիրանազուկ,
Արև-Սիհրին Լուսաճաճանչ,
Նաև՝ Տիրին Գրաճանաչ,
Ծովի-Նարին ու Նանեին,
Վանատուրին, Գիսանեին:
Փա՛ռք Արորոյաց Բնօրրանին՝
Լեռնակղզի Արարատին:
Փա՛ռք Արիին՝ Նախահորս,
Փա՛ռք Արփիին՝ Նախամորս:
Փա՛ռք Պարտեզիս Կենաց Ծառին,
Կենաց Պտուղ մեր Ծիրանին:
Փա՛ռք Հին Ցեղիս Արմենական,
Հայկյա բազկին Կուռ-Ջինական,
Աստվածաշունչ Հայոց Լեզվին,
Ազգահավաք Հայոց Գենին:
Փա՛ռք մեր Մտքին, մեր Քանքարին,
Բյուրհազարյա մեր Պայքարին:
Փա՛ռք Դյուցազուն Ընկածներին,
Հողը Արյամբ Ներկածներին:
Փա՛ռք մեր Վաղվան, Գալիք Կյանքին,
Փա՛ռք Հավերժող Հայոց Փառքին...

Ա Ր Տ Ի Օ Ր Ե Ն Ք Ը

(ԱՐԻՆԵՐԻ ԿԵՆՍԱԿԵՐՊԸ)

*Արին ծագումով Աստվածամարդ է : ԵՎ միայն Արտի՝
Աստվածադիր, օրենքներով առաջնորդվելով, նա կապրի
որպես
լիարժեք Աստվածամարդ: Արտի օրենքներն են նրանը:*

ԱՐՏԻ՝ ԱՍՏՎԱԾԱԴԻՐ, ՕՐԵՆՔԸ

1. Օրենքը մարդիկ են սահմանում, իսկ օրինաչափությունը՝ Արարիչը: Օրենքը կենսական է ու

օգտակար, եթե ձևավորվում է բնական օրինաչափությամբ:

2. Օրենքները արդար կամ անարդար չեն լինում. օրենքները լինում են բնական կամ անբնական: Բնական օրենքը զարգացնող օրենք է: Անբնական օրենքը ահաբեկող օրենք է, քանզի խաթարում է Ցեղի ու Ազգի նկարագիրը և իր իշխանությունը Ազգի վրա հաստատում է միայն ահաբեկման միջոցով:
3. Բնական օրենքը օրինաչափության հաստատումն է, իսկ անբնական օրենքը օրինաչափության ժխտումն է:
4. Օրինաչափությունը տարբեր է տարբեր Ցեղերի մեջ - և օրենքները տարբեր կլինեն նույնպես:
5. Արի Ցեղի էությունը արարումն է, ուստի նա արարման օրինաչափությամբ պետք է ապրի:
6. Արարումը և ոճիրը անհարիր են իրար. նրանք ժխտում են իրար: Որտեղ կա արարում - այնտեղ ոճիր չի կարող լինել. որտեղ կա ոճիր - այնտեղ արարում չի կարող լինել:
7. Արին արարող է: Նա Աստվածամարդ է: ԵՎ նրա բնությունը ներկայանում է արարումը հաստատող հատկություններով՝ սեր, զորություն, իմաստություն, նվիրում, քաջություն, վեհություն, ազնվություն... Իր բնությամբ Արին ոճրագործ չի կարող լինել:
8. Արիների մեջ ոճրագործության առկայությունը անբնական օրենքի հետևանք է: Անբնական օրենքն է առաջ բերում ոճրագործություն, քանզի այդ անբնական օրենքը շեղում է Արիներին իրենց բնական օրինաչափությունից:
9. Արին Աստվածամարդ է և իր բնական ապրելակերպն ունի: Բայց երբ Տիտանների ապրելակերպը օրենքի ուժով պարտադրվում է Արիներին, ապա նրանք ապրում են անբնական կյանքով և այլասերվում են:
10. Աստվածամարդը պիտի ապրի աստվածավարի, և Արտի Օրենքն է նրա կենաց խորհուրդը:
11. Հայր Արայից է տրված և Արտավազդ Միհրի կամքով հաստատված Արտի Օրենքը: Արի Ցեղի մեջ արարումը պաշտպանող բնական Օրենքն է դա, որ Ցեղի բնական

օրինաչափությունների արտացոլումն է կյանքում:

12. Արիներն իրենց կյանքում պիտի առաջնորդվեն այս Արտի Օրենքով, քանզի ապրել ցեղորեն, ապրել աստվածությամբ - կնշանակե՝ ապրել Արտով՝ Արդարության Աստվածադիր Խորհրդով:
13. Ո՛ր թեև Արտի Օրենքը Հայր Արայի կամքով Արտավազդ Միհրն է հաստատում, բայց այդ Օրենքը անարդյունք կլինի, եթե չօժվի Վահագնի Ձորությամբ:
14. Արտի Օրենքը պաշտպանում է Արիների ծագումը, արյունը, ոգին, արարումը:
15. Հայր Արայի կամքով - Ցեղի և Ազգի միջև ծագած հակասության դեպքում՝ իրավունքը Ցեղինն է:
16. Ազգի և Տոհմի միջև ծագած հակասության դեպքում՝ իրավունքը Ազգինն է:
17. Տոհմի և Ընտանիքի միջև ծագած հակասության դեպքում՝ իրավունքը Տոհմինն է:
18. Ընտանիքի և անհատի միջև ծագած հակասության դեպքում՝ իրավունքը Ընտանիքինն է:
19. Ցեղը պատասխանատու է Արայի առաջ: Ազգը պատասխանատու է Ցեղի և Արայի առաջ: Տոհմը պատասխանատու է Ազգի, Ցեղի և Արայի առաջ: Ընտանիքը պատասխանատու է Տոհմի, Ազգի, Ցեղի և Արայի առաջ: Անհատը պատասխանատու է Ընտանիքի, Տոհմի, Ազգի, Ցեղի և Արայի առաջ: Այդ պատասխանատվության զգացողությունն է մայրը բոլոր տեսակի առաքինությունների:
20. Արտի Օրենքի համաձայն հանցանք է անհատի անպատասխանատվությունը Ընտանիքի հանդեպ. Ընտանիքի անպատասխանատվությունը Տոհմի հանդեպ. Տոհմի անպատասխանատվությունը Ազգի հանդեպ. Ազգի անպատասխանատվությունը Ցեղի հանդեպ. Ցեղի անպատասխանատվությունը Արայի հանդեպ: Դա է մայրը բոլոր տեսակի ոճրագործությունների:

ՏՈՀՄԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

1. Իր ընտանիքներով ճանաչել Տոհմը և իր զավակներով գնահատել նրան: Դատապարտելի է այն Տոհմը, որի զավակները չեն հարգում Ազգի արյունը:
2. Դատապարտելի է այն Տոհմը, որի զավակները չեն նախապատրաստված Հայրենիքի պաշտպանության առաքելությանը:
3. Դատապարտելի է այն Տոհմը, որի զավակները չեն նախապատրաստված ազգային կյանքին նվիրաբերվելու առաքելությանը:
4. Դատապարտելի է այն Տոհմը, որի արու զավակները չեն նախապատրաստված իրենց Տոհմի շարունակելիությունն ապահովելու առաքելությանը:
5. Դատապարտելի է այն Տոհմը, որի աղջիկները չեն նախապատրաստված ուրիշ Տոհմերի շարունակելիությունն ապահովելու առաքելությանը:
6. Դատապարտելի է այն Տոհմը, որի ընտանիքները Տոհմի սերնդատվության դարբնոցները չեն:
7. Դատապարտելի է այն Տոհմը, որը տեր չի կանգնում իր զավակներին:
8. Դատապարտելի է այն Տոհմը, որն իր աղջկանից ծնված ուրիշ Տոհմի սերունդն է սեփականացնում:
9. Դատապարտելի է այն Տոհմը, որի ընտանիքներում հարսի Տոհմն է տնօրինում:
10. Դատապարտելի է այն Տոհմը, որն իր աղջկան ուրիշ Տոհմին հանձնելուց հետո, միջամտում է նրա ընտանեկան կյանքին:
11. Դատապարտելի է այն Տոհմը, որն իր որդուն է փեսայության տալիս հարսի Տոհմին:
12. Դատապարտելի է այն Տոհմը, որն իր աղջկա համար փեսա է ներս առնում:
13. Դատապարտելի է այն Տոհմը, որն իր անառողջ որդու համար հարս է բերում:
14. Դատապարտելի է այն Տոհմը, որն իր անառողջ կամ պղծված աղջկան հարսնության է տալիս ուրիշ Տոհմի:
15. Կարմիր Խնձորը - սուրբ վկայություն է:

ԸՆՏԱՆԻՔԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

1. Դատապարտելի է այն Ընտանիքը, որն իր Տոհմի սերնդատվության օղակը չէ:
2. Լիարժեք չէ այն ընտանիքը, որի զույգը առնվազն իր կրկնապատիկը չի սերնդածնում:
3. Տոհմի Ընտանիքը լիարժեք Ընտանիք է, եթե սերնդածնում է չորս կամ ավելի երեխաներ:
4. Անսերունդ Ընտանիքը Ընտանիք չէ, և այն չպետք է պահպանել:
5. Չպետք է պահպանել այն Ընտանիքը, որից սերված երեխաները լիարժեք չեն:
6. Անթույլատրելի է ամուսնալուծությունը երեխա ունեցող Ընտանիքներում, քանզի ամուսնալուծությունը հանցանք է Ազգի, Տոհմի և երեխայի նկատմամբ:
7. Խստիվ անթույլատրելի է երեխաներին իրենց Տոհմից կտրելը, նույնիսկ բաժանվելու կամ ամուսնու մահվան դեպքում: Երեխաները պատկանում են իրենց Տոհմին: Եթե կինը հեռանում է ամուսնու Տոհմից, նշանակում է՝ հեռանում է հենց իր զավակների Տոհմից, ուստի նա զրկվում է իր երեխաներից:
8. Բոլոր պայմաններում կնոջն արգելվում է բաժանվել իր ամուսնուց:
9. Տղամարդն իրավունք ունի բաժանվել իր կնոջից միայն երկու դեպքում - նախ՝ եթե կինն անբարոյական է և երկրորդ՝ եթե կինը չի ցանկանում առնվազն չորս երեխա ծնել: Երկու դեպքում էլ կինը զրկվում է իրենից ծնված երեխաներից:
10. Անթույլատրելի է տղամարդուն բաժանվել կնոջից, եթե կինը ցանկանում է չորս երեխա ծնել, բայց չի կարող: Այս դեպքում տղամարդուն թույլատրվում է երկրորդ կին բերել:
11. Արարչի կամքով, ամեն Արորդի այր պարտավոր է իր Տոհմին տալ առնվազն չորս երեխա: Եթե մի կինը անկարող է նրա համար ծնել չորս երեխա, տղամարդուն

թույլատրվում է այդ քանակը լրացնել երկրորդ կնոջ միջոցով, առանց բաժանվելու առաջին կնոջից:

ԱՆՀԱՏԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

1. Անհատը ազգային օրգանիզմի օրգանական ամբողջությունների համակարգում վերջին օղակն է: Ըստ այդմ, անհատը պատասխանատու է միաժամանակ Ընտանիքի, Տոհմի, Ազգի առաջ:
2. ԵՎ Անհատը իր բազմաթիվ բնական դերերն ունի այդ բոլոր ամբողջությունների մեջ: ԵՎ այդ բնական դերերը Անհատն ինքը չի ընտրում. դրանք նրա ծագումից են գալիս:
3. Անհատը ծնող է, որդի, եղբայր, ամուսին, հորեղբայր, մորեղբայր... Նա ազգական է, հարևան, ընկեր, փեսա, խնամի, ծանոթ, բարեկամ... Նա ռազմիկ է, աշխատող, ստեղծող, սպառող... ԵՎ այդ բոլորը նույն Անհատն է. այդ բոլորը նրա մեջ են. և այդ բոլորի ամբողջությունն է նա:
4. ԵՎ Արի Անհատը պետք է այդ բոլոր դերերը կատարի անթերի: ԵՎ նա պետք է պատասխանատվություն զգա այդ բոլոր դերերը կատարելու համար: Ըստ այդմ, Արին չի կարող ունենալ Իրավունքներ. նա ունի Պատասխանատվություն, քանզի իրավունքն առանց պատասխանատվության անբարոյականություն է, չարիք է:
5. Պատասխանատվությունը միավորում է Ազգը, իսկ Իրավունքը բաժանում, պառակտում է նրան:
6. Սակայն պատասխանատվություն կարող է զգալ միայն ամբողջական Անհատը, երբ նրա մտածելակերպը համապատասխանում է նրա գենետիկական որակներին: Գենետիկական որակները բնական են՝ դրանք ազգային գենետիկական որակների մասնավոր արտահայտություններ են: Իսկ մտածելակերպը ձևավորվում է արտաքին ներգործությունների միջոցով, որպես իմացության հետևանք:

7. Երբ Արիի մտածելակերպը չի համապատասխանում նրա գենետիկական որակներին, ապա այդ Արին ամբողջական Անհատ չէ. նա երկվության մեջ է, և նրա մեջ մշտական պայքար է գնում: Նա կիսատ է, ուստի և ազատ չէ որևէ պատասխանատվություն կրելու:
8. «Ազատություն» հասկացությունը անպայման կապված է պատասխանատվության զգացողության հետ: Ազատությունը ազատներին՝ ամբողջական Անհատներին է վերաբերվում, նրանց, ովքեր պատասխանատվություն են զգում իրենց բնական դերերի համար և իրենք կարող են իրենց վերահսկել: Նրանց իրավունքը պատասխանատվություն կրելու իրավունք է:
9. Ոչ ամբողջական՝ Կիսատ անձերը, ովքեր որևէ պատասխանատվություն չեն զգում իրենց բնական դերերի նկատմամբ, առաջնորդվում են միայն Իրավունքի պահանջով: Ըստ այդմ, «Մարդու Իրավունք» հասկացությունը - դա Կիսատ Անձերի՝ Անազատների, սկզբունքն է:
10. Անազատներին չի կարելի ազատություն տալ: Նրանցը անազատությունն է: Նրանց ոչ միայն որևէ իրավունք չի կարելի տալ, այլև խստորեն պետք է վերահսկել նրանց, հակառակ դեպքում նրանք չարիք կսփռեն իրենց շուրջը: Անազատին ազատություն տալով, նրան իրավունք ենք տալիս անարգել չարիք գործելու, պղծելու շրջապատը:
11. Ըստ այդմ, դատապարտելի է այն Արին, ով չի կատարում կամ թերի է կատարում իր բնական դերերը:
12. Արին պարտավոր է հարգել իր Արյունը, որ Ազգի միջոցով ժառանգել է Արարչից՝ Հայր Արայից: ԵՎ իր ազգակիցների հետ նա պետք է հարաբերվի միայն Արյան սկզբունքով, քանզի արյունակից են բոլորը, և բոլորի մեջ միևնույն Ազգային Արյունն է, որ ժառանգել են Հայր Արայից:
13. Նա, ով հեղում է ազգակցի արյունը, կատարում է քառակի հանցանք՝ նա հեղում է ազգակցի արյունը, նա հեղում է ազգակցի մեջ իր արյունը, նա հեղում է ընդհանուր նախնիների արյունը, նա հեղում է Հայր Արայի

արյունը:

14. Միայն Նամուսի համար կատարված սպանությունը կամ ինքնասպանությունը չի դատապարտվում:
15. Երեխա սպանելը կամ բռնաբարելը ընդհանրապես արհական հատկություն չէ: Այդ ոճիրը կատարողն անպայման Արի չէ: ԵՎ Արիի անունով ամենագազրելի ոճիրը կատարող Չարին պետք է ամենադաժան պատիժը կրի:
16. Արի Անհատի համար Ազգը պաշտամունքի առարկա է, քանզի միայն Ազգի մեջ և Ազգի միջոցով կարող ենք հարաբերվել Արարչի հետ: Ըստ այդմ, Ազգի զգացողությունը Արարչի զգացողություն է, Արարչի պաշտամունքը՝ Ազգի պաշտամունք:
17. Հայրենիքի պաշտպանությունը Արիի բնական դերերից մեկն է. դա նրա սրբազան պարտականությունն է: Երբ Հայրենիքը վտանգված է, Արի Անհատը ինքն իր մեջ Սրբազան Պատերազմ է երկնում և ապա մասնակցում է Հայրենիքի պաշտպանության Սրբազան Պատերազմին:
18. Հայրենիքի պաշտպանությունից խուսափելը մահացու ոճիր է:
19. Արի Անհատի համար պատվի հարց է Ազգային Բանակում ծառայելը: Բանակում չծառայած երիտասարդին չի կարելի աղջիկ տալ և չի կարելի նրան Ազգի մեջ որևէ դեր վստահել:
20. Արի տղամարդը ի ծնե Ռազմիկ է: Ամեն ընտանիքում, որպես զորության խորհրդանիշ, Սուր պիտի լինի: Որ ընտանիքում Սուր չկա - այնտեղ տղամարդ չկա:
21. Արի Անհատը պետք է մշտապես պատրաստ լինի զոհաբերության իր Ընտանիքի, իր Տոհմի և իր Ազգի համար:

Ց Ա Ն Կ

Ուղերձ.....	Էջ 3
ՎԱՀԱԳՆԻ ԾՆՈՒՆԴԸ.....	5
ԽՈՍՔ ԵՐԱԽՏԻՔԻ.....	6

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ. ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆԶ

ՀԱՅՈՑ ԼԵՁՈՒՆ-ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ	9
ա. ԱՐԱՐԶԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ	12
բ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ	16
գ. ՀԱՎԱՏՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ	24
դ. ԿԵՆԱՑ ՀԱՄԱԿԱՐԳ	30
ե. ԾԱԳՈՒՄՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ	36
զ. ՏՈՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ	46
է. ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ	52
ը. ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ	54
թ. ԲՆԱՋԳԱՑԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ.....	56

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ. ԾԱԳՈՒՄՆԱՐԱՆ

ԽՈՐՀՈՒՐԴ ԱՐԱՐՄԱՆ.....	63
ԱՐԻԻ ԾՆՈՒՆԴԸ	67
ԼՈՒՅՍ ԵՎ ԽԱՎԱՐ	70
ՀՈԴԱԾԻՆ ՏԻՏԱՆԸ	73
ԼԻԼԻԹԸ	75
ԱՐՓԻՆ	81
ԿԵՆԱՑ ՊՏՈՒԴԸ.....	87
ՍԻՐԱԿԸ.....	90
ՅԱՀՎԱՀԸ.....	93
ՀԱՎԵՐԺԱՊԱՏՈՒՄ	95

ԱՐԻ ՄԱՆԸ	100
ՏՐՆԴԵԶ	103
ՎԱՀԱԳՆԻ ԾՆՈՒՆԴԸ	107
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԶՐՀԵՂԵՂ	111
ԱՍՏՎԱԾԱԴԻՐ ՕՐԵՆՔԸ	114
ԶԱՏԻԿ	117
ԽԱՂՈՂՕՐՀՆԵՔ	122
ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ	126
ԱՐԱՄԻ ՈՐԴԻՆԵՐԸ.....	131
ՍԼԱԿԸ	136
ԹՈՐԳՈՄԸ ԵՎ ԱՐԵՂՆԱԶԸ	139
ԹՈՐԳՈՄՆ ՈՒ ՄԵՍՐԱՅԻՄԸ	144
ԹՈՐԳՈՄՆ ՈՒ ՏԻՏԱՆՅԱՆ ԽԱԹՈՒՆԸ	148
ԱՍՔ ԱՐԻ ՀԱՅԿԻ ՄԱՍԻՆ	154
ԱՍՔ ԱՐԱ ԳԵՂԵՑԻԿԻ ՄԱՍԻՆ	193
ՎԱՐԴԱՎԱՌ.....	204
ՏՈՐՔ ԱՆԳԵՂ	210
ՏԻԳՐԱՆ ԵՎ ԱԺԴԱՀԱԿ	217
ԱՐՏԱՇԵՍ ԵՎ ՍԱԹԵՆԻԿ	224
ԱՐԱՐԱՏՅԱՆ ԱՇՏԱՐԱԿԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ	228
ԱՐՏԱԿԱԶԴԸ ԾՂԹԱՅՎԱԾ	232

ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ. ԱՎԵՏԱՐԱՆ

ա. ԽՈՐՀՈՒՐԴ ԱՎԵՏԱՐԱՆԻ	239
բ. ԽՈՐՀՈՒՐԴ ԱՐԱՐՄԱՆ	243
գ. ԽՈՐՀՈՒՐԴ ԾՆՈՒՄԻ.....	248
դ. ԽՈՐՀՈՒՐԴ ԾԱԳՈՒՄԻ	252
ե. ԽՈՐՀՈՒՐԴ ԱՐԱՐԱՏԻ	259
զ. ԽՈՐՀՈՒՐԴ ԱՍՏՎԱԾՆԵՐԻ	265
է. ԽՈՐՀՈՒՐԴ ԶՈՐՈՒԹՅԱՆ	269
ը. ԽՈՐՀՈՒՐԴ ՍԻՐՈ	275
թ. ԽՈՐՀՈՒՐԴ ՀԱՎԱՏՔԻ	280
ժ. ԽՈՐՀՈՒՐԴ ՈԳՈՒ	285
ժաԽՈՐՀՈՒՐԴ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԻ	289
ժբ.ԽՈՐՀՈՒՐԴ ԿԵՆԱՑ	295
ժգ.ԽՈՐՀՈՒՐԴ ԿՆՈՒՆՔԻ	301
ժդ.ԽՈՐՀՈՒՐԴ ԶՈՀԱԲԵՐՈՒԹՅԱՆ	303
ժե.ԽՈՐՀՈՒՐԴ ԵՐԱԶԻ	306
ժզ.ԽՈՐՀՈՒՐԴ ԳԱՐՆԱՆ.....	310

ԳԻՐՔ ՉՈՐՐՈՐԴ. **ՁՈՆԱՐԱՆ**

ՁՈՆ ՀԱՎԱՏՔԻՆ.....	317
ՁՈՆ ԲԱՑԱՐՁԱԿՈՒԹՅԱՆ.....	321
ՁՈՆ ԱՐԱՅԻՆ.....	325
ՁՈՆ ԱՆԱՀԻՏԻՆ.....	329
ՁՈՆ ՎԱՀԱԳՆԻՆ.....	334
ՁՈՆ ԱՍՏԴԻԿԻՆ.....	339
ՁՈՆ ԱՐՏԱՎԱԶԴ ՄԻՀՐԻՆ.....	344
ՁՈՆ ԱՐԻԻՆ.....	348
ՁՈՆ ԱՐԱՐԱՏԻՆ.....	352
ՁՈՆ ԼԻՆԵԼՈՒԹՅԱՆ.....	356
ՁՈՆ ՎԵՐԱԾՆՈՒՄԻՆ.....	360
ՁՈՆ ՆԱԽՆԻՆԵՐԻՆ.....	364
ՁՈՆ ԱՍՏՎԱԾԱՏԵՍԻՆ.....	368

ԳԻՐՔ ՀԻՆԳԵՐՈՐԴ. **ՎԵՀԱՐԱՆ**

ԳԱՐՆԱՆ ԱՎԵՏԱԲԵՐ.....	375
ԻՆՔՆԱՃԱՆԱՉՈՒՄ.....	378
ՆԺԴԵՀԱՑՈՒՄ.....	381
ՄԵՆԱՄԱՐՏ ՄԱՀԻ ՀԵՏ.....	385
ՍԻՐԱԶՕՇՈՒՄ.....	389
ԱՐՅԱՑ ՓՐԿԻՉԸ.....	393
ՈՒՆՏԱԿՈՐԸ.....	399
ԻՆՔՆԱԶՈՀՈՂՈՒԹՅՈՒՆ.....	403
ՆԺԴԵՀԻ ՎԵՐՋԻՆ ԺՊԻՏԸ.....	406

ԳԻՐՔ ՎԵՑԵՐՈՐԴ. **ՊԱՏԳԱՄԱՐԱՆ**

ա. Ո՛Վ, ԱՐՈՐԴԻ.....	411
բ. ԱՌ ՎԱՀԱԳՆ.....	412
գ. ՑԵՂԱՄԱՐԴ.....	414
դ. ԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ.....	416
ե. ՑԵՂԻ ԴՐՈՇՄԸ.....	418
զ. ՑԵՂԱԿՐՈՆՈՒԹՅՈՒՆ.....	419
է. ՀԱՎԱՏՔԻ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ.....	421
ը. ՍԵՐԸ ԶՈՐԱՑՆՈՂ.....	422
թ. ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՀՊԱՆԻՉ.....	425
ժ. ԳԵՂԵՑԻԿԸ ՆԵՐԴԱՇՆԱԿՈՂ.....	428
ժա. ԲԱՐՈՅԱԿԱՆԸ ՀԱՍՏԱՏՈՂ.....	429

ժբ. ՆԱԽՆՅԱՑ ՈԳԻՆԵՐԸ ԶՈՐԱԿԻԳ.....	430
ժգ. ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ.....	434
ժդ. ԿԵՐԱԾՆՈՒՆԴԸ ՀԱԿԵՐԺՈՂ.....	436
ժե. ՏՈՀՄԸ ԿԵՄՆ Է ԱԶԳԻ.....	437
ժզ. ԸՆՏԱՆԻՔԸ ՍՐԲԱԶԱՆ.....	440
ժէ. ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ.....	442
ժը. ՏՈՀՄԻ ՄԱՅՐԸ.....	444
ժթ. ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԳԱՍԱԿՈՐՈՂ.....	448
ի. ԱԶԳԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ.....	449
իա. ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ.....	451
իբ. ՊԱՏԵՐԱԶՄ.....	453
իգ. ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ.....	456
իդ. ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ.....	457
իե. ՊԱՇՏԱՄՈՒՆՔ ՄԵԾ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ.....	459
իզ. ՎԱՆԻ ԱԿԵՐԸ.....	460
իէ. ՀԱՂԹՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ.....	461
իը. ԶՈՀԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՂԹԱԿԱՆ.....	462
իթ. ԱՌԱՋՆՈՐԴ.....	463
լ. ԶՈՐԱԿԱՐ.....	465
լա. ՄՏԱԿՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....	467

ԳԻՐՔ ՅՈԹԵՐՈՐԴ. ՀԻՄՆԵՐԳԱՐԱՆ

1,1. ՀԻՄՆ ԱՐԱՅԻՆ /Սլակ կակոսյան/.....	473
1,2. ՀԻՄՆ ԱՐԱՅԻՆ /Սլակ կակոսյան/.....	473
1,3. ՀԻՄՆ ԱՐԱՅԻՆ /Սլակ կակոսյան/.....	474
1,4. ՀԻՄՆ ԱՐԱՅԻՆ /Սլակ կակոսյան/.....	474
2,1. ՀԻՄՆ ԱՆԱՀԻՏԻՆ /Սլակ կակոսյան/.....	475
2,2. ՀԻՄՆ ԱՆԱՀԻՏԻՆ /Սլակ կակոսյան/.....	475
2,3. ՀԻՄՆ ԶԱՏԻԿԻՆ /Սլակ կակոսյան/.....	476
2,4. ՀԻՄՆ ԱՆԱՀԻՏԻՆ /Սիամանթո/.....	477
2,5. ՀԻՄՆ ԱՆԱՀԻՏԻՆ /Սլակ կակոսյան/.....	478
2,6. ՀԻՄՆ ԱՆԱՀԻՏԻՆ /Հենրիկ Բաբախանյան/.....	479
2,7. ՀԻՄՆ ԱՆԱՀԻՏԻՆ /Սլակ կակոսյան/.....	480
2,8. ՀԻՄՆ ԱՆԱՀԻՏԻՆ /Տիգրան Ցեղապաշտ/.....	481
3,1. ՎԱՀԱԳՆԻ ԾՆՈՒՆԴԸ.....	481
3,2. ՀԻՄՆ ՎԱՀԱԳՆԻՆ /Հովհաննես Հովհաննիսյան/.....	481
3,3. ՀԻՄՆ ՎԱՀԱԳՆԻՆ /Սլակ կակոսյան/.....	482
3,4. ՀԻՄՆ ՎԱՀԱԳՆԻՆ /Միքր Մկրտչյան/.....	483
3,5. ՀԻՄՆ ՎԱՀԱԳՆԻՆ /Սլակ կակոսյան/.....	484
3,6. ՀԻՄՆ ՎԱՀԱԳՆԱԿԱՆՉԻՆ /Ըստ Վարուժանի/.....	484

3,7. ՀԻՄՆ ՏՐՆԴԵԶԻՆ /Արեն Հայկյան/.....	485
3,8. ՀԻՄՆ ՎԱՀԱԳՆԻՆ /Արեն Հայկյան/.....	486
3,9. ՀԻՄՆ ՎԱՀԱԳՆԻՆ /Լևոն Շանթ/.....	487
3,10. ՀԻՄՆ ՎԱՀԱԳՆԻՆ /Սլակ Կակոսյան/.....	487
3,11. ՀԻՄՆ ՎԱՀԱԳՆԻՆ /Կ. Գրիգորյան/.....	488
4,1. ՀԻՄՆ ԱՍՏԴԻԿԻՆ /Հովհաննես Թումանյան/.....	489
4,2. ՀԻՄՆ ԱՍՏԴԻԿԻՆ /Սլակ Կակոսյան/.....	490
4,3. ՀԻՄՆ ԳԵՂԵՑԻԿԻՆ /Սլակ Կակոսյան/.....	490
4,4. ՀԻՄՆ ՍԻՐՈ /Սլակ Կակոսյան/.....	491
4,5. ՀԻՄՆ ՎԱՐԴԱՎԱՌԻՆ /Սլակ Կակոսյան/.....	491
5,1. ՀԻՄՆ ՄԻՀՐԻՆ /Սլակ Կակոսյան/.....	492
5,2. ՀԻՄՆ ԱՐՏԻՆ /Սլակ Կակոսյան/.....	493
5,3. ՀԻՄՆ ԼՈՒՅՍԻՆ /Սլակ Կակոսյան/.....	494
6,1. ՀԻՄՆ ՎԱՆԱՏՈՒՐԻՆ /Վարդան Վանատուր/.....	494
7,1. ՀԻՄՆ ՆԱՆՆԻՆԵՐԻՆ /Սլակ Կակոսյան/.....	495
8,1. ՀԻՄՆ ՆԱՎԱՍԱՐԴԻՆ /Դանիել Վարուժան/.....	496
8,2. ՀԻՄՆ ՆԱՎԱՍԱՐԴԻՆ /Զովիկ Զաքարյան/.....	496
9,1. ՀԻՄՆ ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻՆ /Էլիզա Կակոսյան/.....	497
10,1. ՀԻՄՆ ԱՐԻՆ /Վահագն Կակոսյան/.....	498
10,2. ՀԻՄՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ /Կ. Գրիգորյան/.....	498
10,3. ՀԻՄՆ ՈԱԶՄԻԿԻՆ /Սլակ Կակոսյան/.....	499
10,4. ՀԻՄՆ ԲԱՐԻ ԴՅՈՒՑԱԶԱՆՑ /Հակոբ Ամոքի/.....	499
10,5. ՀԻՄՆ ԱՐԵՊԱԿԻՆ /Հակոբ Ամոքի/.....	500
10,6. ՀԻՄՆ ԱՐԵՊԻՆ /Տիգրան Ցեղապաշտ/.....	500
10,7. ՀԻՄՆ ՕԶԱԽԻՆ /Հակոբ Ամոքի/	501
10,8. ՀԻՄՆ ՑԵՂԱԾԱՌԻՆ /Արեն Հայկյան/.....	502
11,1. ՀԻՄՆ ԳԱՌՆԻՆ /Ահարոն Օսկյան/.....	502
11,2. ՀԻՄՆ ՏՈՆԱՀԱՆԴԵՍԻՆ /Զովիկ Զաքարյան/.....	504
11,3. ՀԻՄՆ ԳԱԼԻՔԻՆ /Զովիկ Զաքարյան/.....	504
11,4. ՀԻՄՆ ԿՐԱԿԻՆ /Սիփան Շիրազ/.....	505
11,5. ՀԻՄՆ ՈՒԽՏԱԳՐՔԻՆ.....	506
12,1. ՀԻՄՆ ԷՐԵՎԱՆԻՆ /Զովիկ Զաքարյան/.....	506
13,1. ՀԻՄՆ ԿՆՈՒՆՔԻՆ /Տիգրան Ցեղապաշտ/.....	507
13,2. ՀԻՄՆ ՓԱՌԱՑ /Տիգրան Ցեղապաշտ/.....	508
ԱՐՏԻ ՕՐԵՆՔԸ	509
ԳԱՐՈՒՆԸ, ՄԻԵՎՆՈՒՅՆ Է, ԳԱԼՈՒ Է	519

ՈՒՆՏԱԳԻՐՔ ԱՐՈՐԴՅԱՑ

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ ԱՐՈՐԴԻՆԵՐԻ ՈՒՆՏ

Էրեվան, 9588 թ. Կ. Ծ. (2005)